Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

203
1·31

203
Ա-37
03 AUG 2009

ՃԱՌՔ

ՀՈԳԵԻՈՐԳ

ՎԱՍՆ ՄԻԱՆՁԱՆՑ

ԳՐԵԱՑ

Հ. Ղ. Վ. ԱԼԻՇԱՆ

ԱԹՈՌԱԿԱԼ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԻՆ

72

ՎԵՆԵՏԻԿ – Ս. ՂԱԶԱՐ

1904

2965
Ա-31 ար-
431

ՃԱՌՔ

ՀՈԳԵՒՈՐՔ

ՎԱՍՆ ՄԻԱՆՁԱՆՑ

ԳՐԵԱՑ

Հ. Ղ. Վ. ԱԼԻՇԱՆ

ԱԹՈՌԱԿԱԼ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԻՆ

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՅԿ. ՍՍՀ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.С.Р.А. Армянская Библиотека
7/XI 1922
Ա. ՍՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՎԵՆԵՏԻԿ – Ս. ՂԱԶԱՐ

1904

05 FEB 2014

ՔԵԶ

ՇՆՈՐՀԱԶԱՐԴ ԵՒ ԲԱԶՄԵՐԱԽՏ

ԴԻՏԱՊԵՏԻԴ

ԱՐՀԻԱՊԱՏԻՒ ԵՒ ԴԵՐ· ՏԷՐ

Տ· ԻԳՆԱՏԻՈՍ ԱՐՔ· ԿԻՒՐԵՂԵԱՆ

ԸՆԴՀ· ԱԲԲԱՑ ՄԽԻԹ· ՈՒԽՏԻՍ

Ի ՏԱՐԵԿԱՆԻ ԵՐՋԱՆԻԿ ՑՈԲԵԼԻՆԻ

ՑԻՍՆԱՄԵԱՑ ՍՐԲՈՑ ՔԱՀԱՆԱՑՈՒԹԵԱՆԴ

ԶՀՈԳԵՇԱՀ ՄԱՏԵԱՆՍ ԱՆԶԿԱԼԻՈՑ

ՄԵԾԻ ԱԼԻՇԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻՍ ՄԵՐՈՑ

Ի ԲԵՐԿՐԱԼԻՑ ՍՐՏԷ

ԻԲՐԵԻ ԴՈՅԶՆ ԱՌՀԱՒԱՏՉԵԱՑ ՑԱՐԳԱՆԱՑ

ՑՈՔՈՒՆՑ ԱՐԴԵԱՆՑ

ՎԵՀԻԴ

ՍՐՏԱԳԻՆ ՄԱՂԹԱՆՕՔ ԵՐԿԱՅՆ ԱՒՈՒՐՑ ԲԱՐՈՒԹԵԱՆՑ

ՆՈՒԻՐԵՆ

ԱՄԵՆԱԽՈՆԱՐՀ ԵՒ ԵՐԱԽՏԱՊԱՐՏ

ՈՐԴԻՔ ՔՈ

ՀԱՐՔ ՄԽԻԹԱՐԵԱՆՔ

ՄԵԾ. ՏԷՐ ՅՈՎՀԱՆՆԷՍ Վ. ԱՊՏԱԼԵԱՆ

ԿԱՐՄԻՐՔՑԻ

ՆՊԱՍՏԵԱՑ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

ՄԱՏԵՆԻՍ

ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՊԱՏԱՐԱԳԻՉ

ՔԱՆԻ՞ ԻՆՉ ԿԱՐԵՒՈՐ ՊԱՇԱՆՋԻ Ի ՊԱՏԱՐԱԳՁԷՆ

Քաւանաց՝ որ ճշմարտապէս և ոչ վարկպարազի գործակից և գործակատար է Քրիստոսի, հարկ է թէ և զնորա հոգի ունիցի և զամենայն ուղղութիւնս. այլ զի մի զամենայն աստէն ի սկզբան պահանջելով՝ զահի հարեալ տագնապեսցուք, գէթ զերիս զայսոսիկ առ ձեռն կարեւոր ծանիցուք. զՄաքրութիւն Վարուց, զՈւղղութիւն Դիտման, և զՆերգործական Ջերմեռանդութիւն։

Ա. Մաքրութիւն Վարուց. — Զոր յաղագս չինութեան տաճարին ասաց Դաւիթ՝ զնոյն յանձն իւր ձգեսցէ քահանայ՝ ի մատուցման սրբոյ Պատարագին, եթէ, «Գործս այս մեծ» է. վասն զի ոչ է մարդոյ չինուածս, այլ Տեառն Աստուծոյ»։ Արդ որոյ հանդերձեալ իցէ մատչիլ առ Աստուած և զՄիածին Որդի նորա մատուցանել պատարագ անարիւն, ահիւ և դողութեամբ ձեռն արկցէ ի գործն, փորձելով զանձն և կանխեալ տրամադրութեամբ պատրաստեսցի յընդունելութիւն բազմառատ պտղոց Պատարագին։ Առաջին պատրաստութիւն իցէ Մաքրութիւն Վարուց. այն է սուրբ լինել՝ ոչ միայն ի մահացու մեղաց այլ և ի ներելեացն՝ կամօք և գիտութեամբ գործեցելոց, և ի յօժարութեանց առ մեղս. քանզի ոչ է հնար զերծ լինել յամենայն մանունց մեղաց, գէթ արժան է և մարթ հրաժարել յըղձից նոցին, խլել ի բաց հանել ի սրտէ զամենայն ցանկութիւն արատաւոր։ Ի

վերայ այսորիկ ջանալ ճգնիլ հանապազ յառաքինութիւն և ի սրբութիւն, վասն իւր համարելով զասացեալն. « Որ արդարն է՝ և եւս արդարասցի, և որ սուրբն է՝ և եւս սրբեսցի »: Եւ զիա՞րդ չիցէ արժան մաքուր լինել այնմ, ասէ Ոսկիբերան, որ յայսպիսի պատարագս վայելէ. զիա՞րդ ոչ քան զարեգական ճառագայթս պայծառ լինել ձեռաց՝ որ բաշխեն զմարմին Քրիստոսի, բերանոյն՝ որ հոգեւոր հրովն լնու, և լեզուին՝ որ սոսկալի արեամբն ի կարմիր ներկանի: Աղէ զմտաւ ած, յոր պատիւ բարձրացար, յորմէ՞ սեղանոյ վայելես՝ յոր ոչ իշխեն հրեշտակք ակն արկանել համարձակ ի փայլմանէ ահեղասքանչ նշուլիցն. և մեք այնու սնանիմք, ի նոյն միաւորիմք, և լինիմք մի մարմին ընդ Քրիստոսի:

Սուրբն Թովմաս՝ սեփական գործ այսր խորհրդոյ ասէ՝ աստուածացուցանել զմարդ, և սիրով՝ Աստուծոյ նմանակից առնել: Ո՞րքան ուրեմն արժան է լնուլ հաւատովք. քանի՞ յուսով զօրանալ, ո՞րքան սիրով բորբոքել, քանի անմեղութեամբ զարդարել, այնմ որ հանապազ զայսպիսի պատարագ մատուցանէ, որ յաճախ ընդունի զԱստուած և խորհրդաբար յինքն փոխակերպէ: Զի եթէ պատրաստութիւնն ըստ իմաստասիրաց, պահանջի համասեռ լինել օրինակին յոր պատրաստի, ապա յայտ է առանց երկբայութեան եթէ աստուածային իմն պիտոյ է պատրաստութիւն՝ առ ընդունելութիւն աստուածայնոյ կերակրոյն: Այնպիսի ունել վարս հակառակս յօժարութեանց մարմնոյ և աշխարհի, զի գերմարդկային իմն և աստուածազան երեւիցի: Իսկ այսպիսի քաղաքավարութիւն պահանջէ հեռանալ ի ստեղծականաց, և յաստուածայինսն միայն մերձենալ: ԶԱստուած միայն ունել ի միտս, ի կամս, ի բանս և ի գործս: Զախորժել ընդհամ աշխարհի, ընդ քաղցրութիւն մարմնոյ և զգայութեանց. ատել զանձն, ի խաչ հանել զմարմին լծով մեռելութեանց, արհամարհել զմեծութիւնս, փախչել ի փառաց, սիրել զոգէտ և զխտան համարիլն:

Քննեսցէ արդ զանձն իւր քահանայ. և եթէ ոչ այսպիսի՞ ոք գտցէ, այլ դեռ երկրաւոր, փութասցի հոգով մեծաւ յաստուածայինսն կրթիլ: — Հանդերձ այսոքիւք խնամ տարց և արտաքին մաքրութեան մարմնոյ և հանդերձից, շարժմանց գնացից, յամենայնի զխոհականութեան բերելով կերպարանս, ի պատիւ սրբոյ խորհրդոյն և ի չինութիւն տեսողաց:

Բ. ՈՒՂՂՈՒԹԻՒՆ ԴԻՏԱՆ. — Ըստ վախճանի գործոյն զոր դիտէ ոք՝ գովի առաքինութիւն նորին կամ պարսաւի մոլութիւնն. առ ուղղութիւն դիտման ի պատարագել՝ ոչ միայն ի դէպ է ի բաց թօթափել զամենայն թիւր և օտարոտի վախճան, այլ և զգուշանալ ի մատչելոյ առ սոյն ըստ սովորութեան եւեթ, առանց ներգործական քննութեան մեծի խորհրդոյն և կանխեալ պատրաստութեան: Արդ մինչչեւ մատուցեալ ի պատարագել յիշեսցէ քահանայ եթէ առ ի՞նչ երթայ յայն, մի գուցէ վասն երկրաւոր ինչ շահու կամ պատճառի զերկնաւոր հացն խնդրիցէ, և առաւել քան զհոգւոյն՝ զմարմնոյն դիւրութիւն. և մի արդեօք պատարագ, որ ի փրկութիւն աշխարհի կարգեալ էր՝ ի կորուստ անձին իւրոյ փոխեսցի: Այլ դիցէ ինքեան կէտ նպատակի զերագոյն և երբնական զփառսն Աստուծոյ, զփրկութիւն և զկատարելութիւն անձին և զօգուտ ընկերին: Ուղղեսցէ զդիտումն՝ սրբել զանձն փրկական պատարագաւն, ապաքինել ի հոգեկան ախտից, փրկիլ ի պէսպէս չարեաց, ի փորձութեանց և ի հապարակութեանց. յընդունելութիւն բարեաց, և ի գոհութիւն ախտեացն գտելոց. յաճումն շնորհաց և ի յարատեւութիւն ի նոսին. ի դարման բազմապատիկ կարեաց մերձաւորացն, ի հանգիստ ննջեցելոց. ի պայծառութիւն կաթուղիկէ եկեղեցւոյ, ի պատիւ Սրբոց. ի յիշատակ չարչարանաց և մահուան Քրիստոսի, ըստ նորին հրամանի, եթէ՝ « Զայս արարէք առ իմոյ յիշատակի ». ի սրբութիւն անձին յամենայն պղծութենէ հոգւոյ և մարմնոյ, և ի զօր միութեան ընդ Աստուծոյ՝ անանջատ կալով ի նմանէ: Այսոքիւք և որ զոցին նման՝ արժան է ուղղել զդիտումն յառաջ քան զպատարագելն: Ցիշել և զօրինակ սրբասիրաց և զգօնից ոմանց քահանայից, որոց զանստուգութիւն կենացս ի մտի ունելով՝ մինչեւ դիտաւորութեամբ մատչէին ի պատարագ, զի, եթէ դէպ լիցի նոցա յայնմ աւուր մեռանել՝ թոշակ յաւիտենական կենաց լիցի նոցա մարմինն և արիւնն Տեառն՝ զոր ընդունէան: Մեծ է օգուտ այսր յիշատակի:

Գ. ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՋԵՐՄՆԵՌԱՆԴՈՒԹԻՒՆ. — Հարկ է առ այս՝ մանային յիշել և հաւատալ հաստատուն մտօք ամենայնի՝

զոր ուսուցանէ եկեղեցի սուրբ յաղագս անճառ խորհրդոյն և երկնային գանձուց ծածկեցելոց ի նմին, և դաւանեսցի մեծաւ յարգութեամբ, եթէ, բանիւք քահանայագործութեանն՝ հացն առաջիկայ ի մարմին Քրիստոսի և գինին՝ յարիւն գոյափոխի, և ընդ տեսակաւք նոցին՝ ծածկեալ կայ անապական մարմինն՝ որ վասն փրկութեան մերոյ խաչեցաւ, և արիւնն՝ որ վասն մեր հեղաւ. անդ է հոգին փառաւորեալ՝ յորում են ամենայն գանձք իմաստութեան և գիտութեանն Աստուծոյ. անդ է Քրիստոս ճշմարիտ Աստուած և ճշմարիտ մարդ՝ սքանչելի փառաւք իւրովք, որով գալոցն է ի դատել զկենդանիս և զմեռեալս, և զաշխարհս՝ հրով։

Արժան է դարձեալ՝ զարթուցանել ի միտս զեռանդն խոնարհութեան՝ որ առաւել քան զայլս յառաքինութեանց մեծափայլեաց ի հաստատութեան խորհրդոյս այսորիկ. քանզի Տէրն մեր Քրիստոս, որ ի կերպարանս Աստուծոյ էր՝ ունայնացոյց զանձն, և ընդ դուզնաքեայ տեսակաւք հացի և գինւոյ՝ բովանդակեաց զմարմին իւր և զարիւն, այլ և զաստուածութիւն իւր. եդեալ զանձն նշաւակ անարգանաց մարդոց անիրաւաց և չարագործաց, որք անմաքրասէս մերձենան առ նա և պղծեալ ձեռաւք իշխեն շօշափել զնա։ Պարտ և արժան է քահանայի՝ այսմ գերագոյն խոնարհութեան լինել նմանող. չզրել ինչ բարի անձին, այլ յոչընչութիւն իւր յառիլ։ Խոնարհութեամբ միայն մարթ է մեզ արժանաւորել յընդունելութիւն մեծի հիւրոյն. զի չիք մեր այլ պատրաստութիւն, ոչ մի ճարտարութիւն և ոչ մի ուղղութիւն, այլ միայն շնորհքն Աստուծոյ արժանի առնեն զմեզ. ապա ի դէպ է ամենայն իրաւք ճանաչել զանարժանութիւն անձին, և յողորմութիւնն Աստուծոյ լինել ապաստան։

Եւ քանզի Քրիստոս զփափկութիւնս այսր սեղանոյ հնարեաց մեզ դառնակսկիծ չարչարանաւք մարմնոյ իւրոյ, վայել է և մեզ ըստ օրինակի բազմաց պաշտօնասէր քահանայից՝ ճնշել զանձինս մեր և զոհել ընդ գառինն՝ որ վասն մեր զեղաւ, լռութեամբ, միայնութեամբ, պահաւք բերանոյ և ըզգայարանաց, և վշտակրութեամբք մարմնոյ՝ ըստ իւրաքանչիւր կարի։

Եւ ի վեր քան զայսոսիկ՝ արժան է եռաբորբոք տենչիւ քաղցնուլ և փափագել հրեշտակային հացիս, յորոյ ճաշակ՝

սիրով հրաւէր կարդայ մեզ Տէր ասելով. «Եկայք առ իս » ամենայն աշխատեալք, և ես հանգուցից զձեզ». և եթէ պակասիցէ ի մեզ բորբոք եռանդեանս՝ զէթ ի դէպ է ցանկալ այնմ յամենայն ուժգնութենէ սրտի. «Բանզի զցանկութիւն » տնանկաց լսէ Տէր, և զանձինս քաղցելոց լցուցանէ բա» րութեամբ»։

ՔԱՆԶԻ ՅՈՅԺ ԳԵՐԱԶԱՆՑ ԵՒ ԿԱՐԵՒՈՐ Է ՊԱՏԱՐԱԳՆ

ԸՍՏ ԱՅՆՄ ՊԱՇԱՆԶԻ ՅԱՐԳՈՒԹԻՒՆ Ի ՄԱՏՈՒՑՈՂԷՆ

Պատարագ՝ գլխաւոր պաշտօն է կրօնից, և ըստ գերազանցութեան քրիստոնէական կրօնիցս՝ գերագոյն է և պատարագ իւր։ Բանզի Քրիստոս ինքն է որ մատուցանին, Աստուած և մարդ ճշմարիտ. և որ ինչ գործի ի պատարագի՝ նորին բանիւ՝ անցանէ զանցանէ զամենայն գործովք մարդկան և սրբոց որ ի յերկինս։ Աստուած է ճշմարիտ և առ որ մատուցանի պատարագն. ոչ սրբոյ ումեք կամ ամենասուրբ Կուսին, այլ Աստուծոյ միայնոյ վայել է այդ. զի դովաւ վկայի Աստուած լինել մեր սկիզբն առաջին և վախճան վերջին, և գերագոյն տէր ամենեցուն և ամենայնի. որում՝ ի ցոյց հպատակութեան՝ մատուցանեմք զգալի ինչ ի նշանակ ներքին պատարագի, զոր մատուցանէ հոգի ստեղծողին իւրում և նպատակի երանութեանն։ — Գերահրաշ է և քահանայագործութիւնն. զի հաց և գինի գոյափոխին ի մարմին և յարիւն Քրիստոսի, մնալով լոկ պատահմանցն. և անմարթ է այդմ լինել զօրութեամբ կամ կամաւք ստեղծականի անձին, այլ միայն Աստուծոյ ամենակարողի։

Մեծ և անսահման են և արժէք Պատարագի, որպէս և արդիւնք չարչարանացն Քրիստոսի. վասն որոյ և հաճոյ է Աստուծոյ որպէս մահ Քրիստոսի ի խաչին. թէպէտեւ գործն սահմանաւոր է։

Մեծ է և սուրբ և վախճանն՝ յոր կարգեցաւ Պատարագդ. այն է, աստուածական պաշտօն մատուցանել Արարչին, ըստ նորա մեծութեանն և մերումս խոնարհութեան. արժանաւոր

գոհութեամբ վասն ամենայն բարեաց նորին, և առ ընդունելութիւն օգնականութեան և շնորհաց, պաշտպանութեան և խնամոց, թողութեան մեղաց, հաշտութեան կամաց նորա, ի դարձումն և զիջումն ցասմանն Աստուծոյ և վերահաս պատուհասին, և յօժանդակութիւն ամենայն կարեւոր պիտոյից կենդանեաց և ննջեցելոց։

Արդ յայտ է ամենայնիւ՝ թէ չիք ումեք գործ զերագոյն քան զպատարագ մատուցանել. վասն որոյ և ոչ ոք իշխէ, ոչ թագաւոր և ոչ քահանայապետ՝ դադարեցուցանել զքահանայ ի պատարագէն սկզբնաւորելոյ, և ի դատ վարել. քանզի փոխանակ Քրիստոսի մատուցանէ նա զպատարագն։ Պարտ ուրեմն է և նմա այնպէս քաղաքավարել՝ զի մի ինչ անարժան Քրիստոսի գտցի յինքեան. այլ լիցի որպէս պատգամաւոր և դեսպան՝ որ զթագաւոր՝ յորմէ առաքեցաւն յանդիման կացուցանէ։

Ի դէպ է դարձեալ քահանայի՝ մեծաւ ուշոյ պնդութեամբ խորհել զկարեւորութիւն Պատարագի. որում մեծապէս կարօտին և որք կենդանիքս են, և որք ի քաւարանին հոգիք ննջեցելոցն։ Անկ է քահանայի իբրեւ հրեշտակի ի դիմաց բովանդակ աշխարհի առաջի առնել Աստուծոյ զամենայն պէտս հոգւոց և մարմնոց, և ընդունել առ ի նմանէ ըստ իւրաքանչիւր օգտի և փրկութեան։ Արդ առաջին կարիք հոգւոց՝ են մեղքն, որ գրեաթէ գրաւեն զամենայն մարդիկ յամենայն վիճակէ. և երկրորդ փորձութիւնք ներքինք և արտաքինք, որ յապականութենէ բնութեան, զգայարանաց, յարտաքին առարկայից և անձանց, յիւր ուրոյն անձնիշխան կամաց, և ի դիւաց. իսկ երրորդ, պէտպէս պէտք և վտանգք մարմնականք, ախտք հիւանդութեան, պատերազմունք, հալածանք, թշնամութիւնք, զրպարտութիւնք, դաւաճանութիւնք, կորուստ ընչից, զժտութիւնք, և այլ բազմապատիկ սոցին նմանք։ Արդ, վասն ամենեցուն այսոցիկ, և վասն որոց ի մահուչափ մեզս կամ ի կիրս չարաչարս վարակեալ են, վասն մոլորելոց և վրիպելոց ի ճշմարտութենէ՝ հերետիկոսութեամբ կամ թիւր կրօնիւք, չիք հզօրագոյն հնարք օգտի և փրկութեան՝ քան զպատարագն սուրբ. նոյնպէս և վասն արդարոց անկատարից և գաղջից, և որոց ի վտանգի կան վրիպելոյ ի շնորհացն Աստուծոյ և անկանելոյ ի մեզս մահուչափս,

ըստ սաղրելոյ դիւրաբեկ և ապականեալ բնութեան և անհաշտ ոսոխի մերոյ սատանայի։ Ոչ կենաց չափ բովանդակին պէտք մարդկութեան՝ այլ և բազումք ի պահու օրհասին մեծապէս տագնապին յիշատակաւ մեղաց իւրեանց և բարեացն արհամարհելոց, կամ վասն զթոյ կենակցացն և աշխարհիս՝ զոր հանդերձեալ են թողուլ. եւ առաւել հոգիքն հրաժարեալք և արգելեալք ի բանտ քաւարանի, որոց յոյս հաստատեալ կայ յօժանդակութիւն աղօթից կենդանեացս, և աղիողորմ հառաչանօք կարկառին առ քահանայն պատարագիչ, մաղթել և ընդունել շնորհ ինչ ողորմութեան Աստուծոյ. տարածանելով իմն մուրհակս աղերսանաց՝ մատուցանել առ Բարձրեալն, որոյ հրեշտակ և միջնորդ գիտեն զքահանայ. և որում անկ է ամենայն զգաստութեամբ և եռանդեամբ փութոյ կատարել զպաշտօնս զայս՝ յօգուտ այսքան կարօտելոց։

Գիտելով չափ զմեծութիւն և զկարեւորութիւն Պատարագին՝ հարկ է քահանային և մեծաւ Յարգութեամբ կատարել զգործն։ Յարգութիւն՝ իմա զներքինն, որ է ահ և խոնարհութիւն և զեղջ սրտի. և արտաքին՝ զպատշաճ վայելչութիւն և զսահմանեալ ծէսս. զորոց անհրաժեշտ օրէնս քաջ ի միտ առցէ քահանայ՝ յորժամ զմտաւ ածցէ, եթէ անմարթ է քրիստոնէից կատարել գործ կամ խորհուրդ մեծ և աստուածահաճոյ քան զպատարագն. և զի Սուրբ Գիրք՝ անիծեալ կոչեն՝ որ առնէ զգործ Տեառն հեղգութեամբ. և եթէ ոք ընդ աւագի առն կամ թագաւորի խօսելով՝ ամենայն պատկառանօք և աչալրջութեամբ կայ առաջի նորա, քանիո՞ն առաւել նա՝ որ երկնաւոր թագաւորին Աստուծոյ կայ առաջի և առընթեր. այնմ՝ որ ոչ միայն զարտաքինն տեսանէ, այլ և ի խորս սրտից թափ անցանէ. քանի՞ լրբութեան և ազամարութեան չիցէ՝ անպատկառ, վայրապար մտօք և մեզապարտութեամբ յանդիման լինել այնմ՝ յորմէ սուրբք զանգիտեն, հրեշտակք սարսեն, իշխանութիւնք դողան, և գերագոյնք հոգեղինացն՝ ծածկեն զդէմս յահէ և յամօթոյ։ Զի՞նչ մերձեսցի խաւարն առ լոյս, տկարն առ ամենակարողն, ծառայն առ տէրն, ստեղծուածն առ ստեղծիչն՝ և ոչ զարհուրեալ զանգիտեսցէ։

Բայց ի յորդոր յարգութեան՝ նպաստ մեծ է և խորհրդածութիւն հաճութեան ամենասուրբ Երրորդութեանն և ամե-

նայն երկնայնոց՝ ընդ Ջերմեռանդն մատուցումն պատարագի. եւ և յիշելն՝ զի Քրիստոս եթող մեզ զխորհուրդս զայս իբրեւ Կտակ սիրոյ՝ որով սիրեաց զիւրսն իսպառ. և զի սա է յիշատակ մահուան նորա, որով մեղք ջնջեցան, մարդիկ փրկեցան, սուրբք հասին երանութեան, և շնորհք բաշխին կարօտելոց։

Ի դէպ է առ այս յիշել և քննել քահանայի զիմաստութիւն եկեղեցւոյ, որ ուսեալ յԱստուծոյ կարգեաց և գրեաց զսահման և զօրէնս և զպատրաստութիւն Պատարագի. նախ խոստովանութեամբ խնդրել զներումն յանցանաց. ապա օրհնել զԱստուած և պաշտօն երկրպագութեան մատուցանել վասն երախտեացն զոր ընկալաւ. ընդ նմին դարձեալ օգնականութիւն հայցելով վասն իւր և վասն այլոց։ Պատշաճեցոյց և զսպասս և զհանդերձս պաշտամանն՝ վայելուչս և պարկեշտս, և զհրահանգ կացիցն և շարժուածոց, մերթ յոտին և մերթ ծունր դնելով, մերթ ձեռնամած և մերթ բազկատարած, և ամենայն ձեւով յարմարականաւ ի յարգութիւն և պատրագչին և առաջիկայիցն։ Նաեւ խօսք նորա ընդ Աստուծոյ ոչ վարկպարագի բանք են, այլ գերազանցք օրինակաւ. որպէս բարեկամ և խորհրդակից խօսելով բազում անգամ ի ծածուկ իբր յունկանէ, և ոչ ի դէմս իւր, այլ ի բովանդակ եկեղեցւոյ, և լսելով պատասխանի յԱստուծոյ վասն ժողովրդեան նորին։ Եւ զայս պատգամաւորութիւն կատարէ քահանայ ոչ լոկ առաջի ժողովրդեանն, այլ և ամենայն երկնայնոցն դասուց. որոց առաջի հրապարակաւ խոստովան լինի և մաղթէ նոցին օժանդակ աղերսիւ ընդունելի առնել Աստուծոյ զաղօթս իւր. խօսի ընդ Քրիստոսի՝ որ առաջի իւր կայ, և պաղատի նմա, և նովաւ առ Հայրն յաւիտենական. և խօսի ոչ զիւր ինչ բան, այլ զաւանդեալսն ի Քրիստոսէ և ի Սուրբ Գրոց, և ի Հարց և ի ժողովոց օրբոց. վասն որոյ և ոչ կարէ յաւելուլ կամ նուազեցուցանել ի սահմանեալ կարգէն, զոր թելադրութեամբ Հոգւոյն սրբոյ օրինադրեաց Եկեղեցի։

Եւ արդ, յուշ լիցի քեզ, Քահանայդ Աստուծոյ, զի զոր պատարագեսն՝ ինքն Քրիստոս է Միածին Որդի Աստուծոյ, Փրկիչ քո և դատաւոր. զկատարեալ մարդկութիւն նորա մատուցանես ի սեղանի անդ, որպէս նայն մատոյց ի վերջ-

նումն ընթրեացն. բայց նա զմահկանացուն մատոյց, իսկ դու զանմահն, նա զչարչարելին, դու զանչարչարն։ Եւ զի, արդիւնք մահուան նորա բաւական են ի թողութիւն ամենայն պարտեաց մերոց և ի փրկութիւն աշխարհի. և զի, թէպէտ և ամենեւին սուրբ և արժանաւոր էր Քրիստոս յամենայն ի կեանս իւր, այլ չարչարանօքն և մահուամբ ստացաւ առաւել եւս արդիւնս, զոր և պատարագաւդ այդու կրկին մատուցանես Աստուծոյ։ Եւ զի, Քրիստոս սքանչելահրաշ իմն տարազու կայ ի խորհրդեանդ յայդմիկ՝ քան ի յերկինս. քանզի բովանդակ մարմին նորա պարագրեալ կայ ի տեսակս նուիրացն, և բոլորն ի մէն մի մասունս, առանց քանակական տարածութեան, վասն որոյ և ներկայութիւն նորա անտեսանելի է բնական զօրութեամբ՝ նաեւ գերագունից ի սրբոց։

Այլ ո՞վ կարիցէ ճառել ըստ արժան բաւականին զմեծութիւն բարեաց՝ որ ի ձեռն այսր խորհրդեան պարգեւի մարդկան, իբրու կանխիկ իմն ժառանգեցուցանելով նոցա զերկինս. զի յանդիման աչաց ունին և չօշափեն զարարիչն երկնից և երկրի։ Բայց դու ի սքանչանալդ՝ և յամօթ լեր, զի տակաւին թուլութեամբ և հեղգութեամբ համարձակիս մերձենալ առ այդպիսի խորհուրդ. նկատեա ընդ քեզ և զորս ընդ ամենայն երկիր պղերգս ի ծառայութեան Աստուծոյ, գյանդգնեալս յաստուածընդդէմ գործս, գնուազութիւն բարեպաշտիցն և զապաւինելոց ի նա սրտի մտօք, և զբազմութիւն զբաղելոցն ի սնոտիս՝ որք հազիւ ուրեմն թէ խօսիցին կամ յիշիցեն զԱստուած։ Եւ ցաւելով ուժգնակի՝ զարթո ի քեզ եռանդն սիրոյ առ Աստուած, զոր այդքան մարդիկ կամ ոչ ճանաչեն կամ ոչ պաշտեն խնամով. և փոյթ յանձին կալ՝ այնպէս Ջերմեռանդն և սուրբ մտօք մատուցանել զպատարագդ, զի և Աստուած զուարճացեալ յանուշահոտութենէ նորին, յորում գոյ և մասն գործոյ գործողին, մոռասցի իմն զանկղիտանս մարդկանն որք ընդդէմ կամաց իւրոց սրբոց գործեն։ Անտուստ վերամբարձիր մտօք և տես, քանի՞ Ջերմն սիրով սիրեն զԱստուած երկնաքաղաքացիքն ամենայն, և որպէս իբրեւ ի միոջէ բերանոյ՝ քաղցր ձայնիւ օրհնաբանեն զնա. խառնեա՛ց և դու յերամս նոցին, և հան նուէր սիրոյ և գովութեան համահաւասար։

Հայեա՛ց դարձեալ ի Պատարագդ՝ իբրեւ ի պատկեր չար-

չարանաց և մահուան Քրիստոսի և ի ճառ ողորմագին. ոչ ի բանահիւսութիւն ըստ քերդողացն արուեստի և յողբերգութիւն մտախաբ, այլ յիրական և հաւաստի. որ յանդիման առնէ անարիւն զչարչարանսն և զմահ, յորմէ ամենայն բարիք քո և այլոց յառաջագայեն. և տես քանի՞ զգուշութեամբ և ջերմն ըղձիւք վայել է քեզ զայդ հրապարակաւոր առնել ամենեցուն. քանզի յանդիմանակացք կան դմին ամենասուրբ Երրորդութիւն, մարդկութիւնն Քրիստոսի ի յերկինս, և հրեշտակքն և հոգիք սրբոց: Մի՛ երեւեսցի ի քեզ անպատշաճ ինչ և անվայելուչ՝ որ հարցէ զաչս Աստուծոյ և երկնաքաղաքացեացն: Եւ զայնիս պարկեշտ և զգաստ, եթէ գուն զործիցես հանապազօր մեռուցանել զախտաւոր կիրս, և կենդանացուցանել ի քեզ զյիշատակս չարչարանացն Քրիստոսի՝ զոր յայտ յանդիման երեւեցուցանէ պատարագն:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ ՊԱՏԱՐԱԳԻ

ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ

Նախ քան զաղօթելդ, ասէ Իմաստունն, պատրաստեա զանձն քո, և մի՛ լինիր իբրեւ զմարդ որ փորձէ զԱստուած: Եթէ փորձել զԱստուած և չարժել զդաստումն նորա համարի մատչելն յաղօթս մինչչեւ զգուշութեամբ պատրաստեալ, քանի՞ առաւել ատելի է Աստուծոյ, որ ժպրհի անպատրաստ մատչել ի պատարագ միածնի Որդւոյ Աստուծոյ և ընդունել զնա յինքն: Եթէ թագաւոր կամ իշխան ոք մեծազօր ազգ առնէր քեզ՝ ի վաղիւն պատրաստել ինքեան ճաշ, քանի՞ խնամով մաքրէիր և յարդարէիր զտուն քո, զգիշերն իսկ թերեւս արթուն կալով և աշխատելով, զի մի՛ ինչ խառնակ և անսեթեւեթ գտցի. իսկ արդ մինչ թագաւորն թագաւորաց և տէրն տերանց հրամայէ քեզ, եթէ « Ահա ես եկից և բնա- » կեցայց ի միջի քում », քանիո՞ն զգուշութեամբ չիցէ քեզ պարտ և արժան սրբել զառագաստ քո յամենայն պղծութենէ, և վայելուչս յօրինել ի զարդ գեղոյ, որով արժանի լիցիս ընդունել զհիւրդ մեծ. զի և այնպէս երեւեցուսցէ Աստուած հոգւոյ քում զինքն՝ որպէս հոգի քո պատրաստեսցէ նմա զինքն. և որքան յաւելցես դու ի ջանսն, այնքան և նա ի շնորհսն:

Յամենայն ի գործս՝ նախ ուղղութեանն և կարգի արժան է խնամ տանել. խնամ կարեւորազոյն յայսպիսի խորհուրդս՝ է սրբութիւն վարուց, և հանապազ հոգալ զհաճոյ լինելն յաչս Աստուծոյ, որպէս զի և նա արժանի արասցէ զքեզ երկնային խրախութեանցն: Եւ որպէս պտուղ ստէպ մատուցման պատարագի՝ անկ է թէ իցէ զարգացումն ի խոնարհութեան, ի համբերութեան, յարհամարհութիւն աշխարհի, և ի սէր երկնաւոր. ի դէպ է թէ և ճշմարիտ պատրաստութիւն իցէ՝ օր ըստ օրէ զերծանիլն յախտից և ստանալ զառաքինութիւնս, մինչեւ կարող լինել ասել ընդ Առաքելոյն, « Կենդանի եմ ես, ոչ ես՝ այլ կենդանի է յիս Քրիստոս »: Եւ արդարեւ որոց կիրթ ունիցին հանապազ զմիտսն յաստուածայինս՝ ոչ է նոցա դժուարին յառաջելն ի մաքրութիւն վարուց, առ արժանապէս մատուցանել զպատարագն. իսկ որոց, որպէս բազմաց, ոչ են սովորեալ միտք ի վերամբառնալ յաճախ, կարգեցին Հարքն կանոնս և կրթութիւնս, որովք կարող լիցին ըստ ներել բաւականին՝ պատրաստօրէն մերձենալ ի խորհուրդն մեծ. և որոց առաջին և գլխաւոր է խոստովանութիւնն:

Ահագին և բազում զողման արժանի են բանք Առաքելոյն եթէ « Որ ուտէ զհացս զայս և ըմպէ զբաժակս անարժանու- » թեամբ՝ պարտական եղիցի մարմնոյ և արեան Տեառն » վասն որոյ որ կամիցի պատարագ մատուցանել, դարձեալ ըստ խրատու նորին Առաքելոյ, « Փորձեսցէ մարդ զանձն- » իւր, և ապա ի հացէ անտի կերիցէ և ի բաժակէն արբցէ » քանզի որ ուտէ և ըմպէ անարժանութեամբ՝ զդատաստան » անձին իւրում ուտէ և ըմպէ »: Արդարեւ կարեւոր է յոյժ փորձել զանձն. և մի՛ բնաւ գիտելով յանձին արատ մահացու՝ մատչիլ ի պատարագ՝ եթէ և զղջացեալ, մինչչեւ արարեալ խոստովանութիւն խորհրդական. զի մի՛ արդեօք ի դատապարտութիւն իւր ընկալցի զհացն կենաց: Այլ առ վայելել յաստուածային սեղանոյն՝ որ անճառելի փափկութիւնս պարգեւէ հոգւոցն մաքրից, և ի յաղենալ լիուլի, անէ սրբիլ՝ ոչ ի մահացուացն եւեթ մեղաց, այլ և ի ներելեա

և յամենայն երկրաւոր ցանկութեանց, մաքուր և անարատ ունել զխիղճ մտացն, և աստուածային շնորհօք յարդարեալ և զարդարեալ զոգին։ Վասն այսորիկ սովորութիւն է քահանայից երկիւղածաց յամենայն աւուր կամ օր ընդ մէջ կամ երկիցս ի շաբաթու խոստովանել բեկեալ սրտիւ, ջանալով զամենայն արմատս չարեաց խլել յանձանց. և եթէ չգուցէ ինչ մաքրելի խորհրդով ապաշխարութեան, այլ ոչ առնել զանց զներգործութեամբ զղջման. զի զսիրտ բեկեալ և խոնարհեալ սիրէ Աստուած։ Վասն որոյ և ի խոստովանելն՝ այսմ առաւել ուշ ունելի է, Ներսիսեանդն զղջման ասեմ, քան մանրապատում առնելոյ զանցս և զկիրս սրտին. և ի յորդորումն զղջման սատարեսցեն խորհրդածութիւնք ինչ համառօտք այլ ազդողականք։

Յայսոցիկ սակի են. Ցանրութիւն կամ չարութիւն մեղաց, որ դառնացուցանեն զԱստուած, զոր ամենայն խնամով արժանն է ի հաշտութեան ունել, և ոչ փոքու իւիք եւս արհամարհել։ — Մեծամեծ վնասք մեղաց՝ և ի կեանս յայս և ի հանդերձեալսն։ — Սաստկութիւն դատաստանացն Աստուծոյ, որ բազում անգամ լքանէ զանշնորհակալուս և ի բաց մերժէ զգաղջացեալսն։ — Անստուգութիւն տեւողութեան շնորհաց՝ որովք մարթ էր ջնջել զմեղսն։ — Յիշատակ անվախճան և անեզր յաւիտենականութեան։ — Անհասանելի արժանաւորութիւն Աստուծոյ, որ առ ի փրկել զմեզ ի մեղաց՝ յանձն առաւ զչարչարանս դառնակսկիծս։ — Մեծամեծ բարիքն զոր սրաբ քեզ Տէր, և որոց անշնորհակալու լինելդ՝ չար մեծ է։ — Գերագանցութիւն յաւիտենական վարձուցն, և դիւրութիւն հնարիցն առ ի ստանալ զայն։ — Անճառելի սիրերութիւն Աստուծոյ, որ արժանի է գերագոյն պաշտաման, և որ անբաւ սիրով սիրէ զանձն քո։

Զայսոսիկ խորհրդածելով՝ մարթ է քեզ զգալ զեղջ սաստիկ, և այնպէս մատչել առ ոտս խոստովանահօր, իբրեւ աւազան արեան Քրիստոսի, աներկմիտ յուսով սպիտակացուցանելոյ ի նմին զանձն քո յամենայն զազրութեանց։ Հարարեաց կրկին քահանայս լինել անդանօր, մին երեւելի և միւսն աներեւոյթ՝ որ հայի ի գաղտնիս սրտիդ. առ որ խոնարհեալ նախ՝ ընդ անառակին որդւոյ խոստովան լեր մտօք անրաբար, և հայցեա շնորհս բարւոք խոստովանութեան առ

պաշտօնեայ նորին. և որպէս պարտաւոր ոք առ դատաւորն՝ մատուցեալ առ հայրդ խոստովանութեան, ասասցես զմեղս քո բացայայտ և մեկին, խոնարհեալ անձամբ, արտասուօք և պատկառանօք, և մի առ սովորութեան ինչ։ Եւ յարտասանել պաշտօնէին զարձակմանն բան, կրկնեա և դու զներգործութիւն զղջման, նկատելով ի սրտիդ զԲրիստոս մատուցեալ ի համբոյր անառակ որդւոյն, նայապէս զարդարելով զնա ի պատմուճան մաքուր, և գիրկս արկեալ գգուանօք ասել. Թողեալ լիցին քեզ մեղք քո, այլ մի՛ եւս մեղանչեր։ Եւ քո շնորհս կալեալ՝ ասասցես ընդ մարգարէին. Այժմ սկսայ. և սկսցիս ի ժամէ անտի ուղղել զգործս և զգնացս քո։ Եւ զոր ինչ կարգեալ լիցէ քեզ ի հատուցումն վասն մեղացդ՝ հատուսցես մտադիւր խառնելով ի նուիրումն չարչարանացն Քրիստոսի և ի հաճոյական վարս Սրբոց։

ՄԵՐՁԱՒՈՐ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆ Ի ՊԱՏԱՐԱԳԵԼ

Հասարակ առած է սրբոց Հարց, եթէ այնպէս յայտնէ Աստուած զինքն հոգւոյ, որպէս նայն պատրաստէ զանձն առ Աստուած։ Վասն որոյ հաղորդութիւն՝ ոմանց հաց է կենաց և մանանայ թաքուն, դրախտ փափկութեան, և երկրորդ երկինք՝ յորում լսելի լինին բանք անճառելիք՝ զոր ոչ է մարթ ումեք խօսել. իսկ այլոց՝ հաց է անհամ, առանց քաղցրութեան և կենսական ներգործութեան, նաեւ մահաբեր՝ ըստ ախտից հոգւոյն։ Սակաւք են որք զգան զմեծահրաշ ներգործութիւն խրախճանիս, քանզի սակաւք են որք ըստ օրինի յարդարիցեն զանձինս առ նորայն ընդունելութիւն. կամ՝ մտադիւրագոյնս ածցեն զմտաւ՝ եթէ մատչին առ Սրբութիւն օրբոց, ի սեղան Աստուծոյ և յինքն իսկ յԱստուած. վասն այնորիկ, ըստ Առաքելոյ, և բազում հիւանդք են և ախտաժէտք, և « շատք եւս այնք են՝ որք և ննջեցեալք իսկ իցեն »։ Մահու սպառնալիս կարգէր Աստուած ի հնումն քահանայապետին՝ եթէ համարձակեսցի մտանել ի սրբութիւնսն առանց զանգակացն հնչման, առանց փողփողեալ ականց տախտակի լանջացն և օրինի զգեստուցն. իսկ որո՞ց պատժոց չիցէ ար-

ժանի քահանայ նորոյ ուխտիս, որ ոչ առ տապանակն մատչի
ստուերական, այլ առ Աստուած ինքն, զի զՈրդի նորա Միա-
ծին ընծայեսցէ, չօշափեսցէ և ճաշակեսցէ, եթէ ոչ ըստ
պատշաճի մեծի խորհրդոյն և վայելչութեանն Աստուծոյ՝
պատրաստութեամբ և զգաստութեամբ կատարեսցէ զպաշ-
տօնն։ Ապա փոյթ մեծ խնամոց ունիցի բորբոքել նախ ի
սրտին սեղանի զհուր սիրոյն Աստուծոյ, ըղերձելով պէսպէս
ներգործութիւնս առաքինութեանց ըստ պատշաճի գերագոյն
նուիրացն։

Եւ զի յայսմ պաշտաման ոչ հոգւոյ միայն է սպասաւո-
րութիւն՝ այլ և մարմնոյն, արժան է և զսա անարատ ունել
յամենայն աղտեղութենէ։ Զի եթէ քահանայիցն օրինականաց՝
որք զտարերս տկարս և զստուերս հանդերձելոցն մատուցա-
նէին, պատուէր հրամանի ի վերայ կայր՝ զգենուլ հանդերձս
պայծառս և լուանալ զմարմինս, քանիո՞ն առաւել արժան է
Քրիստոսեան քահանայի սուրբ լինել յամենայն աղտոյ, զի
զանարատ մարմին և արիւն Տեառն իւրոյ մատուցանէ և
ճաշակէ։ Ի դէպ է ուրեմն նմա զգուշանալ սրբութեան մար-
մնոյ՝ ողջախոհութեամբ, պահօք, մաքրութեամբ, բարեյար-
մար և պարկեշտ զգեստուք։

Իսկ ըստ հոգւոյ՝ յիշելով զի Քրիստոս յառաջ քան զկար-
գումն խորհրդոյս լուաց զոտս աշակերտացն, մաքրել զոտս
հոգւոյ, այսինքն է զստորաքարշ բաղձանս, սրբել զսիրտ ար-
տասուօք, և ի լուացման ձեռացն՝ սրտառուչ ապերսել զլուա-
ցումն և զշնչանս յամենայն յանցանաց և ի մանուց ան-
զգամ։ Եւս առաւել ի պատրաստել զնուէրսն և ի դնել ըզ-
ինչխարն ի մաղզմայն՝ ի յուշ ածցէ զի յետ սակաւու միոյ
փոխելոց է այն ի մարմին Քրիստոսի. և հայեցեալ յիւր
անարժանութիւն՝ կրթիցի յերկիւղ և ի պատկառանս։

Այլ ի վեր քան զամենայն յուշ լիցին քեզ պատարագչիդ՝
դարշարանքն և մահն Քրիստոսի, զոր և անհրաժեշտ կարե-
ւոր վարկանին Հարք, ըստ խրատու Առաքելոյն, թէ «Բա-
» նիցս անգամ և ուտիցէք զհացս զայս և զբաժակս ըմպի-
» ցէք՝ զմահ Տեառն պատմեցէք մինչեւ եկեսցէ նա»։ Ինքնին
Իսկ Փրկիչն մեր պատուիրեաց զսոյն ի կարգման խորհրդոյն.
« Զայս արասջիք առ իմոյ յիշատակի »։ Զայս բան քննելով
հրեշտակային վարդապետին, անդէպ համարի քահանայի մա-

տուցանել պատարագ՝ եթէ ոչ նախ յիշեսցէ զչարչարանս և
զմահն Տառն. « Ոչ վայրապար համարիմ, ասէ, ասացեալ
» Տեառն, եթէ քանիցս և առնիցէք զայս՝ առ իմոյ յիշա-
» տակի արասջիք. և վարկանիմ անհնար ինձ՝ անստգիւտ
խղճիւ և անդատապարտ հոգւով մատչել առ այն, քանիցս
և կամիցիմ մատչել, եթէ ոչ նախ յիշեցից զսէր հեղինակի
խորհրդեանս, զչարչարանսն և զմահ։ Արդ քահանայ որ հան-
դերձի սրբագործել՝ հաւաքեսցէ յամենայն հոգոց և անձկու-
թեանցն Տեառն իւրոյ, և դիցէ յանձին իւրում, ի սիրտն,
ի միտս և յախորժակս, մտադիւրագոյնս յիշելով զամենայն
կիրս չարչարանաց նորին՝ զոր վասն փրկութեան մերոյ
կրեաց նա. զայսոսիկ հանապազ յեղյեղեսցէ բերանով և սըր-
տիւ. զայս համարեսցի ինքեան իմաստութիւն վսեմական,
գիտել զՔրիստոս, և զնոյն ի խաչ ելեալ, և առ նա մաղթե-
լով անմռունչ՝ մատիցէ ի սեղանն։

ՆՇԱՆԱԿ ՍՊԱՍՈՒՑՆ ՝ ԶԳԵՍՏԱՒՈՐՈՒԹԻՒՆ

ԵՒ ՅԵՂԱՆԱԿ ԿԱԼՈՅ Ի ՄԱՏՈՒՑԱՐԱՆԻՆ

Զոր օրինակ սովորութիւն է թագաւորաց և իշխանաց ի
հրապարակական հանդիսի՝ ոչ սովորական հանապազօրեայ
հանդերձիւքն երեւել, այլ պայծառագոյնս և շքեղս արկանել
զանձամբ, զի քաջիկ երեւեսցի իշխանութիւն նոցա և յար-
գեսցի ի տեսողացն, ըստ այսմ և քահանայ, որ հանդերձեալ
է պատարագել՝ արկանէ զանձամբ զգեստս սրբազանս և վայե-
լուչս. յանդիման կացուցանելով նոքիմք և զչարչարանսն
Քրիստոսի, մինչչեւ ի նուէրսն մատուցեալ, և զլաւութիւնսն՝
որովք արժան է զարդարիլ քահանային, զի արժանապէս և
սրբութեամբ պաշտեսցէ զքահանայութիւնն։ Արժան իսկ է
քահանայի՝ որ յամենայնի զդէմս Քրիստոսի բերէ, ըստ նո-
րին նմանութեան և զգեստաւորիլ, և ի փառս նորին շրջել՝
զոր կոյր նախանձ և ցաստումն Հրէիցն յարհամարհանս նորին
հնարէր։

Արդ խոյրն՝ նշանակեսցէ զծածկոյթն, որով ծածկեալ

զգլուխ և զերեսս Քրիստոսի՝ կոփէին և հարկանէին, և ընդ խաղ արկեալ ասէին, Մարգարեաց մեզ, ո՞վ է որ եհարն զքեզ։ Շապիկն՝ ցուցցէ զհանդերձն սպիտակ՝ զոր զգեցոյց նմա Հերովդէս իբրեւ յիմարի ումեք։ Գօտին՝ նշանակ իցէ պարանացն՝ որով կապեցին ի պարտիզին, և խարազանացն՝ որովք ի սեանն ձաղեցին։ Բազպանքն՝ կապանացն՝ որով պրկեցին զբազուկն նորա իբրեւ զառն ապիրատի և անօրինի։ Ուրարն՝ ի յուշ ածցէ զառոռունսն արկեալս ի պարանոց նորա, և զխաչափայտն՝ որ բարձաւ յուս նորին, յորոյ վերայ և կախեցաւն իսկ։ Նափորան՝ իցէ հանդերձն ծիրանի՝ զոր զինուորքն յապարանսն Պիղատոսի զգեցուցին նմա առ առակէ, իբրեւ թագաւորի ստոյ։ Եւ զի նշանակք են սոքա՝ զգեստուցն այնոցիկ Քրիստոսի, յարկանել քահանային զինքեամբ՝ ընդ միոյ միոյ ըղերձեսցէ պէսպէս աղերսս սիրոյ, ցաւոց, երախտեաց, ըղձից հետեւող լինելոյ նորա համբերութեան, խոնարհութեան, նախատանացն, տանջանացն, և որ այլ եւս կրից։

Արժան է նմա յիշել և զառաքինութիւնսն խորհրդաբար նշանակեալս ի զգեստքս, զի ծանիցէ քաջ՝ եթէ որովք և որքանեօք լաւութեամբք ի դէպ է և ինքեան ուղղել զվարս և զարդարել. որպէս և գրեալն է, եթէ « Քահանայք քո զգեցցին զարդարութիւն », այսինքն է զառաքինութիւնս, զոր բազում անգամ յանուն արդարութեան կոչեն գիրք սուրբք։ Արդ խոյրն կամ սաղաւարտն ազդ առնէ, եթէ պարտ է մեզ ունել ի մտի զխոկումն յաւիտենական փրկութեան, զիղձ անախտական բարեացն, զանջատումն ի կորստական զբաղանաց, յոյս և ապաւինութիւն յԱստուած՝ ընդդէմ բազմապատիկ յարձակման թշնամեացն։ Դարձեալ յայտ առնէ ըզմարդեղութիւն Տեառն մերոյ, որոյ գլուխ է պարածածկեալ աստուածութիւնն, յոր ոչ զօրէին հայել աչք մեր՝ եթէ ոչ էր ամպով մարմնոյն ծածկեալ։ Ապա յառնուլ քահանային զսաղաւարտն և համբուրիւ դնել ի գլուխն, համարեսցի համբուրիւ սիրոյ մերձենալ յամենասուրբ մարգկութիւն Քրիստոսի, զի նովաւ պատսպարեսցի և պաշտպանեսցի, ասելով ընդ մարգարէին. « Տէր զօրութիւն փրկութեան իմոյ, հովանի գլխոյ իմոյ յաւուր պատերազմի »։ Դարձեալ, ի սաղաւարտելն յիշեսցէ քահանայ զհամեստութիւն աչաց, մի

այլ ինչ բնաւ տեսանել ի ժամու պաշտամանն՝ բայց զոր կատարէ խորհուրդ։

Շապիկն՝ որ զբովանդակ մարմինն պարածածկէ, նշանակէ զանմեղութիւն, զպարզմտութիւն, զմաքրութիւն, զվայելչութիւն հոգւոյ, որովք անկ է քահանայի շուրջ պատիլ և զարդարիլ ի ներքոյ և արտաքոյ, և զնոյն արտափայլել յամենայն ի գործս իւր, լինել սուրբ և անարատ առաջի Աստուծոյ, և այնպէս մատուցանել զամենասուրբ խորհուրդն։

Բազպանքն ազդ առնեն զարտասուս, զցաւ և զապաշխարութիւն, որովք անկ է քահանայի հանապազ ողբալ զմեզս, զիւր և զայլոց. դարձեալ, և զկրթութիւն մեռելութեանց մարմնոյ և ըղձից, և զխոնարհութիւն ի կալն ի սեղանին. եւս և զհատուցումն հանդերձեալ բարեացն, ըստ սաղմոսերգուին բանի. « Երթալով երթային և լային որք բարձեալ տանէին զսերմանիս իւրեանց. Գալով եկեսցեն և ցնծասցեն՝ ոյք բարձեալ բերցեն զորայս իւրեանց »։

Ուրարն արկեալ զպարանոցաւ և վակասն զուսով, յայտ առնեն, եթէ հարկ է քահանայի միանալ ընդ Աստուծոյ և զօդիլ ընդ նմա. տանել համբերութեամբ զխաչ իւր. անձնատուր լինել յԱստուած բոլորանուէր հնազանդութեամբ. բառնալ մտադիւր զլուծն Քրիստոսի, և կատարել զհրամանս նորա։

Գօտին նշանակ է ողջախոհութեան, որով անարատ կացցէ քահանայ ի հոգի և ի մարմին. յայսր օրինակ պատուիրեալ էր Աստուծոյ կերողաց գառինն՝ գօտի ընդ մէջս ածել. և Քրիստոս, « Եղիցին գօտիք ձեր պնդեալ ընդ մէջս ». որպէս և ինքն երեւեցաւ ի Տեսլեանն Յովհաննու՝ գօտեւորեալ գօտի ոսկեղէն. յայտ իմն այսպէս առնելով, եթէ պարտ է մեզ մաքրել զամենայն իղձս, և յաղթել մարմնաւոր սիրոյ՝ հոգեւորաւն՝ զոր ոսկին նշանակէր։

Նափորան՝ պայծառագոյն և մեծագին քան զայլ հանդերձսն և շրջապատող նոցին, նշանակ է սիրոյ որ գերապանծն է առաքինութեանց, իբրեւ թագաւոր բնաւիցն և զօդ կատարման. առանց նորա անկատար է ամենայն. զնմանէ կախեալ կան ամենայն օրէնք Աստուծոյ, և ի նմա բովանդակին ամենայն բարիք։ Եւ ըստ յառաջոյ և ի թիկանց պատուածոյ շուրջառին՝ յիշելի է՝ զի և սեր [illegible] ժանի, յաստուա-

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
U.S.S.R. Публичная Библиотека
7/3 1922

ծայինն և յընկերին։ Իսկ գունագոյն երանգք նորին և անկուածք՝ նշանակք իցեն պէսպէս ըղձից և աղերսից. գոհութեան՝ վասն երախտեացն Աստուծոյ, խնդութեան՝ վասն մեծամեծ սքանչելեաց նորին, արիութեան՝ յարկածս վտանգաց, թաղծութեան՝ վասն մեղաց անձին և այլոց։

Այսոքիկ իցեն գլխաւոր առաքինութիւնք նշանակեալք ի քահանայական զգեստսն. և սոցին ներգործութեամբ անկ է զգենուլ քահանայի, առ արժանապէս մատուցանել զպատարագն։ Հանդերձ այսոքիւք ասասցէ և զօրինագրեալ աղօթսն ի զգեստաւորութեան միոյ միոյ ի սպասուցն. և երկիւղիւ և ամօթով յիշեսցէ և զայն, թէ մի արդեօք թերակատար պատրաստութեամբն՝ գառնեսի երեւութիւ զայլ յանդիմանեսցի յաչս սրտագիտին Աստուծոյ։

Յետ այսպիսի խորհրդածութեամբք զգեստաւորելոյ՝ ի մատչելդ առ սեղանն սուրբ և ի կալ ի նմին, գիտասջիր զի հարկ է սրբութեամբ կատարել զգործն սրբութեան, և մի և դոյզն ինչ մեղօք անարգել կամ ի ցասումն շարժել զԱստուած. կամ տարտամութեամբ և անզգաստութեամբ անարգանս ածել ամենայարգ խորհրդոյն։ Այնքան զգաստ, աչալուրջ և եռանդուն պիտոյ է քեզ լինել ի ժամու պաշտամանդ, զի մի և դոյզն ինչ ցրումն մտացդ լիցի. և անվրէպ պահեսցես զհրամայեալ և նշանակեալ կարգս և արարողութիւնս խորհրդեանն, ամենայն երկիւղածութեամբ։ Զամենայն բան աղօթից՝ որ ի ձայն և որ լռելեայն՝ ասասցես յստակ, անթերի, եռանդագին և յուշիկ. թողեալ ի բաց ի մտաց զայլ ամենայն խորհուրդ, թէպէտ և բարի և սուրբ իցէ, այլ ոչ ըստ գրաւորական նշանակութեան պատարագամատուցին. զի ոչ վայրապար ընտրեալ և կարգեալ է եկեղեցւոյ զամենայն մաղթանսն և զընթերցուածս և զիմաստս, ի շինութիւն քահանային և ժողովրդեանն։ Վասն որոյ և արժան է քաջ հմուտ լինել ամենայն ծիսից պատարագի և իմաստից աղօթիցն և ընթերցուածոց։

Յերթալդ ի սեղանն՝ եթէ դուցէ նշան տէրունական խաչի կամ պատկեր, ողջունեա խոնարհութեամբ. և իբրեւ անբաւական մեծի գործառնութեանդ՝ մաղթեա զզօրութիւն սրբոյ խաչին և զսրբոցն բարեխօսութիւն։ Տեսջիր մտօք և զնոյն ինքն զԲրիստոս ծանրաբեռնեալ խաչիւն ելանելով ի Գողգոթա յառաջընթացիկ քեզ, և դու երթ զհետ քահանայապետին մեծի, զորոյ զչարչարանս և զմահ հանդերձեալ ես յանդիման առնել. երթ պարկեշտօրէն և վայելուչ. մաղթելով և զօժանդակութիւն շուրջ զքեւ պատելոց հրեշտակացն դասուց. և դիր ի մտի՝ եթէ յաշխարհէ աստի ի վերինն անդր փոխադրիս։ Եւ յորժամ հուպ ի սեղանն լինիս՝ հայեաց յերկինս իբրեւ բացեալս քեզ ի վերուստ, և զերկնաւորսն ամենայն դէտ կալով քեզ՝ որ մատուցանելոցդ ես զանարատն զոհ ի պէտս ամենայն աշխարհի։ Յիշեա զպատուհաս մահու զազանին անգամ մատուցելոյ ի լեառն պատգամացն Աստուծոյ, և զմտաւ ածեալ զքո անարժանութիւնդ՝ պատկառեաց փրկաւէտ երկիւղիւ։ Ապա վերամբարձեալ զսիրտ քո առ ամենագութն Աստուած, արկ աղերս սիրոյ, ըղձանալով՝ եթէ հնար է, ի Քրիստոս համակիլ, նորայոցն կցորդիլ համօրէն լաւութեանց։

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՔ Ի ԲՈՎԱՆԴԱԿ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՏԱՐԱԳԻՆ

Հասեալ առաջի սրբոյ սեղանոյն և երկրպագեալ կամ խոնարհեալ անձամբ առաջի Սրբութեան Սրբոց կամ խաչին Քրիստոսի, կաց վայրկեան մի և յիշեա ընդ Աբրահամու՝ զի հող ես և մոխիր. փափագեաց լինել նմանող Քրիստոսի՝ որ էջ յերկնից՝ զծառայի կերպարանս առնուլ. զի որչափ ի խոնարհութիւն յաւելցես՝ այնչափ հաճոյական լիցի Աստուծոյ մատուցումն քո։ Գոհացիր զմարդասիրութենէ փրկչիդ որ եկն ի փրկել զմարդիկ, և զայս խորհուրդ հրաշալի հաստատեաց, և զքեզ՝ նմին պաշտօնեայ։ Ապա միւս անգամ խոնարհեաց յերկրպագութիւն ի դիմաց ամենայն արարածոց. և տեառնագրեալ զքեզ նշանաւ խաչի, սկիզբն արա, ասելով, « Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ », և զմտաւ ածելով՝ եթէ քանի՞ ահաւոր է անունն որով սկիզբն առնես գործոյդ, դիր ջան լինել այնպիսի՝ որպէս վայելն է հրաշափառ վայելչութեան Աստուծոյ։ Մեծ և հզօր է յոյժ յիշատակ առաջակայութեան ամենասուրբ Երրորդութեանն, զոր և անվրէպ կալջիր ի մտի, զի ի փառս նորա կատարի խոր-

հուրդն. և զօրութիւն նորա հերքէ զամենայն հնարս բանսարկուին՝ որ և ի պահու անդ քահանայագործութեանդ՝ ժպրհի ցնորեցուցանել զմիտսդ քո։ Իղձ լեր ի սրտէ՝ ամենայն մարդոյ ճանաչել զայդ խորհուրդ եռանձնեայ աստուածութեան և զմարդեղութեան Բանին՝ յորմէ աղբիւրացան յերկիր ամենայն բարիք. և այսպէս արասցես յամենայն նուագս կնքելոյ զքեզ տէրունական նշանաւն։

Եւ անդէն յետ այնր յասելդ, « Եւ վասն Սրբուհւոյ Աստուածածնին », և զյետագայ աղօթսն՝ « Ընկալ Տէր զաղաչանս մեր », յիշեա զի յոյժ զօրաւոր և կարեւոր է քեզ բարեխօսութիւն սրբոց յօժանդակութիւն գործոյդ մեծի, և եւս առաւել ամենասուրբ Կուսին, զոր ի յաւիտենից ընտրեալ էր Աստուծոյ ի տնտեսութիւն մեծահրաշ գործոյ փրկութեան մարդկան՝ մարդեղութեամբ Բանին։ Պատկառեա՝ զի իշխիցես շրթամբք և ձեռօք շօշափել զայն՝ զոր հրաշալին այն Կոյս և մայր՝ ամենամաքուր մատամբքն դարմանեաց և գգուեաց, անտխեղծ շրթամբքն համբուրեաց, յամբիծ ծոցին հանգոյց և սնոյց. և մաղթեա նմա լինել քեզ ընթերակայ՝ որպէս Յիսուսին իւրում յամենայն ի կեանս նորա, և մանաւանդ ի խաչելութեան պահու և յաւանդման հոգւոյն։ Հրաշացիր գամ մի ընդ անճառելի սէր և ընդ անհաս ցաւս այնպիսեաց՝ Որդւոյ և մօր, ի կալն ընդ միմեանս և ի մեկնիլն ի միմեանց. և փափագեա՝ ի խորոց սրտի՝ լինել հաղորդ կրից նոցին այժմէն, և վայելիցն՝ ի յաւիտեանսն։

Եւ յորժամ ընդ այնքան արժանաւորութեան Տիրամօրն և Սրբոց՝ զքո անարժանութիւնդ կշռիցես, քաջադէպ վարկջիր զկարգուած հանրաբար խոստովանութեանն՝ զհետ մաղթանաց բարեխօսութեան նոցին. զի և ըստ իմաստնոյն բանի՝ « Արդարն անձին իւրում չարախօսէ ի սկզբան բանից իւրոց ». և ասա զխոստովանութիւնդ արդարեւ բեկեալ սրտիւ, ի վեր քան զամենայն ինչ ցաւելով ի վերայ մեղաց քոց և ամենայն աշխարհի. և այդ վասն սիրոյն Աստուծոյ՝ որ սիրելին է քան զամենայն բարիս. և ի կրկնելդ զմեղայն, ցաւեա՝ ի խորոց սրտէ, և յուսա՛ գտանել ի Տեառնէ թողութիւն և քոյոցդ և այլոցն մեղաց։ Եւ ի յիշելդ ի խոստովանութեանդ զամենասուրբ Կոյսն և զայլս ի Սրբոց, հայցեա՛ և ի նոցանէ թողութիւն, զի արհամարհեցեր զխրատս և զօրինակ նոցա. այլ և յեղբարց քոց, որոց եւուր գայթակղութիւն, կամ ոչ չինեցեր. և խոնարհութեամբ խնդրեա զօժանդակութիւն աղօթից նոցա. առաւել եւս խոնարհութեամբ լուր և ընկալ զբան արձակմանն (Ողորմեսցի) զոր սպասաւորն ասիցէ։ Այլ ոչ պակաս խոնարհութեամբ յաւելցես և դու արտասանել ժողովրդեանն՝ զազատութեան և զթողութեան բանս, (Ազատեսցէ և զձեզ, և այլն), յիշելով զի ոչ միայն իբրեւ զնոսա մեղաւոր ես և դու, այլ գուցէ և առաւել քան զբազումս ի նոցանէ գոլով մեզապարտ՝ ունիս իշխանութիւն կապելոյ և արձակելոյ, բանալիս փակելոյ և բանալոյ. այլ տես զգուշեաւ և ահիւ, զի մի յ՚արձակելդ զայլս՝ զանձն վարակիցես անեռանդն պաշտամամբ, և ի բանալդ այլոց զդրունս ողորմութեան, արտափակիցես զքեզ ինքն յայնցանէ, վասն անարժան գնացիցդ և անփութութեանդ յուզզութիւն վարուց։ Այլ մաղթեա ի նմանէ՝ յորմէ ունիս զիշխանութիւնդ և որ միայն իշխանն է, նախ զքեզ արձակել և ազատել յամենայն կապանաց մեղաց և յօժարութեանց նոցին, ապա թէ զայլսն քոյով անարգամեծար սատարութեամբ իբրեւ գործի անպիտան ամենապէտ գործոյ ելով՝ վամօք և շնորհօք Տեառն։

Յառաջեաց ապա յաշտիճանս սեղանոյն, ասելով. « Մտից » առաջի սեղանոյ Աստուծոյ ». զոր և դարձեալ երկրորդես ի կարգի սաղմոսիգ, իբրեւ ազգարար քեզ, եթէ բազում հոգեւորական յորդորմամբ պարտ է կատարել զգործ պատարագիդ, բազում զուարթութեամբ, և գերագոյն յարգութեամբ։ Աքանչացիր ընդ բարութիւնն Աստուծոյ՝ որ կոչեացն զքեզ ի սեղան իւր. զի թէ ոչ նորա կոչեալ էր՝ զի՞րդ էր քեզ համարձակելի հուլ ի նա մատչել։ Խնդրեա ամրանալ ի ծածկոյթ երեսաց նորին՝ ի խռովութենէ հոգւոյն չարաց, զի մի ժպրհեսցին օտարոտի սերմամբք ժխորել զխորհուրդսն աստուածայինս։ Մաղթեա և զնորոգումն մանկութեան հոգւոյդ, զեռանդն սրտիդ, որ բղխէ զանապակն և զանկապուտն ուրախութիւն։ — Յասելն՝ « Դատ արա ինձ, Աստուած », զմտաւածդ, եթէ այնպիսի պատրաստութեամբ ի դէպ է մատչել ի սեղանն յայն՝ զի մի՞ զանգիտիցես ի դատաստանացն Աստուծոյ, և զի փրկեսցիս յամենայնէ որ անսուրբ իցէ և անօրէն. այլ ըստ տանելոյ մարդկայինս տկարութեան՝ անբիծ և անա-

բատ կացցես առաջի Աստուծոյ. և զնոյն ամբծութիւն խոնարհութեամբ հայցեսցես ի Քրիստոսէ, և յուսասցիս ընդունել նորին արդեամբք։ — Յասելն՝ «Դու, Աստուած, հզօրիչ» իմ ես», ամաչեաց, զի բազում անգամ կաղդուրեալ քո կենարար կերակրովն, դեռ տկար ես և զնաս թաղծեալ, և ի դոյզն ինչ փորձութենէ ի վերայ հասելոյ՝ ոչ դեղեալս և վտանգիս. յիրաւի նեղէ զքեզ թշնամին և ոչ իւիք փրկեսցիս, եթէ ոչ նա տացէ զօրութիւն որ հզօրիչն է քո և ապաւէն։— Յասելն, «Առաքեա, Տէր, զլոյս քո», խնդրեա զաստուածային լոյսն, զի որոշեալ զստութիւն ի ճշմարտութենէ՝ սմին լիցիս հետեւող, և պայծառացեալ սովիմբ ներքին ըզգայութեանդ՝ միաբանեսցի ընդ արտաքին պատարագին. և յօժարութեամբ ելցես ի լեառնն սուրբ, որ է սեղանն, օրինակ լերինն Գողգոթայ, որ և յանդիման առնէ քեզ զչարչարանս և զմահն Քրիստոսի։ — Ապա ասելով՝ «Խոստովան եղէց» քեզ օրհնութեամբ», արծարծեա ի քեզ զխնդութիւն սրտի՝ որ օրհնութեամբ նշանակի. այլ իսկ և իսկ զմտաւ ածեալ զքո անկատարութիւնդ՝ հառաչեա և ողբա. «Արդ ընդէ՞ր» տրտում ես, անձն իմ». սակայն մի՝ ընկղմիր ի տրտմութեանդ, այլ քաջալերեա զանձն քո ասելով, «Յուսա առ Աստուած». զի կայ քեզ յոյս փրկութեան, եթէ ի փրկիչն քո հաստատեսցես զամենայն ապաւինութիւն քո. ի նմանէ ընկալցիս թողութիւն յանցանաց քոց, և նովաւ ցնծասցես, և զնա գովեսցես հանապազ։ Եւ մխիթարեալ այսպիսի յուսով՝ ասա եռանդուն հաւատով, «Փառք Հօր և Որդւոյ», և այլն, խոնարհեցուցանելով զգլուխ քո, յօժարութեամբ կրելոյ զամենայն ընդդիմակս և զմահ անգամ վասն Աստուծոյ։

Այսպէս խրախուսեալ էլ ընդ աստիճանն, և մեծաւ անձկանօք և յարգութեամբ համբուրեա զԱեզանն՝ յորում կատարելոց ես զաստուածային պատարագն, որպէս զի այդու նշանակաւ սիրոյդ և պատկառանաց՝ զողասցիս իմն զԱստուծոյ բարեհաճութիւն. և յասելն զաղօթսն (Ի յարկի սրբութեան) նկատեսցես ոչ միայն զԱստուած ի վերուստ՝ այլ և զհրեշտակս շուրջ զքեզ, զժողովուրդն ի թիկանց, և զհոգիս ննջեցելոց ի ներքոյ սեղանոյն, ի ձեռն՝ քո քաւութեան ակն ունելով մեզաց իւրեանց և օգնականութեան յամենայն փորձանս. և դու դարձեալ մաղթելով քեզ զօրաւիգն զպայծառացեալ նշանն տէրունեան և զբարեխօսութիւն Սրբոցն՝ որոց թերեւս և նշխարք կայցեն ի սեղանի անդ, մանաւանդ որոց յիշատակ իցէ յայնմ աւուր, և եւս առաւել զյիշատակ տէրունական տօնիցն առեալ քեզ ի նպաստ, մատիցես ապա առաջադրել զնուէրս պատարագին։

Ի դնել զնշխարն կամ զհացն ի մաղզմայն՝ դիր ի նմա և զսիրտ քո և զշրջակայիցն ամենեցուն և զամենայն հաւատացելոց, և զամենեսին առ հասարակ մատո Աստուծոյ, զի որպէս հացդ նուիրական փոխելոց է ի մարմին Քրիստոսի, նոյնպէս և սիրտք ամենայն հաւատացելոց փոխեսցին ի Քրիստոս սիրով և նմանակցութեամբ։ Այսպէս արասցես և ի մատուցման բաժակին։ Եւ ապա գոհասցիս զՏեառնէ՝ որ հաճի թաքուցանել զինքն ընդ այդու տեսակօք՝ վասն սիրոյ քո։ Եւ ի խառնման գինւոյն և ջրոյն՝ ըղձակաթ լեր ընկղմել ողջոյն ի խորս արդեանց Քրիստոսի, և փափագեաց ներքուստ միաւորիլ ընդ Աստուծոյ։ — Եւ յասելդ զնուիրամատոյց բանս աղօթիցն «Աստուած Աստուած մեր», և այլն. յիշեա զանբաւ մարդասիրութիւնն Աստուծոյ, որ ի սկզբանէ հաճեցաւ ի կերպարան իւր հաստատել զմարդն, և յանդրէն ի նոյն նորոգել՝ առաքեաց զԲան իւր Փրկիչ և կեցուցիչ՝ վերստին օրհնել և սրբել զանիծեալն և զանկեալն ի մեզս, և հազորդս առնել խոստացելոց մշտնջենաւոր բարեացն, յաւէտ ի ձեռն զօրութեան խորհրդոյ պատարագիս՝ որ այսու նուիրօք կատարի. զոր և հայցեսցես օրհնել Աստուծոյ արարչական օրհնութեամբ, և մասնակից նմին օրհնութեան առնել զմատուցողս նիւթոյ նուիրացն. և հանդերձ այլովք առանձինն զայնոսիկ՝ վասն որոց մատուցանի այդ պատարագ, ըստ խնդրոյ կամ ըստ կարօտութեան նոցին։ — Յուշ լիցի քեզ ի մատուցմանդ և այս, զի թէպէտ մի միայն է պատարագն Քրիստոսի, այլ երկու են մասունքն, մարմինն ընդ տեսակաւ հացին. և արիւնն՝ ընդ գինւոյն. վասն որոյ և զերկաբանչիւր ուղղեսցես մտօք ի վախճան յոր սահմանեալ եղեն. և այնպէս ջերմն եռանդեամբ արասցես զնուիրագործութիւնդ, որպէս թէ դու միայն էիր քահանայ յաշխարհի, և ամենայն մարդոյ փրկութիւն կախեալ կայր յայդմ պատարագէ։

Յետ այսորիկ վերստին տեառնագրելով զքեզ՝ յասելդ

զ« Օրհնեալ թագաւորութիւն Հօր », և այլն, երկիր պագ ամենասուրբ Երրորդութեանն, ցանկանալով զի նոյնպէս արասցեն ամենեքին։

Զժամամուտն և որ զհետ այնր աղօթսն ասասցես յուշիկ և եռանդեամբ, խորհրդածելով ի յիշատակ աւուրն կամ տօնին, և զարթուցանելով ըստ իւրաքանչիւր յիշատակի պէսպէս իղձս և իմաստս հոգեւորս ի քեզ։ Ապա ի տալ քում ժողովրդեան « Խաղաղութիւն » և յօրհնել, քանիցս և զսոյն արասցես՝ փափագեաց սրտի մտօք զաստուածային օրհնութիւնս վասն եկեղեցւոյ և ամենայն աշխարհի, ըստ իւրաքանչիւր պիտոյից և կարօտութեանց. և զխաղաղութիւն և զսէր մարդկան առ միմեանս և ընդ Աստուծոյ, որ լրումն է ամենայն բարեաց. ընդ նմին և պատկառելով վասն անձինդ որ միջնորդ կարգեալ այսպիսի բարեաց՝ թերեւս երբեմն խռովութեան և չարեաց եղեր պատճառք այլոց և քեզ։ Իսկ յասելդ զ« Սուրբ Աստուածն »՝ սլացիր մտօք ի բարձունս, և նախ մաքրութիւն մաղթեա շրթանցդ, սրտի և գործոց, զի արժանի եղիցիս ընդ հրեշտակաց սրբաբանել զամենասուրբն. և տակաւին սքանչացիր եթէ զիա՞րդ առն մեղաւորի յերկրի պանդխտութեան՝ շնորհեցաւ զերկնայնոցն երգել երգս. և յաւել ի քեզ իղձս գովութեան, երկրպագութեան հաւատոյ, յուսոյ, սիրոյ և նախանձու փառացն Աստուծոյ. փափագելով զի և ամենայն երկիր համաձայնեալ ընդ երկնաւորացն փառաւորեսցեն և սիրեսցեն զԵրեքսրբեանն։

Յառաջ խաղալով յԸնթերցուածն և յԱւետարանն, խոնարհութեամբ ասա ընդ միտս քո. Զբանս գրոց սրբոց՝ ունիմ իշխանութիւն յայտնաբանել ի լուր ժողովրդեան՝ իբրեւ ուսուցիչ նոցին, որ բազում անգամ նստայ յաթոռս ժանտից. և զի՞նչ քարոզեցից զաւետարանն՝ որ արդեամբք և օրինակաւ հակառակ կացի հոգւոյ նորին։ Ապա քաջալերեաց, զի Հաճոյքն Աստուծոյ ծանօթ են մեզ (ըստ Բարուքայ). քանզի յայտնեաց Աստուած զկամս իւր մարգարէիւք և առաքելովք՝ ի Գիրս նոցին, և Որդւով իւրով՝ յաւետարանին։ Վասն որոյ և ամենայն զգաստութեամբ ընթերցցիս իբրեւ զկենդանի պատգամս Աստուծոյ, գոհանալով զնմանէ, զի հաճեցաւ բանիւ իւրով հրահանգել և լուսաւորել զաշխարհ. և յօժարելով ի պահպանութիւն պատուիրանաց նորա

յամենայն դէպս, ի յաջողս և որ ոչ նոյնպէս երեւին։ Եւ այսմ նշանակ քեզ Ալէլուն՝ զոր ասասցես, իբրեւ ի գոհութիւն լրման բաղձանացդ, և ի ծագ քրիստոնէական կատարելութեան դիմելոյ, յոր յորդոր լինին մեզ մարգարէական և առաքելական բանքն։ Գոգջիր թէ ոչ դու ես որ ընթեռնուսն, այլ ինքնին մարգարէն և առաքեալն կացեալ առընթեր, և նոյն ինքն Յիսուս Քրիստոս՝ որ աւետարանէ. և դիր ի մտի անվրէպ ի գլուխ հանել զոր լսեսդ։ Ի խաչակնքելդ զքեզ յընթերցումն Աւետարանին՝ խրախացիր դարձեալ յիշատակաւ փրկարար չարչարանաց Քրիստոսի. և իբրեւ ամուր սաղաւարտաւ պատսպարելով զճակատդ և զրահիւք զկուրծս, իբրեւ զչտեմարան խորհրդոց Աստուծոյ, զի մի ինչ հրապոյրք սատանայի խափանել իշխեսցեն զարգասիս վարդապետութեան Փրկչին։ Եւ ի կատարածին համբուրիւ կնքեսցես ըզմատեանն, ի նշանակ սիրոյն որով անկ է փարել զվարդապետութեամբն, լինել առնող բանին և մի լսող միայն։

Զնոյն օրինակ և յասելդ զՀաւատամքն՝ արծարծեա ի քեզ զեռանդն հաւատոց, և զոր սրտիւդ հաւատաս յարդարութիւն՝ խոստովան լեր բերանով ի փրկութիւն. ներգործեա՛ ի քեզ հաւանութիւնս ըստ բանից Հարցն դաւանութեանց և հերքեա զդիմամարտիցն հերձուածս։ Ուրախ լեր ընդ Քրիստոսի ի յիշատակելդ զտնօրէնութիւնս նորա, զյարութիւնն, զհամբարձումն և զդատողական իշխանութիւնն և զանվախճան թագաւորութիւն։ Գոհացիր և զպարգեւաց Հոգւոյն Սրբոյ՝ որոյ շնորհօք ծնանիմք ի ծնունդ կենաց յաւիտենականաց և սնանիմք խորհրդովք Եկեղեցւոյ. և մաղթեա՛ հաստատ և պայծառ պահել զսա մինչեւ ի կատարած աշխարհի. և յաւարտելդ բանիւն « ի կեանսն յաւիտենականս », յոյսջիր ի քեզ յոյս աներկմիտ հասանելոյ ի նոյն՝ արդեամբքն Քրիստոսի։ Եւ ի փառատրելն ամենասուրբ Երրորդութեան՝ դոհացիր զամենայն բարեացն որ առ ի նմանէ ըստ բնութեան, ըստ շնորհաց և ըստ փառաց պարգեւեցան ամենայն արարածոց։

Եւ զի չիք ի կենցաղումս պարգեւ մեծ քան զխաղաղութիւն, զխաղաղութիւնն ասեմ Քրիստոսի, զոր և ասես յաղօթսն « ի վեր քան զամենայն միտս և զխորհուրդս » լինել, ըստ նմին ասա և մեծաւ եռանդեամբ մաղթեսցես տպաւորել

զայն նախ յոգւոջ քում, և ապա յամենեսին, և մանաւանդ ընդ որոց կենցաղավարիսդ. և նովին մտօք ընդ խաղաղութեան տացես Ժողովրդեան և զՕրհնութիւն Քրիստոսի, ասելով « Տէր Աստուած օրհնեսցէն »։

Յետ այսորիկ իբրեւ ի խորս խորանին Աստուծոյ մտանելով, քանզի յայսմհետէ սկիզբն լինի պատարագին հաւատացելոց, և մերձենայ պահ կատարման ահաւոր խորհրդոյն՝ մեծագոյն եւս եռանդեամբ և խորագոյն զգացմամբ կշռեա զմի մի ի բանից պատրաստութեան և խորհրդական աղօթիցն, զոր խոնարհեալ գլխով՝ և առաւել հոգւով՝ ասիցես, և ըստ ասիցդ ճանաչելով յամենայն սրտէ, զի « Ոչ ոք արժանի է » յըմբռնելոցս մարմնաւոր ախտիւք և ցանկութեամբ մատ» չել ի սեղան » Տեառն. այլ միայն յուսալից վստահութեամբ ի գթութիւնս նորա, զոր եցոյց անգստին ի նախահարցն հետէ մինչեւ ի գալուստ իւր յաշխարհ, և հաստատեաց զխորհուրդս զայս մեծ, մարթ է և անարժանից համարձակել յայս պաշտօն, զի մի, կամ նուազ՝ անարժանք մնայցեն։ Եւ յայս նշանակ խոնարհեալ միւսանգամ մատիցես լուանալ զձեռսդ, փափագելով մաքրութեամբ և սրբութեամբ ոչ միայն զպատարագդ մատուցանել՝ այլ և զամենայն կեանս քո. զոհանալով՝ զի և արեամբն Քրիստոսի ստասցիս զքաւութիւն կատարեալ քեզ և ամենայն աշխարհի։

Յողջունելդ զժողովուրդն՝ յիշեա զի քեզ նախ անկ է սերտ հաշտութիւն ունել ընդ Աստուծոյ և ընդ հօտի նորա։ Միանգամայն և համարեաց զայդ ի պահուդ ողջոյն հրաժեշտի ի ժողովրդենէ, իբրու զի պարտ է քեզ յայնմհետէ խպաւ հրաժարեալ յերկրաւորաց՝ յաստուածայինսն խորամուխ լինել. զոր և ինքնին քարոզես քեզ և նոցա յասելդ. « Ի վեր » ընծայեցուցէք զմիտս ձեր ». իբրեւ թէ, ամենայն արարածք, ամբարձջիք առ Աստուած, վերացարուք յերկրաւոր աղցից և ի մրրոյ, « զվերինն խնդրեցէք, զվերինն խորհե» ցարուք, և մի՝ զայն որ յերկրի աստ է ». զի արժան և իրաւ է միայն զԱստուծոյ երախտիսն յիշել, և յիշել հանապազ և գոհանալ. այն զի գոհութիւն շնորհաց ընդունելոց՝ պատրաստութիւն է ընդունելութեան առաւելագոյն շնորհաց։

Խորին զգացմամբ ասելով զայս խոստովանութիւն գոհութեան (Արժան է ստուգապէս), հրաւիրեսցես և զերկնայնոցն

պարս լինել քեզ ձայնակիցս. « Եւ ընդ Սերովբէսն » և այլն, այլ դու մի մոռանար զի հողեղէն ես, և պատկառանօք խառնեսջիր յերամս հոգեղինացն սրբոց, և մեծաւ յոյժ յարգութեամբ և եռանդեամբ նուագեսցես զերեքսրբեանն, իզձ լինելով հաւասարել յօժարութեան սերովբէիցն և քերովբէից, և զգածնուլ փրկարար երկիւղիւ. զի եթէ դողան սարսեն իշխանութիւնքն վերին՝ որք սիւնքն են երկնից, քանի՞ առաւել անկ է քեզ զդողանի հարկանել՝ որ որդն ես աղկաղկ այլ և զազիր, թաւալեալ ի մեղս՝ որովք գարշեցուցեր զԱստուած։ Մի՛ն դիր և սրբասացութեանդ, զի երիցս զԱուրբն կրկնելով՝ գովես զսրբութիւն, զզօրութիւն և զտէրութիւն Աստուծոյ. իսկ զվայելչութիւն նորա՝ յասելդ « Լի են երկինք » և երկիր փառօք քո ». ապա առանձինն զՔրիստոս բարեբանես, ասելով, Օրհնեալ որ եկիր և գալոցդ ես. և զամենայն իզձս կնքեսցես Ովսաննայիւն։

Որ ինչ յետ այսոցիկ աղօթքն են՝ կանոն կոչին Պատարագի, իբրեւ աւանդեալք ի Տեառնէ մերմէ և յառաքելոց և ի ժողովոց, վասն որոյ և անյեղլիք, և ըստ այնմ ամենայն երկիւղածութեամբ և սրբութեամբ պաշտելիք։ Է ինչ որ լռելեայն ասի իբրեւ նշանակ մեծութեան գործոյն որ ընդ Աստուծոյ կատարի, և խազաղական վիճակի հոգւոյն որ անկ է ի պատշաճ սպասաւորութիւն խորհրդոյս, և ի քաջ խելամտութիւն նորին, զոր և ցուցանէ աղօթքն որ զհետ գայ միաձայն սրբասացութեան ընդ հրեշտակաց. և դարձեալ երիցս կրկնելով զանճառելի սրբութիւն Աստուծոյ, որով և մեր երիցս և բիւրիցս անարժանութիւն նշանակեսցի. մանաւանդ ի կշիռ ածելով զգերազանցութիւն զոհին որ կատարելոցն է ընդ հուպ՝ ընդ ստուերականացն հնոյ օրինին, որ անբան կենդանեօք կատարէին, գառամբք և երնջովք, որոց փոխան Բանն Աստուած զինքն նուիրեաց պատարագ մշտնջենաւոր, միանգամ արիւնահոս զենմամբ մարմնոյն առեցելոյ յայս սակս ի սրբոյ Կուսէն, և հանապազօր անարիւն զենմամբ, գերահրաշ աքանչելեօք, կամացն և զօրութեամբ բանիցն, զոր անդ ի վերնատանն ասաց յաւարտման օրինական ընթրեացն և ի սկզբան նորոյս կտակի, ի բաշխել անդ աշակերտաց իւրոց զհացն և զգինին օրհնեալ և փոխեալ ի մարմին իւր և յարիւն, և այժմ նոյնպէս զոր-

ծելով՝ յարտասանել քահանային զնոյն բանս իւր՝ նովին մտօք և հաւատովք։ — Բայց ոչ միայն զնոյն դիտումն անկ է աստանօր ունել պատարագչին, այլ եթէ հնար էր և զնոյն եռանդն սիրոյն Քրիստոսի ի կատարման ահեղ և անհաս խորհրդեանս. վասն որոյ գէթ առ վայր մի մինչչեւ ի ձեռս առեալ զնուէրս և զանփոխանակելի բանսն ասացեալ, ամ-փոփելով ամփոփեա զուշ մտացդ, բացէ ի բաց վտարելով զայլ ամենայն խոկումն և յիշատակ, բաղխեա զսիրտ քո և կոչեա ի վեր. յիշեա զի առաւել քան զՄովսէս ի հուր մը-տանելոց ես, և թօթափեա՝ եթէ գուցէ տակաւին աղտեղի ինչ ի քեզ։ Յիշեա դարձեալ՝ եթէ վասն ո՞վ և վասն ո՞յր կամ որո՞ց մատուցանելոց իցես զպատարագդ՝ առանձինն դիտմամբ, և ապա զառհասարակ աշխարհս, զկենդանիս և զննջեցեալս, ըստ իւրաքանչիւր պիտոյից, և ի վեր քան զայլսն զքո իսկ։ Եթէ ցայս վայր կարեւոր էր մաքրութիւն, խոնարհութիւն և յարգութիւն, քանի՞ առաւել այժմիկ յո-րում թուիցի իմն ասել Քրիստոսի. « Ահաւասիկ մերձեցաւ » ժամանակն, և Որդի մարդոյ մատնի ի ձեռս մեղաւորաց »։ Զարհուրեաց և սոսկացիր. այլ և զանբաւ մարդասիրութիւն Փրկչին քո անմոռաց ունելով՝ մաղթեա միանգամ եւս զի հաճեսցի ընդ փոխանակել քո զնա ի քահանայագործու-թեանդ. և վերակնեալ յերկինս՝ անդր հանելով զամենայն կարողութիւնս հոգւոյդ և անդուստ իջուցանելով զշնորհս ամենասուրբ Հոգւոյն. միւսանգամ խոնարհելով մտօք քան մարմնով մինչեւ յանդունդս, յառնուլդ ի ձեռս և յասելդ « Առեալ զհացն », և « զԲաժակն » կարճ ի կարճոյ յիշեա զմաքրութիւն ձեռաց որ պահանջի ի սպասաւորութիւն այն-պիսւոյ պատարագի. և ի « գոհացաւն », գոհացիր և դու զանճառելի սիրոյն Աստուծոյ ի սահմանելն զխորհուրդս զայս. և աներկմիտ հաւատով ընդ Քրիստոսի քահանայագործելոյ՝ ասասցես զհրաշագործակ բանսն, (Առէք կերայքն, Արբէքն). և նովին հաւատոյ աչօք սխրացեալ հայեաց ի ծածկեալն ընդ տեսակօք հացին և գինւոյ, ի նոյն ինքն ի Քրիստոս Յիսուս, ի քահանայապետն և ի պատարագ. և երկիր պագ նմա՝ խո-նարհեցուցանելով զսիրտ քո ոգւոյն և կարիցես, և յերկըր-պագութիւն ընդ քեզ հրաւիրելով զշուրջակայ պարս հրեշ-տակաց, նաեւ զամենայն բանականս և զտիեզերս ողջոյն,

ընդերձելով աղերսս համառօտս սիրոյ, յուսոյ հաւատոյ, խո-նարհութեան և որ սոցին սակի, որպէս. « Յիսուս, որդի » Աստուծոյ, ողորմեա ինձ. Տէր իմ և Աստուած իմ. Հաւա-» տամ ի քեզ Տէր ընդ սուրբ եկեղեցւոյ. Սիրեմ զքեզ, Յի-» սուս. Քեզ երկիր պագանեմ ». և այլն։

Յասելդ զաղօթսն որ յետ սրբացուցմանն և ի բարձրա-ցուցանելդ զսուրբ նուէրսն, ուշի ուշով ա՛ծ յանդիման մը-տացդ զտնօրէնութիւնս Քրիստոսի մինչեւ ի մահն խաչին, և զէջս հոգւոյն առ հոգիս արդարոցն արգելականաց, զորս թափեաւ վերացոյց ընդ իւր յերկինս, և խառնեաց ի դասս հրեշտակաց. և ապա տես զնոսին շուրջ պատեալ զՍրբու-թեամբն որ առաջի քո կայ և յոր հպիսդ, և լեր նախանձաւոր նոցին անձանձիր յարգութեան և գովաբանութեան։ Քանզի եթէ Աստուած յերկինս է, երկինք են և սեղանդ յորում կայ Քրիստոս, և դու ինքն հաղորդութեամբդ ընդ նմին՝ աս-տուածախառն լինիս. վասն որոյ և քանիցս առնուս ի ձեռն կամ հպիս ի հացն սուրբ և ի բաժակն՝ համարեաց փա-րել զՔրիստոսիւ, և պնդեա զնա ի սրտի քում ամենայն ուժգնութեամբ սիրոյ։ Յուսա՛ աներկմիտ զի արդեամբք չար-չարանաց, մահուան, յարութեան և համբարձմանն Քրիս-տոսի՝ զոր յիշատակեսդ, արժանի լիցիս և դու այնմ երա-նութեան, յարութեան և համբարձման և յաւիտենական կենաց։ Այսու մտօք ասասցես՝ և զմաղթանսն « Որպէս զի » եղիցի սա մեզ յանդատապարտութիւն », և այլն. քանզի և յայս սակս իսկ, այսինքն՝ ի թողութիւն մեղաց մարդկան և ի փրկութիւն հոգւոց նոցին՝ հաստատեցաւ և կատարի պատարագդ։

Եւ զի ըստ այսմ սարասի արքայութիւն իմն է քեզ սեղանդ, ուր Աստուած և Սուրբք իւր բոլորեալ կան. յետ յիշելոյ զտնօրէնութիւնս Քրիստոսի, արասցես ջերմն սիրով և ըն-տանօրէն զյիշատակ սրբոցն, սկիզբն արարեալ յամենօրհ-նեալ և յամենապատիւ Աստուածածին Կուսէն, որ առաջին խորան սիրոյ և սեղան ցաւոց եղեւ Քրիստոսի, և առանց նորին միջնորդութեան ոչ է ի դէպ մատուցանել զպատա-րագդ. և ապա, զի անմարթ է մի առ մի զամենայն սուրբս յիշատակել, յիշեա զգլխաւորսն ըստ եկեղեցւոյ աւանդու-թեան, և զորս յայնմ աւուր տօնիցին, և համանգամայն

ըստ դասուց, որպէս զառաքեալս, զմարգարէս, զմարտիրոսս, զխոստովանողս, զմիանձունս և զկուսանս, և զամենայն յաղ-
թական եկեղեցի։ Որում զուգեսցես և զչարչարագեացն, այ-
սինքն է զհոգիս հաւատացելոց ննջեցելոց որք ի քաւութեանն
բանտի կան, և սրտառուչ մաղթեսցես նոցա քաւութիւն և
ազատութիւն. մանաւանդ եթէ վասն ուրուք ի նոցանէ մա-
տուցանես զպատարագդ, և վասն հոգւոց ծանօթից և մեր-
ձաւորաց քոց, և վասն որոց միանգամ առաւել իմն պարտա-
կան իցես։ — Այլ և վասն զինուորեալ եկեղեցւոյ՝ նովին
եռանդեամբ ասասցես զաղօթսն՝ որ յառաջ և որ զկնի յի-
շատակի աւուրն կամ տօնի սրբոցն կարգեալ են. (Սովաւ
շնորհեա. և Ցիշեայքն). քանզի և ննջեցելոց և կենդանեաց,
և ամենայն աշխարհի խաղաղութեան և շինութեան միշնորդ
կարգեալ կաս անդանօր ընդ Քրիստոսի և ըստ Քրիստոսի։
Աստանօր աւարտեալ Կանոնին՝ Ցնայ կատարել և զՊա-
տարագն՝ պատրաստելով ի ճաշակումն Կենարարին առ որ
կանխեսցեն Տէրունական աղօթքն. զոր և ասացես երկիւղա-
ծութեամբ և որդիական համարձակութեամբ, զմիտս ի յեր-
կինս առ Հայր ամբարձեալ, և զաչս ի Քրիստոս որ առաջի
կայ. և ուշի ուշով հայցեսցես զպարունակեալսն յաղօթսն.
նախ զի փառքն, իմաստութիւնն և սրբութիւն Աստուծոյ
հռչակեսցին և պաշտեսցին ամենայն ուրեք. երկրորդ, զի
թագաւորեսցէ նա աստէն ի վերայ կամաց քոց և այլոց, և
երկնից արքայութեան արժանի արասցէ. և զի ամենայն
մարդիկ այնպէս մտադիր ծառայեսցեն նմա յերկրի որպէս
հրեշտակք ի յերկինս. երրորդ, խնդրեա զկարեւորսն ի պա-
հեստ ժամանակայ կենաց՝ որ հանապազօրեայ հացիւն նշա-
նակի. չորրորդ, հայցեսցես զթողութիւն մեղաց, զապաշաւ
ճշմարիտ, զգութ առ ատելիս քո և չարարարս. հինգերորդ
զանգիտելով ի մեղմէն բարուցդ և ի չար յօժարութեանց,
ժտեա զօգնութիւն Աստուծոյ ի փորձութիւնս, զի մի՛ ի հա-
սանել նոցին՝ վրէպ գտեալ ի շնորհացն՝ գայթակղեսցիս.
վեցերորդ, խնդրեա զերծանել յամենայն մեղաց և ի պատ-
ժոց նոցին և յամենայն դիմամարտութեանց աշխարհի և
դիւաց և ի յաւիտենից տանջանաց։

Երկիր պագ ապա խորին խոնարհութեամբ խոնարհեցելոյն
վասն քո, որ ահա հանդերձեալ է մտանել և օթեւանել ի

տառապեալ և տատամսեալ սրտիդ. և իբրեւ ի նշանակ մեծի
զոհութեան քո բարձրացո զՍրբութիւնսն ի տես հանդիսա-
կայիցն, որպէս թէ ի տես ամենայն արարածոց, զամենե-
սեան միահամուռ կոչելով ընդ քեզ յերկրպագութիւն միոյ
միոյ յերից օրհնեալ և փառաւորեալ անձանցն և միանգամայն
ամենասուրբ Երրորդութեանն, յասելդ, « Օրհնութիւն և
» փառք » և այլն։ Իսկ ի նշան աներկմիտ հաւատոցդ և յուսոյդ
որ ի պատարագեալդ Քրիստոս՝ ցուցանելով զնոյն ամենայն
ժողովրդեանն՝ քարոզեսցես և յորդորեսցես զպատրաստեալսն՝
մատչել ի սեղանն և ճաշակել ի կենդանարար խորհրդոյն,
որ է յաստիս քաւութիւն և թողութիւն մեղաց, և անդէնն
յարութիւն և կեանք յաւիտենական։

Ի բեկանելդ զհացն և յարկանել զմասնն ի բաժակն՝
խնդրեա զքո ներքին միաւորութիւն ընդ Աստուծոյ, և զա-
մենայն եկեղեցւոյ միութիւն և սէր՝ յօդիւն խաղաղութեան,
որ ընդ Աստուծոյ և ընդ միմեանս։

Ցետ այսորիկ իսպառ մոռա զամենայն ինչ, եթէ տակա-
ւին կայր ինչ քո այլ ի մտի, և համարեաց միայն ընդ միայ-
նոյ կալ քեզ ընդ Աստուծոյ, և սիրտ առ սրտին Յիսուսի,
հուպ առ հուպ, ձեռն ի ձեռն և բերան առ բերան. զարհու-
րեաց գամ մի, այլ անդէն զգաստացիր և պնդեա զքեզ հա-
ւատով. խոստովանեաց, այո, յամենայն սրտէ մտաց զանար-
ժանութիւն քո, ասա՛ ընդ հարիւրապետին, « Տէր չեմ բաւա-
» կան » քեզ, այլ փութա յաւել իսկոյն, « Ասա բանիւ և բժըշ-
» կեսցի հոգիս իմ »։ Եւ ոչ ցայս վայր միայն, այլ յիշելով
զբանն Տեառն։ « Եթէ ոչ կերիջիք զմարմին Որդւոյ մարդոյ
» և արբջիք զարիւն նորա՝ ոչ ունիք կեանս յանձին ». իսկ
« Որ ուտէ զմարմին իմ և ըմպէ զարիւն իմ՝ ունի զկեանսն
» յաւիտենականս ». քաջալերեաց ընդունել ի քեզ զՏէր քո
և զարարիչ, զփրկիչ և զյարուցիչ, և զյաւիտենական կե-
նացն տուիչ. և գուն գործեա հզօր և հակիրճ ներգործել
աղերս խոնարհութեան, հաւատոյ, յուսոյ, սիրոյ, զղջման,
նուիրման և երկրպագութեան. օրինակ իմն ասելով այս-
պիսի ինչ. Տէր իմ Յիսուս Քրիստոս, հաւատամ զի դու ես
Որդի Աստուծոյ և Աստուած ճշմարիտ. դու գիտես զի ամե-
նեւին անարժան եմ ես կալոյ իսկ առաջի քո, թող թէ ընդ-
ունել և ճաշակել զքեզ. այլ ապաւինեալ յանսահման գթու-

թիւն քո՝ համարձակիմ ընդունել զքեզ, Աստուած իմ և ամենայն ինչ։ Հաւատամ ամենայնի զոր հաւատայ եկեղեցի քո, հերքեմ զոր նայն հերքէ։ Յուսամ ի քեզ, և ի քէն ակն ունիմ ամենայն կարեւորաց ի կեանս իմ և փրկութեան յետ կենացս։ Խնդամ ընդ փառս և ընդ բարիս քո, և փափագեմ յոյժ զի ընդ ամենայն աշխարհ տարածեսցին։ Զղջամ զզուիմ յամենայն մեզաց իմոց, և յանձն առնում զամենայն պատուհաս ի հատուցումն արդարութեան, որպէս զի հոգի իմ լիցի բնակարան մաքուր քումդ սրբութեան։ Թողում ի սրտէ ամենեցուն որք նեղեցին ինչ զիս, և սիրեմ զնոսա վասն քո։ Յանձն առնում զոր ինչ և հաճեսցիս սահմանել վասն իմ, նուիրելով քեզ զկարծիս և զկամս իմ, զյօժարութիւնս, զսէր անձին և զազատութիւն։ Եւ քեզ սկզբանդ և վախճանի ամենայն բարութեանց երկիր պագանելով յամենայն զօրութենէ հոգւոյս՝ աղաչեմ, շնորհօք և արդեամբք դառնակսկիծ չարչարանաց քոց, խաչելութեանդ և մահուան, եկ և բնակեա՛ յանձին իմում, մինչեւ մեկնեսցի հոգի իմ ի մարմնոյ աստի։ — Եւ իբրեւ զօրաւիգն ի ներկայումս և թոշակ յետին՝ կնքելով զանձն քո, ա՛ռ ընկալ զպատուական մարմին Տեառն քո Յիսուսի և գոհացիր։ Բուռն հարեալ և զբաժակէն հաւատով, և յիշեալ զի չունիս ինչ արժանի փոխարէն մատուցանել, ասա, «Զի՞նչ տաց տրիտուր Տեառն, ընդ ամենայնի՝ » զոր ետ ինձ», այլ «զԲաժակ փրկութեան ընկալայց». և այնպէս արբ և գոհացիր։ — Եւ դարձեալ երկի՛ր պագ սրտիւ հանգուցելումդ ի նմին՝ Քրիստոսի, Աստուծոյ և մարդոյ, որ հաճեցաւն գալ ի քեզ, և վասն ամենայն բարեացն զոր արար նա։ Նուիրեա նմա՝ զոր միանգամ հաճոյ կարծես նմա, ըզգուշութիւն ի մեղաց և սէր ուղղութեանց. կրկնեա զուխտս և զբարի բարի առաջադրութիւնս մտացդ, յօժար յանձնառութեամբ ամենայն վշտաց և աշխատութեանց առ սէր նորա. և խնդրեա սուղ բանիւ և երկար ըղձիւ զկարեւորագոյնսն քեզ, և որոց ինչ քեզ յանձն արարին, և ամենեցուն՝ կենդանեաց և ննջեցելոց։

Ցայտ է թէ այսպիսի զգացմամբ և ջերմն եռանդեամբ արժան է քեզ և զսահմանեալ աղօթս գոհութեան մատուցանել, միանգամայն զամենայն գոհաբանութիւն անբաւական գիտելով առ մեծութիւն շնորհին զոր ընկալար. վասն որոյ և

իբրեւ զահի զամօթի հարեալ կացցես ցաւարտ պատարագիդ, և ի հրաժարելդ ի սեղանոյն։ Եւ լի սրտիւ և բերանով՝ քաջիկ կշռելով և որոճալով ասասցես զվերջին օրհնութեան աղօթսն վասն եկեղեցւոյ և ամենայն աշխարհի. «Որ օրհնես » զայնոսիկն » և այլն, յիշելով դարձեալ զի վասն նոցին կարգեցար պաշտօնեայ խորհրդոյն, և հարկ է քեզ ամենայնիւ՝ որպէս զանձին՝ նոյն և զժողովրդեան պէտս հոգալ, և ոչ զներկայիցն միայն՝ այլ և զհեռաւորաց, նաեւ զննջեցելոցն ի ծոց եկեղեցւոյ։

Եւ իբրեւ լրումն ամենայն խոստովանութեանց և աղերսից ընթերցցիս զսկիզբն աւետարանին Յովհաննու. զոր բազումք ի նախնի քրիստոնէից՝ գրեալ կախէին զպարանոցաց իւրեանց, ի մխիթարութիւն հոգւոց իւրեանց և ի ցրումն սագրանաց բանսարկուին։ Ոչանիր և գու յընթեռնուլդ՝ քանի՞ մեծ է հիւրն, զոր արդ իսկ ընկալար հացին և գինւոյն տեսակօք, Բանն յաւիտենական, կեանքն և լոյսն. և տե՛ս մի՛ խաւարիցիս ի քեզ կրելով զլոյսն, որով և արժան է քեզ այլոց լինել լուսատու. մի՛ արդեօք զոր ընկալարդ՝ իբրեւ զաշխարհ խաւարեալ տգիտութեամբ և մեղօք՝ և գու ոչ ծանիցես. մի՛ երբեք ճշմարտեսցի և ի քեզ բանն ահագին. «Ցիւրսն եկն և » իւրքն ոչ ընկալան զնա». այլ լեր՝ ըղձակերտ զի տացի՝ քեզ և զտուեալն պահեսցես՝ «իշխանութիւն որդիս Աստուծոյ լինել». և ի Բանէ անտի մարմնացելոյ և բնակեցելոյ ի քեզ՝ խնդրեսցես և առնուցուս զլիութիւն շնորհաց և ճշմարտութեան, որով ուղղին կեանք ի վերայ երկրի և առաջնորդին յերկինս։

Եւ իբրեւ հրաժարական ողջունիւ արձակես զժողովուրդն օրհնութեամբ Հոգւոյն Սրբոյ, մաղթեա զնոյն օրհնութիւն շնորհաց անմեկին նորին լինել ի հոգւոյ քումէ և ի մարմնոյ մինչեւ ի սպառ։

ՅԵՏ ՊԱՏԱՐԱԳԻՆ

Ամենայն գործ բարի գոհութեամբ կնքի. իսկ մեծագոյնս այս գործոց որպիսի՞ս պահանջիցէ գոհութիւնս։ Ոչ աւելի ինչ ասել համարիցիս՝ եթէ և ամենայն ժամանակ կենաց անբաւական գրեսցի առ այս. այլ քանզի հարկ ի վերայ կայ պարապել և ի բազմապատիկ գործս ի պահեստ կենաց և ի կատարումն պէսպէս պարտուց, զեթ ամենայն ամփոփմամբ մտաց կաց առ պահ մի միայն ընդ միայնում՝ զոր արդ ընկալար ի սեղանին, յետ ի բաց դնելոյ այնու պատկառանօք որով արկարդ զանձամբ՝ զզգեստս պատարագին. և փակեալ զզգայութիւնս քո առ ամենայն զբաղանս, բացցես զսիրտ քո առ Յիսուս, երդմնեցուցանելով զնա օրհնել զքեզ մինչչեւ քո մեկնեալ յեկեղեցւոյ, կամ յայլ գործ ձեռն արկեալ։ Եւ որպէս զաղօթս պատարագին՝ նոյն և զգոհութեան ասասցես յուշիկ և ամենայն զգաստութեամբ և եռանդեամբ. զի յաճախ ի ձեռն աղօթից գոհութեան ներգործին ազդեցութիւնք սրբոյ խորհրդոյն. և որպէս յետ մարմնաւոր սեղանոյն պիտոյ է հանգիստ յաշխատութեանց՝ ի դիւր հալողութեան կերակրոյն և ի կազդուրումն մարմնոյն, ի դէպ է և յետ հոգեւոր խրախճանին՝ խնդրել առ վայր մի հանգիստ յարտաքին գործոց և զբաղանաց, և տալ դուլ սրբոյ խորհրդոյն՝ ծաւալել զզօրութիւն իւր ի հոգւոջ։

Այ այս օժանդակեսցեն քեզ, եթէ ոչ պատրաստ գտցի անձն քո, աղօթք հոգեկիր արանց, որպէս Ս. Թոմայի և Բոնավենդուրայ և այլոց. պէսպէս աղերսք կամ ներգործութիւնք. Հաւատոյ՝ զի ընկալար զԲրիստոս՝ Աստուած և մարդ ճշմարիտ. Յուսոյ՝ զի ի նմանէ են ամենայն բարիք. Սիրոյ, զի չիք ինչ մեծ և քաղցր և գեղեցիկ քան զայն. Խոնարհութեան, զի ամենեւին անարժանդ ընկալար զամենեւին արժանաւորն. Նախանձու զի դագաղեսցեն այսուհետեւ մեղք ի քեզ և յայլս, և հաստատեսցի արդարութիւն Աստուծոյ։ — Յանդիման արա քեզ զԲրիստոս որպէս երեւեցաւն յետ յարութեան՝ առաքելոցն և կանանցն սրբոց, առոյգ մարմնով

այլ նշանօք բեւեռաց ձեռացն և ոտից և գեղարդնախոց կողին, և պատկառեաց և երկիր պագ. ապա և բուռն հար զնմանէ, մատո համբոյր փրկագործ ձեռացն և երկնաչու ոտից. խնդրեա խոնարհութեամբ և զնորին համբոյր որպէս հաբսնացեալ նմին. Համբուրեսցէ զիս ի համբուրից բերանոյ իւրոյ. և իդձ լեր փարել զնովաւ, և կալ անմեկին ներքին միաւորութեամբ. խօսեաց, խնդրեա և ասա զոր ինչ և այլ թելադրեսցէ սիրտ քո ջերեալ սիրով և լուծեալ զղջմամբ։

Դիր հաստատութեամբ ի մտի՝ բազում անգամ և յաւուրն յիշել զերախտիս Տեառն քո և գոհանալ ի սրտէ նաեւ ի պարապելդ յայլ գործ՝ ըստ պարտուց պաշտամանդ. և փափաքեաց ուժգին, զի զոր ընկալարդ այդքան պատրաստութեամբ և գոհութեամբ՝ երեւեսցի ի քեզ Քրիստոս, և ի ներքին զգացմունս քո և յարտաքին գնացսդ. և թէ հնար է՝ վկայեսցեն և տեսողք եթէ զԲրիստոս ի քեզ կրես. և ըստ ասից Ս. Յովհ. Ոսկիբերանի՝ այնպէս արժան իցէ քեզ մեկնել ի սեղանոյ անտի՝ զի յամենայն կողմանց հրաշունչ երեւիցիս և զարհուրելի դիւաց, ջեռուցիչ սրտից և հալիչ ազտից։

Անմարթ է Հաղորդութեան անգործ մնալ իւրովսանն. անկ է նմա աճեցուցանել զշնորհ, կարճել զմեղս, վառել զսիրտ ի սէր երկնայնոյ, յատելութիւն երկրաւորաց, լուսաւորել զզմիտս, մաքրել զմարմինս, խաղաղել զխիղճ և հրճուեցուցանել զհոգի։ Եթէ ոչ ազդիցին այսոքիկ ի քեզ՝ յայտ է թէ ի քէն է վնասն. զի ոչ մեծաւ ցանկութեամբ և պատրաստութեամբ մատեար ի սեղանդ, այլ օտար ցանկութիւնս ունելով ի սրտի. և զի՞նչ զարմանք եթէ դառնացեալ զոլով բերանոյդ՝ ոչ զգայցէ զքաղցրութիւն մեղեր։ Վասն որոյ յառաջ քան զպատարագն՝ անկ է սրբել զկամս և զմիտս յամենայն ցանկութեանց արտաքնոց և ի գաղջութենէ, որպէս զի մի լիցի խափանիչք աստուածայնոցն ներգործութեանց։ Մի լիցի քեզ երբեք իբրեւ ի սովորութենէ և արտաքին պատճառանօք՝ առանց մտագիւր պատրաստութեան վաղվաղել յահաւոր սեղանն. զի և մի անգամ անարժանութեամբ պատարագել՝ դատաստան է անձին յատենին Աստուծոյ, ըստ վճռոյ առաքելոյն Պօղոսի։

Այսոցիկ խնամով և երկիւղիւ փոյթ կալեալ, որպէս զի օգտեսցիս յամենօգուտ պատարագէն, եթէ և յետ այնր ոչ

գտցես բորբոքեալ զսիրտ քո, ոչ զմայլեալ յանուշակ խրախճանէն, և քննելով զխիղճ մտացդ՝ չգտցես ծանր ինչ, կամ թուլութիւն կամաւոր, մի՛ լինիր յուսահատ, և մի՛ կացցես յետս ի պաշտելոյ զխորհուրդն. գիտասջիր, զի Աստուած ջանս և կամս բարիս խնդրէ ի քէն, և տայ քեզ յիւրոց բարեաց և շնորհաց՝ որչափ և երբ պատշաճ վարկանի, զի մի՛ համարիցիս քոյով կամ մարդկային ճարտարութեամբ յաջողել ի գիւտ շնորհացն, այլ ձրի նորին հաճութեամբ. և դու հանապազ երկիւղիւ և հաւատով պատրաստեսցես զանձն քո, գոհանալով և զփոքուէն զոր զգաս ի քեզ ի բարեաց մասնէ, և փափագելով խոնարհութեամբ և աներկմիտ յուսով՝ առաւելագունից շնորհաց, և այն ի փառս նորին Աստուծոյ։

ԻՆՆ ԵՐԱՆՈՒԹԻՒՆՔ



Ա

ԵՐԱՆԻ ԱՅՆՈՑԻԿ ՈՐ ԼՍԵՆ ԶԲԱՆՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ՊԱՀԻՑԵՆ

ԴՈՒԿ. ԺԱ. 28

ՅԱՒԻՏԵՆԱԳԱՆՈՒԹԵԱՆ վիճակեալ մարդ՝ անգիտութեամբ մուծանի յաշխարհ, և ընդ երկար ամս անգիտանայ յընտրութիւն բարւոյ և չարի. նա և զողջոյն իսկ ժամանակ կենացն՝ դանդաչէ ի բազում տգիտութեան, հազիւ սակաւու իմիք հասու լինելով, և այն ոչ անթերի։ Հանգոյն նախեղակ աշխարհի՝ երկիր իմն է անյարգար անպատրաստ. և որպէս երեւման համօրէն արարածոց պէտք եղեն յառաջընթաց լուսոյ, պէտք եղեն եւ մարդոյս յարդարման և կատարման՝ գերագոյն լուսոյ. որ է Բանն Աստուծոյ. վասն այսորիկ իսկ և բանաւոր կոչի։ Այլ թէպէտ և անդստին յէութեանն տպաւորեալ է ի հոգւոջ բանն, սակայն, որպէս հասարակաց փորձ յայտ առնէ, կարօտի անդուլ ազդմանց՝ առ լսելութիւն բանին, որով և ուղղել զկեանս իւր ի վախճան էութեան իւրում, որ է երանական կեանք անվախճան։ Վերբերիչ առ այս լսողութիւն բանին՝ նախընթաց իմն երանութիւն վկայեցաւ յ'իսկապէս Բանէն Աստուծոյ «Երանի՞» այնոցիկ է, ասէ, որ լսեն զբանն Աստուծոյ և պահիցեն»։ Եւ այնքան մեծ և շնորհաւոր եցոյց զայս, մինչեւ առաւել գրել քան զսոսկապէս կրելն ուրուք զՈրդին Աստուծոյ ի

ծոցի. որպէս թէ, ոչ չատ իցէ քրիստոսակիրն լինել, այլ քրիստոսազգած, քրիստոսագործ. քանզի, ըստ պարզաբա-
նութեան Առաքելոյն, « Ոչ եթէ լսելիք բանին արդարա-
» նան, այլ առնելիք գործոյն »:

Հարկ է լսել զբանն՝ առ ի գիտել, և զոյգ գիտութեան՝ և կատարել. և այս է արդարութիւն և երանութիւն. և ի հա-
կառակէն, լսելն և ոչ առնել՝ անիրաւութիւն և դատապար-
տութիւն, ոչ պակաս քան զլսելն բնաւ կամ չլսելոյն առնել:

Եթէ այս հարկ ի վերայ կայ ամենայն քրիստոնէի չափա-
հասի, քանիո՞ն եւս այնոցիկ՝ որոց յանձն առեալ է զօրէնս սերտագոյն նմանութեան Քրիստոսի և զպաշտաման նորա, կրօնաւորական և քահանայական կարգօք. որոց ոչ միայն պարտ և արժան է լսել հանապազ զբանն Աստուծոյ, խոկալ ի նոյն, և փոխաբերել ի վարս և ի գնացս իւրեանց, այլ և ի նոյն հրահանգել զայլս ի մարդկանէ, իբրեւ հմուտք և թարգմանք բանիցն Աստուծոյ. և իբրեւ « Յառաջագոյն հրա-
» ւիրեալք կերպարանակից լինել պատկերի Որդւոյն Աս-
» տուծոյ »:

Զայս գիտելով չափ և լսելով այժմիկ, զի՞նչ նոր ինչ կայցէ մեզ առնել՝ ի սահմանեալ աւուրքս հոգեւոր կրթու-
թեան, բայց եթէ խնամով հանդէս առնել արուեստին՝ յոր արկեալս է ձեռն ի վաղուց. որպէս երկարագնաց ճանապարհի ուղեւոր՝ հասեալ ի բարձրադիտակ ուրեք գագարս, հայե-
ցեալ յետ և յառաջ՝ քննիցէ զոր եհատն և զոր մնայն հա-
տանել ճանապարհ, և ուղղեալ պնդեսցէ զգնացսն անխոտոր և ըստ կարի վաղագոյն ժամանել ի դէմ եղեալն կէտ: Այս-
պիսիք իմն են հանգոյցք ի նուիրականիս մերում ուղեւորու-
թեան՝ աւուրք հոգեւոր կրթանաց, յորս հարկ իսկ է ամե-
նեւիմբ՝ մտադիւր քննութեամբ տեսանել, եթէ իցէ՞ն վարք և գործք մեր՝ ըստ առաջադրեալս պայմանի՝ պատկերակցու-
թեան Քրիստոսի, եթէ արդեօք այլակերպք և խոտորեալք: Քաղցրասցին մեզ ուրեմն աւուրքն և ժամք որ զամենայն ժա-
մանակս կենաց մերոց ունին ուղղել և կանոնել, և զգաստու-
թեամբ զուն գործեսցուք, որպէս թէ, ըստ հոգեկրացն խրա-
տու, յետին իցէ մեզ հանդէսս այս: Եւ արդարեւ, որ գիտէն եթէ հանապազ ի վախճան անդր գնայ, և զի ժամանակն միանգամայն երագ է և պատրող. և մանաւանդ որ անաչառ

քննութեամբ մտախոհ լեալ յանձն իւր և ի գնացս, առցէ զչափ անկատարութեան իւրոյ, զի՞նչ պիտանի հոգւոյ իւրում՝ քան զայսպիսի կրթութիւնս գտանիցէ: Ո՞հ, ո՞րքան կարեւոր և ցանկալի լիցի մեզ ժամ մի ի ժամուց աստի յայսցանէ՝ յորժամ երեկոյացեալ տեսանիցեմք զժամս համառօտ կենացս աւուր: Եւ ո՞րքան չնորհք են մեզ առ յ'Աստուծոյ աւուրքս զգաստութեան՝ առ ուղղութիւն և յառաջադիմութիւն վա-
րուց և ո՞րքան պնդապէս բուռն հարկանելի՝ « Յորքան ժա-
» մանակս ի ձեռս է՝ առ ի գործելոյ զբարի », և մտադիւր յիշելոյ զպարտս և զուխտս մեր և նկրտելոյ ի հրամայեալն մեզ ի Քրիստոսէ ի կատարելութիւն Հօրն երկնաւորի:

Արդ աղէ, թողեալ ի բաց զչափ ժամանակաց և զթիւս աւուրց, առցուք զսիրոյն լար փոքր մի, եթէ հնար է, և յանչափն ձկտելով՝ մխեսցուք ի քննութիւն բանիցն Աստու-
ծոյ և ի քաղցրալուր երանութիւնս սիրոգին և սիրելւոյն մեր Յիսուսի. տեսանել զայն նախ, եթէ զի՞նչ իցէ ճշգրտիւ բանն Աստուծոյ, և ապա՝ զիա՞րդ լսել արժան է զայն, և ո՞րպէս պահել, որպէս զի կարող լիցուք լինել երանելիս:

Ա.

Վեհագոյն ամենայն արուեստից և մակացութեանց մարդոյ՝ ծանեան և ողջախոհագոյնք արտաքնոց իմաստասիրաց՝ զԲանականն. և պէտպէս օրինակօք և հրահանգօք հետամուտ լեալ, և ոչ եղեն հասուք տիրապէս. այլ, ոմն զայս ինչ և ոմն զայն տեսութիւն ընտրեաց կէտ և օրէնս իմաստասիրու-
թեան իւրում. և եթէ փոքու իւիք մերձեցան ոմանք ի ճըշ-
մարիտն, բայց և ոչ մի ոք յաջողեցաւ հասանել ի նոյն, քանզի վերագոյն էր քան զոր կարծէին. յոր և ոչ այնքան նրբութեամբ հանճարոյ մարթ էր ժամանել, որքան խոնար-
հութեամբ հաւատոց և մաքրութեամբ սրտի. ոչ հայթայ-
թանօք ուսմանց՝ զարգանալ ի նոյն՝ այլ վերնատուր չնոր-
հօք. որպէս հուչակեաց մեզ զայս հեղն այն և համբոյր աչա-
կերտ, ի վայրկենի ուսեալ և իմաստնացեալ ի գիրկս սիրել-
ւոյն իւրոյ Վարդապետի՝ Յիսուսի, եթէ՝ ոչ այլուր և այլ ազգ խնդրելի է զբանն՝ բայց ի ծոց Աստուծոյ, ուր՝ « Ի
» սկզբանն էր Բանն ». բուն բանն, արժանին խնդրոյ և ուս-

ման բանականաց. այն՝ որ « Առ Աստուած էր ». և յաստուածուստ հեղանի յոգի մարդոյ, որոյ և կեանք իսկ է և զօրութիւն և լոյս մտաց. « Եւ կեանքն էր լոյս մարդկան », որպէս և ինքնին ասաց. « Ես եմ ճանապարհ և ճշմարտութիւն և կեանք »։

Այսպիսի գոլով Բանին, աւա՜ղ, զի « Աշխարհ զնա ոչ ծանեաւ », կամ յոյժ աղօտ աղօտ, և ընդ բովանդակ դարս ժամանակաց դանդաչէր յօտարոտի ուսմունս անուանեալ փիլիսոփայիցն, ի մթան կարծեաց և երկբայութեանց, այլ և աղջամղջին ախտից. զորս սուղ ինչ ողորկեալ՝ ճգնէին փայլեցուցանել, և ոչ յաջողէին։ Զի թէպէտ և անզեղջ « լոյս » Բանին՝ ի խաւարի անդ լուսաւորէր », այլ՝ « սիրեցին » մարդիկ առաւել զխաւար », անձնահաճ հեթեթանօք առաւաստեալ զաչս մտաց, որովք՝ զլոյսն կենդանարար՝ « Աշխարհս ոչ ծանեաւ »։ Ապա ինքն Բանն ամենախնամ՝ « Որով ամենայն ինչ եղեւ, և առանց նորա՝ ոչ ինչ », լոյսն ճշմարիտ՝ « որ լուսաւոր առնէ զամենայն մարդ որ գալոց » են յաշխարհ », ելոյծ զկնճիռն յամառութեան հպարտ և աղքատիմաց մտաց, և զթասիրեալ սիրեաց զճառագայթս իւր, ճեռեթ զթանձրութիւն բազմադարեան խաւարի մեղաց և զտգիտութեան՝ շնորհօքն և ճշմարտութեամբ։ Եւ ոչ լոկով ազդմամբ եւեթ շնորհին, որպէս երբեմն յոգիս արդարոց, այլ և զգալի որակօք, առ ի ցրել զբարուս և զմթարս նիւթոց, որովք ջանայր բանսարկուն զանիւթականն ի մեզ ընթադրել զբնութիւն. « և Բանն մարմին եղեւ », զի ուսուցցէ մարմնոյս՝ լծակից լինել և օժանդակ հոգւոյ՝ ի գիւտ բանին կենաց. և յայտնապէս, « Ցիւրսն եկն » Բանն Աստուած, զի համարձակ ծանիցեն զնա։ Եւ ո՞յք էին իւրքն. նախ, ամենայն մարդիկ, զի « Լոյսն լուսաւոր առնէր զամենայն մարդ ». և առանձինն՝ մտադիւր խնդրակքն ճշմարտութեան. որոց և ուսոյց քաղցրալուր աւետարանաւ իւրով՝ զստոյգ աղագս խնդրոյն, զի մի՛ յօտարոտիս դանդաչեալ՝ ի դերեւ ելցեն։

Թողցին արդ օ՜ն անդր ի բաց իմաստասիրացն ընդվայրայած ճառք, յորոց ոչ ինչ օգտեցաւ աշխարհս. և քննեսցուք զբանս Բանին կենաց, որ խոնարհեցուցանէ զմիտս ամբարտաւանս, և բարձրացուցանէ զսիրտս խոնարհեալս հեզութեամբ

և մաքրութեամբ։ Երթիցուք առ ոտս Վարդապետիս այսորիկ, որ ոչ ի սինագաւիթ սրահս և ի պաճուճեալ ճեմարանս, այլ յանմարդաձայն անապատս և ի լերինս ամայիս, յանշուք վայրի ուրեմն բնութեան, բանայ զբերան իւր և բղխէ զերանաւէտ բանս կենաց։ Լուիցուք. և լուիցուք որպէս լուան աշակերտքն նորա, ուշի ուշով, առաւել քան զամբոխ ժողովրդեանն, որք ըստ օրինակի նախահարց իւրեանց՝ շուրջ պատէին զօրինատուր լերամբն՝ ի հեռուստ կամ ի ստորուստ. իսկ աշակերտքն Յիսուսի՝ իբրեւ տեսին զՎարդապետն նըստեալ ի գլուխ լերինն՝ « մատեան առ նա ». մօտագոյնս մերձեցան, հպեցան. զի ցոլն հոգեզուարճ ի՛ջցէ նախ ի գլուխս իւրեանց, և անդուստ ի համօրէն մարմին եկեղեցւոյ։ Յօժարութիւն ունկնդրութեան պատրաստէ զսիրտս առ Աստուած. այսու և մեք մատիցուք առ նա։ Յուշ լիցի մեզ, զի թէպէտ և վարդապետք իցեմք այլոց, բայց աշակերտք եմք Քրիստոսի. և երանի՜ եթէ բարւոք աշակերտեալ էաք բանի և հոգւոյ նորա։ Լուիցուք զնախերգանս քաղցրախորժ պատգամաց նորոց օրինաց, թէ և ի բերան իսկ գիտիցեմք, սակայն լիցուք քրիստոսապատուէր ականջօք լսելութեան. այլ և խնդութեամբ մեծաւ լուիցուք, զի երանութեան մերոյ աւետիք են բանքս, կարգեալք ի նիւթ խորհրդածութեանց մերոց՝ յաւուրքս հոգեւոր կրթութեանս։

Ահաւադիկ կանխեալ բազմեալ կայ յերկնամերձ գահուն՝ վարդապետն վարդապետաց, և հեզօրէն բացեալ զշնորհաբուղխ բերանն, որպէս յաստուածալար քնարէ՝ ի խորոց սրտին՝ արձակէ նուագս զմայլականս. « Երանի՜ աղքատաց » հոգւով. Երանի՜ Սգաւորաց. Երանի՜ Հեզոց. Երանի՜ քաղցելոցն և ծարաւեաց Արդարութեան. Երանի՜ Ողորմածաց. » Երանի՜ որոց Սուրբ են սրտիւք. Երանի՜ Խաղաղարարաց. » Երանի՜ Հալածելոցն վասն արդարութեան »։ Եւ զի մի՛ գովութիւն լոկ համարիցի ընծայել այսպիսեաց, յաւելու առ մէն մի և վարս. մխիթարութիւն, հաշտութիւն, ողորմութիւն, յագուրդ սրտի յանդորրու, և գլխովին Արքայութիւն երկնից և որդեգրութիւն Աստուծոյ։

Ո՞ր իմաստասէր երկնեաց երբէք այսպիսի խորհուրդս. ո՞ւր ուրեք երբէք լսելի եղեն այսպիսի հեշտալուր՝ միանգամայն և հաւանական բանք. կամ ո՞յր բնաւ անկաւ ի սիրտ՝

այսգունակ խաղաղական պատգամ։ Քանի՞ խօթ և ծանր էին ականջք աշխարհի՝ ի լուր այսպիսեաց կենարար բանից. և քանի՞ երանելիք՝ որք փափագանօք լսենն և պահեն։ Երանելիս համարեսցուք և զմեզ այժմէն, և այնքան առաւել որքան հաւատով և սիրով ունկն մատուսցուք, և որքան մօտագոյնս մատիցուք՝ ոչ առ ոտս միայն Յիսուսի, այլ՝ թէ հնար է և ի գիրկսն, ասելով ստէպ. Տէր, առ ո՞վ երթիցուք մեք յայսմ հետէ՝ բայց ի քէն, որ ունիս բանս կենաց յաւիտենականաց։

Բ

Եթէ հաճոյ իցէ մեզ վիճակ կրօնաւորութեանս՝ զոր յանձն առաք, արժան է և հաւատալ, եթէ շնորհն Աստուծոյ՝ ընդ յառաջագոյն ընտրելոցն դասակարգեաց և զմեզ ի խաղաղաւէտ տան իւրում՝ լսել բանս հոգեկեցոյցս, բանս՝ որոց ի հինսն «բազում մարգարէք և արդարք ցանկացան՝ և ոչ լուան և ոչ տեսին. և որ յիմաստնոց և ի գիտնոց թաքուցեալն էր՝ յայտնեցաւ մեզ դեռ տղայոցս՝ աւանդելոց ի խնամս հոգեսնոյց հարց, զարգանալ հասակաւ և շնորհօք առ ի Աստուծոյ և ի մարդկանէ. և յայն ինչ փութեալն ի մեզ սեփական բանի մտաց՝ վառեցաւ և լոյս Բանին մշտնջենաւորի. իբրեւ հանապազօրեայ հացիւ՝ դարմանիլ մարգիլ յիմաստս երկնաւորս, լինել իմաստասէրս յաւիտենից. և անդստին ընդ ճանաչելն զաջ և զահեակ բնութեան, խոտորիլ յայսմանէ և ընդ աջակողմն ուղղել զընթացս կենաց։ Ախրալի է մեզ տակաւին՝ ամ յամէ յիշել զօրն զայն, շատ կամ սակաւ հեռացեալ, զօրն մեծ և նշանաւոր՝ ընդ մէջ աւուրց ծննդեան և մահուան, օր՝ յորում յետ բազմամեայ քննութեանց և ընտրութեանց, յօժարութեամբ ընկալեալ զխրատ փրկչին, և թիկունս դարձուցեալ աշխարհի, դէմ եդաք ելանել ի լեռն Տեառն. վազվազէաք թեթեւագոյնք սրտիւ քան ոտիւք՝ բարձեալ նուէր Աստուծոյ և ողջակէզ անուշից, համաքաւակք և համահաստակք Իսահակայ, զսիրտ մեր, կոխել զհետ զարշապարաց նախընթացից մերոց հարց. մեզէն ստանձնեալ զսպաս պատարագիս մերոյ և զփայտն փարելի, զխաչամբեր վարս, և զհուրն ծախիչ՝ զսէրն նուիրական, և զսուրն ահեղ՝

զկամացն ուրացութիւն. և մատեաք և մատուցաք ի զոհ անձին բովանդակ։ Անդ, ոչ ձեռն հայրենի՝ առ գութ աղեացն կթուցեալ՝ գթէր, կամ ի խիզախելն՝ ընկրկէր ի հրեշտակէն, և ոչ սաբեկ սատարիչ փոխանակէր մեզ զիոյն յանկարծածին. այլ ի նորաբոյս նորահրաշ ծառի կենաց՝ զնոյն ինքն նշմարելով զգաւնն Աստուծոյ, խոնարհեցուցաք զպարանոցս մեր առ սուրն եռասայրի, և անկաք սպանդ կենդանի, երիցս մեռեալ՝ աշխարհի, մարմնոյ և կամաց մտաց, և երրեկի զգեցեալ կեանս ազատականս։ Իցի՜ւ, թէ և կեցեալ յայնմ հետէ հանապազ որպէս յաւուրն յայնմիկ, և որպէս արժանն պահանջէ, անդուլ յառաջխաղաց զարգացմամբ հասակի շնորհացն Քրիստոսի։

Ո՜հ, քանի՞ զուարթունք և երագունք էաք յաւուրսն յայն առաջինս՝ յազդմանն ի մեզ բանին Աստուծոյ. զի՞ւրդ ի դրդել գիտակցութեան՝ անդէն սիրտ ի վեր վազէր։ Եթէ ձայն ինչ հնչէր ի վերուստ, գոչէաք ընդ Սամուելի՝ Ահաւասիկ եմ. եթէ պղինձն ժամակարգ ձայն տայր, իբրեւ առ հրեշտակի պատգամ փութայաք ի գործ և ի պաշտօն հրամայեալ. և եթէ վերակացու յուշ առնէր, ձայն Աստուծոյ լսելի լինէր մեզ։ Ամենայն որ շուրջ զմեօք՝ օրէնս և ուղղութիւնս խօսէր. աքեմ մեր՝ զաղքատութիւն կամաւոր. խըցկունք մեր՝ զհրաժարումն յաշխարհէ. եկեղեցի՝ զհանապազօրեայ նուիրումն առ Աստուած. սեղանն պատարագի՝ զմիշտ մաքրութիւնն և զսէր Յիսուսի. ընթերցարանն և գործանոց՝ զբրտամբք երեսաց վաստակն. սեղանատունն անգամ՝ զմեռելութիւն ախորժակաց և զքաղց և զծարաւ արքայութեան. մահիճք մեր՝ զպատրաստութիւն հանդերձեալ կենաց։ Ի գարնայնումն տիոց՝ որպէս արեգակն յանմթար երեսս երկնի՝ անաղտք յարուցեալ և անարատք մտանէաք ի մայր, յիշելով ի պարկեշտ խշտիս մեր զառագաստ երկնաւոր փեսային. գիշերոյ և տուընջեան փոփոխմունք՝ և ոչ վարուց լոյս և խաւար՝ զկեանս մեր յօրինէին. ի սրբութենէ ուխտից սեղանոյն՝ առ սեղան սրբութեան պատարագին առաջնորդեալ լինէաք՝ ընդ աստիճանս ամաց պատանեկութեան։ Երջանիկ ժամանակ. ընդէ՞ր ոչ յերկարեցաւ ինձ որպէս զմի եւեթ օր սակաւատեւ կենաց։ Զի զի՞նչ են այս քառասուն կամ յիսուն, աւելի կամ պակաս ամք կատարեալ տիոց և կարգի

կրօնաւորութեանս մերոյ։ Բանի՞ առաքինիք իցեն հասեալք յալեւոյթս, որք դեռ երէկ մտեալք ի կրօնս համարին զանձինս, և դեռ հնչէ յականջս նոցա առաջին ձայն բանին կենաց՝ զոր լուանն և հրաժարեցին յաշխարհէ. քանզի և որ յետ այնորիկ ամենայն ձայն՝ ի նոյն մի բան բովանդակէր, ի նուիրումն և ի զգաստութիւն կենաց՝ զոր ուխտեցինն. և ոչ այլազգ չափէր նոցա ժամանակին յառաջխաղացութիւն բայց յաճախութեամբ ուղղութեանց և կրթութեանց, և անդուլ տենչանօք ընկալչին իւրեանց Աստուծոյ, զորոյ և հանապազ լսէին զձայն, այլ տեսանէին ոչ։

Լուիցե՞ս արդեօք և դու, եղբայր, պատկերակից առաքինեացն և յաջորդ, զբանն Աստուծոյ աստուածասէր լսելեօք. պահեցե՞ր զոր լուարդ ի նորընծայութեան. յաւելե՞ր մանաւանդ ամ յամէ ի յստակագոյն լսողութիւն և հետեւողութիւն կենեղուտ ձայնին Քրիստոսի. թէ արդեո՞ք (քաւ, մի լիցի) որ յառաջն հեշտ և ախորժ՝ այժմ ծանր և դժուարին լսիցի ձայն հեզահոգի հովուին Յիսուսի, զորոյ զհետ խայտալով ընթանան աղափար գառինք նորին։ Մի՞ արդեօք և աղմկեալ ի խաժամուժ աղաղակէ աշխարհի՝ հազիւ վանգիւն ինչ իբրեւ յարձագանգաց անապատի՝ հասցէ յականջս քո գերեալս՝ ոչ գիտեմ յորոց յուշկապարկաց. և կամ, մի՞ արդեօք գերազանցօրէն ինչ համարեալ առնել՝ հնարիցիս զանհնարինն, քաղաքավարիլ և՛ ընդ Քրիստոսի և՛ ընդ աշխարհի, որ է յերկուսն կաղալ հետս և երկուց ծառայել տերանց այլակամաց, և սուգիւ՝ և ոչ միոյ։ Դիտակցութիւն անձին ցուցանէ յէջ մի մատենի իւրում՝ զվարս մեր և ի միւսում՝ զվարդապետին մերոյ Քրիստոսի. զոր քննեալ միանգամ սրտի մտօք՝ ծանիցուք քաջ զմեզ ինքեանս. եթէ յարգիցե՞մք տակաւին զտաղանդ չնորհին, որոյ հարկ է այժմիկ մատչել ի համար առանձինն, և յետ սակաւու միոյ՝ յընդհանրական ատենի անաչառ տուողին, որ տոկոսեօքն հանդերձ պահանջեսցէ. և ոչ միայն զգործոց՝ այլ և զբարեաց՝ զորովք թէ ոք զանց արար։

Թերեւս խռովութիւն ինչ և ահ արկցեն բանքս ի միտս խաղաղացեալս. — բայց լաւ իցէ երկնչել և խռովիլ առ վայր մի՝ և առաւել զգաստանալ, քան զանհամբոյրն ասել բան, եթէ զայդոսիկ արժան էր մեզ կանխաւ քաջ կշռել և ի միտ

առնուլ, և մի թերակատար տիրովք մտանել ընդ լծով՝ որոյ ծանրութիւն կամ ոչ ծանուցաւ մեզ և կամ ոչ ծանեաք։ Առ որս համառօտ ասելի է. եթէ ոչ յայնժամ ի սկզբանն, հիմ այժմ չափահաս գոլով՝ ոչ խելամտիցէք. մինչեւ ցե՞րբ տղայք, մինչեւ ցե՞րբ տկարք. և արդ ո՞ւմ կայք, զի՞նչ կամիք գործել. եթէ լաւագոյն գտէք ճանապարհ՝ ազէ՞ ընդէ՞ր ոչ գնայք համարձակ. և եթէ այդմ ոչ հաւանիք՝ ապա նախամեծար առնէք զայս՝ յորում ըմբռնեալ կայք։ Պատկառ կացէք ուրեմն ուղղոյն՝ զոր Քրիստոս եբաց և եցոյց, և թէպէտ անագան՝ այլ խոստովանիք զի արդ ճանաչէք. տո՛ւք ուրեմն զարծաթ տաղանդոյն աւանդելոյ ձեզ՝ ի սեղանաւորս, մինչ կայ դեռ ժամանակ, զի մի յանկարծոյն հասեալ արդարակշիռ տեառնն՝ պարտաւոր գտանիջիք։

Զի՞նչ ասել և այնոցիկ, եթէ գտցին, որք ասիցեն եթէ փորձ ամաց տիոց և ծանօթութիւն աշխարհի՝ բացին զաչս մտաց մերոց, և ծանեաք՝ զի ոչ ամենայն կարգ և կանոն պատշաճիցին աստուածատուր ազատութեան մարդոյս, և ոչ ամենայն բարուց և ժամանակաց. այլ իցէ տզայականն ունկնդրութիւն և այլ զարգացելոց դատումն. հին զրոյց է Կոյր հնազանդութիւն. իցէ բազում ինչ՝ որ երբեմն յաղքատութեան սակի՝ արդ յօրինաց ժամանակի և տնտեսութեան կենաց՝ ներելի է։ Եւ այդ զի՞նչ իցէ ասել. բայց եթէ այլազգ երբեմն լսէաք զձայնն Քրիստոսի և այլ ազգ յայժմուս. — այո՛, մարթ է քեզ այլ և այլ լսել, մարթ է և իրաց այլայլել, նա և երկնից և երկրի, բայց և ոչ միոյ նշանախեցի անցանել յօրինաց եղելոց հոգւովն Աստուծոյ և քննութեամբ և ընտրութեամբ սրբոց. և « Բան Տեառն մնայ յաւիտեան ». այս է « Բանն որ ի ձեզ աւետարանեցաւ ». և « Որ ոք լուծցէ ի պատուիրանացս յայսցանէ (նա և) ի փոքունց, փոքր » կոչեսցի յարքայութեան երկնից ». իսկ որ աւելի քան ըզմիանգամ աւետարանեալ և ընկալեալ յեկեղեցւոյ՝ աւետարանեսցէ, թէ և հրեշտակ ոք իցէ, նզովեալ է յԱռաքելոյն՝ որ անօթ ընտրութեան է Քրիստոսի։ Զիք փոփոխութիւն բանից նորա. իւր է և բանն որ ելանէ ի բերանոյ առաջնորդին՝ որ իւր երեսփոխան է ի միաբանս վաներոյն։ Փոփոխութիւն՝ ի միտս և ի կամս լսողացն է. որոց անկ է քննել զականջս իւրեանց, իցե՞ն ուղղեալք և յարդարեալք ըստ քրիստոսեան —

սարասի, պարզ մտօք և սրտիւ. և այնուհետեւ փութալ խոնկալ եթէ ո՞րպէս զիարդ պահելի է զլուեալն բան Աստուծոյ։ Այսպէս արասցուք և մեք։

Գ

Ոչ բազում ինչ հնարից կարծեմ պէտք իցեն առ այս, զի եթէ հաւատամք սկիզբն զգօնութեան զերկիւղ Տեառն, որ ոչ տղայոց եւեթ է խրատ, այլ այնոցիկ մանաւանդ՝ զորս լիութիւն հասակի և գիտութեանց կարէր յանձնապաստանս առնել, և համարձակեցուցանել ի դատաստանս իրաց՝ որոց յառաջն երբեմն անխտիր հլութեամբ պատկառ կային։ Ոչ ալիք և ոչ դալրութիւնք՝ այլ խոնարհ լսելութիւն հասուցանէ զմարդ « ի չափ կատարմանն հասակի Քրիստոսի ». և եթէ տակաւին հզօր ոմն կարծիցէ ոք զանձն, ապա և հզօրագոյնս պահանջիլ յիշեսցէ. և տեսցէ զարդարեւ հասեալսն իսկ յայն չափ կատարման՝ զի տակաւին դողան ի բանից Տեառն. ի մտի ունելով ընդ առաջնոյն և զվերջին խրատ Իմաստնոյն. « Զամենայն ինչ լուր. յԱստուծոյ երկիր, և զպատուիրանս » նորա պահեա. զի այս է մարդն ամենեւին »։ Երկիւղս այս ցածուցանէ զանձն, և տայ հլուաբար, ասացից՝ թէ և տղայաբար՝ ընդունել զբանս Աստուծոյ, և ի նոյնս կրթիլ մտադիւր կամօք, որով և սիրտն հանդարտեալ վառի սիրովն Աստուծոյ։

Երկի՞ւղ և Սէր. տոքա արդարեւ զոյգ « Բեւեռքն հարեալք » ի մուրհակաց՝ և տուեալք ի հովուէ միոջէ », Ժողով. ԺԲ. 11. ի Յիսուսէ Քրիստոսէ։ Երկիցուք, եղբարք իմ, և սիրեսցուք. նա մանաւանդ և՛ սիրեսցուք և՛ երկիցուք, որպէս ամենայն ընտրեալքն արարին, սակաւ ինչ զանգիտեալ ի սկզբանն, քանզի այս նախաշաւիղ է գեռավարժիցն, մինչեւ հասցէ երջանիկն ժամ կամ չափ, յորում՝ Սէրն կատարեալ՝ ի սպառ մերժեսցէ զերկիւղն։ Երկիւղ՝ զգուշացուսցէ և ի չարեաց փոքունց, եթէ իցէ փոքր ի չարի. արդարութիւն՝ ազդ արասցէ. սէրն՝ ձգեսցէ. և միանգամայն թելադրեսցեն զնորոգութիւն վարուց։

Նորոգութիւն վարուց։ Բաբէ՞. զի՞նչ քան զայս եւ մխիթարական եւ կարեւոր. մինչ ամենայն հոդածնաց կնիք ի վերայ

կայ կորագլուխ երթալ ի հնութիւն և յապականութիւն, որպէս և ամենայն շինուածոյ՝ յաւեր և ի քակտումն։ Բնութիւնս թուի իմն խոժոռել ընդ արագարագ եղծումն, և բաղբաղի հնարս՝ դառնալոյ ընդ կրունկն, և վերազգենուլ ընդ ծառոց և ընդ հաւուց զառ ի հերուն թօթափեալ տերեւս և փետուրս։ Ի՞զձ սնոտի և զուր ջան. մարդոյ վիճակ գոյութեան՝ ոչ սահմանի երկրաւս, զի տարերքք նորին նորոգիցի. այլոյ և վերնոյ աշխարհի է սահմանեալ. և անկ է նմա այսմ ակն կալեալ՝ արհամարհել զերկրաւորս և զանցաւոր, եթէ և գոյր հնար յերկարել յապաղել նմա յայս կեանս։ Սակայն գոյ, և գոյ իսկ մարդոյ վերանորոգութիւն չասեմ արտաքնոյն կամ ըստ մարմնոյ. առ որ ոչ բաւեն ամենայն դեղք և հնարք արուեստի, այլ ներքին մարդոյն նորոգութիւն և վերածնութիւն իսկ։ « Հոգին է կենդանարար. մարմին ինչ ոչ » օգտէ ». Յովհ. Զ. 64. և կեանք հոգւոյ՝ շնորհքն են. և շնորհք՝ յանմահութիւն վերաձգեն։ Եթէ մարմին հնացեալ և ապականեալ՝ ի հնութիւն իմն երբեմն կրթէ և զհոգի՝ վատ վատ կրիւք և ախտիւք, սակայն առձեռն պատրաստ կան շնորհք բժշկարարք և կենդանարարք, որովք մարթ է առոյգութեամբ հասանել ի կէտ կենաց երկրաւորի և փոխիլ յերկնաւորն։

Արդ, օ՞ն առեալ, մի՛ յապաղեսցուք զարտաքին շինուածոյս մերոյ քննել զկերպարանս ողորմելիս, եթէ իցէ՞ դալար և կայտառ, կամ ծիւրեալ, ամ ըստ ամէ և աւուր աւուր խոնարհելով յերկիր՝ յորմէ առաւն. այլ զներքինս քննեսցուք զմարդս, զկեանս և զվարս մեր՝ ասեմ. որոյ մարթ է նուաղել և նուազել, այլ և բարգաւաճել և լիանալ, ըստ առն իւրաքանչիւր ջանից, և ըստ օգնականութեան վերին շնորհաց. և ոչ մի անգամ միայն՝ ըստ մարմնոյ, այլ և բազում անգամ մահանալ և վերակենցաղիլ. այս է երթալ ի զօրութենէ ի զօրութիւն։ Երանի՜ այնոցիկ՝ որոց հանապազագնաց են ընթացք կենաց՝ յուղիղն շաւիղ. և եթէ սակաւուց իցէ անխուտոր ժաման լինել ի կէտն ըղձալի, այս հասարակաց է հնար ստէպ դառնալ յուղղութիւն, ի նորոգութիւն վարուց. և եթէ չիցէ մեզ հնար՝ ըստ կամս յաւելուլ մեզ կանգուն մի հասակի կամ զմազ մի սպիտակ առնել կամ թուի, միթէ ո՞չ կարիցեմք ի ձեռն շնորհացն Աստուծոյ՝ եւ աճել եւ պէսպէս

երանգօք զարդարիլ։ Եւ եթէ չկարիցեմք բոլորովիմբ մերկանալ զհին մարդս. – ո՜հ. ընդէ՞ր այսպիսի բան ել յինէն... բայց զի զայն ասացի, ասացից և զայս. ընդէ՞ր դանդաղիցիմք գոնեա ի վերայ հնոյն զնորս զգենուլ, որ առ ձեռն պատրաստ իսկ կայցէ. Ո՞չ ապաքէն առ ամենեսին « Մերձ » է բանն » կենաց։ « Զգեցարուք այսուհետեւ զՏէր մեր Յիսուս Քրիստոս », գոչէ Առաքեալ. զայն զոչեն դնչինք ուխտից մերոց, զնոյն և աւուրք կենաց մերոց պակասեալք, և կատարածն մերձեցեալ, և ահաւորն յաւիտենականութիւն՝ որ ահա ըմբռնելոց է զմեզ, թէ կամիմք և թէ ոչ։ Այլ ազդողագոյն եւս ինձ գոչէ հեզաձայնն Յիսուս, « Ե՛կ զկնի իմ »։

Մեծի քաջալերութեան է ձայնս այս յետին, որ և երբեմն առաջին. լուիցուք սմա, եթէ յայլոցն զարհուրիմք, և հանապազ լուիցուք. զգեցցուք զհոգին Քրիստոսի. և եթէ զգեցեալ իցէ՝ մի մերկասցուք բնաւ ամենեւին. և եթէ աղտեղեալ եւս մերովսանն՝ լուասցուք յաղբերս ապաշխարութեան. յուսասցուք ի մարդասիրութիւն Քրիստոսի, զի անսպառ են գութք նորա, և նա է զօրութիւն և շունչ հոգւոց մերոց։ Սիրեսցուք զնա՝ որ « Սիրեաց զիւրսն որ յաշխարհի աստ » են, և իսպառ սիրեաց զնոսա »։ Յովհ. ԺԳ. 1։ Այս միայն յիշատակ բաւական է ի թօթափել զկեղեւանս կռուեալս յոգիս մեր, որպէս շող արեգականս՝ զի հարեալ լուծանէ զեղեամն և զսառն։ Զայն Քրիստոսի հանապազ խօսի ի մեզ, եթէ գամ մի միտ դիցուք. լուիցուք նմա. և լսեմք՝ եթէ սիրեմք. և այնու յաջողիմք. քանզի, « Որոց սիրենն զԱստուած՝ » յամենայնի գործակից լինի նոցա ի բարիս »։ Հռոմ. Ը. 29։

Եւ առ ի՞նչ իսկ գումարեալ է ժողովս մեր. և ո՞ած եբեր զմեզ այսր, եթէ ոչ ինքն Բանն այն, այցելուն և խնամողն հոգւոց մերոց. ոչ շրջան արեգականս դարձոյց, այլ որ բանիւ շարժէն զամենայն՝ նա յորդորեաց խմբեաց եմոյծ զմեզ ի հանգրուան ճանապարհի հոգեւոր կենացս, և բեւեռեալ ձեռօքն մատանանիշ առնէ զկէտ նպատակի մերոյ։ Հա՜պա, ընթացուք զհետ կոչողին ի խաչէ անտի իւրմէ՝ ծարաւեալ շրթամբքն. Աստուած հրամայէ, Յիսուս հեզաբանէ. Կուսամայրն արգահատէ։ Լուռ լիցուք. միայն լուիցուք հոգւով. անսասցուք և յիշեսցուք։ Այժմէն ուխտ նոր կռեսցուք և երդումն անդրդուելի՝ առ ուտս սեղանոյս, նորով յօժարութեամբ

և պնդութեամբ՝ քան որով մտեալս էր մեր այսր՝ ելանել աստի, իբրեւ մարդ նոր՝ ըստ կերպարանի նորոյն Ադամայ։ Մի՛ եւս այսուհետեւ զբաղանք բաղբաղեալք՝ կարող լիցին չլսելոյն առնել մեզ զձայնն Յիսուսի, զբանս կենաց. որ՝ որքան հեզ՝ այնքան և հզօր է քան զամենայն աղմուկ և պէս-պէս խօսս աշխարհի և զկրից իւրաքանչիւր. շատ է թէ ոք զուշ և զուրուշ ամփոփեալ՝ խոնարհեցուսցէ զգլուխն ի պատուանդան խաչին, և փափագիցէ խելամուտ լինել։

Ո՜տայր և ինձ՝ որ բարբառիմս կամ թոթովեմ աստանօր, իբրեւ ի չորացեալ եղջերէ փողոյ ձայն ածելով, վանգի միոջ չափ թարգման գոլ գաղտնեաց բանից Քրիստոսի՝ բովանդակելոց յԵրանութիւնսն՝ զոր հանդերձեալս է պարզել, եթէ շնորհեսցէ ինքն Տէր, առաջի փափագողացդ հոգենորոգ բանից. և եթէ իբրեւ մշակ անհմուտ՝ խառն հաւաքեալ ի կալոյ զցորեան և զյարդ՝ սփռեցից յանդաստանս ընկալուչս և յարդարեալս, լսողացդ լիցի շնորհ զբարի բարին ընդունել, և զխոտանն և զանյարդար առ յինէնն ի բաց թողուլ։ Կանխեսցուք միաբան մաղթել առ Տէրս մեր և վարդապետ՝ սրբել զունկն և զշրթունս մեր յընդունելութիւն հոգեսնունդ պարէնին, և ի բաց վտարումն անպիտան և վնասիչ նիւթոց։

Եւ դու ինքնին, ո՜վ որ եսդ իսկաբուն բան յաւիտենից կենաց, ճշմարտութիւն անյեղլի, ճանապարհ և առաջնորդ վերանալոյ յերկրէ յերկինս. որ յառաջ քան զլինելն մեր ընտրեցեր զմեզ յաշխարհէ, և ի ժամանակի սահմանելոյ՝ պահես և խնամես, և այժմ ժողովելոցս աստանօր՝ յիշեցուցանես զանվրիպելի պատգամս քո, և յետ սակաւու՝ մի առ մի կոչեցեալ յատեան քննութեան՝ պահանջիցես տոկոսեօք զտաղանդսդ աւանդեալ մեզ՝ յօրէ անտի նուիրմանս քեզ ուխտիւք կրօնաւորութեանս, մինչեւ ցօր ելիցս ի կենաց աստի. դու ինքն, ո՜վ Բանդ Աստուած, հայեաց և տես ի մեզ։ Բաց զականջս սրտից մերոց լսել զբարբառ քո ի միում միում Երանութեանցդ. հնչեցո զնոսին ի խորս հոգւոց մերոց, և լսեցո հանապազ՝ որպէս ի ներքսագոյն խորանէ սրբութեանց քոց, և որպէս օրէնս յաւիտենականս յուղղութիւն վարուց կենաց, և ի նմանակցութիւն քոյումդ, զոր կարգեցեր մեզ յօրինակ. և զաղօտացեալն ի մեզ սկզբնատպիդ պատկեր՝ վերստին նորոգեա գթութեամբ. քաղցրացո մեզ զլուծ քո, միշտ քաղցր

առաքինի կրողաց և ստուգապէս զքեզ սիրողաց։ — Եւ դու՝ երկրորդ օժանդակ հոգւոց մերոց և վերածնող ի Քրիստոս, Մայր նորին իսկ աստուածային Բանին, և նորին շնորհիւ մեզ որդեգրելոցս քեզ, որպէս պարկեշտ կերպարանաւդ կաս աստանօր առաջի աչաց մերոց, կացցես անմեկին և ի սիրտս, առ յօժար լսողութիւն ձայնի Միածնիդ քո. որոյ լսողն երանեցաւ ի նմանէ, և կատարող նորին՝ կոչեցաւ՝ ինքեան եղբայր և քոյր, և եւս հրաշափառապէս, զուգակից Քեզ, ո՞վ անճառ շնորհիս, Քե՛զ զուգակից մայր գոլ ինքեան. « Որ » առնիցէ զկամս Հօր իմոյ՝ որ յերկինս է, նա է իմ եղբայր » և քոյր և մայր ». Մատթ. ԺԲ. 50։

Բ

ԵՐԱՆԻ ԱՂՔԱՏԱՑ ՀՈԳԻՈՎ, ԶԻ ՆՈՅԱ Է ԱՐՔԱՅՈՒԹԻՒՆ ԵՐԿՆԻՑ

Ամենայն կեանք մարդոյ, և մանաւանդ սկիզբն և կատարած, յայտ առնէ զկարօտութիւն ի պահուստ կենացն. որովք և է հնարիւք, որ առ յայլոց մարդկանէ և որ յարգասեաց բնութեան. չիք ոք որ ծանիցէ զինքն յաշխարհի աստ՝ և ոչ զգայցէ զպէտս ինչ աշխարհային, և ըստ աճել տիոցն և կրից՝ ոչ հոգայցէ պատսպարել զէութիւն իւր արտաքին օժանդակօք։ Զայս քաջ խորհրդածեալ՝ ի դէպ է ընդաբոյս ասել մարդոյ զկարօտութիւն և զաղքատութիւն, և օրինաւոր՝ զինդիր ապրանաց. և յայսմ անմեղադրելի է, ցորչափ ի չափու կայցէ։ Այլ ընդ նմին, եթէ ոչ ընդաբոյս՝ զէթ դիւրաբոյս է ի նմա և ցանկութիւն առաւելին քան զչափ պիտոյիցն, յոր ձգտի պէսպէս պատրանօք. ոչ առ ի կեալ սոսկապէս, այլ առ ի կեալ փափկապէս. ի մոռացօնս արկեալ՝ զի ծնաւ արտաքոյ տեղւոյն փափկութեան, և անդստին ի ծնէ դատապարտեալ է՝ քրտամբք վաստակոց հայթհայթել զոգէպահիկն։ Զեն մեզ առ այս պէտք երկար բանից. քաջ ճանաչեմք, և ընդ նմին զհակառակն եւս, զբնաւորեալն իղձ կամ ագահութիւն առ ստացուածս և զակատումն ի նոսին.

յորմէ սակաւք ոմանք և ի գերագոյն իմաստասիրաց անտի ազատ գտան, շատ է թէ և ոչ չեղեալ յայլ ընդ այլոյ տեսութիւնս մերկիմաստակացն։ Բազում ինչ փարելիս ճառեցին զաղքատութենէ փիլիսոփոսքդ, և իմաստնագոյնն յիմաստունս՝ ամենայն բարեաց և գոյից աշխարհի հանդէս արարեալ, կնքեաց զամենայն՝ Ունայնութիւն ունայնութեանց. այլ ոչ և նա և ոչ այլ ոք հանդուրժեաց կալ յօժարութեամբ յաղքատութեան պայմանի։

Բայց մեզ աւասիկ « Մեծ քան զՍողոմոն է աստ ». որոյ ոչ ստացական կամ հայրենատուր էր՝ որպէս նորայն, այլ ինքնատուր Եւ իմաստութիւնն Եւ ամենայն ինչ. և սա նախ՝ ոչ միայն տանելի և գովելի՝ այլ և երանելի հռչակեաց զաղքատութիւն. և որպէս ճշմարիտ վարդապետ՝ զործով յինքեան զնոյն եցոյց. որոյ և ծնողք իսկ և ծնողավայր, և կենակիցքն և ընկերք և բնակարան, ամենայն ինչ աղքատին. հիւսն մի, հովիւք և ձկնորսք. անտուն, անտեղի, և ոչ իսկ սեփական ունելով ըստ վայրի կենդանեաց և թռչնոց որջ կամ բոյն կամ բարձ հանգստի, ուր դիցէ զգլուխ իւր հոգած և յօգնած՝ ի խնամելոյ զմարգիկ և յաղօթելոյ զգիշերն ի բուն առ Հայր, առ որ կարէր անդստին ի սկզբանն ասել սրտառուչ. « Աստուած իմ, Աստուած իմ, ընդէ՞ր թողեր զիս »։

Յայսպիսեաց իմն աղօթից թուի ինձ տեսանել զնա այսօր վաղայարոյց ի գլուխ լերին, բանալ զբերան իւր բարեբուղխ, և առաջին բան աւետարանել զԵրանութիւն աղքատաց. բայց ոչ վարկպարազի և աղտեղի աղքատաց՝ որովք լի էր և Պաղեստին և է ամենայն աշխարհ, այլ որ յօժարութեամբ և պարկեշտութեամբն են. « Երանի՜ աղքատաց հոգւով, զի » նոցա է արքայութիւն երկնից »։ Որպիսի, աղքատութիւն, և որպիսի՛ ճոխութիւն. մինչ մեծատունք փարին զերկրաւ և ոչ կարեն լիովին ընդգրկել, դու Տէր, տաս աղքատաց ըմբռնել զերկինս։ Ո՞վ հոգեւոր աղքատութիւն, անդրանիկ երանութեանց Քրիստոսի։ Ո՞չ աւանիկ դա և մեր առաջին ծնունդ և բարբառ եղեւ սրտի, յաւուր՝ յորում թողեալ ըզտուն և զաշխարհ և որ ի նոսին՝ եկաք այսր, և ի նուիրմանս մերում առաջին գաշն ուխտի առ Աստուած եղեւ Աղքատութիւն, նոյն և առ ի նմանէ գրաւական մեզ խոստացելումն Արքայութեան երկնից։

. Եւ զի՞նչ էր զոր ուխտեցաքս անդ առ ոտս սեղանոյն սրբոյ. — Հրաժարել յամենայն երկրաւոր ստացուածոց՝ եթէ ունէաք և եթէ կարէաք ունել. և այս առաջին պայման էր ուխտիս մերոյ հոգեւորի, որով իբրեւ խորայատակ իմն խրամով՝ պատսպարիմք ի հրապուրանաց ընչից և ի վայելից նոցին: Այլ ոչ է հնար միովս այսու կալ մեզ յակաստանի, եթէ հատեալք յընչից և յաշխարհէ՝ ոչ հրաժարեսցուք և յաշխարհիկ անձանց և յընչեղաց. զի մեծ են սոցա հրապոյրք առ սիրտ՝ քան զդոյզն ինչ նիւթ և դրամ. զզուշակենցաղ կրօնաւորի՝ օրէն է աղքատանալ և յընտանութենէ մարմնոյ և արեան. այս երկրորդ պայման մերոյ աղքատութեանս: Այլ և ոչ աստէն զկայ առնուլ. քան զընչից և քան զմարդկան՝ չարագոյն ևս է կրօնաւորի՝ յարումն յանձն իւր կամ սէր անձին. ներքսագոյն պարտք են նմա ունայնանալ և յանձնէ. «Ուրանալ զանձն», տէրունեան վճռով. և այս երրորդ և վեհագոյն պայման աղքատութեան հոգւոյ: Այսոքիւք երրեակ աղքատութեամբք ճողոպրեալ սոսկացեալ հոգի՝ նստի անկասկած իբրեւ յերկնաբերձ գդեկի, անտեղիտալի վերամարտ ալեաց աշխարհի և մարմնոյ, և մարթի միայն ընդ միայնոյ լինել ընդ Աստուծոյ:

Ա.

Փափագողաց գալոյ զհետ իւր և յարքայութիւն երկնից գիմելոյ, Քրիստոս առաջին բան ասաց. Երթ, վաճառեա զինչս քո և ապա եկ զկնի իմ: Աւագիկ երիտասարդդ որ փափագէր այդմ. այլ տեսէք, զի՞նչ այլ յայլմէ լինի ի լսելն զվճիռդ զայդ. թուի իմն նուազել բեկանել յանձին, և յառաջ քան յընչիցն՝ ի կենաց անկանել. և խոժոռեալ թիկնադարձոյց առ Յիսուս՝ երթայ վարիլ զընչիւքն կորստականօք: Տեսէք արդ և զայլս՝ նմանիս փափագանացն՝ այլ ստոյգ փափագողս և սիրողս Յիսուսի. «Ահաւասիկ, ասեն, » մեք թողաք զամենայն, և եկաք զկնի քո»: Ոչ զի ըստ աշխարհի անկածք և աղքատք ոմանք էին և ծովախոյզ ձկնորսք, այլ և մաքսաւորք և սեղանաւորք՝ միով յօժարութեամբ նմին հետեւեցան. ընդ լրոց աւետեաց արքայութեան՝ առին և զճաշակ արքայութեան, և դառնացաւ աշխարհ և որ

ինչ յաշխարհի. և թողին զամենայն զոր մարթ էր թողուլ, և զոր չէրն մարթ՝ ակամայ կամօք կրել:

Սոցին հետեւեալ և մեր՝ զնոյն աղքատութիւն կամաւոր խոստացաք և խոստովանեցաք առաջի Աստուծոյ և եկեղեցւոյ: Իսկ այսօր՝ յետ ամաց յոլովից, ի կրկնել յունկն մեր աւետարանութեանս այսորիկ, զի՞րդ արդեօք լսիցեն սիրտք մեր. խաղայցե՞ն խնդութեամբ յունայնութեան սիրոյ ընչից և ի լիութեան անդորրու մտացն խղճի, առաւելեալք այժմիկ գոհութեամբ քան ի սկզբան անդ: Կարիցե՞մք յօժարագոյն եւս ասել զ՝Ահաւասիկ թողաքն և գամք զկնի քո, Տէր Յիսուս. եթէ արդեօք բաղխիցի՞ և ընդոստնուցու ուրուք սիրտ, հարեալ յայս ինչ կամ յայն նիւթ առաւել քան զարժանն և զպիտոյն: Ի դէպ է խնամով քննել զպանդխտարան մեր և զաղքատանոց, զիցիկս և զխշտիկ, որոց յամենայն ժամ անկ է պարզութեամբ պատրաստ լինել յասպնջականութիւն աղքատացելոյն վասն մեր Յիսուսի. աղէ՞ շուրջ յածցուք զմեօք ի կայս և ի կահս մեր, այլ կանոնական աչօք հեղինակաց կրօնիցս, և առեալ զձեռանէ ձեռնկալուին մերոյ Յիսուսի՝ հանդէս արասցուք մենարանիս, ցուցանել անպատկառ զամենայն խորշ և դարան, և ասել. Այսքան է, Տէր, աստանօր, սակայն իմ և ոչ մի ինչ յատուկ յայսցանէ. ամենայնն աղքատին և աղքատաց: Կարիցե՞մք այսպէս ասել համարձակ. վկայիցե՞ն սիրտք՝ եթէ արդարեւ թափուր են յասացեալ դիւրութեանց աշխարհի և յաւելորդաց, և կեամք որով չափով մարթ է կեալ և ըստ պատշաճի հրահանգաց կարգիս մերոյ և օրինաց. եթէ արդեօք ստգտանիցի՞մք, զի փախուցեալք յաշխարհի վշտաց և ի հոգոց, ոչ միայն յանդորրու և անկասկած վայելեմք զտուրս Աստուծոյ, այլ գուցէ ոչ և արժանապէս գոհանալով և շատանալով: Անձամբ անձանց վկայեմք, զի ի չարեաց փախչելով՝ կեամք ի բարւոջ, և պատկառելով յիշեմք զՔրիստոսին, փոխանակ միոյ ինչ թողլոյ ի բնին մերում՝ հարիւրապատիկ աստ յայսմ տեղւոջ ընկալեալ փոխարէն, և անբաւից ընդունելութեան ունել յոյս ի հանդերձելումն, եթէ կայցեմք հաւատարիմք:

Բայց, քննեսցուք խղճի մտօք. այս ամենայն դիւր և դարման՝ որով վարիմք՝ իցե՞ն բնաւին քրիստոսատուրք. իցէ՞ ամենայն ներեալ ի կանոնաց կամ ի հրամանաց. չիցեն ինչ

իրք սպրդեալք և ըստ կամաց և ըստ քմաց։ Իցեն թերեւս դուզնաքեայք և չնչինք. բայց, տես ինձ, զի մեծի եւս ծանականաց են չնչենեօք վրիպել յերանութենէն Քրիստոսի՝ քան բազմօք օրինապէս կեալ յաշխարհի, և փոխանակ լուսայիւ միով ընդ այրոյն գնելոյ զարքայութիւն, խերեւեշիւ լոկով սեփականաւ անկանել ի բաց յարքայութենէ։ Շիւղ մի փոքրիկ յաչս՝ թաքուցանէ և զլեառն մեծ. «Հան» ի բաց զչիւղդ յականէ քումէ». և առեալ զայն ի ձեռին՝ հայեաց և ասա ընդ երանելւոյն Զոսիմոսի, եթէ կրօնաւոր՝ «ում այս և այսչափ ինչ պիտոյ է կամ փութայ» ունել, նա ոչ ունի հնար փրկութեան»։ Աւելորդք զաւելորդս ծնանին և չնորհաւորքն երբեմն երեւեալք՝ զանչնորհս ներմուծանեն. և ի պարզութեան կրօնաւորականի հարկանի գոյն և ձեւ և հոտ աշխարհի, թերեւս և այնպիսի ինչ՝ որով և ոչ ամենայն աշխարհիկ կարիցէ բարեքել զանձն և զբնակարան իւր. և որ չար եւս է, զհետ նիւթոցն, կամ յառաջ քան զնիւթսն՝ գամագիւտ լինին հրապոյրքն և հաճոյք անպատշաճք. և յանզգաստից իմն զհետ հոտոյ իւղոց աշխարհի ընթանայ սիրտ զաղփաղփուն։ Զեմք արդարեւ անապատակեացք և արգելականք. չէ անմարդաձայն վանս մեր, այլ և յաճախեալ (թերեւս քան զչափ) յեկաց մարդկանէ, և վասն այսորիկ հարկ համարիցի մեզ բարեքիկս երեւել, և նոյնպէս յարդարել զոր ինչ միանգամ ընդ տեսութեամբ անկանիցի։ Այո, լիցուք և բարեքիկք և սրբիկք. այլ մի՛ ինչ ըստ չափ կարգի կրօնաւորութեան, և մի՛ առ մարդկան ականէ յԱստուծոյ աչաց անկանել. մի՛, թէ և զանձս ոք տայցէ, աւելի քան զվայելուչն մեզ ծախել. և եթէ վասն հասարակաց չնորհեալ իցէ գեղեցիկ ինչ և չքեղ յարդարել, զարգարեսցուք և կարեւորագոյն եւս իրօք, պարզութեամբ ասեմ և պարկեշտութեամբ՝ չածել արատ դիւրաշնաս աղքատութեան։ Եթէ գլուխն առաքելոց պատուիրէր տիկնայց աշխարհի և հարսանց. «Մի՛ արտաքուստ հիւսիւք և ծամա» կալօք և պաճուճեալ զգեստուք զարդ, այլ ծածուկ սրտին» մարդն անկեղծութեամբ, հեզութեամբ և հանդարտութեամբ» հոգւոյն», զի՞նչ պարտ իցէ ուսանել աստի և ասել անաշխարհիկ միանձին։ Աղաչեմ, մի՛ դոյզն ինչ վնաս անձին լոկոյ համարել, թէ գոցի ինչ առ ումեք յայնպիսեաց աւելորդաց,

զի իւրաքանչիւր անձն ի կրօնի՝ մասն է մրոյ մարմնոյ, և անկ է համաձեւ լինել բոլորումն։ Աքար միայն յանցեաւ ագահութեամբ, ասաց ոմն ի զգօնից, և համօրէն բանակի եհաս տագնապ.

Այլ առաւել քան յարտաքին նիւթ և տեսարան վանացս և վանականաց, յայտ է թէ արժան է ուշ ունել սրտի պարզութեան. զի ոչ այնքան յէակն և յորակն սահմանի աղքատութիւն կրօնաւորի, որքան ի յօժարութիւն և ի բերումն սրտին. նիւթք՝ հրապոյրք են համերք, կատարիչ ապիրատութեանն՝ հաւանութիւն կամացն է. վասն այնորիկ և ոչ ընչեղութիւնն չար ըստ ինքեան, և ոչ նոյնպէս անընչութիւն բարի. այլ որ հոգւով է աղքատ՝ նա երանեցաւ ի Քրիստոսէ. բազում անգամ լսեմք և ասեմք, եթէ Աբրահամ և Դաւիթ և բազում եւս թագաւորք և թագուհիք՝ որք ի կարծեցեալ փափկութիւնս կէին, սակայն և ընդ ոսկեձեղուն մարդակօրն մոխրաթաւալք լինէին, զորոց ընդ ծիրանեօքն՝ այծենիք զմարմինսն կծէին, և նիւթականաւն գանձու՝ զանիւթականն գնեցին. քանզի հոգիք նոցա հեռացեալ մեկուսացեալ էին ի յարկաց՝ ուր մարմնով քաղաքավարէին։ Նոքա են որ դատապարտ առնիցեն զայնոսիկ՝ որք ըստ տէրունական յանդիմանութեան՝ գառնենիք են կերպարանաւ կրօնաւորութեան, և գայլենիք ցանկութեամբ և ագահութեամբ։ Զայսպիսի կիրս անկ է յառաջ քան զինչս ի բաց թօթափել ի սրտէ. և ոչ միայն յաւելորդաց՝ այլ և ի կարեւորացն իսկ անարատ պահել զանձն, և իբրեւ ի հարկէ ընդունել զանհրաժարելին. և պարզապէս, առանց մանրախոյզ քննութեան նիւթոց՝ սիրել զաղքատութիւն և զչատանալն սակաւուք. որով անընիւթականն հոգի և առ անընիւթն հաստեալ՝ անարգել փարեսցի զսովաւ։ Ցայս սակս ընդ գերագոյնս լաւութեանց դասեցաւ աղքատութիւն կամաւոր. երանեցաւ ի Քրիստոսէ, աւետարանեցաւ յառաքելոցն, գգուեցաւ յԱնտոնեանց և ի Փրանկիսկեանց և ի նմանեացն։ Ո՞յր ուրուք ընթերցեալ զվարս սրովբէասարաս Ասիզացւոյս, հեզինակի նորոց միանձանց, և ոչ հիացի ընդ սէր և ընդ տոփանս իմն նորա՝ յԱղքատութիւնն, զոր քոյր և հարսն իւր կոչէ, որով և նմանագոյնս վկայի նկրտեալ զհետ Քրիստոսի, յորմէ և զանզուգականն արժանի եղեւ ըն-

գունել վարձս, զտիպս աշխարհակեցոյց վիրացն. և կտակաւ աւանդեաց իւրայոցն պարիսպ ամրութեան մենարանացն զաղքատութիւնն ածել. զոր և տեսանեմք ցայսօր՝ յետ այն-քան դարուց՝ պինդ պահեալ, և սքանչանամբ ընդ թաւարծի ձեւ նոցին, ընդ որ և աշխարհիկքն պատկառ կան և պա-տուեն, թերեւս առաւել քան զնրբազգեստ միանձունսն: Ո՞տայր և մեզ զնոյն ոգի սերտ ունել ընդ ձեւով մերոյս կար-գի. և առաւել եւս չանալ, զի մի յետնեալ գտանիցիմք յա-ռաքինութենէ և ի վարձուց այնոցիկ՝ որոց հաւասարք եմք ուխտիւք և անհաւասարք ի խստամբերութեան. զորոյ թերին լցէ կամքն և խոնարհութիւն:

Ուրախ լիցի արգ և «պարծեսցի եղբայր խոնարհ ի բարձ-» րութիւն իւր, և մեծատունն՝ ի խոնարհութիւն իւր». յի-շելով միշտ զի «Աստուած ընտրեաց զաղքատս աշխարհիս, » որ են մեծատունք հաւատովք և ժառանգաւորք արքայու-» թեանն զոր խոստացաւ սիրելեաց իւրոց»: Ոչ միայն սի-րելի լիցի՝ այլ երբեմն և զգալի՝ աղքատութիւնս մեր. լիցուք և մեք երբեմն՝ ըստ Առաքելոյն՝ կարօտեալք և պակասեալք, որպէս զի ի նուազութեան ինչ մարմնաւորացն՝ հոգեկանն ա-ռաւելուցու ի մեզ մխիթարութիւն. այն զի ոչ է մարթ եր-կոքումբք միանգամայն լինայ, հոգւոյն քաղցրութեամբ և դիւրակեցութեանն մարմնջմամբ: Աղքատասցուք յօժար կա-մօք, զի ի վերայ հասանիցեմք, եթէ որպէս «Ջցանկութիւն » տնանկաց՝ լուաւ Տէր. եզեւ Տէր ապաւէն տնանկին». և սիրտք մեր վկայեսցեն, եթէ մինչչեւ մեր խնդրեալ «Պատ-» րաստ արարեր քաղցրութեամբ քով տնանկի, Աստուած»: Աղքատն հոգւով ոչ ամաչէ երեւել աշխարհի աղքատ և մարմ-նով, զի գիտէ այնու կերպարանակից զոլ Քրիստոսի. այլ ամաչեսցուք՝ եթէ երբէք քան զաշխարհիկսն ճոխաբար վայե-լեմք. հայհոյութիւն և երդմնահարութիւն համարեսցի՝ եթէ երբէք տրտունջ ընդ նուազութիւն ինչ կամ անարգութիւն լուիցի:

Այլ և ի հակառակէն, ներեսցի յիշել աստանօր և բանս երկու. մի, զի թէպէտ և անկ է աղքատացս շատանալ յա-մենայնի և խնդալ եւս ընդ նուազութիւն, այլ որոց հոգ տնտեսութեան ի վերայ կայ՝ մի նուազեցուցանել ի սահմա-նեալ չափոյ՝ անվութութեամբ կամ ըստ կամս, և տալ ա-

ռիթ քրթմնջանաց բանիւ կամ մտօք: Եւ միւս, ոչ օտար համարել յաղքատութենէ՝ խնամով զմաքրութիւն անձին և զսպասուց և զտեղեաց, այլ և զշուք նորին. և որպէս ասի յառակս՝ առողջ հոգի յառողջ մարմնի, նոյն յայտնիցի և մաքուր հոգի ի մաքուր մարմնի՝ որ տուն և տաճար է ստեղ-ծողին. և արժան է աստուածանուէր անձանց՝ զարտաքին սրբութիւնն հայելի կարգել ներքին մարդոյն՝ ամենայն հա-մեստութեամբ, մանաւանդ յորժամ հարկ իցէ յաշխարհի և ընդ աշխարհիկս քաղաքավարել, ի շինութիւն նոցին, և մի՛ երբեք ի գայթակղութիւն, և մի՛ մերովսանն տալ առիթ ար-համարհութեան. և խոհական զգուշութեամբ մի՛ առաւելուլ և մի՛ նուազել. յուշի ունելով, զի թէպէտ և յաշխարհի չըր-ջիցիմք, այլ ոչ եմք յաշխարհէ, այլ ընդ Քրիստոսի կա-պեալք եմք անանջրպետ: Եւ յորժամ առաքիցիմք յօտար տեղի, յիշեսցուք և զառաքեալսն ի Քրիստոսէ և ըզպա-տուէրս նորին, Մի՛ պարկ, մի՛ բազում պարեգօտք և որ այլն եւս. «Ունիմք հանդերձ և կերակուր, ազդէ Առաքեալն, և » այնու շատասցուք». և զի զոր ունիմքս՝ ձրի ունիմք, տա-ցուք և մեք ձրի՝ ըստ մերումս բաւականութեան, յիշելով դարձեալ զՔրիստոսի երանութիւնն առ տուողն քան առ առողն: Մի՛ մոռասցուք և զկտակ նախահօր ուխտիս մերոյ, եթէ՝ «Ոչ իմիք այնպէս վրէժխնդիր և նախանձաւոր եմ՝ որպէս » դրամս ժողովելոյ կրօնաւորաց, եթէ չիցեն նոցա պէտք, » զի մեծ ինասուց առիթ է այն. վասն որոյ, որք յետ իմոյ » վախճանի մտանելոց են ի կրօնս յայս, ահա լուիցեն զոր » ասեմս այժմէն: Ոչինչ այնպէս ատելի է ինձ՝ որպէս ժողովել » դրամս առանց պիտոյից. և ոչինչ այնպէս ախորժելի՝ որ-» պէս ի բաց կալ ի կուտելոյ դրամս: Արդ որք կամիցին » զհետ իմ զալ և զհաճոյս աչաց իմոց առնել, պահեսցեն զայս » զոր ասացի. քանզի ժողովել զդրամս՝ զբազում կրօնս արկ » ի ինաս և ի թուլութիւն»:

Վերագոյն եւս ամբարձեալ զաչս՝ պատկառեսցուք ի Քրիս-տոսէ՝ յանման աղքատէ և ի քարոզէ աղքատութեան, այլ և յաշխարհայնոց քննողաց զմեզ, եթէ քան զնոսին բարեքիկս և ունեւորս երեւիցեմք ի տունս նոցին. և մինչ այլք ոմանք յեղբարց մերոց, ընդ որս չիք խտիր մեզ աստա-նօր ի վանս, անդ՝ անկած ընտանեաց վիճակեալք՝ արդա-

բեւ աղքատագոյնք քան ի մենաստանիս կեցցեն, և այլքն յընդարձակագոյն տան՝ աւելորդօք յօրանայցեն։ Պինդ կալ-ցուք զոճ և զձեւ մեր ընիկ, և մանաւանդ զօրինակ և զպատուիրանս և զխրատ Քրիստոսի, որ և այժմ իսկ ի միջի մերում կայ սոսկ անպաճոյճ, նա և յանճառելին և ի պաշտելի խորհրդեանն, փոքու իմն նիւթով նաչհւոյ ամփոփեալ զինքն բովանդակ մարմնովն աստուածացելով։ Ո՜հ, արդեօք յահեզասքանչ պահու անդ՝ յիշեվանել քում ի սիրտս մեր, ո՛վ բարի Յիսուս, և ի շուրջ հայելդ, գտանիցե՞ս ի ներքս ի մեզ աղքատութեամբ հոգեկանաւ յարդարեալ քեզ տաղաւար, և յօժարիցի՞ս դնել զգլուխ քո լցեալ ցօղով ցրտով յ՚ընդ վայր յածելոյ ի գրունս աշխարհայնոց, և հանգուցանիցես ի միջի աշխարհատեաց և ընչատեաց ըղձից։

Բ

Թէպէտ և ոչ փոքր ճիգն է յամենայն նիւթական ընչից ունայնացուցանել զսիրտ, այլ և ոչ փոքր դիւր է՝ կեալ անհոգաբար և լիաբար ի միաբանութեան յոյժ առաւել քան զոր կարէին կամ յուսային արդեօք յաշխարհի. և մարթ է ըստ արտաքին տեսութեան՝ ասել, եթէ ոչ այնքան թողին անդ զինչս՝ որքան գտին աստ։ Կարեւոր եւս ուրեմն պահանջի աստանօր հրաժարումն, ըստ բացայայտ բանից Քրիստոսի, ոչ միայն թողուլ զինչս և զագարակս, զտուն և ըզտեղի, այլ և զընտանիսն, զհայր և զմայր, զեղբարս և զորդիս, համանգամայն զազգակիցս և զհարազատս, զսիրելիս և զբարեկամս. մինչեւ ոչ համարել նորա յիւր աշակերտ՝ որ ոչն հրաժարիցի յայսմ ամենայնէ։ Զայս օրինադրեաց նուրբ կանոն՝ այն որ ի հնումն պատուիրէր՝ յետ և զոյգ աստուածսիրութեան զպատուելն զհայր և զմայր։ Քանզի հրաժեշտս այս՝ նուէր է առ Աստուած, և նուիրել Աստուծոյ վայել է զսիրելին ինչ. և յայտ է թէ սիրելագոյն են մարդոյ՝ իւր նմանիք, մանաւանդ արիւնակիցքն, յորոց ծնանն կամ զորս ծնան, և ընդ որոց համասնունդք եղեն և կենակիցք։ Ամենեցուն յայտնի են իրքս, և փոքր ի շատէ առեալ է զփորձ և զկիրս ընտանեկան և բարեկամական կենաց, յորս բռնագոյն է բերումն և յարումն սրտի՝ քան յանչունչ և յանբան

ինչս. և ոչ փոքր գայթակղութիւն է անձին, եթէ ոչ ակն հոգւոյ քաջ թափ անցեալ առաքինօրէն արկցէ զսուսերն պօզոսեան ընդ ամենայն յօդուածսն, և ընդ մարդ և ընդ մարդ։ Զի՞նչ փարելի՝ մանաւանդ վասն նորատիոց՝ քան ըզհայր, առիթ և յանձանձիչ կենաց. զի՞նչ գողտրագոյն քան զմայր՝ ծնօղ և անձամբ յանձնէ սնուցանող. ո՞ր պատկեր տարփալի քան զքեռ և զեղբօր, ընկերակցի, խաղակցի և խորհրդակցի նորընծայ կենաց. որպիսի՞ զգուանք, որպիսի՞ աղապատանք. և եթէ ոչ կանխիցէ արկած ինչ դժնդակ՝ ե-ղեմական կեանք թուիցին ընտանեկանքդ բարեկեցիկք։

Այլ աղէ փոքր մի վերագոյն եւս ամբարձցուք զաչս. մինչեւ ցե՞րբ և ցո՞ր վայր տեւիցեն այդպիսի կեանք. ցե՞րբ յամեսցէ թոչակն դատապարտութեան առհասարակ մարդկան, քիրտն, վաստակ և արտասուք. նա թէ և ոք դիւր ունիցի և յերկար վայելիցէ յանդորրու, եթէ միտս զգաստս ունի՝ ոչ կարիցէ անընդոստ կալ առ ձայնն Յիսուսի. Թող զամենայն, և եկ զկնի իմ։ Միթէ ո՞չ լուաւ զայդ ձայն՝ երիտասարդն բարեմոյն. այլ խոժոռեալ ի բաց գնաց. ոչ միայն զի ինչս ունէր՝ այլ և զովողս։ Բայց ոչ այսպէս Զեբեդեանքն և Սիմոնեանք. որք ոչ միայն զգոյիւ չափ զինչսն և զհայթայթիչս ընչիցն թողին՝ զգործիս և զծովայածիկ նաւակն, այլ և զհայրն իւրեանց ի նմին, և զորս ի տանն՝ հարազատս, ազգականս, նա և զկանայս, որպէս ի հնումն զկանխագուշակ ձայն Եղիայի լուեալ Եղիսէ՝ թողոյր իսկոյն զարօր և զլուծս եզանց, և հազիւ համբոյր մի տալ խնդրէր հօրն և մօր և դառնալ առ մարգարէն, զորոյ՝ վասն յընտանեացն հրաժարման՝ ժառանգեաց զոգի հրեղէն և հրաշագործ։ Այս աղքատութիւն հոգւոյ է ըստ Քրիստոսի, գերագոյն քան զկարծիս և զբարս աշխարհի, որ եթէ և թողուցու զընտանիս և զհարազատս՝ երթեալ փարի զօտարօք։ Դիժուարին է պատերազմս այս բնութեան. և առաքինի զօրութեան պէտք են սրտի՝ առ թողուլ հրաժարել ի բնութենակից սիրելեաց և սիրողաց, և քակիլ իմն ի կապանաց կենաց։ Սակայն ըստ այնմ և մեծ է փոխարէնն. զի զայդր ամենայնի « զհարիւրապատիկն առցէ, ասէ Յիսուս, և զկեանսն յաւի-» տենականս ժառանգեսցէ »։

Լսե՞ս, սիրտ յոգդոգդ, մերթ թերահաւատ, մերթ յուսա-

գնեալ. ո՞վ, քանիպատիկ իցեն վարձք քո՝ եթէ կացցես հաւատարիմ ի կոչմանդ. չիք այնուհետեւ քեզ տոյժ կամ կորուստ, բայց միայն յանձնէդ, եթէ ագահիցես ի տուրս քո, յետս հայելով յորս թողեր։ Ոչ է աղքատ հոգւով՝ որ յաղքատանոցի աստ Յիսուսի հոգայ զընտանեաց և զհարազատաց ըստ մարմնոյ, կղկաթ կաթոգի լինի յորոց հրաժարեցաւն վասն արքայութեան երկնից. և զիա՞րդ յաջողիցէ նմա ճանապարհն արքունի, ճանապարհ Քրիստոսի, եթէ մարմնով յանապատի և ի կղզւոջ, և մտօք և սրտիւ յաշխարհամիջի, ի տան ազգականաց, յակումբս բարեկամաց և ի հրապարակս։ Եթէ չիւղ մի յաչս ծածկէր զողջոյն քաղաք մի, և ընիոն մի խափան լինի կրօնաւորական աղքատութեան, համարիցի՞մք եթէ անձուկ ընտանեաց և կենակցութեան ընդ աշխարհիկս ոչ լինիցին խափանարար և գայթակղութիւնք առաջադրեալ նուիրական քաղաքավարութեանն։ Մի՛ լիցի աստանօր վերստին վայրապար յիշեցուցանել զաստուածադիր պատուիրանն, «Պատուեա զհայր քո և զմայր», և ըզբնաբոյս սէր և պարտս առ նոսին։ — Սուրբ են պատուիրանքդ և մեզ և պաշտելիք՝ ցոր վայր լծակցին օրինաց կրօնիս, և կացցուք յողջախոհ չափու. զի վաղվաղուտ է բընութիւն յայսպիսիս և արագ անցանէ ըստ չափ։ Պարտք են սիրել և պատուել ամենեցուն զծնողս, այլ ընդ հնոյն յիշել և զնոր օրէնս՝ զորմէ բուռն հարաք, աղքատք և տնանկք լինել, հայել և ի նախագաղափար մեր և յօրինադիր՝ ի Քրիստոս. էին և նորա ծնողք, աղքատք, և նա երթայր «առաջ» ելեալ առ ոչխարս կորուսեալս տանն Իսրայելի» զհոգեւոր պէտս սոցա հոգալ՝ քան զնոցայն մարմնաւորն. սակայն գիտէր Յիսուս ըստ պատշաճի զերկաքանչիւր եւս խնամել։ Վայել է և մեզ զմերսն յանձն առնել ի խնամս նորին, և ըստ մեծի հարկի՝ նա և յայնոսիկ՝ որք ի նմանէ կարգեալ են մեզ առաջնորդ և հայր ուխտիս, և որոց անկ է բառնալ զհոգս մեր և ըստ նոցին խրատու լնուլ զորդիական պարտս՝ որով իւիք և ցուցցեն. յիշելով հիացմամբ զանհասանելի զորով Քրիստոսի առ մայր իւր, և ի պահու՝ յորում վկայէր թէ՝ Ամենայն ինչ իւրովսանն կատարեալ էր, ի խաչի անդ, յանձն առնելով զայրի և զանորդի մայր իւր առ աշակերտն սիրելի, փոխանակ իւր։ Եթէ մեծի զարմանաց

իրք են այս կտակ Յիսուսի, ոչ փոքր յամօթ լիցին այնոցիկ՝ որք ոչ միայն զծնողսն հոգան բնաւորապէս, այլ և առ օտարս ձգին, եթէ անձամբ և եթէ մտօք, վայրապար սիրով և ընտանութեամբ, ոչ զգալով՝ զի ընտանութիւնդ յաճախեալ՝ օտարութիւն է առ Աստուած, և անհնար է սրտի տարածելոյ առ մարդիկն՝ ամփոփիլ առ Աստուած։ Եւ ոչ տեսութիւնք և զրոյցք միայն օտարացուցանեն կամ հեռացուցանեն զհոգի՝ առ որ նուիրեցան յԱստուծոյ, այլ և վայրապար հետազօտութիւնք և ընթերցմունք աշխարհական իրաց և դիպաց։

Եւ յորժամ հրամանք հարկ առնիցեն մեզ ելանել ի վանաց և գնալ յաշխարհ առ ժամանակ մի, նախ և միշտ զայն յիշելի է, թէ առ ինչ և առ ո՞ երթամք. և որպիսի եւս իցէ պատճառն, պարտք անմեկին են՝ ի չինութիւն լինել այլոց, և գիտել զինքն ի դասուէ այնոցիկ՝ վասն որոց ասաց Քրիստոս. «Յաշխարհէ աստի չեն, որպէս և ես չեմ յաշխարհէ». և զԱռաքելոյն, «զի թէպէտ և յաշխարհի շրջիցիմք, այլ» քաղաքավարութիւն մեր յերկինս է»։ Այսու յիշատակաւ երթ ո՞վ առաքեալդ հնազանդութեան, և տես քաջ, զի մի՛ զոր յայնքան ամս համբարեցեր ի մենաստանիդ վասն արքայութեան երկնից, ի սակաւ ժամանակի վատնիցես յօտարս և յօտարոտիս, և չքաւորիցիս՝ որպէս զհեռացեալն ի հայրենի տանէն, և փոխանակ հոգեւոր քաղցր սննդեանն որ անդ՝ խոշոր և անյագուրդ ճարակաց կարօտիցիս։ Կրկին քեզ քան մինչ ի վանսդ էիր՝ պէտք են զգաստութեան. մինչ անդ մարթ էր քեզ թեթեւազէն մարտնչել ընդ բնութեանդ և սրտիդ, բազում սպառազինութեանց պէտք են յաշխարհի, վասն գաղտնեաց և յայտնի նեռից՝ որք ի տուէ և ի գիշերի երեւելի և յաներեւոյթս տեղան համարձակ և անարգել՝ յանպարիսպ հրապարակի։ Զդրունս, զդրունս զգայութեանց ըզգուշանալ և պահել, զի մի՛ պատրանք ի նեղքս սպրդիցին և սէր Յիսուսի ելցէ արտաքս, և փոխանակ սակաւու իրիք, և այն խաբուսիկ և սնոտի, վրիպիցիս ի հարիւրապատիկ փոխարինացն խոստացելոց քեզ և աստ և ի հանդերձելումն։

Շատ համարեալ զայսչափ ինչ ի յուշ առաքելոցս ի քարոզութիւն, կամ յոր և է պէտս Ուխտիս՝ արտաքս, ուշ արասցուք և խաղաղելոցս ի մենաստանիս, որ որքան և հեռի

է ի հայրենեաց և յաղմկէ քաղաքաց, և ծովապարփակ կըղ-
զիացեալ, սակայն, որպէս յայտ է, ըստ անբնիկ պանդըխ-
տութեան մերոյ և ըստ համբաւուց, ըստ օտարութեան լե-
զուի, կրօնից և բարուց մերոց, տեսարան իմն ընծայեմք
եկաց աշխարհամուտ նաւաքաղաքիս, և գրեա թէ և դրունք
վանացս հանապազամուտք են ամենայն ազգաց և դաստուց
մարդկան. և մարթ է ասել՝ եթէ որքան և հեռացաք կամօք
յաշխարհէ, այնքան բռնազբօսեալ յակամայս իսկ մտանէ աշ-
խարհ ի սեամս ի գաւիթս և ի տաճարս մեր։ Աւա՜ղ նմա՝ որ
վայրապար հաճութեամբ և քննութեամբ համարիցի անաշ-
խատ գտանել առ ձեռն զհեթեթանս աշխարհի, և ի հոտոյ
նորին հարեալ կորուսցէ զհոտ անուշութեան Քրիստոսի։ Այլ
մեզ՝ եթէ ի տան իցեմք և եթէ արտաքոյ, և եթէ արտաքինքն
առ մեզ՝ անկ է հանապազ ընդ Յիսուսի լինել և ըստ Յի-
սուսի, որպէս սքեմաւս՝ նոյն և աւելի եւս սուրբ վարուք։
Առ մաճն, առ մաճն փութասցուք, եղբարք, և հոգասցուք
ուղիղ ձգել. զի ոչ երբէք յաջողեսցի մեզ արքայութիւն՝ եթէ
յետս ընդդէմ պչուցեալ նայիցիմք։ Ո՜վ արօրադիրդ խաչա-
կիր, դարձիր առ տէր այգւոյն, դարձիր ի սենեակ քո, ի մե-
նանոց, յաղօթանոց. ի քեզ յինքն դարձիր. յիշեա, ո՞յր կաս
ի վարձու. վասն ո՞յր թողեր զտուն և զընտանիս. մի՛ օտա-
րաց մատնիցես՝ զոր զլացարդ ազգի քո և արեան. յիշեա,
մի՛ մոռանար, զի «այսուհետեւ աշխարհ ի խաչ ելեալ է
» վասն քո և դու վասն աշխարհի »։ Առ կատարեալ աղքա-
տութիւն հոգւոյ պարտ է զամենայն թօթափել յանձնէ զհոգ
և զխնամ, զանձուկ և զտեսութիւն աշխարհի. գիտելով չափ՝
զի որ ինչ նորա է՝ օտար է քեզ, զի և Քրիստոսին քո օտար
է աշխարհս այս. օտարացիր և դու հանապազ ի նմանէ, և
միայնացեալ սոսկացեալ՝ գտցես և ոչինչ գրեւ, բայց զքեզ
ինքն. այլ և ի քէն՝ ի քում անձնէ մնայ քեզ օտարանալ և
ունայնանալ՝ առ ի լրումն աղքատութեան հոգւոյ։

Գ.

Խաղաղացելոյն ի հոգոյ ընչից և ընտանեաց, առ ժամա-
նումն երանութեանս՝ միւս եւս և գերագոյն պահանջի Աղ-
քատութիւն, որ և դժուարագոյն. զի ոչ եւս արտաքին է

մարտն կամ հակառակորդն, այլ անձամբ անձն. ընդ որում
արժան է հանապազակռիւ լինել. քանզի չէք հնար, ցորչափ
թէ կենդանի իցէ մարդ՝ ելանել փախչել յանձնէն, յիսկակից
թշնամւոյ հոգւոյն. բայց մարթ է և պարտ հանել և հալա-
ծել զհրապոյրս նորին, կամ հզօր և անձուկ պարիսպ ածել
ընդդէմ թափանցիկ ոսոխին, մարմնոյն, ասեմ, և սատանայի։
Սէր և հաճութիւն ընդ անձն՝ տունկ է ընդաբոյս և խորար-
մատ, յորմէ՝ թէ ոչ վաղ խզիցի կամ կոտորեսցի, բիւր ըն-
ձիւղին շառաւեղք և մրգունք դառնութեան, յորոց, աւա՜ղ,
քանի՜ սակաւք են՝ որ անճաշակ մնայցեն։ Ո՜րքան խոչք և
խութք կան առ կատարեալ երանութեանն ձեռնհասութիւն։
Դժուարին կարծէ աշխարհ զգիւտ և զպահուստ մեծութեանց.
այլ դժուարագոյն եւս է պահուստ ներանձնականն աղքա-
տութեան. անսիրելութիւն անձինն և ամենայն հաճոյից
նորա, այլ և ձրից մտացն և սրտին, և պարզապէս ասել
ընդ հոգեշունչ հեղինակի գրոց Նմանութեանն Քրիստոսի,
յօժարութեամբ յանձն առնուլ զպանդխտութիւն սրտի. զոր
թերեւս դիւրագոյն իցէ իմանալ քան բացատրել. և մի
յայնց իրաց է, կամ բոլորից վեհագոյն, զորոց ասաց Քրիս-
տոս դժուարին ի մարդկանէ այլ ոչ առ յԱստուծոյ։ Աստա-
նօր է հանդէս ուժգին բռնաբարութեան յԱրքայութիւնն
երկնից. և որքան մեծ յաղթութիւնն՝ այնքան և ահեղ կո-
րուստն, այնքան և ամօթալի պարտութիւն, եթէ վանեալ
ուրուք զհրապոյրս աշխարհի և զընդաբոյս գութ և գորով
աղեաց, ի հանդարտութեան մենաստանին և յիւր ուրոյն
ամուր ապաստանի, ի հոգեւոր հրահանգս պարապելով զօր
ամենայն, անձնամատն լիցի առ կիրս, զորս վաղ ուրեմն
անկ էր ի բաց թօթափել կամ հանապազ զգուշանալ՝ որպէս
յընտանի թշնամւոյ. և միով համօրէն բանիւ, եթէ ոչ իցէ
ողջամբ ուրացեալ զանձն՝ յօրէ անտի ուխտադրութեանն, և
ի նոյն կրթեալ անդուլ անդագար. որպէս զի կարող լիցի
ասել յայնժամ ստուգապէս, եթէ ահա թողի զամենայն՝ ի-
մովսանն չափ, Տէր Յիսուս, և գամ զկնի քո։

Մեծ և ամենամեծ իրք են աստանօր, այլ և անհրաժարելիք
ի կրօնաւորէ. ուրացիր, ասէ զանձնդ, ոչ մասամբ իւիք, այլ
համօրէն, որ ըստ մարմնոյգ և ըստ հոգւոյ. սոսկացիր կա-
մօք ի կամացդ, և լեր համակամ Աստուծոյ յամենայնի,

և հասցես երանութեան աղքատացն հոգւով։ Ուրացիր զամենայն սէր և զհաճութիւն զոր զգասդ թերի ի սիրոյն Աստուծոյ, և լիցիս աղքատ ըստ Յիսուսի։ Ուրացիր զփափկութիւնս և զաւելորդ ինչ դիւրութիւնս մարմնոյ. յիշելով՝ զի յաշխատութիւն կոչեցար և ի ճգունս, և եղիցիս աղքատ ի հարստահարութենէ նորին։ Ուրացիր զսփոփանս և զզբօսանս զբաղեցուցիչս սրտի, յիշելով զի ի սուգ և յապաշխարութիւն ես հրաւիրեալ, և եղիցիս աղքատ հոգւով։ Ուրացիր և զտարապարտ սէր և յօժարութիւն առ գործս և յաջողութիւնս ինչ քո, մանաւանդ եթէ և արարեր ինչ յօգուտ և հաճոյ այլոց. յիշելով՝ զի ոչ ես եկեալ առնուլ պաշտօն այլ ի պաշտել։ Ուրացիր զփառս և զգովեստ և զհամբաւ, որք կարեն և ընդ դռնակ խրճթիդ մտանել, այլ մի՛ և ընդ խընդբունս սրտիդ սողոսկեսցի. այլ եթէ բարի ինչ արարեր՝ մի՛ քեզ այլ անուան Տեառն տուր փառս, յորմէ զամենայն ունիս չնորհս, և որում՝ զամենայն պարտիս։ Ուրացիր զգիտութիւնս և զհանճար քո. չասեմ՝ մի՛ ուսանիր, այլ մի՛ հպարտանար. և եթէ այլք ճարտար և մեծ ոմն ասիցեն ըզքեզ, դու՝ եթէ հնար է՝ թաքո և զճանչս հանճարոյդ, նա և զգործս բարիս, զի մի՛ ի մարդկանէ՝ այլ ի Հօրէն՝ որ և զգաղտնիս տեսանէ՝ առնուցուս վարձս յաւուրն հատուցման։ Յուշ լիցի քեզ, զի յաւուր մտիցդ ի կրօնս՝ թողեր արտաքոյ և զոր յաւազանէն ստացեալ էիր անուն, նախընթաց իմն ուրացութեամբ. ուրացիր համանգամայն զաշխարհ համօրէն, որպէս ուխտեցերդ, և զգոյշ կաց՝ զի մի՛ զամենայն թողեալ կարծելով՝ քեզ ինքնին փոխան ամենայնին գիրկս արկանիցես։ Յուշ լիցի քեզ հանապազօր՝ զի հզօրագոյն թշնամի քո դու ինքնդ ես. և միանգամայն ասել, ուրացիր զանձնդ՝ ամենայն զօրութեամբք և չնորհօք և վաստակօք նորին, եթէ իցեն ինչ յաջողեալք առ ի քէն, և իբրեւ ձրի առընկալեալ՝ տուր ձրի աղքատաց, ընկերաց քոց և կարօտելոց, և զամենայն փառս՝ իբրեւ մեռեալ ոք՝ թող մեռելոց աշխարհի. միակ ստացուած քեզ հոգեկեցոյց՝ գիտելով ըզխաչն Քրիստոսի, զայն տպաւորեա ի քեզ և ի գործս ձեռաց և մտաց քոց, և ի նա միայն լիցի քեզ պարծել՝ ընդ Առաքելոյն և ընդ ամենայն քրիստոսասէր խաչաբարձից։ Զայսոսիկ արարեալ ապա զոցես զանձնդ յանդորրու մեծի, յանդրդուելի վստահութեան առ Աստուած, յանուշակ սէր նորին, յորում ամենայն մեծութիւն և հաճութիւն հոգւոյ, որ՝ որքան աղքատանայ ըստ Քրիստոսի այնքան ընդարձակի և լիանայ, և լսէ անչչունչ ազդողագոյն զձայն երանութեանն, որ զամենայն աղմուկ սրտի և աղաղակ աշխարհի խափուցեալ՝ չլսելոյն առնէ։

Ո՜վ երիցս երանեալ աղքատութիւն հոգւոյ, նախահրաւէր արքայութեան Յիսուսի, ո՜վ սկիզբն և առաջնորդ ճշմարիտ բարութեանց, որ թեթեւ թեւօք՝ ընդ ծանրատաղտուկ կենցաղս այս՝ վարես զհոգի ի նուրբ ի վերին կայանս. ո՜վ, որ ոչինչ ունիս, և ոչ իմիք կարօտիս յերկրաւորացս, զի բաժին քո Աստուած է։ Վաղ ուրեմն ծանեայ զքեզ. այլ աշխարհ և որք յաշխարհի և իմս ներքին աշխարհ՝ հանապազ նեղեն զիս. մի՛ լռեր և դու՝ հանապազ լսելի առնել ինձ զնուագ երանութեանդ, որով զուարճացեալ՝ թօթափեցից յամենայն անձնէ զզգալիս և զիմանալիս՝ որ չունիցին զկնիք արքայութեան երկնից, և անբեռն և անարգել՝ ընթացայց, թռեայց, թեւակոխեցից զհետ Յիսուսի, մինչեւ ցոր կատարածի կենացս և կատարման կրօնաւորութեանս, անթերի լրութեամբ ուխտիցս։

Գ

ԵՐԱՆԻ՝ ՍԳԱՒՈՐԱՑ, ԶԻ ՆՈՔԱ ՄԽԻԹԱՐԵՍՑԻՆ

Երէկ Աղքատութիւն և այսօր Սուգ. երէկ թօթափել, սոսկանալ, ունայնանալ յընչից և յըղձից առ ընտանիս և առանձն. այսօր՝ զրկիլ և յանստգիւտ բարւոյ սրտի՝ որ աղքատաց իսկ չնորհեալ է և զօրաւիգն է նոցին և ամենայն տառապելոց. Ուրախութիւնն։ Հա՞րկ ուրեմն իցէ հրաժարել և յայսմանէ, և հանապազ ի սգի և ի սեւի կալ՝ պարտաւորիցի՞մք առ այս՝ ի կոչմանէ կրօնիս. հասարակա՞ց կրօնաւորաց իցէ ողորմական աղերսն, եթէ «Լացէ՛ք և ողբասցի՛ք» դուք, և աշխարհ խնդասցէ»։ Արդարեւ լուր անհամբոյր,

սարսուռ սրտի, որ հանդուրժէր իսկ ոչ՝ եթէ ոչ առ նմին յօդեալ կայր և երանութիւնն. երանի՜ Պաւուրաց զի նոքա » մխիթարեսցին »։ Քանի՜ զարմանալի են բանք և հնարք քո, Տէր Յիսուս. սուգ դնես ի միջի, և յառաջոյ երանութիւն, ի վերջոյ մխիթարութիւն. և ո՞ր առաքինի ոչ առցէ յանձն՝ մատչել ի փորձ, մտանել ի սուգ ընդ Քրիստոսի, ընդ որում վայել էր և ըստ համարձակութեան Պետրոսի՝ երթալ և ի բանդ և ի մահ։

Ո՞չ աւանիկ և մեք յօրէ մտից մերոց ի կրօնս յայս՝ համակեալ կայցեմք ի թուխս՝ սգատեսակ սքեմաւս և մաշկեակաւս, մեռելութեամբ իբրու կանխեալ պատանօք պարուրեալ, որով և իշանելոցս եմք ի գուբ գերեզմանին։ Սուգ և մահ, ապաշաւանք՝ հանդերձելոյն յուսով՝ ընդակից տնկակից իմն է այնմ՝ որոյ ելեալ ընդ կարծեցեալ դուռն փափկութեան աշխարհի՝ եմուտ յաստղարէզ կրօնաստանիս, յընդմիջնաշաւիղ երկոցուն կենաց. և որ եմուտն՝ ընտրութեամբ կամաց, հարկ է նմա՝ առանց ինչ ընդ բանս ածելոյ՝ յառաջ խաղալ անվեհեր։ Նկատեսցուք, աղէ, գամ մի՝ զաշխարհ, յորմէ սարտուցեալ ելաք՝ որպէս ի չարէ. և ծանիցուք զնա իսկ առաջին առիթ սգոյ անձին առաքինւոյ. նկատեսցուք զգաղփազփուն բնութիւնս մեր, որ գայթ ի գայթի ոտն փոխեալ երթայ հանապազ ի վիհ անդր անհամբոյր մահու. և այս երկրորդ առիթ սգոյ և զգաստութեան. ապա եթէ դարձեալ անձամբ յանձինս նկատիցեմք, տեսանեմք իրս տագնապողականս, կիրս և մեղս, որ երրորդ և տիրագոյն առիթք են սգոյ։ Աշխարհ, Մահ և Մեղք. երրեակ դառնացուցիչք կենաց, քննեալք ուշի ուշով՝ խրատեսցեն և ուղղեսցեն ըզգնացս կենաց և զվիճակի զոր ընտրեցաք, անտերկբայ յուսով գամագիւտ լինելոյ աւետարանեալն ի Քրիստոսէ երանութեան, մխիթարութեան, քան զոր չիք ցանկալի ի կենցաղումս։

Ա.

Եթէ հասարակաց կեանք մարդկան՝ վարուն է աշխարհի, կրօնաւորացս է վտարումն յաշխարհէ, կամաւոր և մշտնջենաւոր հրաժարմամբն՝ իբրեւ յոչ բարւոյ, կամ առ բարեգոյնն դիմելով. միջնորմն ընդ նա արկեալ զուխտս մեր։ Բայց զի յաշխարհի ծնաք, անչինչ է ի մեզ կնիք աշխարհի, և գիտեմք զինչ կրէ մարդս համաբնոյթ ամենայն ադամածնաց. վասն որոյ գիտակցութիւնս կրօնաւորական ստիպէ հանապազ հրաժարել յորմէ միանգամն հրաժարեցաւ՝ մինչեւ յօր հրաժարմանն և ի կենաց։ Եւ առ այս՝ անկ է մեզ փոքր ի շատէ և ճանաչել զայն, զի արդարասցի հրաժեշտս մեր. ոչ զի վերստին հրապուրեսցէ, այլ զի եւս քան զեւս զգաստս յարդարիցէ զմեզ։ Հոգիք ողջախոհք յամենայն ժամանակի նկատեցին և նկատեն զաշխարհ՝ որպէս բոյն աղցից և աղտից, յորում ծնեալք՝ իբրեւ ձագք յաղբեւս՝ վերանան ի սուրբ և մաքուր կայանս՝ որոց վիճակեսցի ի վերուստ շընորհ կրօնաւորութեան. յորմէ՝ իբրեւ ի բարձուէ տէրունական լերին՝ բացէ ի բաց նշմարի ստորածաւալ ծով կենցաղական՝ հանապազ կոծելով զերկիր և զոր ի նմին. հաստատուն կացցուք ի դիտակիս, եթէ փորձիչն հրապուրեսցէ ցուցանել անդուստ « զթագաւորութիւնս աշխարհի և զփառս նորա ». մեք քրիստոսեան աւագ աչօք՝ նկատեսցուք անդրագոյն եւս, զՈւնայնութիւն նոցին, և նշաւակեսցուք ըզբանստարկուն, որ պատրողական երանգօք ջանայ զօշոտել զաչս, գեղեցիկս և փաղփունս ցուցանելով զսնոտիս և զանկայունս։

Ամենայն ինչ սուրբ էր՝ ցորչափ սուրբ էր և մարդն. այլ յօրէ յորմէ մերժեաց զնա դրախտն, պղծեցաւ և անիծաւ առհասարակ երկիր. և ոչ միայն փուչք խոտանք բուսան ի նմա, այլ չարագոյնք եւս՝ ի բնակիչն նորա, ի սադրանաց սկզբնաչարին՝ որ իշխան եղեւ յաւիտենիս այսորիկ. յորմէ՝ եկն մարգասէրն Քրիստոս թափել զպատկեր իւր և սրբել, այլ ոչ և իսպառսպուռ ջնջել զանէծս աշխարհի։ Պատերազմն անհաշտ և անդադար՝ կայ և կացցէ ընդ աշխարհ և ընդ առաքինիս, ցորչափ կացցէ աշխարհ. և ոչ ոք կա-

բասցէ երկուց տերանց ծառայել, Աստուծոյ և մամոնայի։ — Զի՞նչ իցէ Մամոնայդ. — հեթեթանք և հրապոյրք աշխարհի, զոր ատեաց և նզովեաց Քրիստոս. և որք սիրենն չարաչար զաշխարհս՝ ատելիք են նմա։ Որ քաջ յարեալ է ի սէրն Աստուծոյ՝ նմա չէ փոյթ շատ ինչ ճանաչել զաշխարհ, որ և սիրողաց իսկ նորին առեղծուած իմն է անլուծանելի. շատ իցէ առնուլ ի միտ՝ զի յարելն և փարել զնովաւ՝ վտարանդութիւն է յերկնից։ Հարցցուք, աղէ, զերիտասարդն՝ որ ամենեւիմբ հրաժարեալ յաշխարհէ փարեցաւ համարձակ զքանջօք Յիսուսի, զի՞նչ իցէ կամ ունիցի աշխարհս այս. «Ա» մենայն ինչ որ յաշխարհի է, ասէ, ցանկութիւն է մարմնոյ և ցանկութիւն է աչաց, և ամբարտաւանութիւն աստի կենաց»։ Ցանկութիւն մարմնոյ, տարփք ախտակիր զգայութեանց՝ որք գերեն զսիրտ և զմիտս, և զպարզութիւն հոգւոյ իջուցանեն ի թանձրութիւն նիւթոյ, և մարդ լինի մարմին։ Ցանկութիւն աչաց. հրապոյրք և գերութիւն գեղոյ և մեծութեան ընչից, որոց ձեռնհասութիւն աշխատալի և վայելքն՝ յաճախ դառնացեալք, և տեւողութիւն՝ համառօտ և փախչոտական. որոյ ներկայն անհաստատ, անցեալն տրտմեցուցիչ, ապագայն անստոյգ և տագնապեցուցիչ։ Ամբարտաւանութիւն կենաց. իղձք ձգտեալք յառաւելն քան զպէտս և զչափ, ի փառս և ի պատիւ, յիշխանութիւն, ի տերութիւն. ի գերազանցութիւն. որք՝ որպէս փքով ուռուցեալք առ վայր մի՝ և պայթեսցին. և ինչ մի մնայցէ յամենայն ցանկութեանց անտի և յամբարտաւանութենէ՝ անյագութիւնն, ունայնութիւնն, ապականութիւն բարուց, զձձութիւն մարմնոյ, խէթ խղճի, գերութիւն հոգւոյ, կորուստ բնաւին բարւոյ, արդարեւ ունայնութիւն ունայնութեանց, անդր քան զսողոմոնեանն տարացոյց. զի նա՝ ի բարեաց եւեթ վրիպեալ ցուցանէ զաշխարհասէրն, իսկ գրկածուն Յիսուսի՝ վկայէ և ի չարաչար կիրս վարակեալ զհոգի աշխարհասիրին, և սքրտառուչ թելադրէ «Մի՛ սիրէք զաշխարհ և մի՛ որ ինչ յաշխարհի է»։

Եւ քանզի դժուարին է ամենեւիմբ անբմբռնելի մնալ յաշխարհէ, բազում ողբոց արժանի է վիճակ ըմբռնելոցն. իսկ որոց ի հարկէ տիրականէ ստիպիցին կալ ի նմին՝ բազում աչալրջութեան պէտք են առ ի չվարակել ի հաղբս նորին,

և կեալ պանդխտօրէն. որպէս արարին և ուսուցին՝ ոչ միայն որք ի նորումս աւետարանութեան՝ մեծատունք և թագաւորք, այլ և ի հնումն՝ նահապետք և մարգարէք, առաւել կամ նուազ ի վերայ հասեալ, զի «Աշխարհս անցանէ և ցանկութիւն նորա». և որ վարէն զաշխարհ՝ վաղվաղ վարեսցի ի նմանէ. «և յայնմ աւուր կորիցէ ամենայն յոյս նորա»։ Եբանի՞ ուրեմն այնոցիկ՝ որոց զայս զմտաւ ածեալ բարեաւ մնալ ասացին աշխարհայնոց և մտին ի սուգ կամաւոր. եբանի՞ մանաւանդ այնոցիկ՝ որք ըստ Երեմիայի՝ ի մանկութենէ առին զլուծ խոնարհութեան, և երթեալ նստան միայնիկք, լռիկք՝ որպէս անասատասէր տատրակք, մնչել ողբալ զցաւալի կեանս աշխարհի, «իբրեւ ազնուականի իմն ցանկացեալք», ըստ Առաքելոյն։

Զի՞նչ ահաւադիկ տեսանեմք և մեք՝ ի ձեւս մեր, որով զգեստաւորեմք և զաղածրի մանկտին եկեալ յաշակերտութիւն մեզ, մանաւանդ թէ Քրիստոսի, ի թուխս համակելով զկայտառ հասակ նոցա և զերանգն ինչ աշխարհական. զի՞նչ ինաս էր նոցա, ո՞ր մեղք, ո՞ր աղունք. անմեղուկս ասեմք զնոսա՝ և սխրանամք, և ի պահուստ այնր չնորհի՝ ճողոպրեալս յաշխարհէ. համայն և այնպէս՝ կնքեմք սրգոյ տեսակաւ, որպէս զի յիշեսցեն զոր անդստին յաւագանէ մկրտութեան պահանջեցան, յաշխարհ մտեալք՝ չլինել աշխարհի զի վասն լաւագունի աշխարհի սահմանեալ են. և իսկ և իսկ մարգեմք զնոսա՝ ոչ միայն ի ձեւ՝ այլ և ի հրահանգս ապաշխարութեան։ — Ապաշխարութիւն, (եթէ ոչ ծաղու թուիցի բանս) արդարեւ ապադարձութիւն աշխարհի, զոր կարեւոր կրթութիւն համարեցան և գերազանցեալքն մաքրութեամբ վարուց։ Ո՞ քան զՅովհաննէս մեծ ի ծնունդս կանանց, ըստ ծանօթին նորա և Տեառն Յիսուսի վկայութեան, որ և քան զծնունդն կանխեցոյց զմաքրութիւն նորա; յարգանդէ յարգանդ ներգործելով հրաշափառապէս, և զի՞նչ տեսանեմք ի նմա. — առաւել քան զմարգարէութեանն և նշանագործութեան չնորհս՝ զապաշխարութեան կեանս և զքարոզութիւն, որում յարմարեալ և արտաքին կերպն, գրգլեակն ստեւղէն, գօտին մաշկեղէն, և կերակուրն ցամաք մարախով և վայրի մեղերբ, և բնակութիւն յանապատի, յոր՝ անդուլ ընթանալով՝ ապաշխարութեան բարբառովն սարսեցուցանէ զան-

մարդաձայն տարածութիւնսն, ուր՝ թէ ոք հանդիպէր՝ համակ զնոյն լսէր. «Ապաշխարեցէք. Արարէք պտուղ արժանի ապաշ-
խարութեան»: Եւ էր նա ոչ հեղինակ ապաշխարութեան այլ կարապետ՝ համաբարբառ հզօրագունին, որ ահա գայր զկնի
իւր՝ նովին նախընծայ քարոզութեամբ. Ապաշխարեցէ՛ք: Զնոյն բան և գլուխ աշակերտաց նորին՝ այն ինչ ընկալեալ
զՀոգին՝ ի սկզբան անդ հրապարակախօսութեամբն պատուիրէր. «Ապաշաւեցէք. և մկրտեսցի իւրաքանչիւր ոք յանուն
» Տեառն Յիսուսի Քրիստոսի». զնոյն և ընդ ամոլակից նորին Պօղոս՝ այն ինչ մերկացեալ զսողոսութիւնն, «Դախ՝
» որոց ի Դամասկոս և յԵրուսաղէմ էին և ընդ ամենայն
» գաւառս Հրէաստանի և ի հեթանոսս, պատմեցի, ասէ, զզջա-
» նալ և դառնալ յԱստուած կենդանի, արժանի ապաշխա-
» րութեան գործս գործել»: Յայտ է թէ ոչ այլ ազգ և այլ առաքեալքն և աշակերտք՝ արարին և ուսուցին, և նոցին հետեւողքն, հայրապետք իբրեւ սկիզբն ուղղութեանց զապաշ-
խարութիւն գնելով. յորս և գերազանցեալն զօրութեամբ քա-
րոզութեան վկայեալն ի լսողացն և յընթերցողացս՝ Բերան Ոսկի՝ Ապաշխարութեան կոչեցաւ վարդապետ: Այսպիսի կո-
չումն և մերոյս կրօնի հեղինակ և հայր Մխիթար՝ աշակեր-
տացս իւրոց սեփականեաց, և եդ կնիք լինել Վարդապետ Ապաշխարութեան: Շատ լիցի մեզ այսքան յիշատակս, ոչ միայն ի հաւան ածել եթէ ողբալի է աշխարհս այս, այլ և թելադրել իմաստս զզջականս, ոչ միայն ի վերայ կենցաղա-
վարելոցն ի նմա, այլ և ի մեր իսկ, որք ոչ միայն չեմք ա-
մենեւին զերծք և անմասն յաշխարհէ, այլ և յաղետալին
քան զբնաւս պատահար նորին դատապարտեալք, ի մահ-
քան զոր զի՞նչ ողբալի և սգալի:

Բ

Մա՜հ. պժգալի քան զամենայն անուն և իմաստ՝ մարդոյ, և առիթ սգոյ ամենայն աւուրց կենաց նորին, ըստ քաջա-
խոհակ փիլիսոփային, որ համօրէն ուսումն մահու ասաց զկեանս: Իսկ մեզ երկնանուէր իմաստասիրացս և հրաժա-
րելոց յաշխարհէ, ոչ հարեւանցի՝ այլ առաքինօրէն վայել է հանապազորդել ի խոկմունս. իբրու ոչ զի առ ի մահ կընքեալք եմք՝ այլ առ անմահութիւն, ի տիրական խորհրդոյ զուրախականն վերածել: Եթէ աշխարհիկ ոք խնամով ընդ կեանս հոգայցէ, չեն զարմանք, իսկ որոյ չէ աշխարհս և ոչ ինքն աշխարհի, նմա և կեանքն ոչ իւր են և ոչ զգուելիք. զի չիք գայթակղութիւն անձին մերձաւոր՝ քան զկեանս իւր. վասն որոյ և ի դէպ է ճանաչել զայն առիթ զգուշութեան և սգոյ: Սովիմբ արդարանայ և գեղեցիկ առածն, եթէ «մահ
ոչ իմացեալ՝ մահ է, մահ իմացեալ անմահութիւն է», և որ
այլն եւս: Լիցի և մեզ մահս՝ յուսումն առ ձեռն՝ յօգուտ ա-
պագային: Զի եթէ ըստ գերազոյն իմաստասիրաց, Սողոմոնի և Պղատոնի, սէր՝ լծակից և ընդակից զոյ մահու և բռունք հաւասարազօրք, տէրն կենաց և մահու՝ վեհագոյն եւս յար-
դարեաց եցոյց զսա՝ ի կամաւոր զենարանի խաչին. և զի մի զզուիցիմք և զանգիտիցեմք յանուանէ և ի տեսլենէ մահու, նորին Քրիստոսի աչօք և մտօք նկատեսցուք. նորին աչօք ի՛ջուսցուք և ցօղս ինչ արտասուաց՝ որպէս ի Ղազարուն վերայ, նախ ի վերայ մերոյս իսկ իւրաքանչիւր մեռելութեան, ապա թէ և այլոցն, մերձաւորաց և հեռաւորաց, և ի վերայ ամենայն ազամածնացս. և եթէ հասարակաց խոկումն ասա-
ցաւ մահ, կրօնաւորացս՝ լիցի և հանապազօրեայ կրթութիւն:

Մի՛ ոք ընդ այս շուարեսցի: Առանց մտադիւր պարապ-
ման՝ ոչ յաջողէ ուսումն. հարկ է և զբարւոք մեռանելոյ ու-
սումն՝ ստէպ առնուլ ի քննութիւն. այլ և եթէ կենաց ոք
ցանկայ՝ ուսցի զմահ, զի կեցցէ բարւոք: Եւ քեզ՝ կրօնաւո-
րութեամբ նուիրելոյդ առ Աստուած՝ ոչ այնքան մահու՝ որ-
քան անմահութեամբ լիցի խոկումդ, զի մի յանկարծ ըմբռ-
նիս յօրհասէն. աղէ՜, մինչչեւ մեծաքայլ դիմեալ նորա ի վե-
րայ քո, դու ինքնին աճապարեա, ել, կաց ի վերայ ճանա-
պարհաց նորա, որպէս նահատակ կազմ և աներկիւղ: Եւ եկ
արդ, երթիցուք, դադարել առ փոքր մի առ գերեզմանաւ
ծանօթի կամ անծանօթի, ընտանւոյ կամ օտարի, զի մահ
զամենեսեան հաւասարէ ի միում ստորին յարկի. եկեսցուք
նկատել՝ ոչ վայրապար՝ ոսկերս ցամաքեալս, բայց եթէ ե-
զեկիեղեան համարձակութեամբ: Խոնարհեա՛ ի գուբդ յայդ, ի
հողդ՝ յորմէ հաստեցաք և յոր լուծանիմք աւուր աւուր և
դարձցուք ի նոյն իսպառ՝ յետ ոչ յերկար աւուրց: Բազում
անգամ իցէ քո անցեալ ընդ ագարակս գերեզմանականս,

բայց այսօր եկ և տես ինձ և զակօսս այս. – մի՞ զարհուրիր, զի դեռ ունայն է, այլ սպասէ ումեք. մի՞ արդեօք քեզ իսկ։ Աղէ մինչչեւ այլոց աշխատ եղեալ՝ պատրաստեա դու քեզէն զդիրս քո, զի այդ միայն չնորհեալ է քեզ ստացուած անկողոպուտ. վիհ մի փոքր, անձնաչափ, զի և ոչ աշխարհակալք սարսեցուցիչք ազգաց և ազանց՝ ոչ աւելի քան զայդ գրաւեն. և այնքան ամաց քիրտն և վաստակ, զօրութիւնք և մեծութիւնք՝ յա՜յդ ամփոփեսցին փոս գծուած աննչան. բազուկքն երկայնաձիգք՝ որք ընդգրկել զերկիր Ջանային՝ հողամածեալ կան և կացցեն զերբեմն յոխորտատրոփ լանջօքն։ Ուսիր այտի և դու, ի չափու ունել զեռանդն յանդուգն կամ ոչ պարկեշտ ըղձից և կրից։ Կամիցի՞ս արդեօք փոքր մի եւս խոնարհել քննել զմահիճսն և զբարձկնեար՝ յոր հանգչի գլուխն բազմահոգ և բազմահնար, և յոր սպառին ամենայն անդաճմունք մտաց և թռիչք հանճարոյ. կամիցի՞ս յուզել զգիրկսն՝ յորոց ամենայն ինչ թօթափեալ խուսափեալ է. կամիցի՞ս զննել զսիրտն անյագ անհանգիստ արդ իբրեւ տերեւ մի ազազուն արդ ցամաքեալ լուծեալ ոչնչացեալ, իսկ որ մնայն տակաւին, կամ համարի մնալ, ոստիկան ամենայն հնարից մարդոյդ՝ գլուխն այն գոռո՜զ, ոչ եւս գլուխ՝ այլ գանկ մի չորացեալ և առաթուր ընդ ոտիւք անցաւորաց։ Ո՞ւր են դիտակքն տիեզերաց և հետամուտք գեղեցկութեան և առիթք փորձութեան, աչքն դիւրահոլովք. ո՞ւր և այլ մի մի ի գործարանաց անտի զգայութեանց՝ ընդ որս ելք և մուտք կենսականք և մահացուք։ Քանի՞ այլակերպ նշխարք անարգք՝ ի պանծալի կազմածոյ անտի կենդանւոյ մարդոյ։

Այսոքիկ հասարակաց գիտելիք են և զգալիք, բազում անգամ լուեալք և տեսեալք, և լսելիք և տեսանելիք. բայց դու գլո՜ւխ՝ խոնարհեալ յաճախ ընդ գլխով խաչեցելոյն քո Քրիստոսի և ընդ ոտիւք, խոնարհեաց գամ մի եւս աստանօր՝ ընդ նորին նշանաւ. թող առ վայր մի յանձուկ յատակին զմարմին մեռելոյդ՝ յօտարութեամբ ի լուութեան ի լքման իւրում, և զքեզ ինքնդ նկատեա՝ տարածեալ անդանօր, հրաժարեալ յամենայնէ և յամենեցուն՝ որք զայդ գուբ սահմանեցին քեզ, և աննախանձ ի բաց գնացին. և միայնացեալ սոսկացեալ կաց անձամբ անձինդ ի զնին. հայեաց հոգւոյդ աչօք՝ ի հրապուրիչդ և ի զրդիչդ հոլեղէն՝ և բազում անգամ լծընկէց նորին լծակից. քանի՞ ջերմ և բուռն յայնժամ. քանի՞ ցուրտ և ցամաք այժմիկ և յայսմ հետէ. – և տես, յի՞նչ յանգին ամենայն հնարք, գրգանք և դարմանք մարմնոյ՝ ի զրաւել չնչոյն... առ որ եթէ դարձցիս յետ վաղուին, յետ եօթնեկի միոյ աւուրց կամ ամսոյ, որպիսի՞ս տեսցես փոփոխութիւնս, այլայլութիւնս, նորանոր՝ մանաւանդ թէ հնացեալ ծիւրեալ կերպարանս, զոր և կերպարան անուանել չհամարձակին աչք. անձեւ անհեղեղ զանգուած զզուելի, որոյ վայելչագոյն աւանդ մնայցեն կմախքն ինչ։ – Որ ինչ եղեն այլք՝ հարկ է և քեզ և ինձ այնպէս լինել. և այլազգ առնել ոչ զօրեն ոչ մի հնարք և ջանք. այլ քաջ իսկ օգնեն և օգտեն տեսարանքդ թանգուզեալք՝ ի զգաստութիւն և ի պարկեշտութիւն կենաց, ի պատրաստութիւն հանդերձելոյն և ի սուգ մնացելոյն, որ ահա ի նուազել և ի խուսափել է աւուր աւուր, ժամու ժամու, և առաւել եւս յողբալ և յապաշաւել ի վերայ յողդյողդ և խոտորնակ գնացից վարուց, որ արդարեւ ողբալին է և սգալի զամենայն ժամանակ կենաց, եթէ սուղ և եթէ երկար։

Զայս հնար օգտի ի կիր արկին յոլովք յառաքինեաց և ի սրբոց, կենդանեաւ իշանելով ի գուբն՝ յոր վաղ քան անագան՝ իշանելոց էին. սիրելի էր նոցա ճեմարան մահարձանաց. քաղցրանայր կրթութեամբ յիշատակ վախճանին. և ուսմամբ մահու յանմահութիւն կրթէին, կարեկցաբար զանձինս ընդ կանխելոցն քան զինքեանս ողբալով և զամենայն մարդկութիւն ընդ միով տեսարանաւ և ի մի խորխորատ խոնարհել. զմի օրինակ սգալով զմեղուցեալ մարդն և զանմեղն։ Եւ եթէ ուրուք նուաղէր սիրտ և արտասուք քամէին ի յիշատակի ննջեցելոց ծանօթից կամ անծանօթից, քաջալերէր և նոյն ինքն յիշատակ մահուն, մանաւանդ սրբակենցաղ մարդկան, և եւս առաւել գերազանցիկ առաքելոցն և վկայիցն արեամբ և կուսութեամբ, և հանուրց վեհագունին ամենեբանեալ Կուսին աստուածամօր, և անհասանելւոյ Միածնի նորին անմահի և կամաւ մահացելոյ Փրկչին մերոյ, որ այնու ընթագրեաց և ելոյծ զբոնութիւն և զարհաւիրս մահու։ Վասն որոյ բազումք յառաքինեաց անտի ցանկանալով ցանկանային նմա, և ընդերկարեալ համարէին զպանդխտանալ իւրեանց ի վերայ երկրի. հրաւէր համարէին զազդ օրհասին, և սուգն փոխէր ի խնդութիւն։

Սոցին և մեզ արժան է նմանողս լինել՝ որք և զմահու պատանս կրեմք հանապազօր. և մեռեալս զմեզ գիտեմք աշխարհի և զաշխարհ վասն մեր. ապա չափաւորապէս անկ է զերկոսին եւս սգալ. և հանդարտեալ՝ խելամուտ լինել, զի մահ՝ որ զժպհի համարեալ է քան զամենայն կիրս, այնու իսկ զի և լուծիչ է ամենայն կրից՝ փոքրագոյն համարելի է չար, նա և բարի, զի զիւր իսկ ծնողն խափանէ, զմեզս. և սա իսկ է խորշելի և սգալի, զի եթէ մահ ապականիչ է մարմնոյ, մեղքն՝ և նմա և հոգւոյ. իսկ անմեղայ՝ չիք վնաս, զի և ոսկերք անգամ նոցա պատուին և պաշտին, և բազմաց զգալապէս եւս բուրեն հոտ անոյշ։ Երանի որոց այսպէս պարկեշտօրէն ի սուգ համակեալ՝ և երանութեանն արժանացսցին. համբուրելի լիցի և մեզ սուգս երանաւէտ, թէպէտ ի վերայ այլոց, թէպէտ ի վերայ անձանց մերոց, առ կասկած մեղաց և յանկարծակի մահու այն զի ոչ գիտեմք թէ ո՞րք և ցո՞րքան սգասցին ի վերայ մեր, յետ հրաժարելոյ և ի կենացս և ի կենակցուէ նոցին։ Երանի՜ որ կենդանեաւն պատրաստէ զպէտս որ յետ կենդանութեանն, պաշար հանդերձեալ ճանապարհին և գին փրկանաց հոգւոյն. զի թէպէտ և գուցեն սիրելիք և տրտմողք ընդ անջատումն մեր և ընդ մահս, սակայն կամ առ ժամանակ մի են կամ ոչ ուժգին, որպէս ի վերայ իւր ուրոյն անձինն. աստանօր ներելի իցէ ասել, Վա՜յ որ յուսայ ի մարդ։ Վա՜յ մանաւանդ այնմ՝ որոյ թողեալ յաշխարհի եւ անուն եւ գործս և արդիւնս գովելիս՝ մարդկան, ինքն ունայն և թափուր զտանիցի յարդարադատ ատենի այնր աշխարհի։

Այլ, դու ինձ եղբայր զգօն, շնորհս մատո Բարձրելոյն, զի տուեալ է քեզ դեռ ժամանակ ապաշխարութեան և ուղղութեան, սգոյ և մխիթարութեան։ Այլ մինչեւ ցե՞րբ. — ոչ է քեզ գիտել զժամս և զժամանակս սահմանեալս. այլ զգօնութեան է սակաւ քան թէ շատ վարկանիլ, և աւուր աւուր պատրաստ լինել վերջնումն աւուր, իսկ Քրիստոս ոչ աւուր միայն՝ այլ և յամենայն ժամու պատրաստ լինել հրամայեաց։ Բազումք ցորչափ յուժի կան և առողջք ի կեանս, համարին ի վայելս և ի խրախճանս լինել, այլ ո՞գիտէ եթէ ի տեղւոջ անգ վայելիցն՝ թաթ որ ի բաղտասարեան տաճարին թափ անցեալ ընդ որմն սենեկին՝ ո՞չ գրիցէ զվճիռն

եռատարր, մահ, դատաստան և հատուցումն։ Բայց և դու, ձե՛ռն ողորմութեան իմոյս Յիսուսի, կասեցո զթաթն այն զժնդակ, և թոյլ արա ինձ սակաւիկ մի եւս կեալ՝ յուղղութիւն կենացս անցելոց, ընդ Եզեկիայ մաղթեմ ժամիմ զայս, այլ ոչ ըստ Եզիկիայի՝ երկարել զաւուրս ի փառս և ի վայելս, այլ յարտասուս և ի սուգ սուրբ. փափագեմ ընդ նմին տեսանել զփրկութիւն Աստուծոյ ի վերայ երկրի, այլ ոչ և ըզմարդն։ Գանզի գիտեմ թէ որպէս ամքն զոր կեցի ցարդ՝ վաղ վաղ «ելին և գնացին յինէն՝ որպէս որ քակէ զտաղաւար, եւս իբրեւ ոստայն սատարաց մերձ ի հատանել», այնպէս եղիցին և որ եթէ զկնի զալոցք իցեն. այլ ես այժմէն բուռն յոգի հարեալ և ի սուգ համակեալ, «իբրեւ ըզծիծառն այնպէս ճչեցից, և իբրեւ զաղաւնի այնպէս ճչեցից» յանապատի խցկանս, խոհական խորհրդով ի վերայ հասեալ ունայնութեանց աշխարհի, սպառնալեաց մահու, և հանապազ վտանգի և վնասու մեղաց։

Գ

Ոչ մահ և ոչ որ յետ այնր՝ այնպէս զարհուրեցուցանեն կամ զբաղեցուցանեն զոգիս զզաստից, որքան թաքուն և անքուն գիտակցութիւնն որ ի մեզ, կամ անապակ մաքրութեամբ և անդորրութեամբն, կամ տագնապաւ յիշատակի մեղանացն՝ զոր գործեաց, զոր կարէ եւս գործել, և որով տեսանէ վարակեալ զնմանիս իւր։ Որպէս Աստուած միայն է ճշմարիտ բարի, և մեղքն միայն բուն չար. և որ մեղաւն և որ հանապազ ի վտանգի կայ մեղանչելոյ, զի՞րդ չիցէ նմա արժան հանապազ յահի և ի սգի կեալ և այնքան առաւել՝ որքան զի չարս այս նրբագոյն և ներքսագոյն է քան զամենայն կիրս՝ յալս և ի ծալս սրտի և հոգւոյ, և ծաւալագոյն քան զամենայն զօրութիւնս նոցին, երագագոյն ի մտանել, յամրագոյն յելանել, դժուարագոյն ի զգուշանալ և գրեաթէ ահնարին ամենեւին ազատն լինել. ընտանի ծնունդ կամաց մերոց, և միակ իր՝ զոր կարեմք և պարտիմք մեր կոչել ծնունդ և գործ, և արդիւնք անպիտանք։ Եւ զայս՝ եթէ ճանաչիցեմք զչարն, այլ չարագոյն եւս են մեղքն որ ոչ երեւին յայտնապէս, և յապշութիւն կրթեն զոգի, չտալով

թոյլ անձամբ զանձն ճանաչել. չնորհաց չնորհք են ստոյգ գիտակցութիւն անձին, որ յաջողէ և զդառնալն ի չար ճանապարհէ։ Ո՜հ, որքան պէտս ունիմք չնորհացդ այդմիկ. և որչափ դիւրին է չլսելոյն առնել խղճի, թէպէտ և անհնար է չլսել իսպառ. սակայն Աստուծոյ ողորմութեանն մեծ պարգեւ գրելի է զլոյս մտաց և զձայնն թաքուն՝ որ ի սրտին բարբառի և որոշէ ընդ բարին և ընդ չար։ Եթէ լուար ըզձայնն, գիտեա՝ զի Աստուած զքեզ ի զգաստութիւն կոչէ. «մի խստացուցաներ զսիրտ քո». զի ոչ յամենայն ժամ և ոչ ամենայն ումեք անարգել հնչէ յաղմուկս կրից և զբաղանաց. որպէս ի սիրտ սոսկացեալ առանձնացեալ՝ ձայնն բարբառոյ յանապատի։

Ահաւասիկ և մեզ այսօր յստակազոյն լսի ձայնդ այդ, և ձայնողն առ դուրս կացեալ կոչէ, Բա՜ց ինձ. բացիր դուռն թմբրեալ սրտի, յոր զնչան խաչի իւրոյ դրոշմեալ է այցելուդ և փրկիչ։ Բացիր առ Յիսուս, սի՞րտ հարսնացեալ նմին. յիշեա, ո՞ւմ ես խօսեցեալ. ո՞ւմ խոստացար լինել լծակից. ո՞ւմ ասացեր երբեմն՝ Կալայ և ոչ թողից։ Եւ արդ այժմիկ՝ ընդ ո՞յս ոմանս կենակցիս արդեօք. յո՞ դեգերիս, յի՞մ կաս. որպիսե՞օք անչքացեալ աղտեղեալ ես հեթեթանօք, և անարժան եղեալ այնմ՝ որ տակաւին անտես արարեալ զմեղանօքդ, գայ ինքնին՝ չնորհիւ աւուրցս հոգենորոգ կրթանաց՝ վերակոչել զքեզ ի զեղջ, ի սուգ, ի սէր։ Բա՜ւ ի քէն ասել ընդ պղերգին, «Մերկացայ զպատմուճանն իմ (զոգի կրօնաւորութեան), զի՞րդ ագանիցիմ զնա». փութա՛ առ փութացողն. մի՞ գուցէ մինչ անագան ուրեմն դանդաղանօք շարժիցիս յառնել, և նա անցեալ գնացեալ իցէ ի բաց. զի ամենայնի ժամ է և ժամանակ. և ի պահու իւրում՝ մտցէ փեսայն ի տաճար հարսանեացն՝ պատրաստ գտելովքն. և ո՞ւր մնայցէ ծոյլն և քնէած։

Հասարակաց է քարոզութիւնն, Ապաշխարեցէ՛ք. և ո՞յր չիցէ պիտոյ ապաշխարութեան։ «Քննեսցէ մարդ զանձն իւր». և ո՞ իցէ սուրբ յերկրածնաց. ո՞յր ուրուք պահեալ իցէ անկորուստ զտաղանդն անմեղութեան, և յայնր վերայ շահեալ ևս գանձս առաքինութեանց. ո՞ւր սիրտ անստգիտ բաբախիցէ. ո՞ իշխեսցէ ասել չկարօտիլ ապաշխարութեան և սգոյ։ Իսկ եթէ ամենեւիմբ պարտաւոր ոք զանձն ճանաչէ,

ահա օր հատուցման և ժամ փրկութեան. մի՞ անցցէ զմեօք օրս այս, մի՞ անցցեն ընդունայն ժամքս այս. եթէ չատ իցեմք մեղուցեալ և եթէ սակաւ՝ պարտականք եմք ապաշխարութեան, զի «որ քննէն զմեզ՝ Տէր է». և «Դատաւորն» առ դրունս կայ. և Ամենեցուն մեզ յանդիման լինել կայ» ահեղ ատենին», յորմէ դողան երկրածինք. զի և «երկինք ոչ են սուրբ առաջի նորա, և ի հրեշտակս իւր եգիտ յանցանս». և Արդարն՝ եօթն անգամ յաւուր մեղանչէ։ Եթէ համառօտ են կեանք՝ համառօտ է և ժամադրութիւն ապաշխարութեան. օր կենցաղոյս վաղ երեկոյանայ, իսկ օր Տեառն մեծ է և ահաւոր և աւադիկ գայ նա «իբրեւ զգող, յաւուր» յորում երկինք տագնապաւ անցցեն և բնութիւնք հրով» կիզեալ լիցին... և ի լուծանել այսր ամենայնի, որպիսի՞» ինչ պարտ իցէ ձեզ գտանել»։ Որպիսի՞ ինչ և յայժմուս պարտ իցէ քեզ գտանել, որ լսեսդ զայսոսիկ և խոկաս։ Ոչ ևս է այս ձայն փեսայի փարելոյ և հրաւէր խանդակաթ հարսին, այլ անաչառ քննչի. ոչ ևս է այսուհետեւ խնդիր երկրաւորաց, զի եթէ երկինք որպէս մագաղաթ մի գալարեցան և աստեղք որպէս տառս ինչ ջնջեցան, ո՞ւր երեւեսցի երկիր և որ ինչ երկրի էր։ Համառօտ վայրկեան մի է արդ ընդ մէջ երկուց յաւիտենականութեանց, որոց միում վիճակեցայց և ես։ Ո՜հ, յո՞ր կողմն արդեօք. ո՞վ կէտ միակ յորմէ չիք միւս ելս՝ ի փախուստ և ի թաքուստ. այլ մերկ և սոսկ գտայց և երեւեցայց անդանօր, որպէս թէ միակ միայնակ ի յոգնախուռն ատենին, կամ թէ ամենեցուն աչք յիս հայիցին։ Եւ զի՞ փոյթ ինձ յայնժամ զայլոց, եթէ պահանջի յինէն համար իմոյ անձին. և պահանջողն ասիցէ, Ահա այրն և գործք իւր. գործք՝ զոր գործեցի ի մանկութենէ մինչեւ ցօրս այս, մինչեւ ցօրն այն՝ որոյ չիք վաղիւ. ոչ ելս անդ մոռացօնք, այլ ամենայն որիշ թուով և համարով, հրապարակահանդէս լիցի ամենեցուն՝ որ ինչ գործեցի յամենայն վայրկեանս կենաց իմոց, և որ ինչ յանցեայ՝ մեծ և փոքր, կամայ և ակամայ, խորհուրդք և կարծիք, ջեռմունք և զեռմունք, յայտնիքն և անյայտք երբեմն, անկղեանք զգայարանաց, յանդգնութիւն մտաց, ապերասանութիւն լեզուի, մատնութիւն խղճի, մոռացութիւն պատուիրանաց, արհամարհութիւն կանոնաց, և համանգամայն՝ զանցառութիւն

սիրոյն Աստուծոյ։ Յորժամ այս ամենայն ծանրասցի ի նը-
ժարս արդարադատ կշռոցն, որքան ինչ կշռեսցեն ի հակա-
կողմանն բարիքն իմ եթէ իցէ ինչ իմ գործեալ բարիս։ Ա-
ւա՜ղ, զի ոչ եւս միջնորդէ ինձ ոք անդանօր ոչ Աբրահամ,
ոչ Մովսէս, ոչ հրեշտակն իմ պահապան և ոչ Մայրն պահ-
պանիչ որդեգրաց, և ոչ, ո՜հ սրտաբեկ խոստովանութիւն, և
ոչ Յիսուս հեզահայեաց, Յիսուսն ամենողորմն. զի չէ այդ
տեղի ողորմութեան, այլ անողոք արդարութեան, սուր երկ-
սայրի անջրպետէ ընդ հայր և ընդ որդի, ընդ ընտանիս, ընդ
միաբանակեացս. « Մին առցի և միւսն թողցի ». արդարքն
վերասցին յերկինս ընդ Փրկչին իւրեանց՝ օրհնել զՀայրն, և
մեղաւորք՝ ուր գործք նոցա պատրաստեցին՝ ի տանջանս
յաւիտենականս։

Այս վախճան է հասարակաց, և աշխարհայնոց յայժմուս
անուանելոց և կրօնաւորելոց, որոց առեալ զկնիք Քրիստոսի
յանձինս՝ կամ պահեցին զնոյն, գնալով զհետ նորա զամե-
նայն կեանս իւրեանց, կամ խոտորեցան՝ թերեւս չարաչար
քան զորս յաշխարհամիջի մեռելակերպք արտաքին սքեմաւ,
մեռելահանգոյք և հոգւոցն որակաւ, եթէ ոչ ջերաջերմն ար-
տասուօք լուացան։ Զայսոսիկ զմտաւ ածեալ մաքրից վարուք
և սրբակեցից անձանց՝ սրտաբեկ սրտառուչ լինէին. իսկ իմ
և իմոցս նմանեաց յի՞նչ իցէ յուսացեալ. յո՞ր լաւութիւն,
յո՞ր վաստակ, յո՞ր ճգունս. կամ իցէ՞ արդեօք բացեալ նոր
ճանապարհ փրկութեան, եթէ գոյր գտանել արտաքոյ քրիս-
տոսակոխ ճանապարհին, որ նեղ և անձուկն է. զգաստու-
թիւնն, մեռելութիւնն, ապաշխարութիւնն, սուգն. և զի-
տեմք՝ զի ընդ որ և գնայ ոք՝ ընդ այնր և ելանէ ընդ դուռն։
Երանի՜ իցէ մեզ՝ եթէ ընդ որ մտաքս և սկսաք՝ ընդ նոյն և ան-
խոտոր՝ խաչ ընդ ուս՝ միահետ գնայաք, թէպէտ լալով և
թէպէտ խնդութեամբ հոգեւորականաւ, զի երկոքին եւս ի
նոյն հանեն առագաստ։ Արդ, եթէ խիղճ մտաց մերոց վը-
կայէ զուղիղն ընթանալ, տացուք գոհութիւն Աստուծոյ և
յառաջեսցուք անվեհեր յուսով մինչեւ իսպառ իսկ եթէ
ստգբտանիցէ, գոհասցուք դարձեալ ո՛չ ըստ գործոց՝ ընդ
որս անկ է կորանալ, այլ ընդ գթութիւնն Աստուծոյ, որ
տայն մեզ տակաւին ժամանակ դարձի և ուղղութեան, և
քաղցրութեամբ հրաւիրէ ի սուգ փրկարար։ Մի՛ յապաղես-

ցուք ուրեմն, « մինչդեռ աւուր կայ ». այլ ոմանց, թերեւս
յոլովից՝ մերձեալ է երեկոյն և գայ գիշեր՝ յորում ոչ ոք
կարէ գործել. և ամենեցուն իսկ մտելոց ի կամաւոր մեռե-
լութիւն կրօնաւորական՝ անկ է համարել զօր իւր տարա-
ժամեալ. ոչ այնքան զամս և զտիս թուելով, այլ զվարս
անձինն և զգործս քննելով, այն զի և բնութիւնս՝ ոչ եւս է
մանուկ. ոչ եւս նախկին եռանդն, որ եթէ ի չարիս չուրթա-
փէր՝ այլ և ի զեղջ և ի ճգունս երագ երագ դառնայր։ Քըն-
նեսցէ և դարձեալ քննեսցէ մարդ զանձն. և զի ոչ կարասցէ
յամենայնի արդարացուցանել, մի՛ ընդ վայր յապաղիցէ
յուղղութիւն և ի քաւութիւն, չի՛ վտանգ մեծ՝ քան զժա-
մավաճառն լինել յայսմ ասպարիզի։ Անձամբ զանձն դա-
տապարտ արասցէ, զի ողորմութիւն զտցէ յամենեցուն և
զամենայն Դատողէն. և սուգ ողջախոհ սրբեսցէ զաղտն և զբիծ
հոգւոյ և մարմնոյ. զերկաքանչիւր եւս ճնշելով՝ շատ կամ
սակաւ, ըստ իւրում կարի, և մի՛ մեծ ինչ առնել համա-
րեսցի։ « Զի ոչ են արժանի՝ չարչարանք ժամանակիս հան-
» դերձելոցն փառաց ». Հռովմ. Ը, 18։

Եւ իցե՞ն ինչ բնաւ վաստակք ծանունք ի կրօնի աստ մե-
ռում, պահք, ճգունք, ծոմապահութիւնք, խարազն և ձաղ-
կանք, որպէս առ բազում այլս ի միանձանց և միանձնու-
հեաց, կամ այլ ինչ ազգ վշտակրութեանց և յայտնի մեռե-
լութեանց։ Աղաչեմ ներել ասել, զի ոչ միայն բաւական ըն-
դարձակ են մեզ կրօնքս և կանոնքս, այլ թերեւս հրապոյրք
եւս սպրդիցին յառաւել եւս ընդարձակել պատճառօք կամ
պատճառանօք, իբրու առ տկարութեան անձանց կամ ներո-
ղութեան ժամանակիս, փոխանակ ասելոյ՝ թուլութեան։ Զա-
սեմ անփոյթ լինել զառողջութենէ, այլ մի՛ միանգամայն և
հիւանդ լինել և բժիշկ և տնտես. տանել տարցի խնամ մարմ-
նոյ, այլ մի՛ մոռասցի և խրատ մարմնոյ. զի եթէ այսպէս
և եթէ այն, « գիտեմք, զի երկրաւոր տաճար չինուածոյս
» մերոյ քակտեսցի. չինած յԱստուծոյ ունիմք (այլ) տաճար »,
անձեռագործ, այնու փափագանօք տաղտկասցուք ընդ այս,
ըստ Առաքելոյն, և փափաքեսցուք բնակութեան երկնից. և
եթէ չիշխեմք ընդ Պօղոսի յօժարիլ վաղ քաջ « զելանելն ի
» մարմնոյ և մտանել առ Աստուած », զէթ յիշեսցուք ընդ
Պետրոսի՝ « զի վաղվաղակի է լինելոց յինէն լուծանել մարմ-

» նոյս »։ Լուիցուք և երրորդին՝ որ « երանի՜ կարդայ մե-
» ռելոց, որք ի Տէր ննջեցին... քանզի հանգեան յաշխա-
» տութենէ իւրեանց. բայց զի միայն գործք իւրեանց չոգան
» զկնի նոցա »։ Հանգեա՜ն արդարեւ, այլ աշխատելքն. դիւ-
րացան, այլ դժուարակիրքն. յաղթեցին, այլ մրցողքն. պսա-
կեցան՝ որք պատերազմեցանն. մխիթարեցան՝ որք սգա-
ցանն. անմահացան որք մեռանն մարմնոյ կամաց։ Անմոռաց
լիցի մեզ վճիռ Քրիստոսի. « Բռնադատողաց է արքայութիւն
» երկնից »։

Հաւատամ, Տէր Յիսուս, և բուռն հարկանեմ, այլ լեր ինձ
ձեռնտու. և դու ինքն որ սիրոյ և սգոյ արտասուս հեղեր ի
վերայ բարեկամին քո չորեքօրեայ մեռելոյ, տուր և ինձ լալ
զիմ բազմամեայ մեռելութիւնս. լացից ես զիմ և զաշխարհի
չարիս, այլ դու յարո՛ զհոգիս իմ. մի Արի միայն ասա, և
շատ է ինձ։ Քո աշակերտքն խնդրեցին ուսանել զաղօթս, ես
խնդրեմ այժմ ուսանել զարտասուս. զի հաղորդեալ կամա-
ւոր տրտմութեան քո և սգոյ՝ հաղորդ եղէց և երանաւէտ
մխիթարութեանդ։

Դ

ԵՐԱՆԻ՜ ՀԵԶՈՑ, ԶԻ ՆՈՔԱ ԺԱՌԱՆԳԵՍՑԵՆ ԶԵՐԿԻՐ.

Որ աղքատն է հոգւով և սգաւոր՝ ըստ տեսութեան նա-
խակարգելոց երանութեանցն, անմարթ է թէ չիցէ և հեզ և
համբոյր բարուք, զոր ամբէն յիշատակ նուաստութեան ան-
ձինն, հրապուրանաց աշխարհի և մարմնոյն, խայթ մեղացն
և խէթ մահու. որպէս և ի հակառակէն, անհնար է զոռոգին՝
ի սուգ մտանել և սիրել զաղքատութիւն հոգեւոր։ Սա զի-
ջուցանէ զողջախոհ միտս ի խոնարհութիւն գլխովին, և
ստգտանք սրտին՝ ի ցածութիւն և ի սուգ պարկեշտ։ Որ
յերկոսին յայդոսիկ առաքինութիւնս կրթեալ իցէ՝ նա և
յերրորդումս՝ որ առաջի կայ մեզ այսօր ի խորհրդածու-
թիւն, յաջողէ։ Աղքատութիւն, Սուգ, Հեզութիւն. անդրա-
նիկք կամ եռւորեակք լաւութեանց, զորս ոչ կարէր երկիրս

յղանալ և երկինք երկնել, բայց միայն հոգին Յիսուսի, որ
զխոտելիսն և զմերժելիս աշխարհի և զհամարեալսն յիմա-
րութիւն՝ իմաստնոց նորին, վերացոյց կարգեաց ի զլուխ
զգօնութեանց։ Առքա արդարեւ երեքկրդի առասան անխզելի,
ոչ յոսկւոյ և ի սընդոյ մետաքսեայ հիւսած ճարտարաց, այլ
յամենահնար ճարտարապետէ՝ նորոգողէ մարդացելոյ Աս-
տուծոյ, որով հոգիք վարանեալք և վարակեալք ի հաղբս
կորստականս՝ վերբերին յազատութիւն, ի մաքրութիւն, յու-
բախութիւն և յերանութիւն։

Որպիսի՜ Երանութիւն. — ժառանգել զերկիր։ Եւ ո՞ր և
որպիսի՜ երկիր, և զի՞նչ օրինակ ժառանգութեան։ Նրբա-
զնին Յովբ հարցանէ խնդրէ զօթեվանս լուսոյ. մեք հարց-
ցուք, Զի՞նչ երկիր իցէ՝ յորում հեզն ազանիցի, ո՞ր այն
աշխարհ անծանօթ գիւտնոց և բազմաշրջիկ մարդկան, զոր
ոչ կոխեցին ոտք չափողաց և ոչ միտք թուցեալք, ուր ոչ
ձկտեցաւ ակն անյագ անգեղաց։ Դժուարին արդարեւ խընդ-
դիր և գիւտ, և հարկ է աստստին զպարտութիւն խոստո-
վանել մտաց, և ապաստան լինել ի նոյն ինքն՝ որ ասացն,
« Ուսարուք յինէն, զի հեզ եմ և խոնարհ սրտիւ, և գտջիք
» հանգիստ անձանց ձերոց »։ Բաբէ՜ որ հանապազ ի վիշտս
ի տառապանս, ի հալածանս, ի ցաւս և ի տանջանս եկեաց
մինչեւ ի խաչ, նովիմբ ասէ զհանգիստն հայթհայթել և
հանդարտել. զի հեզութիւն՝ և ընդ անձին և ընդ օտարաց
հաշտ առնէ զսիրտ, և հանապազ ընդ Աստուծոյ. և այսպէս
ամենուստ խաղաղացեալ՝ ժառանգէ յերկրի զերկիր, և ոչ ոք
կարէ՝ ձեռնամուխ լինել կապել զայդպիսի ժառանգութիւն,
առհաւատչեայ յաւիտենիցն։ Ապա Հեզութիւն իցէ հանդար-
տութիւն կրից նուաճելոց յանձին, Հեզութիւն՝ հաշտ քաղա-
քավարութիւն ընդ մարդկան, Հեզութիւն՝ հաճ և հաւան
լինել յամենայնի՝ կամացն Աստուծոյ։

Ա

Ընդ նմանիս իւր և ընդ Աստուծոյ կապեալ և կախեալ
կան կեանք մարդոյ ի վերայ երկրի. և կեալ անխէթ և ան-
կասկած ընդ նոսա՝ արդարեւ կեանք երջանիկք, բայց ոչ ու-
մեք է հնար ցածնուլ հեզանալ առ մարդիկ և անստերիւր

հետեւել կամաց Աստուծոյ, եթէ ոչ նախ հեզացեալ իցէ յիւրում անձին, նուաճելով զմարմին ընդ հոգւով, և զհոգի՝ լուսով բանին կամ ներքին գիտակցութեանն, և զբանն ինքնին՝ հոգւովն Յիսուսի։ Նախ՝ կանխել ի չափու պարկեշտութեան ունել զմարմին, զի մի յինքն յանկուսցէ զսիրտ, զմիջնորդն ընդ նա և ընդ հոգին, զի յոր կողմն և շրջիցի սիրտ՝ նոյն յաղթողանայ կամ տկարանայ կամ յազատութիւն երկնաճեմ կամ ի գետնաքարշութիւն անբանական։ Այս, առաջին հնարք հեզութեան եղիցի ցածուցանել զառ ի մարմնոյն շմորս և խռովս, որք ոչ միայն զթանձրագոյն մասն մարդոյս աղաւաղեն, այլ և զամենայն բարեձեւութիւն բնութեանն։ Ի ծուիս սրտի՝ եղծանի և հարեալն ի նմա պատկեր հոգւոյն, տի՛ նա և արտաքին կերպարանք. զի ի նմանէ իբրեւ ի կենդրոնէ ամենապատիկ նիւթոց՝ բարեաց և չարեաց՝ առնուն զհանգամանս՝ զգայութիւնքն։ Գործ կարեւոր է ճանաչել մարդոյ յանձին՝ զդիւրահոլով անիւն այն՝ որ զբովանդակն շրջէ զբնութիւն իւր, և բնատուր բանիւն և ձրիատուր շնորհօք ի չափու ունել և յուղղութեան, և ըստ գեղեցիկ խրատու Զգօնին, « Առնուլ զսիրտս մեր ի վերայ բազկաց մերոց՝ » առ Աստուած յերկինս »։ Ոչ անարգ համարեցաւ և ինքն Տէր՝ առնուլ զայն սիրտ և կրել յիւրումն տնօրէնութեան, փորձել և գիտել « զինչ կրէր ի մարդն »։

Գիտեա և դու, ո՞վ հոգեսէր զի՞նչ կրէ մարդդ ներքին. զքեզ ինքն ծանիր՝ քաջ։ Մուտ աղէ ի քեզ, և փակեա ըզդուռն ներքսագունիդ այդր սենեկի. և տես, որպիսիք անդ յուզմունք և զեռմունք. ո՞րքան ընդվայրաքարշութիւն յանբանականս. ո՞րքան ի վեր յարուցմունք քան զչափ և օրէնս. և թուիցի քեզ գործանոց իմն մեծ կամ խառնարան, ուր մերթ խուռն և յախուռն յորձանք հպարտ խորհրդոց, մերթ զաչացու մոլութիւն ընդ իւր և ընդ արտաքին բնութիւն, ի հանոյականն յաւէտ միտեալ քան ի բարին. մերթ ընդ գեղագոյնսն նախանձեալ, և մերթ զինքն գերազանց համարեալ, և յաջողեալ ի պէսպէս հանճարս մտաց և ի լաւութիւնս, որոց՝ և շուք և՞ զովեստ ի տեսողաց ակն ունիցի ամպարհաւաճութեամբ։. Այլ զի՞ է ինձ վայրապար յանդիման առնել զանձնահաճ թելադրութիւնս սրտի և մտաց, զորոց՝ դժուարին յոյժ է չառնուլ զփորձ՝ շատ կամ սակաւ, քանզի

նրբագոյն և ընդ մտագոյն են այսպիսի կիրք՝ մինչեւ յուղեղս սրտի, և հազիւ բազմաջան առաքինեաց է խիստ դատողութեամբ նշաւակել զանձինս, մանաւանդ եթէ առանձինն իմն շնորհաց են պէտք մտանել ի մարտ դժուարակռիւ՝ անձնասիրութեան՝ և յաղթող ելանել։ Ո՞հ, եթէ նշոյլք շնորհացդ ծագէին պայծառ ի միտս մեր, քանի՞ արդեօք այլ ընդ այլոյ կերպարանս՝ քան զոր կարծեմքս՝ նշմարէաք ի մեզ, և սոսկացեալ փութայաք փարատել զշամանդաղ օտարոտի մթարիցն՝ որք աղամողեալ՝ զանգոյս իբրեւ գոյս երեւեցուցանէին ի մեզ, և ըստ այնց շրջէին զմիտս և զսիրտս. լսէաք արդեօք յայնժամ զկշտաբանս ամենատեսին՝ որպէս առ Յովբ « Ո՞ է դա՝ » որ թաքուցանէ յինէն զխորհուրդս. պնդեա զմէջս և տուր » ինձ պատասխանի... աղէ՞, աւ բարձրութիւն.. և զամենայն » հպարտս խոնարհեցո », և նախ զքեզ ինքն. զքեզ ինքն ծանիր քաջ՝ դատաքնին աչօք, և փութայցես ամօթապարտ ապի ի բերան լինել, ոչ եւս յաւելուլ ի սնոտի ապաբանութիւնս, ծանուցեալ եթէ ո՞րքան հեռի և թերի ես ի ճշմարտութենէ, ի կարեւոր գիտելեաց և ի սրբութենէ. և թէ ո՞րքան կարէիր յառաջել ճանապարհաւ հեզութեան և խոնարհութեան՝ որ առաջնորդէր ի կատարելութիւն. և ո՞րքան յետաձգեաց եղեր ամբարհաւաճութեամբ՝ և մեղմեխ խորհրդովք. ո՞րքան ուղղութիւնք պահանջին ի քէն, և յո՞րքան ծանականս անգիտացար. ո՞րքան ժամս օգտի և փրկութեան վատնեցեր յումպէտս, ի վնաս և ի կորուստ՝ զորքան շնորհօք ապահտ ապարեր, ի պահէ անտի խելահասութեանդ և ի մտից ի կրօնս՝ մինչեւ ցօրս այս։ Իշխիցե՞ս բացաւ երեսօք տալ համարս զպարգեւացն՝ որովք մեծարեցին և լցին զքեզ՝ խնամքն վերին։ Աղէ՞, հայեաց միանգամ եւս ի ներքս ի քեզ՝ լուսով ճրագին՝ որով զերուսաղէմ քննէր արդարն և բարերար Տէր. քանի՞ անհեղեղ տիպք և պատկերք, պատկառելիք պարկեշտից, սարսելիք սրբոց, անհանդուրժելիք հրեշտակաց, այպանելիք և բանսարկուին թելադրողի, թշնամանեալք և խոտեալք ի քո իսկ խղճէդ, զի ոչ բաւէ իսպառ հպարտութիւն անձամբ զանձն թաքուցանել կամ զգարշելիսն գեղեցեսել. գիտակցութիւն պարտաւոր՝ յոր կողմն և դարձցի՝ զհետ ձգէ որպէս ստուեր անանջատ՝ զնայլթ իւր, և դատապարտէ մտօք՝ զոր կամօքն ջատագովէ, և յոր և հնարս

բուռն հարկանիցէ՝ ոչ կարէ հանդարտել՝ մինչեւ թէ ոչ ըզ-
պարտութիւն խոստովանիցի. չիք խաղաղութիւն ամբարտա-
ւանից, աստուածային է վճիռ, և ոչ յազուրդ կամ անդորր
վայելք պղերգաց։

Եթէ անձամբ անձին ոք ոչ հանդուրժէ, զի՞նչ տացէ պա-
տասխանի առ հաստիչ իւր. բայց եթէ խոնարհել խոստո-
վանել, «Ես ոչ ինչ մի եմ, վասն որոյ խոտեցի զանձն
» իմ և հաշեցայ, և համարիմ զանձն իմ հող և մոխիր »։
Ո՜հ, ո՞րքան հեռի եմք ի հեզութենէ Յիսուսի. և ո՞րքան պէտք
են իրաւախոհ լինել ընդ ոսոխի մարմնոյ և մտաց՝ առ ի
հաշտ լինել ստուգապէս ընդ անձին և ընդ ընկերի. չիք
հնար յայդմ յաջողել, բայց խոնարհութեամբ։ Սիրտ վտան-
գեալ ի բռնութենէ մարմնոյ և մտաց՝ ապաստան անբոյթ
գտցէ առ ոտս խաչին Յիսուսի, ի ծոց իսկ նորին՝ ի սուրբն,
ի քաղցրն, ի հեզն և ի խոնարհ, և ուստի հնարս հանգըս-
տեան անձին և բնութեան իւրում, ի խոնարհական հեզու-
թեան անդ, յորում իբրեւ ի ջինջ հայելւոջ պարզագոյն
նշմարի կենդանագիր Քրիստոսի։

Անհուն են խորք խոնարհութեան և անբաւ գանձք, զոր ա-
մենայն հոգեխօսք դրուատեն անսպառ բանիւ, ամենայն ուղ-
ղութեանց նախաշաւիղ և վէմ անկեան հոգեւոր շինուածոյ,
ընդ որ սքանչանալ և զմայլել արժան համարիմ ինձ՝ քան
թեւակոխել ի ճառս և ի գովս. շատ իցէ յիշել, զի ոչ ոք
հպարտ փրկեալ և ոչ խոնարհ՝ դատապարտեալ, որպէս ըզ-
գօնքն ասեն որք և յաւելուն. եթէ կամիցի ոք սուրբ լինել՝
եղիցի խոնարհ, և որ կամիցի առաւելուլ ի սրբութեան՝ լիցի
խոնարհագոյն, իսկ որ գերազանցելն ցանկանայցէ՝ եղիցի ա-
մենեւին խոնարհ։ Ցանձին փորձոյ ստուգեալ աղաղակէ Դա-
ւիթ, և մեք զօր ամենայն կրկնեմք և երեքկնեմք, «Զսիրտ
» սուրբ և զհոգի խոնարհ՝ Աստուած ոչ արհամարհէ. «Ես
» խոնարհ եղէ և Տէր կեցոյց զիս. — Հայեցաւ նա յաղօթս
» խոնարհաց. Ո՞վ է որպէս տէր Աստուած մեր՝ ի բարձունս
» բնակեալ. և զխոնարհս տեսանէ յերկինս և յերկրի». և եւս
հզօրագոյն սրասլացն Եսայիաս՝ ի դիմաց Բարձրելոյն «Եր-
» կինք աթոռ իմ են և երկիր պատուանդան ոտից իմոց.
» այլ ես յո՞ հանգեայց՝ եթէ ոչ ի հեզս և ի խոնարհս»։
Աքանչելի է ինձ և խորատեսութիւն Ազարիանցն՝ ի հնոցի

անդ հրոյն, յերգ և ի գոհութիւն հրաւիրելով զամենայն ա-
րարածս. ի նիւթականաց և ի նուաստից՝ ի բանականս և
ի կատարելագոյնս ի վեր ելանելով՝ հուսկ և աւարտ ամե-
նեցուն կարգէ զխոնարհս. «Օրհնեցէք սուրբք և խոնարհք
» սրտիւք՝ զՏէր »։ Յայս իմաստ զմիմեամբք ելեւելս առնեն
աւետարանիչք տիեզերաց. ոմն ասէ. «Տէր ամբարտաւանից
» հակառակ կայ, տայ շնորհս խոնարհաց». այլ ոմն, յիշե-
լով, զի «Քրիստոս խոնարհեցոյց զանձն՝ զկերպարանս ծա-
» ռայի առեալ». և այլ, «Խոնարհեցարուք ընդ հզօր ձե-
» ռամբն Աստուծոյ». կարապետն կանխեալ աղաղակէր «Ձեմ
» արժանի լուծանել զխրացս կօշկաց» Քրիստոսի, և տե-
սեալ զնա գալով առ ինքն ի մկրտութիւն, «Ինձ պիտոյ է
» ի քէն մկրտիլ, և դու առ իս գաս». և լուեալ ի նմանէ
զթոյլ տուր այժմ՝ մեծ եւս խոնարհութեամբ՝ տեղի տայր
մեծագունին խոնարհութեան, որ, զի թէպէտ ինքն մեծ էր
ի ծնունդս կանանց, նա մեծագոյն և անհաս և միակ ծնեալ
ի Կուսէ, որ զերաշնորհ շրթամբքն վկայեաց, «Զխոնարհս
» բարձրացոյց Տէր.. ցրուեաց զամբարտաւանս մտօք սրտից
» իւրեանց. և հայեցաւ ի խոնարհութիւն աղախնոյ իւրոյ.
» վասն այսորիկ (արժանն ստիպէր ի վերայ բերել). յայսմ
» հետէ երանեսցեն ինձ ամենայն ազգք». Կանխելով մօրն
զմիածնին ճառ երանութեանց։ Իսկ սորայս, Փրկչին մերոյ
ասեմ, արդարեւ անճառելիք են հանդէպք խոնարհութեան,
զոր եցոյց մեզ յօրինակ և ի յանդիմանութիւն, ի ծննդենէ
անտի իւրմէ ի գոմս և ի մսուրս, մինչեւ ի համբոյրն Յու-
դայի՝ ի տագնապալից պահուն, յորում՝ նա մատնէր, միւսն
ուրանայր, այլք յաշակերտացն փախչէին, և բարերարեալքն
ի նմանէ՝ չարիս և մահ նիւթէին. և նա ոչ ցասեաւ, ոչ ոք
լուաւ ի հրապարակս զբողոք նորա, ոչ եբեկ զչախչախեալ
եղեգունսն, այլ հեզաճեմ ոտիւք անց գնաց, ոչ փչեաց ընդ
առկայծեալ պատրոյգսն, այլ շնչով իւրով առողջութիւն և
կենդանութիւն պարգեւեաց. և հուսկ ամենայն նախատանաց
չարչարանաց և լքման յերկրէ և յերկնից՝ թողութիւն մաղ-
թելով ապերախտիցն և յանցաւորաց՝ իբրեւ անգիտաց գոր-
ծելոցն չարեաց, կնքեաց զկեանսն, խոնարհեցուցանելով ըզ-
գլուխն, և յայն ձեւ հանապազ կայ առաջի մեր լռութեամբ
զհեզութիւնն քարոզելով։ Եւ որ հրաշափառագոյն եւս է և

հրեշտակաց անգամ հիանալի, յայնմ հետէ ցայժմ և մինչեւ ի կատարած աշխարհի՝ ցուցանէ և ցուցցէ աւուր աւուր զանբաւելի խոնարհութիւնն և հեզութիւն, համօրէն աստուածութեամբն և մարդկութեամբ, իբրեւ ոչ ինչ մի ամփոփեալ կալով ընդ դոյզն նշխարաւ հացի՝ ի սքանչելահրաշ պատարագի անդ իւրում, ձեռամբ նուաստից ոմանց և երբեմն անարժանից յոյժ. առ որ ոչ բաւեն բանք, այլ խոնարհել և մեզ աստանօր ի լռութիւն ահի և հիացման. և որպէս անբաւելի սիրոյ նորա՝ հաղորդ լինել տուեալ է մեզ անդ ընդ նմին հաղորդելի և սգատեսակ իմաստիցն, զի ուր մահու երեւոյթ է՝ անդ հարկ է և սգոյ լինել, որպէս ուր անմահութեան խառնուրդ է՝ անդ և հոգեւոր ուրախութեան։

Այլ ես ո՞րպէս պատրաստիմ, զիա՞րդ մատչիմ առ սարսափելի հանդէսն այն հեզութեան իմոյն Յիսուսի, և զիա՞րդ ընդ նմին իրագործեմ զգերագոյնն գործոց ի վերայ երկրի. կամ զիա՞րդ ոչ յայլ յայլմէ լինիմ, մինչ ամենայն որ յիս մասունք հոգւոյ և մարմնոյ՝ ստիպեն գոչել, «Ի բաց գնա՛» յինէն, Տէր, զի այր մեղաւոր եմ ես»..։ Այլ հեզութիւն նորա կանխէ կափուցանէ զբերան իմ, և զբերանս երկնից և երկրի, «զոր այժմս ես առնեմ, ասէ, դու ոչ գիտես, այլ» ապա գիտասցես»։ — Արդարեւ սակաւ ինչ գիտեմ ի սքանչելեաց այսր, այլ շատ՝ ի ճանաչել զչքութիւն իմ և զչքաւորութիւն, և զքո անչափական մեծութիւն հեզութեան և գթութեան. և ապշեալ ոչ ելս իշխեմ ընդ Պետրոսի ճիկ հանել, զի մի՛ զկեանս հոգւոյս մերժեցից. այլ ընդ առ ի քէն գովեցելոյ զօրականին՝ կրկնեցից. Տէր, դու գիտես զի չեմ բաւական՝ եթէ ընդ յարկաւ սրտիս մտցես. շատ է ինձ և մի բան քո ի բժշկութիւն հոգւոյս. ապա եթէ դարձեալ կամիս խոնարհել և գալ առ իս, եղիցին կամք քո. բայց տուր և ինձ վայելուչ խոնարհութեամբ մատչել ընդունել զքեզ, և առ ի քէն գտանել զհաշտութիւն գիտակցութեան անձին իմոյ, և զամենայն զոր եմս՝ ընկղմել ի խորս խոնարհութեան և հեզութեան։

Բ

Զոր օրինակ չէ հնար ծովու խաղաղելոյ ակօսաբեկ լինել ալեօք, և ոչ ի հակառակէն՝ հոգմակործելոյն մակաւասար միապաղաղ երեւել այսպէս և անձին խռովելոյ՝ խաղաղ երեւել, և հեզացելումն՝ խռովադէմ և տրտում. զժտութիւն՝ անձնամատն լինի վրդովման ներքին մարդոյն. և եթէ անձին իւրոյ ոչ կարէ օգտել այլ խռովեալ և սոնքացեալ, զի՞նչ առ օտարս կարիցէ առնել բայց եթէ խռով և վնաս։ Անիրաւն անձամբ անձին՝ ոչ կարէ իրաւունս առնել այլում. և որ գոռոզութեամբ զանձն աղարտէ, զո՞ կարիցէ չինել. ո՞չ ապաքէն, ասաց Առաքեալ «Բարկութիւն մարդոյ՝ զարդարութիւն Աստուծոյ ոչ գործէ»։ Եւ եթէ ի գիւտ անդորրութեան ոգւոյ՝ պէտք են խոնարհութեան և հեզութեան, առաւել ելս ի հաշտութիւն և խաղաղութիւն ընդ ընկերաց, որով և ժառանգելն զերկիր յաջողէ։

Հեզութիւն ծաղիկ է խոնարհութեան, և սա տունկ դրախտին Յիսուսի. զոր թէ կամիցիս յանձին քում քննել ո՞րքան իցէ խորարմատ, տես, եթէ զի՞արդ վարիս ընդ ընկերաց, եթէ աւագ իցես և եթէ կրսեր կամ հաւասարակից՝ ի կենակցութեանդ, ի խորհրդակցել, ի տարաձայնել կարծեաց. և գիտասցես ո՞րչափ կալեալ իցէ քո զերկրի երանութիւն. երկիր՝ որ այսու տեսութեամբ առհասարակ մարդկութիւնն է, ընդ որում յարեալ յօգեալ է քո՝ որպէս բնութենակից. և հարկ է զի, ըստ առաքելական խրատու, «Հեզութիւն ձեր յայտնի լինիցի ամենայն մարդկան». և եթէ այդ ոչ յայտնի, չարաղէմն ի յայտ գայ՝ բարկութիւն։

Բարկութի՜ւն. պժգալի և անարգ քան զամենայն կիրս և հաւասար ամօթալի ախտից, այլ և բռնագոյն, բաժանեալ գրաւեալ ընդ նոսին զսիրտ մարդոյ, որպէս գիտէ և ամենայն ոք, հեթանոս և քրիստոնեայ, եթէ ցանկութիւն և ցասումն տարհապարհակ վարեն զսիրտս որդւոց մարդկան, եթէ ոչ զգօնութիւն դաշնակիցս արասցէ զնոսին՝ խաղաղութեամբ վճարել զամենայն. իսկ ի խեռելն նոցա և ի խեղել զդիւրահոլով անիւ բնութեանս, ամենայն վերիվայր լինի. ցանկութիւն գետնասող, որպէս գետուն զազիր, ցասումն՝

ընդվզեալ որպէս գազան ամեհի, խորտակումն գործեն զեղեց-
կայարմար կառացն և զահավիժութիւնս՝ բազում անգամ
անկանգնելիս։ «Ճրագ մարմնոյ ակն», և ճրագ հոգւոյ՝ բանն.
որպէս ի խաւարել նորին՝ ոչ կարէ գործել մարդ, այսպէս և
ի խաւարել սորա՝ ոչ կարէ գործել ուղիղ. յորժամ մթարք
կրից շափառուկ ածցեն լուսոյ մտաց, անհետանան և ճանա-
պարհք արդարութեան, և այլ ընդ այլ դանդաչէ մարդս։
Զիք երկինք կամ օդ՝ որ այնպէս արագ արագ միգով և
մառախլով պատիցի՝ որպէս զաղփաղփուն ոգի մարդոյս. և
չիք որ այնպէս խրթնացուցանէ զնա յաստուածատուր զար-
դուցն՝ որպէս բարկութիւնն։ Ի հանդարտութիւն հաստա-
տեաց Տէր զհոգիս, որպէս տաճար ընդունիչ նշուլից իւրոյ
անեղական լուսոյն, որում ստուերած ածել՝ արդարեւ գործ
անարգ է և ամպարիշտ և մեծ վնաս անձին։

Բորբոքեցար թերեւս ի բարկութիւն, ի բարկութիւն տա-
րապարտ. զգացեր անշուշտ՝ և ոչ անագան՝ և յիշիցես և այժմ.
ո՞րքան անչբեցար ի շնորհաց և նուաստացար ի քեզ, և քեզ
ինքեան եղեր նշաւակ, և առաջի որոց ճայթեաց սրտմտու-
թիւն քո. մանաւանդ եթէ ի հաւասար ընկերութեան ամո-
լակցաց էիր և ո՞ ետես երբէք զամոլ մի յամոլից ստամբա-
կեալ ի վեր վազեալ՝ և ակօսին ուղղաձիգ հերձեալ. իսկ
եթէ և այլք ոմանք զնոյն գործիցեն ի միում ազարակի,
ո՞ւր մնայ գործ մշակութեանն, որպիսի՞ վաստակ անօգուտ և
վնաս մեծ յընկերութեան և յեղբայրութեան։ Եւ զի՞նչ իցեն
բարուրք բարկութեան. ընդէ՞ր ցաստնուցու եղբայր ընդ եղ-
բօր. — ապաքէն ոչ զի բարի ինչ կամ ազնիւ արար, այլ
թիւր և խոշոր, անհաճոյ, թէ կամիս՝ և անպատշաճ և ա-
նարժան. — այլ, միթէ սրտմտութեամբ եկեսցե՞ն այդոքիկ
ի շուք և ի շնորհս և ո՞չ մանաւանդ առաւել եւս նշաւա-
կիցի յերկաքանչիւր եւս դիմաց. զուցէ և փոքրոգութիւն
շեղեսցէ զշրթունս նուիրեալս ի բարեբանութիւն Աստուծոյ և
մարդկան՝ յանվայելուչ արտաբերութիւն բանի։ Դ,ա՝ թէ և
ճշմարտութեան կալով ջատագով՝ դժուարիցի ընդ այլախոհս
և այլակարծիս, նախ զանձն իւր քննիցէ, եթէ արդարեւ
ստոյգ կացցէ՞ ինքն ի ճշմարտին. և եթէ կարծեաք վարիցի՝
ուստի՞ իցէ ինքեան առաւելաշնորհութիւն քան զմիւսոյն՝ որ
հակառակ կարծիցէ։ Ի նախնեաց անտի զգօնից վկայեալ է

զի ոչ վէճ՝ այլ «պատասխանի ողոք և իմաստուն՝ դարձու-
» ցանէ զսրտմտութիւն. և բան խիստ՝ յարուցանէ զբարկու-
» թիւն». իսկ ի նորումս՝ ազգ առնէ վարդապետն Տիմո-
թեայ, «Դառայի Տեառն ոչ է պարտ կռուել, այլ հեզ լի-
» նել առ ամենեսեան. հանդարտութեամբխրատել զհակա-
» ռակորդս». իսկ զորս՝ ոչ եւս ծառայս՝ այլ բարեկամս իւր
կոչեաց Քրիստոս և խորհրդակիցս, քանիո՞ն հեզութեամբ և
հանդարտութեամբ չիցէ օրէն վարիլ ընդ նոսին. մեզ մա-
նաւանդ, որոց ազգէ նոյն Առաքեալ, «Արժանի գնալ կոչ-
» մանն՝ յոր կոչեցարուք, ամենայն խոնարհութեամբ և
» հեզութեամբ և երկայնմտութեամբ, անսալ միմեանց սի-
» բով»։

Բնութիւն և շնորհք ետուն մեզ ընկերս նմանիս՝ յօգուտ
և ի շահել զանձինս և զիրեար. բարկութեան չիք երբէք
շահեալ զոք. թերեւս նուաճէ, ընկճէ, յաղթահարէ, վարէ
բռնի, այլ ոչ ամոքէ. ընդ քարշ տանի իբրեւ գերի և ստը-
բուկ, և ոչ հաւան և հլու. կարկէ զբերան, այլ ոչ զմիտս.
արգելու զգործն, այլ ոչ զկամս գործողին. նա և բազում
անգամ՝ ոչ միայն ոչ ինչ ստանէ դիմակցին, այլ անձամբ
զանձն վտանգէ. կամ որպէս ապառաժ ընդ ապառաժի բաղ-
խեալ երկոքին եւս փշրին կամ անտեղիտալիք մնան։ Ի
յաջողուած մեծամեծ իրաց՝ ուժոյ և զօրութեան պէտք են,
արդար և ստոյգ. այլ քան զհրաշագործութիւնս՝ մեծագոյն
զօրութիւն եցոյց Քրիստոս, որպէս ասաց ոմն, զհեզութիւն
իւր։ Առ ոգորել ընդ ամբարտաւան փարաւոնի, և առաջնոր-
դել խստամբակ որդւոց Իսրայելի, պէտք էին Մովսիսի. և
«Այրն Մովսէս՝ հեզ էր քան զամենայն մարդիկ», վկայեաց
Գիրն, և թէպէտ թոթով և զանգիտող՝ յամենայնի յաջողե-
ցաւ. իսկ ուր երբեմն զայրացաւ հոգին հեզ և գառնացաւ ի
վերայ խստապարանոց ժողովրդեանն, թուլացաւ և ամե-
նարուեստ գաւազանն, և ի դոյզն դրդուել սրտին՝ ըմբոս-
տացեալ կառեալ կացին և ջուրքն վիմաբուղխքն՝ մինչեւ ի
կրկնումն բաղխման, և ինքն վասն զամ մի կարճմտութեանն՝
յետ քառասնամեայ դեգերանաց յանապատին՝ հասեալ ի
սեամս երկրին աւետեաց՝ արգելաւ ի մտից։

Մի բարբառ անհամբեր, ձայնարկութիւն մի անարգել՝
յորքան բարեաց վրիպեցուցանէ զառաքինիս. մի ժամու

ցաստումն զՈրբան ամաց վաստակս ի դերեւ հանէ. «Ասա, ասէ բանսարկուն, բան ինչ ի Տէր, և վախճանեաց». այլ ողջախոհ համբերատարն Յոբ՝ չասէ և զմին զայն բան, այլ զհակառակն. «Եթէ զբարիսն ընկալաք ի ձեռանէ Տեառն, » չարեացն ո՞չ համբերիցեմք»։

Մեծահրաշ եւս աքանչելիք հեզութեան զօրհանապազ առաջի կան մեզ և ներգործեն՝ այս գոգչիր երկու հազար ամք են վարդապետութիւն ասողին ուսարուք յինէն զհեզութիւն, ծաւալեալ յիւրոց առաքելոց և նոցին աշակերտաց՝ նովին հոգւով և բանիւ հեզութեան՝ սփռեցաւ ընդ ամենայն տիեզերս, հնազանդեցոյց զտգէտս և զիմաստունս, մինչ բռունք աշխարհի՝ ամենայն լեգէոնօքն, սպառնալեօք, զինուք և տանջանարանօք, հրով և սրով՝ իբրեւ ամեհի ալիք յարձակեալ հարեալ զաւազն ցածուցեալ մածեալ, յետս յետս նահանջաբեկ ամօթապարտ փչրեցան լքան լուծան. անպարտելի պետութիւնքն՝ խորտակեցան, տեղի ետուն, անհետացան՝ առաջի հեզաշունչ, հեզաքայլ աշակերտացն Յիսուսի, յառաջեաց աւետարան ընդ ոլորտս աշխարհի, յորմէ անկաւ իշխան նորին, և խաչն կանգնեցաւ ի բարձրութիւնս երկրի և թագաւորաց նորին։

Յայս առաքելաշաւիղ ճանապարհ հեզութեան ուղղեալ են և ոտք մեր՝ վարդապետացս ապաշխարութեան. ո՞ տայր և հանապազ նովիմբ յառաջել և առաջնորդիլ. նովիմբ հոգւով կարդալ առ ամենեսին զքաղցրաձայնն եկայք առ իս, առ Յիսուս, և եթէ բարկանալ ինչ հարկ լինէր՝ առ բանսարկուն էր ի գէպ ասել զերթ յետս իմ. և զապաժոյժ ինչ բան բերանոյ կամ սրտի՝ ամփոփել սրբել յառաջ քան ըզմտանել արեգական, զզջանալ յանկողնի, յառնել հաշտ անձամբ յանձին և ընդ ընկերաց, և ջանալ յամենայնի հաշտ լինել ընդ Աստուծոյ։

Գ

Ամենայն տնտեսութիւն բարոյական կենաց մարդոյ՝ յանգի ի կատարումն կամացն Աստուծոյ. «Հայր մեր, եղիցին կամք քո, որպէս յերկինս և յերկրի». այս է սկիզբն և աւարտք փրկութեան օրինաց. և ի գլուխս յաւիտենիցն դրպ-

ռութեանց գրեալ է. «Առնել զկամս քո, Աստուած». և առնել՝ ոչ որպէս երկինք և երկիր՝ թէպէտ և անվրէպք՝ բայց անիմացաբար առնեն, այլ ազատութեամբ և հաւանութեամբ կամաց. որով ոչ միայն գովութեան արժանի լինի մարդս՝ այլ և յաւիտենական վարձուց. յայտ է թէ և հակառակն սորին՝ դրժել կամացն Աստուծոյ յաւիտենական կորստեան. քանզի անարգանցութիւն այլայլէ եղծանէ զչինածն և զսահմանեալն Աստուծոյ, եթէ օրէն իցէ ասել, և նախ քան զԱստուծոյն՝ անձամբ անձին խռովութիւն և եղծումն գործէ մարդ՝ ի ներքին իւր և յարտաքին. շատ է մեզ առ այս յիշել ըզնախածնոցս մեր՝ գամ մի յառաջ քան զճաշակ բաղդավճիռ պտղոյն և գամ յետոյ. որպիսի՞ նախ զմայլական հեզութիւն, հանդարտութիւն, չնորհափայլութիւն ի նոսա. որպիսի՞ խռովութիւն, վրդով և ապաշնորհութիւն՝ յետոյ։ Որդիք նոցա եմք և մեք, և ժառանգք ապականելոյ բնութեանն. քանի՞ ապչութիւն ունի զմարդ՝ յորժամ թէ զաստուածահրաման սահմանօքն՝ որ հլութիւն և հեզութիւն է՝ զանց առնիցէ. Աստուծոյ ստունգանել ապստամբել կարծի, այլ յինքեան կրէ զապստամբութիւն կրիցն և կամաց, և բողոքէ գիտակցութիւն զքակտումն յարմարութեան իւրոյ ընդ անձին ընդ տիեզերաց և ընդ Աստուծոյ յարդարողին և յարմարողին իւրոյ և նոցա։

Մի՞ ոք համարիցի գտանել նոր ճանապարհ կենաց մարդոյս՝ քան զոր ի սկզբանէն՝ զկամաց Աստուծոյ. որում՝ մարթ է հակառակել, այլ ի տոյժ և ի վնաս անձին. զի և մինչ շահել ինչ յուսայր՝ իսկոյն ի վերայ հասանէ խաբէութիւնն, և աւա՜ղ, եթէ վհատեալ կամ յամառեալ կացցէ ի նմին։ Ապաքէն առ հաճոյս առ սէր անձին գործէ մարդ զոր կամին. այլ բազում անգամ քան զանձին՝ մեծարէ ըզկամս այլում, և առ սէր նորին զիւր իսկ զանձն մատնէ մինչեւ ի մահ։ Եւ ո՞ առաւել սիրելագոյն գուցէ մարդոյ՝ քան զարարիչ իւր՝ յորմէ զինքն ունի՝ ամենայն լրիւն արարածոց. որք համօրէն միաբարբառ (եթէ չիցեն նորա խլացեալ ներքին ականջք, միտքն, բանն) աղաղակեն. Սիրեա զԱստուած, սիրեա զհաստատիչ քո, լուր նմա, հեզացիր, և գտցես զամենայն բարիս, ժառանգես զերկիր՝ ի կեանս քո, և զերկինս՝ ի հանդերձեալ երանաւէտ կեանս, մի՞ վարանիր, մի՞ մոլորիր՝

եթէ դժուարին ինչ կամ ծանր երեւի քեզ, առ մուտ ընդ
լծովն Յիսուսի, և ամենայն դիւրանայ, զամենայն չահիս.
իմա՛ և ասա ընդ հաճելւոյն Աստուծոյ, « Բայց միայն Աս-
» տուծոյ հնազանդ լեր, ա՜նձն իմ ». և կեցցես յանդորրու։

Փրկիչն մեր ի մի բան զուգեաց զսկիզբն և զկատարած
օրինաց իւրոց. ի նախադրութեանն, « Հայր մեր, եղիցին
» կամք քո ». և ի վերջայսն՝ յանբաւ և յանհաս տագնա-
պոշական պահուն, « Հայր.. ոչ իմ կամք՝ այլ քոյդ լիցին ».
և այն անբաւածաւալ սիրտ քան զովկիանոս ալէկոծեալ ընդ
մէջ աստուածութեանն և մարդկութեան, անդէն ի նմին
վայրկենի հանդարտէր լծակցութեամբ երկոցուն կամացն.
եղիցի՛ն կամք Տեառն, այս են այբուբենք քրիստոնէի, և ա-
ռաջին ուսումն այնորիկ՝ որ կամաւ հրաժարեաց յաշխարհէ
և ի դրան մենաստանին յոր եմուտ՝ ընթադրեաց զկամսն,
և զօրհանապազ զնոյն ունի կրկնել առ ոտս խաչին։ Եւ զի՞նչ
զարմանաց իցէ այս, մինչ երկինք և երկիր մինչեւ ցգիծ մի
ոչ ստունգանեն ի կամաց անտի. ասացից և յանդգնագոյնս
եթէ ներեսցի ասել. զի և Աստուած անչափին և անսահման՝
ի չափու կամաց իւրոց կայ. և յորժամ Բանն՝ որ ի սկզբ-
բանէն՝ մարմին եղեւ, Աստուած Աստուծոյ ասաց՝ եղիցին
կամք քո. և կոյսն որ զանբաւելին պարագրելոց էր յանձուկ
ծոցին, նմանապէս ինն ասաց, եղիցի ինձ ըստ բանի քում։
Արդարեւ անհնարինքն հնարաւորք են աստ առ յԱստուծոյ.
Աստուած հեզացաւ և խոնարհեցաւ։

Իսկ դու զի՞ գործես, եղբայր, յորժամ եթէ բերան մար-
դոյ յաստուածակոյս կողմանէ հրամայիցէ քեզ բան մի, և
դու յողայցես, խորշիցիս, պատճառանս պատճառիցես, զան-
դաղիցիս ասել զԵղիցին, որպէս թէ կամելով ընտիր առնել
ընդ քո և ընդ Աստուծոյ կամս, կամ կշռել զսա՝ ծանրա-
կի՞ր իցէ՝ եթէ փոքրրոգի։ Վա՜յ հիքութեանս մերոյ. և որպի-
սի՞ ինչ իցեն հրամայեալքն. — յաճախ այնպիսիք՝ զորս
խայտալով և խնդալով յանձն առնուն և կատարեն նորընծայքն ի կրօնս. և քո իսկ թերեւս արարեալ իցէ յայլում
նուագի. — փոքր ինչ վաստակ, փոփոխութիւն պաշտաման
կամ տեղւոյ, գործք քահանայական և վարդապետական աստիճանիդ, զորս ուխտիւք և երդմամբք յանձն առեալ էր քո։
Եւ թերեւս ոչ միայն ընդ հրամայեալսն քեզ դժկամակիցիս,

այլ և որ առ այլսն, իբրու թէ ոչ ըստ տեսութեան և գի-
տութեան քո կարգեցան այնոքիկ, և յանդգնեալ դատիցես,
գուցէ և դատապարտել զհրամանսն և զհրամայողն և զընդունող հրամանին։ Այդպիսի կիրք և բանք՝ աշխարհայնոց
անգամ չեն վայելք, թող թէ անձնուրաց միանձին. որում
անկ է հանապազ յիշել ի յեղյեղելն ի տէրունական աղօթսն,
զի բերանով առաջնորդաց եղիցին կամքն Աստուծոյ. և քեզ
անկ է արթուն և պատրաստ լինել ընդ Սամուելի և ասել,
« Խօսեա՛ց, Տէր, զի լուիցէ ծառայ քո ». և ընդ հարիւրապետին լսել, երթ, և երթայ, եկ՝ և գայ, արա՛ զայս՝ և առնել։ Այլ ոչ ումեք յաջողեսցի լսելութիւնս այս, մինչեւ թէ
ոչ յօժարեսցի հեզանալ խոնարհել՝ իբրեւ մանուկ մի տղայ,
ի տղայոց Յիսուսի, որոց յայտնեաց Հայրն զգիտութիւն իւր
և զժառանգութիւն երանութեանցն, որք աւուր աւուր, ժամու ժամու սիրով ողջագուրեն զխաչն՝ զոր միանգամ բարձինն՝ իւրեանց իսկ կամօք, և ի նոյն բեւեռեցին զկամս իւրեանց։

Ո՜հ, յորժամ գնէ որ զգլուխ իւր բազմահոգ ի փայտն այն
զգաստութեան, ի գործին և յանօթ Յիսուսի, կարիցէ՞ այլ
ինչ ածել զմտաւ, բայց զցածնուլն և հեզանալ։ Ո՜վ լծակ
հրաշակերտ, որով խոնարհին սիրտք վերամբարձք, և վերամբառնան վայր իջեալքն գիտակցութեամբ տկարութեան իւրեանց։ Ո՜վ ձեռն գթութեանց Քրիստոսի, բարձրացո՜ զնըժարդ այդ խոնարհութեան՝ յոր արկանեմ արդ միւսանգամ
զսիրտ իմ զառաձեալ վայրապար հեթեթանօք. տուր ինձ
ճանաչել քաջ զոր եմս, տկար, մեղմեխ, նուաստ և ոչինչ,
համբուրել զլուծ քո և զիմ՝, առնուլ զճաշակս քոյինուսոյց
հեզութեան, ժառանգել աստստին զառհաւատչեայն, և անդ
յերկինս՝ զլիութիւն երանութեանց քոց։

Ե

ԵՐԱՆԻ՝ ՈՐ ՔԱՂՑԵԱԼ ԵՒ ԾԱՐԱՒԻ ԻՑԵՆ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ, ԶԻ ՆՈՔԱ ՅԱԳԵՍՑԻՆ·

Զի՞նչ այս լաւութիւն զարմանալի, որ յառաքինանալն՝ պահանջի քաղց և ծարաւ, և ի կատարմանն՝ յագուրդ։ Յերանութեան հեզոց՝ ուսաք ցածուցանել զամբոխ յուզմանց կրից, զցասումն և զցանկութիւն, զիջանել առ ընկերս, և անհակառակ միակամել ընդ Աստուծոյ. ոչ ըստ բնութեան բերմանց զանձն պաշտել, այլ որ ինչ արժանն է տալ նմա, նոյնպէս և զպատշաճն՝ առ ընկերս, և զյօժարութիւն կամացն՝ առ Աստուած։ Եւ այս զի՞նչ էր, եթէ ոչ Արդարութիւն գլխովին՝ առ անձն, առ ընկերն և առ Աստուած, և սովին ճանաչել զՊարտս. ուրեմն Պարտքն են մեզ Արդարութիւն, ըստ զանազան վիճակաց կենաց՝ առանձինն որակօք. որպէս զի, ոչ ամենայն արդարութիւն՝ ամենայն մարդոյ պարտք, և ոչ ամենայն պարտք՝ ամենեցուն արդարութիւն. այլ իւրաքանչիւր արժանն ի գործել՝ այն իցէ պարտք իւր և այն արդարութիւն։

Իսկ անձանց նուիրելոց ուխտիւք առ Աստուած՝ առ որս յաւէտ ձգի երանութիւնս այս, վեհագոյն պարտք են ուժգընակի փափագանօք և ջանիւ նկրտել ի խրատս Քրիստոսի, զոր օրինակեաց ի քաղց և ի ծարաւ արդարութեան. և ըստ այժմ՝ կրկին դէմս նկատեմ յերանութեանս յայսմիկ. ըզՊարտս մարդոյ՝ ըստ սեփական իւրում վիճակի կենաց, և զՊարտս յօժարութեան անդուլ ի լաւագոյն եւս կատարումն նոցին, որ զարգացելոցն է սահման։ Ընդհանուր պարտք են մեզ կրօնաւորացս նախ, կարգք և օրէնք կենաց՝ զոր ընտրեցաք պահել մինչեւ ի մահ. և առանձինն հրամայեալքն միոյ միոյ, որպէս շարժական կամ պատահական իմն պարտք։ Երկրորդ՝ որ և տիրապէս Արդարութեան քաղց, եռանդն և ճիգն կատարելապէս լրման պարտուց, իբրեւ անյագօրէն բերմամբ, մինչեւ տացի յագուրդ առ ի վերուստ։

Ա

Անհրահանգ ազատութեան կամաց՝ բեռն իմն ծանրակիր թուին պարտքն. այլ որ քաջ քննիցէ զչափ բնութեան իւրոյ՝ որ յեռեալ կապեալ կայ օրինօք աստուածայնովք և մարդկայնովք, որ յամէ ի վերայ հասանել՝ եթէ ամենայն բանականաց հարկ ի վերայ եղեալ են պարտքդ, զոր միաձայն ազգեն բանն և կրօնք առհասարակ, և հերքեալ զհեթեթանս մտաց՝ յայտ առնեն, զի Պարտք ոչ միայն չեն խրատուիլ ինչ կնճռադէմ ճակատագրի կամ հարստահարութիւն բռնաւորի, որ իբրեւ զվզէ կալեալ վարիցէ ի ծառայութիւն, այլ՝ լուծ է դիւրիչ տաժանելի կենաց, և ըստ քրիստոսեան կրօնից՝ գործի թեթեւաբեռնութեան, քաղցրութեամբ ընտելացուցանելով զանզուսպ ազատասիրութիւն՝ ընդ ճանապարհ հեշտ և անկասկած։ Զամենայն զոր և տեսանեմք և իմանամք յերեւելիսս և յաներեւոյթս, ի նիւթականս և յաննիւթս, ոչ կարեմք ըմբռնել և զանազանել՝ առանց ընդաբոյս իմն ընտրութեան մտաց, որ է օրէնք և պատշաճ իւրաքանչիւր էակի. և է այս բարոյական պարտք անյեղլի, առանց որոյ չէ մարթ գոլ և կալ նոցին, և զի են և զոն՝ ապա ընդ անհրաժարելի օրինօք կամ պարտուք գրաւեալք են, զոր ի դէպ է և յաւիտենական կոչել. և զամենայն էսս յեռեալս յարմարեալս իրերաց, և զմարդս ի միջի նիւթականացն և աննիւթից, ընդ մէջ անբանից կենդանեաց և պարզապէս հոգեղինացն. որում հարկ է կալն և գործել ըստ իւրում էութեանն, և գործելն յօժար և ուղիղ։

Իսկ արդ, ուստի՞ իցէ կարծեցեալն կամ զգացեալ ծանրութիւն և բեռն պարտուց, դժուարութիւնն և դառնութիւն։ — Ոչ այլ ուստեք թուի ինձ՝ բայց ի չճանաչելոյ զանձն և զընկերութիւն, զօրէնս աստուածայինս և զմարդկայինս, և ի տգիտութենէ՝ պատշաճապէս գործելոյ. կամ ըստ անոպայ և ամեհի անասնոց կամելոյ լծընկէց լինել և անգամ թեթեւատարին որ ի Յիսուսէ հնարելոյ. սոպո և յամառ ազատասիրութեամբ անզգայաբար խանգարելով ըզներդաշնակութիւնն և զդասակցութիւն իւր ընդ համաբնսն և ընդ գերաբնս։ Այնքան մեծ իրք և օգուտ են պարտք ի

կեանս անձին և առ կենցաղակիցսն, և այնքան մեծ ՀԱՍ աղիկամի լուծումն նոցին։ Օրհնեալ է Յիսուս, որ ծանոյց մեզ՝ զպարտս մեր լինել արդարութիւն, որով երկինք և երկիր վարին, և Աստուծոյ՝ ըստ մարգարէական բացաձայնութեան, « Յիրաւունս և յարդարութիւն հաստատեալ է աթոռ նորա ». և այնու « զմարդիկ և զանասուն՝ կեցուցանես դու, Տէր ». և մարդկան՝ որոց ետուր ի վերայ երկրի հաղորդ լինել տիրականդ իշխանութեան, պատուէր ի վերայ եղեր՝ սիրել զարդարութիւն և այնպէս դատել զերկիր։ Զայս և արտաքին իմաստունքն ծանեան վեհագոյն լաւութեանց, և զընտիրն ի մարդկանէ՝ կոչեցին արդար, թէպէտ և ոչ հանդուրժեցին վարուց նորա, այլ և զարանակալք եղեն, զի ուղղութիւն նորա յանդիմանութիւն էր իւրեանց խոտարմանն։ Վասն այսորիկ յաճախագոյն լսեմք ի Ս. Գիրս՝ ըզգովութիւն արդարութեան. « Աչք Տեառն ի վերայ արդարոց, և ականջք նորա ի վերայ աղօթից նոցա. — Կարդացին » արդարք առ Տէր, և Տէր լուաւ նոցա. — Ոգիք արդարոց » ի ձեռին Աստուծոյ են, և ոչ մերձեսցի ի նոսա մահ »։

Ըստ այսմ և աստուածապաշտք և քրիստոնեայք. զհաւատարիմսն յամենայնի ի պարտս իւրեանց կոչեն սուրբս և արդարս։ Յապականել երբեմն բարուց առ հասարակ մարդկութեան և ի վերայ հասանել համաշխարհական պատուհասին, ազատն յապականութենէ և ի պատուհասէ՝ կոչի « Այր արդար, կատարեալ յազգի անդ իւրում. — բազմահանդէս նահատակն համբերութեան՝ Յովբ, դրուատի, զի « Էր այրն այն ճշմարիտ, անարատ, արդար, աստուածապաշտ »։ Նախաշաւիղք եկաւորութեան գերագոյն Արդարոյն՝ գովին, զի էին արդարք երկոքին (Զաքարիա և Եղիսաբեթ) առաջի Աստուծոյ, և ընծայեցին զանուանեալն կարապետ Աբեգական արդարութեան, զորոյ սպասաւորութիւն առ ինքն և զիւրն առ համօրէն մարդկութիւնս՝ Տէրն մեր Քրիստոս ասաց, « Այսպէս վայել է մեզ լնուլ զամենայն արդարութիւն ». և յորժամ կանխեաց ընտրեաց իւր մայր զամենեւին անբիծն և ողջախոհ կոյս, ընտրեաց նմին այր և իւր հայրազիր զՅովսէփ, քանզի արդար էր։ Ոչ ինչ են կամ ոչ ընդ երկար զօրէն իմաստութիւն և հնարագիտութիւնք մարդկան առանց արդարութեան. իսկ արդարութիւն թէպէտ և տգիտի և

ռամկի՝ փրկէ և կեցուցանէ։ Բազմահնարն Աքիտոփել՝ որոյ « խորհուրդք՝ որպէս թէ հարցանիցէ ոք բան յԱստուծոյ », քանզի ոչ ունէր զարդարութիւն Աստուծոյ՝ ի տագնապի պահուն՝ հանդերձեալ զէշ իւր փութայ երթայ խեղդ անձին արկանել. իսկ կաղն յոտից և անդարման ի վարսից Մեմփիբոսթէ, զի խոնարհ էր և արդարախոհ՝ չնորհ զտանէր ի Դաւիթէ, զոր միւսն դաւաճանել թելադրէր։ Եւ համօրէն ասել ընդ Զօրաբաբելի, « Մեծ է երկիր, բարձր են երկինք, » և երագընթաց է արեգակն (այլովքն հանդերձ), այլ ճըշ- » մարտութիւն (որ է արդարութիւն) մեծ և զօրաւոր է քան » զամենեսեսեանս. կայ և մնայ... և իշխանութիւն նորա յա- » ւիտեանս յաւիտենից »։

Թուիցիմ արդեօք անդրավազեալ զսահմանաւ բանի խորհրդածութեանս, ձգեալ ի չնորհաց արդարութեան. այո. և զինչ ընդ այս զարմանք, եթէ զուգակիցս այս ճշմարտութեան՝ սքանչացոյց, սրբեաց, գերեաց զմիտս և զոգիս վեհից և հզօրաց, որպիսիք Յովբն և Դաւիթ, Սողոմոն և Սիրաք, մարգարէքն և Առաքեալք, և ամենայն աստուածախոհ հոգիք։ Ո՞ տայր և մեզ զմայլել յարել յիմաստ սորին, ճանաչելով պատուղ նորին զպարտուց կատարումն։ Եթէ չքնաղք են մեզ արդարեւ վարք և փառք արդարոցն, ցանկալի լիցին և գործք արդարութեան, կարգք և հրամանք պարտուց մերոց՝ որք կտակարանք են կրօնիս և դաշն ուխտի մերոյ յաւիտենականի, որով կայր մեզ յանդիման լինել յատենի Աստուծոյ. զիր կենաց՝ եթէ պահիցեմք զայդոսիկ, վճիռ մահու՝ եթէ զանց առնիցեմք. քանզի և ամենայն առաքինիք՝ զոր յիշեցաք և զոր ոչ. այսպէս « Գործեցին զարդարութիւն, և հասին աւետեաց »։ Մի ումեք փոքր ինչ և արհամարհ թուիցի ի նոսին, զի մի ընդ լուծողս փոքունցն կարծեցելոց պատուիրանաց՝ արտաքս անկցի յարքայութենէն Յիսուսի։ Ամենայն կարգք և օրէնք զոր միանգամ յանձն առաք՝ կատարումն, պահանջեն ի մէնջ, և ոչ եւս քննութիւն, ոչ խըորութիւն ընդ մեծ և ընդ փոքր, կամ ընդ այժմուս և առ յապայն, զի մի յանկարծակի հասեալ Տեառնն՝ անպատրաստ գտանիցէ զմեզ. այլ արթունս և կազմս ի կատարման պարտուց քրիստոնէի և կրօնաւորի, և առանձինն ի սպասս Տիկնոջ և մօր իւրոյ՝ որում որդեգրեցաքս։

Ո՜վ, որպիսի՜ և որպիսւոյ որդեգրութիւն։ Հիացումն և ամօթ, սխրանք և երկիւղ ունին զիս յայս յիշատակ. գոչեցի՞ց արդեօք՝ ծածկելով զերեսս իմ, ի բա՜ց դարձիր յինէն, Մայր, զի որդի անարժան եմ քո, եթէ գոյր հնար թաքչել յաչաց և ի գրկաց այնպիսւոյ մօր, որ զամենայն հաւատացելովք փարի, և սնդագոյն եւս զնուիրելովք նմա ի մանկութենէ և ուխտիւք. արդար և մեղաւոր՝ եթէ միայն յոյս ունիցի՝ ամենուրեք շրջապատի յամենահաս գրկաց անտի. առ որս՝ յորպիսի և իցեմք կարգի շնորհաց կամ ապաշնորհաց՝ դարձցուք և անկցուք, ասելով. Ուստ մեզ, ո՜վ մայր, զարդարութիւնս քո և զարդարութիւն Յիսուսի Միածնի քո։ Աւադիկ նա ինքնին յետին շնչովն կտակէ մեզ և յորդորէ, « Ահա մայր քո ». և առ քեզ՝ « Ահա որդի քո ». ո՜վ ամենակատարդ պարտուց և պատուիրանաց Աստուածորդւոյդ, անհնար է քեզ անցանել և ոչ զմիով նշանախեցիւ կտակի դորին. ապա ժողովեա զմեզ՝ ոչ միայն ընդ թեւօքդ, զի կատարեսցուք զհասարակաց պարտս մեր, այլ և ի թեւսդ, զի կատարեսցուք և զառանձին իւրաքանչիւր յանձնեալ մեզ պարտս, որ է միով բանիւ՝ Հնազանդութիւն։

Բ

Հնազանդութիւն, հանապազալուր քարոզ ի վանորայս. առաջին տարր և յօդ միաբան կրօնաւորութեան։ Արկեալ միանգամ և այժմիկ զայս ձայն ի հոգեւոր ակըմբիս, ոչ գիտեմ զի՞նչ նոր ինչ ազդել ի լսելիս գիտնոց, կամ զի՞արդ զհինն՝ նոր յերիւրել՝ ի հաճութիւն և յօգուտ։ Ո՞ւր ես պարագլուխդ միանձանց, կենդանութիւնդ յաւիտենից մեռելոց անապատից, նախաշաւիղ կրօնից մերոց, և հայրդ Անտոնիէ, և ո՞ւր քո հետեւողք և նմանիք, Մակարք, Պիմենք, Նեղոսք, Եւագրեանք, այլովք բազմօք հանդերձ, զի հոգիաշունչ շըրթամբքդ կրկնէիք մեզ զճառս կատարեալ կենաց կրօնաւորութեան, յորում նախաշար դասեցէք զՀնազանդութիւն ի կարգս ուղղութեանց, բացատրելով, և եթէ իշխեցիս ասել, ընլով զպակասութիւն աւետարանին Քրիստոսի, և նոր աւանդելով աստուածասիրաց պատգամ զայս։ Դուք խօսեցարուք յոգիս սիրողացդ ձերոց, մինչդեռ յետնեալս յաշակերտութեան ձերում թոթովեցիք բանս ինչ ի ներողամիտ լսելիս։ Մի՛ և ձեզ ծանր թուիցի, եղբարք պատուականք, յետ ամենայն գիտութեանց և զարգացեալ հասակի, մի անգամ եւս տղայանալ, ոչ ընդ իս կամ ըստ իս, այլ ըստ անմեղացն և պարզամտաց ի Տէր, զիշանել վերադառնալ յամսն առաջինս, և խփեալ առ վայր մի զմատեանս՝ վերառնուլ զպնակիտն նորընծայութեան ի կրօնս, լսել, հեգել, յօդել հեզաձայնութեամբ Յիսուսի զՀնազանդութիւն։ Շատ է այս ձայն՝ զգաստից կրօնասիրաց՝ ի յուշ և յիմացուած ամբարելոց ի նմին խրատուց, տեսութեանց և սքանչելեաց իսկ, ընդ որս սքանչացեալ է և մեր, եթէ ոչ անձամբ յանձինս, այլ յայլս տեսանելով և լսելով, և նախ քան յայլսն՝ ի նոյն ինքն ի Տէր և ի վարդապետ մեր Յիսուս Քրիստոս։ Որ ինքնին յօրինակ մեզ հրամայեաց զինքն՝ լինել հեզ և խոնարհ, և աւետարանաւ իւրով եցոյց և Հնազանդ, ցորչափ ընդ ծնողական իշխանութեամբն կայր սխրալի վկայութեամբ, եթէ « էր նոցա Հնազանդ »։ Փորձեսցէ արդ իւրաքանչիւր ոք զանձն իւր, յո՞ր չափ ուսման գիտութեանս յայսմիկ հասեալ իցէ, և զարգասցի ի նոյն. զի ոչ որպէս զայլս ի լաւութեանց ըստ պատեհի և ժամանակի է սա, այլ մշտնջենաւոր, հանապազօրեայ է կրթութիւն սորա. և որպէս զուգակիցն Աղքատութիւն՝ ոչ ըստ չքաւորութեանն է գովելի՝ այլ ըստ կամաւոր յօժարութեանն, այսպէս և Հնազանդութիւն՝ յամենայն ժամ պատրաստութեանն՝ ի մերկանալ զկամս անձին և զգենուլ զհրամայողին կամ զհրամանաց։

Դիւրին և ոչ դիւրին է այս գործ. հեշտընկալ է լուծն՝ սիրողացն, այլ առ երանութիւն մեծ ինչ և դժուարին եւս պահանջի. քաղցր և անգորրիչ է լսել « Ազնիւ ծառայ, » բարի և հաւատարիմ... մուտ յուրախութիւն Տեառն քո ». այլ երանութիւն այնմ է՝ որ կարիցէ ասել, « Զամենայն զոր պարտն էր առնել՝ արարի »։ Իսկ որ անհաւատարիմ գտանիցի ծառայ՝ ի նմին Տեառնէ առաքի ի խաւարն արտաքին։ Քանի՜ ահաւոր և թաղծագին մերժումն. քանի՜ քաղցր և սրտահեշտ հրաւէրն՝ Մուտ յուրախութիւն։ Զի՞ աստանօր ընդմիջնաշաւիղ պողոտայ. չի՞ տեղի բաղբաղանաց։ Հնազանդութեան հրաման պարզ է և յստակ, այնպէս պահանջի և կատարումն. յայլս առաքինութեանց՝ գոյ ինչ աղօտ նըշ-

մար ինքնակամ՝ ներգործութեան. աստանօր՝ յայլոյ կամս է ապաստան գործ հնազանդողին։ Դուիրումն մեծ է հնազանդութիւն, որ ոչ միայն պատարագս պահանջի, այլ և պարարակս յողջակէզ, այնու հրով՝ զորմէ ասաց Քրիստոս. « Հուր եկի արկանել յերկիր ». եթէ յօժարութեամբ ընդունիս յոգւոջդ՝ զհուրս այս, բորբոքիս՝ ըստ մարենայն և մնաս անկէզ անծախ. ապա եթէ կարկամեալ կամօք ազազուն սրտիւ, խանձէ կիզու լափէ ծախէ զքեզ։

Աղէ, դարձիր միւսանգամ, հայեաց ընդ անապատս և ընդ վանորայս. քանի՞ բիւրք իցեն միաբանից եղբարց և քերց դիմեցելոց առ լուծս այս, մտելոց ի բովս յայս. նոքա են արքն հզօրք և կանայք իմաստունք՝ որք խաղացին ընդ հրոյ կիզանողի և ընդ հրոյ հանգուցողի. մերժեցին զհուր անձին կամաց և ջեռմանց, և վառեցան երկնաբեր հրովն Յիսուսի. նոքա են որ միամտութեամբ բուռն հարկանեն զմահէն և ոչ դառնան հայել յետս. խաղան գնան աներկմիտ զհետ յառաջընթաց կոչողին, որ անդադար գնայ և զհետ կոչէ զհլուս։ Լուաք և զհետ եկաք և մեք ձայնի նորա. երթիցո՞ւք հանապազ և անխոտոր. զի աստուածային է և ձայնն և չաւիղն և ազարակն. և նոյն ձայն լսի ի բերանոյ առաջնորդին ի վաներդ, և ամենեցուն են պարաք լսել և առնել. « Ամենայն » անձն, ասէ Առաքեալն, որ ընդ իշխանութեամբ է, ի հնա» զանդութեան կացցէ, զի ոչ ուստեք է իշխանութիւն՝ եթէ » ոչ Աստուծոյ՝ և որ ենն՝ Աստուծոյ կարգեալ են. այսու» հետեւ որ հակառակ կայ իշխանութեան՝ Աստուծոյ հրա» մանին հակառակ կայ. և որք հակառակն կան՝ անձամբ » անձանց դատաստանս ընդունին »։ Եթէ յայսր վերայ խընդրիցէ որ փաստս տկարամտութեանն, լուիցէ դարձեալ, « Ունկնդիր լերուք առաջնորդաց ձերոց և հպատակ կացէք » նոցա. զի նոքա աքնին վասն ոգւոց ձերոց, որպէս թէ հա» մարս տալոց իցեն ընդ ձեր, զի խնդութեամբ արասցեն » զնոյն, և մի՞ յոգւոց հանելով, զի այն ոչ յօգուտ ձեր է »։

Եւ զի՞նչ առ այսպիսի վճիռ ունիցիս ընդդիմադրել, մի՞թէ դժուարահաւան. իշխիցե՞ս դատել զառաջնորդ՝ զերեսփոխան Աստուծոյ, որ և զընկերն հրամայեցար չդատել։ Ասիցե՞ս արդեօք, թէ այս առաջնորդ՝ ոչ զորոց աթոռն կալաւ և զիշխանութիւն, ունիցի և զնոցայն չափ կատարելութեան։

Առ այդ՝ սաստեսցէ քեզ գլուխն առաքելոց. « Հնազանդ լերուք ամենայն մարդկեղէն ստեղծուածոց՝ վասն Տեառն ». ապա ո՞րքան առաւել եւս այնմ՝ զոր ոչ միայն Տէր՝ այլ և ինքնին անկեալդ ընդ հնազանդութեամբ ընտրեաց կամ ընկալաւ իւր առաջնորդ և հրամայող. և եթէ չառեր հրաման հանել զչիւղ յականէ եղբօրդ, զիա՞րդ յանդգնիցիս ի գլուխ եղբայրութեանդ. ո՞ւր մոռանայցես զքո գերանն, իցէ թերեւս և այլ ոք՝ որ դատիցի զաւագն և բանք նորա ոչ ստունգանիցէ առ արտաքս. — այդպիսւոյդ արժան է ցիւր իսկ անձն ասել, « Արժա՞ն իցէ առաջի Աստուծոյ քեզ լսել՝ առաւել քան Աստուծոյ », և փոխանորդի նորա։ Ասիցէ և այլ ոք (քա՞ւ ի մէնջ), այդոքիկ հրամայեալքդ չեն վասն մերոցս ժամանակաց. և որք երբեմն կարեւորք՝ ոչ և յայժմուս. — առ որ վաղ իսկ յիշեցուցաք, զի եթէ բան Տեառն է որ հրամայի՝ « բան Տեառն մնայ յաւիտեան ». և ամենայն լոյս պայծառացեալ ժամանակիս և դարուս՝ ոչ բաւէ ծածկել զճրագն վառեալ ի Քրիստոսէ. և զոր Պետրոս և Պօղոս, Անտոն և Բենեդիկտոս, Բարսեղեանք և Փրանկիսեանք ոչ նշմարեցին ի հնումն՝ ոչ յայտնեսցի և ի նորումս։ Հաւատք՝ միշտ ծածկեալ իրք են. նոյնպէս և հնազանդութիւն կրօնաւորաց. հնազանդութեան աչք յառաջնորդն տնկեալ են, ականջք՝ ի հպատակսն. եթէ առաջնորդն կայ յօրինական աթոռն՝ լուսաւոր է հրամանն. ամենայն փաստ և ընդդիմադրութիւն՝ թէպէտ և նուրբ և սուրբ եւս երեւեալ՝ ոչ է ընդունելի Աստուծոյ և նզովեալ յԱռաքելոյ նորա։ Եւ եթէ անձին կամօք փոխանակ պատուիրելոցն՝ ոք այլ և այլ օրէնս ուղղութեանց կատարիցէ և զոհս և ողջակէզ, սակայն, Ընդ (այնպիսի) զոհս և պատարագս ոչ հաճեցաւ Տէր, լսելիս հաստատեաց ընդունակս իւրոց կամաց և ձայնի փոխանորդի իւրում. ոչ խելամտութիւնս և հանճարս խնդրէ Տէր՝ առ ձայն նորա՝ առ ձայն իւր, այլ զԱհաւասիկ եմն Սամուելի, և զԱստուածամօր Կուսին, « Ահաւասիկ կամ աղախին Տեառն »։ Այս բարբառ՝ որ ի սրտէ մտաց՝ կատարէ զբոլոր անուէր պատարագն և զողջակէզ բանաւոր։

Յայտ ուրեմն է յայսքան վկայութեանց սրբոց և աստուածային գրոց՝ զի հնազանդութիւն ոչ քննութիւնս և ընտրութիւնս պահանջէ՝ այլ հաւատս աներկմիտս, որ յանդորրու

պահեն զսիրտ և զխիղճ մտաց. իսկ ստունկանութիւն և դատումն՝ անձամբ զանձն տանջէ խայթիւ գիտակցութեան և ալէկոծէ զսիրտ. և բազում անգամ ըստ Յովնանու ծովընկեց լինի փախչելով յերեսաց հրամանի Տեառն, կամ զանձն եւս իւր մարգարէ ասելով՝ հակառակ մարգարէի Աստուծոյ՝ պատառի յառիւծոյ։ Այս գառաստան՝ եթէ վազ և եթէ անագան, թէպէտ յայտ՝ և թէպէտ գաղտ՝ ի վերայ կայ ամենեցուն որ ընդ լծով հնազանդութեան են և ընդոստուցանեն զլուծ։ Մի շաւիղ է կրօնաւորի, այլ աստի և անտի կան, Գեբաղ և Գարիզին, կամ հնազանդութիւն և օրհնութիւն, կամ անհնազանդութիւն և անէծք. «Հաւասիկ տամ առաջի ձեր այսօր օրհնութիւնս և անէծս. օրհնութիւն՝ եթէ » լսիցէք պատուիրանաց Աստուծոյ ձերոյ... անէծս՝ եթէ ոչ » լուիցէք »։ Երանի՜ որ գնայցէ և կացցէ ի լերին օրհնութեան. լցցի նորա քաղցն և ծարաւ. իսկ որ ստերիւրեալ իցէ և յանիծիցն անկեալ լեառն, եթէ ոչ կամի զանձն ի կորուստ մատնել իսպառ՝ դարձցի՝ յաշակողմն, ի կատարումն պարտուցն անպատճառ ունկնդրութեամբ։

Ի սիրալի վիճի խոնարհութեան Կարապետին ընդ Քրիստոսի, համառօտեաց սա և հաւանեցոյց, ասելով, « Այսպէս վայել է մեզ լնուլ զամենայն արդարութիւն »։ Այսպէս, ոչ զիարդ և պէտ օրինակաւ, այլ որպէս սահմանեալ էր և հրամայեալ, կատարել անվրէպ և համակամութեամբ. որպէս և իսկոյն կատարեցին նոքա, մին զկամսն երկնաւոր Հօրն, միւսն զնորայն՝ զՄիածնին Հօր, իսկոյն, հաճ և հաւան։ Այսպէս վայել է լնուլ կրօնաւորի զպարտս հնազանդութեանն, որ ոչ եւս է այնուհետեւ պարտք, այլ հաւանութիւն երկուստեք, հրամայողին և հրամայելոյն, որով զոգջիր երկաքանչիւր գործակիցք լինին առաջարկեալն խնդրոյ. և եթէ ինչ խտիր և առաւելութիւն միոյն ի յառաջագոյն կշռելն և քննելն է, միւսոյն ի յօժար և փութաջան կատարումն և անթերի կամ լիուլի, ըստ դիտման պատուիրողին և ըստ օգտի այլում՝ կամ այլոց բազմաց։ Քանզի այլ է հնազանդութիւն և կատարումն գործոյ ըստ աշխարհի, և այլ ըստ կրօնի. աշխարհ՝ զչահ իւր և զգործն սոսկ պահանջէ, կրօնք՝ և զկամս գործողին. նա՝ զիւր պէտս հոգայ առնել վայելչապէս, սա՝ առնել առաքինօրէն և վարձս երկնաւորս

ընդունել, մինչ նա զերկրաւորն եւեթ խոստանայ. նորայն չափ՝ սահմանաւոր էր, սորայս անչափական. քանզի յօժարութեան՝ որ է սէր հոգեւոր չիք սահման, թէպէտ և գործն ըստ արտաքին երեսաց՝ յոյժ փոքր երեւիցի, որպէս խերեւէշքն այրոյն, որ ըստ կարի և յօժարութեան նորին գերազանց գտան քան զբազում տուրս մեծատանց՝ ի զանձանակն Աստուծոյ։ Այսպիսի պահանջի հնազանդութիւն ի կրօնաւորէ. « Այսպէս պարտ է լնուլ զարդարութիւն »։

Եւ զի մի տակաւին անուն պարտուց ծանր լսիցի, աղէ՜, արկցուք ի բովս զհնազանդութիւնդ՝ զոր այսքան ստէպ յեղյեղեմք, որպէս չնչոյ առիթ կենդանութեան՝ օգ կրօնական համարելով. որ և, եթէ ներեսցի նմանեցուցանել, ըստ նմին տարերս երկուս յայտնէ. մի տարրն՝ խոնարհութիւն մեռուցանակ, միւսն՝ սէր կենսունակ. և երկոքումբք կեայ հոգի։ Եթէ հնար էր խոնարհութեան առանց սիրոյ լինել, արդարեւ անարգութիւն էր, լուծումն և մահ անձին. և սէր՝ առանց խոնարհութեան, եթէ և այսմ հնար էր լինել, պղպջակ իմն պայծառ իսկ և իսկ պայթելի. իսկ յօգեալք և յեռեալք յիրեար՝ չքնաղ մանեակ պարանոցի և զարդ լանջաց միանձին. կամ դարձեալ, խոնարհութիւն՝ յատակ կրօնաստանի, սէր՝ գմբէթն, զորս ընդ մէջ պարսպեն կանոնք։ Յայսպիսեաց լաւութեանց տարրացեալ Հնազանդութեան՝ հարկ է թէ ոչ միայն թեթեւ՝ այլ և փարելի իցէ. և տեսիլն անգամ հնազանդին, յօժարակամ հնազանդին ասեմ, համբոյր և հաճոյական ընծայի զգաստ աչաց. և քան զարտաքին դիմացն՝ զներքին պարզութեան հոգւոյն արտայայտէ, որ է սրբութիւն. յայս թուի ինձ ակնարկել Առաքելապետն, « Զանձինս ձեր սրբել հնազանդութեամբ ճշմարտութեանն »։ Ա. Պետր. ա. 21։

Կամք՝ ազատութիւն է մարդոյ, և լծակցելն զնոյն յօժարութեամբ ընդ այլում կամաց՝ ընդարձակութիւն և զօրութիւն ազատութեան. չէ ապա հնազանդեալն՝ գերութիւն և կուրութիւն. և որոյ հասուն մտօք յանձն առեալ է զհնազանդութիւն՝ ի բարձրագոյն իմն յոյս կառուցեալ ունի զակն հոգւոյն, և ոչ այնքան գործոցն ունի ուշ՝ որքան վասն որոյ գործէն, գիտելով՝ զի ի կամս սրտին հայի Աստուած, և ի նմին նկատէ զպատկեր իւր, ի կամսն ասեմ մարդոյն,

քան յայլ ինչ զօրութիւնս նորին։ Եւ զի՞նչ են կամքն՝ եթէ ոչ սէր. և զի՞նչ սէրն՝ եթէ ոչ կեանք հոգւոյ. առանց սիրոյ՝ մեռեալ է հոգի. անչահ մեռելութիւն է և հնազանդութիւն ակամայ և անսէր։ Ո՞ր չնորհ էր Աբրահամու հանելն զորդին ի պատարագ և Իսահակայ հանդուրժելն, եթէ ոչ երկոցուն եւս հաւանեալ էր կամացն Աստուծոյ, թէպէտ և մորմոքմամբ զիրերաց աղիս գելուին հայրն և որդին. քան զորս թուէր իմն առաւել զորովեալ հրամայողին, որ յանձն իւր երդուեալ՝ օրհնելով օրհնեցից ասէր զնոսա, և օրհնէր մինչեւ ցապագալի սերունդ նոցա։

Եւ արդ, եթէ այսքան մեծամեծք են գործք և արդիւնք յօժարակամ հնազանդութեան, հարկ է ասել՝ զի և ցանկալ արժան է դմին, ոչ լոկ հաճութեամբ կամ հաւանութեամբ, այլ և փափագանօք և բուռն իմն տենչանօք, որպէս թէ քաղցիւ և ծարաւով բերեալ. որպէս ուսուցանէ Քրիստոս, և այնմ վարձս կշռէ զերանութեանն յագուրդ։ Զոհ և պատարագ է նուիրումն կամաց, հնազանդութիւնն և զոհ ընտիր՝ կենդանին է և ոչ մեռեալն ապա կենդանւոյն ի դէպ է կրօնաւորի զգալ, կրել, անձուկ ունել, հոգալ, սիրել և զգործն և զգործելն. առ որ և նուիրել՝ ոչ միայն զզօրութիւնս իւր՝ այլ և զողջոյն անձնն՝ մահու չափ. ի նախ օրինակն իւր նայելով ի Քրիստոս, «որ Սիրեաց զմեզ, և մատնեաց զանձն իւր վասն մեր». և յառաջագոյն գործով և բանիւ ծանոյց, եթէ «Եկի, ոչ զի զկամս իմ արարից, այլ զկամս այնորիկ՝ որ առաքեացն զիս»։

Բանիւս այսու խրատել զմեզ ոչ միայն զվեհագունի կամս կատարել, այլ և զմեր յատուկ կամս ուրանալ. նա և ի գործս հնազանդութեան և պաշտամանց՝ ոչ ընտրել ինքեան կամ ակն ունել իմիք, մանաւանդ դիւրագունի կամ պատուականի, այլ եթէ հնար է՝ ամենեցուն յետին լինել և երթալ բազմել ի յետին տեղւոջ, ըստ նորին Քրիստոսի ազդարարութեան. ծառայել և ոչ տիրանալ, ոչ պաշտօնատարս լինել այլ պաշտօնատարս, և եթէ ըստ հարկի կամ .կարգի՝ յառաջին աստիճանս հասցէ կալ, յիշել և յայնժամ զպատուէրն, «Մեծն ի ձէնջ՝ եղիցի ամենեցուն ծառայ», խոնարհութեամբն, սիրովն և սպասարկութեամբ, ըստ կարի իւրում։ Իբրեւ յաստուածուստ վիճակեալ նմա պաշտօն՝ այն-

պէս խնամով և հոգալով գործեսցէ. և որպէս յօժարութեամբ ընդունել վայել էր նմա, նովին և թողցէ՝ յորժամ հրաման նոր պատուիրէ, և մի դժկամակութեամբ՝ որպէս ի սիրելւոյ իմնքէ անջատելով և զսրտին պատառ թողլով ի նմին։ Զօրականք եմք Քրիստոսի. ըստ ազգման ձայնի նորա եղիցի մեզ Երթն և Եկն, Արայն և մի առներ. կաց յայսմ կամ յայնմ տեղւոջ. և ել այսր։ Մեծ պատուհաս ի վերայ կայ այլ ընդ այլոյ գործող զօրականի, և մեծ վարձք հաւատարմութեանն՝ քան քաջութեանն ինչ. «Եւ նոքա՝ զի զեղծանելի պսակն առնուցուն, իսկ մեք՝ զի զանեղծութեանն». մի լիցի մեզ որդւոցս լուսոյ՝ հեղգանալ կամ անմտանալ քան զորդիս աշխարհի, և մի յամօթ առնել զզօրագլուխն մեր Քրիստոս։ Տե՛ս, ո՞ւմ զինուորեալդ ես. և ո՞րպէս ընթանաս առ կոչն, առ նշանն, առ դիւրինն և առ դժուարին. զի ոչ է օրէն զինուորի խորել, այլ այնպէս փութալ կատարել ըզհրամանն՝ որպէս թէ վասն այնր միայնոյ զինուորեալ էր։ Բայց Քրիստոս առաւել եւս պահանջէ ի մէնջ, այնքան պատրաստ և փոյթ գնալ գործել, որպէս թէ քաղցեալ որ և ծարաւի ընթանայցէ առ ջուր և առ ոգեպահիկն թոշակ, զի յայսմ իսկ հաստատեաց զերանութիւն արդարութեան։

Ո՜հ, քանի՜ դոյզն ինչ է և համառօտ տառապանք քաղցին և ծարաւոյ, քիրտն և վաստակ առ սեղանոնն՝ որ պատրաստեալ է համբերողաց ի տան Հօրն Քրիստոսի, և քանի՜ կենդանարար և հանգուցիչ աղբիւրն անմահութեան և ուղիք փափկութեան երկնաւորն Եդեմայ. Հռոմ ԺԴ, 17. ոչ ըստ մերս գձուձ ախորժակաց «Կերակուր և ըմպելի, այլ արդարութիւն և խաղաղութիւն և խնդութիւն ի Հոգին Սուրբ»։ Զայս արքայական սեղանոյ և կենսաբուղխ աղբեր՝ իբրեւ ծագիւ մատին առեալ զճաշակ՝ ողջախոհքն հնազանդք, խայտալով խաղան ի վաստակս պարտուց կրօնի իւրեանց և ակնարկութեան հրամանաց. պատրաստք և երագք ի «Լնուլ զամենայն արդարութիւն», որ յանձինս և որ յընկերս և յամենայն մարդիկ, և հանապազ մաղթեն առ Տէր, «Եկեսցէ արքայութիւն քո եղիցին կամք քո». և չիք նոցա դառն և դժնեայ՝ քան տեսանել զանիրաւութիւն և զոչ հաճոյսն Աստուծոյ յով ոք և ուր և իցէ. վասն որոյ եւս քան զեւս աճէ քաղց և ծարաւ արդարութեան ի նոսա. և ժամու ժամու

անձկացեալ մնան լսել զհրաւէրն, «Ո՜ որ ծարաւիքդ էք, եկա՛յք առ իս». և որպէս վիմաբուղխ Ջրոյն գաւազանաւ՝ Խաչիւն Քրիստոսի հարկանեն զապառաժ աշխարհիս և աղբիւր կենաց, ցայտել գոնեա կաթիլս ինչ զովարարս տապոյ հոգեկանի, զի կազդուրեալ ընթանայցեն հատցեն զմնացուած ասպարիզի նահատակութեան իւրեանց։ Ընդ որս և մեք մաղթեսցուք ի կենդանարար աղբերահոս փրկչէն մերմէ. զարթուցանել՝ միանգամայն և լցուցանել ի մեզ զքաղց և զծարաւ Արդարութեան, առհաւատչեայ յաւիտենականացն զմայլական վայելից խոստացելոց։

Զ

ԵՐԱՆԻ՜ ՈՂՈՐՄԱԾԱՑ, ԶԻ ՆՈՔԱ ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆ ԳՏՑԵՆ

Ոչ ոք ի մարդկանէ անգիտանայ զտկարութիւն բնութեան իւրոյ և զպէտս՝ որպիսի և է օգնականութեան՝ ի նմանեաց իւրոց. որպէս ընդաբոյս են կարիք մեր և աղէտք, այսպէս և պէտք զարմանոյ. որոց առաջին՝ Գթութիւն, և արտադրութիւն սորին՝ Ողորմութիւն։ Մարդկան կենցաղ վարի ընկերութեամբ՝ հարկ է թէ և առեւտուր ինչ իցէ նոցին, ոչ չահասիրականն ասեմ՝ այլ մարդասիրական. ոչ միայն առ ի կեալ՝ այլ և առ բարւոք կեալ. և այս ոչ միայն ի ժամանակի, այլ և ի յաւիտեանսն։ Այսինքն, ընդ մարմնաւորին և հոգեւոր ողորմութիւն. զի եթէ մեծ է հոգի քան զմարմին՝ մեծագունի եւս կարօտի ողորմութեան. և այսպիսեաց ողորմածաց՝ առատաձեռնէ Աստուած զիւր անբաւ ողորմութիւնն. որովք՝ որ առ ընկերս՝ չնչէ զառ ինքն պարտս տուողացն՝ յատենի իւրում, ուր «ոչ արդարանայ ամենայն կենդանի», բայց ողորմութեամբն զոր արար։ Քանի՜ ահաւոր է վայրկեանն այն, ամենեցուն յայտ է. այլ կարեւոր եւս է մեզ վայրկեան ներկայիս՝ յոր յետինն այն հաստատեալ է՝ ի գիւտ կամ ի կորուստ։ Զրիատուր են պարգեւք փրկութեան, այլ ոչ ըստ բաղդի՝ միում պարգեւեալ և միւսում ոչ. ոչ վայրապար «մին առցի և միւսն թողցի»։ Պարզաբար եւս ուսուցանէ Փրկիչն մեր, եթէ նա գտցէ ողորմութիւն ի դէպ ժամուն՝ որ յայսմ ժամանակի գտաւ ողորմած. «Տուք և տացի ձեզ». դուք աստէն, և ես անդէն. և որ սակաւն եւս ետ՝ բազմապատիկ գտցէ զփոխարէնն, և տոկոսեօք թափեսցէ զգրականն. իսկ անողորմն՝ յայտ է թէ ոչ գտցէ ողորմութիւն։

Ահաւոր ատեան. անփոխանակ դատակնիք։ Փութասցուք և մեք, եղբարք, քանզի հասարակաց են օրէնքս, քննել զինչ է Աստուծոյ կամէն զՈղորմութիւն և ոչ զզոհ, և զի որպէս յայլ ուղղութիւնս՝ առաւելուլ պահանջի և յայսմ հետեւողն Քրիստոսի անձուկ ճանապարհաւ. զի թէպէտ և ուխտիւք իսկ աղքատք իցեմք, եթէ զհոգին Քրիստոսի ունիցիմք և զաշակերտաց նորին, «կարեմք զբազումս մեծացուցանել», եթէ այսպէս և եթէ այն։ Ապա այն նախ քննելի է, եթէ զինչ իցէ և առ ո՞ ողորմելն. — և առանց յերկար վարանաց՝ գտանեմք այր զընկեր, և անհրաժեշտ ըզգամք զպարտս օգնութեան առ բնութենակիցս մեր, առաւել քան զձեռս՝ ընդարձակ տարածանելով զսիրտս՝ գթութեամբ. ուրեմն եղբայրասիրութիւն լիցի առաջին գիտութիւն Ողորմութեան, և երկրորդ՝ մանաւանդ թէ առաջնագոյն՝ անձամբ անձին ողորմելն. զի ո՞ ոք ոչ գիտէ զներքին կարիս իւր և զհարստահարութիւն հոգւոյ ի մարմնոյն, որ զրկէն և կողոպտէն զնա ի չնորհաց. ամենեւին արժան է ողորմել, հաւուցանել նմա զիւրն, նա և ճգամբք նիւթական մասինն՝ առաւելուլ զչահ աննիւթականին. որով ոչ միայն անձամբ անձին ողորմի մարդ, այլ, եթէ ներեսցի ասել, Աստուծոյ իսկ, թէ ոչ նոր կամ աւելի ինչ՝ գէթ դարձուցանելով նմա անարատ զհոգին՝ զոր ի նմանէն ընկալաւ։ Ցայս երկուս իմաստս ընկերսիրութեան և փրկաւէտ սիրոյ անձին՝ փափագեմ բովանդակել զաւուրս երանութիւն։

Ա

Արդար մարդոյ՝ անհնար է անողորմն լինել, և ոչ անողորմին՝ արդար. ապառաժ է սիրտ որ ոչ գորովի յազէտս ընկերին. և զանձն իւր խաբէ՝ եթէ համարիցի հաշտ լինել

ընդ Աստուծոյ՝ ապախտ առնելով զընկերն. առաքելական է առածն. « Որ ոչ սիրէ զեղբայր իւր զոր տեսանէ, զԱստուած՝ զոր ոչ ետես՝ զիա՞րդ կարիցէ սիրել »։ Ապա որ արդարանալ կամի, որպէս և արժանն պահանջէ, հարկ է նմա փարիլ զընկերօքն, ողորմել նոցա, Ողորմութիւն գիտէ բանալ ելի աղագս և յանկոխ և յանբոյս վայրի. քան զԵաբուզոդոնոսոր չէր ոք խստագոյն, և մարգարէն՝ առ կակղել նուաճել ըզսիրտն այն, « Զմեղս քո, ասէ, ողորմութեամբ քաւեսջիր, և զանօրէնութիւնս քո՝ զթովք տնանկաց »։

Եթէ ամենայն ողջամիտ իմաստասիրութիւն և բնութեանս կարիք՝ հասարակաց համարին զպարտս կարեկցութեան, զառեւտուրն այն գթութեան, զինչ պարտ իցէ առնել որոց սերտագոյնս և սրբագոյնս յեռեալ են ընդ իրեար՝ ընտրութեամբ և վիճակաւ կրօնից. և միանգամայն ընդ Քրիստոսի, զորոյ զհետ երթան։ Քրիստոս՝ զնոր պատուիրան սիրոյն, կամ զնոր սէր պատուիրանին՝ հասարակաց սահմանեաց, այլ և առանձինն այնոցիկ՝ որոց ասացն, « Յայսմ ծանիցեն » զձեզ եթէ իմ աշակերտք էք՝ եթէ սիրիցէք զմիմեանս.. որ» պէս և ես զձեզ սիրեցի ». և սիրելագոյն աշակերտացն բացայայտէ, զի « Պատուիրանն զոր լուարուք ի սկզբանէ, զի սիրեսցուք զմիմեանս ». (Ա. Յովհ. գ. 11). այսինքն, զի տնկակից է ի մարդում սէրս այս, բայց խմբի յախտից կամ ի չարաչար սիրոյ անձին, վասն որոյ իբրեւ պատուիրան նոր աւանդի սիրելն, իբրու նորոգել զհին և զսկզբնական պատուէրն և զընդաբոյս ազերս բնութեանս. քան զոր չիք մեծ և հզօրագոյն կիրք սրտի և հոգւոյ, վասն որոյ և ասի, « Լրումն օրինաց սէր է », նա և Աստուած ինքն Սէր է, և այնու յայտնի յոգիս մարդկան, և նովին ազդէ հաղորդել մարդոյ առ ընկերն. և առաւել քան զողջակէզս և զոհս առ ինքն մատուցեալս ասէ զԱիրելն զընկերն իբրեւ զանձն։ Եւ որք ի կենդանի աղբերէ անտի արբին զգետս սիրոյ, ճոխագոյն ճառեն զայնմանէ։ Ո՞ ոչ գիտէ զվարս և զբանս այնորիկ՝ որ ընտանեբար փարեցաւ զլանջօքն Յիսուսի, և բղխեաց յորդառատ զսէրն՝ և բանիւ և գրով. բացէք ըզկաթողիկեայս նորա, և տեսջիք ծայրալիր վարդապետութեամբ սիրոյ. « Որ սիրէ զԱստուած՝ սիրէ նա և զեղբայրն ». և « Որ սիրէ զեղբայրն՝ ի լոյս բնակէ և գայթակղութիւն

» ի նմա չիք. իսկ որ ատեայ զեղբայր իւր՝ ի խաւարի է.. » և ոչ գիտէ յո՞ երթայ։ Եւ ոչ այսչափ միայն, այլ և այնու « գիտեմք զի փոխեցաք ի մահուանէ ի կեանս, քանզի սի» րեմք զեղբարս. իսկ որ ոչն սիրէ՝ անդէն ի մահուն մնայ »։ (Ա. Պետ. գ, 8)։ Զուգընթաց սիրամուխ արծւոյդ՝ գլուխն առաքելոց՝ պատուիրէ, « Դախ քան զամենայն՝ սէր սերտ ունել ընդ միմեանս. զի սէր ծածկէ զբազմութիւն մեղաց ». և այլուր միով բանիւ, « Ջեղբայրսիրութիւն սիրեցէք »։ Ամոլակիցն Պետրոսի առաքեալն հեթանոսաց, առ ամենայն ազգս պէսպէս բանիւք զնոյն յեղանակէ. « Ամենայն ինչ ձեր՝ սի» րով եղիցի. — Մի՛ ումեք պարտական գտանիցիք՝ այլ զմի» մեանս սիրելոյ. — Ջգեցարուք իբրեւ ընտրեալք Աստու» ծոյ՝ զգութ, զողորմութիւն, զքաղցրութիւն, զխոնարհու» թիւն.. և ի վերայ այսր ամենայնի զսէրն, որ է զոդ կա» տարման. — Քանզի ամենայն օրէնք ի մի բան կատարին, » ի Սիրեսցես զընկերն իբրեւ զանձն քո. և արդ, եղերուք » նմանողք Աստուծոյ՝ որպէս որդիք սիրելիք, և գնացէք սի» րով, որպէս և Քրիստոս սիրեաց զմեզ »։ (Կողոս. գ. 12)։ Ահաւադիկ գործ՝ ոչ միայն մեծ քան զզոհս և զողջակէզս և քան զընակելն ի լոյս, այլ Քրիստոսի հաւասարել, որպէս և ինքնին հրամայեաց. « Սիրեցէք զմիմեանս որպէս սիրեցի ես զձեզ, զի և դուք սիրեսջիք զմիմեանս »։ (Եփես. ե. 1)։

Այլ զի՞ է ինձ յաճախել զաշխարհաքարոզ ճառս սիրոյ. — և իցե՞ն արդարեւ աշխարհաքարոզք. իցէ՞ սէրն այն համատարած ընդ աշխարհ։ Իմանայցե՞մք և մեք յամենայն ժամ, զի Աստուած Հայր սիրէ զՈրդին, և Աստուածորդին սիրէ զմեզ, և նոյնպէս կամին զի սիրեսցուք զմիմեանս, այսինքն՝ աստուածապէս, կամ ըստ մարդկութեան ասել՝ անչափապէս. այլ զի չափաւոր է մարդս, յայս սակս իմասցուք զասելն Պօղոսի՝ պարտականս մնալ զմիմեանս սիրելոյ։ Խոստովանեսցուք աստանօր ընդ առաքելոցն՝ ասել զՔրիստոս, թէ « Ահա արդ յայտնապէս խօսիս, և առակ և ոչ մի ինչ ասես և Քո բանքդ ճշմարտութիւն է »։ Առաւել քան ի ըստանալեացդ՝ ափշիմ զարհուրիմ ի սիրաբանութենէ աստի քումմէ։ Հաւատա՞ ով սիրտ. զի Քրիստոսի են արդարեւ բանքդ, անստ, և մի՛ քններ՝ թէ հանդուրժես ոչ, այլ անկի՛ր խոնարհութեամբ յոտս նորա՝ որ բարձրացուցանէն ըզ-

քեզ յանհաս բարձրութիւնս Սիրոյն, և ապա եկ զքեզ ինքն քննել, եթէ զիա՞րդ սիրիցես զընկերս քո։ Կանոնն և սահման եղաւ առաջի քո ի Քրիստոսէ. Որպէս ես սիրեցի ըզձեզ. Որպէս սիրեաց զիս Հայրն իմ։ Ո՞վ հիացուցիչ Որպիսի. անհասանելի, այլ հրամայեալ հասու լինել. եթէ ոչ բարձրութեամբն՝ զոնեայ յարակայութեամբ. այնպէս զի վկայեսցէ անձն քո, զի թէպէտ և « Ես ննջեմ, այլ սիրտ իմ արթուն կայ ». և որպէս զա անդադար բաբախմամբ կենդանի պահէ զքեզ, ներքին ազգեցութեամբն կենդանի և յարարթուն պահիցէ զհոգիդ, անդուլ անդադար, և անհատ պահելով հանապազ զկապ սիրոյն ընդ որս կապեալդ ես, և հարկ է կապիլ. զի ի դադարել յիշատակին՝ դադարէ և սէրն. սիրտ թմբրեալ ոչ եւս սիրէ։ Ապա առաջին օրէնք են սիրոյ՝ հանապազորդութիւնն. այլք ի գործոց ողորմութեան՝ առ ժամանակ մի են, սէրն՝ անժամանակ, միշտ, անընդհատ, ցորչափ կայ կամ կեայ սիրելին։

Իսկ ո՞ իցէ սիրելին։ — — Չին պատուիրանն՝ զընկերն ասէր եզաբար. Սիրեսցես զընկեր քո. նորն յոգնակի, Սիրեցէք զմիմեանս. — չիք աստանօր խտիր Հրէի և սամարացւոյ, ընդ Իսրայելացի և ընդ հեթանոս. քրիստոնէութիւն՝ յամենայն որդիս մարդկան նշմարէ զպատկեր արարչին և զիւր նմանութիւնն. հարկ է թէ և ոչ ումեք զլաստի զսէրն, ըստ պատշաճի։ Եւ զի՞նչ պատշաճն իցէ. — Արժան է աստանօր և ի համատարած սէրն՝ ընտրել զհեռաւորն և զմերձաւոր, կամ չափ և չափ իմանալ. զի և Քրիստոս՝ որ վասն ամենեցուն տնօրինեցաւ և մեռաւ, աւետարանէր և խնամէր յատուկ զազգն՝ յորմէ ծնողք իւր սերեալ էին. և յայտնապէս պատուիրեաց առաքելոցն՝ երթալ առաւել առ ոչխարս կորուսեալս տանն Իսրայելի, և ապա առ հեթանոսս. ըստ այսմ գիտէ քրիստոնեայն՝ բնութեամբ եղբարս իւր զամենայն մարդիկ, այլ շնորհօք զկրօնակիցսն. և ի բնութեամբ եղբարսն՝ մերձաւորագոյն զհարազատս և զընտանիս։ Գիտեմք և մեք, զի ի վերայ այսոցիկ նախակարգ սիրելիք մեր են համակրօն եղբայրակիցքս միաբանակեացք, առ որս նախ՝ իբր յականէ արեւու կամ հրոյ՝ հասուցանելի է զսէրն, և անտուստ սփռելի զճառագայթսն՝ ի մօտաւորաց առ հեռաւորսն, աստիճանաբար իմն՝ որպէս ասի։

Այլ թողեալ մեզ զայսոսիկ իբրեւ յայտնիս, ուշ ի կուրծս արասցուք քննել գիտել՝ եթէ որպէս արժան է սիրել զեղբարս։ Եւ ահա ամենայն ոք յիշէ զհինն և զնոր պատուիրան, Սիրեսցես իբրեւ զանձն քո։ Եւ առ այս՝ չեն պէտք բացատրութեան. զի որ գիտէ զօրինաւոր սէր և խնամս անձին իւրոյ՝ ի վերայ հասանէ, եթէ զնոյն անկ է կամել և առնել՝ ըստ կարի իւրում, առ ամենայն եղբայրակից իւր, և ի հոգեւորն և ի մարմնաւոր պէտս, առ հասարակ, անխբտիր. բայց եթէ իցեն և աստ կարգք և աստիճանք ըստ տիոց, ըստ աւագութեան և կրսերութեան, ըստ սննդակցութեան և դասակցութեան, մարթ է ոչ ինչ նուազեցուցանելով զառ հասարակն՝ յաւելուլ յոր արժանն ներէ, այլ անանախանձաբար, ողջախոհաբար, ոչ ճշդելով և ոչ շռայլելով, եթէ մարթ է այսպէս ասել. այլ այնպէս, ըստ գրոյն, զի որ առաւելն առնուցու՝ ոչ յաւելցի նմա, և որ նուազն՝ ոչ պակասեսցէ ի նմանէ. և կարիցէ պարզութեամբ ասել խիղճ մտացն՝ ընդ Պօղոսի, եթէ գիտեմ առաւելուլ, գիտեմ և նուազել։ Թողեալ և զայսոսիկ գիտնոցն՝ իբրեւ ծանօթ իրս և ըստ կարգի բանից յիշեալ առ յինէն, մատիցուք ներքսագոյն ի մերս եղբայրութիւն և միաբանութիւն։

Տեսանեմք և գիտեմք՝ զի հօտ եմք փոքրիկ. մի տուն մի մենաստան ունիմք հասարակութեան եղբարցս, և որք արտաքոյ սորին ուրեք ուրեք քաղաքավարին՝ նժդեհք են նրժդեհացս՝ ուր պանդխտեցոյց զհարս մեր և զմեզ՝ Նախախնամութիւնն, այս երկու դարք և աւելի են։ Որպիսի և կոչելի իցէ պատահումս կամ վիճակս այս, ազդ առնէ մեզ՝ իբրեւ միոյ տան ընտանեաց՝ համօրէն կրօնակցացս, սերտագոյն սիրով պնդիլ փարիլ զիրերօք, որ մօտ և որ հեռի, և զնուազութիւնս ըստ թուոյ՝ առաւելուլ ձեռնտուութեամբ, աղօթիւք, պաշտպանութեամբ, ջանիւ, կարեկցութեամբ. և լինել ըստ հոգերգողին՝ « եղբայր յեղբօրէ օգնեալ՝ իբրեւ քաղաք ամուր ». ոչ առ ի զամուրս այլոց քակել, այլ զԱստուծոյ և զնախնեաց չինածն մեզ՝ անաղարտ պահել, և զսահմանեալն մեզ գործ կրօնաւորական և վարդապետական՝ ի գլուխ հանել, Տեառն շնորհօք և Տիրամօրն հովանաւորութեամբ՝ որում նուիրեալս եմք, և լինել ամենեցուն միով հոգւով և դիտմամբ՝ ըստ Քրիստոսի և ընդ

Քրիստոսի՝ լինել «մի, որպէս և մեք մի եմք», ասէր առ Հայրն իւր յաւիտենական. և այս յաջողէ սուրբ սիրովն, զոր կոչեաց Առաքեալն՝ «զօդ կատարման». և որպէս ամենեքին միաձայն զնոյն զմի գիտեմք և կարդամք մեզ հայր, և զնոյն մայր, լինել արժանապէս և նոցին որդիք հաւասարք, ընդ նովին անկեալ կարեօք և պիտոյիւք։

Եւ զի՞նչ յայտ և ազդ առնիցէ այս, եթէ ոչ՝ զգութն և զողորմութիւն՝ զոր առ միմեանս պարտիմք պնդապէս. քանզի են են և ի միում տան՝ որք հաստարակորդք են բազում ինչ իրաց, այլ ունին և առանձինն ինչ պէտս, որ ըստ մարմնոյ և ըստ մտաց, որոց ի դէպ է այնպէս խնամ տանել և լնուլ՝ որպէս թէ իւրաքանչիւր անձին իւրում. այս էր խրատ Առաքեալ-պետին՝ լինել «համամիտս և համակարիս»։ Համախոհութիւն ի բարիս՝ յաճախէ զսէրն և զզօրութիւն. համակրութիւն՝ զգութն և զօգնութիւնն, որ է ողորմութիւն մեծ և կարեւոր։ Զի թէպէտ կարգօք և տնտեսութեամբ հաւասարք եմք, այլ բնութեամբ և կարողութեամբ՝ որպէս Աստուծոյ տուեալ է, ումեմն շատ և ումեմն սակաւ. և խրատիմք յԱռաքելոյ, «Զմիմեանց բեռն բարձէք, և այնպէս հաստատեցէք զօրէնսն Քրիստոսի». (Գաղատ. գ. 2). և դարձեալ. «Պարտ է մեզ որ կարողքս եմք՝ զտկարութիւն տկարացն բառնալ, և մի անձանց եւեթ հաճոյ լինել». (Հռոմ. ԺԵ. 1) (յիւր ուրոյն գործ ինչ և ուսումն միայն կամ յաւէտ ուշ ունելով), այլ իւրաքանչիւր ոք ի մէնջ՝ ընկերին հաճոյ լիցի ի բարիս՝ վասն շինութեան... քանզի և Քրիստոս՝ ոչ եթէ անձին հաճոյ եղեւ... վասն որոյ ընկալարուք զմիմեանս, որպէս և Քրիստոս ընկալաւ զձեզ՝ ի փառս Աստուծոյ»։ Յիշել դարձեալ և ստէպ, զի «բազումքս՝ մի մարմին եմք ի Քրիստոս, այլ իւրաքանչիւր միմեանց անդամք եմք... (թէպէտ և) ամենայն անդամք ոչ զնոյն գործ ունիցին»։ (Հռոմ. ԺԲ. 5)։ Եւ ո՞ իշխիցէ ի կրօնակից եղբարց՝ ասել ցմիւսն, «Զես ինձ պիտոյ». և զոր Քրիստոս իսկ ընկալաւ և զօդեաց յինքն, քանզի «Անդամք եմք յանդամոց նորա», մերժել, քեցել, քակել յիւրմէ՝ նուազ և ցուրտ սիրով։ Բա՜ւ ի մէնջ այսպիսի ծանականք. այլ մանաւանդ զընկերին օգուտ առաւել լաւ համարել քան զիւրն, և զտկարսն կարողագոյնս առնել իւրով աստուածատուր զօրութեամբն, ասելով՝ որպէս արժանն

է՝ ընդ Առաքելոյն, եթէ «Բանզի ազատ էի, ամենեցուն՝ զանձն ի ծառայութեան կացուցի, զի զբազումս շահեցայց». (Ա. Կորնթ. թ. 19). իցէ՞ թէ և իշխէաք ասել, «Ընդ ամենայնի ամենայն եղէ, զի թերեւս ապրեցուցից զոմանս»։ Եթէ ընդ ամենայնի ամենայն լինելն մեծ շնորհ է՝ Պօղոսի պարգեւեալ, այլ ապրեցուցանելն զոնէ զոմանս՝ ամենեցուն մեզ են պարտք, որոց և փոքր ի շատէ պաշտօն պօղոսեան յանձնեալ է և առեալ։ Եւ եթէ զի՞նչ և որպէս. — Ի մէջ անցցէ դարձեալ Վարդապետն այն համատարած և ուսուցէ. «Զի՞նչ իցէ եղբարք. յորժամ ի մի վայր ժողովիցիք (որ» պէս և էրդ ժողովեալ) իւրաքանչիւր ոք ի ձէնջ, եթէ սաղ» մոս ունիցի (մխիթարութեան բանս), եթէ վարդապետու» թիւն ունիցի (քարոզութիւն և գիտութիւն ուսմանց), եթէ» յայտնութիւն ունիցի (ծանօթութիւն կարեւոր իրաց անցե» լոց կամ ներկայից), եթէ լեզուս ունիցի (շնորհս խօսից), » եթէ թարգմանութիւն ունիցի, ամենայն ի շինած եղիցի» եղբայրութեանն. և այլք որ սոցին նմանքս զոր դիւրին է իմաստասիրել միաբանակեցից՝ որոց յանդիման կան պէտքն և օգուտք. և յորս բազում այն է՝ զի սիրով առաւել լինի յաջողութիւն՝ քան ճարտարութեամբ հանճարոյ։

Այլ ո՞ կարիցէ, մանաւանդ թէ իցէ՞ հարկ՝ հանդէս առնել հնարից սիրոյ, որ հանապազօրեայ կրթութիւն է կրօնաւորաց միաբանակեցից, և բազում մասամբք կամ եղանակօք կատարի, ըստ վերոյիշեալ տրոհմանց Առաքելոյն. զի ոմն կարէ ձեռացն յաջողութեամբ կատարել, և ոմն մտացն արգասաւորութեամբ. այլ ոք՝ բանիւ բերանոյ. և այլն լռութեամբ իսկ, զի է և լռութեան շնորհք, և հեզութիւն երեսաց և ժպիտ մի քաղցր՝ ոչ սակաւ ազդէ և ուսուցանէ. և լոկ պարկեշտութիւն վարուց և զգուշաւորութիւն՝ մեծ վարդապետութիւն է, և ամենեցուն իսկ պարտք են օրինակ բարի ընծայել և ընդունել, եթէ ոչ կարիցէ բանիւ բերանոյ, քան զոր չէ պակաս՝ լռելեայն այն և անշշունջ աննիւթ ողորմութիւն. զորմէ ասէր հոգերգողն, «Խրատեսցէ զիս արդարն՝ ողորմութեամբ». իսկ եթէ ունիցի ոք և բան խրատու՝ գիտասցէ «հանդարտութեամբ խրատել զհակառակորդն» (Տիմոթ. եւս, թող թէ զբարեկամն։ «Իբրեւ զի լաւ է յանդիմանել քան զցաստուլ». (Սիրաք). և զյանցուցեալսն

իսկ յայտնապէս խրատէ Առաքեալ. «Դուք որ հոգեւորդ էք՝
» հաստատեցէք զայնպիսին հոգւով հեզութեան. (այլ և) ըզ-
» գոյշ լինիցիք անձանց, զի մի՛ և դուք փորձիցիք». որպէս
և յաճախ պատահէ անզգաստիցն՝ ի նոյնս յանցանել՝ զորս
յայլս մեղադրեն. և համօրէն գիտելի է ըստ պատշաճի ժա-
մուն, անձին և դիպացն՝ խօսել, մխիթարել և յանդիմա-
նել, որպէս առ Տիտոս գրէր Պօղոս. և յաւիտեան մի՛ մո-
ռանալ զհեզութիւնն Քրիստոսի՝ որ ի յառաջաբանութենէ
վարդապետութեանն իւրոյ՝ մինչեւ ի վերջաբանն որ ի խա-
չին, առ խաչահանուսն և առ աւազակն. հանապազ սիրել
զթշնամիս անգամ և բարի առնել նոցա։

Ապաքէն այսպիսեաց կրից մուտ գտանել և ի միտս ան-
գամ կրօնակցաց՝ չէ արժան, թող թէ ընդ դրունս մենա-
բանաց. սակայն և դժուարին է յոյժ՝ չզգալ ինչ տըրտ-
մութիւն, նա և վէրս ինչ սրտի, թէպէտ յիւրմէ անձնա-
սիրութենէ, թէպէտ յանզգաստութենէ ընկերին. առ որ՝ ա-
ռանց ընդ երկար բանս ածելոյ՝ յուշ լիցի, զի Ջնջանաւ
սիրոյ և ներողութեան՝ ի բաց բառնալի է զկեղ սրտին, և
սրբելի զվրիպանս բերանոյ, և փոխադարձօրէն ողորմել մի-
մեանց։ Մեծի եւս զգուշութեան պէտք են և գթութեան՝ ի
գրելն, զի «գիրն մնայ», և խայթ նորա երբեմն կծանէ ըզ-
կենդանի և զմեռեալ և զչեւ եւս ծնեալսն, մանաւանդ եթէ
ճախարակեալ ինչ ոճով յարմարեալ իցեն ճառքն և երգի-
ծանք. ձայնք զառանց, ժանիք զայլոց, իբրեւ ամոքարար
մատուցեալ դեղ՝ ոչ միայն կսկծեցուցիչ այլ և խոցոտիչ.
վասն որոյ ժէր մարգարէն, «Իւղ մեղաւորի մի՛ օծցէ ըզ-
գլուխ իմ»։ Քանի՞ դիւրազգած է անձնասիրութիւն, յասելն
և ի լսել։ Այլ քանի՞ մեծ և փառաւոր են և յաղթանակք
ներողութեան և անյիշաչարութեան, որ և զըստագոյն իմն
իւղ է ողորմութեան սրտի, զոր անհնար է թէ կաթեսցէ
այլոց, եթէ ոչ ինքնին իսկ այնու պարարեալ իցէ, որ է
ասել՝ անձամբ անձին ողորմեալ. և տեսցուք ո՞րպէս։

Բ

Որպէս հզօր և սքանչելի է հուր՝ ոչ այնքան ի ծախելն և
ի սպառել, որքան յաճելն, ի ծաւալելն և յիւր տարրն փո-
խել կամ լնուլ ինքեամբ՝ յոր միանգամ հպիցի, ըստ
այսմ և հուր սրտին, սէրն, յոր օրինակեաց ինքն վառա-
բան սիրոյն՝ յասելն. «Հուր եկի արկանել յերկիր», որով
բորբոքեալ էր զերկնայինսն, զդասս հրեշտակացն։ Եւ որպէս
չէ հնար հրոյ ջեռուցանել վառել ինչ մի, եթէ չիցէ ինքնին
իսկ ջերաջերմն, այսպէս և սրտի՛ որ սուրբ սիրով վառելոց
է յայլս, հարկ է թէ նախ զինքն վառիցէ աստուածսիրու-
թեամբ, սրբեսցէ զաղտն, ծախեսցէ զանպիտան նիւթսն,
զիրս ասեմ, սաստիկ տոչորմամբ, ոչ խնայելով անձնասի-
րութեանն, ոչ անսալով մեղկութեան մարմնոյն, այլ զօգուտ
հոգւոյն հոգալով և հնարելով։ Այս է անձամբ անձին ողոր-
մելն։ Եթէ գութ և կարիք տնկեալ են ի մեզ՝ առ օգուտ
ընկերաց, անկ է ընդաբոյս սիրոյ անձին՝ կանխել յիւր օ-
գուտ, յիւր ուղղութիւն, յիւր սրբութիւն, որոց եթէ արտա-
քինքն կարօտին, նոյն և իւրաքանչիւր անձն, որ ըստ աւե-
տարանչին «ինքնին գիտէ զինչ կրէ ի մարդն». և յանձն
նախ վերաբերել զահագին բարբառն Քրիստոսի. «Զի՞նչ օ-
» գուտ է մարդոյ՝ եթէ զաշխարհ ամենայն շահեսցի, և
» զանձն իւր տուժեսցէ»։ Ազդողագոյն ուրեմն է պատուէրս
այս՝ քան որ առ ընկերս ձեռնտուութիւն և բարերարու-
թիւն։ Փրկութիւն անձամբ անձինն. զայս ամենայն ոք գի-
տէ առաջին պարտս մարդոյ. և այս իսկ է ուղիղ և կատա-
րեալ սէր անձին. ոչ ըստ գրգման բնութեանն՝ հաճիլ, ըզ-
մայլիլ, զակատիլ ի ձիրս և ի կիրս իւր, և պատուականա-
գոյն քան զայլսն համարել, որ է խոտանն անձնասիրու-
թիւն, զորմէ ասաց Քրիստոս. «Որ սիրէ զանձն իւր՝ ար-
» ձակէ զնա. և որ ատեայ զանձն իւր յաշխարհիս յայսմիկ՝
» ի կեանս յաւիտենականս պահեսցէ զնա»։ Բա՜ռ, ատելու-
թիւն անձին՝ զեղ կենաց հոգւոյն կարգի. որպէս և մեռե-
լութիւնն ի խոնարհութեան՝ որպէս հատն ցորենոյ անկեալ
յերկրի՝ զանձն կեցուցանէ և բազում արդիւնս ընձեռէ։

Գերագոյն և նրբագոյն է այս ուսումն քրիստոսատուր,

յոր արժան և իրաւ է ամենայն ի նա հաւատացելոց՝ կըրթիլ ի մանկութենէ. առ որ՝ եթէ ոչ ունէաք մեզ օրինակ և գործակից՝ զնոյն ինքն զվարդապետն և զկեցուցիչն աշխարհի, թերեւս հաւատայաք իսկ ոչ. այլ քաջ գիտեմք զոր ինչ արարն և եցոյց և ուսոյց, և առաւել սխրանամբ ընդ բազմապատիկ ողորմութիւնս նորա առ մարդիկ, քան ընդ առանձին կենաց նորա ճգնութիւնս, զոր և անքնին իմն տեսչութեամբ թաքոյց՝ երեսնամեայ մենակեցութեամբ ի տան ծնողաց իւրոց. բայց նշոյլս ինչ ծանուցին մեզ աշակերտքն, զգիշերն ի բուն յաղօթս Աստուծոյ հանել նորա, և այն բազում արտասուօք և հառաչմամբ, որպէս յայտնեցաւ Պօղոսի և մեզ յայտնեաց. թող զկամաւոր քաղցնուլ և ծարաւելն, վաստակաբեկ լինելն յերթեւեկն ի խնդիր և ի բժշկութիւն և ի մխիթարութիւն կարօտելոց, և զիւր իսկ կարօտելն բարձի միոյ՝ առ ի դնել զգլուխն, և որ այլն եւս. և միանգամայն ասել՝ զանձն իւր ունայնացուցանելն. քան զոր չիք ահաւոր գործ մեծ. քանզի այլք ի մարդկանէ՝ զախտս և զկիրս և զչարաչար սէր անձանց իւրեանց պահանջին ունայնացուցանել, իսկ Քրիստոս՝ թուի ի խրատ մեզ՝ և զլաւութիւնս, և զկեանսն և զոգջիր զաստուածութիւն իսկ իւր ունայնացուցանել՝ յաչս և յոգիս մեր։ Ցայս յիշատակ՝ զահի զամօթի հարեալ՝ չիցէ՞ մեզ օրէն ամենայն փութոյ պնդութեամբ ունայնացուցանել զարդարեւ ունայնսն և խոտանս ի մեզ ինքեանս, «կարեօքն և ցանկութեամբք հանդերձ», ըստ Առաքելոյն, քեցել մերժել յանձնէ զամենայն չար, համարեա ընդաբոյս՝ համարեա եկամուտ, և զամենայն որ չէ յօգուտ հոգւոյ և ի փառս Աստուծոյ, այլ առաւել որ սմա ատելի և վնաս հոգւոյն է՝ որոց առաջին կրկնեմ ասել զթերուղիզ անձնասիրութիւնն. զի որպէս առաջին պատուիրան և ի վեր քան զպատուիրան է մարդոյ՝ սիրելն զԱստուած, այսպէս և ի հակառակէն՝ ատելն զանձն. և ահա զայս լուաք խուն մի յառաջ ի Քրիստոսէ, և ոչ եւս երկբայիմք։

Այլ գիտութիւն օգնէ ինչ ոչ առ այս եթէ ոչ և ջան և ճիգն մեծ, աշխատութիւն և վաստակ անդադար ի կիր արկցի՝ յատելութիւն անձին, յորում՝ առանց ջանից և զգաստութեան, արդարեւ առաւել ատելիքն և խոտանքն բուսանին՝ քան պիտանիքն և հաճոյք Աստուծոյ և մարդկան։ Պատեբազմն մեծ է անձին՝ զրկել զմարմին և ողորմել հոգւոյ. այլ յայսմ է կեանքն յաւիտենական։ Առաքեալ ոչ ներէ հասարակաց քրիստոնէից՝ ճաշակել, եթէ ոչ իցէ աշխատութեամբ շահեալ. իսկ Քրիստոս ներիցէ՞ յիւր անմահականն սեղան համարձակել մատչել՝ ինքեան նուիրելոյ կրօնաւորի և քահանայի՝ անձին ուղղութեան անփոյթ եղելոյ՝ և ո՞չ կշտամբիցէ, թէ այս հաց մանկանց է անմեղաց, և դու «Բարեկամ (անբարի) զիա՞րդ մտեր այսր». և աշակերտն Սիրելի՝ ընդ դեղատուաց, կախարդաց և անհաւատից՝ դնէ զբաժին ծուլից, և յարքայութենէ անտի բացէ ի բաց վտարեալ՝ իջուցանէ մինչեւ ի լիճ հրոյն և ծծըմբոյ։ Ամենայն կեանք մարդոյ՝ ջանից կարօտին ի լաւութիւն. իսկ կրօնաւորի՝ ի կատարելութիւն. տէրունական է վճիռն, Եղերուք կատարեալ. և բազում այն է՝ զի ողջոյն շարք ամաց ոչ բաւեն առ տիրաբար ստացուած միոյ եւեթ ուղղութեան. քաղցրաբարոյն այն և համահրեշտակն հեզահոգին Սալեզացի, մանաւանդ թէ յիսուսհոգի և յիսուսաբան, զորոյ ոչ ոք լուաւ երբէք աղաղակ և վէճ, և ոչ մի կնճիռն ճակատու, սակայն, ասէր ամս առաւել քան զքսան ոգորեալ ընդ անձին՝ առ ի նուաճել զեռանդն ինչ ցաստման. այն՝ որ իշխէր ասել. պօղոսեան իմն համարձակութեամբ, եթէ չկարծեմ թէ քան զՔրիստոս և քան զիս՝ գտցի ոք մարդասէր. յայս չափ հասեալ էր նորա, և այլոց՝ ըստ նմանէ՝ ըստ իւրաքանչիւր չափու ճգանց և յարատեւութեան ի նոյնս։ Իսկ յո՞րչափ կայցէ կամ իշցէ կրօնաւոր պղերգ, անփոյթ ի կրթութիւն և յուղղութիւն բարուցն և ի ստացուած լաւութեանց, և նախ ի նուաճել ի մեռուցանել զվնասակարագոյնն զոր յինքն ճանաչիցէ ախտ կամ մոլութիւն, թող թէ ի լաւութենէ ի լաւութիւն դիմել և ընդ աստիճանս կատարելութեան ի վեր ելանել։ Զպղերգն՝ սովոր են կերպարանել յանասուն դանդաղաշարժ, գետնաթաւալ, գայռաթաթախ, իսկ զայնպիսի կրօնաւոր՝ յորպիսի՞ ինչ հրէշերէ։ Որպիսի՞ ամօթ և ծանակութիւն, մտանել կեալ ի տան տառապանաց և աղքատութեան Յիսուսի, բարեկեցիկ, դատարկաձեռն, և զայլոց վաստակն ճարակել, զոր ժրաջան եղբարքն մեղուաբար քաղեալ յօրինեցին. ոչ միայն զնոցայն՝ այլ և զՔրիստոսին խորելով բաժին, որ սեղանակից է յանուն իւր աղքատացելոց, և յայնմ ժամու եւս ասէ, «ես ընդ ձեզ եմ»։

Քրիստոս՝ զոր տեսաք յետ զօրն ողջոյն վաստակելոյ և քրտնելոյ ի պէտս այլոց, և զգիշերն առանձինն յաղօթս կալոյ. ստէպ պատուիրէր աշակերտացն Արթուն կալ. և զի՞նչ ասիցէ առ անուանեալ աշակերտն՝ որ և ի տուընջեան յերկարէ քան զպէտս՝ զքունն, որ է գիտակցաբար իմն ցնդումն ժամանակի. և չարաչար թերեւս քան զայն՝ վայրապար ժամավաճառութիւն ի խօսակցութեան և յումպէտ պարապմունս. և ի վերայ այսոցիկ՝ իշխէ՞ տակաւին գանգատել ընդ երագասահութիւն ժամանակի և ընդ կարճութիւն կենաց, որ միօրինակ անցանէ գնայ՝ եւ ի նմանէ որ մտադիւրն գործէ, եւ ի նմանէ որ անգործ կայ, այլ նա շահի և ի սակաւուն, և սա եթէ յերկար եւս կեցցէ, ոչ միայն անշահ և անվարձ ելանէ, այլ և ի տուգանս և ի տանջանս մատնի, նա արդարեւ ողորմի անձին իւրում և այլոց, սա՝ նախ թէ առ այլս՝ առ ինքն անողորմ գտանի։

Ջան և աշխատութիւն կրթութեան և կատարելութեան անձին, այս է առաջին գործ կրօնաւորի, որով յաջողէ և ի բարերարելն առ այլս, զոր յողորմութիւն զուգեցաք. անկ է նմա հանապազ գտանիլ միւսմ յայսցանէ, յաղօթանոցն, ի գրասենեակն, ի վարժարանն և ի սեփական գործանոց կամ պաշտօնարան. ի քաղցրանալն ի սոցին՝ յաջողեսցի նմա և գործն և կեանքն. զոր ոչ կարէ բարւոք նուիրել կամ ծախել յօգուտ ընկերաց և այլոց, ուսուցանելով կամ քարոզելով, եթէ ոչ ինքն ուսեալ, կրթեալ և առաքինացեալ իցէ. են են նմա, մեզ իսկ ասեմ, ոչ սակաւ գործելիք. «Հունձք բազում են, և մշակքս սակաւ». այլ եթէ ոչ գիտիցեն սոքա զմշակութիւնն՝ ո՞ր օգուտ՝ եթէ և բազումք լինէին։ Զիցէ աստանօր ի դէպ յիշել զառածն Քրիստոսի, «Բժիշկ, բժշկեա զանձն քո» նախ, և ապա առ այլս մատիր։ Արդարեւ իսկ կարգեալ եմք ի բժշկութիւն մտաց և սրտից մարդկան, և առանձինն՝ համազգացս, և գիտեմք՝ յոգւոց հանելով՝ զի «ի մէջ խեղաթիւր և կամակոր ազգի՝» կայ մեզ քաղաքավարել, և բազում քաղցկեղ ճարակեալ է արդ ի ժողովրդեան, և նեռինք բազումք եկեալ են. առ որս ոչ ինչ օգտեսցուք՝ եթէ ոչ սրբութեամբ վարուց և կարեւոր գիտութեամբք, և նախ հոգեւորաւն և առ այս հարկ յայտնի է՝ յերկոսին եւս հրահանգիլ մեզ, մանաւանդ յառաջնումն, յուղիղ վարս. զի ոչ ամենայն գիտուն կոչի ի վարդապետութիւն, բայց սրբութիւնն՝ լռութեամբ իսկ քարոզէ. և եթէ ամենեւին ոք հատեալ հեռացեալ իցէ յաշխարհէ, և առանձնակեաց արգելական կայցէ ի խցկանն, գիտութիւնք ոչ ինչ կամ սակաւ ինչ օգտեն նմա, այլ սրբութիւնն՝ անհրաժեշտ. և զայս ուսումն տեսաք՝ անսպառ, մինչեւ ի մահ։

Եւ ոչ ձրի է աստանօր ողորմութիւնն առ անձն, այլ անհերելի պարտք. զի զրկել զհոգի ի չնորհաց, կամ զանց առնել և զփոքու իւիք լաւութեամբ՝ անիրաւութիւն մեծ է. աստանօր բողոքէ այրին այն, զատ պահանջելով յոսոխէն իւրմէ։ Առ չահ հոգւոյ՝ խոտելի է ամենայն շահ. և եթէ հնար է՝ առնուլ զհոգին ի գիրկս զօրութեանց անձինն, ողջագուրել, զգուել, հեղուլ զնովաւ զամենայն գութ և աղերս, և ի տուէ և ի գիշերի հսկել, խնամել, հոգալ, յիշել, «Ոչ ապաքէն հոգի առաւել է քան զմարմին». իբրեւ ի նժարս կշռոց արկեալ կան դոքա ի բնութեանս. ոչ է հնար հաւասար կալ երկոցուն ի նմին աշտիճանի, հարկ է միւսմ կորանալ՝ և միւսում թեթեւակի ի վեր ամբառնալ. և որո՞ւմ այս պատշաճիցի. — քաջ գիտեմք. և առ համանգամայն ասել, արժան է տալ զմարմինն յողորմութիւն հոգւոյ, և երկոքին կեան, իսկ ի հակառակէն՝ երկոցուն եւս կորուստ։ Ապա, մի՛ աւելորդ ինչ համարիցին ճգունք և մեռելութիւնք, զոր ամենեւին կարեւոր և անհրաժարելի ծանեան և ընկալան ամենայն սուրբք և առաքինիք, և կուսանք անգամ փափուկք, և այնքան անողորմ գտան առ նիւթական լծակից հոգւոյ իւրեանց, զի զաննիւթականս զայս յապահովի կացուսցեն։ Ո՞հ, և որպիսի՛ ճգանց և վշտաց համբերեցին կամաւորապէս, հանապազ ի մտի ունելով, եթէ, «բազում նեղութեամբ պարտ է մեզ մտանել յայն հանգիստն». և ոչ մի ինչ ծանր համարեցան, թէպէտ և ընդ երկար ամս կրեցին զնոյնս, գիտելով՝ զի առ յաւիտենական կեանս՝ ոչ ինչ մի է ժամանակն, թող թէ չափ կենաց մերոց, որ յամենայն ժամ երթայ և մերձ է ի վախճանն։

Այսոքիկ ծանօթք են մեզ, և գլուխ ամենայնի, զի անձինք եմք նուիրեալք Աստուծոյ և հետեւողք նեղ և նուրբ ճանապարհին Քրիստոսի։ Իսկ դու ընդէ՞ր հեղգաս և գանգաչես յերկնաչուգ յայգմ ճանապարհի։ — Ապաքէն ոչ քաջ

նուաճեալ ազատութիւն անձինդ, մանաւանդ թէ ապստամ-
բութիւն, գայթակղութիւն քեզ լինի, և ընդ երկուս հետս
տայ երբեմն կաղալ. այլ որ միանգամ նուիրեցարդ՝ զօր ա-
մենայն հարկիս նուիրիլ. և աւուր միոյ է բեռն զոր կրես,
և որպէս ոչ օր քան զօր երկար է, և ոչ ծանրութիւնք նո-
րին. և որպէս ոչ միայն աւուր աւուր՝ այլ և պահու պահու,
յամենայն վայրկենի ասեմ, վայելես ի խնամս Աստուծոյ, մեծ
ինչ իցէ եթէ սիրով համբերիցես վայրկեան մի. ամենայն
կեանք ի վայրկենից անտի հիւսեալ են. և ամենայն մի
վայրկեան է։ Քաջալերեաց, հիմ զանգիտես, թերահաւատ.
ընդէ՞ր ի վայր կորանաս և ոչ ի վեր հայիս, ուստի գայ օգ-
նութիւնն. աղէ՞, ամբարձ՝ ոչ միայն զգլուխ այլ և զձեռս
ժիրս, զի և ի վերուստ կարկառիցի քեզ աջ ձեռնկալու, այ-
նորիկ՝ որ ասացն, «Տուք, և տացի ձեզ». տուր նախ դու
քեզ ողորմութիւն, զջանսդ, և գտցես ողորմութիւն և զօ-
րութիւն առ ի նմանէ. և եթէ դու պարտիս և ողորմիս ըն-
կերացդ, դու՝ որ փոքրդ ես և չար՝ առաջի Աստուծոյ,
«Ո՞րչափ եւս առաւել Հայրն ձեր՝ տացէ բարիս այնոցիկ՝
որ խնդրենն զնա»։ — Խնդրեցէք և առնուցուք։ — Եւ զոր
«ձրի առէք՝ ձրի տուք». որպէս զի և զլիուլին գտանի-
ցէք ողորմութիւն երանաւէտ՝ ի յաւիտեանսն։

Է

ԵՐԱՆԻ՞ ՈՐ ՍՈՒՐԲ ԵՆ ՍՐՏԻՒՔ, ԶԻ ՆՈՔԱ ԶԱՍՏՈՒԱԾ ՏԵՍՑԷՆ

«Երանութիւնս այս (ասէ, և հաւատամ թէ յանձին
» փորձոյ, Շնորհալի հայրապետն մեր), գերազանց է քան
» զհասումն մտաց»։ Եթէ այնքանոյ առն հոգետեսի և նը-
մանեացն՝ անհաս իցէ, զի՞նչ տկարիմացս մտաց. — այլ
զի ամենեցուն պարտք և վախճան է տեսութիւնն Աստու-
ծոյ, որ և արքայութիւն նորա, հարկ է թէ և որոց նման
ուղէկցացն Պօղոսի՝ ոչ տեսանիցեն զչուրջ փայլատակեալ
լոյսն զնովաւ, գէթ ի լսելն զձայնն և զանունն, ընդոստու-
ցեալ զգաստասցին և սրբեսցեն զտեսանելիսն, և եթէ ընդ

աղօտ ինչ նշմարիցեն՝ գիտասցեն, զի մեծ և սքանչելի է
տեսութիւնդ այդ՝ քան զամենայն պայծառութիւն աշխարհի.
«զի նոքա՝ զԱստուած տեսցեն»։ Եթէ արքայութիւն երկնից՝
է տեսութիւն Աստուծոյ, որպէս և է իսկ և տեսութեան ա-
ռիթ և յորդոր՝ Սրբութիւնն՝ ի Քրիստոսէ վկայեալ, ապա
նոյն իսկ սրբութիւնն՝ արքայութիւն է յերկրի և առաջնորդ
յերկինս։

Փարելի՞ և հեշտալի երանութիւն յերանութեանս. այլքն
թուին կերպարանս իմն ընծայել աշխատութեան և տառա-
պանաց, աղքատութիւն, սուգ, ցածութիւն, քաղց, ծարաւ,
զրկումն և հալածանք. իսկ աստանօր ոչ մի յայսցանէ պա-
հանջի, այլ սեռն և անապակ անդորր սրտի, որպէս թէ
նահատակութիւն անարիւն, անխառն սպիտակութիւն, հա-
մակ լուսակիզն կուսափայլ երեւոյթ։ Բայց, առաքինութիւն
է և սա. և չիք առաքինութիւն անջան և անհակառակ. հարկ
է թէ իցեն և սորա ճգունք և մրցանք։ Սպիտակ է, այո՛, պատ-
մուճան սրտի մաքրոյ, այլ՝ լուացեալ և ջնջեալ արեամբ
Գառինն, զորոյ զհետ երթան սրբասիրտքն. «Սոքա են որք
» ընդ կանայս ոչ խառնակեցան (իմա՝ ընդ աղտս կենցա-
ղոյս), և են կուսանք»։ (Յայտն)։

Կուսութիւն, զեզաղէշ և անփոխանակ ծաղիկ լաւութեանց,
որ բաւական եղեւ զԱստուած պտղաբերել յերկրի. ոչ վայրա-
պար կարգեցաւ դա ի զգաստից հոգեկրաց՝ թուակից եռա-
հիւսակն մանեկի կրօնաւորութեան, Ողջախոհութեան պա-
տուեալ անուամբ. և փառաւորեալ յերրեկի զուգակիցսն,
զի մինչ այլքն գձձութեանն և անշքութեան իմն կերպարա-
նօք յանդիման լինին, դա հրեշտակակերպ հանդիսանայ
պարզութեամբ։ Կուսութիւն սուրբ, կամ Կուսական սրբու-
թիւն. դու և յիմ և յիմոց եղբարց սրտի՝ կնիք եդար. զոր՝
եթէ ոք անլոյծ պահեաց, աներկբայ գտցէ և աստէն զվա-
յելսն և զվարձս, և ի հանդերձեալսն իսպառ ընկղմեսցի ի
տեսութեան Աստուծոյ։

Մատիցուք արդ փափագանօք քննել նկատել զպատճառս
և զհնարս կուսականիս սրբութեան, որպէս զի և քաջ ի վե-
րայ հասանիցեմք արգասեացն։ Ողջախոհութիւնն ձգեսցէ
զմեզ առ ինքն՝ պարկեշտութեամբ իւրով. իսկ տեսութեան
Աստուծոյ յորդորեսցէ, մերձեցուսցէ և հասուսցէ զմեզ առ
Սուրբն սրբոց։

Ա

Որքան մեղմ և քաղցր է իմաստն սրբութեան սրտի, այնքան և հզօր զօրութեամբ. գերազանցն ի մարդիկ՝ պատուի սրբութեան անուամբ. ա՜յնքան մեծ շնորհ համարեալ է ա-նաղտ անբիծ մնալն յոգի և ի մարմին. վեհից մտաց՝ զարմանք նուիրին. արի արանց՝ փառք, ոգւոց անարատից՝ ի վերայ այսոցիկ՝ սէր և անմահութիւն, և անմարմինս ի մարմնի և հրեշտակացեալս համարել. և ինքն Աստուած՝ յորմէ ամենայն զօրութիւնք, բարիք և փառք, յաճախ սրբութեան կոչմամբ պաշտի, որ արդարեւ մեծ իմաստասիրութիւն է մտաց։ Յօրինուած տիեզերաց հանապազ հուչակէ զիմաստութիւն և զվայելչութիւն արարչին. աշխարհք լայնասփիւռք՝ զզօրութիւն և զմեծութիւն նորա, և բովանդակ՝ զամենախնամ տեսչութիւնն. այլ յաւէտ և գերազոյն ազերս մատուցանի նմա սրբութիւնն. սքանչելիք են մտաց եւ իմաստութիւնն և զօրութիւն Աստուծոյ. համայն և այնպէս՝ խորք սրտի զսրբութիւնն խոստովանին նմա սքանչելահրաշ. բնաբոյս իմն ազդմամբ՝ սուրբ կարգան զԱստուած. և գերագոյնք բանականաց՝ հրեշտակքն՝ զնոյն զաւանութիւն տան և կրկնեն և երեքկնեն, և իննիցս և բիւրիցս ասեն սուրբ սուրբ սուրբ. և որ մեծ եւս է, ինքն պատուիրէ իմացական արարածոցն, «Սուրբ եղերուք, զի ես սուրբ եմ». ոչ մեծք, ոչ հզօրք, ոչ հրաշագեղք կամ իմաստունք կամ այլ ինչ ի զօրութեանց, այլ միայն Սրբութիւն պատուիրի և խնդրի առ ի նմանութիւն և հաճութիւն Աստուծոյ։ Ցայս ուրեմն բովանդակէր և լրումն մարդոյս. «Եղերուք կատարեալք, որպէս և Հայրն ձեր երկնաւոր կատարեալ է»։ Սրբութեամբ ուրեմն հաստատ լինի մարդ անհասանելեացն կատարելութեան, զնոյն ուսուցանէ և Քրիստոս՝ ի սկզբան աղօթից կարգելով զիրգնն, «Հայր մեր, սուրբ եղիցի անուն քո». իբրու զի անմարթ է յաւելուլ ինչ յԱստուած կամ ընծայել, բայց հուչակել զանուն նորա սրբասացութեամբ։ Այլ ոչ այնքան բանիւ բացատրի սրբութիւն Աստուծոյ որչափ յանձին ճըշմարտելով կամ տպաւորելով զայն, ի հոգի և ի մարմին։

Ահեղ իմն թուի այս իմաստ. զարհուրի բնութիւն ինքնա-

գիտակ՝ մերձենալ առ Աստուած. այլ երկիւղ ինքնին յայտ առնէ զանսրբութիւնն, խոչընդոտն յառ Աստուած ճանապարհին. անմաքրութիւնն, մեղքն, դա է կրճիմն և արգել ընդ հաստիչն և ընդ հաստուած բանաւոր։ Անդստին ի ծննդենէ և ի յղութենէ՝ անսուրբ մտեալ յաշխարհ՝ ոչ էր հնար մարդոյ առ ամենասուրբն յօդիլ կամ դառնալ. բայց գթութիւն նորին եցոյց ելի աղագս. «Առաքեաց զԲան իւր յերկիր, և փրկեաց զմեզ յամենայն ապականութենէ մերմէ». և Սրբութիւնն իսկաբուն՝ մարմին եղեալ ի նախասրբելում արգանդի Կուսին, հնարեաց սրբել զհոգիս և հոգիացուցանել իմն և զմարմին. քանզի ինքն Բանն այն՝ որ մարմին եղեւ ըստ բնութեան մարդոյս, «բնակեցաւ ի մեզ», և սրբութեամբ իւրով ուսոյց սրբել և կեալ սրբութեամբ։

Ոչ ինչ այնպէս դառնութեամբ ստգտանէ զսիրտ՝ որպէս արատն անմաքուր, որ խաւար ածէ հոգւոյն տեսանելեաց, զի որպէս յառատութեան բնական աչաց՝ «ամենայն մարմինն լուսաւոր լինի», ըստ Քրիստոսի, նոյնպէս եթէ և հոգւոյ աչք յստակ և առատ իցեն լուսով. «իսկ եթէ լոյսն որ ի քեզ է՝ խաւար է, խաւարն որչափ եւս», այսինքն, եթէ հոգին՝ որ աննիւթական է՝ մթագնեալ և աղտեղեալ իցէ կրիւք, որքան եւս երագ և հակամէտ է մարմին յախտս։ Աւա՜ղ, «զի զի որ ի խաւարի գնայ, ոչ տեսանէ զլոյս». ոչ տեսանէ զԱստուած՝ որ լոյսն է իսկական և ի լոյս բնակեալ, որպէս ասէրն, «Ես լոյս յաշխարհ եկի». ապա, լոյս և սրբութիւն իսկակիցք են. յոր սակս և աղաղակէ Առաքեալ, «Ջհետ երթայք սրբութեան, առանց որոյ ոչ ոք կարէ տեսանել զՏէր»։

Այլ զի՞նչ բնաւ իցէ սրբութիւն. — Ազէ ասա և դու. զի՞նչ է լոյս. զի՞նչ է գեղեցկութիւն. զի՞նչ անդորրութիւն. զի՞նչ պատշաճն. եթէ զայսոսիկ կարիցես բացատրել պարզապէս, փորձեսցես սահմանել և զսրբութիւն։ Բայց գոգցուք մերովսանն ասել զայն՝ ազատութիւն յամենայն արատոյ հոգւոյ և մարմնոյ, և պայծառութիւն իմն խաղաղական. զոր՝ պարտ ի վերայ կայ մարդոյ ստանալ և պահել, առ որ երդուեալ իսկ է քրիստոնէի յաւազանին վերածնութեան. իսկ մեր՝ երկրորդ անգամ՝ ուխտիւ կրօնաւորութեան, հրաժարել ի կամաց մարմնոյ և ջանալ հոգալ տաճարացուցանել զնա հոգւոյն և Աստուծոյ։ Քրիստոս՝ նորոգող բնութեանս՝

ոչ ելոյծ զսա, այլ ելից. ոչ բացէ ի բաց ընջեաց չքացոյց զկիրսն, այլ խոհեմացոյց նուաճեաց. ոչ այլակերպեաց զտըն-տեսութիւն կենաց մարդոյս, այլ ուսոյց զհինն ի նորս փո-խել, եթող զմարմինն ի նուաստութեան իւրում, բայց ըզ-միտսն վերացոյց, զկամսն պնդեաց, զհոգին զօրացոյց. և ի զուգակցութեանն անդ՝ մեկնեաց ընդ հոգի և ընդ մարմին, որպէս ընդ լոյս և ընդ խաւար. ոչ լռեցոյց զպատերազմն սորա, այլ ետ հնարս նմա՝ յաղթող լինել ոսոխի իւրում. և սպանանել իսկ ո՛չ, այլ ստրուկ և գերի առնել, կամ թէ չատ՝ ծառայ հլու և հանդարտ։ Այլ այն որ յանձն էառ խո-նարհիլ խառնիլ ընդ ախտակիր բնութեանս մերում, խառ-նեաց և զմեզ ընդ աստուածութեան իւրում. խառնումն՝ թե-րեւս հիանալի քան զիւր մարմնաւորութիւնն. զի համար-ձակութիւն ետ ամենեցուն յօդիլ լինել անդամ յանդամոց իւրոց. «Ո՞չ գիտէք, զոչէ Առաքեալ, եթէ մարմինք ձեր ան-» դամք են Քրիստոսի... Ո՞չ գիտէք զի մարմինք ձեր տաճարք » են Հոգւոյն Սրբոյ՝ որ ի ձեզ, զոր ունիք յԱստուծոյ, և » չէք անձանց տէր, զի գնոց գնեցայք. փառաւոր արարէք » զԱստուած ի մարմինս ձեր», և որ այլն եւս։ Եւ յառաջ քան զայս՝ Քրիստոսի ինքնին օրինակաւ սխրալի բանն. «Ես եմ որթ, և դուք ուռ. որ հաստատեալ է յիս՝ և ես ի նա... Կացէք յիս՝, և ես ի ձեզ»։ Եւ զի՞նչ այսոքիկ ցուց-ցեն. բայց զի պարտականք եմք սուրբ առնել զՔրիստոս յանձինս մեր, կամ որ նոյն է սուրբ լինել ի Քրիստոս. խառնիլ սիրով ընդ սէր նորին, հոգւով խոնարհութեան ի հոգին հեզութեան, կուսութեան ջանիւ՝ ընդ կուսածին մարմ-նոյն։ Ոչ միայն տաճար լինել նմին՝ այլ և առագաստ ա-նուշահոտ և ջահաւորեալ յոր եկաւորեսցի փեսայն անմահ՝ առ հարսն ակնկալու՝ զգաստութեամբ և անձկաւ։ Ո՞վ, արդարեւ անհաս այլ անսուտ խոստումն և բաստ հիգացե-լոյ բնութեանս. ո՞վ սրբութիւն սրտի հեզոյ, քանի՞ բար-ձրաթռիչ են թեւք քո. ո՞վ կուսութիւն, հրաշացեալ յերկրի և պսակեալ յերկինս. բազդ չքնաղ, յոր ընծայեցուցաք զան-ձինս և մեք՝ յաւուր ուխտադրութեան մերոյ առ ոտս սե-զանոյն և խաչին, յորմէ աւանդեցաւ մեզ ի մայր՝ Կոյսն կուսանաց և մեք՝ յորդեգիրս փոխանակ Միածնին իւրոյ. ի դէպ էր յայնմ ժամու, ի գէպ և այժմ և յաւէտ էր, ասել

զմէնջ՝ որպէս զՅովհաննէ եթէ «յայնմ ժամանակէ էառ զնա աշակերտն առ իւր»։ Ո՞հ, որպիսի սքանչելիք, եթէ քաջ միտ դիցուք իրացն եղելոց անդ՝ ի կատարման տնօրէ-նութեանց Քրիստոսի, և աստ ի սկզբան կրօնաւորութեանս մերոյ. անդ արիւն, և աստ արտասուք, անդ մահ և աստ մեռելութիւն կամաւոր. և անդ սէր, և աստ սէր. և ոչ միայն որդեգրութիւն Կուսի, այլ և լրումն խոստմանն՝ եթէ, «Եղիջիք որդիք Հօր ձերոյ որ յերկինս է»։

Զի՞նչ քան զայսոսիկ յորդորակք մեզ հզօրք՝ առ ի զգաս-տութիւն, յառաջադիմութիւն և յարատեւութիւն ի սրբու-թեան սրտի։ Իցէ՞ օրէն և արժան՝ յաւելուլ ի վերայ սոցին՝ միւս եւս սքանչելիս՝ ոչ ինչ նուազագոյն, այլ և առաւելա-հրաշ իսկ. անդունդք խոնարհութեան Քրիստոսի, և բար-ձունք մարդկութեան զեր քան զհրեշտակացն. ովկի՞ան ան-չափելի սիրոյ՝ չափաւորեալ յափին փոքու ձեռին... իմա-նայք զոր ասելս կամիմ և ոչ կարեմ բովանդակել... խո-ր՞ան, սեղան, և որ ի վերայ նորա, յոր ոչ բաւէին մատ-չել Մովսէսք և Ահարոնք, ոչ Աբրահամ և ոչ անհայրն և անմայր Մելքիսեդեկ... Պատարագն... յորում, թուի իմն Քրիստոսի նուաստանալ քան ի մկրտութեան ընդ ձեռամբ Կարապետին, և ճահագոյն ասել և աստ, «Մկրտութիւն մի եւս ունիմ մկրտիլ, և զի՞նչ փութամ մինչեւ կատարեսցի՝»» ո՞հ, և որպիսի՞ ձեռօք, որոց չնորհի կատարել զՔրիստոս՝ ի նուէր և ի զոհ՝ արեամբ չափ, մինչ ինքն իսահակօրէն կա-պեալ իմն ձեռօք և ամենայն անդամօք՝ քահանայացուցանէ զիս, զնուաստս, զանարժանս, զոչինչս... և երանի՜ թէ այս-չափ միայն, և ոչ մեղաւոր և անմաքուր եւս։ Այլ չէք աստանօր տեղի և գամ վարանաց և ապշութեան. հարկ է զանհնարինսն հնարաւոր առնել, և եղանիլ սուրբ, կամ բա-ւական վառեալ սիրով, առ ի մտանել ի հնոց անչիջանելի սիրոյն, որոյ բոցք յերկինս ի վեր հատանին և շուրջ զեր-կրաւ պարունակին, չշափել մահացու մատամբք զանմահ մարմինն, համբուրել հողեղէն շրթամբք զհրեղինաց անմեր-ձենալին, և ոչ եւս տաճար և խորան այլ տուփ և տապա-նակ լինել մարմնոյ և արեան՝ ինքնազոհ զենլոյ որդւոյն Աստուծոյ. այլ և կենդանակիր տապան անմահութեան՝ կնքելոյ մաքրափայլ լանջօք։ Հիացուցիչ, ընդոստուցիչ, ա-

հաբեկք են իրքս, թերեւս և անմատչելիք և փախչելիք։ Սակայն, աշխարհս հանապազ ի չարի կայ. յամենայն ժամ մեղանչեն մարդիկ, և մեղք՝ քաւութիւն թախանձեն. Քրիստոս միանգամ մեռաւ և պատարագեցաւ, այնուհետեւ զքահանայութիւնն մեզ աւանդեաց։ Պատարագեսցուք ուրեմն այնպէս, զի և զօրհնասլաց մեռանիցիմք ընդ նմա և ըստ նմա, ասելով նախ. «Եթէ զանօրէնութիւնս իմ յիշես, Տէր, ո՞վ կարիցէ կալ առաջի քո». և քաջալերիլ յիշելով, զի «ըզսիրտ սուրբ և զհոգի խոնարհ՝ Աստուած ոչ արհամարհէ»։ Այս միայն յետին ապաստան է զաղփաղփուն մտաց, որ տեսցէ զԵրեմիա և զԵսայիաս հրամաքուր անձինս՝ զարհուրեալս ի ստուերական սրբութեանցն Աստուծոյ, և զկարապետն և զԱռաքեալսն՝ երկիւղիւ մեծաւ և բազում պատրաստութեամբ մերձեցեալս առ այսպիսի խորհուրդ. և զԱստուածամայրն իսկ անբաւական ասել առ ընդունելութիւն Բանին Աստուծոյ, բայց եթէ խոնարհութեամբ. և զեղիսաբեթ՝ անբաւական յընդունել զնոյն ինքն զաստուածակիր կոյսն։ Եւ ի հակառակէն՝ զբազում արուսեակս երբեմն մաքրափայլս՝ գահավիժեալս ի գժոխս։ Երանի՜, արդարեւ և բիւր երանի, որոց սուրբ պահեալ զպատմուճան աւազանին՝ հրաւիրեցան և կատարեն զպաշտօն այպիսւոյ սեղանոյ. խնկօք և երկրպագութեամբ մեծարէի զնոսա, եթէ ներեալ էր. իսկ զնմանիսն իմ յետնեալս և բազում անգամ եւս ապտեղեալս՝ յորդորեմ, զահ և զյոյս յաջմէ և յահեկէ ունելով և զսէրն առաջնորդ՝ մատչել, եթէ դողալով և եթէ խայտալով, և կատարել զոր յանձն առին, նախ ի սրբութիւն անձանց իւրեանց և ապա թէ այլոց. անգուլ մաղթելով զշնորհս Հոգւոյն սրբոյ յօգնականութիւն, զի նոյն ինքն յաւիտենական աղբիւրն այն սրբութեանց՝ է իսկական կատարիչ այսպիսի մեծի խորհրդոյ։ Եւ դու հանապազ քննեա զանձն քո, ոչ միայն ի ժամու՝ յորում մտանելոց ես ի խորանն և ի սեղանն, այլ և յամենայն ժամ, որպէս թէ չկայցէ և վայրկեան մի տուընջեան և գիշերոյ՝ յորում չկարիցես հրաժարել ի պատարագելոյ՝ ի լինել հարկի։

«Զգոյշ լեր անձին քում». բովանդակ կենաց է խրատս, որպէս և բովանդակ կեանք, չեն ազատ ի փորձութեանց և ի վտանգաց. յիշեա զառաջինսն. զհամահրեշտակ գաւա-

նեալս առ ի մէնջ, զԱնտոնեանս, զԲենեդիկ, զԲեռնարդ, զՓրանկիսկեանս, զԹովմաս, և մինչեւ ցերրորդ երկնից տեսողն Պօղոս, քանի՜ զգուշութեամբ, երկիւղիւ, ճգամբք, չարակրութեամբք, մեռելութեամբք մարմնոյ կէին, ունելով կամ կասկածելով ունել ստատն խայթիչ մարմնոյ, և բողբելով, «Ո՞վ ապրեցուսցէ զիս ի մարմնոյ աստի տառապանաց»։ Խրատեսցուք յայսպիսեաց աստի սքանչելի ապրանաց. երկիցուք յայնցանէ՝ որոց երբեմն սոցին նմանք էին՝ և ապա անպիտանացան՝ կամ անհոգութեամբ կամ հպարտութեամբ. քաջալերեսցուք և օրինակաւ այնոցիկ՝ որք գբթեցին՝ այլ կանգնեցան։ Զիք ումեք տպահով լինել ի վրտանգէ, որպիսի և իցէ ոք, այլ որ զսէր, զերկիւղ և զյոյս՝ գիտիցէ ի դէպ ժամու առնուլ յօճան՝ ոչ է հեռի ի սրբութենէ։ Ես ոչ գիտեմ զո՞ յերիցս աստի վերադասել, կամ որո՞վ զբազմագոյնս յաջողեալ ի սրբութիւն, այլ յոլովից կարծեմ հարկ անցանել ընդ հուր և ընդ ջուր ճգանց և փորձանաց, առ ի հասանել յայն հանգիստն գիտակցութեան անձին առաջի Աստուծոյ, յորմէ և զերանութիւնն ժառանգել։ Առ որ՝ առ ոչ ինչ զրելի է զամենայն զգուշութիւն և աշխատութիւն, վիշտ և ժուժկալութիւն. գիտելով զի յոյժ համառօտ է այսպիսեացս ժամանակ, իսկ հանդերձեալ վայելիցն և վարձուց՝ անսպառ. առձեռն պատրաստ ունելով առ այսոսիկ զօրինակ և զխրատ առաջնոցն և զներկայից առաքինեաց, որ գրով, որ բանիւ և որ լռութեամբ և ի վերքան զամենայն՝ զկեանս և զբանս Քրիստոսի՝ որ յաւետարանի, որ ի գիրս առաքելոցն և որ ի կենդանի տախտակս՝ ի սրբոցն վարս և ի վկայիցն արեամբ չափ։ Զամենեցուն սրբութիւն կամի Աստուած, և սգնէ տկարութեանս մերում. շատ իցէ մերովսանն՝ ընդ իմաստնոյն ճանաչել, զի «ոչ այլազգ լինիցիմք ժուժկալ, բայց եթէ Աստուած տացէ»։ Դիտասցուք և ընդ Յովբայ՝ որ կամիմքս և պարտիմք կոյս լինել. և նախ քան զնա եղեալ եմք ուխտ, «մի հայել ի կոյս» երկրաւոր, անկոյս հոգւոյ աչօք. զի յաճախ ընդ աչս են մուտք և ելք մահու։ Յուշ լիցի մեզ գեղեցիկ ասացուած Զգօնին՝ վասն կուսութեան։ «Նմանութիւն է զուարթնոց» երկնից, և յերկրի աստ պարգեւօք եղեւ ստացեալ... մինչ», կորնչի նա՝ այլ ոչ գտանի, և գնովք ոչ կարէ ստանալ զնա

» մարդ. ոչ որոյ են՝ և կորուսանէ զնա, և ոչ որոյ չէ գը-
» տեալ և ընթանայ՝ կարէ հասանել նմա »։

Եւ արդ, քեզ՝ որ շնորհօքն Աստուծոյ և քոյով ջանիւ՝ սուրբ իցես սրտիւ՝ և փափագիցես, որպէս և արժանն է, կալ ի սրբութեան. և քեզ՝ որ գայթ ի գայթի՝ և ցանկաս սրբութեան, առձեռնպատրաստ կայ ամենասրբիչ աւազան և օշարակ բժշկութեան. երկրպագելի Արիւն Փրկչին քո, որոյ և մատռուակդ ես կարգեալ. և զօրհանապազ լսես յաղբերէ նորին, « Ո՜ որ ծարաւիդ էք՝ եկա՛յք, արբէք և լուացարուք, կազդուրեսջիք և սրբեսջիք։ Ո՜հ, ցանկայ և փափագէ և անձն իմ քան զեղջերու պասքեալ, ոչ միայն թէ առնուլ յումպ յաղբերէ այսի փրկութեան, այլ թէ հնար էր անկանել ի նոյն իբրեւ ի Սելոամն, և ընկղմել յուղխս փափկութեանն, որով տիեզերք ամենայն արբեցան և սրբեցան։ Լուացայց և ես ի նմին, զի սրբեալ բովանդակ մարմնով և հոգւով, զօրասցին աչք իմ նկատել զԱստուած յերկրի և համարձակ տեսանել յերկինս։

Բ

Որոց ի հաճոյս և ի կամս մարմնոյ յարեալ և գերեալ է, ոչ միայն չէ հնար առնուլ զճաշակ կուսութեան և սրբութեան. « Զի մարդ շնչաւոր ոչ իմանայ զհոգեւորսն, և զԱստուծոյսն », այլ և զրկումն թուի հրաժարելն ի վայելից և բարեաց աշխարհիս, իբրու այն թէ մարդոյ անկ էր ըստ բնութեանն կեալ, և ոչ գերազանցօրէնն կեալ, որ յաւէտ կուսակրօնիցն է կենցաղ, որոց ի բաց դարձուցեալ զաչս ի հրապուրանաց անտի, զվերինն խնդրեն առագաստ. զանթառամ գեղեցկութիւնն, զճշմարիտն զանկողոպտելի բարին, զանխառն զմաքուր սէրն, զԱստուած՝ ի վեր քան զամենայն, և յամենայնի զԱստուած, և հանապազ զԱստուած կամ զաստուածայինս։ Եւ որքան առաւել հային և պարարին ի սոսին, այնքան և պայծառս տեսանեն, և ուրախ լինին և խնդան, և ասէ իւրաքանչիւր ցանձն իւր, « Բաժին իմ հաճոյ եղեւ ինձ »։ Ասացից և ես միանգամայն միաբանելոց յայսպիսի տեսութիւն, Երանի՜ է քեզ, Իսրայէլ, զի հաճոյքն Աստուծոյ ծանօթ են քեզ. և այնչափ առաւել ծանօթասցին՝

որչափ առաւել ի նոյնս խոկասցիս։ Այլք յառաքինութեանց յաճախ ըստ պատեհի ներգործեն. մաքրութիւն որ և սրբութիւն՝ հանապազորդ է և լուսատու բնաւիցն. վասն որոյ պնդէ Առաքեալն, « զհետ երթայք զսրբութեան, զի առանց այսորիկ ոչ ոք տեսանէ զՏէր ». այլք յառաքինութեանց հանգուցանեն զհոգի, սա և զմարմին, որ և օժանդակէ հոգւոյ աճեցուցանել զբոյսս բարեացն՝ ազատօրէն. և Իմաստնոյն աչք՝ սա « Եւ յԱստուծոյ ճանաչի և ի մարդկանէ. » ի հայել նորա՝ նմանող լինի նմա, և ի մեկնել նորա՝ անձ-
» կանայ առ նա, և ի յաւիտեան պսակաւոր ճեմեցուցանէ,
» անթառամ նահատակութեանց պատերազմի՝ յաղթեալ »։

Աքանչելագործն Գրիգոր սքանչացեալ ի միտս իւր՝ գրէր. « Զի՞նչ քան զլոյս կուսութեան իցէ լուսաւորագոյն. ուստի
» և զառաքինութիւնս՝ Կոյս անուանեն՝ որք քաջաբար զգո-
» յութիւնս նոցա նկատեն ». զոգջիր, թէ սա է որ և « ընդ
» լուսոյ համեմատեալ՝ առաւել գտանի ». և որպէս ի զարդու հաստատութեան երկնից՝ « աստղ քան զաստղ առաւել է փառօք », այսպէս և սա ի լաւութիւնս. և որպէս գերազանցք յաստեղս՝ երկոքին լուսաւորքն տունչեան և գիշերոյ, այսպէս սիրեմ իմանալ գերկեակսն՝ Կուսութիւն և Խոնարհութիւն, ազնուագոյն ծնունդք Ծնելոյն յԱստուծոյ և ի Կուսէ, որք և ի մեզ ծնանին զազնիւն յազնուաց՝ զսէրն, զայն՝ որով տեսանի Աստուած, զորմէ ասէ Զգօնն, եթէ այս « սէր՝ խոնարհաց վայել է, զի գիտեն շրջել նոսաւ... աչք
» տեսութեան նոցա ընդ երկիր հային, և աչք մտաց նոցա՝
» ի բարձունս վերին.. մարմին նոցա տեսլեամբ գնայ ի
» վերայ երկրի, և խորհուրդ նոցա՝ առ Տէր իւրեանց ե-
» գեալ են »։ — Անանիանքն վեհագոյն փառաբանիչքն Աստուծոյ, գերազոյն նմին օրհնաբանս և զոյգս կարգեն զերկեակս այս. « Օրհնեցէք սուրբք և խոնարհք սրտիւք զՏէր օրհնեցէք ». և աստ դադարէ յերկրի ամենայն օրհնութիւն եղականաց առ Անեղն. անտի և անդր՝ Սերովբէից սրբասացութիւնն է յերկինս՝ դէմ յանդիման Աստուծոյ։

Ցայն տեսութիւն նկրտի ամենայն սիրտ առաքինի, և այնքան վերանայ՝ որքան յաւելու ի խոնարհութիւնն և ի սրբութիւն. և ոչ գիտեմ թէ արդարեւ ի՞նքն վերանայ առ Աստուած, եթէ Աստուած խոնարհի առ ինքն։ Լուծանէ զտա-

բակուսանքս՝ այն որ զգաց և ասաց. « Հայեցաւ Տէր ի խո-
նարհութիւն աղախնոյ իւրոյ », յաւելից, եթէ և երկոքին
տեսին զմիմեանս, Աստուած՝ անչափապէս, Կոյսն՝ որքան
բաւէր բնութիւն ստեղծուած և անարատ։ « Որ յամենայն
» ախտից զսիրտն մաքրիցէ, ասաց մաքրակենցաղ հայրա-
» պետն մեր. Ս. Կլայեցի, յիւրոյ հոգւոյն գեղեցկութիւն
» իբր ընդ հայելի՝ տեսանէ զաստուածային կերպարանն ».
և այսպէս կատարի տէրունական աւետիքն, « Արքայութիւնն
» Աստուծոյ ի ներքս ի ձեզ է »։ Եւ յորժամ սա ի ներքս
իցէ՝ զի՞նչ այլ ինչ մնայ արտաքոյ։

Բայց իմ խնդիր առ յինէն այս է, եթէ իցէ՞ արդարեւ և
յիս ի ներքս՝ Արքայութիւնն Աստուծոյ, կամ թէ ես ինքնին
իցե՞մ յարքայութեանն Աստուծոյ, որչափ մարթ է լինել ի
կեանս մարդոյ։ Որ խնդրէ զարքայութիւն Աստուծոյ՝ խըն-
դրեսցէ նախ զանձն իւր, խորագոյն քննութեամբ. մի գուցէ
մթերք օտարոտիք կալեալ խափանեալ իցեն զտեղի յայտնու-
թեանն Աստուծոյ. մի արդեօք աղտ ինչ սպրդեալ ի ներքս-
սագոյն անդր գաբիրայն։ Եթէ այդպիսի ինչ մածեալ է ըզ-
քեւ, թէպէտ և հազար աչս ունիցիս, ոչ կարես նշմարել
զնշոյլս տարփալի լուսոյն՝ որ լուսաւորէ զամենայն՝ որ ինչ
հաճոյ է ի տեսութիւն աստուածասիրաց. լուսաւոր առնէ և
զտեսողն։ Եւ զի՞նչ քան զայս ցանկալի ընդ երկնաւ. իցէ՞
ուրուք տեսեալ յերկրի սքանչելի քան զշնորհաւոր կերպա-
րանս՝ յոր անբծութիւն հոգւոյն արտափայլիցէ, թէպէտ և
մանուկ իցէ տիօք, թէպէտ և ծեր ալեօք, զորոյ և զխորածս
երեսացն ի ժամանակէ՝ կուսական մաքրութեանն շնորհ՝ ծե-
փելով իմն ծածկէ, և մանկագեղս փթթեցուցանէ ժմիտս, յա-
ւերժս գործելով տղայս, ի տղայոց՝ որոց յայտնին թագունքն
ի գիտնոց աշխարհն, որք յանգիծ յանբիծ պարզութեան սըբ-
տից իւրեանց ընթեռնուն՝ զայն՝ զորմէ կոյսն և սուրբ աշա-
կերտն ասէր, թէ ոչ այլ ոք կարէ ընթեռնուլ՝ բաց յիւրոց
նմանեաց։ Ո՞վ երջանիկ մանկունք մաքուրք, դուք արդա-
րեւ « Ցանեայք զՀայրն ». երջանիկք և դուք հարք կուսանք,
զի « Ցանեայք և Դուք զայն՝ որ իսկզբանէ է »։ Ձեզ մանա-
ւանդ երանի՜ երիտասարդաց, « զի էք դուք հզօրացեալք, և
բանն Աստուծոյ ի ձեզ բնակէ, և յաղթեցէք դուք չարին ».
որք պահեցէք զանձինս մաքուր յաղտից և յախտից. և « Սի-

» րեցէք զկուսութիւն, զմասն երկնաւոր, զխառնումն զուարթ-
» նոց երկնից. չէք ինչ որ համեմատին նմա. որք այդպիսիք
» են՝ ի նոսա բնակէ Քրիստոս »։ Երանի՜ ձեզ աստուածատե-
սիցդ և աստուածակրաց, որք զարքայութիւն նորա ի ներքս ի
ձեզ ունիք, և ի նմին տեսանէք զամենայն բարի, զամենայն
գեղեցիկ՝ որ ինչ յերկինս և յերկրի. դուք գիտէք զօրէնս և
զբնութիւն իսկական բարւոյն և գեղեցկին, զոր թերեւս ոչ
կարիցէք բացատրել լեզուաւ, այլ. իմանայք քաջ հրեղէն լե-
զուաւ սիրոյ որ ի ձեզն խօսի, ի ձեզ յայտնի, զձեզ լնու,
երանելիս առնէ զձեզ։

Սէր սուրբ. կատարիչ կատարելութեան մարդոյ, և անհնա-
րիցն հնարաւոր. զհանդէսս քո պէսպէս ուսանիմ յԱռաքելոյ,
և քաղցր է ինձ յեղյեղել զհոգեկրի նորին Զգօնին վկայու-
թիւն. « Սէր համբերող է, սիրէ զլռութիւն, սիրէ զխոնարհս,
» սիրէ զնուաստս, սիրէ զիմաստունս... Սէր՝ յանարգութեան
» անդ իւրում յենու ի միտս իւր և համբերէ. աղմկի, և լուռ
» և ցած է... ոչ հոգայ զաւուրց, ոչ աղերսի զամաց.. Սէր՝
» տեսանէ զանձն իւր, և գիտէ զչափ կարգի իւրոյ... սիրէ
» զամենայն մարդ, և սիրելի է ամենայն մարդոյ. հանէ և
» դնէ զբարիս.. Սէր՝ լոյս, սէր՝ աղ, սէր՝ ակն բարեաց...
» տիպ ամենայնի։ Սէր՝ թեւակոխի ընդ իմաստութեան, և
» ցանկալի են չահք գնացից իւրոց... Որ ստանայ զսէր՝ ե-
» բանի է անձին նորա, զի նովաւ կատարին պտուղքն զը-
» գուելիք »։ Սիրտ սուրբ յառաջեալ յաստուածտեսութիւն՝
յազբիւր անդր իւր հեռազօտեալ վերընթանայ, և ի գործս
նորին սխրանայ. յորոց միջի առաւելաչնորհ զիւր զհոգին
նկատէ՝ զլուխ արարածոց, և զպատկեր Աստուծոյ տպաւո-
րեալ ի նմին, զոր ոչ միայն անաղարտ պահել գուն գործէ,
այլ և յաւէտ փայլեցուցանել և հիանալ յինքեան և զմայլել.
և որպէս քնար ինքնաշարժ թեւակոխել յերգս, յօրհնութիւնս
իմանալիս՝ քան իմանալի առնելիս. քանզի, որպէս ասէ
Զգօնն, « Սրբութիւն սրտի՝ է աղօթք առաւել քան զամե-
» նայն աղօթս... և լռութիւն խառնեալ ի միտս յստակա-
» ցեալս՝ առաւել է, քան թէ ոք բարձրաձայն աղաղակիցէ »։

Զի՞նչ արդարեւ քաղցր և հեշտալի սրտի հեզոյ և մաքրի՝
քան յաստուածայինսն խոկալ և խորամուխ լինել. ամենայն
պատուիրանք Աստուծոյ և պարտք իւր՝ ըղձալիք թուին. ոչ

հարկ՝ այլ կիրք. խրատն կատարելութեան՝ սովորական աս-
պարէզ է նորա. պատուէրն սրբութեան՝ հանապազօրեայ
կրթութիւն. լուծ կրօնաւորութեան՝ մանեակ պարանոցի լծա-
դրին. ուխտ կուսութեանն՝ տարփանք և զգուանք փեսային.
հրաժեշտ անձին կամաց՝ ազատութիւն անսահման. քահա-
նայագործութիւնն՝ ոչ այնքան ընդ բարձրութիւն չնորհին
զարհուրեցուցանէ, որքան ընդ գութ և ընդ խոնարհութիւն
Քրիստոսի սքանչացուցանէ. պատկերակցութիւն Աստուծոյ՝
ոչ եւս պակուցանէ, քանզի և զԱստուած տեսանէ՝ մարմնով
նմանեալ ինքեան. սրբութիւնն սրբոց՝ ոչ եւս անմատոյց,
քանզի հաղորդութեամբ պատարագին Քրիստոսի՝ խառնի
յաստուածութիւն անդր, յայն՝ որ « Սէր է, և որ կայ ի սէրն՝
» բնակեալ է յԱստուած և Աստուած ի նմա բնակէ »։ (Ա. Յոհ.
Դ. 1)։ Բայց մի միայն խէթ կայ տակաւին նմա. այն՝ զի ոչ
որպէս ըղձայրն վաղ վաղ սպառին լուծանին կեանքն. կեանքս
այս խափանիչ լաւագունի կենաց. իսկ մահ՝ յորմէ դողայ
ամենայն մահկանացու, չարկանէ արհաւիրս սրտի սրբոյ, զի
ոչ գտանէ ի նմին զծնող իւր՝ զմեղս. յետին վարագոյր է
մահ ընդ հոգին և ընդ արարիչն. և դուռն ընդ մէջ երկուց
յաւիտենից, զոր ստէպ բաղխէ հառաչանօք, Բա՜ց ինձ, Տէր։
Արդ, ո՞ւր է յաղթութիւն քո, մահ. արագ ես դու ի հասա-
նել և ի կորզել. այլ սիրտ սուրբ՝ գերազանցեալ վերաթեւէ
զքեւ, մտանել տեսանել ճանաչել զԱստուած, որպէս նոյն
ծանեաւ զինքն։

Իսկ ինձ՝ որ հիացեալ սխրացեալ կամ ընդ սլացս սրբա-
սրբութիւն, զի՞նչ օգուտ, ցորչափ ընդ երկուս հետս կաղայ-
ցեմ, և զսէր մաքրեցելոցն ոչ ունիցիմ. զի՞նչ չահ սքանչա-
նալ ընդ առաքինացեալսն և կալ յուլացեալ և թուլացեալ,
եթէ և ոչ վարակեալ յախտս և յաղտս. եթէ՝ գիտելով և
քարոզելով զայսոսիկ լեզուօք մարդկան և հրեշտակաց՝ և
զնոցա « Սէր ոչ ունիցիմ, եղէ ես իբրեւ զպղինձ որ հնչէ
» կամ իբրեւ զծնծղայս որ զողանջեն »։ (Ա. Կոր. ԺԳ)։ Ո՞ր
օգուտ ի խորաքնին խնդրոց և յաստուածապատում ճառից՝
եթէ ոչ որոնիցեմ զԱստուած աչօք մաքրեցելովք. « Եթէ ու-
» նիցիմ զմարգարէութիւն և գիտիցեմ զխորհուրդս ամե-
» նայն. և զամենայն հաւատս՝ մինչեւ զլերինս փոփոխելոյ.
» և սէր ոչ ունիցիմ՝ ոչ ինչ եմ »։ Զի՞նչ չահ ինձ յամենայն

ջանից, հնարից, գործոց և վաստակոց, հաճոյից և վայելից,
փառաց և բաստից, եթէ ոչ չահիցեմ զանանցական բարիսն.
և « եթէ ջամբիցեմ զամենայն ինչս իմ աղքատաց, և մատ-
» նիցեմ զմարմինս իմ յայրումն, և սէր ոչ ունիցիմ, ոչ ինչ
» օգտիմ »։ Եւ յոր ինչ յարեցայց և պնդեցայց՝ և ոչ յա-
մենայն սրտէ յԱստուած և յաստուածային, ահա յամե-
նայնէ միանգամայն թափուր գտայց։ « Եթէ տայցէ այր զա-
» մենայն զկեանս իւր ընդ սիրոյ (ոչ աստուածայնոյ) ան-
» գոսնելով անգոսնեսցեն զնա »։ (Երգ. Ը. 7)։

Այլ՝ օն անգր, սթափեաց թօթափեա՛ զբարուրսդ, ո՞վ
անձն՝ հաստեալ ի պատկեր Աստուծոյ, լուացեալ արեամբ
Գառին նորա, Քրիստոսի լծակիր և կուսամօրն որդեգիր.
հայեաց շուրջ զքեւ և ի քեզ. տես, ո՞ւր իցես, յի՞մ դեգե-
ռիս, զի՞ւ իւիք զբաղեալ իցես. զուցէ ընդ Մարթայի՝ ի բա-
զում սպասու. և ոչ իսկ յանգոսնելիս, սակայն « աստ սա-
» կաւ ինչ պիտոյ է ». է « Անարատ պահել զանձն յաշ-
» խարհէ ». ընտրեա զմասն Մարեմայ, զսրբութիւն սրտի.
զանց արա զամենայնիւ, և բնաւ ամենեւին մի՛ զսիրովն Աս-
տուծոյ. որով զամենայն ինչ ունիցիս, և առանց որոյ ոչինչ
և ոչինչ։ Ամենայն զոր տեսանեսդ՝ երագ երագ անցանէ,
խափանի, լուծանի. ոչ լոկ զգալիքն և նիւթականք, այլ և
նրբինք և բանականք, մարգարէութիւնք անգամ. բայց « Սէր՝
» ոչ երբէք անկանի ». (Ա. Կորն. ԺԳ. 8)։ Սէր միայն է
ճշմարտութիւն. սէր միայն կեայ յաւիտեան և եւս. և հա-
մառօտ ճանապարհ նորա յերկրէ յերկինս՝ սրբութիւնն է
սրտի։

Ո՞վ հրաշալի Սէր Սուրբ, թագաւորեա ի մեզ, զորս ըն-
տրեցեր քեզ սպասաւորս. յարդարեա տաճարացո քեզ զսիրտս
մեր. « Եկեսցէ ի մեզ արքայութիւն քո ». զի ուր դու ոչ
տիրես՝ անդ բռնանայ մարմին, աշխարհ հրապուրէ, դեւք
կաքաւեն, մահ գերի վարէ. և ո՞ բաւիցէ թափել ի դոցանէ
զսիրտ տառապեալ։ Լսեմ զի ասես, « Ես զոր սիրենն զիս՝
» սիրեմ ». (Առակ Ը). ահա կամիմ և ես սիրել զքեզ, սէ՞ր
սրբութեան սրտի։ Լսեմ զի կարդաս, « Եթէ ոք սիրէ զիս՝
» զբանն իմ պահեսցէ, և Հայր իմ սիրեսցէ զնա. և առ նա
» եկեսցուք, և օթեվանս առ նմա արասցուք »։ Ահաւասիկ,
« պատրաստ է սիրտ իմ, պատրաստ է սիրտ իմ առ քեզ, Աս-

» տուած ». մի՛ զանց առներ զինեւ։ Լսեմ, զի քարոզես, « Եթէ ոք ոչ սիրէ զՏէր մեր Յիսուս Քրիստոս, եղիցի նզո- » վեալ »։ Քա՜ւ ի մէնջ այգպիսի աղէտք. այլ օրհնութիւն և զօրութիւն առ ի քէն, յօժարութիւն և ջան՝ առ ի մէնջ։ Քեզ եմք նուիրեալք, « Ընկալ զծառայս քո » և եթէ յանցեաք երբէք և մեղաք քեզ, արդ զի կամիմք սրբութեամբ պաշտել զԱուրբդ սրբոց, եթէ ուրեք և « առաւել եղեն մեղքն՝ » անդ առաւելուցուն և շնորհքն ». որով լիցուք մասնակից և դասակիցք այնոցիկ որ սուրբ են սրտիւք. և տեսանեն զԱստուած՝ աստէն փոքր ի շատէ, և անդէն լիովին։

Ը

ԵՐԱՆԻ՝ ԽԱՂԱՂԱՐԱՐԱՑ ԶԻ ՆՈՔԱ ՈՐԴԻՔ ԱՍՏՈՒԾՈՅ ԿՈՉԵՍՑԻՆ։

Զիք բարի՝ և ոչ գերագոյնն բարեաց Սէր, առանց խաղաղութեան՝ որ յանձին և որ ընդ մարդկան, որոց առ ի քաղաքավարել ըստ օրինաց աշխարհի, հարկ է ըստ խրատու Առաքելոյն՝ « Զխաղաղութեան գհետ երթալ ընդ ամենեսին »։ Այլ և ի հանապազորդեան փորձոյ յայտ է՝ զի ոչ է դիւրին ստացուած և պահպանութիւն խաղաղութեան. և մարթ է ասել, եթէ այլք ի լաւութեանց՝ պարգեւք են յԱստուծոյ, իսկ սա աստուածայնագոյն եւս է, և պարգապէս՝ ըստ Առաքելոյն՝ ճշմարիտ « խաղաղութիւն Տէր մեր Քրիստոս է ». ապա չկայ չմնայ անձին զգօնի, բայց հետեւեալ Քրիստոսի որ յանմատոյց յաւիտենական անդորրութենէ իւրմէ՝ եկ, եկն, և « զմիջնորմն (անջրպետ երկնից և երկրի) քակեաց, և արար » զերկոսեանն մի ». ընդ որ սքանչացեալ վերնական զօրութեանցն՝ երգ նախաձայն երգեցին՝ « փառք ի բարձունս Աս- » տուծոյ. յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն ». և ինքն Տէր՝ ի շրջելն յաշխարհի աղմկելոյ՝ կենսաբեր աւետարանաւն քարոզէր, « Ես եկի զի զխաղաղութիւն ունիցիք, և ա- » ռաւել եւս ունիցիք »։ Դա և վերջին աւանդ կտակաւ եթող աշակերտացն, « Զխաղաղութիւն զիմ տամ ձեզ ». եւս և ի

» նորոգ կենդանութեան և ի նորաբոյս անմահութեան՝ առաջին ողջոյն առ նոյնս՝ « խաղաղութիւն ընդ ձեզ »։

Այլ, բա՜ռ, ի յեզյեղեն զայսոսիկ՝ սոսկումն իմն յանկարծոյն յիս հարկանի. և սուսեր իմն շողացեալ տեսանեմ քան զքերովբէականն սպառնալից՝ շրջանակեալ ընդ երկինս և ընդ երկիր. և ո՞ւր է խաղաղարարն՝ որ ժողովեալ զսուր և զսուին՝ կոփեաց ի խոփ և ի մանգաղ, և եհան զհօտ իւր պարարել յարօտս հանգստեան, և մակաղել զգայլ ընդ գառին։ Մինթէ փոխեաց զբարբառն համբոյր, և միւսանգամ յօտոցն և գերանդի՝ ձուլեցան ի սուսերս և ի տապարս. և որոտալով հնչէ, « Ոչ. եկի խաղաղութիւն արկանել այլ » սուր »։ — Եթէ չիցէ ամբարշտութեան՝ գրդէի ասել, Զայնդ այգ ձայն է խստութեան Եսաւայ, այլ շրթունքդ և ձեռնդ՝ Յակովբայ են հեզոյ։ Հզօր է սուր քո, Քրիստոս, այլ հզօրագոյն եւս է սէր քո. և ես ի սէր քո վստահացեալ չերկնչիմ ի սրոյդ. քանզի դու ինքն պատուիրեցեր երկնչել յայնմանէ միայնոյ՝ որ սպանանէ միանգամայն զմարմին և զհոգի. իսկ դու՝ գիտեմ՝ զի զհոգի կեցուցանես և զմարմին սրբես. քանզի սուր քո սրեալ է սիրով. հարուած դորա՝ բժշկութեան է զարման. ոչ է պատերազմ քո պատերազմն կորընտեան, և ոչ արուեստ քո ըստ հնարից որդւոց մարդկան։ Սուր քո և խաղաղութիւն՝ միահաւանք են. ի միում դիմի զինուդ՝ կտրուածն, և ի միւսում՝ կարուածն. որպէս ոչ է խաղաղութիւն քո աշխարհային, ըստ վկայութեանդ, եթէ, « Ոչ որպէս աշխարհս տայ՝ տամ ես » զայն, այսպէս և սուր քո արկեալ յերկիր՝ ոչ է հոգեկոտոր՝ այլ հոգեկեցոյց։

Խաղաղութիւն աշխարհի՝ թմրութիւն իմն է և անզգայութիւն՝ առ կատարեալ կեանս. ի վերին երեսս հանդարտ, ի խորս հոգւոցն խռովք. Քրիստոսի խաղաղութիւնն թէպէտ և խռովիցէ խորշեցուսցէ զմարմին, հանգուցանէ զհոգին. հատանէ զհանգոյցս հակառակութեանց մարդկան և հաստատէ նոր կապանս հաշտութեան։ Սուր Քրիստոսի արկանի ոչ միայն ընդ հոգի և ընդ մարմին, այլ և ընդ մարդիկ և մարդիկ։ Սուրն այն հատու խրատէ խաղաղել յանձինս զկամ և զկռիւ կրից հոգւոյն և մարմնոյ, նախ անձամբ անձին և ապա այլոց լինել խաղաղարարս։ Առաջին ուսումն իցէ մեզ հանդար-

տելն յանձինս մեր լռելեայն, օրինակ իմն Քրիստոս յերեսնամեայ տնակեցութեանն. երկրորդ, քաղաքավարելն ընդ մարդկան, որպէս նա ի շրջելն յաշխարհի՝ քարոզութեամբ և բժշկութեամբ. հրաշալի իմն և երրորդ՝ հնարիւք և դեղով հաշտութեան երկնից և երկրի. կամ Աստուծոյ և մարդոյն, խորհրդով հանապազօրեայ՝ զենման իւրոյ, սուր անճառելի արկանելով անբաժանաբար ընդ աստուածութիւն իւր և ընդ մարդկութիւն։ Համառօտ ասել, կենցաղավարութիւն Քրիստոսի, վարդապետութիւն Քրիստոսի և Պատարագն Քրիստոսի՝ լիցին մեզ այսօր օրինակք ճշմարիտ խաղաղութեան և խաղաղարարութեան։

Ա.

Քանզի կենցաղ կրօնաւորի սերտագոյն նմանողութիւն է կենաց Քրիստոսի, և մանաւանդ որոց ըստ մեզ ի տղայ տիոց նուիրեալս է ի կրթութիւն կրօնիցս, ըղձալի է յամենայն քայլափոխս կոխել զհետս նորա, ըստ վարուցն և գործոց իւրաքանչիւր չափու տիոցն։ Ցաւէ մեզ զի այնքան թաքուն եկեաց յերկրի Քրիստոս մինչեւ բաց ի տղայութենէն և ի քարոզութենէ և ի կատարածէն, չաւանդեցին մեզ աւետարանիչքն և առաքեալք՝ զմիջակ կենաց նորին և զմեծի մասին։ Սակայն քաջ իսկ բովանդակեաց ոմն ի նոցանէ զայնր ժամանակի գործս Քրիստոսի՝ ասելով. « Էջ ի Նա- » զարէթ (ընդ ծնողացն). և էր նոցա հնազանդ և Մայր նորա » պահէր զամենայն զբանսն՝ ի սրտի իւրում. — Եւ Յիսուս » զարգանայր իմաստութեամբ և հասակաւ, և շնորհօք Աս- » տուծոյ և ի մարդկանէ »։ Շատ լիցի մեզ այս յուսումն և ի կրթութիւն վարուց, եթէ գուն գործեսցուք՝ ըստ զգաստութեան Մօր նորա և մայրագրիս մերոյ՝ գիտել քննել և պահել զօրինակ վարուցն և զբանսն՝ ի սրտի մերում. և ոչ զբանսն ինչ միայն, այլ և զլռութիւնն և զթաքնութիւն, որ ոչ ընդհատ ի խօսից՝ ազդու է այնմ՝ « որ ունիցի ականջս » լսելոյ ». զի ոչ միայն յառաջին կեանսն, այլ և մինչ « յերկրի երեւեցաւ և ընդ մարդկան շրջեցաւ », նոյն և յայնժամ երբեմն՝ « չոգաւ թաքեաւ ի նոցանէ », յորոց միջի շրջէրն. որպէս զի ուսցուք և մեք խօսել ի ժամանակի և

լռել ի ժամանակի. և յառաջ քան զմխիթ ի ժողովս՝ կալ առանձինն ընդ Քրիստոսի և կրթիլ ընդ նմա զկեալն առանձինն և ընդ մարդկան. բայց նախ քան ընդ սոսա՝ զկեալն հաշտութեամբ յիւր ուրոյն մենարանի և յիւր ուրոյն անձին։

Արդ, զի առաջին ամք կենաց մերոց՝ ի վարժարանս զարգանան, և անդ առնուն զսկիզբն ուղղութեան՝ վարք մեր և ընթացք առ յապայն, հարկ է մեզ անձանձիր և անխնայ ջանիւ կրթիլ և կրթել յօրէնս կրօնիս։ Որքան բարեպատեհ է ժամանակս այս՝ այնքան և զգուշութիւն պիտի անկատարիցն տիօք, որք ամ ըստ ամէ յառաջին յաստիճանս կատարելոցն տիօք և ի նմանութիւն, որոց՝ իցի՛ թէ կարողութիւն էր ասել ընդ Պօղոսի, « Նմանողք ինձ եղերուք, որպէս և » ես Քրիստոսի », և ոչ լսել յանդիմանութիւն, « Բժիշկ, » բժշկեա զանձն քո » նախ, զոր յանդիմանն ամենեցուն դատափետ առնես։ Արժան էր և ինձ այսօր անձնադատ և արտադատ յանդիմանութիւնս այս՝ վասն պաշտաման յոր ըմբռնեալս եմ. այլ զի հարկի ի վերայ կայ ի ժամուս, հարկ է և յիշեցուցանել. զի կրթութիւն համբակաց մերոց ոչ ի վերակացուս և յուսուցիչս եւեթ է ապաստան, այլ և յիւրաքանչիւր ոք ի միաբանակեցաց. ոչ է հրաման ամենեցուն՝ ուսուցանելն բանիւ, այլ ամենեցուն պարտ են օրինակ բարի վարուց լինիլ, ըստ Քրիստոսի, որ « Սկսաւ առնել և ուսու- » ցանել »։ Քաջ գիտէ ամենայն ոք, զի որքան և խրատեսցէ վերակացուն՝ ցածահայեացս լինել և մի քննել զայլս, սրագոյն և ճարտար են աչք և ականջք մանկանց՝ յորսալ արտաքուստ զպատչաճ և զանպատչաճ. և եթէ կամիմք և եթէ ոչ՝ ճանաչեն փոքր ի շատէ և դատեն զվարս և զգնացս մեծի և փոքրու. ի տեսութենէ և ի լրոյ անտի՝ առնուլ միայն խրատ զգօնութեան և բարւոյն միայն հետեւել, գործ կարեւոր, այլ սակաւագիւտ շնորհ յայնմ հասակի, որպէս և յանձանց փորձոյ գիտեմք, յորում երազ է տպաւորութեան տեսլեանն և յամր կամ թերի՝ ընտրութիւնն։ Ցայսր վերայ՝ արժան է մեզ կարեկից լինել և ազդել մանկածուաց՝ զոր ինչ ի նոսա նշմարեմք, զի առաւել տեսանեն աչք բազմաց քան սակաւուց, և յուշ լիցի նոցա երկոքումք եւս վարիլ եզանակօք ի մարզելն, ըստ առաքելական հմտութեան, և յանդիմանել սաստիւ վարդապետօրէն, և՝ հայրօրէն՝ մի՛ զայրացու-

ցանել զորդիս, եւս առաւել մի՛ զայրանալ. յիշելով զիւրեանց իսկ եռանդն՝ յայն տիս և ի տեղիս։ Դարձեալ, մի այնքան զլաւութիւն դաստիարակելոցն ի հմտութիւն դաստիարակին հաւատացուք, և զանուղղութիւնսն ի տգիտութիւն նոցին, որքան ի մերս համաձայնութիւն ընդ դաստիարակսն, և մանաւանդ ընդ կանոնս և կարգս Ուխտիս, որոց հաւատարիմ պահպանութիւն՝ առաւել քան ի նորընծայիցն և ի դեռուսից՝ յուսելոցն և ի վարժելոցն պահանջի. և որքան որ վերագոյն է կարգաւ և հասակաւ՝ այնքան և առաւել ի նշաւակի կայ, և ի հեռուստ չինիչ կամ եղծիչ լինի բանից վերակացուացն։ Ո՞ տայր ամենեցուն լռելեայն դաստիարակ լինել մանկուոյն՝ առաքինազարդ վարուք և կերպարանօք, և ի մանկուոյ անտի առնուլ վերստին զճաշակս հլութեան և երկիւղածութեան, որպէս Մայրն՝ որ պահէր ի սրտի իւրում զբանս միածնի մանկանն. զի որպէս հրաշակերտն այն մանուկ՝ գիտէր և՝ հնազանդել ծնողացն, և՝ չինել զնոսին սխրալի վարուքն, անգիտօրէն իմն գիտեն և բարէմոյն ամօթխած մանկունք՝ լինել օրինակ չինութեան՝ ծերոց անգամ։

Բայց, մեր թողեալ արդ զՆազարէթ՝ գնասցուք ի Գալիլիա, ուր Նիկոդիմոս զարգացեալ տիրովք և հրահանգօք, այլ ոչ ըստ բաւականի, վարանեալ կայ, եթէ զի՞րդ մարթ իցէ վերածնանել և մանկանալ առ ի մարզել ի կարեւորս իւրում չափու զի անցեալ է ժամանակ ուսման, բայց ինքն տակաւին անուսումն է. զգայ ի ներքուստ պէտս խաղաղութեան. զի ոչ են հաշտ միտք և կամք, հոգի և մարմին։ Քանի՞ցս չիցէ և մեր լուեալ և հանեալ եւս հառաչանս, թէ տա՞յր որ անդրէն մտանել կամ լինել որպէս յաւուրս նորընծայութեան մերոյ և ի կեանսն վարժարանի։ Զասացից զի զուր է այսուհետեւ յոգւոց ելանել վասն ամացն անցելոց՝ զոր ոչ քաջ յարգեցաք. չասացից և զտաղտուկն երբեմն ի յաճախ լրոյ խրատուց և յանդիմանութեանց, որոց թերեւս այժմ կաթոգի լինիմք, այլ լուիցուք զԲրիստոսին առ Նիկոդիմոս և առ նմանս. « Պարտ է ձեզ վերստին ծնանիլ. Եթէ ոք ոչ ծնցի ի » Ջրոյ և ի Հոգւոյ՝ ոչ կարէ մտանել յարքայութիւն Աստուծոյ »։ Առ ի գիւտ ցանկալի խաղաղութեան անձին՝ արժան է հնարել զծնունդս զայս, ի Ջուր արտասուաց զղջութեան, և ի հուր սիրոյ Հոգւոյն։ Ոչ է քեզ մարթ միւսանգամ մտանել ի մանկանոցս, բայց կայ քո մենանոց. « Մուտ » ի սենեակ քո, և փակեա զդուրս քո. կաց յաղօթս առ Հայր » քո ի ծածուկ ». զի « Սենեակ յաճախեալ՝ անուշանայ », ըստ բանի հեղինակի գրոց նմանողութեան Քրիստոսի։ Սիրեսցուք զօթեվանիկն մեր, առանձնանալ ի նմին, մարզել՝ թէ ոչ եւս զտղայութեանս մեր՝ այլ զերիտասարդութիւն՝ որ բռնագոյն եւս է, և զծերութիւն՝ ծուլագոյն. ցանկասցուք և գտցուք « զԱիրելին՝ ի սենեակս մեր ». որպէս զի և առաւել փափագեսցուք վերնոյ օթեվանին աստէն առ փոքր մի ժամանակ մնացուածոյ կենացս՝ պանդխտեսցուք ընդ Քրիստոսի ի խշտիս մեր, զի և արժանի լիցուք ընդ նմին բնակիլ ի տան Հօր իւրոյ. վայելեսցուք առ վայր մի յառանձնութեան Յիսուսի և ընդ Յիսուսի. զնա առնելով ի վեր քան զամենայն՝ խորհրդակից և սրտակից, և առ նա դիմելով ի պէտս չքաւորութեան մերոյ. յորժամ զգայցեմք տակաւին ամբոխմունս և յուզմունս յոգւոջ՝ ի հնացեալ կրից և կարեաց անտի, զորս եթէ ոչ խաղաղեն չնորհք՝ մինչեւ ի մահ մարտնչին և ընդ նուաղեալ կենաց. ոչ ծերութիւն և ոչ հմտութիւն, այլ Քրոստոս միայն է և յամենայն հասակի՝ խաղաղութիւն մարդոյ։ Արասցուք ի խրճիթս մեր, եթէ ի զէպ իցէ ասել. երիս տաղաւարս սիրոյ, մի Տեառն, և մի Տիրամօր և մի հոգւոց մերոց, և յաջողեսցուք դառնել զանդորրութիւնն ցանկալի. այն իցէ մեր տեղի ապաւինի և տուն հանգստեան, տապան ապրեցուցիչ ի ծփանաց սրտի. անդ սիրեսցուք հսկել հանապազ։ Եւ եթէ հարկ ի վերայ հասցէ առ փոքր մի ելանել արտաքս, մի դանդաղեսցուք դառնալ անդրէն, մի ինչ արտաքուստ ի ներքս բերցուք, բայց եթէ չիւղ մի ձիթենւոյ, զհաշտութիւն անձին ընդ ընկերաց։ Եւ եթէ ստիպիցէ հարկն յաճախել կամ յերկարել զկալն արտաքոյ՝ յաշխարհի, մի լիցի մեզ ագռաւօրէն ի գեշս և ի չաղիղս չաղախիլ. այլ որպէս արտագրեալք ի հովտի տրտմութեան՝ անձկալ խաղաղաւէտ մենարանի. նա՛ մանաւանդ, տաճար իմն չարժուն գնայուն արասցուք զմեզ ի մեզ, ըստ խորանին վկայութեան՝ յոր մտանէրն ստէպ Մովսէս՝ հարցանել զՏէր. ո՞վ ապաքէն « Տաճար Աստուծոյ էք դուք »։ Եւ առ այս չէ ինչ պիտոյ շատ աշխատութեան. խոնարհեսցի գամ մի գլուխ ի լանջս և յիշեսցէ զոր ի նմայն ընկալաւ և ամփոփեաց յառաւօ-

տուն, զայցելուն, և զփրկիչ հոգւոց, բարձեալ ի սրբոյ սե-
ղանոյն և հանգուցեալ յիւրումն սրտի։ Զի՞նչ քան զայդ
տեղի և տաճար անքոյթ և անդրժելի ի թշնամեաց։ Այսպէս
առնէին և շրջէին և շրջեցուցանէին բազումք ի սրբասիրաց,
որոց վիճակեալ էր յաշխարհի քաղաքավարել, թող թէ որոց
ի վանաց առաքիլ և ի նոյն վերադառնալ՝ յետ սուղ կամ
յերկար ժամանակի։ Որ այսպիսի կամս ունիցի հաստատունս՝
կելոյ ընդ Քրիստոսի, նմա անմարթ է չկալ անվրդով և
յալէկոծեալ աշխարհածովու, և ի խռովութեան իսկ խաղա-
ղակեաց լինել. զի, ասացից դարձեալ, « Խաղաղութիւն մեր
» Քրիստոս է ». և Քրիստոս ամենուրեք է. « Ես ընդ ձեզ
» եմ, ասէ, զամենայն աւուրս, մինչեւ ի կատարած աշ-
» խարհի » և ի ծագս նորին։ Զայս օրինակ մարթ է ոչ միան-
գամ եւեթ՝ այլ և բազում անգամ մեզ վերածնանել յորդիս
Աստուծոյ, յանդորրու սրտի, և նովին խաղաղացեալ հոգւով՝
լինել և այլոց խաղաղարար, և կրկին ժառանգել զերանու-
թիւնն Քրիստոսի։

Բ

Ի փչել Քրիստոսի յաշակերտսն զՀոգին Սուրբ, կատա-
րեաց զխոստացեալ տուրս խաղաղութեան իւրոյ, որոյ և
պաշտօնեայս և մատակարարս կացոյց զնոսա. զորս և եկե-
ղեցի ծանուցեալ՝ խաղաղարարս աշխարհի կոչէ։ Նոցա աշա-
կերտեալ և յաջորդեալ մեր իսկ՝ աստիճանաւ քահանայու-
թեան և կրօնաւորութեան՝ կամք ի նմին սպասու. և այս-
պիսիք ճանաչիմք և պահանջիմք յաշխարհայնոց՝ ալէկոծե-
լոց ի ծովածուփ կենցաղումս, պէսպէս մրրկօք, որ ի կրից
բնութեան, որ ի հրապուրանաց և ի մոլորութեանց, որ ի
տգիտութենէ և յանհոգանալոյ, և որ ըստ դիպաց և արկա-
ծից ժամանակին։ Շնորհն Աստուծոյ և ընտրութիւն մեր՝
դէտս և այցելուս, խրատիչս և վարդապետս նոցա կացոյց
զմեզ, և աւետարանիչս խաղաղութեան, և որպէս ճրագունս
լուցեալս յաշտարակի ի զգուշութիւն երթեւեկացն ի քա-
ղաքի և նաւուց դիմելոց ի հանգստարանն. և հարկաւորիմ
ասել, եթէ « Տեսարան եղեալ հրեշտակաց և մարդկան »։
Նա՛ թէ և ի խորս խցկանց մերոց կայցեմք, տակաւին չեմք

ազա[illegible]ցեալք ի պարտուց սպասաւորութեան հոգւոց և վար-
գապետաց։ Եթէ, եթէ յաշխարհի և եթէ ի մենարանի, ուր
և [illegible] զՔրիստոս պատարագեմք պաշտօնեայք եմք և բաշ-
խողք շնորհաց նորին, յորս գերազանց՝ զխաղաղութիւնն
եցոյց Առաքեալ. հովիւք եմք հօտի նորա՝ եթէ յարօտս և
եթէ ի փարախի, ուստի հնար է մեզ և զմոլորեալսն ժողո-
վել բանիւ և գրով ուղիղ գիտութեան. եթէ չիցէ ամենեցուն
հրաւիրեալ յամենայն ժամանակի պատմել զբան Տեառն,
սակայն մարթ է բղխել ի սրտէ զբան բարի, և առաքիլ ընդ
Ջուրս ընդ լերինս. նա և անմոռանչ մաղթանօք՝ յաղօթանոցի
և առաջի սեղանոյն, ուստի և ստէպ կրկնեմք ի պաշտամանն՝
խաղաղութիւն ամենեցուն. որ է բովանդակութիւն և առեղ-
ծուած աւետարանին Քրիստոսի։

Աւետարա՜ն. ո՞վ ամենաքաղցր ամենագեղեցիկ իր և անուն
ի լուր և յիմաստ, զոր միայն, օրն խաղաղութեան մարթ
էր հնարել։ Աւետարան, գիւտ և համբաւ ճշմարիտ բարւոյ
զորոյ զհեղինակ և զհետեւողս նախատեսեալ Եսայիաս՝ հիա-
ցեալ գոչէր. « Իբրեւ զի գեղեցիկք են ի վերայ լերանց ոտք
» համբաւոյն աւետարանչաց խաղաղութեան ». քանի՜ հեզ
գնացք նոցա, և քանի՜ յանդուգն վազք նոցին՝ ընդ ձորս և
ընդ բարձունս. որք ի հալել ոտից նոցա՝ ոչ խռովին և ծուխ
արձակեն, այլ լերինք խոնարհին, խորք լնուն, դժուարինքն
փոխին ի դիւրինս և առապարք ի հարթս. և ամենայն մարդ
« լսէ զփրկութիւն Աստուծոյ մերոյ », և հաւատայ՝ եթէ ար-
դարեւ « մերձեալ է արքայութիւն երկնից »։ Այսպիսի աւե-
տեաց աղբերս իմն և չտեմարանս կարգեցաք ի Քրիստոսէ,
արբուցանել և լցուցանել զոգիս մարդկան։ Ո՞րքան արժան
է մեզ ընդունակ լինել այսպիսեաց բաժակաց և սերմանց՝ ի
սիփիւռս համատարած ագարակին, ի յագուրդ հոգւոց ծա-
րաւեաց և քաղցելոց կենաց հացին. և ո՞րքան մեծ բազմու-
թիւն է կարօտելոցն ոչ « ի սով հացի և ոչ ի սով ջրոյ, այլ
» ի սով լսելոյ զբանն Տեառն. — զի ոչ հացիւ միայն կեցցէ
» մարդ, այլ ամենայն բանիւ որ ելանէ ի բերանոյ Աս-
» տուծոյ »։

Աստուծոյ կամք եղեն խրատել խնամել զմարդիկ՝ ոչ ի
ձեռն հրեշտակաց, այլ իւրեանց ընկերաց. եղբօր օգնական
լինել եղբօր, կրողի՝ զկարեկիցն հոգալ, ցաւողի զցաւակիցն,

և ամենայն հնարիւ խաղաղել զխռովեալ ոգիս։ Բայց զի մի դեռակիրթք և անհմուտք՝ համարձակեսցուք յայսոսիկ, և հիւանդք՝ հիւանդաց լիցիմք բժիշկք, օրինակաւ իւրով ուսոյց՝ երկար ամօք կրթել նախ զանձինս յառանձնութեան՝ ի նախ յիշեցեալսն առ ի մէնջ կրթութիւնս, և ապա ելանել «շրջել զեղբարբք». մի՛ վաղվաղել թերուսումն և թերակատար՝ յաստիճան և ի պաշտօն, նա՛ թէ և բազում ամս ուսեալ իցեմք ի վարժարանի Յիսուսի, սակայն «մի է մեզ ու» սուցիչ». և «մի՛ բազում վարդապետս լինել, եղբարք իմ». և մի՛ ախորժել լսել և «կոչել ռաբբի ռաբբի»։ Ուսցուք, ուսցուք, և դարձեալ ուսցուք ի լսարանի միայնոյ վարդապետին Յիսուսի, զի նա միայն ասաց և է «ճանապարհ և » ճշմարտութիւն և կեանք»։ Պատգամք և բանք յաւիտենականք ծածկեալ գանձեալ են ի նմա, զոր ոչ բաւեն դարք ժամանակաց սպառել, այլ պարտք են մեզ խորամուխ լինել և արտայայտել որպէս և հրամայեացն. «Ձեզ տուեալ է գի» տել զխորհուրդն արքայութեան. իսկ նոցա որ արտաքինքն » են՝ ամենայն ինչ առակօք լինի»։

Այո, Տէր Յիսուս, յորժամ զայսոսիկ լսեմ, զճշմարտութիւն ի ճշմարտէդ, զբան կենաց՝ յիսկաբուն Բանէդ, զլոյսդ՝ ի լուսոյ աշխարհի և ի ճառագայթէ Հօրն Լուսոյ, զգամ յոգւոջս՝ զի արդարեւ «արդ յայտնապէս խօսիս, և առակ և ոչ » մի ինչ ասես. այժմիկ գիտեմք եթէ գիտես զամենայն, և » ոչինչ է պիտոյ եթէ ոք հարցանիցէ զքեզ»։ Եթէ ճշմարտութիւն հզօրագոյն քան զամենայն հնարս հռչակեցաւ յերկրի, քանիո՞ն եւս զօրեղ իսկականն և մարմնացեալ ճշմարտութիւն, որոյ աւետարանիչ արժանաւորեցաք կարգիլ. ո՞րքան յօժարութեան և զգուշութեան պէտք են մեզ ի պաշտամանս, ի քննութեան, ի գիտութեան, առ ընտրել զիսկականն ի սնոտի յիմաստութենէ աշխարհի և ի պանծացեալ բազում իրաց գիտութենէ։ Ձասեմ խափանել զգիտութիւնս արտաքինս, այլ՝ «մի՛ դանդաչել յուսմունս օտարոտիս»։ Վարժեսցուք յոր ինչ և կարգք կրօնիս և պաշտամանս և պէտք ժամանակիս պահանջեն. վարժեսցուք իբրեւ Մովսէսն «ամենայն իմաստութեամբ Եգիպտացւոցն». (Գործ Է. 23. 28). որ իբրեւ աճեաց և զարգացաւ՝ «ուրացաւ կոչիլ որդի գստերն » Փարաւոնի», այլ կացցուք ըստ նմին «յեկեղեցւոջ, յա-

» նապատին, ընդ հրեշտակին» այսինքն պարապել ի սրբազան դպրութիւնս, ի գիտութիւն անապատի՝ միանձնական [illegible], և զերկնայինս խորհելով՝ ըստ երկնայնոցն. արտաքին գիտութիւնքն լիցին որպէս տարերք և դերբուկք մտաւոր շինուածոյն, յորոց վերայ արկցին հիմունք հոգեւոր գիտութեանց, և բարձրասցի տաճար ճշմարտութեանն, պահելով միշտ ընդ Տիմոթեայ՝ «զաւանդն աստուածային, խոտորեալ » ի պղծոց և ի նորաձայն բանից և ի հակառակութենէ և » ի մոլարանուն գիտութենէ», և ի խաբէպատիր գեղերեսեալ վիպասանութեանց։ Փորձեսցուք զբարետեսակն, ընտրեսցուք զբարի բարին՝ ի նիւթ գործոյ մեղրաքաւտակ վարդապետութեան Քրիստոսի։ Յարգեսցուք զժամանակ՝ որ ոչ բաւէ ի գիտութիւն նորանոր յայտնութեան տիեզերաց, և ի կարեւորսն պարապեսցուք՝ ի վկայեալս յողջախոհից և երկիւղածաց։ Մի՛ բուռն հարցուք զբազմաց, զի մի՛ յամենայնի թերակատար գտանիցիմք, կամ և ոչ շահ օգտի իցէ յայնցանէ։ Գանձեսցուք զգանձս գիտութեան Սրբոց, զոր ոչ կարիցեն ապականել ցեց և ուտիճք, աշխարհական հնարք և հոգք, այլ յաւէտ «որ ինչ ի չինած եկեղեցւոյ» և բարուց. ըստ օրինակի Հարց և միանձանց կարգացն՝ զորոց կանոնս և սահմանս ընտրեաց և մերոյս կրօնի հեղինակ, առ ի կարող լինել հերքել զբաղբաղանս գիտնոց աշխարհի, որք օր ըստ օրէ աճեն և աղաղակաւ խլացուցանեն զլսելիս. «զի » զէն զինուորութեան մերոյ ոչ է մարմնաւոր, այլ զօրաւոր » Աստուծոյ, առ ի քակել զամուրս զխորհուրդս և զամենայն բարձրութիւնս հպարտացեալս ի վերայ գիտութեան » Աստուծոյ. և գերել զամենայն միտս ի հնազանդութիւն » Քրիստոսի». (Բ. Կորն. Ժ. Ե). քանզի «Կենդանի է բանն » Աստուծոյ, ազդող և հատու քան զամենայն սուր երկսայրի... և քննիչ է խորհրդոց մտաց և սրտից»։ Սուր է և այս Քրիստոսի, անշրջետ ընդ գիտութիւնս աշխարհականս և ընդ երկնայինսն. որով անկ է սպառազինել զմիտս և զլեզու առ ի ցրել և ցնդել զօտարոտի վարդապետութիւնսն, որք ոչ միայն զմիտս պղտորեն այլ և զոգիս աղմկեն և խռով արկանեն, մինչեւ յանխտրութիւն և յուրացութիւն։

Զ Քրիստոս ծանեաք խաղաղութիւն մեր, ոչ սրտի միայն՝ այլ և մտաց. այլ վարդապետողի զբանս նորա՝ անկ է և

զհոգի նորա կրել, զհեզն և հզօր, զի նա «է որ տայ բերան
» և իմաստութիւն՝ որում ոչ կարիցեն տալ պատասխանի
» ամենայն հակառակորդք» եկեղեցւոյ։ Բայց և այս յուշ
լիցի, զի մի համարիցիմք եթէ հարկ է ամենայնիւ յաղթող
երեւել և հաւանեցուցանել, զի այդ՝ Աստուծոյ միայն է
հնար, ըստ անքնին իմաստութեան իւրում և տնտեսութեան.
քանզի մարթ է թէ և յետ ամենայն ջանից և բանաւոր
փաստից՝ գտցին անհաւանք և յամառք. յայնժամ ասաս-
ցուք. «Եթէ ոք կամի (այսր ամենայնի) հակառակող լինել,
» մեք չունիմք այնպիսի սովորութիւն, և ոչ եկեղեցիք Աս-
» տուծոյ». և մի կանխեսցուք քան զԱստուած՝ ի դատ և
ի դատապարտութիւն. այլ թողցուք ի նա՝ որ ասացն. «Որ
» ձեզ լսէ՝ ինձ լսէ, և որ զձեզ անարգէ՝ զիս անարգէ»։
Զսուրն՝ անկ է կրել միշտ, այլ գիտել և զժամանակ ածելոյ
և կտրելոյ, և մի պետրոսաբար վաղվաղել ի բաց հանել
զունկն անլսող։ Երկայնամտէ Տէր երիս և չորս ամս ի դար-
ման դանդաղ թգնեւոյն, և խրատէ ոչ միայն բանիւ ողոքել
զյամառուս, այլ և «պահովք և աղօթիւք». քանզի բազում
ուրեք «Գիրն սպանանէ, այլ Հոգին կեցուցանէ»։ Գիտէ հո-
գին Քրիստոսի ըստ իւրաքանչիւր աղագս յեղանակել, «աւե-
» տարանել աղքատաց, բժշկել զբեկեալս սրտիւք, քարոզել
» գերեաց (ի մեղաց) զթողութիւն. և կուրաց (մտօք) տեսա-
» նել, արձակել զվիրաւորս (յախտից և տրտմութեանց) ի
» թողութիւն, քարոզել (հասարակաց) զտարեկան Տեառն ըն-
» դունել», զհնարս փրկութեան, զսէր և զխաղաղութիւն։
Ցամենայն ժամ, այլ առաւել եւս ի պաշտաման վարդա-
պետութեան՝ կրելի է զհոգին Քրիստոսի, որով միայն յա-
ջողէ շահել զոգիս այլոց ի նոյն ի Քրիստոս, և ցածուցանել
զծուփս մտաց և սրտի, որ յաճախ՝ քան բանիւ՝ շահի խո-
նարհ լռութեամբ և արտասուօք։ Հեզութիւն ճարտար բա-
նալի է սրտից, արտասուք՝ դռնապան հոգւոց։ Բարւոք է
քարոզել զսպաշխարութիւն, այլ ազդողագոյն՝ և ըստ Յով-
հաննու ապաշխարել, մերկ և թափուր յընչից, որպէս զի
հաւատալի լիցի՝ եթէ արդարեւ մերձեալ է արքայութիւն
երկնից։

Եւ ոմք այնպէս ի ճահ և ի դէպ է վարել երկոքումքս այ-
սոքիւք շնորհօք, քարոզութեան ասեմ և ապաշխարութեան

օրինակաւ, իբրեւ զինուք յաջմէ և յահեկէ, կամ բուրվա-
ռօք ստաշխին և զմռոյ, ոմք այլում քան նուիրելոցս ի ծնէ
աւազանի կրօնիս՝ կոչել և լինել վարդապետ ապաշխարու-
թեան, յառաջ քան զքահանայանալն երեւել նուիրակ խա-
ղաղութեան. իսկ յետ այնորիկ՝ ընդունելով զօծումն և
զփչումն Հոգւոյն՝ շրթամբք Քրիստոսի, որպէս առաջին բար-
բառ և ի մերոց շրթանց ի մէջ եկեղեցւոյն և ի յարկին սբր-
բութեան՝ հնչէ ի լսելիս ժողովրդեան՝ խաղաղութիւն ամե-
նեցուն, նոյն և հանապազ բղխեսցէ ի բերանոյ, ի սրտից և
ի դիմաց մերոց՝ ի միջի նոցին։

Այլ դու մեզ յաւէտ որ եսդ և լինիս յարահոսան աղբիւր
խաղաղութեան ամենայն տիեզերաց, ով ճշմարիտ և անսպառ
բղխումն անմահութեան, որ ողողանես և արբուցանես, լուա-
նաս և լնուս զոգիս մարդկան, սրբեա և լցո զմեզ յուղխից
փափկութեան քո, ի հեզութենէ և ի սիրոյ, ով Աստուած
մեր և Տէր. զի քեւ հանդարտեալք յանձինս մեր՝ խաղացուս-
ցուք ի սիրոյս աւանդելոցդ առ մեզ, հաշտարար բանիւ աւե-
տարանիդ, և կատարողութեամբ գերահրաշ Պատարագիդ, որ
լրումն է խաղաղարարութեան։

Գ

Որպէս չիք յարարածս հրաշալի և ցանկալի քան զանդրա-
նիկն՝ լոյս, որով յետագայիցն յայտնին էութիւնք և գեղեց-
կութիւնք, այլ պիտանեգոյն եւս ի տնտեսութիւն նոցին և
մարդկանս՝ ջերմութիւն արեգականն է. այսպէս իմն, նե-
րեսցի ասել, բանականի բնութեանս արեգակն Քրիստոս՝
հրաշափառ փայլեալ ի վարդապետութեան իւրում՝ լուսաւո-
րելով զչաւիղս կենաց մերոց, հրաշափառագոյն եւս ներգործէ
ջերմութեամբ սիրոյն. և գլուխ գործոց սիրոյն ասեմ զՊա-
տարագն սուրբ, յորում՝ գեղեցկագոյն համարձակութեամբ
ասէ Օգոստինոս, «Սպառեցան ամենայն գանձք զօրութեանն
» և իմաստութեան Աստուծոյ. զի այն որ ամենակալն էր,
» ամենահարուստ ամենիմաստ, չունէր և չգիտէր ինչ մի մե-
» ծագոյն առնել կամ տալ յօգուտ աշխարհի՝ քան զՊատա-
» րագն»։ Անհա՜ս և անճառելի խորհուրդ և գործ, յոր՝ ավ
ի բերան պատշաճ թուի լռութեամբ և մտօք զմայլել, քան

ճգնել և ապիկար նշաւակել զճառս բանից։ Սակայն, որոց կարգեցան ի սպասաւորութիւն և ի կատարողութիւն այնր անհատական պատարագի, ոչ է օրէն կալ և կասել, այլ ըստ հնարաւորութեան անհնարիցն՝ քննել փոքր ի շատէ և ի վերայ հասանել, զի՞նչ է զոր առնեմքս զօր հանապազ, երիցս այսոցիկ. նախ, թէ առ ո՞ և առ ի՞նչ խորհուրդս այս, երկրորդ եթէ որպիսի՞ ինչ այս գործ, և երրորդ՝ որպիսի՞ ոք պատարագողն. և ծանիցուք ընկալուչ պատարագին՝ զՀայր, որոյ արդարութիւն պահանջէ զքաւութիւն մեղաց մարդկան՝ առ ի փրկութիւն. ծանիցուք և զԲրիստոս ինքն՝ բոլորանուէր պատարագ հաշտութեան աշխարհի ընդ արարչին. ապա և զմերս հիգութիւն գործակիցս պատարագողին և պատարագեցելոյն Բրիստոսի, և պատարագելիս ի խաղաղութիւն անձանց և աշխարհի։

Ա. Գիտէ ամենայն քրիստոնեայ ողջամիտ՝ յանեզծութիւն հաստատեալ զմարդն՝ յԱստուծոյ, և նախանձու բանսարկուին ի մահ մատնեալ՝ վասն մեղացն. գիտէ եւս զի ի քաւել զմեղս և արդարացուցանել վերստին զմարդն՝ ոչ գոյր հնար, բայց Որդւոյն Աստուծոյ ինքնին մարդանալով և մահուամբն յանմահութիւն վերածելով զմարդիկ։ Այլ կարեւոր եւս գիտելի մեզ այս է, զի Բրիստոս եւ մարդկան կարողութիւն չմեղանչելոյ, այլ ոչ զչկարելն մեղանչել. քանզի ոչ եբարձ զբնատուր ազատութիւն մարդոյ. որով՝ յանզգաստից՝ ամենեքին կամ յոլովագոյնք ի մարդկանէ մեղանչեն յաճախ, և կարօտին միշտ քաւութեան. յոր սակս և հանապազ մատչի պատարագ։ Չարկ ուրեմն է արդարութեան կամ բողոքել և դատապարտել, կամ աղերս ապաշաւանաց ընկալեալ՝ ներել. կամ պատուհաս կամ պատարագ. իսկ ուր մեղք և պատարագ ոչ՝ անդ և ոչ ներել թողութեան, ոչ եւս խաղաղութիւն հոգւոց։

Թէպէտ և թանձր օրինակաւ, նկատեսցուք գամ մի զարդարադատն և զմեղապարտ. զԱստուած՝ որպէս ադամանդեայ պայծառութիւն ամենալոյս ամենատես, և առաջի նորա զիւր երբեմն պատկերն՝ զմեղուցեալն հոգի, ամօթալի սեւաթորմի կերպարանաւ, որպէս բիծ մի նշանակեալ ի համապայծառ լուսոյ անտի, յորմէ գարշիցի խորշիցի իսկաբուն բարին, և մերժեսցէ ի բաց. զի որոյ առաջի երկինք և երկիր չիցեն

սուրբ, «իսկ մեղաւորն և ամբարիշտն՝ ո՞ւր երեւեսցի». — աւա՜ղ, զի «ոչ գոյ խաղաղութիւն ամպարշտաց»։ Աղէ, եկ դու, հա՛րց զանձն քո և յիշեա զառաջին չար զոր գործեցեր, զմեղս՝ յայն ինչ ժամու և տեղւոջ. ո՞չ անդէն և անդ ընդ մէջ հերձաւ խիղճ մտացդ, որ որպէս օթոց լուսափայլ՝ ցայն վայր պարունակէր զհոգիդ. յաւել յայդր վերայ և զոր մի ըստ միոջէ յայնմ հետէ յանցեար և մեղս ի վերայ մեղաց կուտեցեր. բաւիցե՞ս անձամբ անձին ի չքմեղս լինել, կամ հնարել հնարս խաղաղութեան խռովելոյ բովանդակ էութեանդ, հոգւոյդ և մարմնոյ. զի՞նչ առնել իցէ քեզ՝ մինչդեռ իրաւունքն ի վերուստ ստիպիցեն, դժոխք ի ներքուստ պահանջիցէ, միտք տագնապեալք ինքնադատ պարտաւորիցեն. հոգիդ վարանեալ՝ թերեւս չքանալ խոկասցի՝ զանհնարինն. և յափշտութիւն և ի կորուստ ընկղմիցիս իսպառ, եթէ ոչ յանկարծոյն իմն ծագիցէ նշոյլ մի ի խաւարելումն էութեանդ, յոյս ողորմութեանն Աստուծոյ, հաշտարար միջնորդութեամբ Որդւոյն Աստուծոյ։ — Ամբա՛ծ արդ զգլուխ քո, հոգի մեղուցեալ. զի՞նչ այս անակնկալ փոփոխումն. յեզր վհին հասեալ կայիր, և ի՞բր ոչ գահավիժեցար. գիտեա՛, զի «յամենայն նեղութենէ քումէ՝ ոչ մարդ ոք և ոչ հրեշտակ՝ այլ» ինքնին Տէր» փրկեաց և փրկէ. ինքն Որդի Աստուծոյ պատարագի առ Հայր՝ վասն քո։

Բ. Գոհութի՛ւն քեզ, Բրիստոս. եթէ իբրեւ Աստուծոյ՝ պարտատեառն՝ կանխեցին հրեշտակք հանել փառս ի բարձունս, մեք որդիքս քո մեղուցեալք՝ զորս ժողովեցեր ի գիրկս գթութեանց քոց՝ որպէս զկրսերն անառակեալ, մեք քեզ իբրեւ Աստուծոյ մերոյ պատարագելոյ վասն մեր՝ մատուսցուք զանագանս օրհնութիւն, այլ անդադարս մինչեւ ի յաւիտեանս ժամանակի։ Բայց և ոչ մի ինչ կարասցուք առնել կամ առնուլ, եթէ ոչ դու ինքն որ վասն ամենեցուն պատարագիս, տացես լոյս մտաց մերոց գոնեայ ընդ աղօտ ճանաչել զմեծութիւն պատարագիդ։ Այլ ես ընդ իս իսկ յաւէտ զարմանամ, եթէ ո՞րպէս անզանգէտ մնիմ ի քննութիւն աքանչելեացդ. բայց թէպէտ և ոչ մասն մի կարիցեմ ի հանդէս ածել, գոնեա զմասին մասն առից ի զարմանս. յիշեցից զանբաւ փոխարէնսն՝ զոր վասն իմ մատուցեր առ Հայր քո. զզոհդ ցաւագին և զանբաւ սէրն, որով արարեր զքո իսկ

անձն՝ հնարս հաշտութեան երկնից և երկրի, և զանկշռելի շնորհս հանապազորդութեան զենմանդ։

Անմոռաց լիցի առ ի մէնջ անբաւ փոխարէնն՝ զոր մատոյց Քրիստոս՝ արդարութեանն Աստուծոյ։ Երկու իրօք առաւելապէս մեզուցեալ էր մարդն. յանդուգն հետազօտութեամբ և անվայելուչ հեշտախտութեամբ, իբրեւ երկոքումք մահազէն բազկօք հեղձուցիկ առնելով զեդեմական խաղաղութիւնն արտաքուստ՝ և զհրեշտակայինն ի ներքուստ։ Միջնորդն մեր և խաղաղարար՝ ընդդիմակացս երկոցուն չարեացդ կարգեաց երկուս մեծամեծ ուղղութիւնս. հպարտութեան՝ որ ի վայրապար հետազօտութենէն՝ զխոնարհութիւն. հեշտասիրութեան զվշտամբերութիւն, և սոքօք ճենճերեաց զպատարագ իւր։ Բա՞ւ, փոխանակ գարշելի մեզաց մարդոյն՝ յանձն առնու Քրիստոս Աստուած զկերպարանս մեղաւորի, և որպէս քայոս մանեկաց արկանէ զուլամբ՝ զմուրհակս չարաչար պարտեացն. և իբրեւ տարամերժեալ ի սաստէ արդարութեան՝ զամօթի հարկանի, թալանայ, նուաստանայ առաջի երկնից և երկրի, սինքքոր մարդկան, ստրկաց և դահճաց. և աստուածախառն մարմնովն մատնի յանարգանս, ի խոշտանգանս, ի թուք և ի փուշ, ի խաչ և ի մահ. նկատէ յանձին իւրում զչարիս մարդկան զարուց անցելոց և զներկայն և զառ յապայն, հանդերձ ամենայն ապաշնորհութեամբ և անզղջութեամբ պարտականացն. և յայնքան զզուանսն և չարչարանս խոնարհեալ համարի զինքն՝ ոչ միայն մարդ և որդի մարդոյ, այլ և ոչ մարդ, այլ որդն ազկազկ, արհամարհութիւն աշխարհի։ Զեռն կարկառեալ ի փրկութիւն առ մեղուցեալսն, լսէ ի նոցանէ. Զէ՞ արժան այդպիսւոյդ՝ կեալ. ըստ օրինաց մերոց՝ պարտի մեռանել. բարձ ի մէնջ զդա, ո՞ դատաւոր երկրաւոր, և արձակեա զԲարաբբա՝ զսպանիչն, փոխանակ կենսատուին... Իսկ զի՞նչ չար արարեալ իցէ դորա. — Մի՛ հարցաներ զայդ. այլ փութա՛ հան ի խաչ, ի միջի աւազակաց և խռովչաց. զի ոչ միայն հաւասար՝ այլ և չար քան զնոսա երեւեսցի. չիցէ և այն շատ, այլ և ի կախաղանին՝ յայսն և ի կատակ լիցի. յաւելցին ցաւք ի ցաւս նորա, փուշն, եղէգն. լեղին և քացախն, լուտանք, երգիծանք, հայհոյութիւնք. այլ և ուրացութիւնք հաւատարմաց, փախուստ հետեւողացն, թաքուստ սիրելեաց, լքումն

յօգնականաց, պարծանք թշնամեաց, յաղթութիւն անիրաւաց, նկուն լինել արդարոյ... Աւաղիկ քեզ, ո՛ քրիստոնեայ, Քրիստոսն քո, այր ցաւոց որում՝ ի դէպ դատեցաւ ասել քան օրինակին իւրում, « Ելէք, հայեցարուք յարքայ, որով պսակեաց զնա մայր իւր (ժողովարանն հրէութեան) յաւուր փեսայութեան իւրոյ և յաւուր ուրախութեան սրտի իւրոյ ». դիպողագոյն եւս ասել, « Զեզ ասեմ, անցաւորք ճանապարհաց, դարձա՛յք, հայեցարուք և տեսէք. իցե՞ն երբեք ցաւք ըստ ցաւոց լեալ՝ որ ի վերայ իմ հասին »։ Ցաւք աղցից բնութեան յորոց զդառնագոյնսն էառ յանձն իւր. ցաւք յաղքատութենէ. ցաւք յատելութենէ. ցաւք ի մեղմէն բարեկամաց և ի լիբք մատնչաց և յապաշնորհաց... Այլ զի՞ զուր չանամ յեղյեղել զայսոսիկ և որ զայլսն. ո՞ կարիցէ թուել՝ որպէս ի մարմնին՝ նոյն և զոր ի սրտին սրբբուս՝ վէրս. որովք ի մարմինն այլագունեալ՝ « հայեցաք, և ոչ գոյր նորա տեսիլ ». իսկ որ ի ներքս յոգոյն, զայն՝ թերեւս միայն Մայրն՝ որ կայր առ խաչին՝ կարաց զգալ. մեզ շատ իցէ զսրտառուչ աղէխարշ հառաչանսն յիշել, « Աստուած, Աստուած իմ ընդէ՞ր թողեր զիս ». և ապշել և խոնարհել մինչեւ ի խորս ոչընչութեան մերոյ. և յամօթ եւս լինել, զի բազում անգամ տեսանելով զնա կերպարանեալ՝ զիարդ և է՝ ի խաչի, իբրեւ չտեսանելոյն անցանեմք և գնամք, և ոչ վայր մի զկայ առնումք ցաւակից լինել այնմ. որ « Վերայ ցոյց զցաւս մեր և զհիւանդութիւնս մեր երարձ », ի հոգւոց և սրտից մերոց՝ յինքն, և վասն մեր ամենեցուն մեռաւ, առաւել քան ցաւօքն՝ մահուչափ Սիրովն։

Սէ՞ր Քրիստոսի. ազնուագոյն մասն պատարագին, եթէ իշխեմ զատուցանել մասունս յողջակիզի անդ։ Ճշմարիտ առիթ սիրոյ՝ ոչ զգալի քաղցրութիւն սիրելւոյն է և ոչ սիրողին, այլ ազնուութեանն, բարութեան. իսկ զԱստուած որ գերազանց է ամենայն բարութեամբ՝ որո՞վ օրինակաւ. զի չասացից՝ չափով, արժան իցէ սիրել, զայն՝ որ առ սէր մեր մատնեաց զՄիածին իւր, և սա անձամբ զանձն՝ յայսպիսի զենումն պատարագի։ — Քրիստոս ուսոյց զհնարսն. « Որպէս » սիրեաց զիս Հայր, և ես սիրեմ զձեզ ». — աստուածապէս կամ աստուածաչափ իմն սիրեաց զմեզ Քրիստոս. մե՞ծ ինչ իցէ եթէ և մեք մարդաչափ սիրիցեմք զնա, փոքրատար քա-

նակաւ մերով, այլ լրիւ նորին։ Արդարեւ հիացման են իրքս, մանաւանդ եթէ և սրբազան իմն յիմարութեան, ըստ Պողոսի, և առաւել զայս ընտրելի է քան քննել և կշռել զմեծութիւն խորհրդոյ պատարագին Քրիստոսի, կամ որ նոյն է՝ զՍիրոյ նորա, առ ի հաշտութիւն մարդկութեանս ընդ Աստուծոյ։ Անբաւ են փոխարէնքն զոր վասն մեր մատուցանէ Քրիստոս առ Հայր, այլ և անսպառ նուիրումն նորին. սէրն յաւիտենական, և գործ նորին յաւիտենական՝ ի պատարագի իւրում. ուր՝ ոչ լոկ խորհրդաբար՝ որպէս ի յիշատակս տնօրէնութեանց իւրոց, այլ իսկապէս կայ, որպէս երբեմն ի գիրկս կուսի մօրն, յընթրիս աշակերտացն, ի փայտի խաչին, յայրին և ի գերեզմանին, նովին մարմնով և արեամբ, հոգւով և աստուածութեամբ, ընդ փանաքի տեսակօք հացի և բաժակի փոքու. աստանօր սպառին արդարեւ սահմանք հաւատոց և սիրոյ, գոգջիր և կարողութեան Աստուծոյ, այլ և խոնարհութեան Յիսուսի. և մեզ մնայ երկրպագել լռութեամբ։

Երկիր պագ դմա և այժմ և միշտ, ո՜վ հաւատացեալ, և գոհացիր զՔրիստոսէ, զի արար քեզ իրս՝ որում ցանկացան նահապետք և մարգարէք արդարք, և ոչ հասին և ոչ տեսին. քօղովք և փեղկիւք ծածկեալ կայր տապանակն նոցա. իսկ քեզ՝ թէպէտ և այլակերպեալ՝ սակայն իսկապէս էապէս առաջի կայ որ Էնն Աստուած, նոյն ի ձեռս և ի շրթունս և ի ծոցի քում. նովին օրինակաւ և իսկութեամբ կայ մնայ և ի գերունակ տապանակի տաճարիս նորոյ առ որ մարթ է քեզ յամենայն ժամու մատչել, աղերսել, հայցել, խօսակից լինել, և առեւտուր իմն առնել սիրոյ. տալ նմա զլումայդ փոքրիկ՝ յօժարութեան սրտիդ, և ընդունել ի նմանէ գանձս անբաւ չնորհաց. սփռել առաջի նորա զաղէտս և զազմուկ հոգւոյդ, և ժողովել առ ի նմանէ զանդորր և խաղաղութիւն. շատ է քեզ գոչել միանգամ, Տէ՜ր, օգնեա ինձ, զի կորնչիմ աւասիկ. և անդէն և անդ ցածուցեալ ալեացդ և մրրկաց՝ խաղաղանաս և հանգչիս։ Ինքնին իսկ «Յիսուս եկեալ է և » կոչէ զքեզ », առբերելով մեզացդ թողութիւն, պարտուցդ հատուցումն, վիրացդ դեղ. հիւանդութեանդ դարման, մեռելութեանդ՝ յարութիւն։ Արի՛, փութա՛ ընդ Մարեմայ՝ անկանել առ ոտս նորա. ասա՛ և թէ կամիս ընդ նմա, Եթէ աստ

դիպեալ էիր, մանաւանդ եթէ ես դիպեալ էի քեզ աստ յաճախ, ոչ էր երբէք մեռեալ հոգիս իմ. և յաւել ընդ Մարիայի, թէ և արդ գիտեմ զի լսես որպէս Աստուած և յարուցանես՝ զոր այնչափ սիրով սիրեցեր և արեամբդ և մահուամբ գնեցեր և վերաստացար յորդէգրութիւն Հօրդ երկնաւորի։ Համարձակութիւն է ամենեցուն այսպէս հաւատալ և ասել. այլ և կարեւոր պարտք քեզ քահանայիդ, որ զօր ամենայն զՔրիստոս պատարագես, փոխանակ Քրիստոսի. արդ, որպիսի՞ ինչ պարտ իցէ քեզ լինել։

Գ. Քանի՞ մխիթարութիւն է մեզ՝ ընդ տկարութեանս մերում յիշել և զկարողացուցիչն մեր, և ասել ընդ Առաքելոյն, « Ունիմք այսուհետեւ քահանայապետ մեծ՝ անցեալ ընդ եր- » կինս՝ զՅիսուս զՈրդին Աստուծոյ. կարող չարչարակից » լինել տկարութեանս մերոյ.. փորձ ամենայնիւ ըստ նմա- » նութեան, առանց մեզաց »։ Այլ նա կատարեաց ելից զտնօրէնութիւնս իւր յերկրի, և եմուտ ի սրբութիւնսն յաւիտենականս. բայց փոխանակ իւր կարգեաց զքահանայս։ Չէր մարթ թերեւս Քրիստոսի՝ ի վայր եւս զիջանել, և ոչ քան զայս աստիճան ի վեր ամբառնալ զմեզ՝ յիւր գործակցութիւն, ի յաւետաքանչ իրագործութիւն հրաշալի պատարագին, օծութեամբ Հոգւոյն Սրբոյ՝ հաղորդս առնելով աստուածային զօրութեանն, լինել քահանայս ըստ կարգի և զեր քան զկարգ Մելքիսեդեկի։ Ո՜վ, ո՞րքան անհամբ անձինդ պատկառ կալ պահանջիս՝ որ օծեալդ ես այսպիսեաւ սուրբ և սրբարար օծութեամբ. — ո՞րքան փոյթ և խնամ՝ առ ի նմանակցութիւն քահանայապետին քում և վարդապետի ի պաշտաման պատարագին և ի քարոզութեանդ։ Բազում ճառից պէտք էին մեզ աստանօր՝ եթէ մարթ էր ճառիւք բովանդակել զայսպիսի մեծ խորհուրդ, մեծ եւս չնորհ. շատասցուք գէթ սղաբար ի յուշ ածել զպարտս մեր առ Աստուած՝ իբրեւ պաշտօնեայք նորին, իբրեւ միջնորդ՝ առ մարդիկ, իբրեւ նուիրական զոհ առ անձինս իւրաքանչիւր։

Ա. Ամենայն պաշտօնէի պարտ և արժան է ճշգրիտ երեսփոխան լինել վեհագունի իւրում, ընդ իշխանութեան զոր ի նմանէն ընկալաւ՝ բերելով յինքեան և զարտաքին նշան նորին և զներքին տիրական ոգի. ոչ գոռոզաբար, այլ զգաստութեամբ և աչալրջութեամբ. զի մի՛ և զանձն և զայնր զո-

րոյ բերէ զդէմս՝ յայսն և յանարգութիւն մատնիցէ։ Իսկ որ զԱստուծոյ դէմս և զտեսչութիւն բերէ յանձին, քանիո՞ն առաւել զգաստութեան և երկեղի չիցեն նմա սէրք, առ ի կատարել զգործ լուսաւորութեան և քաւութեան հոգւոց, ցօղով շնորհաց Հոգւոյն և կենարար արեամբ Փրկչին. — յորպիսի՞ հուր չիցէ արժան մտանել նմա և ելանել քան զոսկի զտեալ առ ընդունել յինքեան զանմատոյցն Սերովբէից և Քերովբէից, որք և ոչ մատամբք իւրեանց՝ այլ ունելեաց կարօտէին առ ի բառնալ կայծ մի ի սեղանոյ նորա դնել ի բերան մարգարէին, քանի՞ եւս մաքրափայլ մատունք պիտին մարդոյ հոգեղինի՝ առ ի հայել բառնալ զԲանն մարմին եղեալ և բաշխել ի սնունդ հոգւոց հաւատացելոց։ Ոչ բաւէին սերովբէից վեց թեւք առ ի սքօղումն յերեսաց փայլակնացայտ լուսոյ աստուածութեան. իսկ մեզ մահացուաց՝ ասացից թէ և մեղաւորաց՝ զի՞նչ ինչ պիտոյ իցէ ի պատրուակ պատկառանաց, ահի և երկիւղի, ի մատչելն առ «Աստուած մեր, որ հուր» ծախիչ է». և ծախեաց զմարդ և զանասուն և զտարերս՝ լոկ յատակն կամ տեղին յոր կայրն, և տեղին սասանէր, լեառնն ծիւէր, Մովսէս զարհուրէր, ժողովուրդն ահաբեկեալ դողայր. և պատգամն պատուիրէր և որոտայր, «Քահանայքն» որ մերձենան առ Աստուած՝ սրբեսցին, գուցէ սատակիցէ» ի նոցանէ՝ Տէր». (Ելք. ԺԹ. 22). և սատակեաց ծախեաց իսկ զխնկածուսն անգամ, զի կրակ օտար և ոչ յողջակիզաց սեղանոյ անտի արկին ի բուրվառսն. և նոքա՝ սպասաւորք եւեթ էին տապանակին, որ զօրինացն տախտակսն միայն ունէր յինքեան և հատս ինչ մանանայի, զստուերական օրինակս աւետարանին և զկենաց հացին։ Ահաւո՞ր ատեան. եթէ այդքան խիստ դատաստան է և պատուհաս ստուերին և օրինակի, քանիո՞ն ճշմարտութեանն էականի։ Իմաստութեամբ զգուշացան փղշտացիքն առ ի չպահել առ ինքեանս զտապանակն այն սատակիչ. զի՞նչ առնիցեն արդ ընկալուչք Սրբութեանն Սրբոց, մինչ այրն ըստ սրտին Աստուծոյ՝ Դաւիթ, ոչ պիղծ որպէս զՓղիշտսն, հաւասար երկնչէր մուծանել զօրինակն՝ ի տուն իւր։ Ո՞ իշխեսցէ ասել՝ սիրտ սուրբ ունել, կամ յի՞նչ լինել ապաստան՝ առ ի տալ զանձն ի սպաս այսպիսւոյ խորհրդոյ, յորմէ հրաժարէին հրեշտակք անգամ։

Այլ, զի մի՛ ահաբեկեալ ամենեցուն առ հասարակ՝ արքս վազիցեն ի խորանէն, և ժողովուրդն՝ անխունկ անանուէր, քաղցեալ և ծարաւի ի հոգեւոր սեղանոյն՝ մնասցէ, վառեցարո՛ւք քահանայքդ, պաշտօնեայք նորոյ ուխտիս, խոնարհութեամբ և զգաստութեամբ, յուսով գթութեան Աստուծոյ և սիրով մարգասիրին Յիսուսի, որով միայնով մարթէ ձեզ մտանել ի հուրն և անբոցակէզ ելանել. նա և վառիլ և բորբոքիլ, այլ ոչ ծախիլ և սպառիլ. և նայապէս վառել զոգիս հաւատացելոյն ձեզ հօտի՝ և չամբել նոցա զկենարար ճաշակսն. թաթաւիլ և թաթաւել ի մեղսաքաւիչ արիւնն զսիրտս սեւացեալս մեղօք, սրբել և քաւել. շուրջ գալով հանապազօր զսեղանովն քաւութեան և զխնկոց. և ոչ միայն ի պատարագին պահու այլ և յամենայն ժամու, զի ոչ միայն առաջի սեղանոյն է ձեր գործ զոհի և պաշտաման, այլ միշտ և ամենայն ուրեք պաշտօնեայք էք Աստուծոյ և ժողովրդեան, նուիրագործ էք և աղօթկերք, քահանայք էք։ Հաւասար վըտանգ է ձեզ և ժպրհութիւն և ժլատութիւն, յանդգնութիւն, և հեղգութիւն, դանդաղելն և վաղվաղել, և որպիսի և է օրինակաւ՝ անզգոյշ անպատրաստ և անսուրբ մատչել մխիլ կատարել զգործ քահանայութեան. որ՝ զի հանապազօր կատարի՝ ոչ այնու ինչ նուազի կամ նուաստանայ, զի երէկ և այսօր և յաւիտեան՝ նոյն տէր է, նոյն Քրիստոս և նոյն խորհուրդք իւր և պատարագ։

«Քննեսցէ մարդ զանձն իւր», ազդէ Առաքեալ. իսկ դու քահանայդ կրկին և կրկին եւս քննեսջիր զանձն քո՝ առ այս խորհուրդ մեծ, առ այս միակ ճշմարիտ պատարագ. տես, որո՞վ հրով անկ է քեզ վառիլ. ո՞րպէս սկիզբն առնել մեծի գործոյդ և որպիսի՞ մտադիւր զգաստութեամբ կատարել կնքել. քանի՞ ուշի ուշով որոճալ ի մտի՝ զոր բերանովդ արտաբերես, որպիսի՞ ակնածութեամբ հայել ի վեր և շուրջ զքեւ և ի ներքս ի քեզ, ո՞ւր կաս, զի՞ գործես, ընդ ո՞ւմ գործես. վասն ո՞յր գործես և մաղթես. տեսանիցե՞ս հաւատոյ աչօք զհրեշտակս առ ընթեր քո ի հիացման, և յիշիցե՞ս զի և դու ինքն հրեշտակ և միջնորդ աղերսարկու կարգեալ ես ի մարդկանէ առ Աստուած։

Բ. Քանզի քահանայ՝ ոչ վասն անձին եղեալ է քահանայ, այլ վասն ժողովրդեանն Աստուծոյ. և առաւել քան զանձն՝ զհօտն պիտի նմա հոգալ, եթէ պաշտամամբ, եթէ վարդապե-

տութեամբ, եթէ աղօթիւք և եթէ օրինակաւ վարուց. միջնորդ է Աստուծոյ և մարդկան. հարկ ուրեմն է անհրաժարելի՝ տալ զ'առ ի մարդկանէ աղերս առ Աստուած, և առ ի յԱստուծոյ առ մարդիկ՝ քաւութիւն և օրհնութիւն, բան խրատու և քաջալերութեան, նուէրս և պաղատանս, այլ և արտասուս զիւր և զժողովրդեան առ Աստուած, և առ ի նմանէ՝ պարգեւս երկնաւորս, որոց առաջին՝ նոյն ինքն խորհուրդն մարմնոյ և արեան Տեառն, և այլքն՝ խորհուրդք եկեղեցւոյ, որովք դարմանի հոգի քրիստոնեայ, ի վերածնութենէն՝ մկրտութեամբ՝ մինչեւ ի հանգիստ տապանին. և ի պաշտելն զմի ի խորհրդոցն՝ վայել է նմա զգալ և զզօրութիւն նոցին և զակարութիւնս ժողովրդեանն, որոց կրիւք և կարեօք ինքնին իսկ զգածեալ և ըմբռնեալ է փոքր ի շատէ. և վայել իսկ է նմա՝ առնուլ զանձամբ զպարտս և զպէտս նոցին, զպաշտանս և զհեծութիւնս, այլ և զմեղս նոցին՝ իբրեւ զանձին իւրոյ, առ ի հաշտութիւն և ի քաւութիւն, որպէս և Քրիստոս արար և հրամայեաց. ընդ նմին ասել « Հայր թող » դոցա ». և ուժգին, քան զՄովսիսին, « Եթէ թողուս զմեղս » սոցա թող, ապա թէ ոչ՝ և զիս ջնջեա ի գպրութենէ » քումմէ կենաց »։ Թող սոցա, Հայր, զի ոչ գիտեն բազում անգամ զոր գործեն, և դո՜ւ Քրիստոս, ներեա և քաւեա « զի » ժողովուրդ քո են, և խաչն արօտի քո »։ Ցտեա, մաղթեա անձանձիր, քահանայդ Քրիստոսի, ըստ նմին, ձայնիւ և անանմռունչ. զարթո՛ զՏէր զօրութեանց յողորմութիւն, և զժողովուրդ՝ յունկնդրութիւն պատգամաց նորա և քաղցրալուր աւետարանութեանց և երանութեանց Քրիստոսի։ Քարոզ կարգեցար, մի՛ լռեր. ճրագ կանգնեցար, լեր լուսատուր. բժիշկ հոգւոց, պատրաստ ունելով զհոգեկեցոյց դեղորայդ. փութա՛ դարման տանել, հրաւիրակ ես խաղաղութեան, տուր, սփռեա զայն յառհասարակ եկեղեցիդ և ի դաստ ժողովրդեան, մանաւանդ յորժամ կաս ի պատարագի, և նախ՝ անձին քում, որում այնքան խաղաղանալ արժան է, ըստ նախակարգեալ տեսութեանց մերոց, մինչեւ կարել ասել՝ որպէս քահանայ եմ Քրիստոսի, նոյն և խաղաղութիւն եմ ի Քրիստոս։

Գ. Այլ տես ինձ և զգոյշ լեր աստանօր. զի թէպէտ զՔրիստոսին կատարես և զՔրիստոսին քարոզես, այլ խտիր

մեծ և յոյժ մեծ կայ ընդ քեզ և ընդ նա. զի նա թէպէտ զմեղս մեր յանձն իւր եբարձ, այլ « մեղս ոչ արար », և « ապիրատ ինչ ոչ գործեաց », որում վկայեն երկինք և երկիր, մարգարէք, առաքեալք, ահա և աւազակդ իսկ. և ինքնին նախ քան զայլ ոք. « Ո՞ յանդիմանեսցէ զիս վասն մեղաց »։ Իսկ դու՝ յառաջ քան զժողովրդեան՝ քոյոց մեզաց պարտական ես հայցել թողութիւն և քաւութիւն։ Ո՜հ, աւա՜ղ իմոյս հիքութեան. յորժամ բարձեալ զխաչն յուս մեր՝ զմեղս աշխարհի՝ ելանեմք ընդ աստիճանս սեղանոյն քաւութեան, մի՛ մոռասցուք հայել և յոր զառաջեաւս խաչ, յիւրաքանչիւր պարտիս, ի մեղանս և սխալանս մեր. և զայսոսիկ նախ արկցուք ի քրայս քաւչարար պատարագին. ամաչեսցուք յանձինս մեր, այլ և զոհասցուք զՔրիստոսէ, զի արար զմեզ գանձապահս սրբարար շնորհաց իւրոց, և եդ համարձակութիւն՝ անզողաբար առնուլ առատապէս և լնուլ զպէտս հոգւոց մերոց. զի « որք սեղանոյն ծառայեն՝ ի սեղանոյ անտի » և վայելեն », կնքեաց Առաքեալ, ամենայն արդարութեամբ և իրաւամբ. և ստգիւտ մեծ և ծանականաց իրք իցեն՝ բաշխելն այլոց ի յազուրդ, և ինքեան սովամահ լինել կամ նքթել։ Գիտասցուք զօգուտ մեր և շահեսցուք ի շնորհացն որ ընդ ձեռս մեր սփռին յաշխարհ։

Այլ յուշ լիցի մեզ և այս, զի ոչ վայրապար միջնորդք եմք մարդկան և Աստուծոյ. եթէ ըստ նոցա մարդ եմք և մեք, այլ և ընդ Քրիստոսի արժան է մեզ և պատարագել և պատարագիլ. ոչ է մարթ արժանապէս զոհել զՅիսուս, եթէ ոչ և ընդ անձինս մեր անցցէ սուրն խորհրդական. ոչ կարէր Աբրահամ զենուլ զիսահակ՝ մինչչեւ սրտին ընդ սուր իւր ելեալ։ Մի՛ զառանցանաց ինչ թուիցին բանքս. ի զուր է մեզ ամենայն սպաս և զարդ, խորանն և որ ի խորանին և ի շուրջն, եթէ ոչ ըստ Քրիստոսի նուիրեսցուք զանձինս ի զոհ բանաւոր, ի զոհ հաշտութեան Աստուծոյ. անօգուտ՝ եթէ ոչ այլոց՝ այլ դէպ մեզ լիցի պատարագն՝ եթէ տակաւին կենդանի իցէ մարմին՝ օրինօք իւրովք. եթէ չիցեմք մահակիցք Քրիստոսի՝ որպէս արժանն է՝ սուրբ սրտիւ և խոնարհ հոգւով, ոչ զնորա մահուն խորհուրդ կատարեմք՝ այլ զսպանութեան։ Քաւ լիցի մեզ այսպիսի ոճիր, միւսանգամ զՔրիստոս ի խաչ հանել, կամ թողուլ լքանել ի խաչի, և ոչ ունել ակն յա-

թութեան։ Օ՜ն, եկայք մանաւանդ, պաշտօնեայքդ Քրիստոսի և քահանայք, զի և մեք ընդ նմա մեռցուք։

Ո՞վ արանչելիս այս մահուան. այն ինչ թօթափեալ մեր զառըստօրեայ օրինակ մահու՝ զքուն զիշերոյ, կանխել աղօթիւք և սաղմոսիւք առ Աստուած, ելանել ի լեառն Տեառն և ի տուն Աստուծոյ, ի սեղան Քրիստոսի, տալ առ վայր մի հրաժեշտ ամենայն կենցաղականաց, առնուլ զանձամբ ընդ օրինական սպասուցն՝ և զկարիս և զմեղանս նմանեացս ընկերաց, մատչել յաղերս ապաբանութեան, միանալ մտօք ընդ Քրիստոսի, ապա և մարմնոյն և արեանն՝ հաղորդութեամբ. հանգուցանել զբազմահոգ գլուխս մեր յամենօրհնեալ գլուխն Քրիստոսի, խառնիլ խաղաղանալ ընդ նմա, սիրտ առ սիրտ, լինել մահակից նմին ի միում սեղանի, թաղել զնա ի ծոցս մեր, և թաղիլ ընդ նմին և ի նմին, և զմահ յանմահութիւն փոխել... մինչեւ ի միւսանգամ կատարումն նորին խորհրդոյ՝ նորին պատարագի՝ առ վաղիւն. յայգուէ յայգ լնուլ զանձն և զյանձնեալսն ի նոյն՝ զեղբարս՝ աստուածայնով խաղաղութեամբ։ Յայսպիսում խաղաղութեան՝ ցանկալի՛ քան զկեանս է մեռանելն և իսպառ ընդ քեզ լինել, տէ՛ր Քրիստոս, որ ելերդ յանմահութենէ և մտեր ի մահացու բնութիւնս մեր, և ուսուցեր մեզ ընդ մէջ մահու և անմահութեան յաւիտենականի՝ զնորահրաշ զայս լծորդութիւն մահու և անմահութեան. կորուսանել զանձն ի զիւտ բազում անձանց։ Տո՛ւր և ինձ որ զգեցեալս եմ զզարդ պաշտամանս և զկերպարանս քո, խնամով և սիրով բերել և ճշմարտել յիս և զոգի քո, բոլորանուէր պատարագաւ կամացս՝ ի հաճոյս կամաց քոց և ի փոխարէն արդարութեան Հօր քո, ի քաւութիւն մեղաց ժողովրդեանս, և ի նմանակցութիւն բանաւոր ողջակիզիդ։ Տուր ինձ մատուցանել անարատութեամբ Քեզ և զքոյս, զհոգիս և զմարմին՝ ամենայն զօրութեամբք սոցին։ Ընկալ առ յինէն և զխնդրուածս ժողովրդեան քո, և զպատարագս վասն կենդանեաց և վասն ննջելոց և հանգո զամենեսին յերանաւէտ խաղաղութեան քում։

Թ

ԵՐԱՆԻ ՈՐ ՀԱԼԱԾԵԱԼ ԻՑԵՆ ՎԱՍՆ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ԶԻ ՆՈՅԱ Է ԱՐՔԱՅՈՒԹԻՒՆ ԵՐԿՆԻՑ

Որպիսի՞ Երանութիւն, և յորպիսո՞ւմ նուագի։ Գամ մի յառաջ զխաղաղութիւն աւետարանեցեր մեզ, Տէր Յիսուս, և խաղաղացուցեր զուսկնդիրքս քո. և իսկ և իսկ արդ ի վերայ ածես չշուկ հալածանաց և խռովեցուցանես զոգիս։ Մի՞թէ դարձեալ գաս սուր արկանել յերկիր և յորդիս քո և յաշակերտս. և յետ այնքան ճգանց և վշտաց, որոց միոյ միոյ պատշաճեցուցեր երանութիւնս պէսպէս, դարձեալ մատուցանե՞ս ի փորձ՝ որ դժնդակագոյն քան զբնաւսն է. — Հալածա՞նք, և ոչ վարկպարագի՝ վասն անձին ինչ անգիտանաց, այլ վասն Արդարութեան. որպէս եթէ՝ և յետ ամենայն ուղղութեանց՝ կայցէ տակաւին հանդէս մեծի և յետին մրցանաց՝ առ ի ժաման լինել յամբոկ երանութեան։ Հալածանք, հանդերձ նախատանօք որպէս ասացերդ յայլում նուագի. «Երանի՞ է ձեզ, յորժամ նախատիցեն զձեզ և հա-» լածեսցեն, և ասիցեն զամենայն բան չար զձէնջ՝ սուտ, » վասն իմ »։

Արդարեւ դժուարակիր նահատակութիւն, վասն այսորիկ և յետ ամենայնի կարգեալ, իբրեւ աւագաց ոմանց և կիրթ եղելոց գործ։ Սակայն փոքր ի շատէ և ամենեցուն կարեւոր, թող թէ հետեւողաց անձուկ ճանապարհին։ Հալածանք սեամբ են արգարոց ի մուտս օթեվանացն խաղաղութեան. այլ մեծի իմն արիութեան պէտք են առ ի վազել անցանել զսեմաքն, ուր խտագոյն ոտնխէթ կայ, առ ի մտանել յարքայութիւնն խոստացեալ, յետ հատանելոյ զբովանդակ ասպարէզս երանաւէտ նահատակութեանց. Աղքատութիւնն, Սուգն, Քաղցն, այլովքն հանդերձ. համանգամայն կրելով՝ յետ այնոցիկ վիշտս ներքսագոյնս, նախատինս, զրպարտութիւնս, առեւլութիւնս, հալածանս, և այն ոչ միայն ի սուտ եղբարց, այլ բազում անգամ և ի բարեկամաց, սիրելեաց, կենակցաց, և

անգամ ի պարզամիտ լաւաց։ Աստանօր յայտ յանդիման հաւաստի վճիռն, « Համբերութեամբ ձերով ստասջիք զոգիս » ձեր »։

Համբերութիւն՝ տնկակից է ամենայն առաքինութեանց, որք վասն այնորիկ են առաքինութիւնք՝ զի աշխատութեամբ և բազում ճգամբք ստացեալ լինին։ Եւ որպիսի՞ ծանր ճըգունք. — ահա կարգէ Տէր մեր. թողուլ զտուն և զընտանիս, զծնողս, զհարազատս, զինչս և զագարակս. և ոչ լոկ այսքանեօք շատացեալ, այլ և « Հալածանօք հանդերձ ». իբրու եթէ չիցէ և ոչ մի ուղղութիւն կատարեալ՝ առանց իւրոյ ինչ յատուկ նեղութեան. ոչ աներկեւան խաղաղութիւն՝ առանց ինչ փորձոյ խռովութեան արտաքոյ կամ ի ներքոյ. և որքան և ոք իցէ յանդորրու, տակաւին յերկրի կայ, և երկիր՝ ոչ բաւէ տանել զերանութիւն լրացեալ։ Արքայութեան ճանապարհ անձուկ է. և շաւիղն փշուտ... Ո՞վ յանկարծ հիացմանս. գերագոյնն և աննման ի մարդկային զարմէս, այն՝ որ կուսական զարշապարաւ կոխեաց զգլուխ խարդաւանող վիշապին, Աստուածամայրն ինքն, եկեաց հալածանօք. այն ինչ ծնեալ զազատիչն՝ հալածական փախստեայ լինէր մինչեւ յանապատս Եգիպտոսի. և զբովանդակ կեանս իւր՝ կարէր ասել՝ որպէս միանգամ առ Միածինն, « Տառապէաք, » խնդրէաք զքեզ », սակայն հանապազ կրելով յանձին զգուշակեալն ի Սիմէոնէ սուր բազմասայր։

Եւ ո՞ յորդեգրաց այսպիսւոյ մօր և եղբայրակցաց Որդւոյն՝ առնն ցաւոց՝ իշխիցէ խնդրել կեալ առանց վշտաց, առանց հալածանաց։ Ողոքէ բողոքէ Առաքեալ. « Ամենեքեան որ կա» միցին աստուածապաշտութեամբ կեալ ի Քրիստոս Յիսուս, » ի հալածանս կեցցեն »։ (Բ. Տիմ. Գ. 12)։ Օ՜ն անդր ապա, թողցուք ի բաց զմեղմեխանս մտաց և բանից. յասպարիզի առաքինեաց կամք. առաքինասցուք. մի կասեսցուք, մի թուլասցուք յընթացսն, այլ այնպէս՝ զի հասանիցեմք, առ ոչինչ գրելով զխոչ և զխութ, զհալածանս, զի « հարկ է գալ » գայթակղութեան », որ արտաքուստ և որ յանձնէ։ Արտաքնոյն՝ որ ոչ ի մերոց կամաց՝ այլ յօտարաց շարժի՝ դարման լիցի Համբերութիւնն. ներքնոյն որ ի սաղրանաց ընդաբոյս բնութեանս Արիութիւնն կամ ընդ անձին ոգորելով։

Ա

Որպէս վիշտք և փորձութիւնք՝ հասարակաց են մարդկան տարագրելոց ի դրախտէն, այսպէս և հալածանք՝ փոքր ի շատէ. զի արժան է խտիր առնել ընդ հալածանս և հալածանս. և մի զամենայն դժուարահամբոյր՝ համարել և դժուարակիր, և մի զամենայն որ հակառակ կամացն է՝ համարել հալածանս։ Առաքինահանդէս հալածանաց՝ « երկուս » կէտս եդ ի միջի (Քրիստոս, ասէ Ոսկիբերան). մի՝ յորժամ » վասն Տեառն իսկ իցէ. և միւս եւս՝ յորժամ սուտ իցեն » բանքն ». և որ ոչ են ըստ այսմ կանոնի, չունին և մասն յերանութենէն Քրիստոսի։ Արդ եկ ինձ, ո՛վ վշտացեալդ և հալածեալ՝ որպէս կարծես. ցոյց մեզ՝ ընդ որո՞յ արդարութեան են հալածանքդ. բայց եթէ կամիս և իմաստութեամբ գործել, նախ զայն քննեա՝ եթէ զի՞նչ իսկ իցեն Հալածանքն. Քանզի բազումք համարեալք յաչս իւրեանց նահատակք, առ այլս և առ ճշմարտութիւնն՝ գտան նշաւակք և անձնախաբք, գուցէ թէ և սնապարծք. զի յոյժ սոզոսկուտ և պատրող է անձնասիրութիւն, որպէս յայտ է զգօնից։ Ո՜հ, քանի՞ք ասիցեն ի կատարածի ճգանց և կենաց իւրեանց. « Տէր, Տէր, » ո՞չ յանուն քո զօրութիւնս բազումս արարաք ». և լուիցեն ի Տեառնէ, « Ոչ գիտեմ զձեզ »։ Բազում զգօնութեան պէտք են մեզ յիրիս յայսմիկ. զի ոչ միայն դժուարաւ ընտրին հալածանքդ և նախատինք՝ ի հակառակ կարծեաց և խօսից, այլ շատ եւս այն է զի դժուարին լինի և ընտրելն ընդ հալածեալ և ընդ հալածող, որպէս յատեանս՝ ընդ արդար և ընդ անիրաւ։ Օրինակ անվրէպ և հիանալի առաջի կայ մեր և ամենայն աշխարհի. ինքն Քրիստոս. մեք հաւատամք և խոստովանիմք զի ամենեւին իսկ բարութիւն էր նա և սրբութիւն և սէր, և բազումք որ տեսին և լուան ի նմանէ՝ վկայեն և ասեն ցմեզ, թէ « և մեք այսպէս հաւատացաք ». գիտեմք՝ զի զամենայն ինչ արդարութեամբ գործէր և ուսուցանէր, և այսմ եւս վկայէին պարզամիտքն, եթէ « զամենայն ինչ բարւոք » գործեաց սա ». և թէ « գիտեմք զի զամենայն ինչ ճշմար» տութեամբ ասես »։ Եւ սակայն, թերեւս բազմագոյնք եւս հալածեցին զնա՝ որպէս զսուտ և հայհոյիչ և ապստամբե-

ցուցիչ, օրինազանց և հակառակ Աստուծոյ, մինչեւ ի խաչ անդր. յորմէ՝ ամենահեղն և ամենագութն այն՝ կամեցաւ իմն ի չքմեղս առնել զնոսա՝ անգիտութեան նոցին զրելով զվնասն. որպէս առնէր և ի քարոզութեան իւրում, բայց միայն աննեղելի ասելով զմեղսն որ ի Հոգին Սուրբ։ Թողցուք զընտրութիւն անգիտակացն և գիտակաց հալածողաց զԲրիստոս՝ յատեան նորա վերջին քննութեան։ Իսկ մեք՝ լուիցուք զոր մեզն պատուիրէ. « Մի կալ հակառակ չարին », յետ տալոյ նմա փաստս ինչ իրաւացիս, որպէս ինքն առնէր, և երբեմն յետ ամենայն արդարաբանութեան՝ անհաւան զբտեալ զամբոխն՝ « ընդ մէջ անցեալ նոցա՝ գնայր », և մերթ խոյս տայր ի տաճարէն, և տեղի ի տեղւոջէ փոխէր. և երբեմն լսեցուցանէր զվարդապետութիւնն և զբժշկութիւնս անգամ, թողոյր և զբարին՝ ի հնարս այլոյ բարւոյ. մանաւանդ թէ ոչ թողոյր՝ այլ ընտրէր։

Այսու և զմեզ խրատէ, ոչ թողուլ ձեռնթափ լինել ի պաշտամանէ և ի քարոզութենէ, այլ մի անխտիր յամենայն ժամ և տեղի միջամուխ լինել, և տալ պատճառս լուտանաց՝ փոխանակ օրհնութեանց, մանաւանդ ուր բանորսակ հակառակորդք ոխակալք յանդիման կայցեն. իմաստութեան է գիտել զժամանակ խօսելոյ և լռելոյ կամ մեկնելոյ՝ ի քաղաքէ իսկ անլսողէ, որպէս և Տէրն յԵրուսաղեմէ, այլ ոչ և առանց լալոյ, զի ոչ գիտաց զժամանակ այցելութեան իւրոյ, և վայելով եւս զԲորազին և զԲեթսայիդա, զի լուան և տեսին զգործս նորա, և ոչ հաւատացին։ Լայցո՛ւք ողբասցուք և մեք զանլսողսն, զանհաւատսն, յետ քարոզութեան ճշմարտութեան, և զօրութիւնս բազումս առնելոյ՝ հոգւովն Քրիստոսի։ Այլ մի լիցի փոքրոգութեամբ թաքուստ մեր և փախուստ. հարկ է երբեմն և կալ ի միջի ներհակաց և հալածչաց, որպէս օրինակն մեր և ուսուցիչ. « Սիրել զթշնամիս, » օրհնել զանիծիչս, բարի առնել ատելեաց, և աղօթս ի վերայ այնոցիկ՝ որ լլկենն և հալածեն »։ Եւ յետ այսքանեաց հնարից՝ եթէ ուրեք արժանն և հարկ պահանջիցէ, ըստ հովուին քաջի՝ դնել և զանձն ի վերայ հօտին. և ուր չիցէ հնար կամ պատշաճ թօթափել զփոշի ոտից կամ այլազգ ելանել ի տեղւոյն, մատնիլ ի ձեռս խնդրողացն հակառակաց, և ընդ Քրիստոսի չարչարիլ և ի խաչ ելանել։

Դժպհիք են բանքս՝ աշխարհիկ ունկան, այլ ոչ իցեն առաքինեաց երդուելոց մահու չափ ճգնել ի փրկութիւն հոգւոց. այլ հանապազ կրեն յոգիս և ի սքեմս զնշանն Քրիստոսի, ոչ ի հակառակութիւն՝ այլ ի համբերութեան։ Ոչ նոր ինչ է պատերազմս այս և ոչ սակաւուց միայն հանդէս. այլ և աշխարհական մարդիկ բազում անգամ անկանին ի փորձ հալածանացս, և այն յընտանեաց իսկ միջի. ըստ մորմոքիչ ծանուցման Քրիստոսի, « Թշնամիք առն՝ ընտանիք իւր »։ Այսքան նեղ և նուրբ է ճանապարհ արդարութեան, որ է Աբքայութեան. և ընդ այս անցին և անցցին ամենայն արդարք աստուածասէրք և ընկերասէրք, կալով ի նշաւակի արհամարհողաց, ատելեաց, հալածչաց. և յամենայն ժամանակի եղիցին ոմանք Աբելք և ոմանք Կայինք, մինչեւ յԵղիա և ի Նեեմն։ Պրակք աստուածայինք և վկայաբանութիւնք Սրբոց՝ առաջի մեր բացեալ կան. յորոց շատք վշտօք և հալածանօք կատարեցան և պսակեցան՝ քան խաղաղական կենօք. նահապետքն անգամ երկարակեացք՝ պանդխտութիւն համարէին և ոչ յօրանային ի կեանս և ի բարիս իւրեանց. իցեն և այժմ ճոխք և բարգաւաճ իբրեւ զԱբրահամ և զԻսահակ և զԴաւիթ՝ յաշխարհի. այլ ոչ պակաս և վշտակիրք՝ նա և « ի տունս թագաւորաց ». թող թուեսցէ Առաքեալ. « զո՞ ի » մարգարէից (և յարդարոց) ոչ հալածեցին աշխարհավարքն. » ոչ դոքա ամենեքին վկայեալք ի հաւատոցն... կոշկոճեցան, զտանջանաց և զգանից զփորձ առին, զկապանաց և » զբանտից. քարկոծեցան, սղոցեցան, փորձեցան, սպանմամբ սրոյ մեռան... կարօտեալք, նեղեալք, չարչարեալք, » զորս ոչ արժէ աշխարհս. յանապատի մոլորեալք և ի լեռինս և յայրս և ի փապարս երկրի ». և շատք եւս նման զայսոսիկ թուողին՝ ի վերայ ամենայն ճգանց իւրեանց բանիւ և գործով՝ ընկալան փոխարէն « Գանս և բանս և մահանալ » բազում անգամ, նաւակոծութիւնս և տառապանս՝ յանդունդս և ի ճանապարհս. վիշտս... յազգէ և վիշտս ի հեթանոսաց, վիշտս ի քաղաքի, վիշտս յանապատի, վիշտս ի ծովու վիշտս ի սուտ եղբարց. (և ի վերայ այսոցիկ) ջանք և » վաստակք, տքնութիւնք, քաղց և ծարաւ և պահք, ցուրտ և » մերկութիւն. թող զայլ նեղութիւնսն »։ Զայս ամենայն և զայսպիսիս կրեցին և որ յառաջ քան զԲրիստոս առաքինիքն

և որք յետ և զկնի նորա՝ առաքեալքն և աշակերտք, հայրապետք և մարտիրոսք, միանձունք և կուսանք, յամենայն դասէ, յամենայն հասակէ. զորոց զնահատակութիւնս և ներբողեանս ընթեռնլով և լսելով՝ սխրանամք, յոգւոց հանեմք, և երանեմք. այլ և խրատիմք, զի « ինքեանք ելին, և մեզ ու-
» սուցին՝ բազում նեղութեամբ մտանել յայն հանգիստն »։
Ընդ որս և յայսմ ժամանակի՝ աչօք մերովք տեսանեմք զբազմութիւն միանձնացելոց արանց և կանանց և յոլովս յաշխարհական կարգէ՝ բարեպաշտօնս և երկիւղածս, տանելով վասն հանդերձեալ յուսոյն՝ համբերութեամբ՝ ոչ միայն զանհրաժարելի կենցաղոյս աղէտս, այլ և այպանս, արհամարհանս, հալածանս ի մերձաւորաց քան ի հեռաւորաց. քանզի և առտնին միջամտէ սուրն Քրիստոսի, և քակէ զծնողս ի ծննդոց և զազգականս յազգէ, զեղբայր յեղբօրէ և զընտանի յընտանւոյ, որ յայտ է ամենեցուն որոց փոքր ի շատէ ճանաչեն զաշխարհ և զժամանակս այս։

Իսկ մեզ, զի գարձցուք առ մեզ, զայսոսիկ ունելով ի մտի և յանդիման աչաց, զի՞ առնել իցէ, որ հեռացեալ զատուցեալ՝ կամ մօտ կամք ազգի յինքեան բաժանելոյ ի դաւանութեան և ի կանխակալ կարծիս, ազգիս՝ զորոյ քաջ գիտեմք զգնացս և զշնորհս՝ զոր պահէն և զոր կորոյս. զորոց ոչնեմք զնահատակսն, հուչակեմք զհայրապետսն, գորովիմք պատկառիմք և յոգւոց հանեմք ընդ յիշատակս անցելոյն և ներկայի. զորով ամենայնիւ քօղարկեալ յայժմուս՝ հայեցուք ի հեղինակ ուխտիս և ի հայրս մեր Մխիթար. ո՞րքան տառապանօք և հալածանօք ճգնեցաւ և տքնեցաւ՝ աւելի քան զկէս դար ժամանակի, մինչեւ կանգնեաց և հաստատեաց զտունս այս. ո՞րքան հալածանօք շրջեցան և վաստակեցան ձեռաստունք նորա։ Քաջ գիտեմք զայդոսիկ, և ի վաստակս և յարդիւնս նոցին վայելեմք այս օր, և այժմ ի ձեռին մերում կայ աւանդն, և մնայցէ, եթէ կայցեմք մնայցեմք ի հաւատս և ի սէր նախահօր և նախահարց մերոց, համբերութեամբ և յուսով առ Աստուած և առ Աստուածամայրն, անդուլ ջանիւ հետեւելով յառաջի եդեալ նպատակն, և յ՚ուշի ունելով ըզբան մեծի Հօրս և գյուսադրութիւն. « Ոչ յաջողեսցի վնա-
» սել հասարակութեանս՝ առանց թոյլտուութեան Աստուծոյ.
» բարի է որ Աստուծոյն է. իսկ որ ի մարդոյ՝ թէ և առ

» ժամանակ մի թուի եղծանել զհամբաւ, այլ Աստուած փա-
» ռաւորէ զելս իրին. և նոքա թէ և պարծին՝ ոչ ինչ են կա-
» րող առնել »։ Եւ դարձեալ վասն հակառակորդաց. « Զա-
» բախօսք՝ կրկնացանկք և միջնապարիսպք են միաբանու-
» թեանս, զի նոքօք ողորմի մեզ Տէր, և ամրացուցանէ ըզ-
» մեզ։... Բերանք նոցա խողովակք են գթութեան Աստուծոյ
» ի վերայ մեր։... փշեայ ցանկք են՝ որ արգելուն զմուտս
» գազանային դիւաց՝ ի մեզ։ Լեղի են ձկանն՝ յաչս Տոբիթայ,
» որ թէպէտ սակաւ մի մորմոքեցուցանէ՝ ապա լուսաւորէ »։
Այսպիսիք են բանք, գործ և յոյս Նախահօրս մերոյ, զորոյ եթէ տածիցեմք ի մեզ զոգի՝ ըստ այնմ և յաջողեսցի. ապա եթէ ծանր թուիցին մեզ վիշտք և հալածանք, չար քան արտաքուստ՝ ի ներքուստ հասցէ մեզ տազնապ. իսկ եթէ նորին բարեխօսութեամբ՝ առաքինասցուք իբրեւ « Եղբայր յեղբօրէ
» օգնեալ և իբրեւ քաղաք ամուր », տոկալ համբերել և վաստակել, Տէր եղիցի մեզ օգնական, և « զի՞ արասցէ
» մարդ »։

Եղբայրսիրութիւն իցէ զօդ և չունչ կենաց միաբանութեանս, յորոյ, քա՜ւ լիցի, ի նուազելն՝ անձամբ յանձանց յառնեն հալածանք, որ չար քան զարտաքինսն են. վասն այսորիկ արժան է մեզ ստէպ ասել, Եղբայրսիրութիւն հաստատեսցի ի մեզ. միմեանց անդամք և մարմինք եմք ի Քրիստոս, որ է գլուխ մեր ամենեցուն։ Պինդ կալցուք զմիմեանս առաքինօրէն, և այնքան առաւել՝ որքան զի նուազունք ոմանք եմք թուով, այլ և ցրուեալք ի գաւառս և յաշխարհս՝ մօտ և հեռի։ Բայց թողեալ զայսոսիկ ի խոհական միտս լսողաց, որք գիտեն և յաւելուլ, դարձցուք ի կարգ բանի երանութեան հալածելոց, յորմէ թուիմք հեռացեալ։

Ի քեզ մանաւանդ յինքն դարձիր հալածեալդ ողջախոհ՝ վասն արդարութեան, այլ և նախատեալ և բամբասեալ։ Բայց ես դուն ուրեք նշմարեմ զայդպիսի ոք. զի և այնքան նրբին է առաքինութիւնդ՝ որքան դժպհի հալածելն զոք առ ներհակութեան բարւոյն։ Սակայն գոգցուք զքեզ հալածեալ վասն Քրիստոսի. եթէ համբերես և յանուն և շնորհս նորա, ահա առնուս և զճաշակ երանութեան. և զինչ քան զայն մեծ երանութիւն՝ զի ընդ սակաւու միոյ համբերութեան՝ զարքայութիւն ժառանգիցես։ Մի՛ մոռանար երբէք զայս յոյս,

մի՛ որոներ քեզ վարձս յերկրի, և ահա ամենայն թեթեւանայ և քաղցրանայ. և եթէ յընտանեաց եւս հասցեն քեզ հալածանքն՝ երանելի եւս ես. բայց միայն յիշեա՝ զի վասն արդարութեան հալածելոցն են վարձք երանութեան։ Սակայն հնար է և զհալածանսն յարդարութիւն փոխել, եթէ և չէր ոք անստգիւտ յիր և ի բան, յորժամ զգաստացեալ համբերիցէ. և համբերութիւն քաւէ և արժանի առնէ վարձուցն. քանզի « Համբերութիւնն՝ գործ կատարեալ ունի »։ ըստ առաքելական վճռոյ. զի նա է զօրաւիգն ամենայն առաքինութեանց, հիւսուած սիրոյ, խոնարհութեան և արիութեան։ Եւ զի դա ի կրից և ի վշտաց կրելոց առնու զհանգամանս լաւութեամբն, ապա բաղձալիք են վիշտքն, նեղութիւնքն, հալածանքն, ուստի՛ և յորմէ եւս ումեք հասցեն. քանզի, միանգամ և բազում անգամ եւս յիշեսցուք, եթէ բազում նեղութեամբք պարտ է մտանել ի հանգիստն։

Ո՜հ, և ոչ անագանեսցէ հանգիստն. բազումք և կազմք են օթեւանքն վերինք. առագաստքն սրբեալք, հարսանիքն պատրաստ, զուարակքն զենեալք, հրաւիրակք յորդորք, տանուտէրն ընկալուչ կայ առ դուրս՝ քաղցրաձայնելով, « Եկա՛յք » առ իս աշխատեալքդ և վշտացեալք, ես հանգուցից ըզ» ձեզ »։... Եւ ո՞ւր իցեն աշխատութիւնքն և բեռինքն հալածանքն և նախատինքն. — էանց այդ ամենայն՝ իբրեւ ի քթթել մի ական, և ոչ եւս երեւի. և « Արդարութիւն Տեառն » մնայ յաւիտեան »։ – Երանի՜ որոց ի մանկութենէ տուեալ իցէ զուս ընդ բեռամբ վշտաց և նեղութեանց՝ վասն հանդերձելոյ երանութեան. երանի՜ բամբասելոցն և հալածելոց և ոչ դադարելոց ի գործելոյ զբարին և զարդար։ Երանի՜ մեզ՝ եթէ այսու յուսով համբերիցեմք փոքունց ինչ նեղութեանցս և հալածանաց՝ որ թէ հանդիպիցին. անքթիթ ունելով զակն յառաջնորդն խոստովանութեան մերոյ, որ ոչ միայն հրաւիրէ և քաջալերէ, այլ և յիւրն բառնայ խաչ՝ զաւելի բեռին հետեւողին իւրոյ, զոգջիր և զբովանդակն իսկ՝ որոյ սիրով մեծաւ տանիցի փոքունս։

Գոհութիւն քեզ, Քրիստոս, որ վշտակիցդ ես վշտացելոց, օգնական բեռնաւորաց, հանգուցիչ հալածելոց. և իցէ՞ ի կենցաղումս կիրք դժնդակ՝ զոր չիցէ քո բարձեալ յուս և ի խաչ. կամ, որպիսի՞ ցաւք՝ զորոց չառեր դու զփորձ. ո՞ր բա-

ժակ դառնորակ՝ մատուակեալ քոյոց հետեւողաց՝ զորոյ չառեր նախ զճաշակ, որ և զանտանելին բնաւից՝ միայնակ քամեցեր ցյատակ, և մրրախառն շրթամբքդ մեղր կաթեցեր ի դուզնաքեայ ըմպակս մեր, հազիւ չիթս ինչ թողեալ մեզ զլեղւոյն և զքացախոյ։ Եւ ո՜հ, ո՞րչափ ինչ իցէ հալածանքս զոր համարիմք կրել և ցո՞րչափ. մինչ դու կրեցեր և հալածեցար և անարգեցար զամենայն կեանս քո, մինչեւ ի մահ խաչի։ Ո՞ւր իմ բաժակ լեղւոյ. ո՞ւր բեռն իմ փոքրոգի. ո՞ւր լուծն քաղցրիկ. մի՞թէ զամենայն դու ստանձնեալ տանիցիս, որպէս հայր որ կրիցէ զգործեակս վաստակոյ որդեկին։ Ո՜հ, մի՛ այդպէս, բարի Յիսուս. եթէ երբէք ես կամիմ և եթէ ոչ՝ զի՞ր դու հանապազ և յիս՝ շալակ մի վշտի և հալածանաց. կալ զաշոյ իմէ. ցոյց ինձ յառաջոյ զխաչ քո՝ իբրեւ զսանգուղս վերելից յերկինս, և վարեա զիս յոր վայր և կամիցիս, և ընդ որ են անձուկ ճանապարհ։

Բ

Հանդէս արարեալ առաքինութեանց և յառաջեալ ընդ զառ ի վերն, նրբին ճանապարհ ճգանց ի գլուխ երանաւէտ լեռինն՝ ուր Քրիստոս նստի և կոչէ, յետին փորձանս և նահատակութիւն՝ գտաք զՀալածանս. զոր՝ յաճախ նոքին իսկ լաւութիւնքն յարուցանեն՝ ի նախանձուէ կամ յատելութենէ օտարաց. և այդոցիկ զհամբերութիւն խորհրդածեցաք զօրավիգն։ Այլ՝ են և խստագոյն եւս հալածանք առաքինասիրաց և ի սեամս իսկ սենեկացն հանդարտութեան. և այնքան դժնդակք՝ որքան զի և անխուսափելիք. զի ի ներքուստ է աղէտն և անձամբ յանձնէ՝ նիւթն։ Աստանօր կատարի բովանդակն՝ « Թշնամիք առն ընտանիք իւր ». այսինքն իւրաքանչիւր ընդաբոյս բարքն և կիրքն յորոց ոչ փոքր վտանգ է ուղղութեան և փրկութեան։ Ընտանեգոյն հալածող՝ իւրաքանչիւր ետն է՝ հին ծնունդ բնութեան ապականելոյ. յոր չէ մարթ արկանել կապերտ նոր, այլ նոր ստանալ ձորձ անկեալ պէսպէս չնորհօք Հոգւոյն։ Պարզաբար ասել, ուրանալ զանձն, և լինել մա՛րդ նոր ի Քրիստոս, որ վճռեացն, եթէ « Որ ատեայ զանձն իւր յաշխարհիս յայսմիկ՝ ի կեանսն » յաւիտենականս պահեսցէ զնա »։ և դարձեալ, « Որ կորոյս զանձն իւր վասն իմ՝ գտցէ զնա »։

Գիտէ ամենայն զգաստ՝ զի ոչ ուստեք այնպէս վնասի մարդ՝ որպէս յինքենէ. զի հզօրագոյն է որ յանձնէն ներգործի ի բարսն՝ քան յօտարէն, եթէ բարի և եթէ չար։ Վկայեն այսմ և արտաքին իմաստասէրքն. բայց, զոր ոչ իշխեցին նոքա՝ նախ քան զուսուցանելն այլոց՝ ինքնին առնել, և զոր ոչ քաջ իմանայր Նիկոդիմոս, զայն ամենօրհնեալ բերան Փրկչին մերոյ՝ համարձակաձայն քարոզեաց. ատել, արձակել, կորուսանել զանձն՝ առ ի գիւտ և պահուստ հոգւոյն, ոչ զմարմնաւոր կեանսն հեթանոսաբար կամ անյուսաբար սպանանել, այլ արիաբար և յուսով՝ նուաճել զկիրս նորին և զհոգւոյն, և զսորայս յապահովել անմահ կեանս։ Արդարեւ Աստուծոյ միայն հնար էր դարման գտանել անձնասիրութեան մարդոյ և վատասրտութեան։ Գերագոյն բժշկի էր գործ՝ այսպիսւոյ ներքսագոյն և թաքուն ախտի կազմել դեղ. և մատուցանել ճարտարութեամբ զսուրն ի փուտ և յապականեալն մասն, անթերի պահելով զառողջն. որպէս զի և յայտ լիցի, եթէ ոչ եկն ի լուծանել, այլ ի լնուլ. և լրումն՝ էր յաւելուած շնորհաց. ոչ ի վերայ հնացեալ ձորձոյն իբրեւ պատառս արկանելով ի նշաւակի, այլ նափորտապատ իմն առնելով զհինն կամ նրբագոյն թելօք Հոգւոյն հիւսել նորոգ. ոչ բացէ ի բաց զառաջինն մերկանալով, այլ զնոր մարդն զգեցուցանելով նորատուր շնորհօք, առ ի հերքել զախտս կամ զտկարութիւնս մարմնոյ, զսրտի, զմտաց և զկամաց, որք ներքին հալածիչքն են անձին. և որք համբերեն կամ յաղթեն սոցա՝ ստանան զարքայութիւն։

Տկարութիւն մարմնոյ, առաջին հալածիչ անձին, ընդարբոյս և բնամարտ ոսոխ, անհաշտ և անքակ. զոր և ինքն՝ որ յամենայնէն ազատն էր և անպարտելի, բայց զի զգեցեալ էր զադամայինս բնութիւն, խոստովանեցաւ, « Հոգիս յօժար » է, բայց մարմինս տկար » և այն՝ մինչ յետ ամենայն տառապանաց և հալածանաց արտաքնոց՝ հասեալ կայր յեզր նահատակութեանցն, և ի կէտն՝ յոր հաստատեալ կայր բաղդ մարդկութեան, և բնութիւն մարդոյս որ ի նմա՝ վեհերել թուէր, և խորշել ի դառնալից բաժակէն, զորմէ ասէրն երբեմն խրախուսաբար, « Զբաժակն՝ զոր ետ ինձ Հայր՝ ոչ ըմ- » պիցեմ »։ և արդ խիթայր ի խաչէն, քստմնէր ի մահուանէ, և աւաղելով իմն զզաղվաղփուն բնութիւնս՝ ասէր,

« Մարմինս տկար »։ Եւ ո՞ ի մարդկանէ որ ի չափ ծանօթութեան անձին հասեալ իցէ, կարիցէ այլ ինչ ազգ ասել, կամ պարծել ի զօրութիւն անձին և անգայթակղելի կարծել զմարմինն. ո՞ պանծասցի ընդ անսայթաք պնդութիւն իւր, որ բնատուր և որ շնորհատուր։ Ո՜հ, քանի՞ սիւնք հաստատունք համարեալք բարոյական շինուածոյս՝ անցեալ կործանեցան, երբեմն և անկանգնելիք։ Բայց և ի հակառակէն, մի՞ ոք չարաչար վհատիցի ընդ տկարութիւն իւր, զի բազում անգամ ի խորտակել հաստաբուն մայրից և արմատախիլ եւս լինել, դիւրաշարժ եղեգունք հողմակոծեալք կացին մնացին ի կայի իւրեանց։ Զոր և կրիցեմք ազդումն ի բնութենէ, երկիւղ կամ խրախոյս, յուշ լիցին մեզ առաջնոցն օրինակք. ծանիցուք զմեզ տկարս մերովսանն, և զգոյշ կացուք ի սադրանաց և ի յափրանաց. հայեսցուք և յառաքինիս՝ հաւասաբակիցս տկարութեանս մերում, սակայն հզօրք երեւեցան. հայեսցուք մանաւանդ ի նոյն ինքն խոստովանող տկարութեան մարմնոյն՝ ի տէր մեր Քրիստոս, առ ի մեր խրատ, որ ոչ զբնութիւնն փոխեաց, և ոչ զասպարէզն ելիք. այլ զյօժարութիւն հոգւոյն եւս քան զեւս պնդելով՝ յաղթեաց տկարութեան մարմնոյն, և յանձնառութեամբ հայրենի կամացն՝ կարողացոյց առ անհամբոյրն բնութեան. « Ոչ իմ կամք, ասէ, այլ քոյդ լիցին. և եթէ դու կամիս՝ » արբից զբաժակդ »։ Եւ էարբ բովանդակ. ոչ փոխեցաւ խաչն ի գահոյս, և ոչ փուչքն և բեւեռք՝ ի ծաղկունս. և ոչ տանջանարանքն պատկառեցին յաստուածախառն անդամոցն, այլ կամք մարդկութեան յաստուածայինսն յօդեալ կամս՝ հաւանեցան. և քաղցրացաւ լեղի բաժակին։

Օ՜ն, և դու հետեւողդ Քրիստոսի. զգաստ լեր անձին քում ի հալածանս տկարութեան մարմնոյդ, յորժամ խոժոռիցի ընդ իրս դժուարաբերս բնութեան, ընդ ճգնութիւնս, ընդ հսկմունս, ընդ պահս, ընդ տոթ և ընդ ցուրտ, ընդ վատաժութիւն և ընդ հիւանդութիւնս, ընդ վաստակս պէսպէս և աշխատութիւնս, որովք քաջ ճանաչես զտկարութիւնդ, ասա և դու յայնժամ, Մարմինս տկար է, այլ հոգիս յօժար. յայնժամ, և ոչ յորժամ ախորժականք ինչ իցեն բնութեանն, զորովք փարի առանց ընտրութեան մտաց։ Մի՛ արդեօք և յորժամ կամք և կարծիք ելցեն ընդ հակառակս և բաղխիցին ընդ

քեզ և ընդ օտարս, անբասիր արասցես զբնութիւնդ, ասելով եռանդնոտ յոյժ և հրային իմն կամ ի հակառակէն, վասն որոյ առ առաջարկեալն այն գործ՝ տկար է մարմինս։ Եւ մի դարձեալ, յորժամ հրաման հասցէ թողուլ քեզ զգործդ և զտեղի, և գործել զայն ինչ, երթալ յայն նիշ տեղի, անդէն և անդ՝ գործն անյարմար, օդք անհարթք երեւիցին, և տրտմիս և հոգաս և բաղբաղես աղուաբար, թէպէտ և հոգիս յօժար է, բայց մարմինս տկար, վասն որոյ... Աւի ի բերան առնէ զքեզ Քրիստոս իւրով շարաբանութեամբ, նախադասելով զտկարութիւն մարմնոյն, այլ ի վերայ բերելով և կնքելով զյօժարութիւն հոգւոյն և զյանձնառութիւն։ Տկար ես, այլ տկարագոյնք եւս քան զքեզ գոն ի վաներդ և ի տունս իսկ յաշխարհի. և ոչ միայն արք չափահասք, այլ և մանկունք և աղջկունք և ծերք և երիտասարդք եռանդունք, որոց և՛ տկարութիւն մարմնոցն և բռնութիւն՝ յայտ յանդիման յերեսացն իսկ գուշակի, բայց անհերեւոյթ կամացն յօժարութեամբ՝ յանձն առնուն և՛ գործեն և՛ յաջողեն զմեծամեծս իսկ և զդժուարինս։ Ցանձն առնուլ զխաչ Քրիստոսի՝ և ի ծանրութենէն հրաժարել՝ չիցէ՞ այդ ուրացութիւն եպեսրելի. ո՞չ և Քրիստոս ստիպիցի ուրանալ զքեզ յատենի Հօր իւրոյ։ Բեռն է արդարեւ հողեղէն յարկ մարմնոյս և ճնշէ զհոգի. այլ հարկ է ոչ գգուել և ոչ կքիլ, այլ վարել տանել ի գործն արժանի՝ թէպէտ և հլու իցէ թէպէտ և ըմբոստ։ Թէ վաղ թէ անագան ի քայքայումն և ի խորտակումն գնալոց է մարմինդ այդ՝ յուլութեամբ հալածող հոգւոյդ. լաւ է նմա խորտակիլ ի սպասու Տեառն, քան ի հեթեթանս թուլացելոյ սրտին։

Սի՞ստ, միւս եւս նիւթիչ հալածանաց անձին. զօրութիւն ճապուկ դիւրազգած, երկգիմի միջնորդ ընդ հոգի և ընդ մարմին, և յաճախ յետնոյս դաշնակից, օժանդակ զգայարանաց, սոցա բնաբոյս կրից զիջանելով և զհոգւոյն արիութիւն խափանելով, և որպէս ի դոյզն լաստափայտի բարձեալ գնա՝ ի մրբրկեալ ալիս դեղեւելով և տատանելով տանջէ. մերթ մոլեխառն խանդիւ ցնորաբար ձգտեցուցանէ ի սնոտիս և յանէակս, կամ այլագէմս քան զոր են՝ երեւեցուցանէ. մերթ ցրտացեալ կարկամեալ կայ անտղելի, անպատճառ իմն զզուանօք, կամ ձանձրութեամբ չիջուցանելով զգեղեցիկ

եռանդնն՝ որով խրախուսէ մարդ ի գործ։ Դառն են արդարեւ այսպիսի հալածանք հոգւոյ առ ի սրտէն, թերեւս քան զհրապոյրս թանձրանիւթ մարմնոյն. բայց որ գիտիցէ զգողն կամ զթշնամին զարանամուտ տան իւրում, դրանցն զգուշանայ, կամ զինու զօրութեամբ ի բաց հերքէ. ըստ այսմ և հոգւոյ անկ է տքնել, յաղօթս և ի ջան կալ հանապազ՝ առ ի չանկանելոյ յորոգայթ ընտանի թշնամւոյն, և անչէջ պահել զճրագ՝ լուսատու բանին յաղջամըղջին յարկին և ի հողմակոծ դանդաչանս սրտին։

Ի վերայ այսոցիկ հզօրագոյն եւս հալածանք են հոգւոյ ի տիրական զօրութենէ իւրմէ որ է կամքն, եթէ չիցէ քաջ ամրացեալ յերկիւղ և ի սէր հաստչին իւրոյ, զի ի սմանէ առնուն զլրումն չարի կամ բարւոյ՝ հրապոյրք մարմնոյ և սրտի. և նա է ոստիկան և դատաւոր գործոց. զօրութիւն է ազատ, այլ տակաւին յինքեան իսկ ոգորի։ Զի զի՞նչ բռնագոյն տագնապ անձին, քան զգիտելն զինքն ազատ, այլ տեսանել զինքեամբ պարաւանդս յինքնաբոյս կրից կամ յանծանօթէ ուստեք զօրութենէ՝ որ թուիցի զթեւս հոգւոյն ընդ վայր քաշել. եթէ ոչ ճգնեսցի հոգի յարակիրթ ջանիւ ի վեր հայեցուցանել զկամսն, ի դերեւ ելանեն ամենայն աշխատութիւնք կենաց։ Արթո՞ւն կացէք յամենայն ժամ, ազդ առնէ Տէր. զի թշնամին այն հոգեկորոյս՝ գիրկ ընդ խառն անմեկին կայ ի նմանէ, թուլութեամբ, գազջութեամբ, ներողամիտ անձամբ անձինն լինելով, կամ չատ համարելով զոր արարն ինչ բարի։ Այլ պատուիրանն հրամայէ, « զբարիս գործել մի ձանձ» ռանայք ». և ի ընուլն եւս զամենայն պարտսն՝ խոստովանիլ զծառայութիւն անպիտան ի սպասու Տեառն, և ոչ երբէք ասել չատ։ Հետեւողաց ճանապարհի կատարելութեան ճիգն և վաստակ մինչեւ ի կէտ մահուն է. եթէ յառաջ քան զայն դադարիցեն կամք ի բարւոջ՝ բարոյականն կանխէ մահ քան զբնական. և հոգի՝ ոչ միայն հալածի՝ այլ և գերեալ լինի ի տարապարհակ ազատութենէ կամացն։

Զի՞նչ իցէ այդ ազատութիւն. — Քրիստոս զերանութիւն մեծ՝ եցոյց ի համբերութեան հալածանաց. իսկ ազատն՝ ոչ հալածի և ոչ մրցի. և ուստի՞ իցէ նմա երանութիւն։ — Մի ոք խաբիցի. չիք կատարեալ ազատութիւն հոգւոյ՝ յերկրի. թէպէտ և զերծ ոք իցէ յասացելոցս փորձանաց. զի և ազա-

տութիւն իսկ՝ ըստ հասարակ իմացուածոյ յաճախ չարեաց է առիթ՝ քան բարւոյ. ոմանց ի կանգնումն և ոմանց ի գլորումն։ Իցեն թերեւս որոց նուաճեալ զտկարութիւնս մարմնոյ և սրտի և զկամաց, իբրեւ զերազանցեալք զմրրկածին օդովքս՝ յանախտական պարզութեան եթերաց ճախրիցեն։ Ցանկալի բաղդ, սքանչելի շնորհ Աստուծոյ. այլ իմ և ի խոնարհագունից աստիճանաց յետամնաց գոլով, ոչ իշխեմ անկասկածելի իսկ ասել զայնպիսի կայանս բարձունս, զարհուրեալ ի չարաչար կործանմանէ արուսեկին և յոլովից երբեմն ի մարմնի հրեշտակացելոց. կամ առ հպարտութեան ընդ շնորհսն, կամ յինքնահաճ նորաձեւութիւնս նկրտելով և կամ յառաւել քան զկարն և զհրաման, և զձրիատուր պարգեւսն Աստուծոյ՝ արգասիս չանից վարկանելով։

Է՛ և այլ ինչ առիթ հոգեկան հալածանաց. ցամաքութիւնն այն և անմխիթարութիւն, որ և առաքինեաց անձանց ածէ տագնապ։ Առ սոսա ազդ առնեն զգօնք, եթէ է « ինչ ի դմա » չար և է որ ոչ ». չար իցէ ցամաքութիւնն՝ զոր ստգտանիցէ խիղճ՝ ի գաղջութենէ և ի մեղկութենէ կամացն, կամ ի զառածանաց օտարոտի կրից, որք զ'առ ի վերուստ հոսանս շնորհաց ի հոգին՝ խափանեն. իսկ եթէ յայսցանէ անբասիր գոլով գիտակցութեան տակաւին ցամաքեալ համարիցի, այն ի խրատ առաջնոց թուլութեանցն կամ ի զգուշութիւն առաջիկայիցն է, և առիթ խոնարհութեան. յոր սակս և հաւատարմաց իւրոց թոյլ տայ Տէր կրել, և յորդորէ հայել յաւէտ ի տուողն քան ի տուրսն։

Հանգոյն այսմ և դառնագոյն եւս հալածանք յանձնէ՝ են երկիւղն և երկբայելն ընդ վիճակ շնորհաց հոգւոյն, եթէ իցեմ հաճոյ Աստուծոյ՝ թէ ոչ. կամ բաւիցեմ ժուժել տոկալ մինչեւ իսպառ. խոկումն անաչառ դատաստանաց Աստուծոյ. ատեանն ահեղ. մեղք անցելոյ հասակին, ունակութիւնք տարբացեալք, յօժարութիւնք ոչ անբիծք, և նուազումն զօրութեան։ Այսոքիկ թերեւս չար քան զայլ ներքին վտանգս իցեն և գայթակղութիւնք հոգւոց։ Բայց և այնու իսկ զի բազում անգամ յառաջընթացից ի հոգեւոր ճանապարհին են հալածանքդ, յուսալի է և ոչ ընդերկար անտեսութիւն առ ի ՅԱստուծոյ, այլ սթափել զթութեամբ զտառապեալն և զտատամսեալ։ Երկիւղ՝ արդարեւ « սկիզբն է զգօնութեան ». այլ

արժան է երկնչել ՅԱստուծոյ իբրեւ ի հօրէ և ոչ յանողորմն դատողէ. բարի է զգաստանալ երկիւղիւ, այլ մի՛ ահաբեկ լինել, խոնարհիլ, և մի՛ գլորիլ. և մանաւանդ մի՛ վհատիլ. զի վհատութիւն անձնասպանութիւն կամ լլկումն է հոգւոյ։ Առաջին օրէնք փրկութեան մերոյ հաւատքն են, նոյն և ի սեղանի ուխտից մերոց. և առաջին աղերս ընդ մեզ և Աստուած՝ սէր նորա է և գութն արարչական, անբաւ մարդասիրութիւն Քրիստոսի. « Աչք Տեառն ի վերայ երկիւղածաց » իւրոց. և « յո՞ հանգիցէ նա, բայց եթէ ի հեզս և ի խոնարհս և որք դողան ի բանից նորա »։ Հաւատք և յոյս առաջին տարերք են քրիստոնէութեան և սէր կարապետ նոցա և վերջապահ. և « Տէր մերձ է ». վարագոյր մի միայն անջրպետէ ընդ նա և ընդ հոգի հաւատարիմ. « Ցարիցէ Աստուած, և ցրուեսցին ամենայն թշնամիք նորա », և հալածիչք հոգւոց ընտրելոց իւրոց. ընդ նոսին և սկզբնաչարն նախանձոտ ամենայն հոգւոց աստուածասիրաց՝ սատանայ. զոր « Տէր Յիսուս սատակեսցէ հոգւով բերանոյ իւրոյ »։ Եւ մեք գոչեսցուք, « Տէր, զի՞ բազում եղեն նեղիչք իմ. Բազում անգամ մարտեան ընդ իս ի մանկութենէ իմմէ խորհուրդք խաւարայինք, հալածիչք հոգւոյս, արհաւիրք կորըստականք, մեղք և մահ. և բազում թերեւս անգամ մարտիցեն ընդ իս և ասիցեն, « Ո՞ւր է Աստուած քո ». և « Ոչ » գոյ փրկութիւն սորա առ Աստուած իւր »։ Այլ ես միանգամայն ձայն տամ. « Ոչ երկեայց ի բիւրուց զօրաց նոցա՝ » որք շուրջանակի պատեալ պաշարեալ պահիցեն զիս. այլ » գու Արի Տէր, և փրկեա զիս Աստուած իմ »։ Բազում անգամ եւս յարիցեն ի վերայ հոգւոյս զօրութիւնք անձին իմոյ հակառակամարտք, և սասանեսցի սիրտ իմ, և « կեանք » իմ ի դժոխս մերձեսցին », և եղեց երբեմն « որպէս մարդ » առանց օգնականի », լքեալ թողեալ յերկրէ գոգջիր և յերկնից. « Սակայն և այսուհիկ՝ ես ի քեզ, Տէր, յուսացայց ». քանզի դու միայն ես Բարձրեալ, և ամենայն ատելիք քո չարիք և մեղք, մահ և դժոխք փախչին յերեսաց քոց և յերեսաց սիրելեաց քոց և հաւատարմաց, և դու հալածական առնես զհալածիչս հոգւոց նոցա. « Ողորմութիւն քո, Տէր, » ի վերայ երկիւղածաց քոց. արդարութիւն քո յորդւոց յոր » գիս. և արքայութիւն քո ամենեցուն տիրէ ». Արքայու-

թիւն քո՝ արքայութիւն յաւիտենից, վարձք հալածելոցն վասն արդարութեան։

Ամբա՜րձ արդ զաչս քո, ո՞վ հոգի հալածեալ բազում օրինակաւ. հայեաց շուրջ զքեւ. զի՞նչ տեսանիցես յետ այսր ամենայնի վտանգաց կենացդ. զոր նուիրեցեր ի զոհ բանական՝ յաւուր քում ուխտականի, զոր և այսօր կրկին նուիրես. զի՞նչ մնայ քեզ ընդ մէջ այսր աւուր և միւսոյ եւս, բայց եթէ վաղիւ մի. օր մի եւս։ Մինոյ եւեթ աւուր են կեանք մեր, մինոյ եւեթ աւուր աշխատանք և բեռինք, քիրտն և արտասուք, հառաչանք և հալածանք, նեղութիւն և համբերութիւն։ Կեաց օր մի եւս զգաստութեամբ, ո՞վ հոգի նուիրեալ Աստուծոյ, և կեցցես յաւիտեան։ Փոքր միւս եւս, և ահա լուծանին ստուերք և ցնորք, թօթափին որպէս կեղեւանք յաչաց կափուցելոց՝ սնոտիքն աշխարհի. Եւ ի վերայ լերինդ բարձու հաւատոց՝ որպէս ի սարաւանդեալ գահու կարկառելոյ ի վերայ անդորրութեան անդնդախոր ովկիանու, և տեսանիցես յարեւելս ծիր լայնալիր լուսոյ առհասարակ ոլորտացեալ, որ գամ քան զգամ վարդագոյն վառի, և ահա ծագէ առաւօտ աւուրն յաւիտենականի. հնչէ հրաւէրն հարսանեաց. բանին դրունք արքայութեան հաւատարիմ հետեւողաց Քրիստոսի. և ահա նա ինքնին, հեղինակն հալածելոց վասն արդարութեան, պարագլուխն համբերողաց, առաջի ունելով զնչան յաղթութեան իւրոյ՝ գերարփիափայլ ցոլացեալ, գայ ընդ առաջ կամարարաց իւրոց յարուցելոց ի ձայն հրեշտակագոչ փողոյն, որում յաղթէ ամենեարանեան ձայնն՝ Եկայք օրհնեալք Հօր իմոյ, և երանեալք յինէն. Աղքատքդ հոգւով, Ագաւորքդ ընդ չարիս աշխարհի, Հեգքդ և հաշտք ընդ ընկերս և ընդ կամս իմ. Եկայք Քաղցեալքդ և ծարաւիք արդարութեան. Եկայք Ողորմածքդ, եղբայրասէրքդ, անձնագութքդ. Եկայք Սուրբքդ սրտիւք. ողջախոհք, փափագողք տեսոյն իմոյ. Եկայք Խաղաղարարք անձանց և աշխարհի. Եկայք Հալածեալքդ վասն արդարութեան՝ յօտարաց և յանձնէ. Եկայք ամենեքեան հաւատարիմքդ աւետարանիս իմոյ և օրինակի. ժառանգեցէք զպատրաստեալն ձեզ ի սկզբանէ զարքայութիւն Հօր իմոյ։

Հա՜պա, և մեք Եղբարք քրիստոսասէրք, փութասցուք ելցուք ընդ առաջ հրաւիրողին զմեզ և Փրկչի... Այլ յուշ ինձ

և գամ մի միայն. յուշ մի յետին. փորձեսցուք զթեւս հոգւոց մերոց. եթէ չիցեմք ի քաջափետուր թեւազգեցից անտի նորոգեալք որպէս զարծուին՝ ի չնորհաց Հոգւոյն, առ ի վազել զվհաւն՝ որ ընդ մէջ գահաւանդի կենցաղոյս և ընդ տանն յաւիտենականի, հարկ է մեզ արկանել կամուրջ մի և անցանել. և ահաւադիկ կամուրջդ առ ձեռն պատրաստ և համառօտ. խաչն այս։ Ո՜ն, եկայք այժմիկ, անկցուք առ ոտս նորա և մաղթեսցուք. Երկիր պագանեմք քեզ, Սուրբ խաչ, և քեւ ի քեզ զենեցելումն անմահ Բանի և մերոյս Փրկչի, որ եղերդ մեզ ուղղեակ անմոլար ի մրրկածուփ կենցաղիս, փայտ փրկանակ յալէկոծելս մեր, նեցուկ ամրութեան ի գթելս մեր, լծակ թեթեւացուցիչ բեռինս փոքրոգւոյ, պարծանք պարկեշտութեան պարանոցիս մերոյ, հայեակ յուսոյ տարակուսանաց մերոց. և աստղ լուսատու ի խաւարել երբեմն տեսանելեաց մերոց. զբօսարան մեր և հանգուցիչ՝ ի վիշտս և յանդորրու, նիշ և նշոյլ անստուեր հանդերձելոցն մեզ և խոստացելոց։ Ո՜վ որ բարձեր ի գոգ քո զանբաւելի բարձողն տիեզերաց, բարձ և այժմ զմերս փոքրկութիւն. մինչեւ անցուցեալ զկորստական վհաւս, հասուցցես յանքոյթ օթեվանսդ զորոյ զլուսաւոր դրունս նշմարեմք ընդ աղօտ, և լուեալ զերանաւէտ բարբառսդ՝ բաղխեմք արտասուօք, Բա՜ց մեզ, Տէր, բաց մեզ, զի մտցուք և խոստովան եղիցուք և օրհնեսցուք զքեզ յաւիտեան և եւս։

Եւ դու, յաջմէ կացեալ սրբոյ Նշանիս, դշխոյ՝ զարդարեալ և պաճուճեալ ի գերազոյն փառս ոսկեհուռս, թաթաւեալ ի զմուռս սիրոյ և ցաւոց, Մայր Միածնին՝ քո և Հօրն յաւիտենականի, և մայրագիր նուիրելոցս նմա և քեզ, աշակերտաց ծառայի քո Մխիթարայ, որք գումարեալք աստանօր՝ ուխտեմք և՝ այսօր Որդւոյ քում և քեզ, որպէս յաւուր ընծայութեան մերոյ ի կրօնս, զնորոգութիւն կենաց և պարտուց կոչմանս մերոյ. մեք և որք ի սփիւռս պանդխտեալ եղբարք մեր, խաչն արօտի գթութեանց քոց. Հայեաց յամենեսին մայրենական խանդակաթ աչօք քովք, և եթէ հարկ իցէ, ո՜հ, նա և մի կաւ արտասուակաթ ակամբ, զօրացո՛ զմեզ յ՚առաջադրութեանս մերում. թեթեւացո և ճեպեցո զընթացս մեր ի չաւիղս՝ զոր դու իսկ կոխեցեր կուսական գարշապարօքդ՝ զհետ Որդւոյ քո և Աստուծոյ։ — Բարձ զխութ

և զխէթ՝ որ ի նմայն ինչ դժուարութեանց երեւիցին մեզ։ Հերքեա ի մէնջ զփոքրոգութիւն և վեհերոտութիւն. տուր իւրաքանչիւր ըստ իւրում չափու և աստիճանի՝ առաքինանալ, նահատակել, նմանել Սրբոց և Ամենասրբուհւոյդ, և Սրբութեան Սրբոց, որչափ գոյ մեզ հնար։ Օրհնեա, ո՜վ ապաւէն մեր ամենօրհնեալ, յօրհնութիւն նոր՝ զտարածեալքս առ ոտս ողորմութեանց քոց լրմամբ Եղբայրութեանս որ մօտ և որ հեռի։ — Օրհնեա զերեսփոխան Միածնիդ ի տանս մերում՝ զհայր և զգլուխ ուխտիս, ծագել ի բարձանց՝ որպէս արեգակն առհասարակ՝ զլոյս իմաստուն առաջնորդութեան, և զեռանդն սիրոյ՝ որ շաղկապ է հոգեկցաց։ — Օրհնեա և բարգաւաճեա ի կատարելութիւն սրբութեան զծերունազարդ որ ի մեզ ալիս, և պարգեւեա ընդ երկայն աւուրս ի խրատ և յօրինակ նորահասից։ — Օրհնեա զերիտասարդքս՝ առ անսայթաք վարել զկառս տապանակի ուխտիս, որ ի կորով բազկաց նոցին առաւել ծանրանայ, և յորում սիրեմք զքեզ տեսանել հանգուցեալ, որպէս զօրինակ քո զոսկեղէն սափոր քրիստոսանկար մանանային։ — Օրհնեա և զնորընծայ դեռաբուսիկ արբունս դաստիարակելոցն առ ի մէնջ, փթթեցուցեալ քոյինափայլ շուշանաց մաքրութեամբ, ի զուարճութիւն տեսողացս մեզ՝ և քեզ ի բուրումն անուշից, ի վերայ սեղանոյ ուխտիս կանգնելոյ յերկրի պանդխտութեան։ — Օրհնեա, օրհնեա և դարձեալ օրհնեա, մայրդ ամենօրհնեալ, զամենեսին զորդեգիրս քո, և լցո զպէտս ամենեցուն, որպէս և գիտենն և գիտես։ Եղիցին կամք քո և կամք Միածնին քո՝ ի մեզ. և մեր կամք և ջանք, շունչք և հոգիք՝ քեզ եղիցին նուիրեալք և Քրիստոսի Աստուծոյ մերոյ, ընդ Հօրն և Հոգւոյն Սրբոյ. որոց փառք և զոհութիւն և երկրպագութիւն, այժմ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՔ

Ի ՎԵՐԱՅ ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹԻՑ

ՎԱՍՆ ԵՕԹՆՕՐԵԱՅ ՀՈԳԵՒՈՐ ԿՐԹՈՒԹԵԱՆ

Ո՞՞ կարասցէ տիրապէս հասու լինել՝ եթէ զինչ և քանի՛ ինչ մեծ իցէ ի չգոյէ գալ ի գոյ. — ո՞ կարասցէ կշռել մտօք զանբաւութիւն ձրիատուր պարգեւին. յանէից լինել էակ, և էակ իրազգած։ Կամ ո՞ կարաց ըստ արժան բաւականին գոհանալ զԱրարչէն իւրմէ, զի արար զինքն ըստ պատկերի իւրում, անձն կենսունակ, մտաւոր, հոգեւոր, և թէ ոչ անբսկիզբն՝ այլ այնուհետեւ մնայուն և անվախճան Աստուծով չափ՝ ի յաւիտեանս։ Միթէ բաւիցէ՞ն ամենայն կրթութիւնք առաքինասիրաց, պաշտամունք երկիւղածաց, ճգնութիւնք և և աղօթք սրբոց, և ամենայն երգք և օրհնութիւնք անմարմնական դասուցն անգամ՝ լինել ի փոխարէնս այնքանոյ շնորհի։ Մեծագոյն պարգեւ է Աստուծոյ լինելութիւն միոյ բանաւոր էակի՝ քան զամենայն էից գործս և ջանս միանգամայն։

Եւ զի անհնար թուի ինձ մարդկեղէն մտօք հասանել ի վերայ մեծութեան այսր շնորհի, առցուք մեզ օժանդակ զմիտս Աստուածամարդոյն Յիսուսի, և զօրինակն զոր եդ առաջի մեր, առակաւ միոյն միայնոյ ի հարիւրաթիւ հօտէն մոլորելոյ և գտելոյ, յորոյ վերայ այնքան մեծ էր ուրախութիւն երկնից՝ որպէս թէ աւելի քան ի վերայ իննըսնից և ինունցն անփորձից։ Իսկ զինչ արդեօք ասելի էր կամ ո՞րքան մեծ եւս լինէր ուրախութիւն՝ եթէ թիւ մի եւս յաւելոյր

յառաջնոցն վերայ ոչ գիւտիւ ի կորստենէ, այլ ի բնաւ իսկ յանգոյից ի գոյութիւն գալով և ի վայելս։ Այնքան մեծ և անկշիռ է յարգ և արժէք միոյ ի միոյ անձին յաչս ամենաբաւականին և անկարօտ Աստուծոյ իմոյ, որպէս եթէ ես կէտս մի փոքրիկ և աննշմարելի՝ լրումն լինէի նորին անբաւութեան։

Իսկ ես ե՞րբ և քանի՞ցս անգամ խորամուխ եղէ յայսպիսի հրաշալի բաղդ իմ և վիճակ։... Յածեալ անդադար զաչս և զմիտս ի բազմակերպ տեսարանս բնութեան, քաղաքական և մտաւոր աշխարհաց, խելամտիցիմ արդեօք թէ պատուակալնագոյն քան զայնոսիկ ամենայն՝ ես ինքն եմ առաջի հանուրց Արարչապետին. — եթէ չիք ինչ ազնիւ ի տիեզերս՝ քան զհոգի մարդոյս. – և թէ, Աստուած՝ որ ետ ինձ ճանաչել զայնքան անբաւ արարածս, զնմանիս իմ և զաննմանիս, զմի ինչ խնդրէ յինէն ի վեր քան զամենայն ինչ, այն է՝ զիս ինքն միայն. զի ծանեայց զիս, և ծանեայց զպատճառն իմ առաջին և վերջին զԱստուած զնոյն։ Զի՞նչ էի յառաջ քան զսակաւ ինչ ամս. զի՞նչ եմ ի ներկայումս այժմիկ, որ թէպէտ և կորուսեալ և անծանօթ ի խառն բազմութեան մարդկան նմանեաց՝ այլ անթաքուստ և անշփոթ կամ յամենատես աչս Հաստչին. — և զի՞նչ յետ սակաւու միոյ եղեց, յորժամ դադարեալ իցէ վասն իմ ժամանակս այս համառօտ, թօթափիցի հողեղէն հնութիւնս այս, և հոգիս հոլանի կացցէ յատենի Աստուծոյ։

Ցանկալի էր ինձ արդարեւ խաղալ ընկղմել յայս խորհուրդ խոր և գեղեցիկ՝ եղելութեան իմոյ, և յարգի հոգւոյ իմոյ առաջի Աստուծոյ. հրաշանալ և զմայլել անձամբ յանձին, զի այնքան մեծարոյ եղէ՝ ի լինելս իսկ. և ըստ անձն ելեալ վերանալ յիմ սկզբնապատճառն, միթէ յաստուածութիւն անդր, և մնալ ի հիացման բովանդակ ժամանակս, որպէս առնեն երանեալքն յերկինս և սիրտք սուրբք ի վերայ երկրիս։... Այլ, եղուկ զինեւ. պայման վարուցս վիճակի՝ յորում դեռ յառաջ քան զսակաւ վայրկեանս գտանէի, ամքն զոր թողեալ եմ ի թիկունս, անցեալ կեանքս իմ, ոչ ներեն ինձ յայնպիսի բարձրութիւնս ճախրել. նա մանաւանդ անհնար իսկ է ծանրացեալ և թաթաւեալ թեւոց ի տղմոյ և յաղտէ ախտից և մեղաց՝ վերանալ թռչել ի պարունակս

պարզութեան Ջերմեռանդն հոգւոց. զի այնքան վերանան միտք յերկնաւորս՝ որքան հեռանան կամք յերկրաւորաց։ — Ապա ուրեմն կարեւորագոյն խորհուրդ կացցէ ինձ առաջի պայման հոգւոյս իմոյ՝ որոյ ոչ է իսպառ աներկբայ փրկութիւն։ Խոկումն հոգւոյս, որ այնքան մեծ և ազնիւ է յաչս ստեղծողին, և որ առաջին և եզակի նկատելին և հոգալի է ինձ ի կենցաղումս, և որում մարթ է՝ ուրախութեան մեծի լինել պատճառս՝ յերկինս գիւտիւն, կամ ինձ անբաւ և անգարման սգոյ՝ կորստեամբն ի դժոխս։

Փոխեալ արդ զդէմս առաջին հարցմանս՝ հարցից զայս. Ո՞ արդեօք ըստ արժան բաւականին խոկաց և գիտաց, թէ քանի՞ ծանր և մեծ իրք են կորուստ հոգւոյ միոյ. և ո՞րքան մեծագոյն չար է այս քան զոչնչութիւնն։ Ո՞ կարասցէ չափաւոր մտօքն հասանել ըմբռնել զանչափն և գյաւիտենական, զկորուստ կամ զփրկութիւն, զտանջանսն մշտնջենաւորս կամ զկեանսն յաւիտենականս։ — Եթէ չիցեմք այդմ բաւականք, եթէ ոչ կարիցեմք զմեծութիւն վտանգին կշռել, գէթ ըմբռնեմք ըստ բաւականին, եթէ մեծ է յոյժ. և որ եւսն է, եթէ մարթ է և մեզ անկանել և կորնչել. եթէ, Աստուծոյ իսկ կամելով զամենեցուն փրկութիւն, տակաւին և ոչ ումեք՝ որ ի կենցաղումս է՝ աներկբայ է փրկիլն. և թէ, թէպէտ բազումս ունիմք առ յԱստուծոյ փաստս փարելիս յուսոյ, այլ յանձնէ՝ և ոչ մի երաշխաւորութիւն առ այն, ոչ ուստեք հաւաստիք, ոչ ուրեք կեանք անկասկածք։ Առաջի մեր կան օրինակք առաքինեաց և սրբոց անգամ, և մեծամեծաց իսկ սրբոց ըստ մերս դատման. և ոչ այնքան առաքինագործ և մաքուր վարք նոցա զարմանալիք իցեն արդեօք, որքան երկիւղ նոցա ի դատաստանացն Աստուծոյ, թէ հասանիցե՞ն արդեօք յոր դիմէինն, ելցե՞ն ի հուն ճանապարհին ուղղութեան, դասիցի՞ն ընդ աջեայս յաւուրն ընտրութեան, գրեսցի՞ն անշնջելի ի դպրութեան կենաց և եղիցի՞ն ժառանգք արքայութեան Աստուծոյ իւրեանց։ Անձինք ի մանկութենէ յանձնեալք ի գիրկս սրբութեան, սնեալք ի վարժս լաւութեանց անդուլ կրթանօք, զգաստք, աղօթականք, մաքրափայլք և արդիւնագործք, և յայսոսիկ յալեւոյթ ժամանեալք, տակաւին ահիւ և դողութեամբ, ըստ խրատու Առաքելոյն, հոգով մեծաւ ջանային զփրկութիւն անձանց, և

մինչեւ ի թափել ի սպառել ուժոյ մարմնոցն՝ ոչ կասէին ի ստիպելոյ գնա և նեղելոյ, զի կարասցեն միայն հասանել ի ժամադրեալն կէտ փրկչական։

Իսկ ես որ լոկ զառաքինեաց և զառաքինութեանց անուանս փոքր ի շատէ թէ գիտեմ, այլ ի գործոյ և ի ջանից նոցին յոյժ և յոյժ վերջացեալս եմ, մանաւանդ թէ և օտարացեալ, ես զո՞ր տեղի յուսոյ կամ վստահութեան ունիցիմ՝ յետ այսպիսւոյ վարուց և կենաց (որ համառօտեալ իսկ է), հասանել աներկմիտ ի փրկութիւնն տենչալի, ի ժողովս առաքինեաց, ի հանգիստ աշխատելոցն և նեղելոց յերկրի՝ վասն Աստուծոյ. առ Յիսուսն իմ՝ որ զամենայն օր զամենայն ժամ խաչիւ կամ ի խաչի եկեաց յերկրի, և ի խաչի բեւեռեալ երեւի և կայ հանապազօր առաջի իմ, մինչ ես յամենայնի խորշիմ ի դժուարէն և ի դիւրինն փութամ։... Իցէ՞ ինչ ինձ արդեօք բաւական՝ սրբութիւն և նրբութիւն վիճակիս, սքեմս այս սեւաշուք. պարկեշտութիւն բնակարանիս և կահուց, հրամայեալ պաշտամունք կարգիս, կանոնեալ աղօթքն, ժամերգութիւնք և պատարագն սուրբ, հանդերձ այլովքն, և կամ կենակցութիւն հոգեւոր և հոգեսէր եղբարց. իցէ՞ այդ ամենայն բաւական առ արժանաւոր զիս կացուցանել առաջի Աստուծոյ։ Ո՞չ մանաւանդ ծանրագոյն եւս արասցեն դոքա զպարտականութիւնս իմ, ըստ տէրունական հրամանին, թէ « Որում շատ տուաւ՝ շատ խնդրեսցի ի նմանէ ». և ո՞չ մանաւանդ կանոնք և օրինակք զգաստից ընկերաց՝ լիցին ինձ յառաւել յանդիմանութիւն և ի դատապարտութիւն, եթէ չիցեմ նոցին հետեւող և նմանող։

Կրօնաւոր եմ և քահանայ. բարձրագոյն և սրբազոյն վիճակք ի վերայ երկրի, որ ոչ տուան բազմաց լաւաց և սրբոց իսկ, որպէս ինձ յետնելոյս. և որովք ոչ միայն փրկել և ձգել զիս առ ինքն՝ կամեցաւ Տէր, այլ բարձրագոյն լինել վարուք՝ առաջի իւր՝ յերկրի, և բարձրագոյն փառօք յերկինս. անդր առաջնորդելով և այլոց իմոյին օրինակաւ և բանիւք. զի այս իսկ է վախճան սրբազանի կարգիս և ուխտիս։ Երկաքանչիւր վիճակքս յաւելեալք ի վերայ նախընկալ քրիստոնէական կնքոյս՝ իբրեւ յառաջոյ և երկուստեք իմն ի ընէ բողոքեն ինձ գիմել ի կատարելութիւն և ի սրբութիւն, առաւել քան զբազմութիւն մարդկան աշխարհականաց, որք

զարտաքինն իմն արտորայս մշակիցեն, իսկ ինձ անկ է, իմովս իսկ կամաւ բերեալ առ այս, ի ներքս ի բնի յագաբակի անդ Տեառն արօրադրել, որպէս և վաղվաղ ի տղայ տիոց ձեռն արկի զմաճով Յիսուսի... Եւ երանի՞ եթէ, ըստ նորին խրատու, ոչ միանգամ և ոչ ստէպ ի թիկունս դարձեալ պշուցեալ էր յիրս՝ զոր թողի և զոր արժան էր թողուլ իսպառ. որով՝ և անդաստանս բանաւոր խոպանացեալ կայ. ամք բազումք հոլովեալք զինեւ, և արդիւնք սակաւ ժողովեալք, եթէ գուցէ բնաւ իսկ իմ արդիւն կամ պտուղ մի անտխեղծ։ Եւ յայսպիսում գոլով իմ պայմանի՝ ահա գայ շտեմարանապետն արդարահատոյց, մատչել ի փորձ և ի վարձ. « Որոյ հեծանոցն ի ձեռին իւրում և սրբեսցէ զկալ » իւր »։... Ո՜հ. զի՞ եղիցի ինձ ի պահուն՝ յորում քննեսցին կեանք իմ և գործք ի վերայ երկրի. ի պահու՝ յորում ասասցեն զինէն քննիչքն և դատախազք. Ահա այրն այն և գործք իւր. – ի պահու՝ յորում անվրէպ և անխոտոր՝ հարեալ ի կենցաղականս իմ՝ հոսեսցէ յայերս զատուցիչս ցորենոյն և յարդի։... Զի՞նչ է ամպդ այդ մեծ դալկագոյն և թեթեւ՝ վերացեալ յանկարծոյն ի կալոյ արտի, և իսկ և իսկ ցնդեալ ընդ օդս, իսկ և իսկ ծախեալ ի կիզանուտ կայծից հնոցին ահաւորի, մինչչեւ ի նոյն ի ներքս անկեալ։... Ո՞չ դա այդ իցէ մղեղն արուգ և անարգասաբեր անդոյ իմոյ. գործք այնքան ամաց կենացս. որք կամ զի ոչ էին ուղղեալք առ ճըշմարիտն յաւիտենական, և կամ ոչ տեւեալք ի նմին ուղղութեանն, ապարդիւնք և սնոտիք գտան. և փոխանակ լինելոյ ցորեան ընտիր ժողովելի ի շտեմարանս հանուրց հազարապետին, փոխեցան յունդ և ի յարդ դիւրավատնելի, և փորձեալք ի կշիռ ահեղն հեծանոցի՝ մատնեցան ի կորուստ և յեղծումն ցաւագին. « Եւ գյարդն այրեսցէ անշէջ հրով »։

Ո՜հ, մի՛. մի՛ լիցի ինձ այսպէս, մի՛ լիցի այս մեզ, որք տակաւին արտասուօք և քրտամբք դեգերիմք յանդաստանի քում, Տէր, և այժմէն ընդ Երգողին մերում մաղթեմք և գոչեմք. « Յորժամ հեծանոցաւ դատողութեան քո, Տէր, » սրբես զկալ աշխարհի, յ՝շտեմարանս արքայութեանդ ժո» ղովեա զմեզ ընդ արդարոցն »։ Քանզի և յարդարանալ իսկ, առ ի գործել զգործ առաքինեաց և սրբոց եկեալ կամք ի ժողովս և առաջի սրբոյ նշանի քո և կենդանագրի Ծնողի

քո կուսի, ի քննել և յուղղել զվարս մեր, որպէս զի ջան ի գործ արկեալ՝ պարզերես ելցուք յաւուր մեծի քում քննութեան։

Այո, եղբարք սիրելիք, ահաւասիկ ժամ է մեզ, ժամ պատուական, որպիսի թերեւս սակաւք այլք մնան մեզ. ժամ մատչելոյ ի փորձ անձին, և հաստատելոյ զգնացս ի շաւիղս առաջնորդին մերոյ Քրիստոսի։ Ժամ մի ի ժամուց յառաջ քան զյետին ժամն քննութեան դատաւորին, յետ որոյ ոչ եւս այլ հնչէ ժամ վաստակոյ և շահու. այլ յաւետախաղաղ լռութիւն. ժամ առնլոյ իւրաքանչիւր զհեծանոց իւր ի ձեռին իւրում և իջանել ի կալ իւր, և սրբել և տեսանել՝ քանի՞ ինչ իցէ ցորեան բարի արդիւնացեալ, կամ ո՞րչափ յարդ անպիտան դիզեալ. ո՞րչափ ինչ արարեալ իցէ զարժանն, և որչափ յետնեալ ի պարտուց և ի պատշաճէն. ո՞րքան հեռացեալ ի չարեաց, և որքան յառաջեալ ի բարին։ Չաւատամ զի ամենեցուն ջան և յոյս ի բարւոջ կայ ճանապարհի և ի դիտման. սակայն և զվկայելոց առաքինեաց յիշելով զբանս և զտեսութիւնս՝ ոչ սակաւ զանգիտեմ և դողամ. յորոց ոմն մի ասէր պարզապէս, թէ ի բովանդակ գործս իմ հագիւ գտանեմ երկուս կամ երիս՝ որպէս հատս անփուտս ի բազմութեան ողկուզի. և այն եթէ անկցի ընդ անաչառ քննութեամբ դատողին՝ ոչ գիտեմ թէ համարիցի՞ ողջ և անարատ։ Զէ՞նչ արդեօք ասիցէ զիւր պտղոց՝ իմս ունկնդիր. « Ո՞ իշ- » խեսցէ ասել սիրտ սուրբ ունել ». կամ ո՞ բնաւ չունիցի պարտս ուղղութեան, յարդարման և կատարելութեան. ո՞ւմ չիցէ պիտոյ պարապել աւուրս ինչ ի կրթութիւն հոգեւոր. ի դատ ձգելով զանձն և ի փորձ վարուցն, թէ արդարեւ յառաջիցէ՞ ի բարւոջ՝ որպէս անդուլ յառաջէն ի կեանս. հսկիցէ՞ յանվրէպ պահպանութիւն ուխտիցն և կարգաց կրօնին. իցէ՞ արդարեւ ուրացեալ զաշխարհ, և խորշիցի՞ յամենայն հեթեթանաց նորին. — բացեա՞լ իցէ վիհ մի կարեւոր ընդ հոգին և ընդ մարմին. կարգեա՞լ սմա պահակ խիստ, և նմա՝ դէտ անքուն. — սիրելի՞ իցէ ինքեան արդարեւ խաչն Յիսուսի, ցաւք և վիշտք և հալածանք առ սէր նորին։ Թէ հակառակ ինչ այսոցիկ, զհետ մտեալ կամ միտեալ ի դիւրն և ի հեշտին. և փոխանակ հալածեալ լինելոյ՝ հալածիչ ինչ գոլով, փոխանակ սիրոզի՝ ատող, փոխանակ օրհնելոյ՝ անիծող կամ բամբասող։ Կայցէ՞ արդեօք վառեալ յոգւոջ լապտերն կուսական, այլ զիմաստնոցն ասեմ, և ոչ որ ընդ աղօտ աղօտ ինչ ճաճանչիցէ նշոյլ մերձ ի չիջանել։ Ախորժելի՞ք իցեն խոնարհութեան և անարգանաց համք, եթէ տոիպք և դաւինք թուիցին ամենայն որ ոչ ըստ բնութեանս է բերմանց։

Զայսոսիկ և զսոցին նմանս ի հանդէս ածեալ զիտակցութեան մերում, կարծեմ ամենեցուն փափագելի, պիտանացու և կարեւոր, աւուրքս ինչ կրթութեան հոգեւորի. որ իբրեւ զոգեսէր ձայն կենարարին՝ եկեալ ի սահմանեալ ժամանակին՝ բաղխէ առ դրան սրտից մերոց, ասելով, « Բաց ինձ »։ Բացի՞ր ով հոգի կրօնաւորի մենացելոյ հեռացելոյ յաշխարհէ, և ի հարսնութիւն նուիրելոյ փեսայիդ Քրիստոսի։ Ահա զայ նա, և եկեալ իսկ է՝ ի սրբել, ի զարդարել, մերձեցուցանել, իւրացուցանել զքեզ ինքեան. և դու զի՞ կաս, զի՞ դլաս, զմէ՞ ոչ փութաս բանալ ընդունել, պարապիլ կենակցիլ ընդ նմա, համարս տալ և խնդրել և թախանձել զնա, որ յետ սակաւու միոյ լինելոց է քո ամենայն ինչ, և կամ առանց նորա ամենայն ինչ քո կորուսեալ իցէ։ Լուար զբարբառ նորա, և զձայն քաղցր կոչմանն. իսկ արդ ուստի՞ իցէ քեզ, ով հոգի պղերգ, անսովոր խռովք և երկիւղ, կամ տաղտուկ, յորժամ լսես զհրաւէր կրթութեան, թողլոցս զայլ ամենայն գործ և ի մի յայս պարապելոյ, ի քննութիւն անձինդ և ի խնամս ուղղութեան եօթնեակ մի աւուրց։ Ուստի՞ տագնապդ մեզմեխ և զանխուլ, որպէս թէ հարկ ի վերայ հասցէ քեզ վեր ի վայր շրջիլ կամ յայլ յայլմէ լինել։ — Արժան իսկ է քեզ լինել այլ յայլմէ. ի հնոյ ի նոր, ի չարէն ի բարի, ի մահացուէն՝ յանմահական. նորոգիլ գլխովին բանական կենօք, ի բաց թօթափելով զաղտս և զբիծս ախտից և թերութեանց, զյուլութիւնս և զյոռութիւնս, և ի ներքս ածել ըզկամս և զջանս ուղղութեանց, դառնալ սրտի մտօք առ Աստուած քո ուխտել միւսանգամ ընդ նմա ուխտ յաւիտենական։

Ո՜հ, եթէ առնուիր ի միտ խորամուխ տեսութեամբ հոգւոյ պարզելոյ ի կանխակալ կարծեաց և յընտանի կրից, թէ քանի՞ քաղցր միանգամայն և քանի՞ բարի և կարեւոր է քեզ, եթէ ոչ հանապազ զէթ մերձ ընդ մերձ լինել աւուրս բովանդակ ընդ յաւիտենական Սիրելւոյ քում, Արարչի և Փրկչի, միայն ընդ միայնոյ, յանզբօս սենեկի, ի լռութեան և ի

դաղարման ամենայն երկրաւոր խոհից և հոգոց, և յարհամարհանս ամենայն զգալի և կենցաղական սփոփանաց. յայնժամ իմանայիր քաջ՝ եթէ քանի՞ ցանկալի էր յերկարել զժամանակն զայն՝ որքան էր հնար. և եթէ յերկարել չէր մարթի, գոնեա զմարթուչն և զվայելուչ ընդունել և ընդգրկել այնպէս, որպէս ագահ ոք զծրար գանձուն, կամ ծարաւի՝ զբաժակն ցուրտ, կամ սիրելին զսիրելին կարօտեալ յետ երկար պանդխտութեան։ Նստէիր արդեօք յօժարութեամբ մեծաւ ընդ Առաքեալսն ողջոյն իսկ տասն աւուրս՝ ակնկալութեամբ գալստեան Հոգւոյն սրբոյ, յարդարելով զճանապարհ շնորհաց նորին աղօթիւք և պահօք, խոկմամբք և անձին նուիրմամբ և վաստակօք բարեաց. — յիշէիր արդեօք և զայն, զի ընդ առաքեալսն և ընդ աշակերտսն՝ սպասեալ նստէր որպէս կարօտ մի ի կարօտաց և Անձն այն հրաշալի, զոր հրեշտակապետն Աստուծոյ Գաբրիէլ վաղ ուրեմն վկայեալ էր աստղընջական Հոգւոյն Սրբոյ և տաղաւար զօրութեան Բարձրելոյն, և աստուածանման ծնող Աստուծոյ. « Էին հանապա- » զորդեալք հանդերձ Մարեմաւ մարբն Յիսուսի. որ թէպէտ » և ամենեւին լի էր շնորհօք, այլ զի անբաւատար էր անօթ աստուածունակ սրտին՝ լինէր եւս քան զեւս թաթաղուն շարժուն զեղուն, շնորհաց ի շնորհս, լուսոյ ի լոյս վերանալով։ Եթէ այսպիսւոյ գերագունի անձին և մերձաւորաց նորին՝ վայելուչ վարկաւ տնտեսութիւն Աստուծոյ բազմօրեայ պատրաստութեամբ և փափագանօք վերընդունել զնորոգութիւն շնորհաց, քանիո՞ն ինձ պիտոյ իցէ զգաստութիւն և յօժարութիւն, և ամենայն հնարաւոր պատրաստութիւն առ ընդունել ոչ միայն յաւելուած և զարդարանս զօրութեան հոգւոյս այլ բովանդակ իսկ նորոգութիւն, փոփոխութիւն և վերստին ծնունդ և կեանս. որ հեղգութեամբն և պղերգութեամբ և պէսպէս զանցառութեամբք բարեաց և օրինաց՝ գրեաթէ մերկացեալ է ի շնորհաց անտի զոր զգեցոյց նմա կամ անկ էր զգեցուցանել վիճակ պաշտամանն իւրոյ և կարգի, խորհուրդքն սրբոյ եկեղեցւոյ, կրօնաւորութիւնն քահանայութիւնն և վարդապետութեանն աստիճան։

Արդ օ՞ն առեալ, ո՛վ Եղբարք իմ սիրելիք, և դու մանաւանդ անձն տարտամ, բուռն հար յօժարութեամբ զհոգեւոր կրթութենէ. թող առ վայր մի, և իցի՞ թէ մինչ իսպառ,

թող զամենայն, և եկ զհետ Յիսուսի, ընդ Պետրոսեանց և Զեբեդեանց. գոչեա ընդ Սամուէլի, « Խօսեաց Տէր, զի լուիցէ » ծառայ քո ». ասա՛ ընդ Դաւթի, « Պատրաստ է սիրտ իմ » առ քեզ, Աստուած »։ Հեռացիր՝ որչափ և կարես՝ յանձնէդ, և մերձեսցիս որչափ գուցէ ոչն կարծես՝ առ ամենաբաւն Աստուած։ Կաւիտ առ վայր մի զաչսդ ի պատրոդական տեսարանաց, և տեսցես զոր տեսին սուրբքն սրտիւք, Մովսէս և Պօղոս, Յովհաննէս, Անտոն և Նմանիքն. թող զայն ամենայն յորում չգուցէ շնորհ աստուածային, կամ որ չեն կարեւոր այսմ ժամանակի, և կանխեաց ընդ այնոսիկ՝ որք երթան ուրախութեամբ ի տուն Տեառն. որք միշտ քաղցեալք և ծարաւիք են աստուածայնոց պարգեւաց. որք երբեք չասեն շատ զհոգեւորացն պարապմունս, վասն այնորիկ և չելանեն երբեք անմասն ի հոգեւորականացս կրթութեանց։ Եթէ չիցես բաւական եռանդնոց և զգաստից հաւասարել, գէթ մի՛ լինիր հասարակորդ անփութից և պղերգաց, որք ոչ միայն թէ չօգտին՝ այլ և վնասապարտք գտանին, անպատրաստ և անյօժար ի սրբազանսն խառնելով։ Մի՛ զարմանար ընդ գաղջութիւն և ընդ ցամաքութիւն սրտիդ, որ այնքան ժամանակս հեռացեալ գտանիւր յաստուածային սիրոյն կայծականց. և մի՛ իսկ իսպառ զարհուրիր ի թերութենէդ, եթէ միայն կամս բարիս ունիցիս և ջան ըստ ձեռին բաւականի։ Մի՛ թերահաւատիր, եթէ և չահ կամ օգուտ ինչ մեծ չտեսցես ի քեզ ի կրթանաց աստի. զի թէ ոք ոչ վնասի՝ արդէն իսկ օգտեալ է փոքր ի չատէ. և ժամանակ՝ յօժարութեամբ կորզեալ ի վայրավատին զբաղմանց՝ ոչ է վրէպ ի բարւոյ։ Բայց միայն ջանա և մի՛ վհատիր. ահաւադիկ և Տէրն մեր զայս այսպէս թելադրեաց, յորժամ եցոյց զշաւիղն արքայութեան նուրբ, և զդուռն նեղ. ոչ սաստիւ ստիպեաց թէ երթայք յախուռն և մտէք, այլ « Ջանացարուք » մտանել »։ Այլ զայս առ իմ նմանիսն զիջանելով, ոչ եթէ արգելում կամ անհաւան լինիմ առաքինեացդ և եռանդնոտ սրտից, որք գիտեն սիրային թեւօք անսայթաք և անընդոստ վազվազել և ընդ անձուկն պողոտայ և ընդ նեղագոյնն դռնակ, այլ մանաւանդ սխրանամ և նախանձիմ ընդ նոսա, և զանփորձս բարձրաթռիչ խոյանաց սիրոյ՝ յուսոյն ոտնափոխիւ դաստիարակել մարգեմ։

Տացուք արդ փառս Աստուծոյ, որ ի վերայ հանապազորեայ կրօնաւորութեանս, և յայսպիսում ցամաքեալ և չփոթեալ ժամանակի, պարգեւէ մեզ՝ որպէս տօնական ինչ աւուրս, զաւուրքս բոլորական պարապմանց յաստուածայինսն. և որպէս յաշխարհօրէն ինչ թանգարան մուծանելով՝ տայ իւրաքանչիւր ումեք հայթհայթել զիւրոց պիտոյից կարեւորսն. և այն՝ գրեալթէ ձրի. սակաւիկ ինչ պահանջելով, զյօժարութիւնն և զմտադրութիւն. զնստելն մարեմապէս առ ոտս Յիսուսի և լսել քաղցր ձայնին. յորմէ և ընդունել ըստ անսուտ նորայն խոստման՝ զմասնն բարի, որ ոչ բարձցի ի յօժարակամ ընդունողացն: Թէպէտ և փոքր մի մասն իցէ (եթէ օրէն իցէ փոքր կոչել զտէրունին), սակայն պահեալ անաղարտ յոգւոջ՝ աճէ օր ըստ օրէ. որպէս զի եթէ և միոյ ախտի սրբիչ լինիցի ի մեզ, կամ միոյ լաւութեան տածիչ, ահա բազմաց ընդ նմին ախտից քայքայիչ եղեւ, և յոգունց ուղղութեանց մերձաւորիչ. ըստ գեղեցիկ յուսադրութեան հարցն հոգետեսից, եթէ և միոյ միոյ մոլութեան խլումն ամ ըստ ամէ ի սակաւ ամս մաքրէ զսիրտն ամենայն:

Եւ ոչ նոր ինչ կայ մեզ այժմիկ լսել և խոկալ, այլ զոր բազում անգամ լուեալ իցէ և ընթերցեալ. այլ սակայն նորով եռանդեամբ և յօժարութեամբ արժան է լսել և մանաւանդ կատարել. որպէս զի եթէ և բանքս ոչ իցեն յարդարունք և իմաստալիցք, յոգին և ի միտսն յառեալ մեր, մանաւանդ ի սկզբնականն աղբիւր՝ յորմէ յառաջագայի ամենայն բան բարի, իբրեւ յերկնից հնչեալ նոր մեզ պատգամ՝ ընկալցուք: Աստստին խնդրելով ի մարդասէր Փրկչէ մերմէ բանալ զականջս սրտից ի լսելութիւն իւրում թափանցիկ ձայնի. «Լուր ինձ Տէր զբարբառ քո», զի ձայն քո քաղցր է և խօսք քո գեղեցիկք. և լուութիւնդ իսկ հաչտ՝ խրատ է ամենազգեցիկ: Առցուք մեզ օժանդակ առ այս մանաւանդ թէ ի դայեակ և ի դաստիարակ և ի պաշտպան գործոյս, զմիշտ պաշտպան մեր և զՊահապան որդեգրացս՝ զամենօրհնեալ Կոյսն և զփառաւորեալ Աստուածամայրն:

Ո՜վ ամենաերջանիկ և հրաշափառ Տիրուհի, որ երեքանձնեայ Էին գոլով Դուստր և Հարսն և Մայր, լի աստուածային շնորհօք և բերկրութեամբ, տակաւին, ուշի ուշով ունկն մատուցանէիր, լսէիր, հաւաքէիր, պահէիր ի սրտի քում՝ զամենայն բանս, ոչ միայն զՅիսուսին քո, այլ և որ զՅիսուսէ, և խելամուտ լինէիր ի նոսին այնքան խոր և սքանչելի խելամտութեամբ, մինչեւ հիացեալ և աւետարանչին՝ երկիցս զսոյն աւանդէ մեզ ի միում հակիրճ պատմութեան: Դու ինքնին առաջնորդեա, թելադիր լեր, ուստ մեզ խնդրել փափագանօք, լսել զգաստութեամբ, պահել զգուշութեամբ, և խորամուխ լինել իմաստութեամբ ամենայն բանից որ յՈրդւոյ քո և յԱստուծոյ կամ յանուն Որդւոյ քո քարոզեսցի մեզ ի տաճարիս յայսմիկ: Դու ինքն յարդարեա զսիրտս մեր՝ որպէս զերկիր պատրաստական՝ յընդունելութիւն բարեբոյս սերմանց, քոյովդ արբուցեալ ցօղով գթութեան և շնորհաց. և տուր մեզ բուսուցանել՝ ըստ իւրաքանչիւր չափու և տալ պտուղ բարի, երեսնաւոր՝ այժմէն յաւուրքս կրթանաց, վաթսնաւոր՝ ի յետագայսն, և հարիւրաւոր՝ ի լրման ընթացից կենացս. իսկ զանթիւն և զանբաւ՝ ընդ Քեզ և ընդ ամենայն սուրբս՝ ի հանդերձեալ յաւիտեանսն:

Ա

ՀԱՅՐ ՄԵՐ, ՈՐ ՅԵՐԿԻՆՍ ԵՍ

ՅԱՏԿԱԳՈՅՆ ՈՐԴԻՈՒԹԻՒՆ ՊԱՇՏՕՆԷԻՑ ԱՍՏՈՒԾՈՅ, ԵՒ ՊԱՐՏՔ ԿԱՏԱՐԵԼՈՒԹԵԱՆ ԸՍՏ ՀՕՐՆ ԵՐԿՆԱՒՈՐԻ

Եթէ Քրիստոսի Փրկչին մերոյ և վարդապետի այլ ինչ չէր աւետարանեալ կամ ուսուցեալ ի խրատ մեզ և յօգուտ՝ քան զայս՝ զի Աստուած Հայր է մեր, և թէ և մեք՝ որպէս և ինքն՝ որդիք եմք նորա. և անդէն և անդ մեկնեալ էր յերկրէ՝ ասելով, « Ելանեմ ես առ Հայրն իմ և առ Հայր ձեր », բայց ձեր կայ ժամանակ մնալոյ աստ և ընդ պէսպէս փորձանս անցանելոյ, վասն որոյ յաղօթս կացէք, և այսպէս կացէք յաղօթս՝ ասելով, « Հայր մեր որ յերկինս ես »։ — Եթէ զայս միայն, ասեմ, աւետարանեալ էր Քրիստոսի առ մարդիկ, ոչ միայն մեծ՝ այլ և ամենամեծ էին աւետիքն և անկշռելի բարիք։ Զի ոչ եւս ընդ առաջին արդարոցն և ընդ մարգարէից՝ զցանկալի անունն խիթալով իմն յարել կայր և ասել, « Տէր, հայր մեր և դատաւոր », այլ սոսկ և լոկ « Հայր մեր », որպէս աննախանձաբար աւանդեաց մեզ Միածինն Հօր, եղբարս և ժառանգակիցս իւր գրելով զանարժանքս ի ծառայութիւն անգամ. յորմէ խրախուսեալ և հարսն նորին սուրբ եկեղեցի, նա և ի գերագունի անդ պաշտամանց ի սրբումն պատարագի՝ տայ մեզ խորհրդածել գհրաշալի փոփոխութիւն մարդկայնոյ վիճակիս՝ գալստեամբն Քրիստոսի յաշխարհ, և ընդ նմին տայ « համարձակաձայն » բարբառով բանալ զբերանս մեր և կարդալ ասել, Հայր » մեր, որ յերկինս ես »։

Բաբէ՜, որպիսի՞ Հայր և որպիսի՞ որդիք։ Հայր՝ Աստուած ամենակալ, անբաւելի, անհասանելի, ամենաբարի. որդիք՝ մեք ապիկարք, ապականացուք, չունողք ինչ յանձնէ, մանաւանդ թէ ունողք բազմապատիկ թերութեանց, ախտից, մեղաց՝ և մեղաց մեծամեծաց և պղծոց։ Ո՞չ ապաքէն յապ-

չութիւն կրթիցէ զմիտս՝ խոկումս այս. գուցէ թէ և երկբայելով իմն կամիցի ոք անդրէն քննել զբան Քրիստոսի, թէ արդարեւ հասարակաց իցէ այս համարձակութիւն. իշխելի՞ և մեղաւորաց՝ հայր կոչել, զԱստուած, և եղբայր՝ զինքն Քրիստոս։ — Թող, սակաւ մի եւս յառաջեսցուք յաղօթիցն բան, և ամենայն վերանայ կասկած, յորժամ մաղթիցեմքն, « թող մեզ զպարտիս մեր ». և զի՞նչ են պարտիքն՝ եթէ ոչ մեղքս մեր։ Ապա ամենեցուն արդարոց և մեղաւորաց՝ հայր է Աստուած, ինքնաբուն բարին, ամենեւին արդարն, բոլորովին սրբութիւնն։ Հայր է Աստուած և իմ մեղաւորիս, և բազում անգամ չարաչար մեղուցելոյս և անզգամելոյս. այլ իմոց մեղաց ես եմ հայր, մանաւանդ թէ սկզբնաչարն. իսկ Աստուած հայր է իմ իւրանման հոգւոյս։

Քանի՜ մեծ և կարեւոր խորհուրդ. որպիսի՜ զեղեցիկ կոչումն և իր. քաղցր ի խոկալ և յօգտել։ Բայց ես, եղբարք սիրելիք, առաւել ինչ փափագեմ և պահանջեմ այսօր ի ձէնջ. — և մի՛ զարմանայք եթէ օտարաձայնս ինչ լսեցուցից ձեզ. համարեցարուք եթէ սուղ ինչ անզգայեալ յայսպիսում զմայլման ասիցեմ, թէ ուր միշտ « անհնարինքն ի » մարդկանէ՝ հնարաւորք են առ ի յԱստուծոյ », աստանօր զանհնարինն յԱստուծոյ հնարաւոր խնդրեմ յանձնէս և ի ձէնջ. — քանզի յԱստուծոյ՝ աւելի ինչ քան զԱստուած չմարթի խնդրել, որ միշտ անքան է և նոյնքան, այլ ի մարդոյ մարթ է պահանջել աւելի ինչ քան ի մարդկանէ, այսինքն յումեքէ քան յայլոց ոմանց, ըստ չափու առաւելութեան իւրաքանչիւր առելոցն ի վերուստ պարգեւաց կամ քանքարաց, « Ումեմն հինգ, ումեմն երկուս և ումեմն մի »։ Եւ ես պահանջեմ արդ... քա՜, ոչ ես, այլ ինքն Աստուած տուողն և համարակալ պահանջէ ի մէնջ հինգ քանքար, հանդերձ շահիւն « հինգ եւս ի վերայ։ Քանզի զմին՝ որպէս առ հասարակ մարդկայինս ազին՝ ետ և միոյ միոյ ի մէնջ. ետ և զերկրորդն՝ իբրեւ քրիստոնէի հաւատացելոյ. ապա յաւել և զհնգերեակն՝ սակաւուց ոմանց, ընդ որս և մեզ, իբրեւ սրբազանի և նուիրական անձին, կրօնաւորի և քահանայի։ Պարզագոյնս ասացից. Հայր մեր է Աստուած և մեք որդիք՝ երրեկի ծնգեամբ, իբրեւ մարդ, իբրեւ քրիստոնեայ և իբրեւ պաշտօնեայք Քրիստոսի. մի որդիութիւն, այլ երրեակ աստի-

ճանք կամ դէմք. և արժան է մեզ ճշմարտել յանձինս մեր զերեսին եւս, զի մի լիցուք խորթացեալք և ուրացեալք։ Եւ զի յանկագոյն կարգեսցի մեզ խորհրդածութիւն հայրութեան Աստուծոյ և որդիութեանս մերոյ, արժան դատեսջիք, որպէս համարիմ, ոչ յերկարել յառաջին աստիճանսն, այլ ի վերնագոյնն առնուլ զտեղի, ի սեփական վիճակս մեր. ոչ միայն իբրեւ զլոկոյ քրիստոնէի հայր մեզ ճանաչել զԱստուած, այլ հայր կրօնաւորացս և քահանայից. հզօրագոյն ասեմ բերմամբ ձկտիլ և վերակարդալ մեզ առ նա, և ջերաջերմն սիրով և պատուով և վստահութեամբ. և ի վերայ այսոցիկ առաւելագոյն իմն ջանիւ նմանողութեան նմին, որ է կատարելութիւնն, անհրաժեշտ պարտք քահանայի և կրօնաւորի։ Այսոքիկ լիցին մեզ աւուրս խորհրդածութիւնք։

Ա.

Ի հողեղէն հօրէ և ի բնական ծնողաց վաղ և կանուխ անջատեալք, բազումք ի մէնջ այլ ոչ տեսին, ոչ եւս տեսցեն զերեսս՝ որք առաջին հայելիք մեր եղեն, և որոց սիրելագոյն էաք հայելիք. և կարեմք ասել ստուգապէս, « Հայր իմ և » մայր իմ թողին զիս », և ստուգագոյնս եւս եթէ « Եւ Տէր » ընկալաւ զիս »։ Որպիսի՞ բաստ և բաղդ երջանիկ. երկրորդս ասեմ քան զառաջինն։ Աքանչանամք և սիրանամք ընդ սրտառուչ և սիրակաթ վերջին բանսն Յիսուսի՝ զոր ասացն ի խաչէն ի խորոց ցաւոցն և մահահամբոյր շրթամբք. « Կին՝ դու, ահա որդի քո. — Ահա մայր քո »։ Այսպիսի իմն փոխատրութիւն եղեւ և ի հրաժարելս մերում յաշխարհէ և յընտանեաց, ասելով Աստուծոյ առ եկեղեցի՝ որում ընծայեցաքս, Ահա որդի քո. և սորա ցմեզ՝ ցուցանելով զերկինս՝ Ահա հայր քո։ Փոխանակ ծնօղաց և ազգականաց սակաւօրէից մահկանացուաց՝ սեփական իմն ստանալ մեզ հայր զԱստուած։ Քրիստոս՝ զունկնդիրս իւր և զկամակատարս Հօրն իւրոյ՝ անուանէր իւր եղբայր և իւր մայր. իցէ՞ ինչ յանդգնութիւն, մանաւանդ թէ ո՞չ քաջհաւատութեան զնոյն բան ասել մեզ զնմանէ, որք վասն նորա թողաքս զտուն և զտեղի, զհայր և զմայր. ո՞չ ինքն իսկ յուսադրեաց մեզ փոխանակ այնոցիկ զհարիւրապատիկն աստ և զամենապատիկն

ի հանդերձելումն, և զնստելն եղբայրաբար աթոռով ընդ նմա՝ մինչ բազմեսցի նա յաջմէ Հօրն իւրոյ։ Զինչ քան զայս մեծ և հրաշափառ ժառանգութիւն զաշխարհ թողուլ, և զաշխարհի տէրն ստանալ բովանդակ. հրաժարել յարենակցաց, և զվայելս նոցին և զսէր անչափ առաւելութեամբ յԱստուած և յաստուածայինսն գտանել. և առաւել քան զհասարակ մարդիկ համարձակագոյնս կարդալ մեզ Հայր զհայրն հասարակաց։ Որպիսի՞ անհամեմատ փոփոխութիւն. քանի՞ փոքր տուաք և ո՞րքան մեծամեծս ընկալաք։ Եւ եթէ տակաւին զգայ բնութիւնս իղձս ինչ և զեղծմունս յիշատակաւ հաբազատաց հեռաւորաց, զի՞նչ ոչ զզայցէ հոգի քաջահաւատ կրօնաւորի՝ յասելն արժանապէս, « Տէր, բաժին ժառանգու- » թեան իմոյ և վիճակի իմոյ՝ դու ես. Հայր իմ և մայր իմ թողին զիս, և դու ընկալար զիս։

Այս աստուածային հայրութիւն մեծագոյն թուի ինձ քան զփաստ արարչական հայրութեանն. զի զայն առանց ինչ մեր իմանալոյ կամ խնդրելոյ՝ ընկալաք բնական ծննդեամբս և որ յաւազանէն. իսկ զերկրորդս այս հայրութիւն պաշտօնէից Աստուծոյ՝ մերոյին ընտրութեամբ և քաջ գիտութեամբ. վասն այնորիկ և զանհնարինն ի տղայոց՝ զբանական սէր և զյարգ ծնողաց յանտիական հասակի, կարէ և պարտի նուիրեալն առ Աստուած կրօնաւոր՝ յառաջնըմէ անտի պահէ ընտրութեանն՝ զգալ և վայելել, յաճախել և առաւելուլ ի նոյն, և եւս քան զեւս վստահութեամբ կարդալ զԱստուած հայր իւր։ Եւ եթէ ծնեալքն ըստ մարմնոյ տակաւ զգան և քննեն զօրէնս որդիութեան և ծնողութեան, և կանխեն ի խորհուրդս ժառանգութեան և պայազատութեան, քանիո՞ն եւս չիցէ վայելուչ ծնելոցն ի շնորհաց յորդիս Հօր Լուսոյ՝ խոկալ քննել զբնութիւն այսպիսւոյ Հօր, զմեծութիւն և զհարստութիւն, զխոստացեալն ժառանգութիւն աննիւթ զանձուց, զարքէն ընկալեալն և զայժմուս և զտալիսն մի ըստ միոջէ առ յապա և ի յաւիտեանսն։ Եթէ ի մեղս համարեալ է քրիստոնէի չխորհելն փափագանօք զհանդերձեալ արքայութիւնն, ո՞րքան եւս առաւել մեղք և ամօթ իցեն պաշտօնէի Աստուծոյ չխորհելն ստէպ և անձկաւ և հառաչանօք զՀայրն իւր և զարքայութիւն նորա։ Հայրս այս որպէս յաւիտենականն է՝ փափագէր և ի յաւիտենից և հաճէր ընդ իմ որդիութիւնս,

ընդ մուտս իմ ի դասս պաշտօնէից իւրոց և ի դասակարգ սրբոց և հրեշտակաց. ի մշտնջենաւոր ի յարազուարճ վայելս աստուածութեան իւրում՝ ունէր և զիս անբաժ և անվրէպ ի նկատի. մինչ յայնքան անթուելի և յանժամանակ յաւիտեանսն (զոր մահացուքս անցեալ կոչեմք) իմ՝ և ոչ հիւլէ և ոչ ստուեր մի գոլով, նա սակայն գիտէր, տեսանէր, քննէր զիս՝ որպէս եմս և որպէս՝ զոր դեռ անգիտամ, լինելոցս եմ. և իցիւ թէ լինէի հանապազ ըստ ներքին կամաց նորին և ոչ ըստ իմոցս ախորժակաց: Եւ եթէ այսոքիկ խորհրդածութիւնք հասարակաց վայելեն ամենայն քրիստոնէից, յորմէ և խորին երախտեաց զգացումն և սիրոյ մատուցումն, զի՞նչ ասացից ես զանձնէ, զոր, Աստուած, անհնարիցն ճարտարապետ, քանզի կրկին անգամ ստեղծանել կամ կրկին զմին առնել չէր հնար, եգիտ հնար բարձրութեամբ աստիճանի և սաստկութեամբ զօրութեան առաւելուլ քան զմեծ բազմութիւն մարդկան. առնելով պաշտօնեայ իւր և քահանայ, մերձաւոր ներքին խորանի իւրոյ և աթոռոյն ընթերակայ, և հպագոյն ի վարագոյրս՝ որք զանճառելի դէմս իւր սքօղեն, և յոր այնքան թափ անցանեն հոգիք՝ որքան առաւել սիրեն զՀայրն իւրեանց, զանց զայլովքն արարեալ սրտի ցոնկալեօք:

Զի զի՞նչ այլ ինչ է հրաժարումն յաշխարհէ, ընդարձակագոյն իմացուածով, բայց եթէ ի բաց բառնալ զվարագոյրսն, զարգելսն, զխափանարարս ինչ յստակ տեսութեան դիմաց Հօր մերոյ Աստուծոյ: Եթէ ոք կրօնաւոր քահանայ կամ անուանեալ, տակաւին յաշխարհ կամ յաշխարհային յառեալ նկրտիցի, և կարծիցէ տակաւին լինել ըստ անուանն և վիճակին, նման է տեառնանախատ մաճակալին, որոյ արօր յառաջոյ և երեսք յետս հային կամ որոյ յարեւելս մտաբերեալ դիմել՝ և զդէմս յարեւմուտս հաստատիցէ: Իցէ թերեւս որ համարիցի վաղ ուրեմն փլուզեալ զպատուար աշխարհի, և խտրոց ընդ նա արկեալ, այլ տակաւին ոչ ինչ աւելի քան զայլ քրիստոնեայ տեսցէ յաստուածայնոցն, և ոչ յստակագոյնս զաստուածայինն հայրութիւն: Այլ քննեսցէ և զայն, եթէ իցէ՞ արդարեւ հրաժարեալ, ոչ յաշխարհէ լոկ՝ տեղեաւ և շրջափակ պարսպօք վանացն, այլ յամենայն աշխարհական նիւթոց և սփոփանաց՝ որք արտաքնոցն ներելիք իցեն, այլ ոչ պաշտօնէից սեղանոյ Տեառն. մի՞ արդեօք ի սէր կամ ի

գեղեցկութիւն երեւելի զօշոտեալ իցեն աչքն, և ոչ կարիցեն նշմարել զճշմարիտ լոյսն և զանբաւ գեղեցկութիւնն, կամ ըստ կնոջն Ղովտայ՝ յոչ հրամայեալսն և ի հեռացեալսն ոտիւք՝ ակնարկիցէ սրտիւ և վայրապար հետազօտութեամբ: Մի՞ արդեօք մթարք ինչ և բիժ կայցեն ի տեսանելիսն, կիրքն ինչ ասեմ և խէթք սրտի, կամ քէն և ատելութիւն, կամ անպատշաճ յարումն և բերումն ի նիւթականս և յախորժական պարապմունս, կամ ի շահ ինչ երկրաւոր, և յայլս այսպիսիս. որք թէպէտ և նրբինք և փոքունք իցեն՝ բաւական են ի խափանել զսրբազան տեսութիւնն Աստուծոյ և վրիպեցուցանել ի ցանկալի երեսաց նորա:

Այս ինձ թուի պատճառ յոգունց ի պաշտօնէից Աստուծոյ գաղջութեան և հեզգութեան, և անճաշակ մնալոյ յամենահամ սեղանոյն՝ զոր զօր ամենայն պաշտեն: Իցեն թերեւս որք խաբիցեն զանձինս՝ աստուածային համարելով զգործ զոր գործեն, իբրու զի կան յաստուածանուէր տեզուոջ կամ ի սպասու, և կամ զի յանուն Աստուծոյ ձեռն արկին, և հանեն ինչ մասն և Աստուծոյ: Այլ գիտեմք, զի ոչ գործն ինչ ինքնին հաճոյանայ Աստուծոյ, այլ աստուածայնապէս գործելն. սուրբ դիպումն մտացն և ջանք ըստ դիտմանն: Եւ այս իսկ է խտիր ընդ գործ և վարս սրբոց և առաքինեաց, և ընդ աննմանիս նոցին. զի յոլովից ի պաշտօնէից Աստուծոյ և ի միանձանց հասանէ պարապել և ի գործս և ի խնամս՝ զոր և աշխարհիկքն առնեն. այլ այնպէս իմն առ Աստուած հայեցութեամբ կամ ամբարձմամբ մտաց, և օտարութեամբ սրտի ի նիւթական շահից և վայելից, զի ոչ միայն և անարգագոյնն ի գործոց ազնուանայ, այլ նոյնք իսկ սանդուղք լինին և թեւք վերացման սրտիցն առ Աստուած: — Յայտնի իսկ են ամենեցուն, և ինձ աւելի յիշումն առնել օրինակաց և վարուց սրբոցն, առաքինեացն և հետեւողաց նոցին՝ մերոցս իսկ հարց, որոց և տեսութեան կենակցութեան և հաղորդ եղեաք, որոց և հետք տակաւին չեն ջնջեալք ի միջի մերում. և իցէ՞ թէ նորոգէին կենդանագոյնս եւս. և մեզէն կոխելով զոր նոքա զնախ այլոցն՝ թողուաք և յետագայիցս մերոց կնիք զգուշութեան և շաւիղ լուսաւոր. զայս արժան էր աւանդել առաւել խնամով՝ քան զաքեմս և զանուանս զոր կրեմք, կամ զխցկունս և զգրասենեակս յոր բնակեմք և զորս

հարկ է յետ սակաւու միոյ թողուլ իսպառ և կալ ընդ ոտիւք յաշխարհաց մերոց ի յատակ եկեղեցւոյս. և առաւել իսկ քան զմատեանս կանոնաց և սահմանադրութեանց մերոց, որք անհոգի ուղղեցոյցք են, իսկ ազդողազոյն առաջնորդ և վարիչ՝ օրինակն է բարի և վարք մաքուրք։

Արդ ընդէ՞ր կամ ուստի՞ առաջնոցն առաքինեաց այնպէս յստակատեսս լինել յաստուածայինս, այնպէս անյազ զմայլմամբ կանխել և տեւել ի նկատումն երեսաց Հօրն իւրեանց։ Ցայն սակս՝ զի մեծաւ փափագանօք և վստահութեամբ հայէին և գոչէին « Հայր մեր՝ որ յերկինս »։ Իմանա՞ս անձն իմ, և դու զոր ասեսդ հանապազ, և կրկնես Հայր իմ, Հայր մեր. այլ ո՞ւր արդեօք բերիս մտօք յասելդ. յերկի՞նս արդարեւ թէ այլ ուրեք. զի « ո՞չ ապաքէն եթէ ուղիղ մատուցա- » նես և ուղիղ ոչ բաժանես՝ մեղար ». ըստ յանդիմանութեան Տեառն առ նախածնեալն մարդ։ Զի՞նչ օգուտ քեզ՝ եթէ զշրթունս յերկինս դնես ի բան աղօթիցդ, և մտօք յերկիր և թերեւս խոնարհագոյն եւս պչուցեալ յառիցիս։ Կարօտ ես հօր, և ամենաբաւականն Հօր, զայս քաջ ի միտ առեալ էր քո, վասն որոյ և կրօնաւորեցար և քահանայացար. և հանապազօր խոստովանիս զնա՝ յերկինս լինել՝ որ ամենուրեքն է. որպէս զի և հանապազ յիշեսցես թէ հարկ է և քո քաղաքավարութեանդ յերկինս լինել, և մի՛ առ ստորեւս։ Եթէ « Ուր գանձն ձեր՝ անդ և սիրտք ձեր եղիցին », ապա և ուր հայրն է՝ անդ և որդւոյն անկ է լինել. որպէս և ինքն Որդին Միածին այն ինչ լցեալ զգործ իւր յերկրի՝ փութայր յերկինս ի նոյն, « Ելանեմ ես առ Հայրն իմ և առ Հայր » ձեր ». յորմէ ոչն երբեք անջատեցաւ, ոչ իբրեւ Բանն Լակից, և ոչ որպէս Քրիստոս կուսածին, զի զամենայն ինչ յանուն նորա գործէր յերկրի, և զգիշերս ի գլուխ կայր յաղօթս Աստուծոյ, և, եթէ օրէն իցէ ասել, առաւել թողեալ լինէր յԱստուծոյ քան թողոյր զԱստուած. « Աստուած իմ, » ասէ ի պահու օրհասին, ընդէ՞ր թողեր զիս ». այլ և յարձակման հոգւոյն հուսկ շնչովն ասէր « Հայր, ի ձեռս քո » աւանդեմ »։

Հա՞յր իմ, գոչեաց և դու յամենայն ժամ, հոգի՞ հրաժարեալ յաշխարհէ և կրօնաւորեալ պարկեշտ կենօք. հոգի կնքեալ և դրոշմեալ աստուածային խորհրդօք և նուիրողութեամբք, հոգի՞ դասակից հրեշտակաց և յերկրի կալով. սթափեաց ի թմբրութենէդ, եթէ զառածար երբեք յերկրաւոր զբաղմունս. կանգնեաց զգլուխդ կորացեալ յայն՝ զոր երբեմն առ ոտն հարեալ թողեր հեռացար. վերացի՞ր անդր ուր Հայրն քո է, յերկինս։ Եւ երկինք այն են ուր Հայրն է. ամենայն վայր, մանաւանդ թէ ի բաց բարձումն վայրաց, այլ ամենայն ինչ՝ ուր կամքն Աստուծոյ իցեն, ուր ներկայութիւն նորա նկարի քեզ, ուր սէր Արարչին ազդէ։ Ո՞տայր մեզ քաջ ի միտ առնուլ՝ թէ ո՞րքան փոքր և խոտան էր զոր թողաքս և զոր արժան է մեզ թողուլ զօրհանապազ. և ո՞րքան մեծ և ազնիւ ժառանգութիւնս մեր և վիճակ՝ զոր ստացաք և յերկրիս յայսմիկ. ապա չերեւէր ինչ մեզ տաղտկալի և խորշելի քան զյիշատակ աշխարհի. և ոչ ինչ այնպէս քաղցր և ցանկալի՝ քան զհանապազ նկատումն և խոկումն Աստուծոյ Հօր մերոյ. յոր սակս և մենացեալք յանզբաղ վայրի՝ դադարեցաք իբրեւ ճպռունք և ճնճղուկք բանաւորք՝ երգել մտօք քան շրթամբք՝ երգս սիրոյ Հաստչին մերոյ և փրկչի և Հօր. երգել ստէպ, երգել հանապազ և հայել, և անցանել անդր ուր դաւանեմք զՀայրն մեր՝ ի յերկինս։ Ոչ եւս այնուհետեւ հրապուրէր զսիրտ՝ ոչ գեղեցկութիւն վայրի կամ մարդոյ, ոչ զարհուրեցուցանէր զսիրտ կամ խռովէր հակառակութիւն բնութեան և մարդկան. ոչ դրդուեցուցանէին զմիտս ոչ խոստմունք և ոչ սպառնալիք. ոչ ակնկալութիւնք անցականք և ոչ արհաւիրք ցնդականք. այլ թէպէտ և վըտանգք և տագնապք շուրջ պաշարէին ամենուստեք, որպէս զնաւափայտ մի փոքր և զաղփաղփուն ի յորձանս ծովու ամբոխելոյ յալեաց և ի մրրկաց, որպէս նաւապետ զգօն ի տեղացոյց գործին ակնարկեալ և յուղղեակն՝ կայր անյողդողդ սիրտս՝ յանվրիպելի շաւղին. ի դիտման կամացն Աստուծոյ, ասեմ, և ի խնդիր երեսաց հայրենի դիմացն. որոց՝ չէ հնար երբեք ծածկել ի խնդրողացն։ Ցայնժամ և փոթորիկքն ինչ և խռովութիւնք տարերաց, թէպէտ և առ վայր մի գանգիտեցուցանէին եւս, որպէս զթերահաւատեալն յանփորձութենէ՝ Պետրոս, այլ վաղ վաղ ձեռնտու գտանելով զտէր Քրիստոս, նոքին իսկ հողմունք և ալիք լինէին մեզ ի խաղալիկս. իցէ՞ ինչ վիշտ կամ փորձանք կամ հալածանք կամ զառնութիւն, որ ոչ ի քաղցրութիւն փոխեսցի՝ յորժամ առ

ընթեր կայցէ Յիսուս, և ցուցցէ զբաժակ իւր թաթաղուն զեղուն ամենայն իսկ դառնութեամբ. տրտմեալ արդարեւ ինքնին և հոգացեալ և սգացեալ յոյժ մինչեւ ի մահ. հա-մայն և այնպէս գոչէ արիաբար. « Զբաժակն՝ զոր ետ ինձ » Հայր՝ ո՞չ ըմպիցեմ »։ Հայրենի է և քեզ բաժակ վշտացն ինչ՝ որ թէ հանդիպեսցին, ո՞վ քրիստոսազգեաց կրօնաւոր. բաժակ և քոյդ անուամբ, այլ որպիսի՞ ինչ առ Քրիստոսի բաժակաւն. գուցէ և ոչ որպէս « կաթիլ մի ի դուլէ ». գուցէ հազիւ չիթ մի լեզուոյ խառնեալ է ի հարիւր չափ մեղու մխի-թարութեանց, զոր ետ և զայն քեզ առատապէս Հայր քո բարի, մինչ ի բաժակ վարդապետին քո՝ քան զանաչառ կամս արդարութեան Հօրն՝ այլ ինչ քաղցրութիւն ոչ զտա-նէր. և նորա զկէտ զայն կամացն համբուրեալ՝ ասաց. Եղի-ցին, և էարբ։

Ո՜հ, արժա՞ն իցէ արդեօք վիշտս և նեղութիւնս անգամ կոչել զոր զգաստ, առ այնքան սփոփանօք և դիւրութեամբք՝ յոր վայելեսդ յառատաւուր ձրից Հօրդ երկնաւորի. աղէ հանդէս արա և տես և ցոյց, զի՞նչ իցեն զորոց զանգատիսն երբեմն և մեծ ինչ համարիս. զինչ ինչ մնայցէ ի դոսա՝ եթէ բարձցես զքո կամաւոր սխալանսն. զքո իսկ անգիտութիւնս, թերութիւնս, կիրս և մեղանս, որովք անձամբ զանձն դառ-նացուցանես։ Եթէ հայիցիս անաչառապէս՝ տեսցես զի թերեւս նուազ քան զոր այլոցն առթես վիշտ՝ կրես ի նոցուն. եթէ չուրջ զքեւ մօտ և հեռի նկատիցես, զի բազումք բազմապա-տիկ քան զքեզ կրեն տագնապս և տառապանս, անպարտա-կանք քան զքեզ զոլով. եթէ քննիցես զկեանս և զվաստակ աշխարհականացն նաեւ զկարծեցեալոց բարեկեցից անգամ. եթէ համարիցիս զթիւ աղքատաց, կարօտելոց, հիւանդաց, տաժանելոց ի ծովու և ի ցամաքի, և զամենայն ազգի ազգի նեղեալս. զորս ի սարկութեան և ի խիստ ծառայութեան, զորս ի բանտի և ի կապանս և ի մեռաղս, զորս ի պատե-բազմի, և ի սպասու ախտաժետաց և օրհասականաց, այ-լովքն հանդերձ, զի՞նչ յայնժամ թուիցին կիրք քո, կամ որպիսի՞ քո բաժին և նոցայն։ Կարծեմ թէ ափ ի բերան եղեալ և մինչ ի գետին կորացեալ՝ զմիտս յերկուս բաժանի-ցես, զոհանա՞լ արդեօք զԱստուծոյ Հօրէ վասն անբաւ առ քեզ երախտեացն, եթէ զապերախտութիւնդ ողբալ։ Կարծեմ

թէ ոչ միայն ոչ եւս տեսցես դառինս և ծանունս զքեւ, այլ և ի մեծի փափկութեան զտցես զանձն. զէթ ի մեծի դիւրի վայելելոյ այժմէն զբարութիւն, զգեղեցկութիւն, զմեծութիւն, զիմաստութիւն, և զմի մի ի շնորհաց Հօր քո Աստուծոյ, զոր աշխարհիկքն բազում այն է զի ոչ ժամանեն կամ ոչ բաւեն քննել, և քեզ զօրհանապազ առաջի կան և քննել և իմանալ և վայելել։ « Գոհանամ զքէն Հայր, զի զոր ծած-» կեցերդ յիմաստնոց և ի գիտնոց՝ և յայտնեցեր տղայոց քոց, այնոցիկ որք ճշմարտապէս ճանաչեն և խոստովանին զքեզ Հայր մեր՝ որ յերկինս։ Որոց վիճակ կենաց, և բնակարանն իսկ և կրթութիւնք և մտավարժութիւն իբրեւ առ ձեռն պա-տրաստ առաջի դնեն զայն ամենայն բարիս և շնորհս քո. և կարեն քննել և գոչել ընդ Դաւթի. « Տեսից զերկինս՝ զգործս » մատանց քոց », և որ ըստ կարգին. նկատել ի հանգար-տութենէ մենանոցին զերեւոյթ և զկարգս բնութեան. և յան-դորրու անդ և ոչ ի հնոցէ հրոյ՝ ընդ Ազարեանց ի հանդիսի անցուցանել զամենայն արարածս, և հրաւիրել համանգա-մայն յօրհնութիւն քո, Տէր։

Ի վերայ այսոցիկ՝ տուեալ է քեզ, ո՞վ միանձն, թէպէտ և չիցես իսկ ի խորս խառնեալ աշխարհի, և ի հեռուստ այտի դիտել, որպէս ի հրուանդանէ ուստէք բարձուէ, զծով մեծ, և զնաւս վարեալս պէսպէս ընթացիւք. դիտել չափով իմն զքաղաքավարութիւնս մարդկան, զի քաջիկ եւս ի վերայ հասանիցես որզիսի՞ մասն բարի վիճակեալ է քեզ։ Համա-րեաց, եղբայր, եթէ առ այս իսկ վախճան՝ թոյլ տուեալ իցէ ընդ սեամս մենացելոյ կղզեկի վանացս անցանել եկաց յամենայն ազգաց և լեզուաց ի չորից ծագաց երկրի, և յա-մենայն դասուց և վիճակաց մարդկան, թագաւորաց և փա-ռաւորաց, պճնասիրաց պաճուճելոց, քաղաքազիտաց և իմաս-տասիրաց, արուեստաւորաց և թատերականաց անգամ. որ-պէս զի տեսեալ վկայեսցէ սիրտ թերահաւատ՝ եթէ ընդու-նայնութեան է այդ ամենայն. և չիք բաժին մեծագոյն քան զժառանգութիւնս մեր։ Եւ քանի՞ցս արդեօք չեղեաք յամօթ՝ լսելով ի նոցունց իսկ յեկայցն և յայցելուաց՝ զերանութիւնս մեր, զոր տան աննախանձաբար կամ թէ նախանձելով իսկ՝ փորձքն կենցաղական իրաց և կենաց, կշռելով զոր գիտէին ընդ որ ահա տեսին ի մենաստանիս մերում։ Բայց կայ քո

և ի վերայ այսոցիկ բազում դիւր և պատեհ՝ մարզելոյ և պարզելոյ զմիտս քո և զզօրութիւնս հոգւոյդ պէսպէս ծանօթութեամբք, զոր ընձեռեն քեզ ուսմունքդ և ուսուցիչք, ընկերք գիտունք և ծանօթք, խուռն մատեանք և գործիք, յորոց վրէպ կամ աղքատ են մեծ մասն մարդկանդ աշխարհայնոց։ Եւ ի վեր քան զամենայն տուեալ է քեզ աստանօր համարձակագոյնս բարգաւաճել զտիրականդ ի քեզ մասն, կամ զբոլոր իսկ, զհոգի. ազատ ես, և ոչ միայն ազատ՝ այլ և յաջողեալ ի խոկալ զյաւիտենականսն, զաստուածային տեսչութիւնս, զարարչութիւնն հիացուցիչ, զիրկագործութիւնն եւս հրաշալի, զվարչութիւն կրօնական, զսխրալի խորհուրդս եկեղեցւոյ, զոր և հանապազօրն կատարես զընթացս բազմարկածեան ժամանակի, և զվախճան ժամանակաց, զհանդէս հանդերձելոցն. դարձեալ զտնօրէնութիւնս վարդապետին քո և Եղբօր անդրանկի՝ Քրիստոսի Յիսուսի, զաքանչելի կուսութիւն և մաքրութիւն Մարեմայ մօր քո և մօր Աստուծոյ. զզարմանալի վարս և գործս միոյ միոյ ի դասուց սրբոց, ի Նահապետաց անտի առաջնոց մինչեւ ի յետին վկայն և ի քօղաւոր կուսանն. և զթագաւորեալն ի վերայ ամենեցուն առ հասարակ զհամատարած սէր աստուածային, որ տնօրէնն է և յարդարիչ այսր ամենայնի մտաւոր և հոգեւոր աշխարհի։ Եւ ամենայնիւ այսոքիւք և այսպիսեաք ծանիցես յայտնագոյնս՝ որպիսի՜ Հայր ստացար քեզ՝ ի թողուլդ զաշխարհ. և ո՞րքան ինչ պարտք իցեն քոյ սիրոյ և զոհութեան. ո՞րքան վստահութեան ի բարութիւն նորա. ո՞րքան երախտեաց վասն երկայնամիտ ներողութեանն եղելոյ առ քեզ. և մանաւանդ ո՞րքան խոնարհ խոստովանութեան և չնորհաց մատուցման վասն թողութեան մեղացդ և ապախտեաց, զոր ոչ զլացաւ ի քէն, որպէս հայրն անառակի որդւոյն։ Եւ ապա ոչ լեզուաւ միայն այլ և ամենայն անձամբդ վկայեսցես և գոչեսցես, եթէ Մեծ եղեն ողորմութիւն քո, Տէր, առ իս. և շատ թողեր ինձ, ոչ զի շատ սիրեցի զքեզ ընդ Մագդաղենին, այլ զի շատ սիրեցեր։

Իսկ զի՞նչ ունիցիս ասել՝ յորժամ յառաջ եւս անցեալ տեսցես զնոյն ինքն զանտեսանելին, զՏէր Աստուած զօրութեանց, ոչ եւս յամպ, ի միգի և կամ յարեւու հարեալ խորանի, այլ ի քում իսկ ի գրկի, ի միջի մատանցդ՝ բազում

անգամ անմաքրից և մահահոտաց, առաւել խոնարհութեամբ և համբերութեամբ զիջեալ և չափաւորեալ՝ քան ի մսրին և յանապատին։... Զիշխեմ ես անդրադոյնս վարել զբանս. միտք իմ ամաչեն և կառչին աստանօր. և իմ բաւիցէ բերան ոգէտ կամ յանդուգն, ուր սարսէ սիրտ ի խորոց իւրոց։ Միայն սէր, միայն խոնարհութիւն, միայն զղջական զոհութիւն և պարզամիտ վստահութիւն, և խորին երկրպագութիւն բարբառեսցին աստանօր անյօդական ձայնիւ. և փառս տացեն քեզ, Հայր մեր, որ յերկինսդ ես։ Եւ դու ինքնին ձգեսցես այդր առ քեզ այժմիկ զսիրտս մեր, որպէս յետ սակաւ ժամանակի և զհոգիս, ըստ քաղցր խոստման Որդւոյ քո Միածնի, եթէ « Ուր եմն եմ՝ անդ և պաշտօնեայն իմ » եղիցի »։ Տուր մեզ աստստին հարազատ որդիութեամբ, կարօտիւ, սիրով և հլութեամբ լինել ընդ քեզ յամենայն ի խորհուրդս, ի բանս և ի գործս մեր. որպէս զի և անսայթաք ժամանեսցուք անդր՝ ուր յաւէտաբար ասիս լինել, և անմեկին կալ և մնալ, ասելով Հայր իմ ես դու. և լսելով առ ի քէն՝ Ահա ես և մանկունք իմ։

Բ

Հաւաստի և տեւողագոյն կնիք որդեգրութեան՝ ժառանգութիւն է հայրենի ստացուածոյ. և զրկեալն ի ժառանգութենէ՝ և յորդիութենէ իսկ մերժեալ համարի. որ զի և սակս յանցանաց և անառակութեանց մերժելոյն լինի, կեանք նորին անարգագոյն են քան զմահ՝ յաչս լաւաց։ Այսպիսի ինչ է տեսանել և ի հոգեւոր կեանս և յաստուածային պայազատութեան, և աւա՜ղ, զի յանախագոյն եւս քան ի մարդկայնումս։ Բազմագոյն եւս են որդիք Աստուծոյ, ընտրեալք յաշխարհէ և ի հասարակ դասուէ քրիստոնէից, կոչեցեալք ի կարգ և ի վիճակ սրբազան. ի կրօնաւորութիւն և ի քահանայութիւն վայելեալք ի բարիս գերագոյնս զամս յոլովս, և ի վախճանի տարամերժեալք ի Հօրն զրկաց և ի մասնակցութենէ ժառանգաց նորին հաւատարմաց։ Քանզի մինչ ի վայելսն և ի պատուի էին ի հայրենի յաստուածային տանն՝ զտուրսն առաւել քան զտուրզն սիրեցին, կամ և արհամար-

հեցին ինչ, և ոչ հոգացան յապահովել զկարեւոր սեփակա-
նութիւնն՝ հաւատարմութեամբ, երախտագիտութեամբ, սի-
րական հնազանդութեամբ և սպասարկութեամբ, և ի վեր
քան զամենայն՝ համակամութեամբ և համանմանութեամբ
հայրենական օրինաց և կամաց։ Եղե՞ւկ այնպիսեացն. որ-
պիսի՞ ժառանգութիւն կորուսին։ — ՋԲրիստոսի իսկ ժա-
ռանգութիւն ասեմ, զԱնդրանկին Հօր մերոյ, ըստ անյաչաղ
իւրումն խոստման. Յորժամ գայցէ, ասէ, Որդի մարդոյ փա-
ռօք Հօր, նստջիք և դուք ընդ նմա յաթոռս։ Աթոռակցու-
թիւն Ջրիստոսի յարքայութեան Հօրն, անուշագոյն և մեծա-
րոյ են վայելք՝ քան զամենայն վայելս, զոր պատրաստեացն
սիրելեաց իւրոց և կամարարաց։ Յայսքան բարձունս թեւա-
կոխել « ոչ է ամենեցուն տուեալ, այլ որոց պատրաստեալ է
» ի Հօրէ », նմանոգացն առաքելոց, հետեւողացն Ջրիստոսի,
սլզոսապէս նկրտողաց։ Եւ վիճակս մեր սրբազան գրականն
մեծ է առ անպատում բարիս. այլ ցորչափ կեամքս ի վայրի
փորձանաց՝ յառթի եմք գլորման և կանգնման. կարեմք
ստանալ, կարեմք և վրիպել. ընթանալ ամենեքին ընթա-
նան, այլ ոչ թէ ամենեքին ժամանեն, այլ որ համբերէն մինչ
իսպառ. որոյ զառ ի յետոյսն մոռացեալ, զաշխարհ, ի յա-
ռաջադէմսն յար նկրտի՝ յԱստուած Հայր իւր, զնա հանապազ
ունելով իւր կէտ և փափագ. և անմոռաց ունիցի ի մտի
զմեծ պատուէրն Ջրիստոսի, « Եղերուք կատարեալք, որպէս
» և Հայրն ձեր երկնաւոր. և այլն »։

Կատարելութիւն աստուածակերպ. այս պարտք և կնիք և
լրումն որդեգրութեան է պաշտօնէից Աստուծոյ, միանձանց
և քահանայից քան այլոց ամենայն դասուց մարդկան. և
այնու միայն ստուգապէս կարիցեն Հայր կոչել զԱստուած և
յերկրի և յերկինս։ Մեծ է պատուէրն, այլ և անհրաժեշտ.
ոչ եւս կայ տեղի ընտրութեան կամ յայս և յայն կոյս հայե-
լոյ, այլ շեշտ կշիռ ուղիղ յերկինս, յԱստուած ի Հայրն երկ-
նաւոր։ Եւ եթէ հարկ ինչ իցէ շուրջ նկատել, իցէ միայն առ
ի տեսանել զառաքինակիցս յընթացս, առ ի զննել զհետս
առաջնոցն, առ ուսանել զհնարս սրբոց, դիտել զոտնահետն
Ցիսուսի, ի զգենուլ քաջալերս, կամ զանգիտել յօրինակէ
թուլիցն և դեղեւելոց, և ապա պնդագոյնս եւս վարել և վար-
գել յընթացս և ի թռիչս, զմնացուած համառօտեալ կենացն,

յորում միայն ժամ է առաքինանալոյ և շահելոյ, և յետ որոյ
չկայ չմնայ ոչ ժամանակ ոչ ասպարէզ արդեանց, այլ միայն
ակնկալութիւն հատուցման անցելոցն ջանից կամ անջանու-
թեան։ Արդ հնչեսցէ և սիրելի և սոսկալի բարբառն այն
յունկն և ի սիրտս մեր, Եղերուք կատարեալք. հնչեսցէ մին-
չեւ ցյետին վանգ կոչման մերոյ ի կենաց աստի. և հնչեսցի
այժմէն ի ժողովիս այնքան ազդողագոյնս, Տեառն ինքնին
շնորհօք, մինչեւ ոչ եւս այլ լսել մեզ զայն ի յանգիմանու-
թիւն, այլ ի յորդոր և ի խրախոյս. և այսպէս ուշ դիցուք,
Եղբարք սիրելիք, նախ քաջիկ եւս հաւատալ և հաստատիլ,
եթէ պարտ է մեզ կատարեալս լինել և ապա հնարել հնարս
յաջողութեան ի նոյն, որչափ տուեալ իցէ մեզ։

Ա. Զանգիտանայ կարծեմ և ոչ ոք, զի կատարելութիւնն
ըստ Հօրն երկնաւորի՝ ոչ յանհնարիս ձկտեցուցանէ զմարդ,
ի հրաշակերտութիւնս, ի գիտութիւնս գաղտնեաց և ի նմա-
նիս, այլ յաճումն շնորհաց կամ տաղանդացն տուելոց մեզ
յԱստուծոյ՝ անսահման չափով. յուղղութիւն վարուց՝ ցոր-
չափ բաւիցեն զօրութիւնք անձին. ի սրբութիւն սրտի և
մաքրութիւն զգայարանաց, ցորվայր մտացն ժամանիցէ սրա-
տեսութիւն յորոշել և զննել զաղտն և զբիժ. յեռանդն սիրոյ
հոգւոյն, որով նուաճել ներքեւել սպառել իմն զմարմնոյն կամս
և իղձս. յանգուլ ջանս՝ փոխելոյ յերանելի կեանս. ի հանա-
պազօրեայ փափագ փութալոյ առ Աստուած կենօք և մահու,
կանխելոյ մտանելոյ՝ թէ ոչ անձամբ՝ զէթ սրտիւ յօթեվանս
Հօրն երկնաւորի։ Արդ այս առաջադրութիւն՝ ոչ թէ միայն
յանհնարիցն չէ, այլ թուի թէ և ոչ ի յոյժ դժուարիցն.
քանզի որպէս չիք սահման բացարձակ կատարելութեան,
այսպէս և չիք իւրաքանչիւր մարդոյ. հարկ է զքանքարն
շահեցուցանել, այլ ոչ եթէ ամենեցուն հաւասար տուեալ է.
մարթ է յոլովից լինել կատարեալս առաջի Աստուծոյ՝ ըստ
անձնիւր չափու, զոր ինքն չափէ տուողն շնորհաց և քանքա-
րաց։ Ումեմն հինգ և ումեմն երկուս. և ըստ այնմ պահանջէ
զտոկոսին. այնու ակամբ քննէ Տէր զմարդիկ՝ որով զպէսպէս
արարածսն, որք մեզ այսպէս կամ այնպէս թուին, այլ նա
զամենեսին իսկ ետես բարիս. և որպէս աստեղքդ, ըստ Առա-
քելոյն, մի քան զմի առաւել են լուսով և փառօք, այլ հա-
մանգամայն լուսաւորք են և փառաւորք, և կատարեալք

յիւրաքանչիւր կայի և կարգի։ Այսպիսիք եղեն և են սուրբքն, զորս և տօնեմք. այսպէս և մեզ իւրաքանչիւր մարթ է՝ զանազան չափով և որակաւ, սակայն հաւասարապէս լինել կատարեալս։ Այլ ոչ միայն մարթ, այլ և պարտք են լինել վիճակելոցս յայսպիսի որդեգրութիւն։

Մի՛ ոք խաբիցի կամ կարծիցէ զառաջարկեալն ի Քրիստոսէ կատարելութիւն՝ խրատ իմն լոկ լինել. զի թէ և էր խրատ առ աշխարհիկս, այլ առ կրօնաւորս և քահանայս՝ պատուէրք են, ըստ հասարակաց աստուածաբանից վկայութեան։ Եւ ընդէ՞ր բնաւ իցէ երկբայել յայսպիսում իրի կամ անպարտ զանձն համարել, մինչ՝ թէ էր հնար՝ զամենեսին իսկ ի դէպ էր արկանել ընդ քաղցր պարտուքս, որ ի բարձրութիւնս անսահմանս վերացուցանէ զմարդ և գերազանցել տայ քան զանձն։ Չիցէ՞ անմտութեան զգերազոյն և զիսկական բարի առ ձեռն ունելով՝ թողուլ դառնալ ի փոքրն և ի նուազ. ուր, զի և միանգամ մտելոցն յայս վիճակ՝ ոչ է մարթ, առանց անձինն և Տեառն մատնութեան՝ ելանել արտաքս։ Փա՛ւ այս առ ի մէնջ, Եղբարք առաքինասէրք. այլ և գոհացողք եղեալ ի վերայ սակաւագիւտ շնորհիս՝ զոր ընտրեցաք և ընկալաք, դուն գործեսցուք ի շահ արկանել և ընդունել զխոստացեալ բարիսն։ Ցուշ լիցի մեզ հանապազ, զի առ մեծ ինչ և կարեւոր կարգեալ կամք յերկրի, և հարկ իմն ի վերայ կայ մեզ մեծս լինել, կամ ընդ երկրաւ, որ քա՛ւ, մի լիցի, անկմամբ և կորստեամբ, և կամ յերկինս, վայելչապէս կատարելով զպաշտօն մեր և զբաստ։ Զի այն Աստուած որ զգեցոյց արարածոց իւրոց վայելուչ կերպարանս զանազանեալս, փառս լուսոյ աստեղաց՝ առաւել քան զառաւել, և բազմահոյլ դասս հրեշտակաց կարգեաց վերագոյնս քան զիրեար, նոյն հաճեցաւ և ի մարդկանէ կազմել դասակարգս ընտիրս, այնքան առաւելեալս մի քան զմի՝ որքան մերձագոյնք իցեն ինքեան։ Եւ ոչ լոկ ի յերկինս անդ և ի հանդերձեալսն, այլ և յաստիսս, ի տնտեսութեան եկեղեցւոյ իւրում, որպէս ուսուցանեն վեհք ի վարդապետաց, (Օգոստ. – Բարսեղ – Նազիանզ. – Եւսեբ.) ի զանազանեալ աստիճանս դասուց մարդկան՝ գլուխ ամենեցուն զքահանայս կացոյց. և զուգակից կամ մերձաւոր նոցին զմիանձունս և զկուսանս։ Իսկ մեր զերկոսին եւս զայսոսիկ ունելով վիճակս, ի կրկնապատիկ իմն բարձու կամք. զոր ոմն ի զգօնիցն՝ հաւասար կոչէր մարտիրոսութեան, և երկարութեամբ՝ առաւելեալ ասէ. և այլ ոմն (Ս. Բեռն.) զվիճակակցացս ասէր ստուգիւ գտիչս միայնոյ մարգարտին գեղեցկի. և այլ ոմն աստուածս մարմնազգեացս անուանէր։ Այլ ընդէ՞ր զվեհսն և զխորատեսս ի վարդապետաց ի վկայութիւն առնում. յանդիման կացցեն մեզ և անգամ թանձրագոյնքն և վրէպք ի լուսոյ քրիստոնէութեան. առ որս, գիտեմք ի դպրութենէ պատմութեանց, եթէ ո՞րքան պատուելիք են պաշտօնեայք սնոտի կրօնիցն, և զի՞՛ր նուիրականք և սրբազանք համարին։ Դանօթ է պատիւ և վարկ Ղեւտական քահանայութեան, մանաւանդ զգուշութիւն քահանայապետին, որ մի անգամ միայն ի տարւոջ մտանէր ի ներքին խորան սրբութեանցն, և այն երկար պատրաստութեամբ զոհիւք և ողջակիզօք և պէսպէս հրահանգօք, և ի վեր քան զնոսին յուշի ունելով զտիրական հրաման, « Սուրբ եղերուք, զի ես սուրբ եմ ». զորով թէ իշխէր ոք զանց առնել և անպատրաստ յանդգնել մատչել ի սեղանն սրբութեան, կամ հուր ցոլացեալ անտուստ ծախէր զնա, կամ սուր սրտմտութեան Տեառն հարկանէր զնա, որպէս զՈփնին և Փենեհեզ, կամ երկիր ընդ ոտիւքն պատառեալ կլանէր որպէս զԴադան և զԱբիրոն։ Եւ սակայն որպիսի՞ ինչ էր այն ամենայն սրբութիւն, որպիսի՞ « խորան ժամա- » նակին »։ Վէմք երկու գծեալք պատուիրանօք Աստուծոյ, սակաւ մի մանանայ ոսկի սափորով, գաւազան մի ընկուզի ծաղկեալ երբեմն սքանչելեօք, բաղարջ և նաշիհ, երախայրիք կալոյ և հնձանի, զոհարանք՝ զզուելիք ըստ բնութեան, զի արիւն և ճենճեր բերէին, և որ ինչ ըստ սոցին սակի. և եթէ այլ ինչ սպասք էին և զգեստք ի պատուական նիւթոց, սակայն ոչ ինչ սուրբ և մեծ ի բնէ, այլ մեծութեան և սրբութեան իմիք նշանակ։

Իսկ մերս որպիսի՞ խորան և սեղան. որպիսի՞ մանաւանդ պատարագ և զոհ. ո՞րքան նուաստ և փանաքի տեսլեամբ, այլ քանիո՞՛ն վեհագոյն, սրբագոյն և սարսափելի իսկ։ Զի ոչ միայն առ ծանօթացեալն էութեամբ և անձնաւորութեամբքը Աստուած մատուցանի, այլ Աստուած ինքն մատուցանի. Աստուած զուգեալ անեղական էութեամբն և եղանակաւ՝ մարդկայնով բնութեամբս. պատարագ ամենահրաշ. զորմէ ճառել

իսկ ի ժամուս՝ ոչ այնքան արտաքոյ առաջարկութեանս վարկանիմ՝ որքան ահեղ և տագնապեցուցիչ գտանեմ։ Եւ եթէ հարկ իցէ զեւս եւս ճշմարիտն ասել, ոչ այնքան ի զոհէ աստի և ի մատուցելոյն սոսկամ և սարսեմ, որքան ի մատուցողէս և ի պաշտօնէէ։ Բաբէ՜, որպիսի պատարագ և որպիսի՞ պատարագիչ. ո՞րքան մեծ խորհուրդ և ո՞րքան փոքր խորհրդածու. ո՞րպէս ստուգիւ աստանօր յայտնեալ խոհականն սրբութիւն սրբոց. և գիա՞րդ կատարող խորհրդեանն և մերձեցող յանմերձենալին՝ ոչ միայն թերի սրբութեամբ, այլ գուցէ և լի պղծութեամբ։ Եւ ո՞չ սիրտ իմ բաբախեալ դրդիցէ աստանօր հծծել, « Միթէ ե՞ս իցեմ, Տէր », պաշտօնեայն քո և քահանայ, Ե՞ս ընտրեալն ի քաւել զմեզս ժողովրդեան և զանգիտութիւն, որ գիտութեամբ իսկ գթեմ ի մեզս։ — Ո՞հ, եթէ մարգարէն քո մաքրակենցաղ և վառեալ աստուածային նախանձուդ, կայծի միոյ ստուերական սեղանոյդ հրեշտակային ունելեօք մատուցելոյ՝ անարժան զինքն համարէր և խորշէր, թէ « Ես այր տառապեալ և պիղծ » շրթունս ունիմ ». ինձ զի՞նչ մնայցէ զոչել՝ առաջի այնքանոյ հրեղէն աստուածութեան, առ որ Սրովբէք անգամ չիշխեն կալ հոլանի երեսօք. ինձ ո՞ւր կայցէ թաքչել և սաքրել։ — Եւ ոչ ուրեք. զի թէ Եսայիաս զփախչելն ինչ թեւադրիցէ պատկառանօք, Դաւիթ՝ զամենայն ճանապարհ ինձ փակեալ ցուցանէ. « Յերեսաց քոց ես յո՞ փախեայց, զի թէ » ելանեմ յերկինս՝ անդ ես. և եթէ իջանեմ յանդունդս, » կամ եթէ ի ծովս եղեց ապաստան, և եթէ մինչեւ ի դրունս » սանդարաց իջանիցեմ, և անդ մերձ ես »։ Զի՞ք հնար զերծանել յահեղ աստուածութենէ աստի բայց եթէ խոնարհ խոստովանութեամբ և երկրպագութեամբ անկանել ի ձեռս նորին. յայն՝ որ բարձեալ բերէն զկրկին հատուցմունսն, զվարձ փութացն և ժրից, և զպատուհաս յուլացելոցն և յոռացելոց. և չիք որ վրիպիցի յանաչառ և յանկաշառ ատենէ անտի նորա. մանաւանդ որ յայսքան մեծի պատուի իցէ, և յայսպիսի վայելէ սեղան զօր հանապազ. զի որում շատ տուաւ՝ շատ և առաւել եւս պահանջեսցի։

Զայսոսիկ խորհելով՝ զարհուրէին և սուրբք, և արթունք և պատրաստք կային առաքինիք. քանզի թէպէտ և գթած և ամենազորմ է Տէր, այլ և նախանձոտ և վրէժխնդիր սրբութեան իւրոյ. և զհզօրս հզօրագոյնս դատէ. ճրագաւ քննէ զԵրուսաղէմ, և փայլատակամբ զՍիոն. և որպէս ինքն Սրբութիւն Սրբութեանց կոչի՝ սուրբս պահանջէ և պաշտօնեայս, և ոչ վարկպարագի սուրբս, եթէ օրէն իցէ այսպէս ասել։ Ո՞ի թիւս աշակերտաց մեծի Առաքելոյն՝ ազնուագոյն և սրբագոյն և սիրելի նմա քան զորդեակն իւր զՏիմոթէոս, զորմէ այնքան խանդաղատանօք և գովութեամբ գրէ. և ահա յոլովից ի մեկնչաց գրոց հաւանութիւն է, եթէ նա ինքն Տիմոթէոս էր հրեշտակն այն եկեղեցւոյն Եփեսացւոց սակաւ ինչ թուլացեալ յառաջին սէնդութենէ. և թէպէտ էր և վկայիւր ի Պատողէն անգամ՝ վաստակաւոր և համբերող. այլ զի ոչ բառնայր զչարն ինչ յայլոց յինքն հաւատացելոց, և չտեսանելոյն իմն առնէր զկեզծաւորեալսն բարի անուամբ և զվրէպսն ի բարութենէ, Տէրն՝ զայն նմա թուլութիւն և անկումն սիրոյ գրէր, « Զսէրն քո զառաջին՝ թողեր – ասէ – անկար. » ապաշաւեա, և զառաջին գործսն քո արա. ապա թէ ոչ՝ գամ » ես վաղվաղակի, և շարժեցից զաշտանակս քո ի տեղւոջէ » իւրմէ »։ — Սմին նման սպառնալիք պակուցողականք են և առ այլս ի հրեշտակաց եկեղեցեացն, յորս ակնն անաչառ նշմարէր թերութիւնս առաւել կամ նուազ. և հուսկ բնաւից եօթանեցուն՝ գայր հրեշտակ եկեղեցւոյն Լաւոդիկեցւոց, այն որ ոչ ցուրտն էր և ոչ ջերմն, այլ գաղջ և զզուելի ի ճաշակ Տեառն։...

Եւ որպիսի՞ք արդեօք իցեմք և մեք, եղբարք, յաչս քննողին։ Իցե՞ս դու ջերմն. չիշխես ասել Այո. – իցե՞ս ցուրտ. – խորշիս և զայդ վկայել զանձնէ։ Իսկ զի՞նչ ապա իցես, եթէ ոչ գաղջ։ Հրեշտակ ես և դու, թէպէտ և չիցես կարգեալ տեսուչ եկեղեցւոյ միոյ, այլ զմեծագոյն կատարես գործ եկեղեցւոյ՝ զպատարագն, պաշտես յահաւն և զայլ խորհուրդս։ Հրեշտակ ճանաչէ զքեզ և աշխարհիկն՝ ի տեսանել զձեւ կարգիդ, որ ի տաճարին և որ արտաքոյ. հրեշտակ զքեզ կանխաձայնեաց մարգարէն, Քահանայ՝ Հրեշտակ Տեառն ամենակալի է. և քահանայ՝ ոչ եւս մովսիսեան՝ այլ Յիսուսեան։ Իսկ որպիսի՞ վարս, կամ գործս վայել է ունել նորոյ օրինացս քահանայի. բայց եթէ հրեղէն գոլ մաքրութեամբ. անքուն՝ մտացն զգաստութեամբ. միշտ պատրաստ ի միջնորդութիւն ընդ Աստուած և ընդ մարդ, և պատարագաւ և քա-

բողութեամբ և աղօթիւք և ներքին նուիրմամբք։ Հրեշտականալ արժան է քեզ հանապազ տեսութեամբ երեսաց Հօրդ յերկինս, և զորդւոցն յերկրի, զազերս և զաղէտս սոցա վերացուցանելով առ նա, և զգութ զքաւութիւն զպէսպէս շնորհս նորա իջուցանելով ի վերայ սոցա։ Հրեշտակ լինել անկ է քեզ ի սպասու պաշտամանցդ և ի փառաբանութեան. Հրեշտակ լինել հեզութեամբ և քաղցրութեամբ. ոչ խռովել և ոչ խռովիլ կրիւք կամ բանիւ. Հրեշտակ լինել անձանձիր վաստակօք, բանիւ և գործով, յօգուտ ժողովրդեան և անձինդ գլխովին։ Հրեշտակ լինել բազում անգամ և լռութեամբ և խորհրդապահութեամբ, զգուշանալով դրանց բերանոյ։ Հրեշտակ լինել պարկեշտ շարժմամբ և նազելի գնացիւք, և համօրէն կերպարանաց հանդարտութեամբ, ի շինութիւն՝ և լսողաց և տեսողաց։ Հրեշտականալ, միով բանիւ անդլակի սիրովն և զմայլմամբ յԱստուած. զի և այս իսկ է մեծ հարկ պաշտաման նուիրական անձին, և կրթութիւն մշտնջենաւոր, իբրեւ նախերգանք իմն հանդերձելոյ և մշտնջենաւորի սպասաւորութեան մանաւանդ թէ արքայութեան՝ յօթեվանս Հօրն։

Զայս բողոքեն և պահանջեն ի մէնջ անդուլ և խօսունք և անխօսունք։ Խօսունք նժդեհակիցք մեր աշխարհիկք, գերագոյն քան զիւրեանց վարս ակն ունելով առ ի մէնջ և զնացս անխոտորս, և զգալի իմն կերպարանս անտեսանելւոյն Աստուծոյ՝ զոր քարոզեմքս, – անխօսունք, ձեւ և չափ բնակութեան մերոյ, տարազ զգեստուցս, արտաքոյ պատանատիպ սգատեսակ, իսկ ի ներքս ի տաճարին՝ պնեալ և պեղնաւորեալ քան զԱհարոն, ի զարդ փեսայի և հարսին, օրինակ Քրիստոսի և Եկեղեցւոյ նորին. – օծումն գլխոյ մերոյ՝ յոր կրեմք զխոյրն պանծալի. օծումն ձեռացս՝ որով համարձակիմք հպիլ յանմատոյցն Սերովբէից։ Եւ համօրէն իսկ և խորհուրդն մեծ, և ժամք աղօթից, ընթերցմունք և խոկմունք հոգեւորք, կատարմունք և յիշատակք տօնից, ընդունելութիւնք նորընծայից եղբարց յուխտ կրօնիս (կամ յաստիճան քահանայութեան), և որ այլ սոցին նմանք, (հանդերձ տարեկանաւս այսու հոգեկրթութեամբ). այս ամենայն մերձ ընդ մերձ յիշեցուցանեն և պահանջեն ի մէնջ զսրբութիւն վարուց, զնուիրումն բովանդակ զօրութեանց մերոց առ Աստուած, և համառօտ ասել՝ զկատարելութիւն՝ ըստ Հօրն երկնաւորի։ Եւ

այսոքիւք ինքն Հայր՝ ոչ միայն պահանջէ զմեզ ինքեան նմանողս գոլ, այլ և նոքիմբք հնարս գործէ մեզ և աղագս կատարելութեանն պահանջելոյ. առ որ դարձցի արդ բանս և ունկնդրութիւն Եղբարցդ։

Բ. Բաղցր և գեղեցիկ անունն որով յուսադրեցաք կոչել զԱստուած Հայր մեր, թէպէտ և բարձր եցոյց մեզ ճանապարհ առ ինքն վերելից, ոչ լոկ մաքրութեամբ այլ և կատարելութեամբ, նոյն ինքն դարձեալ դիւրէ մեզ զճանապարհն և ելի աղագս գործէ՝ որոց կամիցին յօժարութեամբ հետեւել. քանզի ամենեւին հայր է, այսինքն է՝ ամենեւին գթութիւն և բարութիւն. թէպէտ և սուր ունի ի բերանի սրեալ և հատու, և այնու ի քննութիւն մտանէ հրեշտակաց իւրոց կարգելոց յեկեղեցւոջ, այլ և ի ձեռին ունի պսակս և զփայտ կենաց, և զփականս՝ որով բանայ զդուռն ողորմութեան, « և ոչ ոք կարէ փակել »։ (Յայտն. Գ. 7. 8)։ Թէպէտ և տէր և դատաւոր անաչառ, այլ միշտ հայր է, ցորչափ գոյ ժամանակ որգիութեան. և զի այնու կոչմամբ ուսոյց մեզ Քրիստոս անուանել զնա, յայտ ուրեմն զի հայրութեամբ՝ առաւել քան այլովք իւիք յատկութեամբ վարի Աստուած ընդ մարդիկ. քանզի նա արար զմեզ և « գիտաց » զստեղծուածս մեր, զի հող եմք ». և ոչ այնքան արարչագործութեամբն կամ այլով իւիք սքանչելի եղեւ՝ որքան փրկագործութեամբն։ Վասն այնորիկ և ի սաստկապահանջ քննութեան անդ հրեշտակացն եկեղեցւոյ, ի կշտամբելն և ի յանդիմանել, յիշէր և զմիոյ միոյ ի սպարտաւորացն զառաջին գործսն ինչ բարիս և յիշեցուցանէր նոցա. ումեմն զաշխատանսն և զվիշտս զոր կրեաց վասն անուանն իւրոյ. այլում՝ զհաւատարմութիւնն ի միջի անհաւատարմաց. միւսում զպահելն մասն զառաջնոյ զօրութեանն և զպատուիրանաց. որք՝ թէպէտ և չէին բաւականք յարգարանալ գլխովին յահեղն ատենի, այլ և ոչ անբաւականք ի շարժել զնոսա ի զեղջ և ի դարձ, և զԱստուած ի գութ և յողորմն։ Որպէս զի և առ յետնագոյնն ի նոսին առ գաղջն և զզուելին Լաւոդիկեցի, զոր և կոչէ « Ողորմելի և հէգ և աղքատ, մերկ և կոյր », թելադիր լինի գթութեամբ, մինչչեւ եւս է փակեալ ողորմութեանն դուռն, զոր եթէ միանգամ « փակէ և ոչ ոք է որ » բանայ ». և խրատ տայ նմա գնել այնուհետեւ « ոսկի

» փորձեալ ի հրոյ, զի մեծասցիս », ասէ. ժիրաժիր գործս առաքինութեան, ճգունս և վաստակս. և գնել « հանդերձս » սպիտակս զի զգեցցիս, զի մի երեւեսցի անվայելչութիւն » մերկութեան քո ». այսինքն է սրբել զանձն ապաշխարութեամբ, և զգենուլ զմաքրութիւն սրտի և զգուշութիւն ըզգայարանաց. և ի վերայ այսոցիկ, « Դիր դեղ յաչս քո զի » տեսցես ». այսինքն է զգաստութեամբ ի միտ առնուլ ըզբանս սուրբս, կանխել ի խոկմունս հոգեւորս, քննել զպարտս պաշտամանն, և այնպէս ուղղել զգնացս վարուցն։

Աւադիկ երրակի դեղք և հնարք ուղղութեան վարուց և հնարք կատարելութեան առաջադրեալք մեզ ի խրատուս յայսմ. ստանալ գործս բարիս՝ օրինակեալս յոսկին փորձ. սրբել ապաշխարութեամբ զաղտս, օրինակեալ ի հանդերձն սպիտակ. և ի մտի ունել զբանս Աստուծոյ և զկարգս վիճակին, օրինակեալ ի դեղ աչացն։ — Նախ, ձեռն ի գործ արկանել ըստ կոչմանս մերոյ, զի ի գործ և յաշխատութիւն եկաք և ոչ ի հանգիստ յուլաբար. ի պաշտել ծառայաբար, և ոչ յառնուլ պաշտօն տիրաբար. զի թէպէտ և բազում մասամբ անդորր է մեզ վիճակս, այլ ունի և հարկ իսկ է ունել զգործ և վաստակ իւր. և ոչ դրախտն փափկութեան ձրի տուաւ երջանիկ նախամարդոյն, այլ գործել զնա և պահել։ Կամ փափկութիւն կայ և մեր առաջի ի շնորհաւոր վիճակիս. այլ զի արտաքոյ դրախտի ծնեալ է մեր, կարեն փափուկքն առիթս մեզ լինել պղերգութեան և անկման, և ի քաղցրութենէ դառինց արտաբերիլ, վասն որոյ հարկ է տաժանիլ և քրտնիլ. և կամ դժուարին և առապար է մեզ շաւիղս. ապա բազում ժրութիւն և անդուլ ջանք պիտին առ ի դիւրել և հարթել, և անսայթաք առնել ճանապարհ ի կէտ ասպարիզին, ի դիտակն կրօնաւորութեան և քահանայութեան մերում։

Երկրորդ հնարք, ճանաչել զսղալանս և զմեղանս մեր, և հանապազ իսկ յիշել զմեծամեծսն, զի խոնարհեսցին զլուխք մեր անդգայութեամբ ընդվզեալք. տեսցուք զանվայելչութիւն մեր ներքին, և թողեալ զդատելն և հետազօտել զայլս՝ փութասցուք գնել ժտութեամբ զհանդերձն մաքրութեան՝ զսպիտակացեալն արտասուօք և ապաշխարութեամբ, և եթէ աղքատք և գծուծք՝ զէթ մի երեւեսցուք յաչս Աստուծոյ

մերկք և զազիրք։ Յիշեցուսցէ և արտաքինս այս աքեմ մեր սեւաշուք, զի առանց ներքնոյն այնորիկ զզջականի և մաքրականի՝ սոսկ յանդիմանութիւն և դատախազ լիցի մեզ. և յօր ըստ օրէ արկանել մեր զանձամբ յիշեսցուք զի օրինակ և կարապետ է յետին պատանացն. և որպիսի՞ չար կեղծաւորութիւն իցէ՝ երեւեալն յաչս արտաքնոցն՝ մեռելակիր, և ի ներքուստ կենդանի գոլ ախտից, կամ ըստ Տեառն բանի՝ զերեզման բռեալ՝ լի ներքին անմաքրութեամբ թերեւս մարդկան հաճոյատեսիլ՝ իսկ Աստուծոյ զարշելի և մերժելի։ Ո՜հ, որքան առաւել կենդանի է մարմին՝ այնքան նուազեալ հոգւոյն կենդանութիւն։ Բաղցրասցին մեզ այսուհետեւ թեթեւ և սակաւ ժուժկալութիւնքն սահմանեալք, անհաճոյքն ինչ բնութեանս և համարեալ դժուարինքն. զրկմունքն ինչ սփոփանաց և զբօսանաց, չունելն առ ձեռն որոց բաղձայ անժոյժ և անյագ սիրտս այս. նուազութիւնք ինչ պիտոյից և պարէնի, անհամութիւն ոգեպահիկ թոշակին, ճշդութիւն ժամուց քնոյ և հանգստեան, օտարութիւն ի տեսարանաց աշխարհի, յընտանեաց և ի սիրելեաց, և որ այլ սոցին նմանք. որք և, ամաչելով ասեմ, փոքրոգի և դիւրատար իսկ կանոնեալ են ի մերումս կրօնի քան առ բազումս ի միանձնական կարգաց, որոց փոխան թերեւս արժան էր յաւելուլ մեզ զկամաւորն։ Իսկ եթէ զանգիտէ որ ծանրացուցանել զկարծեցեալ լուծն՝ պատկառանօք մաղթիցէ զօրհնապազ զ« թեթեւացո » զբաղցր լուծ քո զոր եղեր ի վերայ մեր ». և ծանիցէ թէ քանի՞ վատութեան և ամօթոյ գործ է և այնքան փոքու բեռին թօթափող լինել, և այնքան քաղցր քրիստոսեան ձեռակերտի լծընկէց։ Իսկ եթէ ուրուք բազում անգամ ստունգանեալ իցէ և ելեալ ըստ օրէնս կարգին և վիճակին՝ ամենեւին իսկ պարտ և պատշաճ է ոչ միայն զօրինադրեալսն անվրէպ ունել, այլ և անհրաժեշտ համբուրել զդառնութիւն կամաւոր մեռելութեանց և զզջմանց. « Արդ ապաշխարեա, » ազդէ քննողն, ապա թէ ոչ՝ գամ վաղվաղակի, և պատե- » րազմեցայց սրով բերանոյ իմոյ »։ Ո՞վ սուր սոսկալի, ո՞վ վաղվաղ և յանկարծահաս զալուստ դատողին և հատուցանողի։

Երրորդ հնարս ուղղութեան և կատարելութեան տեսաք զդեղ սրատեսութեան աչաց հոգւոյն, որ են, ըստ իս, աս-

տուածային բանք և գիտութիւնք, որք և ի սեփական վիճակ պաշտամանս մերոյ պատշաճին, զոր և արժան էր մեզ ստէպ յեղյեղել՝ որպէս զհաւատն զոր զօր ամենայն ասեմք ի պատարագի. և առ այս՝ ի բազում կրօնս միանձանց օրինադրեալ է ամի ամի ընթեռնուլ ի ժողովի զսահմանս և կանոնս Ուխտին իւրեանց։ Յայս սակս կարգեալ են և Աստուածաշունչ մատենից ընթերցմունք ի սեղանատան, և հոգեխօսիկ գրոց յիւրաքանչիւր խցկունս, զի միոյն հրապարակաւ լուցուք որպէս յաստուածուստ քարոզութեան, և միւսում իբրու առանձինն և միայն ընդ միայնոյ խօսելոյ Աստուծոյ ընդ հոգւոյ, Հօրն ընդ որդւոյ, փեսային ընդ խօսեցելոյն նմա յերկրի, զի հարսնացի յաւերժաբար ի յերկինս։ Ո՜վ ցանկալի ձայն՝ որոց իցեն տէրունական ականջք լսելոյ. ձայն՝ զոր շատ իսկ կարող են խափանել ձայնք աշխարհիկք, ընթերցմունք, լուրք և տեսութիւնք վայրապարք, ուսմունք և պարապմունք՝ թէ ոչ իսպառ անպիտանք՝ այլ և ոչ շատ պիտանացուք և պատշաճք մեզ. ձայն, որոյ լռութիւն զթմբրութիւն գուշակէ հոգւոյ, զօրհաս և զմահ գլխովին։

Այնմ ձայնի կցորդ են և օրինադրեալ ժամք աղօթից ի վաներս, և տօնախմբութիւնք միաբանականք. յորս՝ որպէս ի Վերնատանն՝ սիրէ Հոգին սուրբ իջանել ի վերայ միանգամայն ժողովելոցն, և բազում անգամ թափուր թողու ի շնորհացն՝ զհեռացեալսն ի միաբանութենէն և ի ժողովոյ սահմանեալ ժամուց։ Բանզի այլ են աղօթք զոր պատուիրեաց Տէր առնել մեզ դրօք փակելովք և յամենայն ժամանակի, և այլ կանոնեալքն միաբանականք։

Թողից ասել, զոր վայել իսկ էր մանաւանդ երկարօրէն քննել և ճառել, զհնարս կատարելագործութեան անձին՝ ի ձեռն սրբոց խորհրդոց եկեղեցւոյ, յորս և յաճախապէս տուեալ է մեզ վայելել, ունողացս զկնիք քահանայութեան. որոց համարձակութիւն է, ոչ միայն առանձինն առաջի Աստուծոյ այլ և ստէպ «խոստովան լինել միմեանց զմեղս» մեր», որպէս և առնեն բազումք և տամք առնել մերոց աշակերտաց նորընծայից, և թերեւս վերջանամք քան զնոսա յայսմանէ բազմօգուտ և զօրաւոր հնարից ուղղութեան և կատարելութեան, և կամ անբաւական քննութեամբ խղճի մտաց և սրտի զոլման. որով և ոչ յառաջեմք ի լաւութեան, գուցէ

և յետնեալ ելս գտանիցիմք։ Աստի յաճախ պատահէ և անզօրութիւն ամենազօր և հրաշափառագոյն հնարից սրբութեան և կատարելութեան՝ զոր զօրհանապազ ի կիր առնումք, և որ կարէ գլովանդակ դիտումն մեր յամբակ հանել. զմեծէ և զսրբոյ Պատարագէն ասեմ, որ ինքն ծայրագոյն կատարելութիւնն է գործոց ի վերայ երկրի, և մեծագոյն ի սքանչելիս որ կատարեցաւ և կատարի ի մեր իսկ ձեռս. և որոյ միանգամ իսկ մատուցումն բաւական էր, ըստ սրբոց Հարց, զաշխարհս համօրէն մաքրել և սրբել, թող թէ զմի անձն մատուցողին։ Եւ մեք ո՞րպէս, զիա՞րդ արդեօք մատուցանեմք զայսպիսի խորհուրդ. ո՞րչափ օգտեցուցանեմք և ո՞րչափ ինչ օգտիմք. զի՞նչ կատարեմք և ի՞բր կատարելագործիմք։ Թողից զայս յանձնիւր քննութիւն ուշով և պարապով, շատ համարեալ միանգամ եւս յիշեցուցանել՝ զի յոյժ զօրաւոր հնարք են այս առ դիտեալս մեր գործ, այն է կատարելութիւն մեր և արժանաւոր որդիութիւն Հօրս երկնաւորի, որում նուիրեմք այգու այգու զՄիածին նորա զենեալ ի ձեռին մերում, և հանգուցանեմք իբրեւ զկնիք սիրոյ ոչ լոկ ի վերայ այլ և ի մէջ սրտի. իցի՛ թէ որպէս յիւրում տաճարի սրբոյ, և ոչ որպէս ի վերայ զերեզմանի հնոյ։

Թողից յիշել և զայլ պէսպէս հնարս ուղղութեան և կատարելագործութեան, զոր քաջ քան զիս գիտեն Եղբարքդ պատուականք, և զոր դիւրին է ուսանել ի հոգիախօս գրենոյ. այլ ոչ լռեցից զսեփականագոյն մեզ պարգեւեալ հնարս, զՊահպանիչ Որդեգրացս զկոյսն ամենասուրբ, անկանելով յոտս նորա և աղերսելով. Ո՜վ ամենասրբուհի կոյս, որում ոչ բաւէ բան բերանոյս և ազդումն սրտի, յորժամ ի յիշումն զաս առաջի այսքանոյ սրբոյ և մեծի խորհրդոյ, Միածնի քո և Միածնի Հօր յաւիտենականի, պատարագելոյ վասն մեր մեղաւորաց, և ի ձեռս մեր՝ այլոց մեղաւորաց. յորժամ կամքս առաջի սեղանոյն իբրեւ կատարիչք մեծի զոհին հաստութեան, և զքեզ իբրեւ անհամարձակ զոք առ ի կողմանէ տեսանեմք կացեալ, որպէս երբեմն առ ոտս խաչին զերունակ օրինակաւ քահանայագործող և նուիրող, յանճառդ մաքրութեան, յանհասանելի ցաւսդ և յանբաւ սէր սրտիդ։ Այլ առ վայր մի անտեսողք մերումս անարժանութեան, և սքանչացողք քումդ արժանաւորութեան, աղաչեմք զքեզ և այժմ ի

պահուս՝ յորում խորհրդածէաք զպարտս որդիութեան մերոյ առ Հայրն երկնաւոր, աղաչեմք զքեզ՝ որ յետ նորա երկրորդդ ես ծնող հոգւոց մերոց և մայր համատարած. աղաչեմք զքեզ, երդմնեցուցեալ ի հաճութիւն այնորիկ՝ որ առաջին յարաբածս իւր ծանեաւ և արար, և եղեր նմա Դուստր և Հարսն և Մայր. միջնորդեա դարձեալ քո սուրբ և ամենազօր խոնարհութեամբդ և գթութեամբ, զի եղիցուք և մեք, թէ ոչ արժանաւորք այլ և ոչ անարժան քեզ որդեգիրք, և Հօրն երկնաւորի որդիք, որդւոյ քո և նորա՝ եղբարք և ժառանգակիցք. հեզմամբ ի մեզ շնորհաց փառակցի նոցուն Հոգւոյն սրբոյ՝ որ ի քեզն հովանացաւ անմեկնելի, և արար զքեզ հովանի մեր և Պահապան. ընդ որով կեցցուք յերկրի, և ընդ նմին՝ անդ ուր եսդ՝ յաւիտեան։

Բ

ՍՈՒՐԲ ԵՂԻՑԻ ԱՆՈՒՆ ՔՈ

Զիք ինչ որ այնպէս ճշգրտագոյնս յայտ առնիցէ մեզ զէական պարգութիւն Աստուծոյ և զանհամեմատ գեղեցկութիւնն՝ որպէս իմաստ սրբութեան. վասն այսորիկ և հրեշտակաց որ գերագոյնքն են ի բանականաց և ծանօթագոյնք Աստուծոյ՝ բան և երգ հանապազ՝ զսրբասացութիւնն գիտեմք, զոր կրկնենն և երեքկնեն և երիցս երրեակ և բիւրիցս յեղյեղեն, և ոչ լռեն. և նոքա ի փառս Սրբոյն և ի հրճուանս անձանց սրբաբանեն, ոչ ունելով այլ ինչ պէտս։ Իսկ մարդոյս ոչ այսպէս. հարկ է և սմա յեղյեղել զնոյն խոստովանութիւն, բայց ոչ միայն զի սուրբ է Աստուած, այլ զի և ինքեան պիտոյ է սրբութիւն յոյժ, մաքրութիւն մեծ, առ ի կարող լինելոյ յօգիլ ընդ անեղ սրբութիւնն, ոչ միայն յերկինս անդ՝ այլ և յերկրի. և անդ որպէս հրեշտակք սուրբ առնեն զանուն նորա յանձինս իւրեանց, և աստ ի մեզ՝ Սուրբ եղիցի անունն այն. կամ մանաւանդ մեք ինքնին սուրբ եղիցուք ի նմա՝ որ միշտ և ամենայն ուրեք սուրբ է, և անմարթ է ազատոյ և արատոյ իմիք կռուիլ ի նոյն. և որպէս

փառք և զօրութիւն նորա սփռեալ են յընդհանուրս՝ այսպէս և սրբութիւն նորին. այլ այս աքանչելի խոհր է, զի թէ ոչ փառօք և զօրութեամբ՝ այլ սրբութեամբ մարթի է արարածոցս բանականաց՝ հաղորդ լինել և ի կենցաղումս նորին հրաշալի մեծութեան։ Վայելուչ ուրեմն էր նախակարգութիւն այսպիսի մաղթանաց ի գլուխ այլոցն ամենայնի. և, օրինակ իմն, որպէս ի մատչելն ի պաշտօն և ի պատարագ և յարտաքին սպաս և ի ճաշ՝ նախ զձեռս լուանալ և սրբիլ օրինադրեցան մարդիկ և ապա մխիլ ի գործն, արժան էր և ի սկիզբն աղօթից սրբիլ նախ ըղձիւք, և ապա մատչել ի խընդրուածս և ի գոհութիւն։

Հասարակաց են օրէնքս ամենայն քրիստոնէից. իսկ մեզ պաշտօնէից Աստուծոյ և սեփականագոյն որդւոց՝ ինչ մի առաւել օրինադրի յասելս առ Աստուած՝ սուրբ եղիցի անուն քո. ի վերայ սրբութեան անձին պարտական եմք խնդրել և զսրբութիւն այլոց մարդկան, որոց վասն իսկ յանձն առեալ է զպաշտօն և զաղօթական կեանս։ Քաւութեան և սրբութեան եմք պաշտօնեայք. և ոչ դադարէ պաշտօնս այս՝ բայց միայն մահուամբ. ապա անդադարելի պարտք են մեր սրբակերտութիւն մարդկան։ Եւ եթէ այսպէս առ ընկերս՝ քանիո՞ն առաւել յանձնէ պահանջեմք սրբութիւն. նա զի և օտարոտի և այլանդակ իրք են, (եթէ հնար էր լինել) ինքեան անսուրբ և անխտիր գոլ, և զայլս սուրբս յարդարել, կամ աղտեղի ունելով ձեռս՝ զայլոց գիմաց աղտն մաքրել։ Ապա ամենայն իրօք հաւանելի է, եթէ առ ի սրբել զանուն Տեառն Աստուծոյ և Հօր երկնաւորի, որպէս աղօթեմքս, նախ և առաջին գործ է մեզ յանձնէ սկսանել զսրբութիւնն, և ապա թէ ջանալ ի սրբութիւն այնոցիկ՝ որոց վասն կրեմք զկարգս։ Ի յաջողութիւն երկրորդիս՝ անհրաժեշտ հարկ առաջինն է, անձին սրբութիւն, վասն որոյ և յայս յառեսցուք զխորհրդածութիւն մեր յայսմ աւուր։

Վաղ իսկ ծանեաք զի վիճակ մեր պահանջէ ի մէնջ կատարելութիւն. և կատարելութիւն հաստատեալ է ի սրբութեան. այնու պատուիրեցաք նմանող լինել Հօրն երկնաւորի, և Հայր սուրբ է, որպէս Քրիստոս յաղօթսն ասէր և խնդրէր ի նմանէ սուրբ առնել և զիւր աշակերտսն։ Լուաք և զհրեշտակաց անլռելի սրբերգութիւնն. գիտեմք և զպատուէր հնոյ

օրինացն, « Սուրբ եղերուք, զի ես սուրբ եմ ». չեմք անտեղեակք և առաքելականին առ նորոյ օրինաց հաւատացեալքս, « Այս են կամքն Աստուծոյ՝ սրբութիւն ձեր »։ Գիտեմք և զայն՝ զի վախճան և կէտ կենաց մերոց է տեսութիւնն Աստուծոյ. և միակ հնար տեսութեան անտեսին՝ ուստաք դարձեալ ի Քրիստոսէ զսրբութիւնն. « Երանի՜ որ սուրբ են սրբ- » տիւք, զի նոքա զԱստուած տեսցեն »։ Սրբութիւն՝ այն ինչ է հոգւոյ, որ ինչ մարմնոյս՝ աչքն. և զի ամենայն ի քաջիկ տեսութիւն՝ յստակութիւն և անաղտ մաքրութիւն պահանջի, նոյն օրինակ և ի հոգեկանէն՝ զտութիւն յաղցաւորաց։ Ապա հարկ է ամենայնիւ զի առ ի կարող լինել յԱստուծոյ տեսութիւն՝ սուրբ եղիցի սիրտ իմ։

Հարկ ասեմ լինել սուրբս, և ոչ եղեալս երբեմն զոլ, որպէս երախայքն և մանկունք անտիականք. հարկ է մեզ եղանիլ սուրբ՝ մտադիւր ըղձիւք և ջանիւ և աշխատութեամբ. և այնքան առաւել ջանից և վաստակոց պէտք են, որքան զի ոչ լոկ անձին այլ և այլոց յօգուտ կարգեալ եմք. « Տեսցեն, » ասէ, զգործս ձեր բարիս և փառաւորեսցեն զՀայր ձեր՝ որ » յերկինսն է »։ Եւ եթէ ամենեցուն արժան է տաճարս լինել Հոգւոյն սրբոյ, ըստ ազդարարութեան Պօղոսի, ապա ներքսագոյն իմն խորան սրբութեան արժան և իրաւ է լինել պաշտօնէից Տեառն, որք ստուգութեամբ և ոչ օրինակաւ միայն կրեն զսրբութիւնն սրբոց։

Եւ արդ ի բաց թօթափեալ այսուհետեւ զամենայն երկբայութիւն, զայն խնդրեսցուք, եթէ զինչ ինչ կարիցէ խափանն լինել սրբութեանս մերոյ, որ խաւար՝ դիմակալ լուսոյս՝ որով հրամայեցաքս որպէս յաշտանակէ կանգնոյ լուսաւորել զորս ի տան աշխարհիս զմարդիկ, ի փառաց աղագս Աստուծոյ Հօր։ — Առանց ինչ մեր գիտելոյ կամ զգալոյ՝ եստեղծ Աստուած զհոգիս և վերասրբեաց. այլ զարգացելոցն տիօք հարկ եղաւ ջանից և արդեանց առ ի գլուխ հանել զսկզբնաւորեալն յԱստուծոյ փրկագործութիւն։ Հիմունս իմն էարկ Աստուած տաճարիս հոգեկանի, և բարձրացոյց իսկ ոչ սակաւ, և կուտեաց եղ առընթեր բազում մթերս նիւթոյ շինուածոյն, և յաւելու եւս ըստ խնդրողացն ժառութեան. այլ իւրաքանչիւր անձին եթող յաւարտ զշինածն հասուցանել, յարդարել, զարդարել, և այնպիսի կազմել բովանդակ, զի

տեսեալ և Քրիստոսի՝ ասիցէ, « Ես և հայր իմ առ նա եկեսցուք և օթեւանս առ նմա արասցուք »։ — Ո՜վ, քանի՞ կարեւոր է մեզ տաճարս այս, յորում Աստուած բնակելոց է ամենայն փառօք իւրովք. և քանի՜ մաքրութեան և վայելչութեան պէտք են աստուածակիր տեղւոյն։ — Սողոմոն՝ զամենայն գանձս զմթերեալս ի հօրէն և յիւրմէ, զամենայն ճարտարութիւն և իմաստութիւն ի գործ արկեալ երկար ամօք, և կառուցեալ զտաճարն Սիօնի, որ հռչակեցաւ յաղինս որպէս հրաշակերտ ի կերտուածս, և արարեալ վասն այնր նաւակատիս մեծահանդէս և բազմազոհ, որպիսի չեւ էր երբէք եղեալ, վկայէր ինքնին և ասէր. « Եթէ երկինք և » երկնից երկինք ոչ են բաւական քեզ, և զի՞նչ է տունս այս » զոր շինեցի »։ (Բ. Մնաց. Զ. 18)։ Շինեցին և այլք վերստին զտաճարն զայն զամս 46. ոչ այնքան բազմաճոխ գանձիւ որքան նախանձու և յօժարութեամբ. այլ և զայնմանէ որպէս և զամենայն նմանեացն, ասէր Տէր, « Զի՞նչ է այդ » ամենայն. Որպիսի՞ տաճարս շինեցէք ինձ. կամ զի՞նչ տեղի » հանգստեան իմոյ ». և գիտեմք թէ որպիսի եղեւ կատարած նոցին, և զիա՞րդ ոչ մնաց քար ի վերայ քարի շինուածոցն։ Որպիսի՞ ապա անկ իցէ շինել և լինել տաճարի՝ յորում Աստուած բնակելոց իցէ ի յաւիտեանս ժամանակաց։ Որպիսի՞ ինչ արժան է քեզ պատրաստել, հոգիդ իմ, տաճար անձնաւոր, զի գայցէ Հայր փառակցօքն և ամենայն արքայութեամբ իւրով և արասցէ օթեւանս ի քեզ, որպէս և դուդ ի նմա։ Քանի՞ հաստատութիւն յատակիդ՝ զոր Աստուած կոխիցէ, քանի՞ սրբութիւն սրահից՝ յոր ճեմիցի այն՝ որ շրջին ի մէջ ճրագարանաց, ըստ տեսլեանն Յովհաննու, և որքան մաքրութիւն գահաւորակի՝ յորում հանգիցէ Սուրբն սրբոց։ — Զեն, չեն այսոքիկ այլաբանութիւնք և վարկպարագի նմանութիւնք, մանաւանդ թէ իցեն ստուերաբանութիւնք անբաւականք ի բացատրութիւն ճշմարտութեան մեծի և ամենակարեւորի։ — Փութա՛, անձն իմ, փութա քննել տեսանել, մի՞ արդեօք անինամ քո թողլով՝ խախտեալ ինչ իցեն աստուածադիր հիմունք տաճարին քո, քայքայեալ շինածն և ապականեալ ներքինն և արտաքին. և վաղ վաղ ձեռն արկ ի նորոգումն և ի յարդարումն. գիտելով չափ զի ոչ այնքան մեծ եղեն սուգ և աշխար ի քակտելն և ի հրկիզուլ տաճարացն այնո-

ցիկ յիշեցելոց, որքան մեծ լիցի փրածն և թողած հոգեկա-
նիդ տան. «Եւ էր կործանումն տանն այնորիկ մեծ յոյժ»։
Զի զի՞նչ աղիտալի, անլոյս և անյոյս քան զվայր՝ զոր լքանէ
Աստուած՝ մինչեւ իսպառ. և եթէ արքայութիւն է ուր նայն
բնակէ, ապա և դժոխք՝ ուստի մեկնեալ իցէ։

Արդ զի՞նչ իցէ որ զտաճարս Աստուծոյ ի դարան դիւաց
փոխիցէ։ — Ցայտ է թէ մեղքն։ Մեղք և սրբութիւն ան-
հնարին է այսոցիկ միաբանել, որպէս և ոչ լուսոյ ընդ խա-
ւարի։ Զգուշացի՛ր, ով պաշտօնեայդ Աստուծոյ, եթէ հնար
է՝ և ի ստուերաց անգամ մեղաց և յամենայնէ որ զկերպա-
րան ինչ չարի ունիցի. ոչ գործոց միայնոյ՝ այլ և խորհրդոց
և ցնորից, այլ և ազդեցութեանց և բերմանց՝ որով ճանա-
պարհ և մուտք գործին չարեաց։ Զգուշացիր բովանդակ իսկ
անձին քում. զի եթէ և գուցէ ի քեզ, չնորհիւ Տեառն, մասն
սուրբ, չգուցէ՞ արդեօք և անսուրբ. հարկ է քեզ ամենեւին
սուրբ լինել, որպէս և էր հոգիդ յաւազանին մաքրութեան,
զոր պենազարդել քեզ մնայ պէսպէս լաւութեամբք։ Բայց նախ
նուաճեա զմեղացն առիթս և զբնութիւն սղալանաց, որպէս
զի անսայթաք լիցի յօժարութիւն հոգւոյդ, որոյ քաղաքա-
վարութիւն յերկինս է բնաւորեալ։ Բարձրացո՛ ստէպ զմիտս
ի ստորայնոց աստի յերկնայինսն և յիմանալիս. թեթեւացո
թօթափեա ի սրտէ զգգալիս, որքան և մարթ է. մտրակեա
զմարմին՝ հոգւոյդ խթանաւ. մեռո զնա կամօք զի անկաս-
կած լիցի սորայս կենդանութիւն. և հանապազ հանդերձե-
լոցն խոկմամբ՝ ասա ի սրտէ, «Սուրբ եղիցի անուն քո»
Տէր իմ և Հայր։

Արդարեւ, Եղբարք սիրելիք, զի՞նչ է որ զբազումս ի միան-
ձանց և ի պաշտօնէից Տեառն խոտորեցուցանէ յօրինական
ճանապարհէն. ո՞չ ապաքէն յանպատշաճսն մտաց յածումն
կամ անպատշաճապէս. չյիշելութիւն պարտուց և պաշտման՝
յոր եդանն, և զոր կրել անկ է ցվախճան, և յիշելութիւն
այնպիսեաց՝ որք ոչ թէ միայն չեն պիտանացուք առաջար-
կութեանս մերոյ՝ այլ և ի բաց դարձուցիչք. զի ի սնոտիս
անդր յածեցուցանեն զխոհականիս զօրութիւն, և խոնջ և
տկար թողուն ի վայելուչսն և յ՚օրինաւորս։ Այսպիսիք իցեն
վայրապար հետազօտութիւնք աշխարհի իրաց և անցից,
ընդ աշխարհիկս ընտանութիւնք. կամ ազատ և անպայման

թողուլ զմիտս յով և երթիցէ, գնացք՝ յորում անկարծելիք
յաճախ ընդ առաջ ելանեն երեւոյթք. այսպիսիք և հեռաւոր
քննութիւնք գաղտնեաց բնութեան՝ որք զոչ սակաւս վրի-
պեցս ցին յարարչէն բնութեան, գէթ կապտեն և կարճեն
զժամանակն զոր ի կարեւորացն և պատշաճիցն մեզ անկ էր
ծախել յուսումն. և յանզգաստից իմն զերծուն զչնորհս ամ-
բծութեան, քան զոր չիք ինչ վայելուչ սրտի նուիրելոյ Աս-
տուծոյ։ Թողից ասել և զի հակառակէն, զանկրթութիւն բա-
նականիս մասին, զանմշակութիւն մտաց՝ յետ առաջնոց
վարժից, տգայութեանն և պատանեկութեան. կատարեալ
կամ չափաւոր համարելով զառաջին հասակին ութ կամ
տասն ամաց ուսումն և կրթութիւն. ուր զի դիւրաւ խոպա-
նանան միտք՝ եթէ ոչ ստէպ սրբեսցին ի մոռացութենէ և
յանստոյգ իմացուածոց, կամ ոչ առնուն աճումն ինչ. իսկ
սիրտ դիւրագոյն եւս զառածանի յանկարեւորսն և յանպի-
տանս, եթէ ոչ անդլակի իմն հսկողութեամբ երկիւղի և մա-
նաւանդ սիրոյ աստուածայնոյ՝ ստիպիցի յազնիւն և ի սուրբ.
առանց այսր հսկողութեան կամ զգաստութեան՝ պարապմունք
և պաշտամունք մեր ի կրօնիս՝ փոխին իմն յարուեստս աշ-
խարհիկս և ի գործս վարձկանաց. ուր զի և զանարգագոյն
կամ զխոշորագոյն իսկ սպաս կամ գործ՝ հարկ է ազնուա-
ցուցանել՝ ի մին միայն ուղղելով զդիտումն մտաց, յԱստուած
և ի սրբութիւն անձին. որպէս զի եթէ հասցէ ումեք հարկ
և ի խոհերս աշխարհի շրջել, մտացն առ Աստուած վերաց-
մամբ՝ կարէ և ի տգմի անդ զմարգարիտն պատուական գտա-
նել, և յազտեղիսն իսկ ի բնէ, ըստ մերս ասեմ դատման,
սուրբ առնել զանունն Աստուծոյ։

Այնքան առաւել պիտոյ է զգուշութիւն մտաց՝ որքան զի
միտք են առաջնորդ սրտի, որպէս աչք ձեռին. և եթէ միտք
որ նրբագոյն զօրութիւն է ի մեզ՝ վազ վազ տարուբերի ի
թանձունս և ի ստորայինս, ո՞րքան առաւել սիրտք որ արա-
գագոյն եւս է ի զգալիս զառածանիլ։ Եւ զի ծանօթագոյն
են սրտի հանգամանք քան մտացն, աւելորդ է ինձ յիշե-
ցուցանել զվտանգ հոգւոյ ի վայրապար բերմանց սրտի ի
նիւթաւորս և ի մարմնաւորս. ընդ որս և ընդ հոգին՝ խտրոց
և վիհ արկեալ է մեր զկրօնաւորութիւն։ Այլ աւա՜ղ, զի
բազմաց զաշխարհ համօրէն թողեալ՝ և ի միոյ ի փոքուէ

նորին մասնէ ոչ կարացին անընմբռնելի պահել զսիրտ. սէր կամ զակատումն ինչ առ անձն կամ առ իրս մի, և միոմն այնու զբովանդակն տուժեցին։ Առ ի կատարեալ լինել ոչ զայս ինչ կամ զայն եւեթ, այլ և յամենայնէ հրաժարել պատուիրեաց Քրիստոս առ երիտասարդն, նաեւ յանձնէ։ Ըստ նիւթոյ և ըստ տեղւոյ՝ բազմաց վազու իսկ թողեալ է զայդոսիկ, այլ ի սրտէ՝ զանգիտեմ թէ ոչ բազմաց. կամ թէ թողեալ՝ և յետս ի նոյն ակնարկիցեն, որ է չթողուլ իսկ. իցեն տեղեաւ բացականք, այլ անձկաւ մերձակացք. ըստ պաշտաման՝ ի տան Տեառն, և ըստ յօժարութեան՝ ոչ գիտեմ յորպիսի՞ տունս. հաշտութեան պաշտօնեայք և գժտութեան գրգռիչք. մեռելոտիս գգեցեալ և կերպարանեալ՝ և բարեկենդանութեամբ կաքաւողք։ Այնքան երագ է սիրտ ի գլորել, զի ի վայրկենի կարէ և ի խորագոյն խոհերս թաւալեալ և ընդ աղբ գալ գռեհաց աշխարհի. մանաւանդ եթէ յուլացեալ եւս իցէ յօրրստօրեայ կրթութեանց քահանայական և միանձնական կարգացն։ «Սիրտ սուրբ հաստատեա յիս » Աստուած իմ », հաստատեա խորարմատ յերկիւղ քո և ի սէր, և հոգի ուղիղ նորոգեա հանապազ յանձին իմում. զի մի հասցէ և ինձ հոգւով սկսելոյս՝ մարմնով վախճանել։ — Քանզի եթէ երկու ինչ ասպարիզաց խտրոց իցէ ընդ միտս և ընդ սիրտ, ընդ սիրտ և ընդ մարմին՝ և ոչ կէս չափ։ Եթէ ազնուութիւն վիճակիս և կրթութեանց մերոց թուին իմն հեռացուցանել ի կարգէ բանիցս զայսպիսի խէթ սրբութեան, ոչ ընդ լռութեամբ անցանել ստիպեն զիս մեծութիւն վտանգին, ծանականք անկման սրբազանի անձին, դիւրութիւն գլորմանն, յաճախութիւն առթից և գայթակղութեանց, ապականութիւն աշխարհիս, հովութիւն եռանդեան և նուազութիւն նուիրելոց առ Աստուած։ Ո՞ւր թողից և զայն, զի ահ մեծ էր և սրբոց յայսմանէ, և յոյժ այլազգ դատէին զանձինս առաջի սրբոյն սրբոց։ « Եթէ զանօրէնութիւնս իմ քննես, Տէր, Տէր, ո՞ կա» ցիցէ կալ առաջի քո »։ Եւ զինչ ասեմ առաջի անաչառ տեսութեանն Աստուծոյ. ո՞ կարիցէ և իւր իսկ գիտակցութեան առաջի կալ անպարսաւ. « Ո՞ պարծիցի սիրտ սուրբ » ունել ». ո՞ ոչ ունիցի բազում փաստս երկեղի և զգուշութեան։ Ո՞ յայնքան անզգայութիւն հասցէ, մինչեւ մոռանալ՝ զի ի մեզս յղացաք յանկամս, և ի կամաւորս սահեցաք, որ

չատ և որ սակաւ. և եթէ փայտ դալար առաքինական հանդիսիւք ոռոգեալ՝ չէ անվտանգ ի խանձէ և ի կայծէ, զի՞նչ լինիցի ընդ չորն և զօսացեալ, ընդ նուազեալն և թուլացեալ ի բարեաց մասնէ, յաղօթից, ի պահոց, ի տքնութեանց, ի պահպանութենէ կանոնաց, ի պէսպէս մեռելութեանց, ի սուրբ խոկմանց, յանուշակ սիրոյ աստուածայնոցն, և յանդուլ վաստակոց և պարապմանց, որովք միայն մարթ է խուսափել և թօթափել ի յամենակուիւ մարտէն և մարտնչողէն։ Մերձենայցէ՞ ոք ի հուր և ոչ ջեռցի. կամ ի սառն ձեռնարկեալ՝ և ոչ պաղիցի։

Գիտակցութիւն իւրաքանչիւր զերկուս զայս լու ի լու բողոքէ. եթէ պիղծ և գարշելի յայս Աստուծոյ և մարդկան՝ չիք քան զանմաքրութիւնն. և զի դարձեալ չիք ախտ յոր դիւրագոյն քան ի սա մարթ իցէ գթել. քանզի և դոյզն մի դեգերել մտաց՝ արատ ինքեան բերէ և աճեցուցանէ զվտանգն։ Իսկ ի մեզ երկու եւս ձայնք աւելի լսին. մի, զի երդմամբ և ուխտիւք առեալ եմք յանձին զկուսութիւն. և երկրորդ՝ զի առ անքոյթ եւս պահելոյ զայն՝ օտարացաք յաշխարհէ, թողեալ ի նմին և զօրինաւոր վայելս, զկարեւոր սիրելիս, զհարազատս և զծնողս անգամ, և ասացաք առ Տէր. « Ահաւասիկ մեք թողաք զամենայն և եկաք զկնի քո. արդ զի՞նչ » լինիցի մեզ »։ Այլ որ կարիցէ սեռն սրտիւ ասել զայս ընդ Պետրոսի՝ լուիցէ և զփոխարէն պատասխանին Յիսուսի, զհարիւրապատիկն հատուցման։ Երանի՜ իցէ այնմ՝ որ ընդ հանապազակիր պատանօք սքեմին՝ ունիցի արդարեւ մարմին մեռելակիրթ, զոնեայ այնքան մեռեալ՝ մինչեւ զզուել ի մեղսահամ փափկութենէ. որ զօր ամենայն յառնիցէ որպէս ի գերեզմանէ և մտցէ ի մահիճ իբրեւ ի շիրիմ իւր. որ կեցցէ զօրն՝ որպէս զօրհասն, և համարիցի զգիշեր՝ որոյ չիցէ վաղորդայն. կամ թէ հաւասար իցէ նմա զարթնուլն յայս կամ յայն կեանս։ Իսկ որ ոչն համարձակի զայս խոստովանել, կամ թէ և ծանուցս լսէ ի գիտակցութենէ, դարձցի և խոկասցի ի պարտս իւր. յիշեսցէ վերստին զանբիծ սրբութիւն Աստուծոյ՝ որում նուիրեցաւն. ածցէ զմտաւ զխոստումն առ առաքինիս՝ զոր աստէն և զոր ի հանդերձեալսն. աստ զխաղաղութիւն սրտի և զպարտութիւն մտաց, քան զոր չիք բազձալի ի կեանս. և անդ՝ զկալն սպիտակազգեստ և հուպ առ

աթոռով գառինն անարատի, ընդ այնոսիկ՝ զորոց ասացաւ ի տեսլեան Յովհաննու, եթէ «Սոքա են... կուսանք, և զկնի » երթան գառինն՝ ուր և երթիցէ»։ Հայեսցի նա ընդ գեղեցկութիւն արուսեկին առաւօտուց, և ընդ տգեղութիւն արուսեկին անկելոյ ի բարձանց. հայեսցի ընդ շուշանն՝ յոր սխրացաւ ինքն Տէր Յիսուս, և ապա ընդ տիղմն և գայռ՝ որ օրինակ է պղծութեան։ Յիշեսցէ որչափ ինչ ուսաւ ի գրոց սրբոց և ի Հարց անտի, և ի վարուց առաքինեաց, և զպատուհաս անզգաստիցն և անկղիտացելոց, զողջոյն իսկ աշխարհի ի հուր և ի ջուր դատել և այլափոխել՝ վասն այսր չարի, և զյաւիտենական տանջանսն, յոր առաւել այսու ախտիւ թաւալին մարդիկ՝ քան թէ այլովքն. և ոչ եւս մեռանի որդն նոցա մեղսաբոյծ, և ոչ եւս չիջանի հուրն՝ զոր ցանկութեամբ վառեցին և ցասմամբն Աստուծոյ բորբոքեցաւ։

Եթէ այնքան ահեղ եղեն պատուհասք կամ վրէժք Աստուծոյ ի մարմնասէր մարդիկ աշխարհի, զի՞նչ արդեօք կարծելի էր եթէ մեղուցեալքն այնոքիկ էին քահանայք և կրօնաւորք... իսկ եթէ գոցի՞ն և այժմիկ յայսոցիկ սրբազան կարգաց ոչ ըստ պատշաճին պարկեշտացեալք, որպիսի՞ դատաստան հասցէ նոցա, թէ ոչ և աստէն կենօք, այլ յետ կարճառօտ և աւաղելի կենացս։ Ո՞չ ապաքէն դիւրագոյն լիցին դատաստանք Սոդոմայ և Գոմարայ և Նոյեան դարուն՝ քան մարդոյն այնորիկ։ Եւ զի բազում անգամ դժուարին է հոտոյ անմաքրութեան անզգալի մնալ և ի մերձաւորաց, որպիսի՞ զզուանս ազգիցէ ընկերաց և աշխարհայնոց՝ հրեշտակացեալն այն աստիճանաւ և զգեստուք, և գարշեցեալ՝ վարուք։ Ո՞հ, ոչ միայն մեռեալ է այնպիսին և նեխեալ, այլ և զկենդանատուն ամենեցուն, եթէ իշխեցից ասել, ընդ իւրում դիականն ընդ քարշ տանի, եթէ յանդգնիցի և ի սեզան քահանայագործութեան ելանել անբաւական պատրաստութեամբ չարաբաստ քան զպժգալի գիւտ բոնաւորին, որոյ բազում և պէսպէս հնարս տանջանաց հնարեալ ի վերայ քրիստոնէից, յետնադոյն բնաւից հնարեաց՝ կապել զնահատակն կենդանի ընդ դիական նեխելոյ, և թողուլ զի կրկնակի մեռանիցի... Ներեսջիք, մաքրասէր ունկնդիրք, ընդ զարհուրելի բանքս, զոր օրինաւոր համարեցան ասել և ողջախոհք՝ առ ի զգուշութիւն, եթէ և մի միայն պաշտօնեայ անարժան համարէին

եղեալ կամ լինելի։ Եւ իբրեւ այնպիսում հասեալ անբաղդ բաղդի և ժամանակի՝ ողբային սուրբք զժամանակ իւրեանց։ Ոչ է և մեզ անդէպ զմերս ողբալ, յորում այսքան տեսանեմք գաղջութիւն և ցրտութիւն, անշքութիւն եկեղեցեաց, բարձումն միանձնական կրօնից, և որ չար եւս է՝ թուլութիւն պաշտօնէից Տեառն, և գայթակղութիւնք իսկ ի տանէ նորին երեւեալք։ Խցեն իցեն և աշխարհական մարդիկդ մախացողք և ատեցողք ուխտաւորաց, անկրօնք և աստուածամարտք. այլ ոչ հեռանայ Տէր ի սրբութենց իւրոց՝ եթէ ոչ հեռասցին պաշտօնեայք իւր ի սրբութենէ պաշտաման իւրեանց։ Խիթալի է և մեզ վասն մեր, որք ոչ ունիմք որպէս զայլսն՝ արտաքին դիմամարտս, այլ եթէ վտանգիցիմք՝ մեզ ինքեանց և ոչ այլոց գրելի է վնասն։... Մի ոք երբեմն փախուցեալ էր յերեսաց Տեառն, և վասն միոյն ամենեցուն ողբ ի նաւին՝ վտանգ կայր ընկղմման. վասն միոյն ոչ դադարէին տարերք ի մրրկելոյ և ի ծփելոյ. իսկ եթէ և բազմաց յանցուցեալն էր՝ զի՞նչ արդեօք լինէր։ Քանի՞ցս միոյ ուրուք յանցուած՝ զողջոյն տուն և զչէնս, և զմիաբանութիւնս և զպետութինս իսկ քակեաց... Քաջ իսկ այսոցիկ տեղեակք եմք ի սուրբ և յարտաքին դպրութենց։

Այլ զի ի չինել ժողովեալ եմք մեք աստանօր և ոչ ի քակել, ի չինել նախ զանձինս, և ապա օրինակաւ վարուց և բանիւ զայլս, փոխանակ դժպհի տեսլեան անարժան պաշտօնէի, առցուք մեզ օրինակ զզգօն և զառաքինին, որ սիրէ զսրբութիւն իբրեւ զլոյս աչացն և առաւել իսկ քան զկեանս մարմնոյ. յորոյ և ի դիմաց իսկ փայլէ հոգւոյն շնորհ. և թէպէտ մարմին մաշեալ է ճգնութեամբ և մեռելութեամբ, համայն և այնպէս վարդատեսակ իմն են կերպարանք և գրեաթէ հոտ անուշութեան բուրէ ի բարուցն. անխռով և զուարթ մտօք, բերկրեալ քաղցր ձայնիւ բնակեցելոյն ի սրտի իւրում, որպէս յառագաստի սիրոյ՝ փեսայի հոգւոյն՝ Տեառն Յիսուսի։ Ոչ եւս նաւ որ զնա կրէ՝ վտանգի, թէպէտ և ամենայն դղրդիցին տարերք և համաշխարհական հասցէ սասանութիւն, այլ որպէս յայնմ նաւի՝ յորում Յիսուս ննջէր ի վերայ բարձի, անվրդով անցցէ նա ընդ ալիս և ընդ այսս, ոչ կարօտելով ափին կամ նաւահանգստի, յինքեան կրելով զբուն հանգիստն, ըստ ասացելումն, եթէ Արքայութիւն Աստուծոյ ի

ներքս ի ձեզ է. նմա ամենեւին լոյս է և ի բարձրագոյն մթութեան աշխարհի, քանզի սրբութեամբ սրտին զԱստուած տեսանէ. սրբութեամբ զՍուրբն սրբոց յինքեան հանգուցանէ, և որպէս յերկինս՝ սուրբ առնէ զանուն նորա և ի վերայ երկրի։

Սիրեսցուք զսրբութիւն, Եղբարք իմ սիրելիք. սիրեսցուք զսրբութիւն անձանց. սա միայն է օրինաւոր սէր անձին. պահեսցուք զգուշութեամբ զաւանդեալն ի Տեառնէ աւանդ մաքրութեան ի խեցեղէնս ամանի. փախիցուք և ի շնչոյ անգամ հեշտաւոիթ վիշապին, որ աղօտացուցանէ զպայծառութիւն սրտից։ Շինեսցուք ի վերայ հիման տաճարին արկելոյ ի Տեառնէ՝ ոսկի և արծաթ մաքուր և պատուական. մի՛ յարդ, մի՛ եղէգն և մի՛ այլ ինչ անարգագոյն. որպէս զի ի մատչել հրոյն փորձողի՝ անարատ և անաղարտ կացցէ շինուածս մեր, այլ և առաւել պայծառասցի ի փորձոյ անտի։ Ածցուք ստէպ զմտաւ զխրատ և զօրինակ աստուածուսոյց Հարց և վարդապետաց, զմիանձանց և զկուսանաց, ի ստացուած և ի պահեստ այսմ ուղղութեան որպէս զի և հետեւելով նոցին շաւղաց՝ հասցուք ի հանուրց ժամադրութիւնն։ Յուսեսցուք մանաւանդ զօժանդակութիւն ամենամաքուրն յեզականացս Կուսի և Մօր Աստուծոյ։ — Այո, դու ինքնին՝ կրկին թեւօք մայրութեանդ և մաքրութեանդ, խնամարկեա յորդեգրեալքս ի քեզ, ո՞վ ամենասրբուհի. և մի՛ թողուր և մի իւիք արատաւորել սրտից, որք փոխանակ գրկաց քոց՝ դգուեն զՑիսուս քո։ Ա՛ծ զմեզ պարիսպ ամուր՝ զխոնարհութիւն քո, և դէտ անքուն՝ զսէրն աստուածային. որովք սուրբ պահեսցին անձինք նուիրելոցս ի պաշտօն քո և Որդւոյ քոյին. և ընդ նմին սուրբ եղիցի ի մեզ և անուն Հօրն երկնաւորի։

Գ

ԵԿԵՍՑԷ ԱՐՔԱՅՈՒԹԻՒՆ ՔՈ ԱՐԺԱՆ Է ՊԱՇՏՕՆԷԻՑ ԱՍՏՈՒԾՈՅ՝ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՄԲ ՇԱՀԵԼ ԶՄԱՐԴԻԿ ԵՒ ՆԱԽ ՋԱՆՁԻՆՍ, ՅԱՐՔԱՅՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ

Վայելուչ է որդւոյ ազնուականի հոչակել զանուն և զհամբաւ հօր իւրոյ. մանաւանդ յորժամ կանխեալ հոչակեալ իցէ նա և առ օտարս. որպէս և երախտագիտ մարդոյ արժան է յիշել ստէպ զերախտաւորն. և պաշտօնէի՝ հաւատարմութեամբ և փութով կատարել զկամս տեառն իւրոյ և բարձրացուցանել զպատիւ նորա։ Այսոքիկ առաւելագոյն եւս անկ են որդւոց և պաշտօնէից Աստուծոյ, որ հայր հարանց, տէրն է տերանց, և «որոյ թագաւորութեան ոչ գոյ վախճան»։ Ամենայն արարածք, նուաճեալ կան ընդ ձեռամբ նորա, ի բարձանց երկնից մինչեւ ի ներքին սանդարամետն. և որք սակաւ մի տեսողք են զօրութեան նորա՝ վկայեցին «զի և հողմք և ծովք հնազանդին սմա»։ Գերակատարքն յէակս հրեշտակացն դասք՝ այնպէս անվրէպ ասին ի սպասու նորա, որպէս ճառագայթք անմեկինք ի ծագման լուսոյ. և անկատարքն՝ զուրկք ի բանէ և ի կենաց՝ թէ որքան անվրէպ կատարեն զօրէնս տիեզերական կարգին, զօր ամենայն յամենայն ժամ տեսանեմք և աքանչանամք։ Միայն միջադաս էիցս՝ մարդս՝ խառնուրդ հոգեղէն և հողեղէն, թերակատար երեւի, ի վերին երեսս, և յաճախ օցտէ ի չաւղէն յոր կարգեցաւ գնալ, և յախուռն մխի ի սահման որ ոչ է իւր. մերթ ի վեր քան զչափն ճգնելով ամբարտաւանութեամբ և վայրապար հետազօտութեամբ՝ կործանի ստորեւ քան ուր կայրն, և մերթ յանբանիցն խոնարհեալ անկեալ ի բարս՝ ստորնագոյն եւս գտանի և մինչեւ յանդունդս խորասոյզ։

Բովանդակ տնտեսութիւն կրօնական կենաց ճգնի ուղղել զգնացս մարդոյ, հաստատել զնա յարարչագիր կարգին. և զարմանալի իմն նոր զօրութեամբ, զոր Քրիստոս եցոյց, խո-

նարհութեամբ ասեմ, բարձրացուցանել որքան և թեւք սիրոյ սրտին բաւեսցեն տանել։ Յայս սակս եկն Տէր յաշխարհ, կրեաց, մեռաւ, յարեաւ և զեկեղեցի իւր հաստատեաց. ուստոյց մարդոյ նուաճել զապստամբութիւն ըղձիցն և կրից, առնուլ լուծ մի փոքրոգի և հանդարտել ընդ հզօրին ձեռամբ. որով և կալ ընդ ամենիշխան արքայութեամբն Աստուծոյ, և լինել « Յերկիր խաղաղութիւն և ի մարդիկ հաճութիւն »։ Արքայութիւնն Աստուծոյ ոչ բառնի այսուհետեւ յերկրէ, զի Քրիստոս վերանորոգեաց. այլ, աւա՜ղ, զի դարձեալ ապստամբեալ բազմաց՝ ասեն, « Ոչ կամիմք զթագաւորել դորա ի վերայ մեր։ Եւ զի՞նչ առնիցէ թագաւորն համաշխարհական. առաքիցէ՞ սպասաւորս կոտորել զվտարանչեալսն, հուր յերկնից իջուցանել և կռփել զպընդացեալ գլուխսն, որպէս ի դէպ թուէր առնել Որդւոցն Զեբեթայ։ — Ո՛չ այդպէս, ասէ Յիսուս. ո՞չ գիտէք որոյ ոգւոյ էք դուք։ Առաքել առաքէ սպասաւորս, այլ սպաս սիրոյ ունելով. զհետ սարտուցելոցն պնդադեսպանս արձակէ զպաշտօնեայս խաղաղութեան աւետարանին պատգամօք. քարոզս սփռէ ընդ ամենայն կողմանս երկրի և յամենայն անցս ճանապարհաց, ոչ սպառնալեաց, կոտորածի և ստրկութեան, այլ հաշտութեան կենաց և ազատութեան. սիրով և խաղաղութեամբ կամի թագաւորել ի վերայ մեր և արքայորդիս առնել զամենեսին։

Եղբարք սիրելիք, պաշտօնեայք և պատգամաւորք նորա եմք և մեք. խնդրակք և կոչնակք որդւոց Աստուծոյ զարտուղելոց և չփոթելոց. կամ յայտնաբարբառ քարոզութեամբ և առաքելութեամբ, կամ անմռունչ աղօթիւք, պատարագօք և նուիրական կրօնաւորութեամբ. ամենայնիւ այսոքիւք պարտ և պատշաճ է մեզ հրաւիրել հաստատել և ընդաճել զարքայութիւն Աստուծոյ մերոյ ի վերայ երկրի. ի միտս և ի սիրտս մարդկան ճշմարտին ծանօթութեամբ, և յոգիս՝ հանդարտութեամբ կրից. որպէս զի՝ միով գեղեցիկ բանիւ սաղմոսերգուին « Խաղաղութիւն և ճշմարտութիւն համբուրեսցին »։ Յայնժամ աներկբայ ստուգութեամբ « Եկեսցէ արքայութիւն քո », ո՛վ Տէր, ի վերայ երկրի որպէս յերկինս է։

Որպէս առ ի սուրբ առնել զանունն Աստուծոյ ի վերայ

երկրի՝ կարեւոր ցուցաւ նախ զանձն սուրբ առնել, այսպէս և որոց անկ իցէ տարածանել զարքայութիւն նորա, հարկ է նախ զանձինս նուաճել ի նոյն. հասու լինել քաջ ճշմարտութեան բանիցն Աստուծոյ, և ցածուցանել զամենայն աղմուկ կրից որ յինքեանս. զի ոչ միայն անդէպ՝ այլ և անհնար է աղմկաւ զաղմուկ զիջուցանել՝ որպէս հրով զհուր. և ոչ կուրի՝ կուրաց առաջնորդել։ Ապա բազում ջանիւ և մտադիւր պարապմամբ պահանջիմք ուսանել զկամս և զպատգամս թագաւորին մերոյ երկնաւորի, զաւետարանն Յիսուսի, զվարդապետութիւն եկեղեցւոյ. ընդ նմին՝ խոկալ և կրել ի վարս վարդապետին միայնոյ և աշակերտաց նորին, որպէս զի կարող լիցուք ոչ միայն բանիւ, մանաւանդ ի տկարանալ սորին ի բերանս մեր, այլ յաւէտ և օրինակաւ վարուց ընտելացուցանել զմարդիկ ի լուծ և յօրէնս Քրիստոսի։ Ուսումն մեծ և կարեւոր և հանապազորդեան զկեանս ողջոյն. Քրիստոս զամս 30 պատրաստեցաւ առանձինն ի պաշտօն իւր՝ և զերիս միայն ամս կատարեաց զնոյն։ Եւ զինչ ի տասնապատիկ լռութեան ժամանակին գործէր։ Մնայր ապաքէն չափոյ իրիք լրման, այն յորում բնակեալ էր լրումն աստուածութեան. որոյ ուսեալ ինչ բնաւ չէր, ըստ ռամկին դատման, և զամենայն գիտէր։ Եւ եթէ ի գիրս թարթափէր ոչ, սակայն ո՞ կարիցէ ժխտել թէ չաղօթէր և հանապազ, և այնու օրինակաւ մարզել և զգիտնագոյնս անգամ յանուանեալ վարդապետաց՝ ի պատրաստութիւն քարոզութեան. որպէս և յետոյ յայտնապէս իսկ ղերկոսին եւս պատուիրեաց մեզ հրահանգս. « Յամենայն ժամ յաղօթս կացէք. — Փնտեցէք » զգիրս »։

Յաղօթս կալ ստէպ՝ բազում անգամ և բանիւ և օրինակաւ ազդեաց Քրիստոս. իբրեւ առաջին և հզօրագոյն հնարս և պարտս պաշտօնէից իւրոց, աւետարանչաց բանին ճշմարտութեան և խաղաղութեան. զի այն է նախընթաց և յարդարիչ մտաց և քարոզողին և լսողին զբանն, առաջնորդին և առաջնորդելոյն. և առաջնոյն մանաւանդ յոյժ կարեւոր և անհրաժեշտ. զի հնար է միոյ տեսողի տանել զբազմութիւն կուրաց ի դիւր և յուղիղ ճանապարհ, որպէս և կուրի միոյ առաջնորդի տանել զնոսին ի ստերիւր և յանել պողոտայ։ Գիտութիւն աչք են մտաց և հոգւոյ. այլ աստուածատես լի-

նին աչք՝ ի հիւթոյ աղօթից, և նովին սփռեն զլոյս և ի կա-
րօտեալսն ի լուսոյ։ Աղօթից օժանդակութեամբ մարթ է ու-
սանել և գիտել բազում ինչ զոր և գիրք չբաւեն ուսուցա-
նել, այլ ոչ է հնար առանց առնլոյ զհամ նորին քաղցրու-
թեան՝ ասել ցայլս՝ « ճաշակեցէք և տեսէք զի քաղցր է »։
Այլ է գիտութիւն գրոց և այլ գիտութիւն սրբոց. բազումք
իցեն աչակերտք գրոց և հմուտք դպրութեանց և ուսմանց
այլ ոչ խորամուխք աստուածայնոց տեսութեանց, վասն զի
ոչ կանխեցին և կանխեն աղօթիւք և պահօք խնդրել լոյս ի
հօրէն լուսոյ. կամ շատ համարեցան զառաջնասլարգեւ ինչ
չնորհ, և ոչ անձկան « լուսով երեսաց քոց՝ տեսանել զլոյս »։
Առ ի ճանաչել զճշմարտութիւնս պիտի կանխակալ ինչ ճըշ-
մարտութիւն։ Աղօթք՝ որ և ըստ օրինաց հանապազօրեայ
կրթութիւն և ճաշակ է պաշտօնէի Տեառն, ոչ միայն զսիրտն
կակղէ և ամոքէ, այլ և զմիտսն սրէ և սրբէ. զսա ճշմար-
տութեամբ և զնա խաղաղութեամբ հաւասարեալ համբուրե-
ցուցանէ. խաղաղութիւն ի սրտի, ճշմարտութիւն ի միտս զի-
րերօք պատեալ, իրերօք բարգաւաճեալ՝ ամենայնի տոկան,
ամենայնի յաղթեն, զի անմարթ է նոցին չունել և զերրորդն
մեծ օժանդակ՝ զսէրն զօդ կատարման։ Ոչ է հնար ճրագի
ճաճանչել ի գիշին տեղւոջ. և ոչ ճշմարտութեան ի մրրկեալ
և ի տղմային սրտի. թէպէտ և յորդ և յոյր իցէ ճրագն և
իւղալիր լապտերն, այլ տամկութիւն վայրացն, ցնդմունք
թանձր թանձր գոլորշեաց և սեւացեալ պարիսպք չրջափակք
խափուցանեն զներգործութիւն լուսոյն։ Իսկ զի՞նչ լինիցի
այնմ ճրագի՝ որ և ընդ գրաւանաւ ինչ կացցէ մոլեկան կրից։
Հարկ ուրեմն է յարդարել նախ զսենեակ լուսաւորութեանն,
զմիտս, աստուածազարդ գիտութեամբք և լաւութեամբք. որ-
պէս զի եթէ և բնատուր հանճարն նիազ իցէ՝ չուրջակայ
պաղպաջունք և բիւրեղք և ապիկիք և հայելիք՝ աճեցուսցեն
զնչոյլն։

Պարզաբար ասել. աւետարանչի արքայութեանն Աստուծոյ,
հարկ է նախ խսպառ նուաճել զանձն յօրէնս թագաւորին
երկնաւորի. աթոռակից իսկ գոլ նմին հաշտութեամբ որպէս
զի և յառաջ իսկ քան զբերանն՝ բարբառեսցին դէմքն, և
յառաջ քան զլեզուն՝ քարոզեսցէ անձնն բովանդակ. կանխեսցէ
օրինակն քան զբանն. և մինչչեւ պատգամաց ի նմանէ սփռեալ

տարածեսցի համբաւն բարի. մինչչեւ կարկառեալ զճաշակն՝
բուրեսցի հոտ անուշութեան։ Խաղաղական կեանք նորա ընդ
անձին և ընդ ընկերսն՝ կանխեսցեն յարդարել զճանապարհ՝
յոր առաջնորդելոցն է ժողովրդեան. և հեզութեամբն կակ-
ղեսցէ զանդս սրտից՝ յոր սփռելոց է զբանս հեզոյն Յիսուսի։
Այսպիսի խնդրէ և սա ինքն Տէր Յիսուս պաշտօնեայս աւե-
տարանի իւրոյ. վառեալս հոգւով նախանձու և սիրոյ իւրոյ,
զի զնոյնս և ծաւալեսցեն յոգիս աշխարհիկ մարդկան. սիրել
յամենայն սրտէ զթագաւորն՝ զոր կամիցին սիրելի առնել և
ապստամբաց անգամ և անծանօթից։ Յամենայն ժամ կազմս
և պատրաստս գտանել ի պատգամաւորութիւն, որպէս սուր-
հանդակք քաջագօտիք ի դրունս արքունեաց, և որպէս երի-
վարք արագագնացք ըստ ձեռանէ նոցին, եթէ հասցէ նոցին
հրաման երթալոյ և եթէ ոչ. միշտ ճրագունք վառեալք, և
կօշիկք յոտս, ըստ Տեառն բանի, զգաստք ի տուէ, հսկողք
ի գիշերի. և միով բանիւ, լինել ճշմարտիւ ճրագ անխափան
և աշտարակ բարձրակառոյց՝ զի յակն անկանիցին՝ յորոց ի
պէտս և կարգեալ են, ի լուսատու լինել և յամուր ապաս-
տանի։

Դ

ԵՂԻՑԻՆ ԿԱՄՔ ՔՈ, ՈՐՊԷՍ ՅԵՐԿԻՆՍ ԵՒ ՅԵՐԿՐԻ

Փրկիչն մեր և վարդապետ՝ որ զամենայն պէտս հոգւոց
մերոց համառօտեաց ի հակիրճ աղօթսն՝ զոր ուսոյց աշակեր-
տացն մատուցանել առ Հայր, թուի ինձ և զհամառօտն զայն
բովանդակեաց ի մի յայս սուղ բան. « Եղիցին կամք քո ».
և իւրով իսկ օրինակաւ հաւաստեաց զայն յորժամ յամենա-
ղէտ տագնապի մարդկային բնութեանն, առաջի ունելով զար-
հաւիրս և զպատուհասն մօտալուտ որ գալոց էր յիւր վերայ
ի քաւութիւն պարտեաց ազամածնացս, և արդէն իսկ ան-
հնարին խռովութիւն սրտին զարիւնն քրտնակայլակ ընդ թա-
ղանթս դիմացն ծակոտեալ արտաքս թորեցուցանէր, տկար
մարմնով և յօժար հոգւով զայս եւեթ բան ասաց, « Հայր

» իմ. ոչ իմ կամք, այլ քոյդ եղիցին »։ Եւ այնպէս եւ զանձն ի մատնիչն և ի դահիճս, ի խաչ և ի մահ։ Այսպէս ի գլուխ ել փրկութիւն մարդկան, որ սկսաւն այլով ինն զարմանալի արտասանութեամբ սոյն բանի՝ այլոյ սքանչելի անձին. կոյս էր նա անփորձ և անաշխարհիկ. լուաւ երկուս իրս անեղանելիս ըստ ծանուցեալ օրինաց բնութեան և շնորհաց. ծնանել կուսութեամբ և զՈրդի Աստուծոյ ծնանել. և իբրեւ ծանեաւ յաստուածուստ գոլ զպատգամն, փութացաւ ասել « Եղիցի ինձ ըստ բանի քում ». և անդէն և անդ ծնաւ ի նմա ծնունդն յաւիտենական և ծագումն կենաց հոգւոց մերոց։ Յերկոսին յայսոսիկ դաւանութիւնս աստուածայնոց կամաց, յերկոսին Եղիցիքս, ծրարեալ է քաղաքավարութիւն աշակերտաց Յիսուսի, իբրեւ երկեակ կողմանք զարմանալի տրփի՝ յորում եղեալ կայցէ միակն մարգարիտ։ Եղիցի բերկրական և Եղիցի տխրական. խոստումն կուսական տուեալ առ աւետաբերն Գաբրիէլ, և խոստումն զոհական առ հրեշտակն մահագոյժ։

Երկու այս եղիցիք պիտոյ են մեզ, Եղբարք սիրելիք, հեռեւոզաց կուսութեամբ գերագունին կուսից, և հրաժարական կենաց՝ չարչարակիրն Յիսուսի։ Եղիցին կամքն Աստուծոյ ի հաճոյականսն մեզ, զի անարատք իցեն ի կամաց մարմնոյ. եղիցին և յանհամբոյրսն բնութեանս, զի մի նկուն լիցի հոգիս։ Եւ զի այս երկու կիրք հանապազ ներգործեն ի մեզ, հանապազ և մեք յեղյեղեսցուք զԵղիցին. և այնպէս ստէպ և յաճախ, որպէս զի երկոցուն եւս ի մի խառնել, և որպէս մի կամք են յԱստուած, մին այն եղիցի և ի մեզ. և եթէ հնար է՝ ոչ եւս ընտրեսցի որ քաղցրն և որ դառն իցէ. թէպէտ և զերկաքանչիւր եւս հարկ իցէ առնուլ ճաշակ։ Քանզի և ոչ զամենարջանիկ Կուսին հաւանութիւն այլազգ համարիմ. որ թէպէտ առանց երկանց ծնաւ զհրաշալի ծնունդն, այլ սուր ցաւոց էանց, և որպիսի՞ ցաւոց, ընդ սիրտն ամբիծ և զողորիկ. և գիտաց զի ոչ լիցի ազատ ի վշտաց երկրի և պանդխտութիւն Աստուծոյ ի սմա. և եթէ չիցէ յանդգնութեան ասելս՝ խորշէր ինն և չիկնէր՝ զի սերմն անմահութեան ընկալեալ ի Հոգւոյն Սրբոյ, պատեան մահկանացու տայր յիւր մաքուր արենէն և մարմին չարչարելի՝ Էակցին Աստուծոյ։ Այլ և ոչ Քրիստոսի ամենադառն բաժակ՝ անմասն էր

ի մխիթարութենէ, վասն Հօրն հաճութեան և մերս փրկութեան։ Այլ որպիսի և իցէ սկիզբն յանձնառութեան կամաց աստուածայնոց՝ հարկ է թէ ի քաղցրութիւն յանգեսցի. զի որ ինչ յԱստուծոյ է՝ բարի է. Աստուած՝ հայր ամենայն մխիթարութեանց։ Ապա՝ թէ և դժպհի թուիցի մարմնոյս՝ ընկալցուք յօժարութեամբ հոգւոյ և մեք զառաջարկեալս յԱստուծոյ մեզ, որք և առ յապահովի եւս կատարել զկամս Աստուծոյ՝ խոյս տուեալ յաշխարհէ՝ եկաք ի զերծ տեղիս յայս. և եթէ թողեալ իսկ է մեր ստուգապէս զաշխարհի հեթեթանս և ճաշակս՝ դիւրին լիցի ընդունել զԱստուածայինսն որպիսի և թուիցին զառաջինն։ Հաւանեսցուք ամենայն իրօք, նախ, զի անհրաժեշտ պարտք են մեզ կատարել զկամս Աստուծոյ. և ապա քննեսցուք, թէ զի՞նչ է որ կարէ խափանել զմեզ ի կատարմանէ պարտուցս. կամ ո՞րպէս մարթ իցէ լծակցել զաստուածայինն ընդ մարդկայինս կամաց, որպէս զի եղիցին յամենայնի կամք Աստուծոյ որպէս յերկինս և յերկրի։

Եթէ օրէն էր զբան ինչ անուանել և կարեւոր և աւելորդ՝ թերեւս այս ճառ էր, ասպացուցի հարկի հետեւելոյ կամացն Աստուծոյ. քանզի և հեթանոսաց անգամ ծանօթ էր հարկս, գոգջիր թէ և յանբանից ոչ հեռի, այնու զի և յանգէտս կատարեն զարարչագիր օրէնս։ Այլ զի քաջածանօթ է մեզ յօրինակէ և ի փորձոյ ստահակութիւն մարդկայինս բնութեան, որ և ի սկզբան անդ լինելութենն և յամենեսեան փափկութեան դրախտին ոչ հանդարտեաց կալ ընդ երկար ի կամս Աստուծոյ, այլ օտարին սադրանաց լսող լեալ, և իւրոց ընդվայրաքնին աչաց հետեւող, աւելորդ ցանկութեամբ զչատն և զբաւականն կորոյս, և ի մեղս և յապստամբութիւն սերեաց զազգ մարդկան. ամենեքին ծնաք ոչ միայն ապերջանիկք, այլ և ի վտանգի կորուսանելոյ իսպառ զերանութիւն։ Բազում երկիւղիւ և զգուշութեամբ քննել արժան է և մեզ, մի՞ արդեօք և ի սրբազան վիճակիս զԱստուծոյ կարծելով կամս՝ զմերն ինչ կատարիցեմք. զի և զգաստից և առաքինեաց պատահէ ըմբռնիլ յայս պատրանս, թոզ թէ անզգաստից և ոչ բռնաբարողաց զանձինս։ — Ո՞չ ապաքէն յայս զթեմք յանցանս բազում անգամ՝ կամ յանհասսն մըտաց մերոց ձկտելով և կամ յոչ կարեւորսն, և ապա կամ

տխրիմք կամ քրթմնջեմք թէ ընդէ՞ր այսպիսի իրք եղեն կամ պատահեն. իբրու եթէ չէր պարտ լինել իմիք՝ որ ի վերքան զմիտս մեր, կամ ոչ ըստ հաճոյից մերոց իցէ. կամ թէ մեզ ճնայր յարդարել զտիեզերական օրէնս, շարժել զամենեցուն միտս, սիրտս և լեզուս. մինչ և զմիտս և զսիրտ մեր անգամ չկարեմք ի չափու պահել, գուցէ և ոչ զաչս և զբերան՝ ըստ պատշաճին բանալ և փակել։ Եւ եթէ առաքինեաց եւս անձանց պատահէ այսպիսի փորձութիւն, վարանք ի վերայ դատաստանաց Աստուծոյ և տնտեսութեան կենաց և գործոց որ լինին յաշխարհիս, և չհանդուրժեն միտք անշարժ և անընդոստ կալ, թող ապաւինեսցին յահ և ի սէրն Աստուծոյ, և բուռն ի նոսին հարեալ բարձրասցին ցոր վայր կարեն, փորձեսցեն և զիտասցեն, զի ոչ է երկրաւորաց ընդ երկար յածիլ յերկինս և ի վեր քան զերկինս. և բազում այն է՝ զի խոնջք և անչահք դարձցին անդրէն ի վայր, շատ է թէ և ոչ զահավէժ անկմամբ։ Պատկառանօք եւեթ մարթ է սակաւ մի թեւածել յայսպիսիս, և դառնալ ընդ կրունկն և ասել. « Բարի է զի խոնարհ արարեր զիս ». և յոր իմանամս և յոր ոչ՝ Եղիցին կամք քո, Տէր. զի չիք ինչ որ եղեալ է կամ լինիցի՝ առանց իմաստութեան քո. և դու գիտես զամենայնի վասն էրն, որ զամենեսեան քննես և ամենեցուն անքնին ես։

Իմաստութիւն և բարութիւն Աստուծոյ, ըստ գեղեցիկ խորհրդածութեան վարդապետի ուրումն իցեն երկու օղամանեակքն՝ յորս ի դէպ է բուռն կարկառել, պնդապէս ունել և հանդարտել, յորժամ ոչ կարիցեմք զմիջնաչար յօդս մանեկացն նշմարել, որովք զարմանալիքն և անհասք առ ի մէնջ՝ շաղկապեալ կան ի հիւսուած նախախնամութեան Աստուծոյ, որ միշտ զբարին դիտէ, և տայ թոյլ չարեաց և գայթակղութեանց գալոյ, յորոց այլ ինչ ազգ բարիս վերաբուսուցանէ։ Ո՞վ խորք անքնին մեծութեան և գիտութեանն Աստուծոյ։ Խոնարհեսցուք ընդ Յովբայ առաջի նորա և խոստովանեսցուք, « Ես ոչինչ մի եմ. զի՞նչ տաց առ այդ պա- » տասխանի, բայց եթէ ափ ի բերան լինիցիմ »։ Զափաւորեսցին միտք մեր աստանօր՝ հանգոյն թեւաւորաց արգելլոց ի վանդակի, մինչեւ հասցէ ժամանակ և տեղի ազատ թռչանաց, և մի նմանեսցուք փոքրրոգեացն այնոցիկ թռչնոց՝ որք

վակժոյժք ազատութեան՝ բաղխին ընդ վանդակապատ արգելանն և ուշաթափ անկանին։ Քննել զայն կարեւոր է՝ որ պարտքն են և վասն որոյ համարս իցեմք տալոց. զոր խիղճ մտացն թելադրէ և ոչ հեշտն։ Զի՞ փոյթ է քեզ, ասէ Առաքեալ, թէ դա զայդ և միւս զայն գործէ. « Իւրում Տեառն » կայ և անկանի ». դու երթ և ի քում պաշտաման, ի քում կարգի, ի քո պարտսն կաց հաւատարիմ. զքեզ քննեա և զայլս թողեալ հանուրց Քննողին, ասա՝ Եղիցին կամք քո։

Կայ իսկ քեզ առանձինն, Եղբայր սիրելի, բազում ինչ քննութեան և զգուշութեան, զի ոչ վայրապար ինչ հոգով թողեալ զաշխարհ՝ ապաւինեցար ի վանս. յորում դարձեալ ոչ գտցես խորշ ամենեւին աներկեւան և անքոյթ. քանզի վտանգք հոգւոյ և փորձութիւնք ամենանուրբք են. և թէպէտ հանապազօր յոտս սեղանոյ Տեառն թաւալիցիմք՝ իշխէ իսկ չարն և յայն սողոսկել սրբազան վայր. մանաւանդ թէ ոչ նա՝ այլ մեք ինքնին տանիմք ընդ մեզ զկամաւոր կամ զանզգոյշ չարիսն կռուեալս ի մեզ. և թէ լոկ միայն զարտաքին գրունս զգայարանաց փակիցեմք՝ և ոչ այնու ինչ օգտիցիմք, յորժամ ի բաց թողեալ իցէ զներքինն. զի ի ներքուստ անտի առաւելապէս ծնանին փորձութիւնքն, կասկածն, թերահաւատութիւնն, թուլութիւնն և վհատութիւնն, զի թողից զայլս յիշել զխոշորագոյնս և զթանձունս. այլ որ և ընդ առաքինեաց իսկ երբեմն մարտնչին խորհուրդք, թէ Զի՞նչ իցեմ և զի՞նչ լինիցիմ. որպիսի՞ ինչ դատաստանք կայցեն ի վերայ իմ. յի՞նչ յանգիցին աղէտք որ յիս և որ չուրջ զինեւ. ժուժայցեմ մինչեւ իսպառ. և որ սոցին սակի։ — փոխեա ըզբարբառդ, հոգի թերահաւատ և տրտմեալ և ասա ցքեզ, զոր ասէր նման քեզ ոմն փորձանաւոր. Զի՞ քեզ, անձն իմ, ընդէ՞ր ես տրտում, և խռովես զիս. յուսա առ Աստուած. նա է փրկիչ քո։ Հաւատա՛ աներկմիտ, զի այն ինչ լինիցի ընդ քեզ՝ զոր Տէր կամի. կամեա՛ց և դու, և զոչեա. « Եղիցին » կամք քո », Տէր։ Հաւատամ Տէր ի գթութիւն քո և յիմաստութիւն, զի ամենահնար ես. օգնեա՛ թերահաւատութեանս իմում, որպէս ախտացելոյն և կուրին։ Դու ես լոյս իմ և կեանք. հայիմ ի քեզ՝ որպէս յարեգակն լուսատու շաւղաց իմոց, այլ ի յառնել մրրկաց և ամպոց ծածկել զերեսս երկնի՝ վհատեալ վարանիմ, կարծելով զլոյս իմ վերա-

ցեալ. — փարատին մթարքն և քաջալերիմ. — դարձեալ պատեն գլուսաւորն իմ հոգք և տագնապք, և դարձեալ դողամ և թուլանամ. և հոգիս խորասուզել թուի ի վիհս ոմանս աներեւոյթս և անյատակս. եթէ գամ մի՝ զրգուիցիմ ի քէն՝ ամենայն ինչ արհաւիրք են։ Եւ սակայն զի՞նչ է ամենայն առաջի քո։ Եթէ կաս մնաս դու անմեկին ի քոյոցդ, եթէ դու ես իմ հայր և ընկալուչ, « ես յումէ՞ երկեայց ». այնուհետեւ. « զի՞ արասցէ ինձ մարդ ». զի՞ արասցեն ինձ ամենայն վտանգք և բնութեան և կրից, թշնամեաց և ատելեաց. զի՞ արասցեն և բովանդակ իսկ դժոխք դաւինք, եթէ ի քէն սարսեն և սանդարամետք։ « Բայց միայն Աստուծոյ հնազանդ » լեր, անձն իմ », և չգուցէ ուստեք քեզ երկիւղ կամ կասկած, բայց եթէ դարձեալ ի մեղմեխ խորհրդոցդ և ի յոդոյոդդ կամաց. լոյծ զդա, և խառնեա յաստուածայինն. « Եղիցին կամք քո », Տէր։

Զայսպիսի ունելով մեր յոյս, այսպիսի ձեռնկալու մերձաւոր, այսպիսի խնամոտ Հայր և Փրկիչ, հա՞րկ իցէ մեզ անդրէն յետս դառնալ և ի նուազագոյն պէտս տաղտապել. ի պէտս ասեմ անցաւոր կենացս, յարկածս, ի վիշտս մարմնոյ ըստ կրից և ըստ ցաւոց, կամ ի յետինն պատահարաց՝ որ այնպէս դառն և ահարկու երեւութանայ, մահն. կարապետս առաքելով մերթ մի ըստ միոջէ զխամրութիւն հասակի, զպակասել արտաքին և ներքին զօրութեանց, զհիւանդութիւնս, զցաւս, զխանգարել զգայարանաց, միով բանիւ զ'առ փոքր փոքր քայքայումն հողեղէն շինուածոյս. և մերթ պնդագոյնս փութացեալ՝ կանխէ քան զհրեշտակսն, և հասանէ ի դրունս, յառաւօտու և ի միջօրէի կենաց։ Արժա՞ն իցէ ասեմ զարհուրել և տագնապել յայսպիսեաց աստի, երբ Տէր կենաց և մահու՝ հայր է մեր. այն որոյ թուեալ և կնքեալ է զամենայն աւուրս և զժամս կենաց մերոց, և զամենայն կիրս որ ի կեանս անդ։ Զի՞նչ իցեն ամենայն ցաւք և հիւանդութիւնք և սրհասք՝ առ այն կենօք որ ոչն անցանեն. և յետ միանգամ պատահարին՝ այլ ոչ ինչ ստանանէ հոգւոյ, շատ է թէ սրբիկ պրծիցի յարգելչացն իւրոց՝ ի մեղաց։ Զի՞նչ բնաւ իցեն և ամենայն կիրք և ցաւք մարմնոյ, յորժամ առաջի դիցին հանդերձեալ հատուցմունքն. զմի՞ գանգատիցի՝ որ գիտէ ընդ առաքելոյն, եթէ « Վաղվաղակի է լինելոց յինէն

» լուծանել մարմնոյս այսորիկ »։ Ո՞վ, ո՞ւրքան հոգիք իցեն արձակեալք ի կենաց աստի, որոց արդ չիք ինչ անձկալի՝ քան եթէ գոյր հնար վերստին դարձ ի կեանս, միայն վասն կրելոյ ցաւս ծանուցեալս և տանջանս երկարս և ապառումս, առ ի թեթեւացուցանել զտառապանս հանդերձելոյ աշխարհին. կամ առ ի նուիրել ինչ մի եւս առ սէր արարչին իւրեանց։ Զի որչափ շատ ինչ կրէ ոք վասն Աստուծոյ՝ այնքան և սիրէ զնա. և Տէր ինքնին զոր սիրէ՝ խրատէ փորձանօք յերկրի աստ. վասն այնորիկ և հայրապետն այն իմաստուն աղերսէր, աստէն կիզուլ աստէն տանջիլ և կտրատել անխնայ, զի խնայեսցի նմա յայն յաւիտեանսն։ Եւ նորին ընկեր Բերան ոսկի՝ անդուլ յեղյեղէր զանլռելին յառաքինեաց, յամենայն ի վիշտսն և ի հալածանս և ցյետին շունչն, Օրհնեալ ես Տէր, Եղիցին կամք քո։ Ըստ նոցին օրինակի՝ որ յայտնի և որ լռելեայն զնոյն ասէին և զնոյն խորհեցան ամենայն դասք դասք լաւաց, հայրապետք և աշակերտք, միանձունք և կուսանք, մարտիրոսք և խոստովանողք, մինչեւ ցմանրիկ մանկունս և յաղկաղկ աղջկունս. հայր առ որդւով և մայր առ դստերաւ, ծնողք և ծնեալք, հարսն և փեսայ, ամենայն հասակ, ամենայն վիճակ, որք ծանեան հայր իւրեանց զԱստուած, և առ սէր նորին զամենայն չարչարանս և կտտանս՝ սուղ և երկար ժամանակօք, ըստ ներելոյ խնամոց նորին, զի յամենայնի և ամենեւիմբ Եղիցին կամք նորա։ Զիցե՞ն նոքա և մեզ օրինակք և քաջալերք. այն զի բազմաց ի նոցանէ ստորինս գոլով քան զմեզ կարդաւ և հասակաւ, վիճակաւ և գիտութեամբ, այնպէս յօժարութեամբ և արիաբար տարան իւրաքանչիւր վշտաց և գառն տանջանաց. և ո՞չ լիցին դարձեալ դոքա ի յանդիմանութիւն քահանայից կարգելոց յուսուցիչ և ի խրատ ժողովրդեան, և կրօնաւորաց ընտրողաց զմեռելակիր կեանս, եթէ յուլացեալք կամ վհատեալք կասեսցին ի գնացս իւրեանց։

Այլ ուստի՞ իսկ բնաւ ի մեզ երկիւղ կամ գարշումն ի վշտաց, ի ցաւոց, ի մահուանէ. որով և ճիգն իմն զանխուլ, թէպէտ և զուր և վայրապար ճիգն, փախչելոյ ի կամաց Աստուծոյ, զի չասացից թէ և ընդդէմ կրելոյ։ Ո՞չ անտի իսկ, զի կամ ի սկզբանէ չէ մեր վարժեալ ի վշտակրութիւն, և կամ թողեալ զառաջին կրթանսն, և ոչ հանապազորդեալ ի

մեռելութիւն անձին կամաց՝ որ կեանք է հոգւոյ, այլ սնուցանեմք զհին մարդն։ Վեհերոտութիւն և յուլութիւն, դստերք երկեղի, առաջին պատճառք և խափանիչք են կատարման կամացն Աստուծոյ ի մեզ. չար ընդաբոյս զոր միայն բառն և յարակիրթ շնորհաց հնար է հերքել և ժրացուցանել զանձն ի վաստակ։ Վասն այսորիկ և արիութիւն՝ առաջին բարոյականացն ծանուցաւ առաքինութեանց և ողջունեցաւ յարտաքնոցն և ի քրիստոնէից. որ և անհրաժեշտ իմն արիւն և ոգի է սրտի նուիրականի առ Աստուած, առ անդուլ մղելոյ զնա յառաջիկայն ասպարէզ վերելից. վասն որոյ և ուխտիւք խնդրելի է ի Տեառնէ, առ ի կարող լինելոյ բառնալ զբեռնն, որ թէպէտ և փոքրոգի է, ըստ Յիսուսի իսկ վկայութեան, այլ առանց արիութեան և սիրոյ ծանր միշտ երեւի. իսկ յաժարողացն չիք ինչ ծանր, քանզի քաջ գիտեն եթէ ոչ աւելի քան զկար բառնայ Տէր ի թիկունս հետեւողաց իւրոց, և զանհնարինսն անգամ ի մարդկանէ՝ յոյժ հնարաւորս ցուցանէ. ամենայն ինչ հարթ հաւասար լինի ուր կամքն Աստուծոյ կարգասցի։

Սակայն ոչ վարկպարագի և հեթանոսական արիութիւն ի ճահ գայ նորոց օրինացս աշակերտաց, այլ որ խոնարհութեամբն է խառնեալ. առ ի նուաճելոյ զբնածին միւս ախտ ի մեզ՝ զհպարտութիւնն, զմեծ դիմակաց կամացն Աստուծոյ, ախտ՝ որ ոչ գիտեմ որպէս՝ սպրդեաց և յոգիս զօրութեանց երկնից և խաւարեցոյց զարօսեակն ի ծագման իւրում. ախտ՝ որ շլացոյց իսկ և իսկ զնախածնողս մեր, և յամենայն որդիս նոցա ընդմտանէ, գրեաթէ հաւասար ցանկութեանն ախտի. և այս իսկ է զարմանս, զի որքան յոռացեալ և յետնեալ տեսանեմք զբնութիւնս մեր՝ այնքան և անպատկառ ամբարտաւանեալ. և որքան յանձին պանծացեալ՝ այնքան և յԱստուծոյ հեռացեալ, մերժեալ և ունայնացեալ. զի ըստ գեղեցկանսիհ օրհներգութեան ամենախոնարհ Կուսին՝ Տէր « Ցրուէ զամբարտաւանս մտօք սրտից իւրեանց », զկարծեցեալ գիտունսն. քակէ զհղօրս յաթոռոց, զյօրացեալսն աւագութեամբ և յուսացեալս յիշխանս երկրի, արձակէ ունայն զմեծատունս, որք համարէին կարասեաւ և գանձիւ զբռամբ ածել գյաջողուածս և զպատիւ։ Ոչ զայնպիսիս ընտրեաց Տէր, այլ զհեզս և զխոնարհս և որք դողանն ի բանից նո-

բա. բարձրացուցանէ զանկածս և զկոխանս յերկրի՝ ի գահոյս գերունակս, յապշութիւն և յամօթ բարձանգիր փառասիրաց, և ընդ բարութեամբք զկարօտեալս միայնոյ կամաց իւրոց լրման. որք յամենայն ի նեղութեան և ի նուազութեան իւրեանց անտրտունջ և անվեհեր մազթէին « Եղի-» ցին կամք քո ». և զնոյն կրկնեն ի վերայ շնորհացն զոր ընկալան։

Խորհրդածութիւն կարեւոր և ահաւոր, որպէս միոյ անձին՝ նոյնպէս և բազմութեան ժողովոց և ընկերութեանց և համօրէն իսկ պետութեանց և ազգաց, որոց առաջի կան աւերակք այլոց պետութեանց և ազգաց, որք զոռոզացեալ տիրէին երբեմն և ընդ ամենայն զերեսս երկրի, և արդ հազիւ նշխարք նոցին ընդ երկրաւ նշմարին։ Այլ մեզ ազդողագոյն եւս իցեն անցք և դէպք այնքան վիճակաւորաց, միանձանց, ճգնաւորաց, քահանայից և վեհագունից անգամ, որոց յանձինս ասպատանեալ և հպարտացեալ՝ յԱստուծոյ աչաց ելին, և չատք ի մարդկանէ եւս խոտեցան։ Նկատեսցուք սոսկալով զբազմութիւն խաթարեալ և լցեալ վանորայից, որք երբեմն օթեվանք էին հեզոց և խոնարհ աղօթականաց, կամարարաց Աստուծոյ, իսկ յորժամ սպրդեցին ի նոսա ինքնակամք և անձնահաճք՝ քակտեցան միաբանքն, և ոզջոյն իսկ ուխտք և կրօնք բարձան յեկեղեցւոյ։ Յորոց մի և անուանեալն յանուն ազգիս մերոյ Կարգ Հայոց Եղբարց յաշխարհիս Խաղիոյ, ուր տեւեալ զամս 350, կիսով դարու յառաջ քան զհաստատութիւն մերոյս այսմ Մխիթարեան միաբանութեան՝ ջնջեալ բարձաւ յեկեղեցւոյ, վասն խրոխտ և խառնակ վարուց մնացելոց միանձանցն. և յիշատակ նոցա հազիւ թէ նշմարի ի դիւանս։ Թերեւս չեւ էր մեռեալ յետնոյն յեղբարց անտի անուանեալ Հայոց՝ յորժամ եկն ի լոյս հիմնադիր ուխտիս, և տնկեաց զտունս զայս յանդիման լքելոց տանց այնր կարգի. թողեալ մեզ արդիւնս և համբաւ, և մանաւանդ օրինակ ազանչելի համակամութեան ընդ Աստուծոյ, հեզութեան և հաշտութեան ընդ մարդիկ, հլութեան առ վեհագոյնս. որովք միայն հնար է և որդւոցս պահել յոտին զդաստակերտ նորա։ Հետեւողութեամբ ասեմ ոգւոյ և գործոց նորա և հօրամոյն որդւոցն՝ հարց մերոց, և ոչ ցնդական համբաւովն, որ կարէ արբեցուցանել և ցնորեցուցանել իսկ զանզգոյշս,

կարծելով զինքեանս զոլ, որ ինչ նախնիքն եղեն և կամ հա-
մարեցան ի հեռաւորաց։ Բաւ լիցի ի մէնջ՝ աշխարհի տեսա-
բանս զոլ աննման դրիւք կղզեկիս ի խորշ մի ծովածոցիս,
և ամենատես աչացն ոչ հաճոյանալ սնապարծութեամբ և մե-
ծամտութեամբ։

Երկիցուք առաւելապէս յանձանց մերոց. զի ոչ ինչ այն-
պէս չարաչար վնասէ մարդոյ՝ որպէս անձինն սէր և վարկ.
այնքան ազդու մահադեղ հոգւոյ, որքան զաղտ և ներքսա-
զոյն ախտ, որ բազում անգամ և ի նրբատեսաց վրիպի և
հոգեսիրաց։ Չիք ինչ քան զդա ապականիչ լաւութեանց և
օտարացուցիչ յԱստուծոյ. սէր անձին և սեփական կարծեաց
անձնապաշտութիւն է. և պաշտօնդ այդ՝ յայտնապէս իմն
անաստուածութիւն։ Որպէս և ի հակառակէն չիք հնար յաջո-
ղագոյն յորսալ զկամս Աստուծոյ և ի հաճել զնա, քան զատե-
լութիւն իւրոյ անձին կամաց. ուղղութիւն այնքան կարեւոր՝
որքան և դժուարին. բայց թերեւս ոչ այնքան դժուարին՝
որքան կարեւոր։ Դժուարին վասն նրբութեանն զոր յիշեցի,
և յոյր սակս ասէր ոմն յառաքինեաց զանձնէն, այնքանեաւ
նրբահիւս ցանցիւ անձնսիրութեան վարակեալ՝ մինչ իբրեւ
բնական իմն թաղանթիւ անզանազան լինել յինքեանէ ախտին,
և անմերկանալի պատեան։ Իսկ կարեւոր, զի որպէս տեսաւ՝
կրօնաւորութեան իսկութիւն է մերկանալ զկամս անձին և
զգենուլ զԱստուծոյն։

Բազում զգուշութեան պէտս մեզ վարկանիմ յայսմ. նախ,
իբրու հասարակ կրօնաւորաց. և երկրորդ, իբրու առանձինն
իմն ունողաց հանգամանս։ Քանզի, թերեւս նուազութիւն
թուոյ միաբանիցս, համբոյր տարազ վարչութեան, և աննա-
խանձ արգահատանք օտարաց՝ յորոց միջի զետեղեալս եմք,
մարթեն դիւրագայթս առնել զմեզ յայն թերութիւն. այլ և
բարեբիկ քաղաքավարութիւն կամ ընտանութիւն միոյ տան
միայնոյ վիճակելոցս, պակասութիւն յանդիմանութեանց և
պատժոց կանոնելոց և նուաստացուցիչ հրահանգաց՝ որովք
մարզին կրօնաւորք ի խոնարհութեան և ի չափաւորութեան,
դժուարին գործեն զտեսութիւն թերութեանց, որով և զուղ-
ղութիւն։ Ուր աչք և ունկն ոչ ազդեն ստէպ՝ անընդոստ մնան
սիրտք. և ուր շատ ներողամտութիւն՝ սակաւ և ուղղութիւն։
Որ դիւրաւ զտանել ներումն՝ դիւրաւ և շնորհէ այլում. չասեմ

զքրիստոնէականն զայն ներումն, այլ զչտեսանելոյն առնելն
զողալանս կշտամբելիս, որով աճեն բոյսք վնասակարք յայգ-
ւոջ Տեառն, և բազում առաքինութիւնք հեղձուցիկ լինին։
Անզգոյշ և անխրատ սէր անձին՝ զնման իմն ծնանի սէր ըն-
կերական, փոխանակ միոյ և հարթ հաւասար սիրոյ և եղ-
բայրութեան, և այնքան ընկերութիւնք բաժանին ի միում
ընկերութեան՝ որքան և համակարծիք, յորմէ ապա և կող-
մնակցութիւնք, երկպառակութիւնք և որ այլն եւս։

Քաջ զայսոսիկ նախատեսեալ հեղինակաց միանձնական
կարգաց և կանոնադրաց, որպէս և մերոյս կրօնի, սահման-
նեցին զնորեկսն յուխտ՝ մարզել խնամով յերկուս յայսոսիկ.
չառնել խտիր և ընտանութիւն առ ոմանս յընկերութենէն,
և մարտնչել ընդ բնակարծիսն կամ խորտակել զանձին կամս։
Այլ աւա՜ղ, այնպէս կանխաբոյս և խորարմատք են եղջերք
խեթկիչ կամաց, զի և յետ բազում անգամ կոտորման՝ դար-
ձեալ վերընձիւղեն և աճեն. և երբեմն զառինք հեզք երեւեալք
ի սկզբան՝ յետոյ ոգորողք լինին քան զբնութիւն որոճայնոց։
Արժան էր իսպառ եղջերաթափս առնել զնոսա յառաջին
տիոց կրթութեանն, կամ մանաւանդ այնպէս կակղել, և զի
գալարեսցին և տեղի տացեն այլոց, մանաւանդ թէ կամացն
Աստուծոյ։ — Ցայտ է ամենեցուն՝ զի ոչ պարիսպք վանաց
և խցկունք համաչափք, այլ հաւասարութիւն կամաց և կար-
ծեաց բնակչացն՝ յօրինեն զմիաբանութիւնն և պահպանեն.
և առ ի գիտել թէ իցէ՞ ուղիղ չափ կամաց իմ և ընկերին
կամ ընկերաց, առցուք ի փորձ, ըստ իմաստասիրաց խրա-
տու զերրորդ իմն կամս. և զո՞ր այլ կամս՝ եթէ ոչ զԱստու-
ծոյն. — և յորժամ գտանեմ զիմս և զնորայն հաճոյս Ա-
ստուծոյ, յայտ է թէ միաբանք եմք և ընդ միմեանս. իսկ
եթէ ուրուք կամք չիցեն միաբան ընդ Աստուծոյ՝ և ոչ ընդ
ընկերին մարթի միաբանել, բայց եթէ ընդ խոտորեալն իբ-
րեւ զինքն. և այն առ վայր մի եւեթ. զի օտարացելոց յԱ-
ստուծոյ՝ ոչ է մարթ ընդերկար հանդարտել և ընդ իրեար։
Քա՜ւ ի մէնջ, Եղբարք սիրելիք, այսպիսի խոտորումն. այլ
գուն գործեսցուք ի հաւասար միաբանութիւն երրեկին. և
ուր ուրեք տակաւին միում այս և այլում այն երեւեսցի
բարի, ոչ զմին խոտելով և ոչ զմիւսն մեծարելով՝ դիցուք
առաջի Աստուծոյ զերկոսին եւս, և խնդրեսցուք ընդ Առա-

քելոց ի Տեառնէ. « Յայտնեա զմի ոք զոր ընտրեցեր ի սո-
» ցանէ երկոցունց ». և կալցուք զայն՝ ում ելցէ վիճակն առ
ի յԱստուծոյ. որպէս զի համարձակ լիցուք ասել այնուհե-
տեւ, « Եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի », այլ
ոչ լոկ որպէս յերկրի, որ է առանձինն իւրաքանչիւր կամք
և տեսութիւն։

Յերկարեցաւ արդեօք բանս որ զանձին կամաց. այլ թե-
բեւս ոչ կարասցի ցուցանել ըստ բաւականին թէ քանի՛ ինչ
չար է ախտն և որքան դժուարաբուժելի, զի ընդաբոյս իմն
է. և բազում անգամ յատուկ իմն աստուածային շնորհաց
կարօտ։ Վասն որոյ դիւրագոյն եւս թուի ինձ դարման՝ կան-
խել մաղթել զշնորհսն. հսկել յառաքինութիւնս՝ ի տարերս
չինուածոյ կրօնաւորութեան. ի խոնարհութիւն, ի հլութիւն,
ի սէր և ի պատուադրութիւն, և յոր ինչ միանգամ վայել
և օրէն է նուիրելոց և պաշտօնէից Աստուծոյ և խաչաբար-
ձից։ Եւ ոչ միանգամ յառաջնումն ընդունել զխաչն այլ
պատրաստս լինել և որոց կամքն Աստուծոյ առաքիցեն յո-
րում և է ժամու. յօժարս լինել յընդունելութիւն դառինց և
դիւրնոց, որպէս զի յամենայնի կարողք լինիցիմք ասել հա-
ւասարապէս, « Եղիցին կամք քո »։

Կամք Տեառն՝ եղիցին մեր նշանաբան, և որպէս կնիք վա-
ւերականք՝ ի վերայ սրտից և ի խորս հոգւոց։ Այլ դու, Տէր
Յիսուս, փրկիչ մեր և վարդապետ, հեղինակ մեր և օրինակ,
դու գիտես զստեղծուած իմ և զտառապելութիւն, զթեթուս
կարծեացս, զյուլութիւն մարմնոյս, զտատամսութիւն հոգ-
ւոյս, զանձնասիրութիւն իմ և զանձնահաճութիւն բովանդակ։
որովք բազում անգամ հեստեցի ամենակեցոյց կամաց քոց,
և զապականեալ և զկորստական կեանս իմ մեծարեցի և պաշ-
տեցի, զանգիտելով ի փոքուէ իսկ խաչէ և բեռանէ, առ որս
տկարագոյնք քան զիս և յետնագոյնք կարգաւ և հասակաւ՝
խայտալով դիմեն և ընդգրկեն. ընդ հետս նոցա հայելով
իմ արդ և ի պարագլուխդ բնաւից՝ որ ի պարտիզի այդր
Գեթսեմանի խոնարհեալ ընկալար զահեղն այն բաժակ, կո-
րացեալ կարկիմ, և հեղձամղձուկ ձայնիւ չկարեմ այլ ինչ
արտաբերել, բայց եթէ Եղիցին կամք քո որպէս յերկինս և
յերկրի, յիս ինքն, յամենայն դէպս և յամենայն ժամանա-
կի։ Եղիցին, Եղիցին։

Ե

ԶՀԱՑ ՄԵՐ ՀԱՆԱՊԱԶՈՐԴ՝ ՏՈՒՐ ՄԵԶ ԱՅՍՕՐ

Աստուած միայն է անկարօտ. քանզի կեանք է իսկաբուն
և մշտնջենաւոր. « և ամենայն ինչ նովաւ եղեւ ». և հարկ
է եղելոցն ի նմանէ ընդունել և հանապազ զպահուստ կե-
նացն, որպէս զգեստս՝ որք հանապազահոս են՝ քանզի հանա-
պազ ընդունին վտակս։ Յայտ ամենեցուն է, զի և մարդոյ
կեանք այսպէս տեւեն. այլ թերեւս ոչ ամենեցուն քաջ միտ
եդեալ զարմանալի տնտեսութեան արարչահրաման կարգին.
որ կամի բանականացս՝ ոչ որպէս զայլ արարածսն անզգայօ-
րէն տարրանալ և յօրանալ, նուազել և աճել, այլ և անձամբ
օժանդակելով յապրուստն՝ ՀՀանիւ իմն և գործով կամ զոր-
ծակցութեամբ պահել զմիանգամ պարգեւեալն ինքեան կեն-
դանութիւն. որպէս զի մի՛ ի պղերգութիւն հատեալ վատ-
նեսցէ զնոյն, և ապաշնորհ առ տուիչն գտցի. դարձեալ,
զի երեւեսցի ունել և զօրութիւն հայթհայթելոյ, և նախ քան
յերկրէ և ի նիւթոյ՝ հնարագիտութեամբ մտացն արդիւնա-
բերել. որպէս զի մի՛ միայն մարմինն յագեսցի, « ոչ հացիւ
» միայն կեցցէ մարդ », այլ և սիրտն զուարթասցի և միտք
արիասցին։ Յայս սակս և յառաջ իսկ քան զպատժախառն
պատուէր քրտամբ երեսաց պատրաստելոյ զհացիկն, աւան-
դեալ էր նախաստեղծին դրախտն փափկութեան, ոչ ամե-
նեւին յանփոյթ վայելս, այլ « գործել զնա և պահել »։ Էր
ուրեմն և յերանելի կեանս անդ սահմանեալ մարդոյ աշխա-
տութիւն ինչ և գործ, և նովիմբ ապրուստ. իսկ յետ սղա-
լանացն և երկրի փշաբերութեան, պիտոյացաւ քրտնաջան
վաստակ և երկն տաժանական։ Յոր և կամաւորապէս տան
զանձինս զգաստքն, թէպէտ և մեծատունք իցեն ըստ ասից
աշխարհի, գիտելով զի չէք ոք ազատ յերկրաւոր աղցից և
անկարօտ սպասու ընկերաց, մանաւանդ որից Երկնաւոր
Հօրն, յորմէ ընկալեալ է ամենեցուն զոր և ունին, որ չատ

և որ սակաւ։ Ամենեցուն օրինադրեալ է աղօթել և խնդրել ի նմանէ զհացն հանապազօրեայ։

Հասարակաց այս օրէնք՝ որպէս և այլք առաւելապէս պահանջին ի պաշտօնէից Տեառն. որոց չիք ինչ այնպէս դառն ի լսել՝ քան զբամբասանս և զկծանս յաչադկոտ լեզուաց աշխարհիկ մարդկան, եթէ աբեղեանդ գործ ինչ ոչ գործեն և զայլոցակեր լինին յանհոգս։ Ոչ միայն քամահանս՝ այլ և հայհոյութիւն համարելի են բանքն՝ առ ճշմարիտ կրօնաւոր, որ եթող զաշխարհ՝ այլ ոչ զաշխատութիւն. ոչ առ ի կեալ յայլոց առատաձեռնութենէ, այլ ընդ Առաքելոյն ձեռօք իւրովք վաստակելն և զայլ եւս կերակրել։ Եւ զի մի երկարեսցի մեզ ասել՝ տեսութիւնս, և մի հանդէս արասցուք ամենայն իմաստից որով մարթ և սովոր է իմանալ զՀացն՝ զոր պատուիրէ մեզ Քրիստոս խնդրել յերկնաւոր Հօրէն, ներեսցի ինձ այսօր խորհրդածել միայն ի սեփական գործս և պարտս վիճակիս մերոյ՝ որպէս ի հաց մեր օր ըստ օրեայ, զոր հարկ է մեզ մերոյին ժրութեամբ հայթհայթել՝ Տեառն օժանդակութեամբ։

Գեղեցիկ և իմաստասիրական է խորհրդածել զտիեզերս հաստեալ միով բանիւ կամացն Աստուծոյ, այլ կազմեալ ի զանազան տարերաց և էակաց, ի զգայնոց և յանզգայնոց, յանբանից և ի բանականաց. և յանխառն խառն անդ, կամ ի շարս և ի հիւս համաշխարհական զանգուածոյն՝ նկատել մարդոյ զիւր սեփական տեղին և զվիճակ, զիւր մի մասն՝ որով բոլորն բովանդակի. և ի մասին անդ ինքեան՝ դարձեալ զյատուկ և սեփական կնիքն՝ որով յայլ մարգկանէ զանազանի և զայլսն զանազանէ։ Եւ ի վերայ այսորիկ ճանաչել՝ զի արժան է նմա իւրովք իսկ կամօք և ջանիւ կալ ի կարգի և յաստիճանի իւրում ի համաշխարհական կազմուածի անդ տիեզերաց, և ոչ լոկ որպէս զանբան արարածքն՝ շարժիլ և վարիլ յայլմէ տեսչութենէ։ — Այս և ինձ այս պարտք և պատշաճք ի վերայ կան լինել ստուգիւ որպէս կոչիմս և ճանաչիմ արտաքուստ, և հանապազ լինել այնպէս։ Մարդ եմ և պատկեր Աստուծոյ, արժան է անեղծ պահել զայնպիսին պատկեր. — Քրիստոնեայ եմ, և ի դէպ է ինձ ունել զհոգին Քրիստոսի. — Կրօնաւոր եմ, և վայել է ինձ կեալ անձնուրաց և աշխարհուրաց քաղաքավարութեամբ. —

Քահանայ եմ, և օրէն է ինձ նրբագոյն իմն վարել կեանս, որպէս զի ընդ թանձրագոյնսն և ընդ ամենեւին նուրբն և սուրբ՝ լինիցիմ միջնորդ, ըստ անհրաժարելի պաշտամանս։ Եւ առ այս ամենայն կարօտիմ պէտպէս շնորհաց Աստուծոյ, որպէս ազգ ազգ հացից հանապազօրեայց ի սնունդ հոգւոյ. այլ առաւել իմն օրինակաւ այնմ շնորհի՝ որ պահէ յիս զսեփական կնիք վիճակի իմոյ ի կարգի բանական դասուց մարդկան ի վերայ երկրիս, և նաեւ ի դասս անդ եկեղեցւոյ մանկանց և միանձնական ժողովոց։ Քանզի այսպէս կամք եղեն Քրիստոսի բազմազանս լինել յեկեղեցւոջ իւրում դասս, որպէս գունակ գունակ ծաղկունս ի միում պարտիզի։ Նա և ի բարձրագոյնսն քան զմեզ բնութեամբ վերակնեալ՝ տեսանեմք կամ իմանամք զամենայն հոգեղէնսն՝ հրեշտակս, այլ և բազում դասս որոշեալ, իւրաքանչիւր զիւրն ունելով պաշտօն յանճառահրաշ տաճարի անդ Տեառն։

Գիտեմք ի բնէ զազգ մեր և զլեզու և զծէս հայրենի. և սահմանադրութիւնք ուխտիս և անուն Հեղինակիս զոր կրեմքս՝ ազդ առնեն մեզ անդուլ զսեփականութիւն մեր կամ զանազանութիւն, կամ լաւ եւս արդեօք ասել, զկնիք մեր։ Եւ բանն ինքնին և կանոնք հրամայեն մեզ յարդարել զանձինս ըստ այնմ կնքոյ. և վերատեսչութիւն իսկ եկեղեցւոյ՝ ոչ ներէ՝ որպէս ինքնակամ ելանել և անցանել ի կարգէ յայլ կարգ, այսպէս և փոփոխել զներքին կարգս և սահմանս և վարել ըստ այլոց տարազու, թէպէտ և լաւք իցեն և լաւագոյնք. և ոչ իսկ զարտաքին ձեւ սքեմիս ներեալ է փոխել։ Ցայտ ուրեմն է ապա զի ամենայնիւ պարաւանդեալ կամք ի պահել զկարգ և զսահման մեր ընտրեալ ի Հեղինակէն մերմէ և հաստատեալ ի վարչութենէ Եկեղեցւոյ։

Առ այս արժան է երկուց ինչ քաջ միտ դնել իրաց. մի, ի խորշելոյ ի մեծամեծ փոփոխութեանց զորս մարթ իցէ հասարակաց հաւանութեամբ և ժողովօք առնել, զի մի հետ զհետէ զնոյն առնելով՝ ոչ միայն փոփոխութիւն այլ և այլափոխութիւն լիցի կարգիս և օրինիս որով ոչ միայն աղարտի սեփական կնիքն և աղաւաղի վայելուչ զանազանութիւն բազմերանգ պատկերի կրօնաւորական կարգաց, և այն յանախ տգեղութեամբ քան գեղեցկութեամբ, այլ և ընդ փոփոխելն նուազէ ինչ և յոգիս և ի պնդութեան պահպանութեան բո-

լորին, ի բաց բարձմամբ կամ յեղյեզմամբ մասին ի կազ-
մածոյ անտի։ Երկրորդ, առաւել եւս զգուշանալ ի փոքունց
անտի փոփոխութեանց, ըստ իւրաքանչիւր կամաց և տեսու-
թեանց. յորմէ մեծագոյն և ներքսագոյն առթի ելնաս. զի թէ
և սակաւ ինչ ազդիցէ առ էութիւն կրօնին, ազդողագոյնս
ստանէ առ էութիւն կրօնաւորին՝ որ փոխէ կամ քակէ զկարգ
և զկանոն. ի դէպ գաւով նմին հնատուր պատգամին, « Մի
» քակեսցես զցանկ հայրենի ». կամ մարգարէական տեսու-
թեանն, թէ « Որ փորէ զորմն՝ հարցէ զնա օձ »։ Իսկ եթէ
իւրաքանչիւր ոք ի միաբանիցն (որք ոչ եւս են միաբան կո-
չելիք) մասն ինչ ցանգոյ քակիցէ կամ խրամատիցէ յորմն,
զի՞նչ այնուհետեւ լինիցի վանացն. ո՞չ ապաքէն անպատսպար
կոխան լինել երէոց վայրենեաց, աշխարհական հոգոց և հան-
գամանաց, և գազանաց ի ներքս մտանել, կրից և ժպրհու-
թեանց։ Շատ է և միոյ իրիք կարգի և կանոնի բարձման ի
միոյ անձնէ ի կեանս իւրում, և յերկար սովորութեամբ ան-
տես առնելոյ զայն և առ փոքր փոքր ջնջելոյ յուշոյ և ի
կիրառութենէ. զի թէ ոչ ամենեքին հետեւողք լիցին նմա
յայնմ, բայց յայլ ինչ համարձակին այլք ոմանք, կամ նե-
րելի համարին. մանաւանդ եթէ յաւագաց և ի հնագունից ոք
իցէ օրինազանցն կամ կարգափոխ. և ապա որպէս ի ոմբա-
կոծ կամ յականահատ պարսպէ սորսորելով քարանցն՝ հա-
մօրէն հասցէ կործանումն. կամ այնպէս պատառոտեալ և
քայքայեալ կայցէ կրօն, զի թերեւս լաւագոյն իցէ չկալն
իսկ. քանզի արտաքին տեսողացն օգուտ ինչ չէ, իսկ ի ներքս
բնակողացն՝ ելնաս աներկբայ։ Ի վերայ այսոցիկ քաջայայտ
է թէ քանի՞ դիւրին և լպրծուտ ախտ է կրօնաւորաց զան-
ցառութիւն կանոնի. և ո՞րքան արթնութիւն և զգուշութիւն
պիտի առ անսայթաք պատուիրանապահութիւն զի ոչ այն-
քան յեկեղեցական պատուիրանսն լինի նոցա զթումն և գլո-
ռումն՝ որպէս ի վանականսն. որք թէ և կարգաւ փոքրա-
գոյնք են քան զաստուածայինսն և զեկեղեցականս, այլ ըստ
զօրութեան՝ հաւասարք նոցին, նաեւ առաւելեալք այնու՝ զի
յատուկք են իւրաքանչիւր կարգաւորի, որպէս առանձին հրա-
ման ի Տեառնէ։

Եւ մի՛ ոք համարիցի արդարանալ՝ ասելով զսահմանադրու-
թիւն մեր ոչ առ ի մեզս պարտաւորիչ. – և ոչ մի օրէնք

զպարտաւորութիւն մեղաց կամին, նա մանաւանդ զազատա-
նալն ի մեղաց. այլ եթէ չգոյր ելնաս զանցառութեանցն՝ ընդ-
դէր բնաւ և օրինադրեալք լինէին։ Եւ եթէ օրինադիրն իսկ
կամ հեղինակ ուխտին՝ ոչ կարեւոր ինչ մեզս համարէր զյան-
ցուածսն, այլ ամենեցուն օրինադիրն եցոյց, զի « Որ ար-
» համարհէ զփոքրն՝ առ փոքր փոքր և կործանեսցի ». և
Փրկիչն մեր խրատէ, թէ « Որ ի փոքուն հաւատարիմ է՝ և
» ի բազմին հաւատարիմ է ». և որ անիրաւ գտանի ի սա-
կաւուն՝ նա և ի յետոյ բազմին ոչ խղճէ։ Նա բնաւ զի՞արդ
իսկ պարզ երես ելցէ կրօնաւոր ի դատաստանէ՝ եթէ ոչ առա-
ւելուցու արդարութիւն նորա քան զդպրացն և փարիսեցւոց,
զաշխարայնոց ասեմ, գիտնոց և ռամկաց։ Ո՞չ ապաքէն ամե-
նայն ուխտ և միաբանութիւն ի վերայ կանոնաց և օրինաց
հաստատի՝ որպէս շինուածն ի վերայ հիմանց և քարանց։ Եւ
որպէս զի շինուածն տեւեալ տոկայցէ՝ հարկ է և միշտ ան-
քակ ունել և նորոգել, ըստ այնմ և կարգաց և կանոնաց
Ուխտից հաստատուն պահել, և զթիւրութիւնս կամ թերու-
թիւնս ինչ ուղղել և յառաջին սահմանն մուծանել, հանապա-
զօրեայ զգաստութեամբ և անդուլ ջանիւ, մաղթելով զառ ի
վերուստ օգնականութիւնն և շնորհն. « Ջհաց մեր հանա-
պազորդ ». և այլն։

Եկեղեցի, ազգ հայրենի և աշխարհ ճանաչեն զմեզ միան-
ձունս Մխիթարեանս. և մեք մեզէն գիտեմք զինչ դիտումն
էր և նպատակ Մխիթարայ և հաստատողաց զառաջադրու-
թիւն նորին։ — Սեփական ազգային լեզուաւ, ծիսիւ և հրա-
հանգօք պաշտել զԱստուած, զեկեղեցի և զհամազգիս. առաջ-
նորդել սոցա, եթէ ի վեհագունից առաջնորդաց հրամայի-
ցիմք, ի ճանապարհ փրկութեան հոգւոյ և պիտանացու գի-
տութեան. և առ այս օժանդակ առնուլ զլոյս ուսմանց և
դպրութեան. և զի ամենայն ազգ և լեզու միտեալ է յիւր
սեփականութիւնն, հարկ և արժան է և մեզ գալ զմերովս.
այլ յայտ է թէ քաջ խոհականութեամբ և զգուշութեամբ. զի
մի հուչակեալն այն և պէսպէս իմացեալ ոգին ազգային կամ
հայրենասիրութիւն՝ զառածեցուսցէ զմեզ, որպէս զբազումս
բազում անգամ, և ի ճշմարիտն աստուածասիրութենէ և յի-
մաստասիրութենէ վրիպեցուսցէ։ Ցուշ լիցի մեզ, զի վաղ վաղ
ընդդստուցեալք յաշխարհէ և ի գրկաց ծնողաց՝ անկաք ի

ծոց սուրբ եկեղեցւոյ և ի պարկեշտ մենաստանս. հարազատագոյն քան մարդկան՝ ծնունդս լինել կրօնից և որդիս Աստուծոյ. և ի նոյն որդեգրութիւն մարզել և զըստ մարմնոյ եղբարս և ազգայինս։ Ոչ եթէ մերկանալով ի հայրենական և յօրինաւոր աւանդից, այլ ի վերայ նոցին արկանելով ըզվերին հայրենեացն պատմուճան, որով յաւիտեան կայցէ մեզ պճնել. և մի ի վերայ այսր աստուածակերտ պատմուճանի զհայրենական և հայկական պատմուճանս և հեթհեթանս արկանել և ծածկել իսպառ, կամ հազիւ ընդ պատառուածս ինչ վերարկուին երեւել հոգեխառն զարդուն։

Էր թերեւս երբեմն և մեզ օրէն ձեռն կարկառել և յառաջ ածել զտարաբաղդիկ ազգակիցս մեր, ցուցանելով զի մեծ դաստիարակ է սրտի՝ իւրոց սկզբանցն և նախնեաց ծանօթութիւն, և սէր առ գեղեցիկն սեփական յիւրում առ տնին եկեղեցւոջ և դպրութեան կամ ի վէպս. իսկ յայժմուս՝ մինչ և բոկոտն և բացագլուխ, նաեւ չազգայինք անդամ և օտարք յաստպարէզ մտին հայրենեաց մերոց, և ուրեք ուրեք բարձրագոյն հնչէ անուն ազգութեան քան զքրիստոնէութեան, և յոմանց՝ մեք իսկ Մխիթարեանքս մեղադրիմք պատճառս լինել սղալանացն և չիոթութեան, կարծեմ և ոչ ոք երկբայիցի, եթէ պարտ և արժան է մեզ նախ սրտիւ և ապա բերանով բարձրացուցանել զանուն Յիսուսի քան զՀայկայ, և զառաքելականսն քան զայրարատեանս։ Եւ եթէ բաժանողն լեզուաց և ազգաց ի հնումն՝ վասն չարաչար միաձայնութեանն և միաբանութեան, հրաշապէս վերստին միաբանելով, թելադրէր, ըստ գեղեցիկ առասպացութեան Տարսոնացւոյն մերոյ, և տխմարն Թադէի Հայոց մեծաց լեզուաւն բարբառել, սակայն տայր բարբառել զբանս Հոգւոյն սրբոյ՝ հեզոյ և խաղաղարարի։ Երկրորդ առաքեալն մեր և լրումն առաքելոց, և բարձրացուցիչ գլխոց մերոց յազգս և յեկեղեցիս, Լուսաւորիչն Գրիգոր, գուցէ թէ ընաւ և հայերէն ոչ բարբառեցաւ, այլ զաստուածային բանսն արար նոր լեզու և ուսումն հնացեալ ազգիս, որում փոքր միւս եւս կայր ճնայր անկանել ի վիճակ և ի պատահումն՝ յորում տեսանեմք անկեալ այսօր զդրացիս մեր Պարսիկս և Քուրդս, և շնորհիւ Տեառն, և նորա արեան և քրտան վաստակօք և իւրանման որդւոցն և թոռանցն հետեւողութեամբ, և ձեռնտուութեամբ հզօր թագաւորին Տրդատայ, որ քան ամենայն դիւցախառն գործովքն՝ զերազանցեաց քրիստոնէութեամբն, կեամք այսօր յաշխարհի և վայելեմք անուն և լեզու և ծէս սեփական. պանծալի՝ ոչ հնութեամբն՝ այլ քրիստոսական կնքովն, որով զերծաք ի մոխրապաշտութենէ և ի խառնակ օրինաց մարգարէին անապատի։

Թուիցիմ արդեօք ստերիւրել այսօր ի սովորական ճանապարհէ խորհրդածութեանցս, և ի Գողգոթայէ յԱյրարատ փոխադրել. — աստի մանաւանդ կամ է ինձ անցանել անդր, ի լեռնէ Ջրհեղեղին ի լեռն արեան. թողուլ զտապանակիրն՝ և փոխիլ ի խաչակիրն։ Այլ զի՞նչ առնել իցէ ի տագնապ և ի խուժան ժամանակիս, յորում վէճ խառնալուր և մրցանք հակառակք յուզին ի ժողովրդեան մերում, բաղխին ընդ որմունս մեր, և սիրաք բաբախեալք անդրագոյնս թերեւս քան զսահմանս վանականս վազեն։... Եւ զի այս իսկ դժուարին ինձ գործէ զընթացս բանիս, գուցէ և խիթալի, շատ գրեսցի ասացեալս իբրեւ առ յուշ ինչ զգաստից մտաց, ողջախոհ սրտից և աստուածասէր կամաց. որոց, և ամենեցուն որք զձեւս զայս և զկարգ կրեմք, դործ կարեւոր ծանիցի միաբանել պատշաճապէս զերկոսին եւս որդիութիւնս, զՀօր մերոյ երկնաւորի և զհօր սեփական ազգիս. և խիղճ ինքնին վկայեսցէ, որպէս և համարձակ վկայէ աներկբայ թէ ոմանք իցէ ի վերայ կալ և զառաջին տեղին ունել, և ոմանք զերկրորդն և զստորին. զի չէ՛ և չէ իսկ հնար զերկոսին բարձակիցս և հաւասարապատիւս առնել։ Եթէ այլոց ոմանց և աշխարհայնոց այլազգ ինչ յայսմ տեսութիւն՝ մեր ճանապարհ առաջիկայ բաց և համարձակ, ընդ որ գնացին մեր իսկ սուրբ հայրապետք և Հեղինակ Ուխտիս. որ և զատ յայլոց, յաւարտ գլխաւորի գրաւոր երկասիրութեանն, Մեկնութեանն ասեմ աւետարանին Մատթէի, քաջայայտ և քաջախոհ բանիւք դրոշմեաց և եթող մեզ օրինակ լծակցութեան աստուածասէր և ազգասէր ոգւոյ. և դիւրին է փափագողացն գտանել և առնուլ ի միտ։

Եւ զի զնախաշաւիղ մեր յիշեցաք և զհեղինակ Ուխտիս, չիցէ անդէպ և զբուն իսկ վերտառութիւն և կնիք սորին՝ զօրինադրեալն ի նմանէ յակն արկանել, և ի նիւթական տպոյն՝ զհոգեւորն հաւաստել. զքառեակ տառսն և զերկու

ամոլս. յորոց մին մակակոչէ զմեզ զՄխիթարեան միաբանքս՝ Վարդապետս Ապաշխարութիւն։ Բան՝ որով սկսաւն քարոզել Քրիստոս, և որով կանխաբանեաց Կարապետն նորա Յովհաննէս, « Ապաշխարեցէք, զի մերձեալ է արքայութիւն » երկնից ». բան՝ որով արժան է ամենայն խոհական քրիստոնէի սկսանել զխօսք իւր ընդ Աստուծոյ, և նովիմբ կնքել զկեանսն. — բան՝ որ այնպէս կարեւոր է կրօնաւորի հրաժարելոյ յաշխարհէ և համակելոյ ի թուխս, զի նովին համեմէր զայլ ամենայն բանս իւր, կամ գէթ ոչ հակառակս նմին բարբառէր, ի շինութիւն անձին և լսողաց, մանաւանդ աշխարհայնոց։ — Իսկ միւս լուծք տառից դրոշմակնքոյ մերոյ՝ փափկագոյն մեզ ընծայեն կոչումն, նոյնպիսի և պահանջեն պատրաստութիւն հոգւոյ, Որդեգիր Կուսի։ Զառաջինն թելադրելով և տպաւորելով նշանակ ուխտիս հեղինակս մեր, իբրեւ սեփական կնիք կամեցաւ դնել ի վերայ սրտից, անջինջ անմոռաց. և աւելի վարկաւ զխոշորութիւն և զխրթնութիւն հանդերձից կամ զարտաքին նշանակս ապաշխարութեան, ըստ խստավար կրօնից կարգաց. նայապէս և զերկրորդս սահմանելով, ոչ այլ ինչ արտաքին նշանակ եդ ի վերայ Որդեգրելոցս Կուսին, այնքան սիրելւոյ իւրոյ, քան զաղօթահամար շարական. այլ ի խորագոյնս սրտից, որպէս յիւրայումն ցանկացաւ տպաւորել զԱստուածամօրն պաշտօն. զսէրն և զջանս նմանողութեան աննման կենաց նորին, խոնարհութեանն, մաքրութեանն, ընկերսիրութեան, վշտակիր համբերութեան, և ամենաշնորհ աստուածասիրութեան. յորս այնքան առաւելեաց՝ որքան հնար էր արարածական բնութեան, մինչեւ յանհասն Սրովբէից։ Այսպիսի բարձր և վսեմական, ամենազեղեցիկ և ամենազնիւ իր, որ յետ Աստուծոյ առաջին է իրաց, տուաւ մեզ դրոշմն և կնիք ի սիրոս, յանուն և ի վաւերական քարտի և արձանի. այսպիսի տեսակ սեփական ուխտիս. այսպիսի հետք հետեւողութեան։ Որպէս զի ընդ օրըստօրեայ հացին զօրութեամբ զոր մաղթեմքս ի Հօրէն մերմէ երկնաւորէ՝ մաղթեսցուք հանապազ և զկաթն իմն կազդուրիչ յերկնաւոր Մօրէս. յԱստուծոյ՝ քաւութիւն և գթութիւն, և յԱստուածամօրէ՝ բարեխօսութիւն և պահպանութիւն՝ Որդեգրացս. որոց կարօտիմքս միշտ և հանապազ, և այժմս առաւել քան զառաւել։

Վասն որոյ և սիրտ ի խոնարհ եղեալ առ ոտս քո, ո՜վ ամենասրբուհի Կոյս, մայր և պահպանիչ Որդեգրացս անարժանից, ափիբերան մաղթեմք հեծութեամբ հոգւոյ, հայեաց յաթոռոց անբաւ քոց գթութեանց, ողորմակաթ և հեզահայեացդ աչօք, որովք առաւել կարծեմք կամիս որսալ զմարգիկ մոլորեալ, քան թէ պշնուլ ի փառս և ի ժառանգութիւն քո յերկինս։ Քո մի բան բաւական եղեւ զԱստուած իջուցանել յերկնից և ծնուցանել առ ի Քէն. և նորա մի բան բաւական եղեւ յանձն առնել քեզ՝ իւր փոխանակ՝ զաշակերտն սիրելի. շատ լիցի, հաւատամ, և քո այժմիկ բան մի միայն՝ առ ի փրկել զմեզ ի փորձանացս և յամենայն վտանգից. անսայթաք և անսասան պահելով զմեզ յորդեգրութեան քում աստ յերկրի, որպէս զի արժանի եղիցուք և անդ յերկինս ժողովիլ ընդ թեւօք քովք, ընդ ամենայն որդիացելոցն քեզ։

Զ

ԲՈՂ ՄԵԶ ԶՊԱՐՏՍ ՄԵՐ, ՈՐՊԷՍ ԵՒ ՄԵՔ ԲՈՂՈՒՄՔ ՄԵՐՈՑ.

Ճանաչել զյողդողդ և սխալակ բնութիւն մարդոյս, գիտել և զվախճանն՝ յոր սակս ստեղծաւ, և անգիտանալ եթէ բազում ջանից պէտք են առ ի ժամանել յարարչագիրն կէտ, կամ ոչ յիշել զանձին վրիպանս և զպարտականութիւն առաջի Աստուծոյ, մեծի ափշութեան է գործ. — գիտել և բաւական համարել զբանսն ինչ և զչափ՝ առ արդարութիւն, յանդգնութիւն է կործանիչ. — իսկ գիտել և անփոյթ կալ կամ յերկուանալ ի հասանելոյ յաստուածակաց կայանս անդ՝ ուր հրաւիրեն կամք Արարչին, ոչ ինչ ընդհատ հոգեկորոյս չար է։ Արդար և ողջախոհ զգաստութեան է ճանաչել ընդ չափու անձին և զպարտականութիւնն, և փութալ հնարել զհատուցումն առ անաչառն և կշռաքնին դատաւոր։ Կամ լաւ և ստուգիւ եւս ասելով, քանզի անմարթ է մարդոյ հատուցանել ինչ Աստուծոյ՝ յորմէ զամենայն ընդունի, նաեւ զդառնալն ի չար ճանապարհէն, և առ ի ստրջանալ անգամ ի մեղաց՝ շնորհք պիտին առ ի ՅԱստուծոյ, ապա ոչ պարզա-

բար հատուցանել, այլ ի դէպ իսկ է ըստ Քրիստոսի խրատուն՝ իրաւախոհ լինել ընդ ոսոխին, ընդ Արդարութեան ասեմ, վասն մեղանացս պարտեաց, մինչ դեռ և իցեմք ի ճանապարհի կենցաղումս. ճանապարհ՝ յորում ուղէկցի մեզ և գթութիւն Այնորիկ՝ որ անդ դատաւոր է ահեղ, և բանտ ունի սոսկալի. իսկ աստ՝ և հայր է ողորմած. անդ անվրէպ պահանջէ զպարտիս մինչեւ ցյետին ընիոնն, իսկ աստ ներէ և շնորհէ եւս զպարտսն ըստ մասին կամ ըստ բոլորին. աստանօր երբեմն անխտիր – և ըստ անքնին իմաստութեան իւրոյ – հաւասար ներէ մեծի և փոքու պարտապանի. իսկ սնդանօր՝ « որում շատ տուաւ՝ առաւել եւս պահանջեսցի »։

Գիտեմք, Եղբարք սիրելիք, զի ի քաջառուաց անտի եմք և մեք. յայնցանէ ասեմ՝ որոց ոչ մի այլ երկու եւս ի վերայ միոյն տուան տագանդք. երկոքին սրբազան վիճակքս, զոր բազում անգամ յիշեցաք յաւուրքս և ի ժողովիս, և ոչ երկբայիմք զի ըստ տուեցելոցն և պահանջիցիմք բազումս և ծանունս։ Վկայէ և իւրաքանչիւր խիղճ մտաց պարտական զոլ առաջի ամենատեսին Աստուծոյ, գուցէ և մարդկան. զի ո՞ արդեօք չունիցի ասել զԱնառակին, « Հայր, մեղայ յերկինս » և առաջի քո », առ քեզ և առ մարդիկ։ Եթէ մի՝ զամ զայս ածեմք զմտաւ հազար ժամ դրդիմք ի սրտէ աղերսել զՀայրն և զդատաւոր, « Թող մեզ զպարտս մեր ». և թելադրիմք ի մտաց՝ հնարս իրաւախոհութեան՝ զգործս ապաշխարութեան, որովք մարթ է ողոքել զերեսս նորա. այն զի և սգաւոր մեռունակ ձեւս գգեստուս և տարազ կենացս հանապազ զայս խրատէ մեզ, զԱպաշխարութիւն. և առաւել եւս քան զյոլովս, զի կնիք մի Ուխտիս սեփական է՝ Ապաշխարութեան գոլ վարդապետ։ Չիք քան զայս խրատ պատշաճագոյն առ առնել նախ անձամբ և ապա ուսուցանել զայլս։

Ամենագութ Ուսուցիչն մեր ընդ յիշեցուցանելն զի միշտ պարտականք եմք առաջի Աստուծոյ՝ առ նմին կարգեաց և զամենագիւտ հնարսն, զգրաւ պարտուցն հատուցման կամ զիրաւախոհութեան, գթողուլն պարտուց մերոցս պարտապանաց։ — Խնդրեսցուք ուրեմն Ապաշխարութեամբ զթողութիւն մեղաց մերոց յԱստուծոյ. և հզօրագոյն հնարս ապաշխարութեան գիտասցուք զԱյիշաչարութիւն, զներելն սղալանաց ընկերին, զամենայն վիշտ և տագնապ՝ որ հասանիցէ

ի մարդկանէ, որպէս սովոր է կարծել կարճմտութիւնս մեր։ Երկոքումք այսոքիւք անանջատ լծակօք աներկբայ յուսասցուք յողորմութիւն Աստուծոյ. որպէս զի և անդատապարտ սրտիւք և շրթամբ կարող լիցուք ասել համարձակաձայն. « Թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց » Պարտապանաց »։

Ա. (Ապաշխարութիւն). Տեսակ յերանելութիւնս

Բ. Անյիշաչարութիւն

Որքան գեղեցիկ են հնարքն զոր եցոյց մեզ Քրիստոս առ ի հաշտեցուցանել ընդ մեզ զԱստուած և թողութիւն գտանել պարտուցս առ ի նմանէ, նոյնքան և անհրաժեշտք, և առանց այնր անմարթ. որպէս և այլով բանիւ հաստատեաց անսուտ բերանն, ասելով. « Երանի՜ ողորմածաց զի ողորմութիւն » գտցեն ». նոյն դարձեալ և այլով օրինակաւ եցոյց, ծառայիւն պարտականաւ բիւրուց քանքարոց՝ առ տէրն, և յիսուն քանքարոյ պարտական ունողաւ, որում սակաւուն թէ նեղէր՝ գտանելոց էր և ինքն թողութիւն հարիւրապատիկ պարտեաց իւրոց. իսկ ոչն ներելով՝ չեգիտ և ինքն ներողութիւն ի տեառնէն, այլ և ի բանտ մատնեցաւ։ Այսքանեօք կրկին և երեքկին օրինակօք, և գեղեցիկ խրատուքն սիրելոյ զմիմեանս, և զթշնամիս իսկ և զհալածիչս, ամենեւին յամենայն կողմանց պաշարեալ պատեն զմեզ պատգամք Կենարարին և ստիպեն։ Մեծաձայն բարբառի անգուստ և գերակայ պատուիրանն լծակից նախապետական պատուիրանին, եթէ փրկութիւն և կեանք մարդոյ հաստատեալ է ի սիրելն զԱստուած և ի սիրել զընկերն՝ միանգամայն։ Այնքան վայելուչ և կարեւոր պատուիրան, որքան հարթ հաւասարութիւն է ամենայն մարդկան որդիութեամբն կամ ստեղծմամբ առաջի Աստուծոյ. մինչեւ հարկ էր, եթէ և չունէաք ինչ պարտս յանցանաց առ Աստուած, սիրել սերտիւ զմիմեանս՝ իբրեւ բնութենակիցս և արգահատել սղալանաց ընկերաց. ապ՝ եթէ ոչ՝ այն իսկ անսիրելութիւն՝ լինէր գլխաւոր պարտականութիւն մեր առ Աստուած։

Ապա ամենայն իրօք արժան է և առաւել քան զարժանն

(եթէ հնար է այսմ լինել), պիտոյ է ճշմարտել գործով զխոստումն մեր, ի խնդրելս թողութիւն յԱստուծոյ, թէ «Որպէս» և մեք թողումք մերոց պարտապանաց»։ Հայեսցուք արդ ի սկզբան խորհրդածութեանս՝ ի մեզ և շուրջ զմեօք. տեսցուք յորպիսի հանգամանս կամք, և որպիսի՞ խնդիրք զմեօք և ի մէնջ յուզիցին. մի՞ արդեօք թերացեալք գոլով ի ներողութենէ և յանյիշաչարութենէ՝ վասն այնր և պարտականք գտանիցիմք առաջի Աստուծոյ և մարդկան. մի՞ արդեօք կարօտեալք և ոչ գտանիցեմք ոգորմութիւն՝ վասն այնր իսկ զի և մեք չողորմիմք այլոց։ Զկամիմ այլ ինչ յաւելուլ և ասել, այլ փափագեմ յամենայն սրտէ՝ մտադիւրագոյնս քննել զբանս զայս, և յօժար և արդարակ կամօք մխիլ ի խորհրդածութիւնս։

Տեա. յԵրևանուրիւնս

Է

ՄԻ՛ ՏԱՆԻՐ ԶՄԵԶ Ի ՓՈՐՁՈՒԹԻՒՆ

Ի բովանդակ տէրունական աղօթս այս մի միայն է բացասութեամբ խնդիր յԱստուծոյ Հօրէ մերմէ մի տանել զմեզ ի փորձութիւն. և հարկ է թէ կարեւոր յոյժ հոգւոց մերոց իմաստ և գիտելիք թաքուցեալ կայցեն ի նմին. և մեզ անկ է քաջ իմանալ և օգտիլ, և մի վայրապար ի մեկնութիւն բանից դեգերել, եթէ զիա՞րգ ի փորձութիւն զոք տանիցի Աստուած, այն՝ «որ փորձէ և ոչ զոք», ըստ Յակովբայ. շատ իցէ մեզ այժմիկ սորին Առաքելոյ հետեւորդ բանն, եթէ «Իւրաքանչիւր ոք յիւրոց ցանկութեանց փորձի, ձգեալ և պատրեալ». յիշել և զՅովբայն, եթէ «Փորձութիւն են կեանք մարդոյ ի» վերայ երկրի». և զԱստուծոյն իսկ՝ ըստ Մովսիսի, եթէ «Միտք մարդկան հաստատեալ են ի խնամս չարի ի Ման» կութենէն իւրմէ». և հուսկ կամ գլուխ ամենայն խրատու՝ բանն Քրիստոսի, յաղօթս կալ ստէպ՝ առ ի չմտանել ի փորձութիւն։ Այս ամենայն բանք և թելադրութիւնք՝ ծանուցանեն մեզ, զի յետ միանգամ ապականելոյ բնութեանս յաղբերակնէ անտի նախածնողացն՝ փորձելոց և պատրելոց ի բան-

սարկուէն, չիք հնար ապերջանիկ ծննդոցս կեալ անփորձ և անխէթ ի վերայ երկրի։ Բնութիւնս մեր ինքնին ամենայն մասամբք և զօրութեամբք իւրովք՝ ընդաբոյս իմն և անմեկնելի փորձութիւն է. յոր յաւելու իւրաքանչիւր ըստ ցանկութեանց իւրոց. և յայնց վերայ յաւելագրին արտաքուստ՝ ի նմանեացն կամ յաչխարհէ. և թէպէտ զգուշաւորաց անձանց մարթ է խոյս տալ ի վտանգաց, չափ իմն դնել յեղյեղուկ յօժարութեանց սրտին՝ զոր կշտամբէն Յակովբոս. այլ ոչ է ումեք հնար ի բնաւ իսկ ի հեթեթանաց բնութեան ազատանալ և արտաքոյ կալ վտանգի, բայց եթէ ուժգին պաղատանօք և հաւատարմութեամբ աղօթելով՝ «Մի տանիր» զմեզ ի փորձութիւն»։ Այսինքն է աղաչել զԱստուած չմատնել զանձն յիւր իսկ անձն, մի թողուլ զի տկարս ի բնէ՝ գթեսցէ յոր միտեալն է, կամ ի գարշ և ի խոշոր ցանկութիւնս՝ թանձրութեամբ մարմնոյն, կամ յուլութեամբն և դանդաղութեամբ. կամ ի խաւարային խորհուրդ. և ի մոռացումն հանդերձեալ բարեացն, թեթեւութեամբ և վայրապար յածմամբ մտաց. կամ յանճահս և յոչ կարեւորս անձինն՝ յողդ-յողդ և ըմբոստ կամօք։

Մարմին, միտք և կամք, բնական և առձեռն իմն շտեմարանք և առիթք են մեզ փորձութեանց, առաւել մերձաւորք և խիթալիք՝ քան զորս սովորաբար կոչեմք փորձութիւնս՝ զարտաքուստ հանդիպեալսն, որք ոմանց շատ՝ այլոց սակաւ պատահեն. և դիւրաւ նուաճին՝ եթէ ոք ընդաբոյս փորձանացն գիտիցէ յաղթել, կամ թէ չնորհս իցէ գտեալ յԱստուծոյ չմատնիլ անձամբ անձին։ Եւ այս իսկ է խնդրուած աղօթիցս, չբառնալ Աստուծոյ առ ի մէնջ զչնորհսն օժանդակս, առանց որոյ վարեալք տարեալք լինիմք ի փորձութիւնս։ Այդ քննութիւն այսպիսի բնածին փորձանաց և ըզգուշութեանն առ ի նոցուն՝ եղիցի մեզ նիւթ խորհրդածութեան ի ժամուս. այլում թողլով նուազի զհետեւեալ մաղթանսն «Փրկեա զմեզ ի չարէն». այժմիկ հաստատեսցուք զմիտս՝ եթէ հարկ է ամենևիմբ փութալ, թօթափել յանձնէ զփորձութիւնսն, կամ այնպէս զգուշանալ՝ զի մի ըմբոնիցիմք ի չարէն, և ի յետին չարէն, որ են դժոխք, ուստի հնար դերծանելոյ չիք յայնմ հետէ։

Ա. Զգուշուրիւն ի Փորձուրիւնց.

Բ. Այլ փրկեա ի չարէն

Մեծ եւ յետին չար Դժոխքն են

Բազումք բազում օրինակաւ նկատեն և նկարեն զկենցաղս կամ զբարոյականս աշխարհ որ է մարդս ի վերայ երկրի. զորոյ քննութիւն և ընտրութիւն թողեալ յիւրաքանչիւր կամս, ինձ կամ է այսօր նկատել զայն, որպէս և յաճախ, միջասահման իմն վիճակ բարւոյ և չարի, բռնաբարեալ յերկոցուն, և ի վախճանի՝ միում յերկոցուն մնալ բաժին, բարւոյն կամ չարին, կամ ամեներջանիկ կամ ամենադժնեայ յաւիտենականութեան, ըստ անվրէպ և ահաւոր Քրիստոսեան վճռոյն. «Երթիցեն արդարքն ի կեանս յաւիտենականս և մեղաւորք» ի տանջանս յաւիտենականս». Սոքա ունայնք ի բարեաց և ոչ իմիք պիտանացուք՝ մատնեսցին որպէս գյարդն սին՝ ի հուր անշէջ. նոքա բարելիցք որպէս ցորեան ատոք՝ ամբարեսցին ի շտեմարանս արքայութեան. «Դողովեսցի բարի» բարին յամանս, և խոտանն ի բաց ընկեսցի»: Բարութեանցն աղբիւր՝ որպէս ծով ասպնջական գետոց՝ ընկալցի գյաղթողսն ի մրցանս կենցաղոյս. ընկալցի և ամենակարն գյաղթեալսն չարեաւ ի ծոց իւր դժոխական: — Յաւիտենականք են իմաստքս և ահաւորք. առ որովք արժան է ի բաց թօթափել զամենայն իմաստասիրական քննութիւնս բնութեան բարւոյ և չարի. և թէ զիա՞րդ սպրդեաց չար ընդ ամենիշխան տեսչութեամբ Աստուծոյ, կամ դիա՞րդ թոյլ տացէն լինել չարեաց, կամ ո՞րպէս զթութիւնն անհուն ոչ արասցէ հուն և զրաւ չարի և պատուհասի չարին: Բացայայտ են մեզ բանք Փրկչին մերոյ. երկաքանչիւր դիմաց այեւայլ հատուցմունքն. բարւոյն՝ բարի, չարին՝ չար, երկաքանչիւր տեւողականք, երկաքանչիւր յաւիտենականք, երկաքանչիւր եւս ծայրալիրք պատարունք՝ ոմն քաղցրութեամբ և ոմն դառնութեամբ:

Ի վերջինս յայս ստիպէ զմեզ կարգ տէրունական աղօթիցս կառուցանել այսօր զուշ և զուրուշ մտաց, թէպէտ և յանհամբոյր խորհրդածութիւն, այլ յօգուտ մեզ. և ոչ թեթեւ ինչ դառն կամ չար, այլ դժնդակն բնաւից և յետնագոյն,

յաւիտենականն կորուստ, դատապարտութիւն անթողլի, դըժոխք անդարձ:.. Եւ ո՞ւմ վիճակեալ է չարս այս դժնեայ, զոր և ի բերան անգամ առնուլ՝ զզուի և խորշի բնութիւնս, և արժան էր իսպառ ի բաց թքանել, եթէ ոչ և ամենահեզ չրթանց Յիսուսի զնոյն բարբառեալ էր, և տարածողաց կենսաբեր բանից նորին՝ զնոյն յաճախ ազդեալ ի լսելիս հաւատացելոց. յայտ է թէ ի խրատ զգուշութեան, զի մի՛ յորմէ այնքան զանգիտէ բնութիւն՝ ի նոյն անկցին անկասկածաբար և ընդարձակօրէն կելով: Վասն ո՞յր են չարիքս այս. — թողեալ զայլս, կայցէ՞ արդեօք և մեզ հրաժարելոցս յաշխարհէ և նուիրելոց կրկին սրբազան կարգօք ի սպասս Տեառն, խէթ ինչ այսպիսւոյ չարի. ժպրհիցի՞ն դժոխք մինչև ի սեղան անգր Տեառն և ի սրբութիւնսն սոսկալիս՝ հասուցանել զժանիս. — գահավիժեսցի՞ և քահանայ Աստուծոյ բարձրելոյ՝ յանյատակն խորխորատ. — կորասցի՞ և կրօնաւոր հրեշտակակերպ ի կապանս անելական բանտին. և աղօթող հանապազամուն, սաղմոսող և պատարագող՝ վախճանեսցի՞ ի վիհն վհատութեան, ուր անսպառ լալ աչացն և կրճել ատամանց: — Ջարհուրիմ ի հարցմանէս, տագնապիմ ի պատասխանւոյ, յորժամ միայնակ նկատիցեմ զհոգի յատենի անաչառն Դատաւորի, ոչ զոք ունելով բարեխօս կամ ապաւէն՝ բայց զգործս իւր: Ոչ ուրուք որոց յասպարիզի մրցանաց կան կենցաղոյս՝ յառաջ քան վախճան կնքեալ է բաղդ, ըստ մարդոյս տեսութեան. ապա և մեք ի սմին պայմանի կամք. մարթ է և մեզ կորնչել յետին չարաւն. և այս լիցի առաջին մեր նկատումն. և երկրորդ՝ թէ որպիսի՞ ինչ իցէ կորուստ յաւիտենական:

Ա. Եթէ գոյր պայման կամ վիճակ քաղաքավարութեան ի վերայ երկրի անըմբռնելի ի չարէն մեծէ, ի յաւիտենականն կորստենէ, ապաքէն ցուցանէր զայն բարութիւն Փրկչին մերոյ, առ ի յորդորելոյ զմեզ յայն և ի կեցուցանել. այլ նա ապանիկ ոչ միայն չասաց, չեցոյց այնպիսի ինչ, այլ և յամենայն խրատանին ոչ զոք ի բաց կացոյց իբրև զերծ և ազատ նա մանաւանդ և այնպիսի եցոյց օրինակ առ որ սպառի ամենայն. հակադարձ ճիգն մտաց և ակնկալութիւն: Յամենայն բազմութենէն որդւոց մարդկան մերձաւորս և ընտանիս և փոխանակս իւր ընտրեալ և իբրև ի ծոց

իւր ժողովեալ երկոտասան ոգիս միայն, զորոց զոտս լուա-
նայր և զերեսս համբուրէր, և որոց տայր իշխանութիւն ի
վերայ ախտից, մահուան և դիւաց, և զերկինս բանալոյ և
փակելոյ, որպէս և արարին առաջի երեսաց իւրոց և դար-
ձան խնդութեամբ պատմելով, «եթէ և դեւք հնազանդին
» մեզ», և նա առաւել քան զայն խնդալի եցոյց զգրութիւն
անուանց նոցա յերկինս ... Եւ սակայն փոքր մի յետոյ ցու-
ցաւ, և երեւի միշտ, զի ոմն ի մերձաւորաց անտի Յիսուսի
արար գործ զարմանալի և զարհուրելի քան զաքանչելագոր-
ծութիւնսն և դիւահալածութիւնս. ինքնին դարան եղեալ
դիւաց, մուտք ստանայի, և մատնիչ տուողին ինքեան զայն-
քան մեծամեծ շնորհսն. և յայնպիսի մատնեցաւ կորուստ՝
մինչ և յառաջ քան զըմբռնիլն իսպառ՝ աւազել հեզոյն Յիսու-
սի զհանդերձեալ դատապարտութիւն նորին. «Լաւ էր նմա թէ
չէր իսկ ծնեալ մարդն այն։ — Ոչ մերձաւորութիւն, ոչ ա-
ռաւելութիւն, ոչ սրբութիւն վիճակի այլ հաւատարմութիւնն
միայն փրկէ զմարդ. «Որ համբերեսցէ իսպառ՝ նա կեցցէ»։

Քաջիկ զայս ստուգեցին մեզ ամենայն առաքինիք և սուրբք,
բանիւ և օրինակաւ, արք զորոց զբանս ի վկայութիւն և ի
զգուշութիւն ունիմք մեզ յետ բանից աստուածաշունչ գրոց,
Հարք և վարդապետք եկեղեցւոյ. և որք ի մենարանս և ի կու-
սաստանս ճգնութեամբ և մաքրութեամբ յարդարեցին զկեանս
իւրեանց, իբրեւ անմարմինք ի մարմնի երեւելով. նոքա իսկ
կուսանքն երկիւղածք և զգուշապահ կրօնաւորք, անճաշակ
ճգնաւորք, աստուածիմաստ հայրապետք, թովմայեանք և
հերոնիմեայք, Ոսկեբերանք և Օգոստինոսք, նոյն ինքն և
Պետրոսք և Պօղոսք՝ հիմունքն եկեղեցւոյ, «ահիւ և դողու-
» թեամբ ջանային գործել զփրկութիւն անձանց»։ Եւ տեսաք
երբեմն զի որ շրջին ի մէջ եօթն ճրագարանաց՝ եգիտ թե-
րութիւն գրեաթէ և յեօթանեսին հրեշտակս եկեղեցեաց իւ-
րոց, և վտանգ իսպառ մերժման և կորստեան։ Այսորիկ ա-
ղագաւ տեսան և տեսանին հասակք և կեանք ողջոյն մաշեալ
ի ճգունս և ի վաստակս, և տակաւին չասեն շատ, և ցյետին
օր շնչոյն եթէ բաւիցէ ոյժ մարմնոյն՝ ճնշեն պահօք և ցաւօք,
իբրու զագան մի ամեհի և երիվար լծընկէց համաբելով
զայն։ Նա և որք ի տիս դալարութեան անփորձք յաղտից
նոցին՝ հրեշտակք հրեղէնք երեւէին, ոչ ինչ ընդհատ ի մե-

ղաւորաց զգաստացելոց բերէին վարս խստամբերս, չարակիրս
և չորակերս. խարազնազգեացք և գետնախշտիք, արիւնաթա-
թաւք ի ձաղանաց և ի փշակիր գօտեաց. և այսոքիկ արք,
մանաւանդ թէ գերմարդկայինք ոմանք, Բեռնարդք, Փրան-
կիսկոսք, Ալոյիզիոսք, և նմանիք նոցա և հետեւողք անթիւք
յարանց և ի կանանց, յամենայն չափոյ հասակէ. որոց հոգիք
հանապազ կախեալ էին զերկնից և քաղաքավարութիւն ընդ
հրեշտակս էր, այլ գիտելով ունել մարմին յերկրի. իբրև ոստի-
կանք խստապահանջք անդուլ ի տաղնապի կացուցանէին
զնա, զի մի ի բարձրութենէն՝ յոր վերացուցանէր զնոսա
աշտիճանն և կարգն շնորհն և սէրն, ստահակութեամբ օց-
տեալ գահավիժեսցին, և լինիցի կործանումն իւրեանց՝ ըստ
տեառնամանախատ տանն՝ մեծ յոյժ։

Բարձրութիւն աստիճանի վիճակին, սա իսկ գլխաւոր ա-
ռիթ մի էր երկիւղի զգուշութեան նուիրական անձանց, որ
և մեզ անկ է. ըստ հասարակաց ծանօթ առակի և ճշմար-
տութեան, թէ որքան ի բարձուէ ոք գթիցէ այնքան և ուժ-
գին տապաստ անկցի և խորտակեսցի։ Ունիմք առ այս և օ-
րինակս յոլովս, և ոչ զոք կարծեմ անգիտանալ, որոց զվարս
Հարանց ընթերցեալ իցէ և զվկայաբանութիւնս. քանի՞ք և
յետ ընդ ջուր և ընդ հուր անցանելոյ վասն անուանն Տեառն՝
անկան զանկումն եղկելի։ Խոստովանողքն՝ ուրացողք եղեն,
տիրասէրքն՝ տիրամատնիչք, և զայնոցիկ ընկալան դատաս-
տան՝ որոց «Որդն ոչ մեռանի և հուրն ոչ շիջանի»։ Քանի՞ք
ի վեհագոյն գահուց վարդապետութեան և հայրապետութեան
ժողովրդոց, որոց գրեաթէ աներկբայ էր ի մարդկանէ ընդ
առաջնոց հայրապետացն դասիլ և ի տօնակարգս եկեղեց-
ւոյ, սակաւ ինչ յետոյ սահեալ և սողոսկեալ դասեցան ընդ
Յուդայի և ընդ Սիմոնի կախարդի, հերեսիոլտապետք ե-
ղեալ և մոլորեցուցիչք մարդկան՝ յորոց յուղղութիւն և ի փըր-
կութիւն կարգեալ էին։ Քանի՞ք և ի մերձաւորագոյն
մերս կարգէ, ի կրօնաւորաց և ի քահանայից, յետ բա-
գում վաստակոց և լաւութեանց անկեալք յայն սղալանս և
ախտս՝ զոր բաղում անգամ ի բեմէ և ի խոստովանութենէ,
դատապարտէին, ինքեանք դատապարտք գտան անփրկանակք,
մինչ լսողք իւրեանց ի փրկութեանն վայելեն աներկեւանք։
Թերեւս մեր իսկ տեսեալ իցէ վարդապետս և քարոզիչս կո-

բովաբանս, այլ և զգուշակենցաղս, այլ սակայն յօտորուտի հետս դանդաչեալս, կամ սաստկութեամբ կրից վարեալս. քանի՞ ցաւօք և պատկառանօք աշակերտք նոցա և ձեռասունք՝ տեսանեն զխրատուսն բարեաց՝ վարակեալս ի չարիս, զոր. աւա՜ղ, այլոց ցուցին ի զգուշութիւն, և ինքեանք ոչ տեսանեն և ոչ զգուշանան, ո՞չ ի դէպ էր գոչել առ նոսա «Բժիշկ, բժշկեա զանձն քո»։... Ոչ զոք կամիմ դատել, և յամենեցուն դատաւորն առնեմ զիս և զամենեսին ապաստան, այլ փափագիմ ինձ և իմոցս նմանեաց ազատել և ի կարծեաց դատապարտութեան։

Յայտ և ծանօթ է մեզ, և իցե՞ն թէ և հանապազ յիշեսք, թէ որոց բաղմագոյն տուան տաղանդք՝ առաւելագոյն և պահանջին տոկոսիս ի տուչէն. և որք կրկնակի առաւելութեամբ ընկալան զլոյս աւետարանին, զգիտութիւն և զվարս սրբոց, յոբնակի եւս խնդրիմք ունել գործս ըստ չափու գիտութեանս. որպէս զի եթէ և ըստ հասարակաց քրիստոնէից գործիցեմք բարիս՝ չիցէ մեզ այն բաւական յարդարանալ։ Իսկ զի՞նչ լինիցի եթէ և զհասարակաց թերութիւնս և ախտս ունիցիմք. «Իսկ» արդ որ զայլս ուսուցանես՝ զանձն քո ո՞չ խրատես». կամ թէ ասիցես և ոչ լսիցես։ Զի՞նչ լինիցի մանաւանդ, եթէ և անդր քան զհասարակաց չափ (եթէ արժան իցէ համարել չափ յայսպիսիս) ելեալ՝ յանարժանս բերիցիս ի խորհուրդս կամ ի գործս. — եթէ արտաքուստ առ աչս մարդկան ընթադրեալ զաշխարհ՝ զնոյն ի ներքուստ ի վերոյ կրօնաւորութեանդ ունիցիս. — եթէ, իբրեւ ոչինչ ունելով՝ զանձուկ և զսէր ընչից կամ նիւթ մի յոյժ ախորժելով ընդունիս և պահես. — եթէ, ի թուիս և ի խոշորս համակեալ՝ ընդ զգեստուք և զզգեստով պաճուճանս ինչ և փափկութիւնս խնդրես։ — Եթէ, որ մեռելութեան կերպարանօք երեւիս ամենայն տեսողաց, խնդրես զճաշակս քո սրել և կենդանի զզգայունդ պահել։ — Եթէ, եօթն անգամ յաւուր օրհնել զԱստուած հրամայեալ, և մարմնով գտեալ յաճախ յաղօթականն վայրի, մտօք յօտար տեղիս գնաս, և լեզուաւ՝ ոչ եօթն այլ և եօթանասնեկին եօթն անգամ վայրաբանես, և երբեմն բամբասես և չարախօսես և զրպարտես, գուցէ՝ և որ օրհնելդ ուսար՝ անիծանիցես իսկ. և որ ստէպ խաղաղութիւն տալ ամենեցուն՝ ոչ փոքր առիթ լինիս խռովութեան։ Որ ոչ միայն

ի յայտնի չարէն՝ այլ և ի ստուերէ անտի նորին զգուշանալ օրինադրեցար, անխտիր սողոսկիս ի կասկածաւոր տեղի կամ յանարժան քումդ վիճակի, կամ յոչ ի դէպ ժամու։ Եւ համառօտ ասել. զի՞նչ եղիցի դատաստան քո առ յԱստուծոյ և ի մարդկանէ, որ զսրբոց ընտրեալ վիճակ, կայան, ձեւ, ընկերութիւն և վարկ, տածես ի քեզ խորհուրդս անսուրբս, որոց գրեթէ անմարթ է և անծինս լինել գործոց անսրբոց, և հոգւով սկսեալդ յուխտ կրօնաւորութեան՝ մարմնով արդեօք գնաս ի վախճան. զդիւրութիւնս ինչ կրօնիդ վայելելով յօժար, զի են են և դիւրք ի միաբանական կեանս և ի վաներս, և թողուս զդժուարինսն ինչ, ոչ միայն զկամաւորն այլ և զկանոնականն։ Եւ որում անկ էր զանարգագոյն իսկ գործ կամ սպաս՝ յաղնուութիւն հոգեւորի վերառնուլ՝ դիտաւորութեամբ և պարկեշտութեամբ, թերեւս զսրբագանս իսկ յանարգութիւն իջուցանես, առանց մտադրութեան, եռանդեան և զգուշութեան կատարելով. և երբեմն եւս իսպառ զանց առնելով և խափանելով, ծուլութեամբ կամ պատճառանօք, կամ իբրու անպատրաստ դատեալ զանձն, և ոչ անդրէն փութացեալ ի պատրաստութիւն։ — Ո՞ւր թողցուք և զպարտս խոկման հանապազ յառաջադիմութեան և կատարելութեան, զմի ըստ միոջէ ուղղութիւն սղալանաց, զանդուլ ջանս ճշգրտագոյն նմանութեան նախատիպին մերոյ Քրիստոսի և հեղինակաց միանձնական կենաց. և զմեծագոյն եւս՝ զբորբոքումն սրտի աստուածային սիրով. որով անկ էր քեզ ողջակիզուլ իսպառ, փոխանակ արեամբ նահատակութեան, զի նովին չափ երդուար նուիրիլ Աստուծոյ քում։

Արդ յայսոսիկ և ի նմանիս թերացեալ և սխալեալ, և երբեմն մեծապէս իսկ յանցուցեալ, այդպէս զայթ ի զայթի ձգելով զկեանս, և մերձեալ ի կատարածն, համարիցի՞ս քեզ բանալ զերկինս։ Բայց գոգջիր թէ ոչ այսքան օխալակեալ իցէ քո. — այլ իցէ և փոխան սխալանաց ուղղութիւնս ըստացեալ. ո՞ւր իցեն քո ամբարք առաքինութեանց. ո՞ր գործք՝ որով զարքայութիւն գնեցեր, և զաթոռն՝ ընդ Քրիստոսի գահակցութեան. ո՞րքան մթերք յուսոյ դիզեալք. քանի՞օն նրբութիւն առ անցանել ընդ դուռն նեղ՝ շալակաւ բարեաց գործոց և խաչին Քրիստոսի. — և ուստի՞ քեզ վստահութիւն՝ ուր մեծամեծք ի սրբոց զանգիտեն և զարհուրին. և

որ պատասխանի ի չքմեղս և ի ջատագովութիւն, եթէ ըստ արժանի կարգաց քաղաքավարեցար և զպաշտօն քո լցեր, և փրկութեան եղեր առիթ բազմաց կամ սակաւուց՝ որոց վիճակեցարդ առաջնորդութեան. և ոչ միայն զքոյդ՝ այլ և զժողովրդեան՝ որոց քաւիչն կարգեցար՝ լացեր զմեղս, և խոովեցար վասն խառնակեցիցն և անկրօնից, և ամենայն անօրէնութեան և ամբարշտութեան որ գործին ընդ դէմ փառացն Աստուծոյ։ Պատրաստ իցես յամենայն ժամ գալստեան Տեառն ի տուէ և ի գիշերի. պատրաստ իցես տալ զհամար տնտեսութեան քո. պատրաստ իցես ի քննութիւն հանդիսանալ ճրագաւ, այսինքն է մանրամասին դատողութեամբ անաչառն դատաւորի։

Երանի՜ թէ այսպիսի ոք էիր պաշտօնեայ Տեառն, արթուն և իմաստուն և հաւատարիմ։ Այլ զի ի վկայութենէն սրբոց և հոգէտեսից գիտեմ յոյժ սակաւուց զտանիլ այսպիսիս, և ոչ նուազունս վրիպեալս ի յուսոյ և ի կարծեաց իւրեանց, զի անձնասիրութիւնն այն ապականիչ կարծեցուցանէ զմեզ առաւել և ոչ որպէս եմքս առաջի Աստուծոյ, կարծեմ խիթալի է գատաստանն քան խնդալի։ Եւ զայս դարձեալ ի սրբոց և ի վեհից ուսանիմք։ Ոսկեբերանն՝ որ մեղադրեցաւ վասն համարձակութիւն յոյժ տալոյ ապաշխարողաց կամ յոյս մեղաւորաց, կարի այլազգ վասն քահանայից ասէ, յոյժ դժուարին զփրկութիւն նոցա թէ ոչ կեցին արդարև քահանայապէս։ Եւ մեծն այն Օգոստինոս այնքան յաճախ զայս ազդէր առ երիցունս իւր՝ մինչև և վեր վազել նոցա և քրթմնջել զի խոովեցուցանէր զոգիս և ահաբեկս առնէր. այլ նա դարձեալ ի վերայ բերէր, թէ կամէի այլազգ ասել՝ այլ ոչ այլ ինչ ազգ տեսանեմ, վասն որոյ և զնոյն ասեմ։ Եւ մերձագոյն ժամանակաւ, քահանայ ոմն որ և իբրեւ պաշտպան քահանայից մեծաւ հռչակաւ տօնի յեկեղեցւոջ, սակաւ ամօք յառաջ քան զվախճանիլն՝ հիւանդացեալ հիւանդութիւն մեծ, և տեսեալ ի տեսլեան սուրբս ոմանս, և հարցեալ՝ եթէ հասցէ՞ փրկութեան, ընդ երկբայութեամբ ասացին զանդիրն. այլ խոստացան նմա առ Աստուծոյ ամս եւս չորս կենաց. որպէս և եղեւն, զի կեցեալ քառեամ եւս, և յանկարծուց վախճանէր։ — Թողից յիշել զբազում յայտնութիւնս առ ծառայս Աստուծոյ որ վասն կորստեան և դատապարտութեան ոչ սակաւուց քահանայից,

մանաւանդ խառնակեցիցն և անպարկեշտից. և զդառն կշտամբանսն Քրիստոսի՝ իբրու հանապազօր դատափետելոյ ի նոցանէ՝ ի սրբումն պատարագի. — և զառած բանի հոգեխօսից արանց, թէ սակաւք ի քահանայից ի քաւարան մտանեն, այլ շատք այնք են որ կամ փութանակի յերկինս ժամանեն՝ վասն բարի բարի գործոցն, և կամ վրէպք յայնցանէ՝ իջանեն ի դժոխս։ Զնոյն է իմանալ և զկրօնաւորաց, որ բազմաթիւք իսկ են քան զքահանայս։

Սակայն եթէ գուցէ ոք անհաւան սրբոցս բանից և երկիւղածաց, թողցէ զբազումսն և զսակաւս, և զհետ կրթիցի միոյ միայնոյ, զանձին իւրոյ ասեմ. անձամբ զանձն դատիցէ։ Գոգցուք եթէ մի ոք քահանայ կամ կրօնաւոր ի հազարաց և ի բիւրուց՝ դատապարտիցի. միթէ չէ՞ր և յայնժամ արժան տարակուսել որպէս զերկոտասան առաքեալսն, միթէ ե՞ս իցեմ։ Իսկ ես և ընդ այն երկբայիմ. թէ գուցի՞ ոք որպէս զՊետրոսն և զՅովհաննէս՝ որք այնքան անմեղութեամբն և սիրովն առ Յիսուս՝ տակաւին խիթային զանձանց։ Իսկ եթէ ուրուք խիղճ վկայիցէ՝ զի ոչ մի այլ և աւելի նուազս քան զՅուդա՝ մատնեաց զՏէրն՝ անարժան գործովք, ատելութեամբ և աղտեղութեամբ, կարիցէ՞ նա անընդդոստ զնոյն բան ասել։ Համարեսցուք ևս, եթէ և մին այն խղճապարտ քան զամենեսին՝ ոչ իսպառ կավուցեալ զաչսն ի մոլորութիւն հատեալ իցէ, այլ և ակն ունիցի ողորմութեանն Աստուծոյ. այլ իցէ՞ բաւական վարկպարագի ակնկալութիւնն կամ գիտութիւն գթութեանցն Աստուծոյ՝ առ ի կեցուցանել զնա, մինչդեռ գործք ուղղութեանցն և ապաշխարութեան յոյժ թեթեւք են քան զմեղանացն. մի՞ արդեօք յոյս նորա սնոտի յանձնապաստանութիւն իցէ քան վստահութիւն։ Եւ Քրիստոսի վճիռն գոչէ հանապազ անխտիրս. «Եթէ ոչ ապաշխարիցէք՝ ամենեքեան նոյնպէս եւն։

Բ. Եւ արդ զի կորուստն ոչ նիրհէ, այսինքն, ամենայն ողորմութիւնք Աստուծոյ ոչ են բաւական ի բառնալ զարդարութիւն իւր, և դժոխք ոչ փակին մինչև ոչ կլցեն զյետին կուր իւրեանց. — զի ոչ ումեք փրկութիւն աներկեւան է, այլ մանաւանդ խիթալի եւս յուլացն և անզգուշից, և զի դատաստան խիստ լինի ի վերայ պաշտօնէից Աստուծոյ, կարեմք ընդ սրբոց և հոգետեսից ասել՝ դառն խոստովանութեամբ,

զի կայցէ և մի և առաւել քան զմի որ դատապարտեալ՝ ստուգապէս։ Ո՞վ ահեղ եւ քստմնելի ստուգութիւն. Քահանայ Աստուծոյ և կրօնաւոր սրբազգեաց՝ դատապարտեա՞լ. — պատարագող Քրիստոսի՝ ի դժոխս. հրաժարեալն աստանօր յաշխարհէ՝ անդ հրաժարեալ յամենայն բարութեանց երկնից, մեռեալ հոգւով գլխովին։ Հոգին այն՝ ոչ միանգամ եւեթ որպէս զայլս ի մարգկանէ փրկեալ երբեմն արեամբն Քրիստոսի, այլ և ընդ ամս երկարս, թերեւս աւելի քան զբիւր անգամ թաթաւեալ լուացեալ արեամբ նորին, յօրըստօրէ պատարագելն, արդ ի նմին իսկ յարենէ Տեառն՝ չար քան զՊիղատոս և զՀրեայսն՝ բողոքեալ և ընթագրեալ։ Հոգին այն որ էառ կնիքս աստուածայինս սրբազան օծութեամբք առ ի քաւել և փրկել զայլոց հոգիս, արդ կամ ոմամբք ի նոցունց իսկ զորս յանցոյց և գայթակղեցոյց, և կամ թէ միայնակ՝ մատնեալ ի կորուստ յաւիտենական... Ո՞վ, զի՞րդ չիջար, արուսեակդ վարսաւոր, որ ծագէիր ի բարձանց լուսատու լինել բազմաց ի շաւիղս արդարութեան և անկար ի խորխորատ խաւարին, յորում չծագեսցէ բնաւ և կայծ մի նշուլի։ Ո՞ կարծէր թէ այս լիցի կատարած քահանայիդ և կրօնաւորիդ, որ այնքան ամս բարւոք կեղծաւորեալ արտաքուստ, իսկ ի ներքոյ կեցեալ թուլութեամբ, խեռ և անմաքուր կրիւք, փոխանակ երկնից օթեւանացն՝ յարդարեցեր քեզ տեղի ընդ իշխելսն ի սկզբանէ ի վիհ կորստեան։ Եւ զի՞րդ չածէիր զմտաւ՝ թէ գուցէ վախճան ամենայնի. թէ՝ ոչ միայն անսպառ չեն ամքս, ոչ կեանք անանցք, ոչ երիտասարդութիւն երկարատեւ, ոչ ծերութիւն աներկեւան, ոչ մահ կաշառաբեկ և մոռացկոտ, այլ և յոյժ սակաւ և թուով են ամք մարդկան. և զչատ զոք ի ծանօթից և ի մերձաւորաց յուզարկեալ էիր ի գերեզման, նաև զմանկագոյնսն քան զքեզ. — և ո՞չ յիշեցեր՝ զի որ նոցայն հանդիպեցաւ երէկ՝ մնայր քեզ առ վաղիւ, գուցէ և այսօր իսկ. — Եւ յորժամ աղօթէիր վասն նոցա անվտանգ հասանել ի փրկութիւն և ճողոպրել ի ճիրանաց գեհենին, ո՞չ յիշէիր զի յետ սակաւու միոյ զնոյն ասելոց էին յետամնայքն վասն քո։ Իսկ եթէ յիշելով յիշեցեր զայս ամենայն՝ զի՞րդ ոչ պատրաստեցար զանդարձ ուղեւորութիւնն. հիմ ոչ հոգացար պաշար և թոշակ մեծի ճանապարհին՝ ընդ որ ամենայն որ երթայ և որ ոչ դառնայ. — զի՞րդ աչք քո՝ որ այգու այգու

ողջունէին զլոյս կանթեղի տաճարի Տեառն, և առաւել քան զայն՝ զննէին զխորհուրդս սոսկալի սեղանոյն, և հանապազօր յածէին ի գիրս աստուածաշունչս և յաղօթից մատեանս, աչք քո այդ՝ զի՞րդ այնքան չլացան ի շողում ի շռայլ նշոյլս աշխարհական դեղոյ և ընչից, կամ յորպիսի և է հեթեթանս կենցաղականս և անցաւորս, մինչև չտեսանելոյն և չյիշելոյն առնել անանցական Բարեացն և երեսացն Աստուծոյ։ Կամ ի՞ւ այնքան քաղցրացան և զօրացան ի քեզ հրապոյրք և բաժակս սփոփանաց երկրաւորաց՝ մինչեւ զերկնաւորսն զանց առնել։ Ո՞րքան թոզեր բռնանալ ի վերայ քո չարաչար կրից և ախտից՝ մինչեւ ոչ ընդոստնուլ յանդուլ և յանլուսական բարբառոյն՝ որ յանապատի մենաստանիդ գոչէր և ասէր. Պատրաստեա զճանապարհս Տեառն քո, ուղիղ արա զշաւիղս նորա. մանաւանդ թէ զքո իսկ շաւիղս ուղղեա և սրբեա, զի մերձեալ է գալուստ Տեառն ի կալ իւր, հեծանոց ի ձեռին, կշիռք և սուր ի ձեռին։ Բազում անգամ ասացաւ, քարոզեցաւ, զգուշացուցաւ քեզ արթուն լինել յամենայն ժամ, մանաւանդ ի յառաջել տիոցդ և ամաց զամս փոխել. իսկ դու յո՞ր թմբրութիւն անզգայեալ ննջէիր, և ոչ կանխէիր ի պաշտամանդ՝ յոր կարգեցար. ոչ զպարտսդ յիշէիր, և ոչ զյիշեալսդ հատուցանէիր. ոչ զթերիդ քննէիր և ոչ զքննեալսն ուղղէիր, ոչ զօրըստօրեայն և ոչ զտարեկան հոգեւոր կըրթութիւնս մտադիւրն կատարէիր։ Աստէիր թերեւս ընդ յուլաց և վատաց՝ Առ վաղիւ առ վաղիւ. և անցին միրստմիոջէ վաղիւք և վաղորդայնք մանկութեան և երիտասարդութեան և կատարեալ տիոց, և եհաս օր՝ որում ոչ եւս կայ վաղիւ. — եհաս օրն՝ զոր անկ էր քեզ խորհել զամենայն աւուրս կենացդ. — օր մի՝ յորում զամենայն ժամանակի կենացդ պահանջիցիս համարս. — օր աննման աւուրցն անցելոց. — օր մի համառօտ այլ անանց և անզրաւ. համառօտ դատաստանաւ, անանց և անջրելի դատակնքաւ. եհաս երազագոյն քան զփայլակն փայլատակեալ, երեւեցոյց զքեզ ինքեան որպէս էիրդ, չանթեաց զկնիք կորստեան ի ճակատ քո կորակոր, հատ կտրեաց զքեզ ի մասնակցութենէ համօրէն սրբոց և բարեաց... Արդ գնա՛, էջ, անկիր ի գուբ անդարձ կորըստեանս ընդ սատանայի և ընդ դիւաց նորին, ընդ Դադանայ և ընդ Յուդայի. բաժին քո այսուհետեւ հուր և խաւար, ժառանգութիւն քո տանջանք յաւիտենականք։...

Ո՜հ, ո՞ կարիցէ կերպարանել զխաւարն զայն արտաքին, որպէս Քրիստոս կոչէ, յորում չտեսանի և չիք յոյս տեսանելոյ իմիք՝ որ չիցէ փափագելի անտես մնալոյ. քանզի միայն գարշութիւն անձինն, արհաւիրք դժոխոց և զազրադէմ կերպարանք ընկերաց և դիւաց՝ լիցին անհամբոյր երեւոյթք դատապարտելոց։ Եւ սակայն զի՞նչ իցէ խաւարս այս՝ որ այնքան դառն է կուրաց և բանտելոց՝ առ արտաքին խաւարաւ գեհենին՝ զոր հաւատովք միայն մարթ է սակաւ մի ըմբռնել, այլ և ոչ մտօք հասու լինել, որպէս և ոչ այլոցն զրկմանց և պատուհասից դժոխայնոց, որպէս և ոչ զբարիս արքայութեան ի վերայ երկրի։ Զի ընդ աննշոյլ և անյոյս թանձրութեամբ այնր խաւարի արտաքնոյ՝ իցէ և նեղութիւն բանտին. կէտն այն անվայր վայրին՝ յորում կաշկանդեալ կայցէ տարամերժեալն յընդարձակութենէն երկնից՝ զամենայն յաւիտեանս. — ուր ոչ միայն չիք փախուստ, այլ և ոչ խլրտել անգամ՝ այնմ, որ գանգատէրն աստանօր ընդ անձկութիւն բնակարանին, ընդ պարիսպս որմոցն, ընդ պահս և ընդ պահակս, և խրամատեալ զհրամանս՝ դեգերէր յանպատշաճ տեղւոջ կամ ի ժամու։ Ոչ նուազ քան զխաւարն՝ և խոհերք զազրութեան տելւոյն տարտարոսին, նեխն և երրն, հոտն և ծուխ ծծմբոյն, փոխանակ փափկութեանց և անուշահոտութեանց և գեղեցիկ տեսլեանց, յորոց էր ինչ որ աշխարհականաց միայն ներելի էր, և էր որ և ոչ նոցա։ Ընդ այսոցիկ և միոյ միոյ զգայարանաց առանձին կիրք իւր և ցաւք և զզուանք, փոխանակ զի ոչ զկծեցոյց և մահացոյց զիւրաքանչիւր ի կեանս յայս. ծանր վարկաւ զկանոնեալ ժուժկալութիւնն և զպակասութիւն ինչ սփոփանաց, յորոց մեծագոյն մասն մարդկութեան զուրկք իսկ են, և հանապազ առաջի կային աղքատքն և կարօտեալք ոգեպահ պարէնին։ — Ընդ սոսին և արհաւիրք, սոսկմունք և քստմունք անբացատրելիք լեզուաց, զորս ի յարաժամ սարսուռ և ի կրճել ատամանց՝ օրինակեն գիրք։ Ընդ նոսին և լալիւն և ողբումն և աչխար անլռելի. և դառնադառն նզովք և անէծք իբրեւ զհուրն Սոդոմայ տեղացեալք անընդհատ, փոխանակ երեքսրբենին փառատրութեանց։ Ընդ այսոցիկ և որդնն այն հանապազակուրծ, գիտակցութիւնն գազանացեալ, յուսահատութիւն անկարկատելի, յիշատակն խոցոտիչ վրիպելոցն բարութեանց, անդառնալի տարազրութիւն ի դրախտէն կենաց, մերժումն անմերձենալի յամենայն ծանօթից, և ամենաթշուառ, ամենադառն և անթարգմանելի անջատումն յԱստուծոյ ի պատճառէն իւրմէ։ Եւ բովանդակութիւն ամենայնի այսոցիկ՝ անչափելի յաւիտենականութիւնն այն՝ որ իբրեւ միատարր գերեզման և կափարիչ անտղելի՝ շուրջ պատէ և կոխեալ կայ կայի ի վերայ դժոխոց և որոց ի նմայն։ Յաւիտենականութիւն տանջանաց՝ որ յիմարեցուցանէ զթերահաւատս, դողացուցանէ զհաւատացեալս, ափշեցուցանէ զսուրբս անգամ. իսկ Քրիստոս ինքնին վկայէ զտեւողութիւնն անվախճան, զոր չար քան զամենայն տանջանս զգայ և կրէ դատապարտեալն հոգի։ Զիք նմա այնուհետեւ ոչ թիւ և ոչ չափ, ոչ շրջանք դարուց և ոչ պարագայք ամաց, և ոչ մի բնաւ վայրկեան կամ բոպեակ՝ որ լինիցի անցեալ. ոչ հնութիւն և ոչ նորութիւն, ոչ առաջին և ոչ միջին և բնաւ ոչ վերջին, ոչ ծնունդ և ոչ մահ. ոչ մի ապագայ, ոչ փոքր մի փոփոխութիւն. այլ նոյնութիւն համատարր, նոյնութիւն անմխիթար, գոյութիւն իմն՝ զոր ոչ կեանս և ոչ մահ է կոչել, ամենավիշտ ամենատոչոր. զոր և ծայրիւ մատին ի ջուր թացելոյ ոչ կարասցէ զովացուցանել երբեք Ղազար. — քանզի իսպառ ի բաց բարձումն է անդ գթութեան և ողորմութեան։... Սպառին բանք և կամք մեր յայսքան խորս դառնութեան. և թէ կարէին ևս՝ խորշէին շրթունք իմ այլ եւս պապաջել, և արատել արդեօք զերկիւղած լսելիս և զողջախոհ սիրտս։ Այնքան զարշելի են իրք՝ զի յիշատակն անգամ խոցոտէ և քաքնեցուցանէ զսիրտս. և թերեւս չհանդուրժէ բնութիւն ժամս ձիգս ի վերայ կալ խորհրդեանս և ոչ յայլ յայլմէ լինել, կամ թէ և մեռանել իսկ. որպէս որոց տուաւ ի տեսլեան սուզ ինչ տեսանել զկերպարանս դժոխոց կամ դիւաց, և ապա ի զգայութիւն եկեալ և աղօտ աղօտ ինչ յիշէին, փափագէին այնուհետեւ զկեանս ողջոյն ընդ հուր գնալ և ընդ տանջանս՝ քան միանգամ եւս տեսանել զոր տեսինն։

Փափագէի և ես՝ ի փակել բանիւս զտեսարանն չար քան զամենայն տեսարան, սակաւ մի զգաստապէս տեսող լինել յանուրջս կամ յարթնութեան՝ այնմ՝ զոր ոչ ումեք կամիմ տեսանել անդէնն. քանզի զայս թելադրեն և սուրբք. որպէս և ասէր ստէպ քաղցր սիրտն և քաղցրաբանն այն Բեռնարդոս,

որոյ «հանապազ միտք յերկինս էին կամ երկինք միտքն
» Ի՛ջցուք, եղբարք իմ, կենդանեաւ մերով ի դժոխս, զի մի
» իջանիցեմք ի մահուան մերում»։ Եւ կենաց ճանապարհի
առաջին աստիճան երկիւղ չարին և որ յետ չարին է. որպէս
և ամենայն աստուածամատոյց իմաստութեան սկիզբն երկիւղ
Տեառն է։ Լաւ է սակաւ մի և առ անգամ մի երկնչել, քան
ի մշտնջենաւոր արհաւիրս անդ տագնապել անպուրծ։ Լաւ
է փոքու իւիք վարանիլ՝ քան յանելանելի վտանգս անկա-
նիլ. լաւ է և սակաւ մի տոյժ առ ի պահուստ բազմին։ Բա-
րի է գկեանս իսկ կորուսանել՝ զի զարքայութիւն շահեսցուք.
բարի է մատնել զմարմին և փրկել զհոգին։ Եւ թէ ոչ օ-
տարոտի համարիցիք յետ այսքան բանից լսել, ասացից, թէ
մարթ է մոռանալ զչար դժոխոց, այլ յիշել զմեծագոյն եւ
չար, որ գուցէ անհաւատ թուիցի. սակայն գոյ իսկ, և է
առիթ չարին. Մեղքն։ — Զգուշացի՛ր ի մեղաց, և զերծցիս
ի պտղոյ նորին. յիշեա զմեղս և ապաշխարեա, և փարատին
տագնապք դժոխոց։ Այլ ապաշաւեա զճշմարիտ ապաշխարու-
թիւն՝ յամենայն սրտէ և յամենայն անձնէ. և համառօտա-
գոյն եւս ճանապարհ, ապաշխարեա սիրով, ըստ Մագդաղե-
նին. զի «Որում շատ սիրեաց՝ շատ թողցի նմա»։ — Սէր
միայն յաղթէ երկիւղի. Սէրն Աստուծոյ մերժէ զարհաւիրս
մահու և դժոխոց։ — Աւադիկ քեզ ճանապարհք երկու. մի
ճանապարհ սիրելւոյն, բարձր և թռչուն. միւս ճանապարհ՝
ստրջացելոյն, նեղ և անձուկ, ճանապարհ ապաշխարութեան։
Ընտրեա քեզ զարժանն, զմի յերկուցդ. զի չիք այլ քան զգ-
դոսա, բայց եթէ ճանապարհն լայն և ընդարձակ՝ որ տանի
և հանէ ի կորուստ։ Նա թէ կամիս՝ զերկոսին իսկ ընտրեա
միանգամայն. նախ ընդ ապաշխարութեանն անկանել ուղի,
ապա ընդ սիրոյն շաւիղ, կամ մերթ ընդ այս և մերթ ընդ
այն փոփոխելով. շատ է թէ ի կորստականէն միայն ի բաց
դարձցիս և հեռասցիս, և այնքան հայեսցիս ընդ այն՝ որքան
զի առաւել եւս յորդորեսցիս խորշել և փախչել յայնմանէ,
և պնդագոյնս փութալ ի փրկականն ճանապարհ. և երագա-
գոյնս քան զփախուստ ամաց և կենաց և զմերձենալ մահու՝
սուրալ դիմել անկանել առ ոտս հոգեսիրի Փրկչիդ և ասել.
Գոհանամ զքէն, Տէր իմ և փրկիչ, զի տակաւին գոյ ինձ
համարձակութիւն կարդալ զքեզ՝ Հա՛յր իմ, թէպէտ և անա-

ռակ գոլով իմ որդի և յոյժ օտարացեալ ի քումդ նմանու-
թենէն։ Գոհանամ զքէն, Տէր, զի յառաջ քան զկոչելդ զիս
յատեան համարոյ գործոցս՝ կոչես յատեան ապաշխարու-
թեան, և տաս տակաւին ժամանակ ուղղութեան վարուց և
դիտման։ Գոհանամ զքէն, զի ոչ մատնեցեր զիս ի կորուստ՝
յոր բազում անգամ ձգեալ երթայի գործովք՝ որովք բազմաց
իսկ դատապարտեալ է։ Այլ կամ տակաւին ի վտանգի և
յերկբայս փրկութեան. և յառաջընթաց կեանքս իմ, մեծ
մասն կենացս առաւել երկիւղ յիս արկանէ քան վստահու-
թիւն։ Սակայն և այնպէս կեամ տակաւին ի տեզուոջ յուսոյ
և փրկագործութեան։ Ոչ ումեք է վհատել առաջի նշանիդ
կենաց, որում երկիր պագանեմ, և որով աղաչեմ և խնդրեմ՝
մի՛ եւս թողուլ զիս ի փորձութիւնս՝ յոր սովորեցի երթալ.
այլ փրկեա՛ յամենայն հոգեկորոյս չարեաց, և ի չարէն վերջ-
նոյ. որպէս զի, թէ ոչ ընդ նախաժամանսն՝ գոնեա ընդ ա-
նագան եկսն գոչեցից և ես յաղթական և փրկական երգով,
«Տէր, հաներ իդժոխոց զանձն իմ, և փրկեցեր զիս յայն-
ցանէ՝ որ իջանեն ի գուբ... Տէր, Աստուած իմ, յաւիտեան
» խոստովան եղէց քեզ»։

Ը

ԶԻ ՔՈ Է ԱՐՔԱՅՈՒԹԻՒՆ ԵՒ ԶՕՐՈՒԹԻՒՆ, ԵՒ

ՓԱՌՔ, ՅԱՒԻՏԵԱՆՆ, ԱՄԷՆ.

Ա. Արիութիւն. Ուղղութիւն վարուց.

Եթէ չէին այնպէս ահագինք սպառնալիք յաւիտենական կորստեան, գուցէ բազմաց և ոչ այնքան ցանկալի հնչէին ի սիրտս՝ աւետիք յաւիտենական փրկութեան։ Նա և ի կենցաղականս՝ ոչ երբեք այնպէս մեծ ուրախութիւն լինի մարդոյ՝ որպէս ի վայելսն յետ վտանգի մեծի կամ կասկածի վտանգին։ Վասն այսորիկ և քաղցրուսոյց վարդապետն մեր Յիսուս՝ թելադրէ յետ մաղթելոյ զփրկելն՝ ի չարէն զոհանալ զՀօրէ, յիշատակաւ անճառիցն բարեաց խոստացելոց. «Քո » է արքայութիւն և զօրութիւն և փառք». զի ոչ միայն փրկէ այլ և կեցուցանէ, թագաւորեցուցանէ, և փառաւոր առնէ։ — Այլ մեզ՝ մինչչեւ ամբարձեալ ի փառս արքայութեանն՝ կայ մնայ հասու լինել և Զօրութեան, զոր հրաշալի իմն արուեստիւ եղեռ ընդ նոսին՝ Քրիստոս, իբրու շաղկապ ոչ միայն երկոցուն նոցին այլ և բովանդակ աղօթիցն. իբրու այն թէ առ ի խնդրել մեզ յԱստուծոյ Հօրէ զբարիսն և առ ուղղել զգործս մեր, կամ վասն պարգեւելոյ մեզ Աստուծոյ զհայցուածքս և փրկելոյ ի փորձութենէն և ի չարէն, ի դէպ իցէ ուժոյ իմն մեծի և կարողութեան։ Վասն որոյ Զօրութիւն աստանօր ոչ զԱստուծոյն լոկ իմանամ, այլ Աստուծով զմարդոյս. զգործակցութիւն սորա ընդ շնորհաց նորին. զի առանց այնր՝ ամենայն զօրութիւն Աստուծոյ ոչ միայն իբրեւ անազդու և անպիտան իմն լինի առ մարդս դանդաղ և պղերգ, այլ և փոխի ի զօրութիւն դժնդակ, զօրութիւն վրէժխնդիր, զօրութիւն կորուսիչ և ոչ կեցուցիչ։ Եւ զայս օգտակարագոյն մեզ կարծեմ խորհրդածել՝ քան զահաւոր

և զամենակալ զօրութիւնն Աստուծոյ, որում ըստ Առաքելոյն և դեւք հաւատան և սարսեն՝ այլ ինչ ոչ օգտին։ Յամենայն ի յատկութեանց Աստուծոյ մեզ յայտնեցելոց՝ կարծեմ զայս յայտնագոյնս գիտէ ամենայն հաւատացեալ. այլ գուցէ սակաւագոյն գիտիցէ և խոկայցէ, եթէ առ ի գլուխ հանել Աստուծոյ զկարեւորագոյն գործ փրկութեան՝ հարկ իցէ և իրաքանչիւր ումեք ձեռն տալ Աստուծոյ, ոչ իբր կարօտի և նուազելոյ, այլ զի ինքն մարդն պինդ ունիցի զայն ձեռն, յորմէ դարմանեալ՝ կեայ աստ, և որով կարէ կեալ և յաւիտեանս. քանզի ըստ գեղեցիկ առածի վարդապետին սրբոյ, «Որ արարն զքեզ առանց քո՝ ոչ կամի փրկել առանց քո»։

Եւ ոչ մի ինչ ի բարեաց՝ յորս խորհրդածեցաք յաւուրքս՝ յաջողեսցի մեզ, և ոչ ի միոջէ չարէ ճողոպրել կարասցուք՝ առանց զօրութեան։ Ամենայն չինուած մեքենայիւք և գործեօք յորինի. և պատերազմն զինուք և ռմբոք մզի. այլ ոչ ինչ յաջողէ կուտելովք զինուք և մենքենայիւք՝ եթէ ոչ ձեռն չարժուն վարեսցէ զնոսին. հասակ յաղթ և կազմուած զեղեցիկ՝ եթէ ոչ ունիցի և զօրութիւն՝ պատկեր է և անդրի կամ դիակն պաճուճեալ։ Ըստ այսմ և զէն և զարդ անձանց մերոց, գրեան վարդապետութեան և աղօթից, հրահանգք և կրթանք, կանոնք և սահմանադրութիւնք, գիտութիւնք հոգեւորք, ծանօթութիւն իսկ սղալանաց մերոց և յետամնացութեան, և յարգ և ընտրութիւն առաքինութեանց. այս ամենայն ոչ ինչ ոչ օգտեսցեն մեզ (զի չասացից թէ և ի վնաս իսկ լիցին), եթէ ոչ արիապէս ձեռն ի գործ արկցուք։ Ոչ վայրապար և յարտաքնոց և ի ներքնոց իմաստասիրաց՝ Արիութիւն ի գլուխ առաքինութեանց կարգեցաւ. իբրու զի նա ինքն է ոյժ և մղումն որ զամենայն բազմամասն մեքենայն շարժէ խաղալեօք և ճախարակօք, և առանց որոյ՝ ամենայն դադարեալ և խափանեալ մնայ։ Անգութ կամ անգէտ էր մեքենագործ և արուեստաւոր՝ որոյ յարդարեալ զմեծ և զանազան գործին՝ ոչ ուսուցանէր և զհնար չարժմանն և վարման։ Անմարթ էր ուրեմն ամենաբարւոյ արուեստաւորի և արարչի մերոյ՝ այսքանեօք պիտոյիւք և ծանօթութեամբք յարդարել զմեզ՝ և չտալ զօրութիւն վարելոյ զանձինս ի բարին և շրջելոյ ի չարէն։ Այն որ արար զքեզ իւր նըման՝ ապաքէն հոգւովն արար, քանզի «Հոգին է կենդանա-

» բար, մարմինն ինչ ոչ օգնէ ». և որպէս Առաքեալ պարզէ, Որ ետ մեզ զհոգին՝ նա և զառնելն ետ, այսինքն զվարելն հոգւով։ Արդ զի ունիմք յԱստուծոյ մեզ տուեալ զօրութիւն, գէթ զնախկին շարժմանն, և ի մեր ձեռս է երագելն և յեղանակել, յայս բովանդակեսցին խորհրդածութիւնք կրթանացս, եթէ առանց զօրութեան, կամ որ նոյն է արիութեան և ժրութեան, ոչ է մեզ հնար կատարել զընթացս մեր և ժամանել ի նպատակն. և թէ յի՞նչ կամ յո՞ր կոյս առաւել արժան իցէ մեզ շարժել, դիմել և գործել։

Բնութիւն կենաց՝ զոր ուսաք և գիտեմք մշտատեւ փորձանս լինել ի վերայ երկրի, յետամնացութիւնս մեր յասպարիզի լաւութեան, խոտորութիւնք ուղղելիք, թերութիւնք լրանալիք, համառօտութիւնք սահմանեալ ժամանակի և երկարութիւնն զոր պահանջէ գործ կատարեալ, հեշտասիրութիւն կենցաղականիս և նրբութիւն արքայութեան երկնից՝ որ ի բռանց միայն կորզեալ լինի, այս ամենայն քաջ իսկ բողոքեն՝ եթէ արիութիւն պիտոյ է մեզ. և այնքան առաւել՝ որքան բարձրագոյն եղաւ մեզ կէտ ձկտելի և պատուականագոյն պսակ ըմբռնելի։ Վասն այսորիկ որ սկսաւն քարոզել զարքայութիւն երկնից մերձեցեալ, վճռեաց եթէ բրնաբարողաց է այն. և Անօթն ընտրութեան, եթէ « Բազում » նեղութեամբք պարտ է մեզ մտանել յայն հանգիստ ». և ամենեքին որք մտին՝ զսոյն հաստատեցին և բանիւ և փորձիւ. և որոց զհետ կրթեալ է ցանկալի մտիցն՝ հանապազ ի սմին կան և տքնին, այսինքն է ի գործել զօրութեամբ և ժրութեամբ։

Թէպէտ և հասարակաց են օրէնքս, այլ և առաւել զաստուց ոմանց. զի են իսկ ոչ սակաւ արուեստք և գործք՝ յորս նուազութիւն զօրութեան թէ և ստգիտ ինչ ածէ, այլ ոչ իսպառ ի դերեւ հանէ զգործն։ Ոչ այսպէս և ի զինուորութեան. զինուորութիւն և արիութիւն գրեաթէ համանիշք են. մարտիկ ըստ անուան այլ ոչ գործով՝ ոչ թէ միայն ոչ պսակի, այլ և յիւրոց իսկ զինուորակցաց և ի զօրավարաց փաշաման կրէ և մահու իսկ պատուհաս՝ իբրու դասալիք և մատնիչ։ Եմք և մեք, Եղբարք, զինուորեալք և ճակատեալք, այն զի « զէն զինուորութեան մերոյ ոչ է մարմնաւոր այլ հոգեւոր, առ ի » քակելոյ զամուրս բանսարկուին », որպէս խրատեցաք ի

յառաջագէմն Պօղոսէ. — Է և մեր զգեցեալ համազգեստ դասուց, թէպէտ և ի ստեւոյ և ոչ ի պղնձոյ և յերկաթոյ. ըստ պառազինութիւն ունիմք՝ ոչ պաղպաջուն և պալարակաղ՝ այլ ըստ Եղիայի և Անտոնի՝ զնախանձն և զսէր առաջնորդին մերոյ, և զնորին իսկ զՅիսուսի հոգին և հաւատս. զնորին զօրինակ վարուց, զնորին զէն արքունի, զխաչն. « Հայեսցուք արդ ի զօրագլուխն հաւատոց, որ առաջի մեր ընթանայ և զհետ կոչէ զկամարարս իւր, զփափագողս և յանձնառուս ընտիր կենաց. « Եթէ կամիս, ասէ, կատարեալ լինել... առ զխաչ քո, և եկ զկնի իմ »։ Եկ զիմ կնի, և եկ որպէս զիսս տեսանես, սոսկ թափուր յամենայն երկրաւորաց, պարէգօտիկ մի միայն ունելով, պնդեալ ընդ մէջս, և օդս ոտից անպաճոյճս, և տես զիարդ փութամ և ընթանամ ի գործ և ի պաշտօն. ի պաշտել զկարօտեալս, զհիւանդս, զկաղս, զկոյրս և զամենայն ախտաժէտս. և ի պաշտել զԱստուածն իմ և զԱստուածն ձեր, զՀայրն իմ և զհայր ձեր. զամենայն երկարութիւն տունջեան շուրջ յածեալ և վաստակեալ, նըքթեալ և ծարաւեալ՝ ի սպասու նոցին կալով, հանդերձ ապաշնորհութեամբ առ ի նոցանէն, և նախատանօք և հալածանօք. և զգիշեր ի գլուխ հանելով յաղօթս առ Հայր։ Եւ դու խընդրեցեր և ասացեր. « Վարդապետ, եկից և ես զկնի քո՝ յոր » վայր և երթիցես »։ Եկ, ուրեմն զի չարգելի չմերժեցի զքեզ որպէս զայլս ոմանս. աւադիկ մտեալ իսկ ես ի սահմանս իմ. աղէ փութա, ընթա, յառաջեաց, որպէս ես և իմքս, առաքեալքն իմ և աշակերտք և ամենայն առաքինագործ քահանայ և միանձն, աղօթկեր և կուսան, ով հրաժարեալդ յաշխարհէ, որ բարձեալդ ես զխաչ ի թիկունս և ի ձեռին, և կանխեալ ի ճանապարհ նեղ և անձուկ, որ տանի ընդ խոչ և ընդ խութ, անցանէ ընդ Գեթսեմանի և ընդ Գողգոթա, այլ հանէ ի տաճար փեսային և հարսին, յարքայարանն վերին։

Ցայս արդարեւ ուզղեալ է և ժաման առնէ զօրութիւն և ժրութիւն՝ զառաքինիս, ո՜վ Եղբարք. և ո՞րքան համառօտք են վաստակն և ժամանակք, և քանիո՞ն երկար վարձքն և փոխարէնք. քանի՞ սակաւ և իբրեւ ոչինչ մի է զինն զոր տամք, և ո՞րքան բազում և անբաւ ստացուածն զոր ընդունելոց եմք։ Եթէ և զերկարագոյն կեանս կելով հանապազ վիշտս և չարչարանս կրէաք վասն արքայութեանն երկնից,

տակաւին ի սպառել նոցին, որ և արագ արագ սպառին առ սիրո

թիւն, ի լաւութիւն և ի կատարելութիւն. և գնալ ըստ բանի Տեառն գրոյն՝ ի զօրութենէն ի զօրութիւն. — Զմարմին՝ զյետնագոյնն յերիցն զօրութեանց կամ բաժնից էութեանս՝ առաւել զրկմամբ կրթել քան լիութեամբ, սանձելով քան թուլացուցանելով. տալ զարժանն յապրուստ, ըստ սահմանեալ ոճոյ, բարեքել ըստ օրինի մաքրութեան և առողջութեան. այլ մի՝ բնաւ ի փայլումն և ի փափկութիւն մտաբերել, թող թէ և ձեռնամուխ լինել, և պայծառ և սպրկիկ և անուշահոտ իբրև զաշխարհավարս երեւել. առ որս «հոտ անոյշ ի » Քրիստոս » հրամայեցաք լինել, ապ համեմիչ և լոյս յաշտանակի։ Շատ լիցի սակաւուքս իմանալ զկարեւորս յայսմ մասին, մեծ և առաւել ջան և գործ՝ որով և զօրութիւն պիտոյ է ի յարդարումն մտաց, որ լծակցէն զհոգի և զմարմին, և որոյ վասն զամս իբր տասն դաստիարակեմք զիսամութիւն հասակիս ի վարժանոցս մեր. — այլ զինչ են այն ամք առ անբաւութիւն ուսանելեաց և ի կատարելութիւն ուսելոց. եթէ և արտաքոյ վարժարանի յառանձին սենեակս ոչ պարապիցիմք յուսումն կարեւորաց և պիտանեաց յայսոսիկ ծախեալ զժամանակն ծախելի, բայց եթէ ոչ յայլ ինչ գործ սիրոյ կամ պաշտաման կոչիցեն հրամանք. և մի՝ յայնս ծախել՝ յոր ի հանգստեան կամ ի պարապոյ ասացեալ ժամս եւեթ վայելուչ է դեգերել կամ զբօսնուլ։ Բազում խնամոց կարօտի այգիս մտաւոր. զի կամ խոպանանայ ընդհատ և դոյզն մշակութեամբ, կամ ոչ քաջ պտղաբերէ. իսկ Ջանիւ՝ ոչ միայն քաջաբեր գործի և ազնիւ, այլ և առատ։ Միշտ համբակ է մարդս, և հանապազ կարօտի մարզել զմիտսն. իսկ մեզ՝ որոց և երկրորդ արուեստ և վիճակ իսկ են ուսմունք, յայտ է թէ և գործ հանապազօր յարդարելի, ըստ յառաջադիմութեան և զարգացման գիտութեանց. խոհական ազատութեամբ զհետ կրթելով գնորոյ և զհնոյ, և մի ի կանխակալսն կառչելով կամ ի չողունսն չանալով։

Իսկ առ հոգի՝ առաջին և մեծագոյն և բովանդակ պիտի ժրութիւն և արիութիւն. զի ըստ գեղեցիկ տեսութեան Առաքելոյ՝ « Մարմնոյ կրթութիւն՝ առ սակաւ ինչ օգտակար » է, իսկ աստուածպաշտութիւն առ ամենայն ինչ օգտակար »։ Ջոր օրինակ մարթ է մարդոյ լուղալ ընդ ձկունս և ճախրել ընդ թռչունս, այլ տարր և գնացք բնական նմա երկիրս է, այսպէս և կրթութիւնք մարմնոյ և մտաց՝ մի քան զմի մարթունք են և վայելուչք, այլ առ ժամանակ մի ունին զպ[illegible]ն, իսկ հոգւոյս՝ մնայուն և մշտնջենաւոր։ Գիտեմք զի յառաջ քան յայլ ինչ՝ առ ի փրկել զհոգիս եկեալ եմք ի կրօնս յայս. և ոչ միայն առ ի փրկել, այլ և ի զարդարել առաւել քան զքաղաքավարեալսն յաշխարհի. որպէս զի ընդ մերումս և նոցայոցն փրկութեան լիցուք պատճառք և օժանդակք. — առ որ հարկ է կրկին և երեքկին զօրութիւն. մանաւանդ զի ըստ նախակարգեալս բանից՝ ոչ փոքր և թեթեւ է գործ՝ քննել զանձն, խլել զչար սովորութիւնս և ախտս, տնկել զբարին և աճեցուցանել՝ Տեառն շնորհօք և մեր ոռոգմամբ քրտանց։ Եթէ դիւրին է արմատախիլ առնել զմատաղ բոյսս, այլ բազում ջանից և ուժոյ պէտք են առ ի զվսորարմատսն և զհաստաբունս ի բաց կորզել. զունակացեալ և հնացեալ ախտս ասեմ, որք և վնասակարագոյնք են. զարեւ և զանձրեւ շնորհաց՝ ի վերոյ խափանելով, ի ներքոյ զհիւթ երկրին, զկորով սրտի, որով մարթ էր սնուցանել ըզպիտանիսն։ — Շատ լիցին և առ այսպիսի գործ կարեւոր՝ ցայսօր ասացեալքս և խորհրդածեալք. բայց մի մոռասցուք, ապաչեմ, զի վասն այսր իսկ մտաք ի կրթութիւն, առ ի ճանաչել զթերութիւնս մեր և զկարօտութիւն, որպէս զի ի լրումն և յուղղութիւն նոցին վաստակեսցուք արիութեամբ. նախ զգլխաւորն, զչարագոյնն յախտից և սղալանաց ի բաց քեցելով, և զկարեւորագոյնն յուղղութեանց և լաւութեանց Ջանալով ստանալ և ամրացուցանել ի մեզ։

Արժան է մեզ և առանձինն խնամով միտ դնել ընկերական պարտուց և պատշաճից. զի միաբանակեացք զոլով և ոչ առանձնակեացք խրճթաւորք կամ ճգնաւորք, պարտիմք և « զմիմեանց բեռն բառնալ », միմեանց լինել ձեռնտու. և մանաւանդ մի խափանել զգործ իրերաց՝ որ ըստ սահմանի և կարգի իցէ, կամ յոր չունիմք իշխանութիւն լինել ձեռնամուխ։ Ջգործ հասարակաց՝ խորհրդով և գործակցութեամբ անկ է կատարել. մի ձեռնթափ լինել և մի իրահամարձակ և ձեռներէց շահատակ. ինքնին իսկ անուն գործոյն՝ զի հասարակաց է՝ յայտ և զայս առնէ, զի մեծ և ծանր իր է, և մեծագոյն ժրութեան և ուժոյ պիտոյանայ. ապա ուրեմն արիութիւն և միաբանութիւն, և երկոքին ի միասին. առանց

այսոցիկ զուգութեան՝ ոչ յաջողի գործ կարեւոր հասարակաց։ Բազմաց ի մի վայր եկելոց այլ ձեռնունայն կացելոց՝ ոչ շարժի բեռն, ոչ վարին կառք կասեալք. իսկ բազմաց ձեռն արկելոց զօրութեամբ, այլ ոմանց յայս և ոմանց յայն կոյս ձգելոց և մղելոց՝ կամ դարձեալ անշարժ մնայ, կամ չարաչար բըռնաբարեալ՝ սայթաքի և խորտակի, և զոմանս եւս ընդ իւրեւ խորտակէ և ջախջախէ։ — Որպէս հակառակ է լոյս խաւարի՝ այսպէս և անմիաբանութիւն մտաց ընդ միաբանակեայս բնակութեամբ. և որպէս կարեւոր են երկու ձեռք առ ի բառնալ զբեռն մեծ, այսպէս և սատարութիւն ամենեցուն առ ի բառնալ զհասարակացն բեռն, որ այդու իսկ օրինակաւ՝ գործի փոքրոգի։ Եւ եթէ այս այսպէս ի հանապազօրեայս, առաւել եւս ի յանկարծահաս և ի ծանր դէպս պահանջի սերտ միութիւն և զօրութիւն խոհական։ Բայց եթէ իցեն ի մեզ այլ և այլ միաբանութիւնք, որպիսի և է դիտմամբ, չգոյ ապա մի միաբանութիւն, զի բազում միութիւնք քակտումն են միոյն, նման թագաւորութեանց բաժանելոց ի միումն թագաւորութեան, զոր և փրկիչն վկայեաց անկանգնելի և անկանելի գոլ։ Կամիմք միաբանել և ոչ կարեմք, և գուցէ առաւել եւս տարաձայնիմք, և հարկ է այսպէս լինել որոց ի կենդրոնէ անտի միութեան և միոյ գլխոյ հեռացեալք առանձինն խորհիցին ճանապարհ ելից հասարակաց կամ առանձինն։ Եթէ և տկար երեւիցի կենդրոնն, իսկ ո՞ հաւաստեաց զզօրութիւն բաժանելոցն. առ ո՞ խօսիցի Տէր զպատգամս իւր, «կամ բազուկ Տեառն ո՞ւմ յայտնեցաւ». ուստի՞ յարեաւ մեզ մարգարէ նոր, և Հոգի Տեառն յումէ՞ վերացաւ եւ յո՞ հանգեաւ։ Թուի ինձ, զի եթէ հասարակաց օգտի և փըրկութեան ցանկամբ ստուգիւ՝ նախ մեզ վանականացս հարկ է զառանձնակ խելամտութիւնս, խորհրդակցութիւնս և թելադրութիւնս կարճել, և միաբանել սերտիւ ի կենդրոն վարչութեանս, զօրացուցանել և զօրանալ իբրեւ ի միջնաբերդի, որպէս զի և որոց արտաքոյ կան՝ ամենեցուն ի մի կէտ հայիցեն աչք, զմի լուիցեն ձայն, միօրինակ բարախիցին սիրտք։ Այլ առ ի վստահագոյն լինել ի միաբանութիւնս, այսինքն է յուղղութիւն նորին, ի վերագոյն եւս կէտ և կենդրոն ակնարկելի է. յայն՝ ուր ամենեցուն հաւատացելոց և պաշտօնէից տեառն անկ է կարկառել և յօդիլ։

Զոյգ միաբանութեանս և անհրաժեշտն արիութիւն կամ զօրութիւն, զոր անգադար թելադրեմք, պահանջելով պահանջի արգարեւ, այլ տիրապէս և ամենամեծ արիութիւն, որ թուի ի մոռացօնս մնացեալ։ Արիութիւն մեծ ի մարդում՝ զօրանալն է ի վերայ իւր ինքեան, յաղթել իւրոց կամաց և մտաց. զի որ զայսոսիկ ոչ նուաճէ, թէ և զաշխարհ նուաճիցէ առ վայր մի, յետ սակաւու հանէ ի ձեռաց, և զանձն իսկ ի վերայ տուժէ։ Զօրութիւն մեծ և կարեւոր յայսպիսի դէպս, որպէս և յայլս յոլովս երեւի ինձ խոնարհութիւնն, քան զոր չիք աննկուն և անվանելի. սովիմբ միայն կարծեմ զերծանել մեզ և ամենայն վարակելոց ի դժուարուտ բաւղի գործոց և հոգոց, ընդ որ հեծեն ամենայն միտք և խիղճք ողջախոհք՝ յոր սակս բազում չարիք և մեղք մտին յաշխարհ և յազգս մեր, զոր արժան է մեզ լալ, և մանաւանդ յանձինս հայել և զգուշանալ, մի՞ արդեօք և մեր ինքնին տուեալ իցէ պատճառս չարի, կամ թէ և կայցեմք իսկ ի նմին։ Յամենայնի, այլ առաւել եւս յիրս որ ուղղագոյնս յԱստուած և յաստուածայինս պատշաճին զնոյն ինքն զԱստուած նկատելի է, մանաւանդ կրօնաւոր աչաց. և եթէ չիցէ մարթ միաբանել զերկիր և զերկին առանց մեղաց և դայթակղութեան, յայտնի է վիճակ ընտրութեան. Աստուծո՞յ հարկ իցէ հնազանդել, եթէ ի մարդկանէ ակն ածել։

Այլ իմ՝ ոչ այնքան դժուարութեամբ մխեալ յայս յետիդ խորհրդածութիւնս՝ որքան յօժարութեամբ թողեալ ի խիղճ և և ի զգօնութիւն լսելեաց, ոչ արարիցէ զանց և ոչ թողիցէ բընաւ զհուսկ և հզօրագոյն և զամենամուտ հնարս այն զօրութեան՝ առ ի քակելոյ զբռնագոյն ամուրս թշնամեաց հոգւոյ, զխոնարհութիւնն ասեմ, որ զանհնարինսն ի մարդկանէ յաջողեաց առ ի յԱստուծոյ. և զմիածին որդի նորին իշոյց իւրով սանդըղով յերկիր. խոնարհութիւն՝ որով զԱստուած բովանդակեաց ի ծոցի՝ Կոյս մի մաքուր, և բարձրացաւ քան զքերովբէս. խոնարհութիւն, յորմէ քան յայլ ամենայն լաւութենէն սարսեն սանդարամետք. խոնարհութիւն, առանց որոյ ոչ վկայեցաւ փրկութիւն չափահասից, որպէս և ոչ կորուստ՝ զայս միայն ունողաց։ Առանց խոնարհութեան թերակատար է զօրութիւն առաքինութեան, բնական իմն և անբանական, թերեւս դիւցազնային իմն այլ ոչ յիսուսական և

աստուածային։ Սա լիցի կնիք իմոցս բանից և խոկմանց մե-
ռոց և հնարից չահելոյ ի հոգեւոր կրթանացս. սովաւ զգօնն
և յառաջադէմ յապահովեսցէ զգօնութիւնս, և անզգաստն և
յետամնաց՝ դարձցի յաստիճան իւր և ի չափ վայելուչ։ Սա
ցրուեսցէ զամբարտաւանն մտօք սրտի, և քակեսցէ զհզօրս
յաթոռոց՝ յոր կռուեալ կայցեն, բայց ոչ որպէս մեքս դա-
տիմք, այլ, որպէս Տէր ինքն գիտէ, որ միայն է դատաւոր
արդար։ Եւ սա բարձրացուսցէ զկորացեալս և զարհամարհս
և զկոխեալս ի վիճի և ի հակառակութեան հզօրաց։ Երանի՜
որոց գիտասցեն ի ժամանակի համբերել. երանի՜ որք գիտա-
ցին զժամանակ լռելոյ և խօսել. երանի՜ ոյք առաւել ընտրե-
ցին դողալ ի դատաստանաց Աստուծոյ քան դատել զմեծ և
զփոքր։ Երանի՜ ամենեցուն՝ որք ըստ առաքելական խրատու՝
խոնարհին ընդ հզօր ձեռամբն Աստուծոյ, զի ի ժամանակի
իւրում բարձրացուսցէ զնոսա, և կացուսցէ ուստի անկան
արուսեակք վսերք և բարձրամիտք, և ուր ճախրեն հեզքն և
ցածունք սրտիւք, որպէս անօսր թռչունք, զի բարձրագոյնս
վերանան քան ըզթանձունս և յղփացեալս։ Երանի՜ իցէ և
մեզ՝ եթէ վաճառեալ զայլս ոմանս ի կարծեցեալ ընչից մը-
տաց մերոց գնեսցուք կամ գտցուք շնորհս ի Տեառնէ՝ ստա-
նալոյ զայս ամենապատուական մարգարիտ, որ և բաւական
է ի սքօղել ծածկել զբազմութիւն աղտից և մեղաց, և փայ-
լեցուցանել զսեւացեալ մրացեալ հոգիս։ Երանի՜ էր մեզ եթէ
կապտեալ կոդոպտեալ սորա զվարազաթեւս արծուային հը-
պարտացեալ մտաց, կամ զփետուրս գիշախանձ երկրաքարշ
անգեղաց կամաց, ագուցանէր մեզ թեւս աղաւնոյ սիրային
կամ ողբաձայն տատրակի, և հանգուցանէր յանապատի, ի
ընկի մերում և ընտրական վայրի, ուր հարկ էր լռել և ըս-
պառել ամենայն աշխարհական ձայնից և կրից, և հնչել
միայն խաղաղական պատգամաց, և հանդերձելոց վիճակաց։
Լսելի՜ արա մեզ, Տէր, զձայնն զայն, զձայն բարի հովուութեան
քո, ի վայրի աստ դալարուոջ լաւութեանց, և առ ջուրս հան-
գըստեան շնորհաց։ Բարձրացո՛ մանաւանդ զբարբառ քո հե-
զութեանդ, և ցածո՛ զհպարտացեալ աղադակ կրից հակառա-
կութեանց, որք ժպրհին երբեմն և յանուն իսկ քո գոչել և
կարդալ, այլ ոչ քոյին սիրական և հանդարտ հոգւով։ Ուստ
մեզ, Յիսուս, լինել ըստ քնզ, հեզ սրտիւ և խոնարհ հոգւով,

ոչ քո միայն՝ այլ և ամենեցուն առաջի. և այնու գտանել ըզ-
հանգիստս անձանց՝ զոր զուր խնդրեմք կամ կարծեմք գտա-
նել այլուր։ Տուր մեզ զօրութիւն թօթափելոյ զամենայն հե-
թեթանս մտաց, զհրապոյրս երկրաւոր հայրենեաց և ընտա-
նեաց, զթերուղիս սէր մերձաւորաց և հեռաւորաց, և արիա-
բար գործել զարժանն՝ զոր ցուցանես սրբոց և հեզոց սըր-
տիւք. ի սոյն յայս նկրտել և նահատակել մինչեւ ցվախճան.
որպէս զի արժանի եղիցուք անպարսաւ ելանել ի նանիր և
ի զազիր կենցաղոյս, և մտանել յարքայութիւն քո և ի
փառս։

Բ. Քո է Արքայութիւն... եւ փառք, յաւիտեանս.

Եթէ հասարակաց բանիւք անցանէաք յայլ նուագս ի խոր-
հրդածութիւն փրկաւէտ կրթութեանս, և մերթ յողբ և յաշ-
խար, մերթ յահ և ի սոսկումն ըմբռնէաք, մերթ յոյս էր և
մերթ տագնապ հանդերձելոցն. տենչալի էր ինձ ի հուսկ ա-
կըմբի հոգեւոր ժողովոյս՝ փոխել զոճ և զձեւ, թէ հնար էր
և զլեզու և զչարժիչ լեզուի՝ զծնունդ մտացս, և արտադրել
և արտասանել նորաձեւ և նորահրաշ հրճուանս և բերկրանս.
սիրոյ շարածով յեռուլ և յօդել զամենայն տաւ և բան՝
որ զԱրքայութիւն և զփառս յաւիտենականս ճառել ճըգ-
նիցի։ Այնքան քաղցր և ցանկալի իրք, զի և անունն ան-
գամ թուի անուշել զչրթունս. մինչեւ բազմաց նմին փափա-
գողաց և զնոյն ստէպ խորհողաց՝ ի զմայլումն ըմբռնիլ ընդ
ասելն և լսելն լոկ Արքայութիւն Երկնից։ Մեծ վարդապետն
այն Հիւպոլոնայ յորժամ մտանէր ի խոկումն արքայու-
թեանն Աստուծոյ գոչէր սրտագին. «Մեռայց զի տե-
» սից, տեսից զի մեռայց»։ Իսկ սրովբէասարասն այն
մանաւանդ թէ յիսուսակերպն Փրանկիսկոս, որ հանապազ
ի ծաղր և յարտասուս հատանէր, ոչ գիտեմ զղջակա՞ն ա-
ռաւել թէ սիրական երեւելով, անյագ ի ճաշակս այսպիսի
խորհրդոց, «Այնքան մեծ են, ասէր, բարիքն ինձ պատրաս-
» տեալք, զի և ամենայն վիշտ և ցաւ կենացս քաղցր
» թուին»։ Աւելի ինչ կամէր արդեօք ասել և ծանօթ նկա-
տողն բարձանց, յափշտակեալն ոչ գիտեմ մտօք թէ աչօք

յերրորդ երկինս, այլ զպարտութիւն խոստովանէր և նա, անբաւական նշաւակեալ զլեզու՝ ի բացատրել, և զսիրտ՝ ի ժողովել։ Նոյն և կառուցեալն հիմն ի հիման եկեղեցւոյ՝ Գլուխն առաքելոյ, նշոյլ մի ի նշուլից տեսեալ զփառաց Քրիստոսին իւրոյ, թմբրեալ և զմայլեալ այլախօսիկ լինէր, և յարամնալ ի տեսլեան անդ ցանկայր անսահման ժամանակաւ։ Ամենեքին սոքա և սոցին նմանիք, ամենայն աստուածախոհք և փափագողք երկնիցն խորանաց, մասին միոյ փոքու յանչափ բարութեանցն տեսողք կամ զգացողք՝ այնպիսի բանս բարբառեցան, կամ չգտին բան բարբառելոյ. իսկ զի՞նչ թէ զբովանդակն կամ զիսկն ասել և թարգմանել կամեցեալ էր։ Ցայտ է թէ և վեհագունի քան զնոցայն բնութեան, զուարթնոցն ասեմ հրեշտակաց՝ անմարթ է բացատրել մեզ զայն, մանաւանդ թէ մեզ անմարթ է ըմբռնել ցորչափ ի մարմնի աստ պարփակիմք և ընդ օրինօք մահու անկեալ կամք։ — Այլ զի՞ փոյթ ճառել զանճառելւոյն՝ եթէ վայելիցն փափագողք իցեմք, որպէս և ամենեցուն արժանն է լինել՝ առաւել քան թէ այլում իմիք։ Քանզի սա է կէտ կենաց և վախճանն՝ յոր սակս ստեղծ զմեզ Աստուած, ի յաւիտենից՝ ի միտս իւր և ժամանակաւ՝ յաշխարհիս յայսմիկ, և յետ սակաւու միոյ հանելոց է աստի և մուծանելոց անդր, եթէ արդարեւ փափագիցեմք և մեք։ Այլա փափագն լիցի քարոզ արքայութեան. փափագն և սէրն՝ մուտք արքայութեան. զի եթէ ոք զայս ոչ ունիցի՝ ոչ ինչ իմանայ, թէպէտ և ճառիցէ թէպէտ և լուիցէ։ Եւ ոչ եւս խնդրեցից ես ոչ զմարդկան և ոչ զըհրեշտակաց լեզուս, այլ զսէր միայն զարքայութեան, զի իմացայց փոքր ի շատէ թէ զի՞նչ է։ Այնքան առաւել գիտասցուք զայն՝ որքան առաւել սիրիցեմք զՀայր մեր, որ ի սկզբանէն պատրաստեաց զայն ընտրելոց իւրոց և զՈրդին միածին՝ որ իջեալ ի յերկնից աւետարանեաց եթէ մերձեալ է արքայութիւնն այն, և փութացաւ անդրէն բանալ մեզ զութեվանսն յաւիտենականս։ Բաց են այսուհետեւ դրունքն ամենամուտք. միայն հաւատա, Եղբայր, և սիրտ քո հաստատի. զուն գործեա առ վայր մի և յապահովիս. սիրեա և հաստանես։

Կարճեալ է արդէն ժամանակս. բազում ինչ բազմաց ի մէնջ ազդեալ է՝ եթէ ձմեռն կենացս յանցանել է, և անանց գարնայնոյ փթթումն առ դրունս կայ. իղձք մաքուրք և հաստակ ճգնասուն տեսանեն զթզենին ցցուեալ, զծաղկունս բացեալ յերկրի սիրելւոյն. բուրէ հոտ այգւոյն զոր մշակն երկնային սրբեաց խնամով. լսելի լինի ձայն տենչալի տատրակին. ահաւասիկ հրաւէր փեսային հոգեսիրի, «Արի՛, եկ, մերձաւոր» իմ»։ Ընթերցաք ի գիրս Սուրբս զհանգիստ արդարոյ հաստելոյ ի վախճան կենաց. գորովեալ եմք ընդ գեղեցիկ նկարագիր խաղաղական կատարածի բարւոյ քրիստոնէի. գուցէ և մորմոքեալ իսկ բազմաց՝ ականատես լինելով այնպիսւոյ մահուան, և զաչս իսկ կափուցեալ զհրաժարելոյն, և յուսով յուղարկեալ առ յոյսն բնաւից՝ Յիսուս։ Վստահագոյն եւս է ինձ քան զՍողոմոնեան և Մասիլլոնեան արդարն՝ պաշտօնեայ մի Աստուծոյ, քահանայ կամ կրօնաւոր, լցեալ հաւատարմութեամբ զպաշտօն իւր ի վերայ երկրի և փոխելով ի հանդերձեալ կեանս։ Իշխեմ ասել թէ ոչ յերկրէ՝ այլ յերկնէ իմեքէ՝ զոր ճարտարեաց աստէն, փոխի ի վերինն երկինս։ Քանզի ի ստորեւս՝ քան զանհրաժեշտն առ կեանս՝ ունէր ինչ ոչ. զմարմին, զոր և ճգնութեամբ մաշեալ անօսրացոյց կամ անզգայեաց առ ճաշակս զգալիս, զհանդերձիկն՝ զոր հարկ էր արկանել զնովաւ, և զսակաւ ինչ կահս՝ ըստ նմին պատշաճի, զոր և ոչ իւր ինչ ճանաչէր կամ կոչէր։ Ցայլոց ամենայն զոյից՝ այնպէս էր ստացեալ՝ որպէս թէ զամենայն ունէր և ոչ ինչ ունէր. տեսանէր զամենայն և տայր փառս Աստուծոյ։ Իսկ ի մարդկային ընկերաց և կենակցաց, վաղ ուրեմն՝ Քրիստոսի լսելով՝ թողեալ զհայր և զմայր և զամենայն մերձաւորս արեամբ և ծանօթութեամբ, եղեալ և կալեալ էր ի մտի կատարեալ և անկորուստ սիրով հանդիպել նոցա ի ժամադրութիւնն հաստակաց։ Ընդ խաչաբարձ վիճակակիցսն կեայր հարթ հաւասար սիրով և քաղաքավարութեամբ ի մենաստանին, որպէս թէ ի տանն Յովսեփայ ի Նազարէթ։ Եկեաց զամենայն ժամանակս իւր պանդխտօրէն, որպէս թէ միով եւեթ ոտամբ կոխելով զերկիր և միով ականքբ հայելով ի սա, միւսովն հանապազ զբարձունս նկատելով. ելս եղեալ ի սրտի՝ ի հովտէս տրտմութեան մտանել առ Աստուած, որ ուրախ առնէ զհոգի նժդեհ ի տաղաւարի մարմնոյս, ժտելով ընդ մարգարէին, «Ընդերկար եղեւ պան» դըխտութիւն իմ. – Տէր, ե՞րբ արձակիցես զիս»։ Եւ թէ-

պէտ հանապազօր ակն ունէր վերջին ժամուն, և ի հնչել միոյ միոյ ժամու՝ ասէր ընդ առաքինեաց. Ահա մի ժամ եւս հեռացայ յունայնութեանց, և ժամ մի եւս մօտագոյն մատչիմ առ երանութիւն, համայն և այնպէս ոչ զգայր ոչ դադարէր պիտանեգոյն եւս յարգարել զժամսն և զաւուրս, և վասն իւր և վասն ընկերաց՝ յորոց սակս կարգեցաւ պաշտօնեայ կամ սպասաւոր կամ գործակից, կէտ նպատակի կալեալ զԱռաքելոյն թելադրութիւն, այնպէս կեալ և գործել՝ զի կարասցեն վարքն ինքնին վկայել, եթէ «Եղերուք նմանողք » ինձ, զի և ես՝ Քրիստոսի»։ Վասն այսորիկ և վաստակէր՝ նախ զհոգին կեցուցանել, բոլոր աշխարհի արհամարհութեամբ, և ապա տալ զամենայն բաց ի հոգւոյ անտի, ի սպառումն և ի կորուստ, առ ի զայլս շահելոյ ի Քրիստոս, թէպէտ բանիւ խրատու և քարոզութեամբ, թէպէտ հոգեշարժ մտավարժ գրութեամբ, եթէ վաստակօք և գործովք կարեկցութեան և սիրոյ, և եթէ առանձինն աղօթիւք և անմահ գառինն զենմամբ ի վերայ սրբոյ սեղանոյն, ի քաւութիւն ննջեցելոց և կենդանեաց. հանապազ առաջի աչաց ունելով զկենարարն իւր և զգաղափար, զորոյ զհետն կրթէր անձուկ ճանապարհաւ ճգնութեան և ընդարձակ յօժարութեամբ, և Մօր նորա հրաշափառն տիրուհւոյ, որոյ որդեգրութեամբն պանծայր և անբաժանելի ժառանգութեան բաղձայր։ Այսպիսի անձկաւ, այսպիսի տենչիւ հանապազ հառաչէր անմռունչ. և օր ըստ օրէ տեսանելով զհնանալ հոգեղինին՝ զգայր զի գալով գայ և մերձենայ ժամ մերկանալոյ զնոյն և զգենլոյ զանապականն։

Եւ ահա որում ի վաղուց և միշտ սպասէր՝ հասանէ իբրեւ յեղակարծումն, ոչ գիտեմ ի հաւախօսին Յիսուսի, եթէ ի մէջ գիշերի կամ տուընջեան, այլ հասանէ ժամն անվրէպ, ժամն ցանկալի, որ վախճան առնէ զողանջական ժամուց և ժամանակաց, և սկիզբն անվերջ և անանց ամանակի յաւիտենին։ Հնչեաց ժամն քո. արի, ել, եկ ազնիւ ծառայ, բարի և հաւատարիմ, որովհետեւ արթուն և արդար գտար ի սպասուդ, կացեր ի խոստման ուխտիդ, լցեր զպարտս պաշտամանցդ, զտաղանդն յարգեցեր, զայգին մշակեցեր, զհօտն արածեցեր, զոր ձրի առեր՝ ձրի և ետուր. զխաչ քո հանապազակիր բարձեր յուս և ի սիրտ. զմարմինդ՝ և առաւել զսիրտ զետեղեցեր ի նմին, կցեցեր զկամս քո ընդ կամաց Հօրդ երկնաւորի, և ընդ Պատարագելոյն աւուր աւուր ձեռամբ քով՝ պատարագեցար սիրով և ցաւով. զոր թողերն միանգամ յաշխարհէ՝ թողեր և իսպառ. և զոր յինէն ընկալար՝ անթողլի պահեցեր. և այնքան ամս յերկրի պանդխտելով՝ հանապազ յերկինս յառեալ կայիր։ Արդ եկ, մուտ յուրախութիւն Տեառն քո. Եկ յարքայութիւն Հօր քո. բազմեաց ընդ Քրիստոսի յաթոռն խոստացեալ. և ընկալ փոխանակ որոց թողերն այդր՝ զկեանս յաւիտենականս, ընդ սուրբս՝ որք կանխեցին՝ ժամանակաւ քան զքեզ, և ընդ հրեշտակս՝ որք սպասեալ մնային քեզ, և ընդ Աստուծոյ որ հաճեցան ընդ քեզ ի սկզբանէ։

Ո՞վ կարասցէ բացատրել մեզ զյեղանակել երջանիկ ժամուն՝ յորում երկու յաւիտեանքս հալին յիրար. փոքրս այս հատուցանէ մեծին զհոգի առաքինւոյ քահանայի և կրօնաւորի, և մեծն՝ յափշտակելով զնոյն՝ որպէս մայր զորդեակ անկեալ ի գրկաց։ Ո՞ պատմեսցէ զփոփոխումն զայն՝ ի վայրկենի յորում դադարեն կեանք, աշխարհ և ամենայն որ ի նոսա, և սկսանին հանդերձեալքն և հոգեւորք՝ համակ աստուածայինք։ Ո՞ կարասցէ զգալ կենօք՝ զոր հոգի ի լուծանել ի կենացն զգայցէ։ Եթէ ոչ ինքնին ոմն ի հրաժարելոցն աստի, կամ որ ի Պօղոսեան գնդէն եկեալ ճառիցէ մեզ՝ ոչ կարասցուք իմանալ. բայց գուցէ և ոչ յայնժամ, այլ յորժամ և մեզ հասանիցէ ժամն այն. և իցիւ թէ այնպէս իսկ հասանէր. կամ մեք մանաւանդ այնպէս պատրաստէաք և այնպէս հասանէաք, և զգայաք և իմանայաք, և այլում իմիք ոչ կարօտէաք։ Բայց առ ի խթանել զհեղգութիւնս մեր և ի սրել ի մեզ զտենչ հրաշալեացն՝ պարտ և արժան է խոկալ կրթել հանապազ ի խորհուրդս արքայութեան որքան ինչ և ձեռնհաս իցեմք. զի և ըստ յաճախութեան խոկմանս՝ առաւել ինչ իմասցուք. որպէս և ի հակառակէն ըստ սակաւ քննելոյ՝ սակաւ ոք և զգայ, սակաւ և սիրէ. և ոչ փոքր մեղանչէ որ ոչն խորհի, որպէս սուրբք ասացին, և ի վտանգ անգիւտ կորստեան զանձն կացուցանէ։

Այլ, եթէ ոչ կարիցես ընդ Պօղոսի յափշտակիլ այժմէն և տեսանել զդրախտն Աստուծոյ, զէթ հաւատա՛ նմին՝ զի անճառելիք են որ անդն, և ի վեր քան զմիտս վայելչութիւնք։

թէ կամիս դարձիր անդրէն հայեաց ի հիւծեալ դէմս անդ օրհասականիդ կամ այն ինչ աւանդողի զհոգին ողջախոհ, զոր տեսերդ ի յետին ժամուն. և ի խառնուրդս անդ մահու և անմահութեան ծանիցես իրս զոր յայլում ժամու դժուարին իցէ քեզ առնուլ ի միտ։ Խաղաղութիւն խոհական, բոլորակամ յանձնառութիւն վճռոյն Աստուծոյ, հաստատութիւն հաւատոցն՝ որով կոխէ զանջրպետ երկուցն կենաց, սէրն որով արհամարհեաց զառստորեսս ամենայն՝ թերաքամ ուչօքն իսկ թուի որոնել զհրեշտակն կոչնակ և վերելեակ հոգւոյն. այս ամենայն հաւաստեսցեն քեզ՝ եթէ և յառաջ քան զմահ ճաշակեաց դա զանմահութիւն. և հանգոյն բազմաց աստուածասիրաց ասաց, «Ոչ գիտէի թէ այսքան քաղցր է մեռանելն»։ Որ ըստ հաւատարմութեան գործոց վարուցն ընդունէր և աստուծին զվարձս անդորրու գիտակցութեանն, նորին և պատուական է մահ առաջի Տեառն իւրոյ, լի վստահութեամբ և յուսով տեսոյն Աստուծոյ. սոսկալին այն թերահաւատից և թերուղիղ կենցաղավարելոց՝ մահ՝ կամուրջ է ցանկալի՝ յաղցաւորէ աստի հանել յերանաւէտ ի կեանսն։

Ո՞վ, զի՞րդ երագ և յօժար են անցքն այն առ թեւս հոգւոյ անարատի, և քանի՞ հիացումն ի փակել անդ աչացն յաշխարհէ աստի յայն յաւիտեանս։... Ներեսցին ինձ աստանօր թոթովանքս՝ ի ճառելս զորոց ոչ միայն չեմ հասու, այլ և ոչ արժանաւոր. բայց զի օգտակար և ինձ և ամենեցուն գիտեմ յայսոսիկ թարթափել, տաց այլոց առիթ քաջիկ եւս խորհրդածելոյ, և տեսանելոյ զհոգին հաւատարիմ այն ինչ լուծեալ ի կալանաց մարմնոյ, որպէս թռչուն մի զերծեալ յարգելական վանդակէն, յետ առաջնոյ շեշտակի թռչանացն զկայ առեալ ի ծառ մի կամ յերդ, կամ թէ ի միջոյ օդոց ի թիկունս դարձեալ հայեցի՝ յորմէ փախեաւն, թուի իմն ինձ այսպէս և հոգւոյ զերծելոյ ի մարմնոյն՝ նախ գամ մի հայել յայն յորմէ ելն և ելիք. տեսանել այնպէս անշարժ, անզօր, տխեղծ զմարմինն զայն՝ յորում տառապեցաւ այնքան ամս։ Զի՞արդ ի միում պահու ցրուեցան անցին ամենայն աղտք և կիրք նորին, փորձանքն և վտանգք, գայթակղութիւնք և արհաւիրք։ Զի՞արդ սուտ և սնոտի ուրեմն էին ամենայն հեշտք և հրապոյրք զոր զգայր և առաջի դնէր նա. — զի՞արդ փոքր և թեթեւ ամենայն վիշտքն և ցաւք և տանջանք և վաստակք՝ որ մեծ և ծանր գրէին սրտի, յորժամ ոչն յիշէր ըզհանդերձալսն։ Զի՞արդ խուն և խաւար երեւի երկիր՝ բովանդակ կարծեցելոքն բարեօք՝ որ յանկուցանեն զսիրտ և զմիտս այնքան բազմութեան անզգաստից. — ի՞նչ համառօտ էր ժամանակն՝ յորում կրէ մարդ և զվիշտ և զհեշտ որք երբեմն այլ և այլ օրինակաւ երկարք յոյժ թուին նմա, մին առ դառնութեանն, և միւս՝ սաստկապէս ձգելովն զսիրտ։ Եթէ ինչ մի հաճոյական նշմարէ ի ստորեւս հոգին այն թռուցեալ՝ միայն իւր նմանիքն են, ժողով զինուորելոյ եկեղեցւոյ, զոր կարեկցաբար թողլով՝ սլանայ խառնիլ ի գունդ յաղթազգեցիցն. գիտելով զի ի նոյն յօդեսցին յետ սակաւուց և անդամքն տակաւին տառապեալք յերկրի և տատանեալք յաշխարհածուփ ծովուս. յորում և ինք տաժանեալ ոչ սակաւ՝ արդ յանքոյթն և ի խաղաղ մտանէ նաւահանգիստ, ուր ոչ լսի ընաւ մրրիկ, այլ ձայն մեղմոյ օդոյ, ալէլուն անլքոեալի, շունչ սրբոց և զուարթնոց. և անդ Աստուած։

Տեսեա՞լ ուրուք իցէ զնաւն ծովատանջ ծովայածիկ, զմեկնեալն վաղ ուրեմն ի ծանօթ ափանց և յանծանօթ վարեալ սահմանս, յետ բազում ձմերանց, բազմապատիկ ալեաց կոծմանց և հողմոց հակառակաց, և պէսպէս վտանգաց և անցից, յետ երկար ժամանակաց գառնալ ի ընիկ հանգրուանսն, յոր խռնեալ ծանօթից և ընտանեաց նաւազինն՝ սպասեն ընդահ և ընդ յոյս՝ տեսանել զսիրելիսն, զարս և զեղբարս՝ յորոց և ի լրոյ իսկ զրկեալք էին, ո՞րպէս բազուկս ի ծովաջան փայտն անգր կարկառեն. ո՞րպէս և որք ի նաւին բբբօք սբելովք որոնեն զհարազատս իւրեանց. և մինչչեւ նաւափայտին զեզր ցամաքին ըմբռնեալ՝ սոքա ի խելաց անտի վազեն թըռչին, և այնպէս ուժգնակի գիրկընդխառն պնդին, որպէս թէ այնու քաւել մոռանալ զերկարութիւն անջատմանն և զկարօտանաց։ Տեսեա՞լ ուրուք իցէ մանաւանդ զարձակեալսն յերկարամեայ սպասու զինուորութեան, և եւս առաւել ի բազմաժամանակեայ մահահամբոյր մետաղաց և տարագրութեանց, որոց արդեօք դալար գիսակօք գնացեալ և սպիտակահերք դառնան յերկիր հայրենի. քանի՞ անթարգման խընդութիւն է հարազատացն, որդւոց և ծնողաց, երբ իբրեւ ի մահուանէ յարուցեալք վերստին տեսանիցեն զիրեարս, զբրկակիցք և բնակակիցք։... Եւ սակայն քանի՞ ինչ ժամանակս

տեւեսցէ երջանիկ հանդիպումն այն. և իցէ՞ իսկ ամենեւին բերկրալիր, ամենեւին անսուգ. — ո՞չ բազում անգամ և փղոձ-կին և յարտասուս հարկանին ի մեծէ խնդութենէն՝ բարե-բաղդքն այնոքիկ. թուի թաքուն իմն ազգումն լինել սըրտի՝ եթէ չիք կատարեալ գիւտ և բաղդ ի վերայ երկրի. և որպիսի և իցէն՝ ոչ հեռի դեգերի անջատիչն բնաւից մահ. նա և բազմաց առօրին առժամայն իսկ փափագել նմին ինքեան մահու. հանգոյն ծերունւոյն Յակովբայ, որոյ յետ այնքան երկար ամաց տեսեալ զցանկալին և զընդ մեռեալս համա-րեալ որդեակն Յովսէփ, «Մեռայց այսուհետեւ, գոչէր, ո-» բովհետեւ տեսի զերեսս քո»... Իսկ որպիսի՞ ինչ արդեօք եղիցի խմացուած հոգւոյն ի մուտս անդ արքայութեան երկ-նից և ի գիւտ ճշմարիտ սիրելեացն, սրբոց, զուարթնոց, Տի-րամօրն, և ամենեցուն Աստուծոյ. — որպիսի՞ բըղխ-մամբ բանից բացատրիցէ զանբացատրելին առ ի մէնջ կիրս իւր, եթէ որքան իցէ կիրս կոչել զայն և ոչ այլ ինչ՝ որոյ ոչ գոյ թարգմանութիւն ի լեզուս մարդկան երկրակեցից։ Ասիցէ՞ արդեօք և նա ի մէջ ականակիտ դրանց քաղաքին Աստուծոյ, եթէ մեռայց այսուհետեւ, զի տեսի զարքայութիւն քո, Աստուած, զքեզ և զքոյս բովանդակ։...

Ո՛չ, ոչ մեռանիցիս դու այսուհետեւ, հոգի ընտրեալ և սըրբեալ, այլ կեցցես յաւիտեան. քանզի մաքրապէս զերծար ի հողեղէն յարկացն. քաջիկ լցեր զպաշտօնդ յոր կարգեցար յերկրի. քահանա՛յդ, որ սրբութեամբ պատարագեցեր զՔրիս-տոս և պատարագեցար ընդ նմին. կրօնաւո՛րդ, որ անարիւն զոհիւ զեներ զմարմինդ ի փրկանս հոգւոյդ. աղօթկերդ, որ բուրվառաւ սրտիւ յերկինս ի վեր արձակէիր բուրումն ա-նոյշ ըղձից. վաստակաւորդ, որ զողջոյն վեցեակ կենացդ քրտամբ և արդեամբք աշխատեալ՝ ժամանեցեր ի շաբաթ տէրունի։ Ոչ, դու ոչ թէ ոչ մեռցիս, այլ և ոչ աշխատ ինչ լինիցիս յայսմ հետէ և առ յապա. ոչ եւս հոգացցիս, ոչ եւս կրեսցես ինչ մի անհաճոյ. աստանօր ոչ լսի համբաւ մահու. ոչ ցողեն աստ արտասուք, ոչ հոսին քրտունք. չիք ցաւ, չիք անձուկ, զի և ոչ չար ինչ կամ արատ. այլ միայն ուրա-խութիւն, համակ հրճուանք. արքայութիւն և փառք Աստու-ծոյ հօր քո. յոր մո՛ւտ, տես և վայելեա յաւիտեան։

Առաջին տեսութիւն հոգւոյն զերծելոյ կարծեմ ես զծանո-

թիցն ի վերայ երկրի՝ որք յառաջ քան զինքն յուղարկեալք անտի՝ նախաժամանեցին յերջանիկ կայանսն, և արդ փու-թան զան ընդունել զնորընծայն ի կսճառս սրբազանիցն, մըր-ցելով իմն ընդ պահապանի հրեշտակին, և ողջունեալ և ե-րանեալ յամենայն դասուց վերացուցանեն ընդ գերակայ աս-տիճանսն մինչեւ ի սրովբէսն և ի քրովբէս և յաթոռս, և որ բազմին ի նոսին յԵրեքանձնեայ Էութիւնն, ի Հայրն ամե-նապատճառ, յՈրդին Միածին և Փրկիչ, և ի Հոգին Հնորհա-զարդ։ Ո՜վ, որպիսի՞ք ի միում ժամու մեծամեծ սքանչելիք, խորհուրդք և գաղտնիք հոլոնեալ յայտնին յաչս հոգւոյն. քանի՞ բազմութիւն և խորութիւն և զանազանութիւն հրա-հրաշալեաց. որպիսի՞ քաղցրութիւն և գեղեցկութիւն, հըր-ճուանք և հաճոյք. ո՞րքան սէր և ուրախութիւն յորդեալ զե-ղեալ ամենուստ և յամենեցուն ի վերայ միոյն, և ի միոյ անտի առ ամենեսին ճառագայթեալ. — որպիսի՞ ձայնք ցնծութեան, գովեստից, ողջունից և վկայութեանց՝ վասն որ առաքինացաւն, որ համբերն մինչ իսպառ, որ հաւատարիմն եկաց և յաղթեաց. — քանի՞ պսակք և պայծառութիւնք տե-ղացեալք գնովաւ յԱստուծոյ և յԱստուածամօրէն, ի հրեշ-տակաց և ի սրբոց, զի կատարեաց գ'ի յաւիտենից կամսն Աստուծոյ յերկրի անդ. ընթացաւ, եհատ քաջապէս գաս-պարէզն հանդիսի և ժամանեաց ի նպատակն վերին։ Եւ ոչ լոկ եզակի սոսկապէս դիմեալ ի վեր անդր, այլ օժանդա-կելով և այլոց քահանայական և աղօթական կարգօքն, ո-րով և առաւել քան զյոգունս ժառանգեսցէ փառս և վա-յելս. ի բարձրագոյնս վերասցի օթեվանս, և մերձագոյնս մնի-ցի ի խորան աստուածութեան։ Եթէ ընդ միոյ մեղաւորի փըր-կելոյ այնքան խնդութիւն լինի յերկինս, որպէս ասացեալ Քրիս-տոս, քանիո՞ն եւս խնդահրաւէր ողջունեսցի՝ որ բազմաց մե-ղաւորաց յորդոր կամ առաջնորդն եղեւ ի փրկութիւն. որ բանիւ և գործով ուղղեաց զճանապարհս Տեառն, և բովան-դակ ասել, սրբեաց զանձն և ի Սրբութիւնն սրբոց դիմեալ ահա ժամանեաց։

Են են արդարեւ պատրաստեալ պսակք միոյ միոյ ուղղու-թեանց և տացին առատապէս. ընդ միոյ միոյ պահպանու-թեան կանոնաց և ուխտից. ընդ մէն մի մերժումն փորձու-թեանց, ընդ ամենայն յաղթանակս ի վերայ ախտից. վասն

միոյ միոյ ընչից և տեսլեանց աշխարհայնոց՝ զորս արհամարհեացն և ելիք կրօնաւորն. վասն իւրաքանչիւր անձին սիրելւոյ՝ յորոց հրաժարեացն առ սէրն Քրիստոսի. վասն ամենայն գեղեցիկ պատկերի և հաճոյական դիմաց՝ յորոց ի բաց դարձոյց զաչսն, ի մեղանչականացն իսպառ ի բաց փախչելով, և զանմեղսն՝ Հաստչին և զարդարողին ընծայելով, զի անթարշամ և անապական գեղեցկութեանցն հասանիցէ ի բնաշխարհի անդ սիրոյ, գեղեցկութեան և անմահութեան. որովք լցեալ արդ զեղու իբրեւ զբաժակն Քրիստոսի։ Զոր բարի տեսանէ կամ զգայ՝ ի նոյն և փոխի. ինքնին իսկ եղեալ համակ պայծառ, համակ գեղեցիկ, ամենեւին անուշահոտ, ամենեւին սիրուն և համբուրելի. և այնչափ առաւել որչափ յերկրի աստ կամովին գձեցաւ և նուաստացաւ, ճընշեաց և թառամեցոյց զիւր մարմինն։ Այլ գեղ և պայծառութիւն ոչ այնքան առ երեսս տեսլեամբ, եթէ գուցէ և հոգւոց տեսիլ կերպարանաց, այլ ներքին և խորագոյն պայծառութիւն. որով հասանէ ի տեսութիւն և ի գիտութիւն ամենայնի, և նախ ինքեանն բնութեան և շնորհաց, ապա և ընդ նմին աղբերն ամենայն գեղեցկութեան և բարութեան և իմաստութեան՝ Աստուծոյ իւրոյ. — ի վերայ հասանէ և միոյ միոյ յերջանկացն արքայացելոց. զգայ զոր զգանն, և այնքան բազմապատիկ երանանայ և փառաւորի՝ որքան իցեն փառաւորեալք և երանեալք յերկինս։ Եւ ոչ այսչափ միայն, այլ և հանապազ աճեն վայելքն. աճումն և նորոգութիւն սքանչելի. ուր չիք հնութիւն, ոչ յագուրդ և ոչ քաղց տաղտկութեան. յետնութիւն և ոչ մի, այլ և յառաջադիմութիւն ի ծանօթութեան Աստուծոյ և ի վայելս. հեռակայութիւն ոչ բնաւ, այլ յաւէտ խորամուխ լինել յաստուածային անբաւութիւնն. նման նմա լինել, տեսանել և ճանաչել զնա որպէս և էն. աստուածանալ զոգցես ընդ Աստուծոյ, ոչ միայն վայելել զարքայութիւն նորին՝ այլ և թագաւորել ընդ նմին և աթոռակցել, փառաւորել, փառաւորիլ հանապազ և յաւիտեանսն։

Քանզի և մեծագոյն այս կնիք է արքայութեան, մշտնջենաւորութիւն ծայրալիր բարութեանցն. յաւիտենականութիւն երանաւէտ, որում՝ ոչ հասանեն միտք մեր, այլ կարեմք փոքր ի չատէ ի վերայ կալ զմայլմամբ, որպէս կոյսն այն զգօն, որ հանապազօր ի լսելն ի ժամու պաշտաման ի դաւանութեան հաւատոց զբանն՝ «Որոյ թագաւորութեան ոչ գոյ վախճան», իսկոյն յափշտակեալ լինէր մտօք և ի հիացման կայր ժամս ձիգս։ Բայց ես ոչ գիտեմ ընդ որ առաւել հրաշանալ, ընդ անվախճանութիւն եթէ ընդ իսկութիւն արքայութեան. — այլ զի անանջատք են երկոքին եւս՝ երկոքումբ եւս առաւել սիրելի, առաւել տենչալի մեզ աստէն խոկումն արքայութեան, և վաստակ և ջան ըմբռնելոյ զնոյն, որպէս զի և անգ անկարօտք քննութեան հասեալ վայելեսցուք ի փառսն Աստուծոյ, որ յետին յիշատակ աստուածայնոցն է յաղօթս մեր, և առաջին և վերջին յատուկն Աստուծոյ, գուցէ և քան զբնաւս անհասանելին առ ի մէնջ՝ յաւիտենականութիւնն երանաւէտ։ Զի սակաւ մի կարծեմ ըմբռնել ի մեծութենէ Աստուծոյ և ի պարտուց բաւականացս առ նա, ճանաչեմ զի անկ է մեզ պաշտօն հարկանել նմա, և նմա պաշտել ի մէնջ և թագաւորել ի վերայ ամենայնի զոր արարն։ Գիտեմ զի ամենայն ինչ յԱստուծոյ է, և լսեմ զի Աստուած փառաւորեալ է ի սուրբս իւր. գիտեմ զի փառք՝ սեփական են Աստուծոյ և անբաժանելի ի բնութենէ նորին. փառք են Երրորդութեան՝ իւրաքանչիւր անձանց յատուկքն, ծնողութիւնն, ծնունդ և բղխումն. փառք են զօրութիւնն և իմաստութիւն՝ որով համագոյքս հաստեցան և կան ի գեղեցկակարգ յօրինուածին. — փառք են Քրիստոսի մարդեղութիւնն, որ թերեւս ոչ այնքան սքանչելի եղեւ ի վերայ երկրի և սարսիչ դժոխոց և կապտիչ մահու, որքան զմայլեցոյց զերկինս և բերկրեցուցանէ զհոգիս փրկեալս աբեամբ իւրով, ցուցանելով նոցա զվէրս ձեռացն և կողիցն, յորոց անմահական բղխեն բուրմունք և ճառագայթք, և ի համբոյր հրաւիրեն զերբեմն յինքն հաւատացեալս և այժմ տեսողս։ Այսոքիկ և որ սոցին նմանք՝ փառք են բնականք աստուածութեանն և Քրիստոսի։ Իսկ արտաքոյ սոցին համարիմ փառս՝ որպէս յերկրի զարարածսն բնականս և բանականս, յերկինս՝ զնոյն ինքն զսուրբս և զհրեշտակս. թէպէտ և ամենեքին ի միոյ անտի աղբերէ մշտնջենաբուղխ փառաց մասնաւորեալք և զանազանեալք չափով և օրինակաւ անգիտելի և անթարգման յայժմուս առ ի մէնջ, գուցէ և ոչ անստգիտ յանդգնութիւն՝ ճառելն։

Սակայն եթէ յանդգնութիւն իցէ և թէ վստահութիւն և

եթէ այլ ինչ, ոչ կամիմ զանց առնել և զփառս մի մեծ զարքայութեան, վեհագոյն բնաւից, քան զսերովբէսն և զարուսեակս, քան զամենայն զարդս երկնից, որով և գերագոյն ի փառս Աստուծոյ։ Զի եթէ փառք նորին յարարածս իւր յայտնին և ինքն ի նոսին փառաւորի, ապա այնքան մեծագոյնս յայտնի և փառաւորի որքան մեծ և կատարեալ իցէ արարածն։ Ի մանայք վասն որոց ասեմս. — և ո՞յր յորդեգրաց դանդաղեսցէ սիրտ ի տրուիել և ի վեր վազել, յորժամ զգայցէ զփառաւորեալն յետ Աստուծոյ, և ոչ անկանել ի գիրկս Մօր նորա և իւրոյ. ո՞ ոչ հաւատասցէ եթէ հրաշափառագոյն յարքայութեան անդ Աստուծոյ իցէ կոյսն կուսանաց. դուստրն լուսոյ, մայրն Քրիստոսի և հարսն Հոգւոյն սրբոյ, դշխոյն հրեշտակաց ամենայն սրբոց. բովանդակողն միայնակ յերկրի և ճշգրտող քան զբնաւս՝ զանհասանելի Երրորդութիւնն, ետահրաշ երեւութիւ և իսկութեամբ, Անարատ լինելութեամբն, անքակ կուսութեամբ և անկողոպուտ աստուածամայրութեամբ։ Քանի՞ քաղցր և անսպառ զմայլումն իցես յերկինս հոգւոց երանելեաց, ո՞վ ամենափառաւորեալ Իսկուհի, որ և յերկրի աստ զմայլեցուցանես զսիրողս քո, և զփափկագոյնս բանից, զչերմագոյնս և սիրապատարս բղխեցուցանես ի սրտից և ի շրթանց։ Եւ եթէ աստանօր իբրեւ ի հրոյ և ի հուր հալին տարփացեալքն քեզ պաշտօնասէրք, զի՞նչ անդ լինիցին տեսողք երկաքանչիւր դիմացդ փառաւորելոց և աստուածազգեցից, հոգւոյդ և որ զհոգւովդ։ Եթէ եկեղեցիս երկրաւոր՝ յետ Աստուծոյ զքեզ դաւանի իւր զօրաւիգն պաշտպան, և զքեզ ունի բարեխօս առ Փրկիչն Քրիստոս, որպէս զՔրիստոս առ Աստուած Հայր, և քեզ նուիրէ զչերաջերմ և զ'ի խորոց սրտից պաղատանս և օրհնութիւնս, զի՞նչ ոչ ապրասցէ եկեղեցին երկնից զքեզ ունելով իւր պարագլուխ, որպէս Իսրայէլ զերբեմն անուանակիրդ թմբկուհի՝ յայնկոյս յաներկեւանն անցեալ փարաւոնակուլ ծովուն, և բերան եղեալ բազմաբիւր բանակին, բարձրացուցանելով զօրհնութիւն Աստուծոյ փառօք փառաւորեցելոյ։ — Եթէ փոքրատար չափով մարդիկ մահկանացուք այնքան գորովին և խանդաղատին զքեզ, ո՞րքան ընդունակքն անչափ իմաստութեան և սիրոյ՝ զուարթունք և զուարթացեալ սուրբք՝ գովիցեն և հուչակիցեն զքեզ ի վերին կայանսն, անդ արդարեւ ճշմարտելով զթելադրեալն առ ի քէն. «Երանեսցին ինձ ամենայն ազգք». ամենայն ազգք և լեզուք բանականաց. ամենեքեան զքեզ փառաւորեսցեն որ քան զամենեսին ընդունիս զփառս Աստուծոյ և համաստիւռ տարածանես ի դասս սրբոց և ի կաճառս հրեշտակաց, և ցոլք փայլ փայլ երփն երփն տարփատենչ նըշողիցդ հատանին և յերկիր հասանեն. շարժին շողան և շարժեն զսիրտս սիրողացդ և ի վեր ձգեն. Ջեռուցանեն յանչէջ հրոյն՝ որ ի քեզ վառեաց զհրատ իւր հզօր և սքանչելի քան ի քորէբեանն մորենի և քան ի սրովբէունակ կայծակունսն. և պնդագոյնս քան մանուկ ստնդիաց զմայր իւր՝ զքեզ խընդրեն կղկաթ կաթոգի. և յորժամ գտանեն՝ ի կուսական գըրկացդ գորովոյ ոչ հանդուրժեն բաժանիլ, նաեւ ի խորս արքայութեան. զի որ Աստուծոյ տարողագոյն տաճարդ ես և զահոյք՝ ո՞չ հանգուսցես և զմարդիկ սիրելիս քո՝ յանպարունակ ծոցիդ սրբութեան։ Մշտնջենաբուղխ աղբերն սիրոյ և կենաց՝ լայնալիր եղեալ քո աւազան մարգարտափայլ՝ ի քէն այնուհետեւ ըմպէ ամենայն հոգի երանեալ զուղխ փափկութեան և զուարճանայ. և ի քէն առատապէս արբեալ արբեսցին հոգիք որ գրեցանն յերկրի քեզ պաշտօնեայք և պաշտօն հարին վայելչապէս։ Պարտ իսկ և արժան զի որք առաւել սիրեցին՝ առաւել եւս յազեսցին. և որք զքո որդեգրութեան անուն կրեցին յերկրի հաւատարմութեամբ՝ սերտագոյնս որդիասցին և յերկինս։ — Արդ դու ո՞վ փառք և վայելչութիւն ի փառս իսկ արքայութեան, դու մայր համատարած, որպէս զամենեցուն փրկութիւն կամի Միածինն քո՝ ամենեցուն և դու բարեխօս ես և գիւրընտել դաստիարակ ի փրկութիւն. չիք ինչ քեզ դժուարին, չիք ինչ արգել, չիք ոք դիմակաց. բայց եթէ կարկեալն անյուսութիւն։ Ես թէպէտ և ամենայնիւ անարժան, այլ ի բաց մերժեմ զանյուսութիւն, զյետնագոյն չարզի ճանաչել զքեզ Դշխոյ երկնից և երկրի, մայր Աստուծոյ և մարդկան, և անյոյս լինել ի փրկութենէ՝ այս անհնարին հակառակ է, կամ ոխերիմ ատելութիւն վիշապին ջախջախելոյ ընդ կուսական ոտիւդ. ընդ որովք արկանեմ և ես զիմ գլուխս՝ յանցանօք կորացեալ և տրտմութեամբ, ոչ ի կոխան լինել, այլ խոնարհութեամբ և զղջական արտասուօք լուանալ զայն, եթէ հնար է, որպէս Մագդաղենին զոտսն

Յիսուսի, և արժանանալ համբուրիլ վստահութեան և հաշտութեան. կանգնել զակնկորութիւնս իմ տեսլեամբ ամենապայծառդ դիտակի, և լուսով աստուածախառն երեսացդ տեսանել զլոյս ի ճանապարհի՝ զոր ինայ ինձ դեռ հատանել ի կենցաղումս. տեսանել զշաւիղ վերելից գալոյ առ քեզ ի հովտէ աստի տրտմութեան և տարակուսանաց, և տեսանել զքեզ աչօք բացօք հոգւոյ՝ ի փառսն քում և ի փառս արքայութեան Միածնի քո, և լինել անդ փառաբանիչ Աստուծոյ և Աստուածամօրդ համբէն ուխտիւ Որդեգրելոցս քեզ և երկրպագուաց ի յաւիտեանս յաւիտենից։

ԿՐԹՈՒԹԻՒՆ

ՅԻՇԱՏԱԿԱՒ ՄԱՀՈՒԱՆ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ի ԲՐԵՒ ճշմարտութիւն ամենայայտ և իբրեւ առած անլռելի՝ ընդունիմք, գիտեմք և գուցէ յաճախ իսկ կրկնեմք բանիւ բերանոյ, և ազդեմք առ ընկերս կամ առ այլս, եթէ Վախճանն պսակէ զգործն. եթէ, հարկ է՝ նախ քան զսկիզբն գործոյն՝ զվախճանն նկատել. և աստուածաշունչ պատգամաւ՝ Ցիշեա զվախճանն, և յաւիտեան մի՛ մեղիցես։ Գիտեմք և զայն քաջ, զի վախճանն՝ ըստ գործոյն լինի. և եթէ ոչ նախատես լիցուք ապագային հոգով՝ ոչ կարէ վախճանն փոխել կամ ուղղել զգործն. յոր կոյս և ոք դէմ եդեալ իցէ՝ ի նոյն և ժաման լինի. և յոր կողմն կորացեալ իցէ աշտարակն կամ փայտն տապարատաշ՝ ի նոյն և անկցի կողմն։ Գիտեմք աներկբայ, զի որքան ընդունայն և յիմարական է մարդոյ խոկալն կամ ըղձալ՝ եթէ այսպէս կամ այնպէս եղեալ էր սկիզբն կենացն կամ ծնունդն, այնքան և առաւել եւս կարեւոր է խոկալն և հոգալ՝ զի այսպէս ինչ եղիցի, այսինքն բարի եղիցի վախճան կենացն, որ է մահն։ Եւ եթէ ունիցի ոք հանապազ զայս ի մտի, անմարթ է թէ և ոչ ըստ այնմ արժանապէս ուղղիցէ զընթացս իւր որ է միջոցն սուղ՝ ընդ վարկպարագի սկիզբն և ընդ վախճանն ամենունակ, յորմէ կախի յաւիտենականութիւն, ամենայն ինչ, մշտնջենաւոր երանութիւն կամ կորուստ անգիւտ։

Այլ, բաբէ, փորձ դարուց և վարուց, ամենօրեայ տեսա-

բան կենաց և գործոց մարդկան՝ թուին իմն ընդ հակառակն
ելանել տեսութեանս. թուի իմն՝ եթէ առաւել այլոց քան
անձանց յիշեցուսցեն մարդիկ զառածն այն և զճշմարտու-
թիւն անյեղլի և անմոռանալի. և յաճախագոյն այնպէս գոր-
ծեն՝ որպէս թէ չգուցէ գործոյն վախճան ինչ կարեւոր, ըզ-
գուշանալի, և քննելի յաւուր միում, յաւուրն յետնում. ոչ
յիշեն զվճիռն տէրունի, եթէ « ընդ ամենայն դատարկ բանի՝
» զոր խօսիցին մարդիկ, տայցեն համարս յաւուրն դատաս-
» տանի ». և եթէ ընդ բանի միոյ լոկոյ՝ որ ի դոյզն քթիթ
շրթանց թռչի ի բերանոյ՝ այսպէս պահանջի, զինչ ապա ընդ
գործոց, ընդ երկար մտածութեանց և ընդ հաւանութեան
կամաց։ Եւ զի այնքան երագք են միտք և կամք ի ներգոր-
ծել, ի միում միայն աւուր կամ ի ցերեկի արթնութենէ, և
ի միում իսկ ժամու, ո՞րքան ներգործութիւնք բղխեն ի մտաց,
ի սրտէ և ի զգայութեանց, որոց հարկ է անհրաժեշտ ընդ
տէրունական դատաստանաւն անկանել։ Եւ սակայն տեսա-
նեմք զմարդիկ՝ հանապազ թօթափել զգործս իւրեանց՝ իբրեւ
քարինս ինչ ի ծով, որք անկեալ և անյայտ լինիցին, և ոչ
յիշեն զի թէպէտ և չերեւին՝ այլ ի յատակս անդ իջեալ
դնին, և է ակն՝ որ քննէ զխորս ծովուց և անդունդք անե-
րեւոյթք մերկապարանոց են առաջի նորա։

Բայց մեր աստանօր թողեալ զմարդիկ՝ հարցցուք զմարգս.
իցե՞մք արդեօք և մեք նման նոցին. չիցե՞մ և ես, թէպէտ և
հմուտ աստուածեղէն գրոց և պատգամաց Քրիստոսի, թէպէտ
կրօնաւոր, թէպէտ քահանայ, և հանապազօր պաշտօնեայ
ամենայեղ և ամենասուրբ խորհրդոյ, սակայն ածիցե՞մ զմտաւ
հանապազ կամ յաճախ՝ զվախճանն. զվախճանն հասարակաց,
և զիմ յատուկ վախճան. զվախճան կենացս, որ ողջոյն իսկ
կենացս է գին և կշիռ. զվախճանն սեփական՝ յոր կոչեցայ,
զվախճանն՝ առ որ օր ըստ օրէ և ժամ ի ժամէ մերձենամ
ըստ ընթացից ժամանակի, և յորմէ՝ թերեւս նոյնպէս հե-
ռանամ ըստ բարոյապէս գործոց։ Չիցե՞մ և ես մի ի նոցանէ՝
որք թերեւս դիցեն առաւօտուց բարի ինչ գիտումն ի մտի,
այլ գուցէ ոչ եւս յիշիցեն զայն մինչեւ ցերեկոյն կամ մին-
չեւ ցմիւս առաւօտ։ — Չմտաց և զսրտի ներգործութեանց՝
ոչ կարեմ գիտել զթիւ, որպէս և ոչ զքթիթս արտեւանանց
կամ զշնչոյս տուրեւառ. այլ իցէ՞ օրէն ըստ նոցին անգիտակ

անքննող գոլ դիտմանց և շարժմանց մտացս և սրտի և զգա-
յարանաց։ Քանի՞ցս յաւուր կրկնիցեմ զբարի դիտումն. քա-
նի՞ցս ուղղիցեմ զգործս և զբանս առ դատաշաճն. քանի՞ցս
յիշիցեմ զվախճանն. և գիտելով քաջ, զի որպէս ամենայն
ուղիք ի ծով գնան, այսպէս և ամենայն վայրկեանք կենաց
յանգունդս հանգերձելոյն երթան, և հանդերձելոյն ծով ա-
նեզրական՝ չէ հեռի յինէն. գիտելով զի չեն ինձ ընթացք
երկարաձիգք որպէս սաղապաճեմ գետոց երկրի, այլ համա-
ռօտագիծ նիշ մի ճեալ ի ճեպոյ և հոսանուտ վտակ, որ ահա
խառնի յամենակուլ ովկիան յաւիտենից, որոյ աննուաճելի
կոհակք կոծեն անդադար զնեղ և զնուրբ անջրպետ երկոցուն
աշխարհացս, և եթէ օրէն իցէ ասել, ապաժոյժք ապագային
յերեսս իմ, ալիք յաւիտենականք խառնին ընդ խռուացեալ
ալիս գլխոյս, և ուր իմ ողողեալք դանդաչեն ի ծիր ան-
զերծանելի ծովուն. — և տակաւին ի մոռացօնս արկեալ զայ-
սոսիկ, մանաւանդ թէ անզգայեալ, կեամ զկասկածոտ մնա-
ցուած կենացս, որպէս թէ կելոց իցեմ ընդ երկար ժամա-
նակս, կամ թէ երկարութիւն կենաց՝ իցէ ինչ մի, կէտ մի,
հատ մի աւազոյ՝ առ երագութեամբ ժամանակի և առ ան-
չափութեան յաւիտենին։

Ո՜վ կուրութեանս. կուրութիւն այնքան աղիտալի՝ որքան
զի և վտանգաւոր. և այնքան պարտաւոր՝ որքան կամակոր.
այնքան կորուսիչ՝ որքան զի խաբիչ. կարծեցուցանելով՝ եթէ
սովորակի կրթութեամբ և կատարմամբ պարտուցս ինչ հոգե-
ւորականաց, աղօթից կամ ընթերցուածոց, արդարեւ կատա-
րիցեմ զպարտն և զպատշաճ. իսկ ոչ առնելով զայն, քանզի
ոչ խորհրդածեմ ոչ զսկիզբն գործոյն և ոչ զվախճան, գտանիմ
ի համար կուրացն կշտամբելոց ի Քրիստոսէ, « Եթէ կոյրք էիք
» (ընդ այսպէս) ոչ էր ձեր մեղ, բայց արդ ասէք՝ թէ տեսանեմք,
» և մեղքն ձեր ի ձեզ հաստատեալ են »։ — Զգաստացիր արդ
անձն իմ, բա՛ց զաչս քո. Երթ ի Սելովամ սրբութեան, երթ ի
Պրոբատիկէ փրկութեան. բաղդ է արդ քեզ բարեաց, մի՛ վրի-
պեսցիս. ահա աւուրք հասին ջուրց յուզման, աւուրք հոգւոյդ
յատուկ կրթանաց, ջուրք մաքրականք մթութեան աչաց,
բղխեալք յաղբերէն կենաց, ի կոզից կենարարիդ, և յանմա-
հարար բանից աւետարանի իւրոյ։ Ընդերկար տատանեցար
երկդիմի գնացիւք. ժամանակն յառաջէ, և դու մերձենալով

մերձենաս ի վախճան կենաց, այլ ոչ ի դիտելի վախճանն գործոց։ Արդ յերկոսին միանգամայն լեր ակնկառոյց, մինչ-դեռ կայ ժամ, զոր չնորհէ քեզ փափագող փրկութեան հոգ-ւոյդ, այլ ոչ խոստանայ այլ եւս ժամս բարեպատեհս։ Ցմա-նող լեր օրինակի բազմաց յառաջադիմաց, որք դիպողագոյն հզօրագոյն հնարս ուղղութեան վարուց և փրկութեան հոգ-ւոց՝ գտին զխոկումն կատարածի կենաց, կամ զվախճանն և զմահ։ Եւ՛կ, և զպահս ինչ աւուրցս նորոգութեան կենաց՝ նուիրեսցուք առ այս, միամիտ և աներկբայ իսկ յուսով, եթէ մարթ է և ի դէպ է, ի հեթեթանաց առժամանակեայ մահուան որսալ զհիւթ անմահականս կենաց։ Եւ առ այս լիցի մեզ առաջնորդ և օժանդակ՝ խոհական գրուած հոգե-սիրի ուրումն Հօր Յիսուսեան ուխտի, զորոյ և արժան հա-մարիմ կանխել զբան մի յառաջարկութեանն, եթէ, գիտե-լով իսկ զի յոլով են գիրք ճառից զբարւոք մահուանէ, տա-կաւին ակն ունիմ զի և խորհրդածութեանս այսոցիկ ըն-թերցողք՝ գտցեն իմաստս ինչ հոգեկեցոյցս՝ զոր չիցէ ընթեր-ցեալ այլուր. և ես յաւելից, եթէ ըստ յօժարութեան ըն-թերցողին կամ ունկնդրի՝ գիտէ Աստուած ազդողագոյն առ-նել զբան քան զբան։

Ա

ԿԱՆԽԱԻ ՊԱՏՐԱՍՏԵԼ Ի ՄԱՀ

Ոչ ոք անգիտանայ և կամ երկբայի՝ եթէ հարկ է մեռա-նել. այլ քանիք իցեն որ չանայցեն քաջիկ խելամուտ լի-նել ստուգութեան մահու և կշռել զհետեւանսն։ Արդ, զի՞նչ իցէ մեռանելն։ — Մեռանել՝ անկումն է ի բացարձակ միայ-նութիւն, ուր ամենայն ոք թողու լքանէ զմեզ, և մեք իսկ թողումք զամենայն. քանզի մահ զրկէ զմեզ յամենայն հա-ճոյից և հեթեթանաց կենաց, յամենայն ծանօթից մերոց և սիրելեաց, յամենայնէ՝ զոր ունէաք։ Մեռանել՝ ընկճումն է ընդ ցաւօք մարմնոյ, և պաշարումն ի թշնամեաց հոգւոյս մերոյ. և ճիգն յետնոյ և վճռական պատերազմի՝ նուաղեալ

զօրութեամբ և վհատեալ սրտիւ՝ ընդդէմ հզօրագունին ոսո-խաց, պատերազմն յոր հաստատեալ կայ փրկութիւն մեր։ Մեռանել՝ մուտք են ի յաւիտենականութիւն. ի յաւիտենա-կանութիւն երջանիկ կամ յաղէտալի, և յոր և է՝ մտանել առ ի կալ մնալ անդ մինչեւ իսպառ։

Ահաւո՜ր խորհուրդ։ Ի պահու յորում աւանդեցից զոգի իմ՝ մնայ ինձ կամ գիւտ կամ յաւիտենական կորուստ Աստու-ծոյ, երջանկութեան կամ յաւիտենական դատապարտութեան հոգւոյս. կամ յարքայութեան երկնից տեղի գտանել՝ կամ ի մշտնջենաւոր տարտարոս դժոխոց։ Ո՜վ արդարեւ զարհուրե-լի վայրկեան։ Եւ զի՞նչ աստի մտաբերել. — բայց զի՝ մահ ամենակարեւոր գործ է խորհրդածութեան և ամենայն փու-թոյ խնամոց. և ապա զի ի դէպ է զգուշանալ յամենայնէ՝ որ վտանգիցէ զելս մեր յաշխարհէ, և չանալ ամենայնիւ զի հասցուք ի կատարած երջանիկ։ Քաջ գիտասցուք զի ըստ կանխաւ փութոյ կամ ըստ անփութութեան մերոյ եղիցի մահս մեր երջանիկ կամ աղիտաւոր։ Զի ըստ նախախնամու-թեան Աստուծոյ մահ բարի հաստատեալ է ի պատրաստու-թիւն բարի. և առ այս զգաստ հսկողութիւն և երկիւղած պատրաստութիւն, պարգեւէ Աստուած՝ ըստ տեսչութեան իւրում՝ զչնորհս յարատեւութեան մինչեւ ի վախճան։ Եւ այսու խրատիմք՝ եթէ չիք կարեւորագոյն և ստիպող պարտք՝ քան զկանխաւ սկսանել զպատրաստութիւն մահու. և զի ա-ռաջին գբաղումն կենաց մերոց, և օրինաւորագոյն նպատակ գործոց մերոց և ջանից՝ հարկ է թէ իցէ բարւոք պատրաս-տութեամբ մեռանելն։ Եւ արդարեւ, եթէ պատրաստեալք իցեմք ի մահ, շատ իսկ գործեալ է մեր, եթէ չիցէ և այլ ինչ գործեալ ի բովանդակ կեանս մեր, իսկ եթէ անփոյթ արարեալ իցէ զպատրաստութեամբս, որ զինչ և այլ գոր-ծեալ իցէ մեր, թէպէտեւ զազգս և զաշխարհս կառավարեալ և տնտեսեալ, ոչինչ է մեր գործեցեալ, քանզի զանց արա-րաք զայնպիսի պարտուք՝ առ որով այլն ամենայն խաղալիկք են տղայոց և սնոտիք։

Աւա՜ղ անփութութեանս։ Տեսանեմք այսր զի տանին ի գերեզման զայս ոք, ի վաղիւ՝ զայն ոք. և գիտեմք զի հասցէ և մեզ կարգ, հաւատամք զի մահ գործ է գերագոյն՝ յոր անկ է մեզ վաստակել զամենայն ժամանակս կենաց մերոց.

խոստովանիմք՝ զի անմարթ իսկ է ըստ արժանոյն պատրաստել. խիթամք յանկարծօրէն ըմբռնիլ ի մահուանէ, ցաւէ մեզ ընդ այնոսիկ՝ որոց յանկարծուց և յանզգաստից ի վերայ եհաս մահ։ Եւ սակայն ո՞ի մէնջ զգուշութեամբ պատրաստեցի ի մահ։ ... Մահ՝ անցք են կենաց յայլ կեանս, և բա՞ւէ, որպիսի՞ կեանք. և սակայն քանի՞ք իցեն որ պատրաստք կայցեն առ այսպիսի ահեղ անցս։ Քրիստոս սիրողաբար ազդ առնէ մեզ. «Պատրաստք եղերուք, զի յորում ժամու ոչ » կարծիցէք՝ գայ Որդի մարդոյ »։ Սուրբք խրատեն, եթէ մահ նստի ի դրունս ծերոց, և դնէ որոգայթս ոտից երիտասարդաց։ Հաւատք ուսուցանեն՝ եթէ չիք ոք որ թցէ յապահովի և առ մի վայրկեան. և փորձն աղաղակէ՝ եթէ բազում այն է զի ի դալարագոյն տիս հասանեն հարուածք մահու. և բանն թելադրէ՝ եթէ չէ անկ, չէ օրէն զայսպիսի կարեւոր իրս՝ թողուլ ըստ բաղդի։ Իսկ մեք իբրեւ անլուրք և անիմացք՝ կեամք որպէս թէ չիցեմք մեռանելոց, կամ թէ ամենեւիմբ իսկ էութեամբս մեռանելոց իցեմք։ Եւ զայս ոչ եթէ հեթանոսք և բարբարոսք գործեն, այլ քրիստոնեայք սնեալք բանիւ հաւատոց, գիտակք մահու և դատաստանի, յաւիտենից կենաց և կորստեան. և կրօնաւորք՝ որոց կեանք վայելէր լինել հանապազօրեայ պատրաստութիւն մահու։

Այս ծանր անփութութիւն փրկութեան՝ աներկբայապէս գլխաւոր պատճառք են գրկման ի շնորհաց բարւոք մեռանելոյ։ Եւ ուստի՞ այս, բայց եթէ զի կամ չհաւատամք եթէ անկ է մեզ կանխաւ և վաղու պատրաստել ի մահ, կամ զի կարծեմք գտանել միշտ դէպ ժամանակ պատրաստութեան։ Արդ առ ի ջրել զայնպիսի մոլորութիւնս՝ առցուք ի քննութիւն, նախ, եթէ քանի՞ կարեւոր է պատրաստել ի մահ բաբի, և ապա զի ի դէպ է այժմէն իսկ անյապաղ ձեռն ի նոյն արկանել գործ։

Ա. ՀԱՐԿ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ Ի ՄԱՀ

Ամենեցուն հարկ անհրաժեշտ ի վերայ կայ պատրաստելոյ ի մահ. — յո՞ր սակս — սակս այնր զի անստոյգ է ժամ մահու. զի ի պահէ անտի սկսանի յաւիտենականութիւն և դատաստանն անաչառ։ Ի ամիս մի յետին, եօթնեակ մի, օր մի, ժամ մի յետին՝ յորում գրաւեսցի կեանք մեր. և ընդ այս չիք բնաւ երկբայել։ Այլ յորո՞ւմ ժամու, յորո՞ւմ աւուր, կամ յորո՞ւմ ամսեան մեռցիս դու. զայդ ոչ գիտես. «Ծած» կեալ է առ ի մէնջ օրն այն, ասէ Սուրբն Օգոստինոս. որ» պէս զի զօր ամենայն զգոյշ կացցուք »։ Եւ արդ զի մարթ է ամենայն աւուր չունել զվաղուն, ի դէպ ուրեմն է պատրաստ լինել մեզ հանապազօր ի մահ։ Քաջ գիտեմք զանկարգ և զամբոխեալ զնացս ծովածուփ կենցաղոյս, զմրրիկս, զալիս, զխութ և զխոչ. քանի՞ զգուշութեան չիցեն պէտք յապահովութիւն բազմավտանգ նաւարկութեանս. քանզի եզրն յոր դիմէ՝ յաւիտենականութիւն է. յաւիտենականութիւն տանջանաց. տարտարոս անչիջանելի հրոյ, կամ բնակարան անճառելի երանութեան։ Ո՞վ յաւիտենականութիւն. ո՞վ բան անմոռանալի։ Անզգաստն որ լսէ զանունդ և անփոյթ լինի զպատրաստութենէ ի մահ՝ չիցէ՞ արժանի ահեղ դատաստանի։ — Եւ խստութիւն դատաստանի՝ ո՞չ յայտ առնիցէ զհարկ պատրաստութեան ի մահ. ո՞չ և գիտակցութիւն քո զայդ քեզ ազդիցէ։ Աղէ ասա, եթէ կայր քեզ ի սմին պահու մեռանել և յանդիման լինել Աստուծոյ, գտանէի՞ր պատրաստ. — եթէ ի պահուս՝ յորում լսես զայս հարցուած՝ կոչեալ լինէիր յանաչառ ատեան, գտանէի՞ր պատրաստ։ — Ցտաս ինչ պատասխանի, քանզի զարհուրեալ պակչիս։ Եւ արդ չիցէ՞ յանդգնութիւն անհեգեղ՝ կեալ և մի վայրկեան յայնմ վիճակի՝ յորում չկամէիր ի դատ կոչիլ։ Գիտես զի մարթ է քեզ մեռանել վայրկենէ ի վայրկեան. գիտես՝ զի եթէ կայր քեզ մեռանել յայսմ վայրկենի՝ անպատրաստ գտանէիր, և տակաւին դանդաղե՞ս ի պատրաստել։

Անդէն ընդ մեռանելդ կայ մնայ քեզ դատիլ։ Պատուհասն՝ յորմէ հարկ է զգուշանալ կամ մատնիլ ի նոյն յատենի անդ, մեծագոյնն է չարեաց, չարիք յաւիտենական և անճողոպրե-

լի. անյետադարձ է վճիռն որ հատցի քեզ, անողոք անբողոք, և իսկ և իսկ կատարելի։ Անստոյգ է վիճակ հոգւոյդ. քանզի գիտես զի մեղար, այլ ոչ գիտես եթէ ապաշխարեցե՞ր արժանապէս. և յայդպիսում անստուգութեան երթաս երեւել յաստենի՝ յորում՝ «Աստուած է որ դատին», Աստուած՝ որում չիք ինչ թաքուն, Աստուած ամենակալ, որ ոչ առնու ակն երեսաց։ Իշխե՞ս մտանել անպատրաստ յայդպիսի դատաստան։ Ո՜հ, զգաստասցուք ամենեքին, մեղաւորք և արդարք, և ի միտ առցուք, եթէ քանի՞ խնամով պարտ է մեզ պատրաստ գտանել յառաջ քան զմահն։

Եթէ մեղաւոր իցես՝ պատրաստեաց ի մահ. զի եթէ մեռանիցիս ի մեղս քո՝ դատապարտ լիցիս իսպառ. հաւատոց վարդապետութիւն է այս։ Արդա՞ր իցես, պատրաստեաց ի մահ. զի զի՞նչ օգտիցէ կեալ բարւոք և մեռանել ոչ բարւոք։ Մահ անբարի կորուսանէ զամենայն. ի միում վայրկենի եղծանէ զամենայն սրբութիւն և զարդիւնս երկար և խիստ ապաշխարութեան։ Եւ է ստոյգ՝ զի և դար մի ամաց առաքինակրօն կենաց՝ չառնէ զոք անկասկած թէ ունիցի մեռանել բարւոք. յոր աստիճան առաքինութեան և բարձրացեալ իցէ՝ մարթ է նմա տակաւին մեղանչել՝ ցորչափ կեայ ի վերայ երկրի, մինչեւ ի շունչն յետին, կարէ մեռանել ի մեղս իւր և կորնչել իսպառ։ Անքննելի են դատաստանքն Աստուծոյ։ Զինուորն դասալիք ի գնդէ Քառասնիցն Սեբաստիոյ՝ ժուժեաց ընդերկար ընդ նոսին՝ տանջանաց ի լճին սառուցելոյ, այլ ի պահու աւարտման զոհին՝ ուրացաւ վատօրէն զհաւատս իւր, և վրիպեաց ի փրկութենէ հոգւոյն։ Յուրաս՝ խեղդամահ արար զանձն՝ յուսահատեալ ի փրկութենէ, թէպէտեւ կեցեալ էր երբեմն սրբութեամբ ընդ այլ առաքեալսն։ Քահանայք ոմանք խոստովանողք՝ ի հուր մատնեալք և ժամս ոչ սակաւ խանձեալք՝ քարոզելով այլոց զհաւատս Քրիստոսի, ի վերջոյ յուրաստ եղեն ի հաւատոցն, սակայն և ոչ յառժամանակեայ հրոյ անտի զերծան, և ընդ մարտիրոսական պսակին՝ կորուսին զամենայն ինչ։ Աւաղելի՞ օրինակք առաքինեաց և սրբակրօնից՝ որք յետ յերկար ժամանակաց՝ ի կատարածին թշուառաբար կորուսին և կորեան. և արդ տանջին ի հուր ահաւոր, և տանջեսցին իսպառ, մինչդեռ այլք վայելեն և փայլեն յաթոռս՝ արքայութեան, յոր փոքու

իւիք կարէին ժամանել։ Ապա չեն և արդարք աներկեւան բարւոք մահու, մինչեւ ոչ չնորհեսցի նոցա՝ վասն աչալուրջ պատրաստութեանն։ Շնորհք յարատեւութեան մինչեւ ի վախճան՝ ոչ ումեք է խոստացեալ, թէպէտ և գերազանցեալ իցէ սրբութեամբ. որպէս զի «ահիւ և դողութեամբ» զփրկութիւն անձանց մերոց գործեսցուք»։ Ցայս սակս ստէպ կրկնէր Քրիստոս առ առաքեալսն. Զգոյշ եղերուք, արթուն կացէք։ Եթէ և արդարք իցէք՝ պատրաստ կացէք մահու։ Այն զի մարթ է եթէ որ ընդ երկար սրբութեամբ կեցցէ՝ անհոգ լիցի յայսմ պատրաստութենէ. մինչ որ լաւութեամբն եկեաց՝ ի դէպ էր թէ լաւագոյն եւս պատրաստէր ի վախճանն։ Զի՞նչ շահ իցէ վաճառականի որ յիսուն ամ խնամով աշխատ լեալ և ամբարեալ ինչս բազումս՝ հուպ յեզր հայրենեացն հասանելով՝ նաւաբեկեալ կորիցէ զամենայն. և ո՞ր օգուտ քրիստոնէի՝ հաւաքել զանձս արդեանց կենաց՝ եթէ հասցէ նմա մահ անբարի։

Իսկ եթէ արդարոց այդքան կարեւոր է պատրաստութիւն մահու, ո՞րքան եւս առաւել մեղաւորաց. եթէ սրբոց անգամ խիթալի իցէ մահ աւաղելի, որքան եւս ահաւոր է մեղաւորաց, գաղջից, յուլացելոց, որոց չիցէ երբեք զմտաւ ածեալ զելս կենաց, կամ թէ վարկպարազի իմն տեսութեամբ, որպէս թէ չիցէ ինչ վտանգ ինքեանց։ — Զիք աստանօր ճանապարհ միջին. կամ սուրբքն և առաքինիք խաբեալ են, կամ մեք ի խաբէութեան կամք. զի եթէ յետ գաղջ և հեշտասէր կենաց՝ մարթ իցէ ակն ունել բարւոք մահու, ապա սուրբքն ի ցնորս պատրանաց անկան, պահօք և խարազնագեցութեամբք և պէսպէս ճնշմամբք նեղելով զանձինս՝ ի յոյս բարւոք մահու. հրաժեշտ տալով ամենայն հաճոյից կենաց, և յանձն առնելով զաղքատութիւն, զրկանս, զառանձնութիւն և զմեռելութիւն յաշխարհի. զի՞նչ շահ լինէր նոցա այն ամենայն աղօթք, հառաչանք և արտասուք. վասն էր անհնարին երկիւղն այն չարաչար մահուան, և հանապազօրեայ խնամ զամագիտ լինելոյ բարւոք մահու, եթէ մարթ էր մեռանել սրբութեամբ առանց այնքան տքնութեանց և տառապանաց ի պատրաստութիւնն։ Ահա տեսանեմք և յայժմուս՝ նաեւ ի մերձաւորաց մերոց՝ զբազումս հրաժարեալս յաշխարհէ և ապաւինեալս ի վանորայս, ի հանապազօրեայ կըր-

թութեան գործոց բարեաց, և տակաւին զանգիտեն ի կատարածէն. իսկ մեք առանց ինչ կանխաւ պատրաստելոյ ի հուսկն վախճան, կելով գաղջութեամբ, թերեւս և յանցանօք, զիա՞րդ յանդգնել ակն ունիցիմք բարւոք մեռանելոյ. որք՝ թերեւս մանր խնամով հոգամք յարդարել զայս ինչ և զայն գործս, և զմիով միայնով՝ որ գերագոյն և կարեւորագոյն բնաւիցն է՝ զանց առնեմք, այն է գործ և հոգ կատարածի կենաց։

Ըմբիշք մինչչեւ մտեալ յագոն՝ երկար մարզիւք փորձեն զանձինս, հանապազօր պատրաստին ի կռիւ, այլ ոչ իշխեն մխիլ ի հանդէս՝ մինչեւ վստահացեալ ի կորով իւրեանց. «և » նոքա՝ զի զեղծանելի պսակն առնուցուն»։ Իսկ մեք՝ որոց առաջի կան փառք անեղծանելի, պսակ անթառամ և յաւիտենական, յանդգնիմք մեք անփորձ անմարզ ի դիմի հարկանել ողջոյն իսկ յաւիտենականութեան։ Առ արտասանել ճառ մի, կամ հանգիսանալ ի թատեր, առ ի շահել զդատ յատենի, և առ պէսպէս ժամանակաւոր գործս, ո՞րքան նախահոգութիւնք, ո՞րքան զգուշութիւնք, քանի՞ խնամով ծախին վայրկեանք, և տակաւին համառօտ թուի ժամանակն. իսկ վասն հոգւոյ, վասն Աստուծոյ, վասն յաւիտենական փրկութեան՝ հազիւ թէ ձեռն ձգի. ամենայնի դտանի ժամանակ, իսկ վասն մահուան՝ որ յետին և ամենակարեւոր գործ է կենաց, առանց ինչ զմտաւ ածելոյ՝ յումպէտս ծախին ամք. թերեւս յանուշել կամ ի պարարել զքիմս համադամօք, կամ առ զբօսանս օրականս՝ առաւել խնամք և հանդերձանք լինին՝ քան վասն յաւիտենական ճանապարհին. — զայլոց գործս և դատս՝ ուշի ուշով քննեմք, և զհամարոյ խղճի մտաց մերոց, գիտելով իսկ զի անհնարին վնասէ թերանալն ի սմին, չառնեմք ինչ փոյթ, կամ յոյժ սակաւ, որ է ասել անբաւական։ Քանզի յայլում ամենայնի կարեմք ուղղել զվրիպանս մեր, այլ եթէ վրիպեցիմք ի բարւոք մեռանելն վճարեալ է վասն մեր ի յաւիտեան։ «Զիք դարման մոլորութեանց՝ յետ » մահու », ասէր ոմն փիլիսոփայ հեթանոս (Պլուտարք)։ Անդարման են չարքն, քանզի անդառնալի են կեանք։ Յոր կողմն և անկցի փայտն՝ ի նմին և կացցէ, եթէ ընդ հիւսիսի և եթէ ընդ հարաւ. յոր կողմն և կքեսցի ծանրութեամբն՝ այն լիցի դադար անփոխելի։ Եթէ կար մեզ զէթ երկիցս

մեռանել, ոչ այնքան ծանր էին առաջին վրիպանք անբարի մահուան, քանզի գոյր յոյս ուղղութեան յերկրորդումն նուագի. այլ մի անգամ եւեթ կայ մեզ մեռանել. և ի կէտ անդր միանգամ մահուն հաստատեալ է յաւիտենականութիւն մեր. հարկ է ուրեմն ամենեւիմբ պատրաստ գտանել ի մին և յանդարձականն այն նուագ։

Իսկ արդ զիա՞րդ կեամք այժմիկ. եթէ հաւատայաք անմահ լինել, կամ բազում անգամ մեռանել, կամ եթէ վայրապար զրոյցք էին յաւիտենականութիւն և հանդերձեալքն, մի՞թէ կէաք անփութագոյնք քան յայժմուս։ Կամ եթէ Քրիստոսի խոստացեալ էր՝ եթէ ոչ ոք մեռցի մինչչեւ կանխագոյն ազդ եղեալ նմին, և քաջ պատրաստեալ, և յարդարեալ զխիղճ մտաց իւրոց, և իշխանութիւն ունիցի ի վերայ կատարածի կենաց իւրոց, կարէաք արդեօք յապահովի քան որ յայժմուս՝ դիմագրաւել յօրհասն։ Այլ ճշմարտութիւնն յաւիտենական ամենեւին հակառակ այսմ վկայեաց՝ ամենայն հաստատութեամբ. ընդ որ չերկբայիմք և մեք. և սակայն կեամք՝ որպէս եթէ չհաւատայաք այսոցիկ։ — Աւա՜զ ապշութեանս. չես պատրաստ, չկամիս մեռանել այսօր. և զի՞ գիտես թէ չմեռանիս. չիցէ՞ մարթ յամենայն աւուր մեռանել. դոյզն ողողումն արեան յուղեն, գնտիկ մի հրազինու, գայթ մի ոտին, և այլ բազմադիմի անակնկալ դէպք կարեն վաղվաղակի հասուցանել քեզ մահ. քաջ գիտես զայս, և կաս տակաւին անպատրաստ։ Մեղաւո՜ր անմիտ. մարթ է քեզ մեռանել և ի պահու անդ մեղանացդ, և ի փչել զանապաշխար ոգիդ՝ ո՞ւր լիցի բաժին նորա։ Քաջ գիտես զայս, և ոչ զգուշանաս ի մեզաց։ Եւ եթէ հասանէր քեզ մահ ի վիճակի՝ յորում կասգ այժմիկ, ի վիճակի մեղաց, զի՞նչ լինէիր առ ժամայն ի մահացու անկեալ մեզս՝ թերեւս զանց առնես զաւուրբք և զեօթնեկօք, և կափուցեալ աչօք կաքաւես յեզերս խորխորատի դժոխոց, մոռացեալ զյաւիտենական ժառանգութիւն երկնից։

Արդարեւ կամ հերետիկոսք եմք կամ անիմաստք. հերետիկոսք՝ եթէ չընդունիմք զհաւատս զայս. անիմաստք, եթէ հաւատամք և ոչ պատրաստիմք։ Զիցէ՞ մոլորութիւն մեծ և յիմարութիւն դատապարտելի՝ ճանաչելն զանհրաժեշտ հարկ պատրաստութեան մահու, չկամելն մեռանել անպատրաստ,

գիտելն զի մարթ է մեռանել յամենայն աւուր, և ոչ ինչ փութալ զպատրաստութենէ։ Եթէ բարբարոս կամ անհաւատ ոք զայս առնէր՝ չգոյր ինչ զարմանալի. այլ չածել զայս զմտաւ՝ քրիստոնէի հաւատացելոյ, և կրօնաւորի՝ որ հրաժարեաց յաշխարհէ՝ առ ի բարւոք պատրաստել յելս կենաց, այս անփութութիւն՝ նշանակ է ոչ շատ հոգալոյ զերկնից, զփրկութենէ հոգւոյն, զԱստուծոյ, և զանակնկալ մահուանէ՝ որ երբեմն ի պատուհաս իսկ ի վերայ հասանէ յուլացելոցն և անզգաստից։ Ոչ ուրեք այնպէս ահեղ է արդարութիւն Աստուծոյ՝ որպէս յորժամ երկայնամիտ լինելով մինչեւ ցվերջին ժամ, զինէ զբազուկ բարկութեան իւրոյ, և հարկանէ անխնայ՝ զրկելով ի շնորհաց մինչեւ ի սպառն յարատեւութեան, զմոռացումն զայն մահու և զաններելի անփութութիւնն։ Եւ զի այդ շնորհք յարատեւութեան՝ յաճախ վարձք են կանխագոյն պատրաստութեան ի մահ, յայտ և աստի է մեծ կարեւորութիւն պատրաստութեանն։ Պատրաստութիւն մտադիւր և ի դէպ ժամու՝ աջողագոյն հնարք են բարւոք մեռանելոյ, որպէս և անփութութիւն պատրաստութեան՝ նախագուշակութիւն իմն է անբարի մահուան։ Մեծի հաւանութեան է՝ եթէ ըստ պատրաստութեան մերոյ լիցի և մահս մեր։ «Երանի՜, ասէ ճշմարտութիւնն յաւիտենական, » ծառայից, զորս՝ եկեալ տէրն գտցէ արթունս». եթէ յերկրորդ պահու եկեսցէ, յաւուրս մանկութեան նոցին, և եթէ յերրորդին, ի կատարեալ հասակի, և գտցէ զնոսա պատրաստս. երանի՜ է նոցա։ Աւադիկ հաւաստիք յաստուածային վճռոց, եթէ շնորհք բարւոք մահուան՝ հաստատեալ են ի կանխաւ պատրաստութիւնն։ Այլ հետեւանք բանից աւետարանին՝ յայտ առնեն և զայն, եթէ դատապարտութիւն՝ անհրաժարելի իմն հետեւութիւն է մոռացութեան մահու, անփութութեան պատրաստութեան. «Իսկ եթէ ասիցէ ծառայն » այն ի սրտի իւրում, եթէ յամեսցէ տէր իմ ի գալ, և ու» տիցէ և ըմպիցէ, եկեսցէ Տէր նորա յաւուր յորում ոչ գի» տիցէ, և ի ժամու՝ յորում ոչ ակն ունիցի. և որոշեալ » զնա յընտրելոցն՝ զբաժին նորա դիցէ ընդ անհաւատս»։ Զնոյն բան հաստատէ Տէրն մեր և յառակի Տասն Կուսանացն. ամենեքին նոքա կոյսք էին, այլ ոչ ամենեքին իմաստունք, զի ոչ գտան ամենեքին պատրաստք. մերժեցան յիմարքն ի հարսանեացն, զի անպատրաստք գտան. ընդունելի եղեն իսկոյն իմաստունքն, քանզի խնամով պատրաստեալք էին. շնորհք մինչեւ իսպառ յարատեւութեանն՝ հարկաւոր իմն պտուղ էր զգաստութեան և արթնութեան նոցին, վասն այսորիկ ի վերայ ածէ Քրիստոս բանիցն. «Արդ արթուն » կացէք, զի ոչ գիտէք յորում ժամու եկեսցէ տանուտէրն, » յերեկորեայ, եթէ ի գիշերի, եթէ ի հաւախօսի. գուցէ » եկեալ յանկարծակի գտանիցէ զձեզ ի քուն», և մատնեսցէ ի մահ անակնկալ։

Եւ արդ ծանուցեալ զմեծ հարկ պատրաստութեան մահու, զուն գործեսցուք ամենայն խնամով կատարել զայս պարտս. և մի՛ անմտասցուք, կամ մի՛ յանդգնեսցուք օր ի յօր առնել և յապաղել, զի մի՛ արդեօք յանկարծոյն հասանիցէ ի վերայ մեր, և անպատրաստք ըմբռնիցիմք։

Բ. ԶՅԱՊԱՂԵԼ ԶՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ ՄԱՀՈՒ

Գիտելով չափ զի հարկ է պատրաստել ի մահ, համարիմք յանձինս՝ եթէ երբ և է գտցուք ժամանակ հոգալոյ։ Ակնկալութի՛ւն խաբէական. և զի մի նովին և կորիցուք՝ ծանիցուք արդ, զի ոչ միայն հարկ է մեզ պատրաստել, այլ զի և պատրաստել անյապաղ։ Անճահ իսկ է թէ ոք առողջ միտս ունիցի՝ և զայսպիսի գործ կարեւոր թողցէ միշտ յառ յապայն։ Խոստովանիմք եթէ առաջին պայման բարւոք մահու՝ բարւոք ի նոյն պատրաստելն է. քանզի «Երանելի են միայն » ծառայքն այնոքիկ՝ զորս եկեալ Տէրն գտցէ արթունս»։ Հաւանիմք թէ և ոչ միոյ աւուր կեանք աներկբայ իցեն, և թէ, ըստ խորհրդածութեան Մեծին Գրիգորի, Աստուած որ տայ թողութիւն ապաշխարողի, ոչ խոստանայ յապաղկոտ մեղաւորի՝ զվաղուեան օրն։ Հաւանիմք եթէ մարթ է մեզ մեռանել յամենայն վայրկենի, եթէ մահ առ ուստ կայ մեր. և այնքան անստոյգ է մեզ կեանք վաղուի որքան երկար ամաց։ Մահ հարցէ այսօր և վաղիւ զբազումս ի մարդկանէ՝ որք կարծեսն տակաւին քաջ հեռի զվախճան կատարածին. մարթ է և մեզ հանգոյն նոցին ըմբռնիլ ի մահուանէ։ Եւ չիցէ՞ արդ յանզգնութեան, չիցէ՞ աւաղելի ապշութեան՝ զայս զմտաւ ածելով՝ և տակաւին օր ի յօր առնել զպատրաստութիւն մեր

ի մահ անդր։ Ս. Գիրք աղաղակեն եթէ համառօտ են աւուրք կենաց մերոց. իբրև անցք իմն ստուերի են, և թէ առ վաղիւն մեռանիմք։ Եւ սակայն, բազմաց լսելով զայս՝ զի՞նչ ի վերայ բերիցեն։ Բա՜ԷՔ, ուրեմն, ասեն, վայելեսցուք ի բարութիւնս՝ որ կանս. պսակեսցուք զմեզ բոլորիւք վարդից, մինչչեւ իցեն թառամեալ. ամենայն ուրեք թողցուք նշանակ բարեկենդանութեան. արբեսցուք ուրախարար գինեաւ. կերիցուք և արբցուք։ Ո՞վ այլանդակ տրամախոհութիւն։

Ամաչեմք արդարեւ որպէս քրիստոնեայք՝ ընդ այսպիսի հեթանոսական իմացուածս, և դատապարտեմք. — իսկ ընդէ՞ր ապա քաղաքավարիմք ըստ նոցա. բանիւք՝ պարսաւեմք զնոսա, իսկ գործովք ընդէ՞ր միաբանիցիմք, ի մոռացօնս արկանելով զյիշատակ մահու, և յար յապագայ ժամանակ զպատրաստութիւն ի նոյն։ Սուղ ինչ են, ասեմք, կեանքս մեր, և որպէս ստուեր անցանեն. և մարթ է թէ վաղիւ եւս հասցէ օրհասն. և սակայն զբաղիմք առօրէիւքս, վայելեմք ի բարիս ներկայիս. փափկութեանց սիրողք՝ վարդիւք պսակեմք զմեզ, և մոռացեալ զերկնից փափկութիւնս՝ արբենամք անոյշ գինեաւ, ուտեմք և ըմպեմք. յաճախ հոգամք զմարմին, հազիւ երբեք զհոգի, իսկ զելս վախճանի կենաց՝ զրեաթէ ոչ բնաւ։ Եւ չիցէ՞ այս երեւել ուղղափառ և կեալ հեթանոսաբար։ — Համարիմք գտանել միշտ ժամանակ տխրագին պատրաստութեանն. չիք ասեմք վնաս ի յապաղմանն. պատրաստիցիմք յաւուր միում։ Եթէ արդար իցեն բանքդ, ապա Քրիստոս չարաչար ստիպէ զմեզ յասելն և ի կրկնել, Զգոյշ լերուք, Արթուն կացէք, Պատրաստք եղերուք։ Ո՜հ, քանի՜ քանի՜ անձինք այսպէս խորհելով և խօսելով՝ մատնեալ կան արդ ի յաւիտենական դատապարտութեան. լի են դժոխք այսպիսի հաւանութեամբք, այսպիսի թերակատար յառաջադրութեամբք։ Արժան է մեզ ստանօր կշռել զպատճառանս մեր կշռով սրբութեան սեղանոյն, քննել լուսով ճրագի Գրոց Սրբոց։

Ասես՝ գտանել միշտ ժամանակ։ Խաբիս. եկեսցէ օր՝ յորում ոչ եւս իցէ ժամանակ։ — Ասես, չիք վտանգ յապաղման։ Դարձեալ խաբիս. թերեւս յայսմ գիշերի պահանջիցեն ի քէն համարս։ — Ասես, չիք հարկ ճեպելոյ շտապաւ։ — Եւ զի՞արդ, միթէ չիցե՞ս զօր ամենայն, յամենայն վայրկենի

ի վտանգ մեռանելոյ. « Որպէս ձկունք որսացեալք ցանցիւք, » և որպէս թռչունք որսացեալք ի ծուղակս, ասէ Իսողովողն, » նոյնպէս հարկանին յորոգայթս մահու՝ որդիք մարդկան՝ » ի ժամանակի չարի »։ — Պատրաստեցայց յաւուր միում. — Եւ ո՞ խոստացաւ քեզ զվաղիւն։ Ոչ ոք գիտէ զօրն այն և զժամն։ Աղէ, տե՛ս քաջ, ասէ Սուրբն Բեռնարդ, գուցէ ոչ կարիցես գործել վաղիւն՝ զոր կարեսդ այսօր։ Թերեւս որ չնորհէն քեզ զօրս սերկեան, Աստուած՝ զլաստի քեզ վաղիւն։

Այլ պնդեալ քո ի միտս և ի բանս՝ ասիցես. Հզօր կազմուած մարմնոյս, ազդուութիւն մտաց, ծաղիկ հասակիս, երաշխաւորք են ինձ ոչ գոլ մօտալուտ վախճանի կենաց։ Բայց ներհակաբար ուսուցանէ մեզ աւետարանն. փաստ իմն հաւատոց կարգէ մեզ Քրիստոս, և հանապազօրեայ փորձ զնոյն հաւաստէ. և դու ո՞ւմ ընծայեսցես հաւատս։ « Մարդոյ՝ որպէս խոտոյ են աւուրք իւր. որպէս ծաղիկն վայրի » այնպէս ծաղկի և թօթափի. որպէս ստուեր խուսափէ, ի » վերանալ աւուրց իմոց՝ զնացի ի դրունս դժոխոց (գերեզ- » մանի). յառաւօտէ մինչեւ յերեկոյ՝ պակասեաց ամենայն »։ Հոգւոյն Սրբոյ են վկայութիւնքս, և դու տակաւին յերկբայս արկցես։ Որքանի՞ս եհար մահ և քանի՞ս այսօր իսկ հարկանէ կրսերագոյնս և առուգագոյնս քան զքեզ հասակաւ և բարեկազմս մարմնով։ Կոյր է մահ, ոչ զծաղիկ հասակին խտրէ և ոչ զկորով իրանաց. թեթեւագոյն ինչ կայծ, բեկոր մի աղիւսոյ պրծեալ ի բարձանց՝ ի տապաստ արկանէ զհաստակառոյցն մարմնով, և յաճիւն դարձուցանէ։

Թերեւս ոչ մեռանիցիմ ես։ — Թերե՞ւս. — աւաղելի՜ ասացուած։ Այլ թերեւս և մեռանիցիս. « քանզի ոչ գիտէ մարդ » զժամանակ իւր », ասէ իմաստունն։ Կամիցի՞ս ուրեմն ի կարծիս ապաստան առնել զյաւիտենականութիւնդ. և յանստուգութիւն հաստատել զիրկութիւն հոգւոյդ, զժառանգութիւն արքայութեանն Աստուծոյ։ Ի հիւանդանալդ՝ կոչես զբժիշկ. և առ իմէ՞ զգուշութիւնդ. չիցէ՞ քեզ մարթ առողջանալ առանց դարմանի և արուեստի. — Այո՛, արդարեւ. այլ ես զապահովագոյնն ընտրեմ, քանզի կենաց է խնդիրս։ Ո՜վ անմտութեան. զապահովագոյնս ընտրես ի դարման մարմնաւոր կենաց. և յորժամ զկենաց հոգւոյ բանք իցեն՝ զյաջողութիւնն ի բաղդն ապաստան առնես։ Ջմտաւ ա՛ծ մանա-

ւանդ զբանս Ոսկեբերանին, եթէ՝ Յուշ լիցի քեզ, զի հոգւոյդ խնդիր կայ, երկնից և յաւիտենականութեան։ — Այլ սակայն, ասես, դուցէ ոչ մեռայց։ — Դուցէ եղիցի այնպէս. այլ եթէ ընդհակառակն հանդիպեսցի. «Զիա՞րդ ելանիցես » յայնժամ յաշխարհէ աստի, հարցանէ Սուրբն Օգոստինոս, » և ուր երթիցես »։ Ո՜հ, մի՛ մատներ զքեզ ի վտանգ յաւիտենական կորստեան. ընտրեա զանկասկածագոյն մասն։ Եթէ յերկարաձգեսցին ամք կենացդ՝ ոչ սորջասցիս ընդ սերկեան պատրաստութիւնդ մահու. քանզի չէ մարթ ըստ արժան բաւականին լաւագոյն և կանխագոյն պատրաստել ի նոյն։ Բազումք են յոյժ որք զանց արարին զպատշաճ պարտուքս, և չիք ոք որ ոչ ողբասցէ զպատուղ ծուլութեան իւրոյ։ Հարց զՍուրբս. և ոչ գտցես զմի եւեթ որ զոչնչասցի ընդ կանուխ պատրաստութիւնն ի մահ։ Հարց և զդատապարտեալսն. որպիսի՞ կսկծալի պատասխանիք. — Լաց և ողբումն և կրճումն ատամանց։ — Եթէ կամք են քո զերծանել յայսպիսի վտանգաց, ընտրեաց այժմէն փափագել երջանիկ մահուան՝ բարւոք պատրաստութեամբ, թէպէտ և չնորհեալ էր քեզ յապահովութիւն երկար կենաց։ Քանզի եթէ այժմս՝ յորում կարես՝ ոչ առնիցես զպատրաստութիւնդ, դուցէ յորժամ կամիցիս՝ ոչ կարիցես առնել։ Բազում այն է զի զոր յայսմ աւուր չնորհէ Աստուած՝ ոչ կամի տալ ի վաղիւն. արդ մի՛ արհամարհեր զողորմութիւն նորա, ասէ Սուրբն Բեռնարդ, եթէ ոչ կամիցիս փորձել զարդարութիւն նորա։ — Ժամանակի և չնորհաց պէտք են քեզ առ բարւոք պատրաստութիւն մահու, ահաւասիկ չնորհեալ են քեզ յայսմ աւուր. եթէ ոչ օգտիցիս դոքօք այժմիկ, դուցէ զրկիցիս առ յապայն. դուցէ արդարութեամբն եւեթ վարիցի Աստուած, և պատուհասիցէ զապերախտ մոռացութիւնդ չնորհաց իւրոց և դէպ ժամանակին. երկի՛ր արդ, և փութա՛ խնամով ի պատրաստութիւն մահու, մինչդեռ ժամանակդ ի ձեռս է։

Այլ ես չունիմ, ասես, ժամանակ. զբաղանք բազում գործոց պաշարեալ են զիս։ — Ո՜վ աննեռելի պատճառանք։ Ամենայն ծանր ծանր գործք կենցաղոյս՝ ոչինչ մի են առ գործով յաւիտենականութեան. զայս ուսուցանեն մեզ հաւատք. իսկ դու կամիցիս զչնչենեօք զբաղելով ծախել զժամանակ յաւիտենական փրկութեան քո. — առ զբօսանս և խաղս. ի

նաշել և յընկերշակել՝ գտանես ժամանակ բաւական, իսկ առ ի հոգալ զհոգիդ, զհանդերձեալ կեանս, և ի պատրաստել ի մահ՝ և ոչ սակաւ վայրկեանս պարապոյ գտանես։ Ո՜վ զառանցանք մտաց։ Զամիսս և զամս ծախեմք ի զբաղանս սնոտիս, իսկ առ գործ յաւիտենականութեան ագահելով և ոչ օր մի պարապիմք. — Երբ, ասէ Ոսկեբերան, տացուք Աստուծոյ՝ որչափ տամքս աշխարհի, երկնից՝ որչափ երկրի, և լաւութեանց՝ որքան մոլութեանց։ Այլ ես և ոչ այդչափ պահանջեմ. ոչ խնդրի վասն Աստուծոյ, վասն երկնից և վասն լաւութեանց այնքան որքան տամքս աշխարհի, երկրի, թերեւս և մոլութեանց. օր մի միայն առաջարկի մեզ ի պատրաստութիւն մահու. և զոնեա անսալ խրատու Ոսկիբանին. Պահել օր մի վասն հոգւոց մերոց՝ յետ ծախելոյ ամս բազումս վասն մարմնոց մերոց, կեալ սակաւիկ մի վասն Աստուծոյ, յետ այնքան կելոյ վասն աշխարհի. թոյլ տալ առ վայր մի առ տնին հոգոց, և մի՛ վստահիլ ի խաբէական յոյս երկարաձիգ կենաց։ Վստահութիւն վտանգաւոր, որպէս վէմ գայթակղութեան արկեալ յընթացս մեր, ընդ որ հարեալ փշրի զործ պատրաստութեան մերոյ ի մահ, և զոր հարկ է ամենայն խնամով ի բաց խլել։ Աստուած ինքնին ամենայն զթով հնարի թափել զմեզ ի սնոտի յուսոյ երկարատեւ ապագայի. բազում ուրեք ի գիրս մարգարէից, առաքելոց և աւետարանչաց իւրոց՝ ազդ առնէ մեզ զայս. յայն սակս առաքեաց յերկնից զհրեշտակ իւր զօրաւոր, որպէս պատմեն Գիրք Յայտնութեան, զգեցեալ ամպ և ծիածան ի գլուխ նորա, որպէս զի երեւելի չքով և պայծառութեամբն՝ զամենեցուն յինքն կրթեսցէ զաչս և զուշ, և եղեալ զոտն իւր զաջ ի վերայ ծովու և զձախն ի վերայ երկրի, աղաղակեաց ի ձայն մեծ, գոչեաց իբրեւ զառիւծ. հնչեցուցանել զծագս տիեզերաց և ընդոստուցանել զսիրտս կարծրացեալս. և յորոտալն զպատգամս Բարձրելոյն՝ համբարձ զձեռն իւր զաջ յերկինս, ի վկայութիւն կոչելով զընակիչս նորին զՍուրբսն, և ի նշան հաստատութեան անյեղլի վճռոց Աստուածութեան, երդուաւ ի կենդանին յաւիտենից՝ որ հաստատեաց զերկինս և որ ի նմա, և զերկիր և որ ի նմա։ Եւ զի՞նչ արդեօք էր խորհուրդն ահաւոր՝ որ այսպիսի մեծ և ահեղահրաշ պահանջէր հանդերձանս. — լուարուք և զահի հարէք՝ լսելով զսոսկալի պատ-

գամ խորհրդոցն Աստուծոյ. աղաղակեաց մեծաձայն և երդուաւ հրեշտակն, եթէ «Ոչ եւս այլ կայ ժամանակ»։ Ոչ։ ըստ հասարակ կարգի տեսչութեանն Աստուծոյ, այնմ՝ որ անփոյթ առնիցէ զպատշաճ ժամանակաւ պատրաստութեան մահու՝ Ոչ եւս կայ այլ ժամանակ. նա ոչ գտցէ ժամանակ (եթէ ոչ առանձինն իմն շնորհք տացին նմա), որ վայրապար օր ի յօր և յամէ յամ ձգէ զհնարս փրկութեանն։ Այսպէս երդուաւ ի դիմաց Աստուծոյ՝ հրեշտակն ստակիչ՝ ընդդէմ անարժան յապաղկոտաց։

Ի վերայ այսքանեաց ահեղ սպառնալեաց՝ գտցի՞ ոք արդեօք այնքան վատնող հնարից փրկութեան, զի ասիցէ՝ զբոլոր ես ժամանակ պատրաստութեան. յետ այսր գործոյ, յետ այնր տօնի, յորժամ դառնայցեմ յուղեւորութենէ, ի վերջ կոյս տարւոյս, յառաջիկայ մեծ պահս, յետ ամսոյ միոյ, պատրաստեցայց։ Ո՞վ յանդուգն. և ո՞ խոստացաւ քեզ զժամանակդ. կամ ո՞ վստահացոյց զշնորհս՝ առանց որոյ ոչ յաջողի և ոչ մի բարի։ Զօր ամենայն անակնկալ մահունք խրատեն զքեզ. Սուրբք, հրեշտակք երկնից և ինքն Յիսուս Քրիստոս՝ ազդ առնեն, եթէ ոչ տացի քեզ ժամանակ. դատապարտեալքն՝ խաբեալք սուտ յուսով, որք ոչ հասին ակնկալեալ ժամանակին, որոց յանկարծոյն ի վերայ եհաս մահ, և ընկէց ի գերեզման, և անտի ի դժոխս, նոքին իսկ անլռելի հառաչանօքն՝ նկրտին ցրել զպատրանսդ. և դու միայն ես որ յամառեալ սնդիս գտանել ժամանակ, մինչ ամենայն լեզու՝ երկնից երկրի և դժոխոց աղաղակեն՝ եթէ ոչ շնորհեսցի քեզ։ — Անհնար է այսուհետեւ, բայց եթէ առ ի չգոյէ հաւատոց կամ խելաց, յետ այսքանեաց խորհրդածութեանց՝ կափուցանել, կամաւոր կուրութեամբ, զաչս հոգւոց, առ լոյսն թափանցիկ, և ոչ ամենայն փութոյ պընդութեամբ և անյապաղ սիրզբն առնել պատրաստութեան մահու, կամ վստահացեալք ի կորով և յերիտասարդութիւն հասակի՝ ակն ունել երկար շրջանի կենաց ի վերայ երկրի։ Ո՞վ անմիտ, ասեն Գիրք Նմանութեան Քրիստոսի, զիա՞րդ յուսաս ի յոլովութիւն ամաց, որ և ոչ միոյ աւուր ունիս խոստումն։ Ոչ կարես խոստանալ քեզ զառաջիկայս ժամ, և ուստի՞ քեզ ստուգութիւն վաղուին։ Եւ ո՞ գիտէ՝ եթէ տենդն ոչ ծախելոց է զկեանս քո, չիցէ զանխլաբար դարանեալ ի

նեարքս ի քեզ։ Ո՞ գիտէ եթէ ի զբաղանս և ի զբօսանս քո առօրեայս ոչ հասցէ ի վերայ քո ձեռն մահու. զի մարմինս մեր բովանդակ, և իսկական իսկ մասունքն ի պահպանութիւն կենաց, սիրտն, լեարդն, արիւնն, ունել ունին սերմանս մահու. և սնունդն իսկ տածիչ մարմնոյն՝ առբերէ նմա և առիթս ապականութեան և եղծման։ — Քանի՞ յառաջ քան զմեզ, ասեն նոյն գիրք, խաբեցան և յանկարծօրէն ելին ի կենաց, մինչ անզգաստ վստահութեամբ անդրաձգէին յանչափս զվախճան կենաց իւրեանց։ Զգոյշ կացցուք մի՛ լինել նմանող նոցա. գուցէ ասասցեն վաղիւն և վասն մեր՝ զոր մեք զայլոց ասեմք. Տես, ո՞ կարծէր, եթէ մեռանելոց էր դա այդպէս վաղ և արագ։ Քանի՞ որք այսօր քաջառողջք են՝ կարեն դիակնանալ ի վաղիւն։ Եւ ի վերայ բերեն Գիրքն, եթէ փութա, արա, եղբայր, զոր կարես առնել, զի ոչ գիտես երբ մեռանիցիս։ Մի՛ թողուր վաղուին զայսպիսի գործ կարեւոր, զպատրաստութեան մահու. անստոյգ է օր վաղուին. և ո՞ գիտէ թէ հասցես և դու յօր վաղուի։ Որքան հաւատարմութեամբ պատրաստելն ի մահ ընձեռէ փաստ բարւոք կատարածի, այնքան և մոռացութիւն պատրաստութեան խափանարար է նմին. ապա ուրեմն, կարեւոր է արթնութեամբ և խնամով պատրաստել, և միանգամայն յարդարել անյապաղ փութով զհոգիս յելս իւր ի տեղւոջէ պանդխտութեան իւրոյ։

Աւա՜ղ ինձ. զի՞նչ գործեցի մինչեւ ցայժմ. քանի՞ աւուրս, քանի՞ ժամս պարապեցայ ի պատրաստութիւն մահու։ Աստուած իմ, եթէ յայնմ աւուր, յայնմ պահու, յետ գործելոյ զայն մեղս, մեռեալ էր իմ յայնմ եղկելի պայմանի, ո՞ւր արդ լինէր անձն իմ։ Ի դէպ է ինձ ասել ընդ Սրբոյն Օգոստինոսի. Եթէ բարձեալ էր քո զիս յայնժամ ի կենաց աստի, ո՞ւր արդեօք երթայի՝ եթէ ոչ ի հուր գեհենոյն և ի տանջանս, որոց պարտական գտայ մեղօքս։ Զարհուրեալ սոսկամ յորժամ զմտաւ ածեմ՝ եթէ յայնմ ամի, յայնմ աւուր և թերեւս ի նմին պահու, մեռեալ իցեն բազումք լաւագոյնք քան զիս, որք հանգոյն ինձ ակն ունէին ընդ երկարութիւն կենաց. և սակայն մեռան. «և թաղեցան ի դժոխս»։ Ո՞ւր արդեօք լինէի և ես՝ եթէ մեռանէի յայնժամ ի մեղս իմ. ո՞ւր արդ լինէր բնակութիւն իմ։ Ո՜հ, արդարեւ, «թէ ոչ

» Տեառն օգնեալ էր ինձ՝ փոքր մի եւս բնակեալ էր անձն
» իմ ի դժոխս». (Սաղմ. ՂԳ. 17)։ Արդ այսուհետեւ զգաստացեալ՝ մի եւս գայց ապերախտ ներկայ շնորհացս. յօգուտ արկից զժամանակն տուեալ ինձ. պարապեցայց ուշի ուշով և անդանդաղ՝ առ կարեւորագոյնն և շահաւետագոյն գործոց, սկիզբն առնել յօրէ աստի յայսմանէ ի պատրաստութիւն մահուան. քանզի զահի հարեալ դողամ, մի՛ գուցէ ժամավաճառ լինելով՝ կորուսից զյաւիտենականութիւն երջանիկ, և յաւելայց ի թիւ այնոցիկ՝ զորս ազետաբեր յապաղումն տարեալ ընկէց ի վիհն անելանելի։

Գ. ԴԺՈՒԱՐԻՆ Է ՔԱՋ ՊԱՏՐԱՍՏԵԼ Ի ՄԱՀ ՅՕՐՀԱՍԻՆ ԺԱՄԱՆԱԿԻ

Հաւանեալ ամենեւիմբ եթէ ի դէպ է պատրաստել ի մահ բարի, բազումք, ասացիս թէ և ամենեքին դնեն ի մտի՝ կատարել այնպէս իսկոյն ի զգալն զմօտալուտ վախճան կենաց, զազդեցութիւն մահաբեր հիւանդութեանն. և դարձեալ ի պատրանս անկանին։ Քանզի ոչ միայն երկբայելի է թէ կարասցեն գտանել զակնկալեալ ժամն պատեհ, այլ և յոյժ խիթալի՝ մի՛ գուցէ տագնապ օրհասին, ցաւք և անձկութիւնք, այլայլութիւն զգայարանաց և ամբոխումն մտաց, ահ և կասկած հանդերձելոց աղմկելով զոգի ոչ ներիցեն կատարել զգործն ամենակարեւոր, զգրաւական յաւիտենական կենաց։ Եւ զի՞նչդ մարթ իցէ ողջմտութեամբ յուսալ՝ եթէ ի ժամու յորում չկարեմք որպիսի և է գործ մի պատշաճապէս կատարել, կարիցեմք զայնպիսի գերագոյն կատարել գործ. մինչ ի սովորական և յառօրեայ գործս իսկ չփոթիմք, զի՞նչդ անչփոթ գտանիցիմք ի յետինն այն ի գործ բարւոք մեռանելոյ։ Դա և եթէ խոստացեալ իսկ էր մեզ զամագիւտ լինել պատեհ ժամու, բաւէ՞ր խուսափուկ ժամն այն ի յարդարել, ի բովանդակել և ի կնքել զամենայն գործս բազմամեայ կենաց։ Եւ եթէ յերկարիցեն եւս ժամքն օրհասականք, սակայն իցէ՞ն պատշաճք և յարմարաւորք առ այնպիսի մեծ և վերջին գործ։ Փորձն յաճախ ներհակաբար երեւի. և յայտ առնէ զգաստից՝ եթէ առ պատրաստութիւն բարւոք մահու՝ ժամանակ յետին հիւանդութեան՝ անստոյգ է, համառօտ է և անյարմար. ապա

ուրեմն և յանդգնութիւն կամ ապշութիւն մեծ է՝ յայն լինել ապաւինեալ։

Ա. ՀԱՅՐԱՊԵՏ Է ԺԱՄԱՆԱԿՆ ԱՅՆ. — Ոչ ոք գիտէ եթէ ի յետնում հիւանդութեան ունիցի ժամանակ պատրաստութեան. նա մանաւանդ ըստ սովորական կարգի տեսչութեան Աստուծոյ՝ չէ ի ձեռին մերում ժամանակն այն, և բազումք մեռանին յառաջ քան զկարծեցեալն ժամ։ Լուաք ի գրոց Սրբոց՝ զի Աստուած որ տուիչն է կենաց և մահու, և որոյ առաջի թուեալ են ամենայն աւուրք մեր և ժամք, գայցէ յանկարծ ժամու, որպէս գող գիշերոյ, յորժամ չհամարէաք ելանել ի կենաց. «Ոչ գիտէք զօրն և զժամն՝ յորում գայցէ Որդի » մարդոյ». (Եբր. Թ. 27). և գրեաթէ այնքան ստոյգ է մեռանելն յանակնկալ պահու՝ որքան ստոյգ է անխուսափելի մահն. և ճշմարտութիւնն որ ասաց եթէ կայ մնայ մարդոյ միանգամ մեռանել, նոյն և ազդեաց՝ եթէ գայ Որդի մարդոյ ի ժամու՝ յորում ոչ կարծիցէք. և յաւել, «Ամենեցուն » ասեմ, արթուն կացէք»։ Ցայտ ուրեմն է զի մեռցուք յանկարծ ժամու և յայտնի իսկ է զի գրեաթէ յանհնարիցն է բարւոք պատրաստել ի տագնապ ժամուն, քանզի ամենայն յանկարծահաս դէպք՝ անպատրաստ գտանեն զմարդ։ Թերեւս այնոքիկ միայն համարեսցին ոչ անպատրաստք՝ որք յերկար ժամանակեայ հիւանդութեամբ եղեալ ի մահիճս՝ յառաջ քան զօրհասն հաւուցանեն զհարկ բնութեան. քանզի՝ ըստ Մեծին Գրիգորի, հիւանդութիւնք կարապետք են մահու, և ցաւուք մարմնոյն բաղխէ Տէր զդրունս մեր՝ յելս կենաց։ Այլ, աւաղ, յաճախ խնամք զականջս առ ազդմունսն, և անտես առնեմք զհրաւիրակսն յառաջընթացս մահու։ Ոչ միայն յանկարծամահք լինին բազումք, այլ և շատք ի մահիճս կալով՝ ոչ զգան զօրհասն մօտալուտ. կամ յոյժ անագան ազգի նոցա մահն վերահաս. և շատք եւս ի յետին տուրեւառս չնչոյ գոլով՝ տակաւին չհաւատան զի վճարեալ է վասն ինքեանց։ Եւ ո՞ կարիցէ թուել զպէսպէս օրինակս յերկարելոցն ի մահիճս մահու՝ որք նոյնպէս յանկարծուց մեռան։

Անդառնալի է վճիռն. թէպէտեւ յերկարիցի և ծանրանայցէ ախտն՝ տակաւին յանակնկալս մեռանին յոլովք ի մարդկանէ. քանզի ոչ հաւատան թէ յետին հիւանդութիւն է այն և չիցէ հնար բժշկութեան. (Ղուկ. ԻԱ. 24)։ Վասն այ-

նորիկ զգուշացուցանէ զմեզ Քրիստոս, զի մի իբրեւ զորոգայթ հասանիցէ մահն ի վերայ մեր ամենեցուն։ Այո, ամենեքին, ընդ որս ես և դու. «Գամ, ասէ, որպէս գող, և ոչ » ոք իմանայ զգալուստ եմ առ քեզ». (Յայտն. Գ. 3)։ Ապա և դու մեռանիցիս ի ժամու յորում ոչ կարծիցես. և այնքան անկ է քեզ հաւատալ այսմիկ՝ որքան զի և հաւատարիմ և բարի ծառայքն իսկ բազում անգամ յանակնկալ պահու ըմբռնեցան ի մահուանէ։ Հանդերձեալ էր Սուրբն Փրանկիսկոս Ասսիզեան նաւել ի վաղիւն յառաքելութիւն Ճենաց, և յառաջնում երեկոյին վախճանեցաւ։ Արդ եթէ Սուրբք յանկարծոյն ըմբռնին ի գողոյ անտի մահու, դու յի՞նչ ապաստանեալ յուսայցես նախագիտակ լինել։ Ապա ուրեմն յապաղելով զպատրաստութիւնդ ի մահ բարի՝ դիմագրաւես ի վըտանգ կորստեան հոգւոյդ, անզօր մնացելոյ ի դիմամարտութիւն յետին պատերազմին։ Եւ չիցէ՞ յանդգնութիւն կամ անմըտութիւն մեծ՝ զայսպիսի գործ կարեւոր՝ ի յոյս և ի կարծիս անստոյգ ժամանակի հաստատել։ Համարիս պատրաստել ի ժամու յորում կարծես մեռանել, և զի մեռանիցիս յայլում յանկարծ ժամու, ապա ուրեմն միշտ անպատրաստ գտանիցիս. զի եթէ ոչ հասցեն ի վերուստ շնորհք իմն յաստուկք՝ անմարթ է բարւոք պատրաստիլ ի հուսկ պահուն, և ո՞ իշխիցէ ակն ունել այնպիսի շնորհաց։

Այլ՝ ասիցես թերեւս, բազումք հասեալ ի ծայր ծերութեան, կամ ի յետնում հիւանդութեան գտին ժամանակ բարւոք խոստովանելոյ և քրիստոնէաբար մեռանելոյ։ — Եւ զինչ այտի քեզ, ասէ Ոսկեբերան. միթէ խոստացա՞ւ և քեզ այդ շնորհ։ — Թերեւս, ասես եղէց և ես շնորհագիւտ։ Թերեւս. և ահա այսու իսկ բանիւ յայտ առնես զերկբայութիւնդ, և կասկածելի խոստովանիս զգիւտ կարեւոր ժամանակի պատրաստութեան ի յետնումն ախտակրութեան։ Արդարեւ աւազակն աջակողմեան ապիրատութեամբ կեցեալ զամենայն կեանսն՝ ի սուղ վայրկենի յաջողեցաւ բարւոք պատրաստել և մեռանել. այլ « Մի ոք միայն արժանացաւ այդմ շնորհի, » ասէ Սուրբն Բեռնարդ, զի մի դու յուսահատ լինիցիս. այլ » զի մի ոք միայն՝ մի յանձնապաստան լինիցիս »։ Մի ոք միայն զտաւ արժանի շնորհաց յայնպիսում ահեղահրաշաւոր փրկագործութեան. և ահա ի նմին աւուր և ի նմին

մահու խաչակից նորա և գործակից եղերանցն՝ մեռանի անպատրաստ և անզեղջ։ Միոյն միայնոյ խոստանայ փրկիչն զարգացութիւն իւր. և իցէ՞ օրէն վասն այսր վստահ լինել մարդոյ ի փրկութիւն իւր. միւսն դատապարտեցաւ ի դժոխս. և ո՞ ոչ զարհուրիցի յանձն իւր։ Կորուստ սորա առաւել խիթալի է մեզ, քան միւսոյն փրկութիւն վստահանալի։ Եւ արդ մի՞ մինչեւ ի յետին հիւանդութիւն ձգիցես զպատրաստութիւն մահուանդ, ասէ Ոսկեբերան, զի ոչ գիտես որպէս եղիցի օր կատարածիդ. և մի՞ զկեանսդ յաւիտենական վըտանգիցես յուսով անստոյգ ժամանակի։

Բ. ՀԱՄԱՌՕՏ Ե ԺԱՄԱՆԱԿՆ ԱՅՆ։ — Այլ համարեալ, թէ չնորհիցէ Աստուած ժամանակ ինչ պատրաստութեան հանդերձեալ ուղւոյն՝ ի վերջոյս անդ կենաց, իցէ՞ այն բաւական ի յարդարել զամենայն պէտս հոգւոց։ Ո՞չ ապաքէն յաճախ տեսանեմք զի ի վերայ հասանել մահաբեր ախտին՝ զառաջինն թեթեւ ինչ գրի և ոչ խիթալի. և մերձաւորք և բժիշկն իսկ երբեմն յուսացուցանեն վաղ վաղ կազդուրել, և Ջանան փարատել ի հիւանդէն զամենայն կասկած երկեղի, թերեւս խաբեալք նախ ինքեանք և խաբելով զվտանգեալն և զանբժըշկելին. մանաւանդ եթէ բազում անգամ հիւանդացեալ իցէ նորա ի կեանս իւրում և ապաքինեալ, ոչ ինչ կասկածէ և յայսմ նուազի և ոչ զգայ առաջին ազդարարութեան մօտալուտ մահուն։ Եւ է զի ի ծանրանալ ախտին՝ փոխանակ հոգւոյն հոգայ խնամով զմարմնոյն առողջութիւն, հարցանելով ըզբժիշկս և քննելով և խնդրելով զգարման դեղոց. յոր և խրատու իմն լինին նմա մերձաւորքն, հեռացուցանելով զօրհասն, և առողջանալոյն ուշ ունելով և թելադրելով. և մինչդեռ ժամանակն կարեւոր ծախի ի փոյթ դեղոյ և դարմանոյ և անդորրութեան տառապեալ մարմնոյն, առ փոքր փոքր, և երբեմն յանկարծօրէն և արագ արագ ծանրանայ ախտն. մինչեւ աներկբայ լինել օրհասաբեր վտանգին, և հարկ համարել ծանուցանել զայն վտանգելոյն։

Ծանուցո՞ւմն դժուարընտել. զոր և յաճախ այնքան անագանեն, մինչեւ մարմինն ինքնին իրազեկ առնէ, եթէ վճռեալ է վասն իւր։ Եւ ահա ի վերջնում աւուր կենացն, և ժամուք ինչ յառաջ քան զվերջինն ժամ, զոնեա քան զժամ զգաստութեանն, մինչչեւ իսպառ պղտորեալ մտացն և խելա-

յեղեալ, անկ է նմա հոգալ և պատուիրել, եթէ ունիցի ինչ աւանդել և ծանուցանել ընտանեաց կամ ընկերաց, ուղղել և կնքել որպիսի ինչ և ունիցի հաշիւ ընդ ումեք կամ պարտս արդարութեան և սիրոյ. և յայնպիսում տագնապալից և ըստիպողական պահու՝ կարեւորագոյնն հարկ ի վերայ կայ յարդարելոյ զհոգին բարիոք խոստովանութեամբ և ապաշաւանօք ի վերայ մեղաց բովանդակ կենացն. և երանի՜ եթէ ոչ կարօտիցի ընդհանրական խոստովանութեան՝ առ ի լնուլ զթերակատար կամ զցուրտ խոստովանութիւնս, այլ ի բառնալ զգայթակղութիւնս ինչ, և ի տալ օրինակ բարի, զորով գուցէ անփոյթ լինէր ի կեանսն: Ո՜հ, ո՞րքան ամբոխին յայնժամ միտքն և տագնապին միանգամայն հոգին և մարմինն, մին շուարեալ, միւսն կոշկոճեալ. և լինի բազում անգամ ընդհատեալ զխոստովանութիւնն առ դուլ և դիւր առնել ցաւագին և նեղեալ մարմնոյն, և տալ պարապ զուշով գալոյ մտացն: — Աւարտի, որպէս և է խոստովանութիւնն. այլ ո՞ւր մնան եռանդագին ներգործութիւնք աստուածաբանականք և հոգեկանք՝ անկաւորք և յոյժ կարեւորք այնպիսում անզուգական պահու. ո՞ւր զեղջն սրտաբեկ. ո՞ւր աղերսք յուսալիցք և հառաչանք հաւատարիմք. յորս թերեւս չէր իսկ կրթեալ հոգին յանհոգ երկարութեան կենացն. և զորս ցայնժամ չէր ուսեալ՝ մա՞թթ ինչ իցէ ուսանել յորժամ ամենայն ինչ ի մոռացօնս անկանի: Զիա՞րդ հնար իցէ ի սակաւ և ի ցաւագին ժամսն, յալէկոծութեան մտացն, խնամով՝ որպէս արժանն է՝ կատարել զգործն մեծ. մինչ ըստ Սրբոյն Օգոստինոսի, ամենայն ուշ նուազեալ մտացն անդր կրթի՝ ուր սաստկութիւն ցաւոցն է: Ցառողջութեան իսկ մարմնոյ և ի զգաստութեան մտաց, ի լիութեան կորովոյ և յանդորրու հոգւոյ, քաջ քննել զգիտակցութիւն խղճի մտաց, առնել բարւոք խոստովանութիւն, մանաւանդ զընդհանրականն, և արժանապէս զոլջալ ի վերայ չարեացն. և յետ իսկ խնամով քննելոյ՝ բազում անգամ խէթ անկանի ի մեզ և անհասգըստութիւն, մինչեւ չկամել յայնպիսում պայմանի մեռանել մինչչեւ վերստին դիմեալ ի հաշտարար խոստովանութիւն. — իսկ զի՞նչ լինիցի ի յետնումն յայնմ նուազի, ի ցաւս ախտակիր մարմնոյն և ի տագնապի պահանջեալ հոգւոյն, յորժամ դժուարին է և զսովորական մասնաւոր խոստովանութիւնն մտադիւր կատարել. — իցէ՞ հնար ի հուսկ ժամու ուղղել զթիւրութիւն երկար անփութութեան և զանցառութեանց, և տալ հաշիւ ուղիղ, որում թերեւս յառողջութեանն իսկ մարմնոյն՝ բովանդակ աւուրց պէտք էին ի քննել և յորոշել: Մի՞թէ օրէ՞ն իցէ ակն ունել յայնժամ սքանչելեաց ինչ ի վերուստ՝ զի տացին մեզ չնորհք զայսպիսիս կատարել ի կատարածի անդ կենաց: Բա՜ւ է. զոր անկ էր մեզ զործել յամենայն կեանս մեր, հոգալ զհանդերձեալ յաւիտենականութիւն թողումք ի յետին աւուրս և ի ժամս՝ ցաւոց և տառապանաց, ի համառօտ վայրկեանս՝ յորս գամ քան զգամ լուծանի պնդութիւն մարմնոյն և մտաց: Այլ ես վկայ կոչեմ զերկինս և զերկիր, զի ոչ յայնժամ եւս այլ կայ ժամանակ. և որ կայն՝ չէ բաւական առ բարւոք պատրաստութիւն մահու. և եթէ ցայն վայր ձգիցեմք զիսկական գործ փրկութեան մերոյ, համարձակիմ խոստովանել առաջի Աստուծոյ և Սրբոց նորա, եթէ ոչ կարեմք բարւոք գործել զայն, և անկատար մեռցուք. և եթէ ոչ առանձինն չնորհք վերին տեսչութեանն պարգեւիցի, ոչ բաւական է ժամանակն յետին հիւանդութեան առ առաջարկեալն մեր պատրաստութիւն, և ոչ յարմար և պատշաճ:

Գ. Անցարար է ժամանակն այն. — Որոյ մինչեւ ցյետին հիւանդութիւն և ցդրունս գերեզմանի յետաձգեալ իցէ զմահուն պատրաստութիւն, գոգչիր չգիտէ չիմանայ իսկ զինչ և որպէս առնել իցէ յայնժամ. տագնապք մարմնոյն՝ և մտացն ամբոխումն չներեն քաջ հասու լինել և թելադրութեանց խոստովանահօրն. նաեւ զխոստովանութիւնն և զաղօթսն՝ տատամսութեամբ և գայթ ի գայթ իմն կատարէ. ոչ քաջ ըմբռնելով զազդեցեալսն նմա ի պաշտօնէէն և ոչ քաջ ծանուցանելով զոր զգայն և խորհի. թերեւս և անձամբ անձին չկարէ ազդ առնել. և բազում այն է՝ զի ամենայն բանքն և ներգործութիւնք՝ ընդհատք և խառնակք, անզօրք և անեռանդունք լինին. թոթովէ բանս անյօգս և անիմանալիս. նաեւ զխոստովանութիւնն կամ ոչ յստակ և խորամուխ մըտօք, կամ մոռացութեամբ կարեւորացն, և միայն հարցուածոց խոստովանահօրն տալով պատասխանի. և այնքան նուազ նշանք զոլմանն՝ մինչեւ յերկբայս արկանել՝ ընդ վիշտս հոգւոյն հեծիցէ եթէ ընդ մարմնոյն ցաւս. և թերեւս կամ

իսկ արտայայտել սրտի մտօք ապաշաւանս՝ եթէ զգաստ և յուժի լինէր, այլ մարմնոյն գամ քան զգամ տկարանալով, նոյն և մտացն, չկարէ իսկ ծանուցանել եթէ զգայցէ՞ զազդեցութիւնս հոգեւոր պաշտօնէին. որ և ինքն իսկ ոչ առանց երկբայութեան և թէութեան՝ պաշտէ զյետին արձակմունս, աղօթս և ներողութիւնս՝ ի վերայ թմբրելոյն և կիսակենդան անձին. որ և ահա մտանէ յօրհասականն տագնապ: Փութան բարեսէր ընթերակայքն օժանդակել նմա ի մեծի և յահաւոր ժամուն, թելադրութեամբք հոգեկան ներգործութեանց, քաջալերութեամբք, աղօթիւք, մասամբք և նշխարօք սրբովք, խաչիւք և ջահիւք, և երկրպագելի անուամբ Յիսուսի, յուսադրական անուամբ Մարեմայ Իսկուհւոյ, այլ լսիցէ՞, ըզգայցէ՞, կրկնիցէ՞ և օրհասականն... զէթ առ արտաքս չերեւի այլ նշան, բայց նշան ընդարմանալոյ մարմնոյն, դադարելոյ զգայարանացն, և համանգամայն ասել, նշանք մօտալուտ մահուն:

Ա՜մ ահաւոր և անդարձական. յորում թերեւս պիտոյ էր նմա վերադառնալ յառաջին խոստովանութիւնսն ինչ թերակատարս՝ կամ բացատրութեամբ, կամ զղջմամբ, կամ ոչ ընդով զպարտս արգարութեան և ուղղութեան գայթակղութեանց. գործք՝ ամենեւին կարեւորք, ամենեւին փրկարարք. այլ, աւա՜ղ, ոչ եւս է ժամ. նա՝ դադարեալ իսկ է նմա ժամանակ կենացն. կեա՞նք, վերացեալ են ի նմանէ. և որ տեսանին՝ մարմին եւեթ է, մանաւանդ թէ դիակն, զի ելեալ է հոգին ի նմանէ, մեռաւ մարդն այն:... Այս է գիշերն ահեղ, գիշերն ամուլ, յորում ոչ ոք կարէ գործել. և ոչ միայն գործել ոչ կարէ, այլ եթէ և հնար էր գործել՝ այլ ոչ կարէր բարւոք գործել. և յուսալն իսկ յայնպիսի ժամ մթին՝ յանդգնութիւն, յիմարութիւն և անհաւատութիւն է: Ոչ երկբայիմ զի հնար է աստուածային գթութեան և ի վայրկենի հասուցանել զնորհս փրկութեան, այլ յոյժ երկբայիմ թէ արասցէ զհրաշալին զայն շնորհս՝ այնմ, որ զբովանդակ կեանսն անփութութեամբ և վայրապար յածելով՝ ակն եդեալ էր հուսկ ժամուն, յետին պատահարին. և յոյժ հաւանութեան է՝ եթէ որ այնպէսն անագանեաց զպատրաստութիւն յաւիտենականութեանն՝ մեռցի անպատրաստ, իմա՛, ոչ որպէս արժանն էր պատրաստ:

Իցեն թերեւս ոմանք որք ակն ունիցին թէ զթերին պատրաստութեան իւրեանց՝ յայնպիսում պահու, լցցէ հոգեռանդն և իմաստուն որ խոստովանահայր. — այլ ո՞ հաւաստէ՝ եթէ գտցի, եթէ հասցէ ի ժամու՝ այնպիսի պաշտօնեայ. և ո՞ մանաւանդ հաւատասցէ՝ եթէ և ի ժամանել պաշտօնէին՝ բաւական լիցի հիւանդն կամ օրհասական՝ իմանալ և կատարել արժանապէս զյետին հանդերձանս հոգւոյն. ո՞չ ապաքէն զօր ամենայն լսի եթէ ոչ ժամանեաց այս կամ այն որ ի յետին թոչակն. և կամ թէ ոչ ժամանեաց պաշտօնեայն: Կամ ամենեւին զուրկ ի զգայութեանց եգիտ զպաշտելին, և կամ մանաւանդ զի յանկարծամահ եղեւ: Որ ինչ և որպէս այլոցն պատահեաց՝ կարէ և քեզ պատահել: — Դիցուք թէ և եհաս ի դէպ ժամու պաշտօնեայն հոգեսէր, և դու իսկ զգաստ գտար ի ժամուն, որ անզգաստ կեցեր երկար ժամանակս, և իցէ՞ այն բաւական առ բարւոք կատարումն մեծի և զժուարին գործոյն. — չասէ՞ր դու անմիտ և մորոս զայն՝ որ ի հասեալ ժամու մենամարտութեան կոչէր զքաջ վարժիչ զինաշարժութեան՝ ուսանել ի նմանէ զօրինակ կռուոյն: Անհրաժեշտ է հրաւէրն. քաջավարժ է ոսոխն. անյապազելի ժամադրութիւնն. հարկ է կռուել, մերկեալ են սուսերքն. շարժին բազուկք. տուրեւառք են հարուածոց և վիրաց. տես, քանի՞ ճարտարութեամբ դիմամարտն անողոք շարժէ և կշռէ զզէնսն, և ի՞նչուցանէ անողորմ և անխնայ հարուածս. և զի՞նչ նպաստեսցէ նմա վարժիչն ընթերակայ՝ զորոյ թերեւս չիմանայ իսկ զբանս հրահանգի, և իմանալ իսկ չներեն նմա տագնապքն. տագնապք հոգւոյ և մարմնոյ. նորահրաշ սքանչելիք իմն լինէր և ի վեր քան զհրաշս, եթէ ոչ կարեվէր խոցեալ կամ մահու հարուածով անկեալ դնիւր՝ այնպիսի ոք անվարժ զինակիր՝ ի կռուի կենաց:

Այսպէս լիցի և այնմ որ անպատրաստ ի կեանս իւր՝ կամիցի յաջողել ի կատարածին, որ հասցէ նմա վաղ կամ անագան, (եթէ գուցէ կենաց անագանել ի սրավար ժամանակի), պաշտօնեայն հանդուն արասցէ զամենայն հնարս հոգեկանս. այլ և թշամին հոգւոց՝ յետին ճգամբ և հնարիւք, արհաւրօք և փրկութեամբք՝ կռուիցի կորզել զայն յիւր կորուստ. և նոյն իսկ կեանքն վայրապար անցեալք՝ ահաւորագոյն ոսոխ երեւիցին. և ամենայն խիզճք մտաց՝ մէն մի

զէն, և ողջոյն իսկ գիտակցութիւնն սուսեր երկսայրի՝ կշռեալ ի կէտ կցորդութեան երկոցուն կենացն, միոյն՝ որ ահա խուսափէ որպէս ստուեր առժամայն, և միւսոյն՝ որ ահա սկսանի և որոյ ոչ է և ոչ եւս իցէ վախճան։ — Հրեղէնք թերեւս իցեն հրահանգք և յորդորք հոգեսէր քահանային՝ որ կարդայ և կրկնէ զանուանս Յիսուսի և Մարիամու, զհաւատ, զյոյս, զսէր և զողջունն, այլ որոյ չէր յարակրթեալ յայնպիսի մաղթանս՝ ցրտութեամբ բաբախին ի շրթունս նորա՝ այսպիսիքս, և այն ի պակուցեալ սրտէ քան ի բեկելոյ զոլջմամբ և սիրով, զորս՝ ոչ միայն ոչ կարասցէ արծարծանել օրհասն, այլ որպէս և էն՝ ի նմին պայմանէ հոգւոյն բաժանեսցէ ի մարմնոյն և տարցի ի տուն յաւիտենականութեան։ Հաւասար մերձ տեսանեմք ի Յիսուս զերկոսին աւագակսն. այլ զի՞նչ օգուտ եղեւ ձախակողմենին մերձակայութիւն՝ ոչ հոգեսէր պաշտօնէի լոկոյ, ալ և ամենագութ և ամենազօր Փրկչին հոգւոց։

Ի բազմավտանգ պահու՝ խոհեմութիւն է առաւել ակն ածել ի հզօր ընդդիմամարտէն՝ քան ի բարութիւն օգնականին եւեթ յուսագնել։ Սիրելի և ընտրելի է և ինձ յոյսն՝ այլ ըստ իմում կարի կազմ և պատրաստ եւս լինելով ընդդէմ անհաչտ և մահուչափ թշնամւոյն։ Բարի և ամենաբարի է Աստուած, այլ մեր անպատրաստութիւնս զրկէ զմեզ ի բարութենէ անտի նորա։ Ցուշ լիցին մեզ կուսանքն յիմարք, որոց ոչ ինչ օգնեաց՝ ոչ արտաքին հանդերձանքն և ոչ բարութիւն փեսային. քանզի անպատրաստք գտան ի կարեւոր նիւթոյն, ի լուսաւոր իւղոյն, և թէպէտ ջանացան յետոյ ուրեմն, այլ անագանեցին. հասին մինչեւ ի դրունս հարսնարանին, այլ փակեալս գտին, բաղխեցին և կոծեցին, այլ, ո՜հ, քանի՞ այլափոխեալ և ահեղ էր ձայնն ի ներքուստ հնչեցեալ, եթէ ոչ գիտեմ զձեզ։ — Այս ամենայն, ասացից ընդ Առաքելոյն, իբրեւ հայելի օրինակաւ անցին ընդ նոսա, այլ ի մեր վարդապետութիւն գրեցան։ Բազումք իցեն արդեօք որք ի յետին պահուն բաշխիցեն զդրունս ողորմութեան միշտ ողորմածին. յորմէ ոչ երբեք անյոյս լինիմ. այլ՝ առակն Քրիստոսի զարհուրեցուցանէ զիս. նաեւ ամենամուտ դրունք նորա անդըզորդք և փակեալք մնան առ անագանեակ ապաշխարողս իսկ երբեմն, թող թէ առ անփոյթ մեղաւորս, և անպատրաստս կենաց յելս կենաց։

Պատրաստութիւն մահու ի դէպ ժամանակի, և ոչ ի կատարածի ժամանակի, գրաւական է բարւոք և փրկարար մահու. և դէպ ժամանակ կանուխն է և հանապազ յիշողութիւն վախճանին. զի որ այսու մտաք կեայ՝ յայտ է թէ և զգուշութեամբ կեայ. և ի դէպ է ասել՝ թէ նա և յարաժամ պատրաստ կայ. և յորում և պահու և յոր և դէպս ի վերայ հասցէ նմա մահն, կարէ ասել, Պատրաստեցայ և ոչ խռովիմ։ Յիշեցաք ի վեր անդր զԲասաւերեանն Փրանկիսկոս, որ ոչ միայն յանկարծուց մեռաւ. այլ և անխոստովան և անթողչակ. այլ զերանութիւն նորա և զսրբութիւն քարոզեն սքանչելիքն և ամենայն աշխարհ. ոչինչ ստնանէր նմա գիշերահաս գող մահուն, քանզի և ինքն հանապազ սպառազինեալ կայր գործովք բարեաց և փափագանօք արքայութեան երկնից. և ներհակաբար, ընթեռնումք ի գիրս վարուց՝ զի և ոմանք ամենայն նպաստիւք և խորհրդովք հաւատոց պաշտեցեալք, և բարեպէս վախճանեալք՝ յաչս ընթերակայիցն, յայտնեցան յետոյ արտաքոյ մնացեալ երկնային խրախճանարանին. քանզի կամ ոչ ունէին զամենայն օրէնս զարդուն հարսանեաց, կամ պակասէր իւղ սիրոյ հոգւոյն։ Բարի իցեն խորհուրդք եկեղեցւոյ, խոստովանութիւնն՝ և թոշակն և օծումն, և այլ պէսպէս օժանդակութիւնք հոգեւորք, բարիք, և հզօրք. այլ լաւագոյն և պիտանեգոյն եւս է յօժարութիւնն և ընդունակութիւն հոգւոյն, և համառօտ ասել՝ պատրաստութիւնն ի մահ, և այնու՝ գտանիլն ի շնորհս Աստուծոյ, որոյ նշանակ և առհաւատչեայ իցէ հանապազ փափագել, կայս՝ յիշել զհանդերձեալսն։

Իսկ ես, Աստուած իմ, ոչ գիտեմ ընդ ո՞ր առաւել զարմանալ — ընդ բազումողորմ երկայնմտութիւն քո ի տալն ինձ տակաւին ժամանակ պատրաստութեան մահու, եթէ ընդ մոռացութիւնս իմ երախտեաց քոց։ Աւաղեմ զայնոսիկ որք կեցեալ յերկրի յերկար կենաւք՝ ոչ յիշեցին զկատարածն, և անպատրաստք ելին ի կենցաղոյս. այլ յաւաղէն զայլս՝ զանձն իմ դատապարտ առնեմ, զի անփոյթ գտայ և ես, և օր ի յօր առնելով հասի յայս կէտ իմոց կենաց, ակն ունելով վերջնում ժամանակի։ Այլ արդ լուսաւորեալ ի քոց շնորհաց՝ խոստովանիմ զպատրանս իմ. և ճանաչեմ զի յե

տինն այն այն ժամանակ հիւանդութեան և օրհասի՝ անստոյգ է, համառօտ և անյարմար. վասն որոյ և դնեմ ի մտի կա-նուխ և այժմէն սկիզբն առնել պատրաստութեան մեծիս և վերջին գործոյ կենաց։ Այլ տուր ինձ շնորհս, տուր զօրու-թիւն կատարելոյ զոր բաղձամս. տուր ինձ յամենայն ժամ պատրաստ լինել, զի մի խռովեցայց, մի երկեայց բնաւ ի յետին ժամէ անտի. այլ մանաւանդ ուրախ եղեց ընդ կա-տարելս ի դէպ ժամանակի զպարտս, որ գին է յաւիտենա-կան կենաց։

Բ

ՕՐԻՆԱԿ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ Ի ՄԱՀ

Ճանաչողաց զկարեւոր հարկ պատրաստութեան ի մահ և փափագողաց զնոյն կատարել, յայտ է թէ առաջին փոյթ և Ջան է՝ գտանել զեղանակ պատրաստութեանն. առ որ իցեն թերեւս բազմապատիկ հնարք և ճանապարհք, այլ մեք ընտրեսցուք զԱռանձնութիւնն, զհրաժարումն ասեմ յամենայն այլոց զբաղանաց և պարապմանց, զօր մի կամ զկէս աւուր միոյ, առ ի պարապել միայն ի ծանօթութիւն, ի պէտս և ի դարման հոգւոյն. կարեւոր, օգտակար և գիւրագոյն համարեալ, զայս եղանակ. որում ի դէպ վարկանիմ նախ խելամուտ լինել և հաւանել, և ապա քննել զկարգ և զօրինակ առանձնութեանն. կամ զպատրաստութեանն ի մահ։

Ա. ԼԱՒՈՒԹԻՒՆ ԱՌԱՆՁՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԵԱՆ

Ա. Ցուցեալ է ի փորձոյ և ուսուցեալ յամենայն հոգեսէր վարդապետաց, եթէ յազգս յազգս հոգեւոր հրահանգաց՝ հզօրագոյն և կարեւոր բնաւից է Առանձնութիւնն, մանաւանդ յորժամ խնդիր իցէ պատրաստութեան ի մահ. ի յետինն և ի գլխաւոր գործ կենաց. առ որ նուիրել՝ չէր շատ բովանդակ աւուրս և եօթնեակս. այլ որոց չիցեն բաւական ընդերկար դադարել յառտնին կամ յառօրեայ պաշտամանց և

գործոց, շատ գրեսցի և օր մի, կամ և կէս միոյ աւուր, կա-փուցանել զաչս ի զբաղական ներկայէս, դարձուցանել յամս կենացն անցելոց, և կառուցանել յամս յաւիտենականութեան. և այնքան խնամով ջանալ յարդարել զպէտս հոգւոյն՝ որքան զի չէ ստոյգ՝ եթէ գտանիցէ՞ յետոյ ժամանակ պատեհ առ այն։

Զկարեւոր հարկ առանձնութեան ի հոգեկան կրթանս՝ ինքն իսկ Փրկիչն մեր եցոյց և ուսոյց, օրինակաւ և բանիւ. մերթ ինքն միայնակ կալով յառանձնութեան յաղօթս և ի խոկմունս, և մերթ աշակերտօքն հանդերձ խոյս տալով յանապատս և ի լերինս. և յանմարդաձայն լռութիւնս լսեցուցանելով ընտրելոց իւրոց՝ զբանս կենաց յաւիտենականաց։ Եւ ի վերջնումն նուագի քարոզութեանն և կանխասացութեան՝ նշանաց կատարածի աշխարհիս և իւրոյ գալստեանն, յայս կնքէր զխրատն, եթէ « Արթուն կացէք, զի ոչ գիտէք յորում » ժամու Տէրն ձեր գայ. (Մտթ. ԻԴ. 42)։ Կնիք՝ ոչ միայն այնմ պահու վարդապետութեան, այլ և ամենայն քրիստոնէական վարդապետութեանց, Արթուն կալ և ակնունել գալստեան Տեառն. որ է ասել, զգուշանալ կենաց և հոգալ զկատարածն, և զհանգիպումն հոգւոյն առ տէրն՝ ստեղծող և դատաւոր։ Միանգամայն և ուսուցանէր Քրիստոս իւրով մեկուսանալովն՝ զմերս հարկ մեկուսանալոյ յանապատ տեղի, յանզբաղ առանձնութիւն, կամ ի լեառն Ձիթենեաց, ի վայր զանխուլ և հեռի յաղմկէ աշխարհի և ի մարդկան զբաղմանց, առ ի խորհել յանդորրու զօգուտն յաւիտենական։ — Զի ո՞ռք ի մարդկանէ վարելոց ի զբաղանս և ի հայթհայթանս կենցաղականաց, թմբրեալ ի լրոյ և ի տեսոյ անցից անցից աշխարհի, և յիւր ուրոյն խորհրդոց և անդաճմանց՝ ծանրագլխեալ և մտայուզեալ, կարիցէ ի միջի կամ ի թատեր բազմամարդոյ կալով, խորհել և ընտրել հանդարտ և անչփոթ զգնացս կենաց իւրոց, զայնքան ամաց երկունս, և տալ համարս Տեառն իւրոյ՝ զգործոցն, զբանից, զխորհրդոց և զդիցից։

Փրկիչն մեր յօրինակ անզբաղ պատրաստութեան հոգեկանի՝ ոչ միայն յամբոխէ, ի հրապարակէ և ի տանէ խոյս ետ, այլ և ի տաճարէ անտի՝ ուր զօրհանապազ փառաւորէր զՀայր իւր և ուսուցանէր ժողովրդեան զճանապարհս աստուածապաշտութեան. և ի ցոյց՝ որոց կամիցին զմեծս զայս զպա-

տրաստութիւն մահու տեսանել, որոնել խնդրել զանքոյթ և խաղաղ վայր, յորում ոչ գտցեն ճարակ տեսանելիք և լսելիք. և ինքն իսկ Յիսուս՝ զիւր ահեղահրաշ պատրաստութիւն օրհասին՝ ի նոյն յանզբաղ լերին Ձիթենեաց կատարեաց՝ ի յաւերժական գիշերին: Եւ ո՞ իշխեսցէ ասել՝ կարել յամբոխի և ի խռան աղաղակի աշխարհային և առտնին ձայնից՝ մտադիւր ունկն դնել և լսել ազդմանց Հոգւոյն Սրբոյ, զոր ոչ կարացին առնել սուրբք, և ոչ Քրիստոս արար: Զմահ սրբոց՝ նմանեցուցանեն հարք՝ քաղցր և անգորբ քնոյ. մա՞թ ինչ իցէ ի խառն ի խուռն չչունչ և ի շարժման աշխարհի՝ մտանել ի քուն յաւիտենից: Վա՜յ աշխարհի՝ վասն յուզմանցն, գոչէր Սուրբն Ամբրոսիոս. վա՜յ և մեզ վասն աշխարհի. զի եթէ առ հոգոյ և զբաղանաց նորին՝ ոչ կարիցեմք օր մի ճողոպրել զանձինս և հանել յանդորր ներանձնութեան, յոյժ դժուարին եղիցի մեզ պատրաստել ի յետնումս մեր աւուր:

Ապա ամենայն իրօք կարեւոր է առ յարդարումն հոգւոյն և ի պատրաստութիւն ելից ի կենցաղոյս՝ հնարել նուիրել աւուրս ինչ և ժամս առանձնութեան, և պէտ առնել անձին: Անկ է յիշել և զայն. զի առ բարիոք մեռանել՝ պէտք են շնորհաց յարատեւութեան մինչեւ ցվախճան. իսկ շնորհքս այս՝ տուեալ լինին յաւէտ ըստ կանուխ պատրաստութեան հոգւոյ. զի ոչ վայրապար և անխտիր ցրուէ Աստուած զաստիսի պատուական և անգին մարգարիտ՝ առ անփոյթս և մոռացկոտս յաւիտենականութեան, իսկ առ ընդունելութիւն նմին՝ յոյժ զօրաւոր հնարք են կրթութիւն առանձնութեան յորում ամփոփէ մարդ զանձն ի կենցաղականացս, սրբէ ըստ կարի զխիզճն՝ խոստովանութեամբ, վառէ զհոգին սրբազան հաղորդութեամբն, և վայելուչ ներգործութեամբք քրիստոնէական առաքինութեանց փորձէ և մարդի ի մրցանս օրհասի:

Բ. ՕԳՏԱԿԱՐՈՒԹԻՒՆ. — Որ ինչ այսքան կարեւոր է՝ յայտ է ամենեւիմբ թէ և օգտակար է յոյժ: Պիտանեզոյն գիտութեանց է՝ գիտելն բարւոք ելանել ի կենցաղոյս. արուեստ արուեստից և գիտութիւն գիտութեանց՝ ասացին իմաստունք և Սուրբք՝ զբարիոքն մեռանել, զի յայն հաստատեալ է յաւիտենականութիւնն: Որ զայս գիտութիւն ունիցի՝ ոչինչ է

նմա նուազութիւն՝ զայլսն անգիտանալ. իսկ որում զայս ոչ ունիցի՝ ոչ ինչ օգնեսցեն այլ ամենայն գիտութիւնք, նա մանաւանդ թերեւս և զբաղեցուսցեն մինչեւ ի մահ. և միանգամ եւեթ խաբի մարդ ի մեռանելն, և ոչ ումեք է հնար ուղղել զայսպիսի խաբէութիւն վերջին: Ուրեմն մեծ և անբաւ է օգուտ գիտութեան և արուեստ բարիոքն մեռանելոյ, ապա և օգտակար՝ կրթիլն յայս արուեստ, յայս գիտութիւն:

Գիտեն ամենայն հոգեսէրք՝ զի ընդունելութիւն յետին խորհրդոյ՝ ամենամեծ օգուտ է օրհասականաց առ բարիոք մեռանել, և առ ի չզրկել յօգնականութենէ շնորհաց նոցին՝ փոյթ մեծ է քրիստոնէից այնու թոշակօք մեկնիլ յանդարձական ճանապարհն: Այլ՝ յաճախ միանգամ եւեթ ի կեանս պատահէ զյետինսն ընդունել խորհուրդս. յորմէ ի դէպ է խելամտել՝ եթէ անկ և պատշաճ և չահ մեծ է՝ յառաջագոյն վարժիլ յայս սուրբ հնարս. կանխեալ խոկմամբ մտանել ի հանդէսն յետին, և հոգւոյ ըղձիւք ընդունել զօժանդակութիւն խորհրդոցն. որով և մարթ է չափով իմն զերծանել ի վտանգէ անպատրաստ գտանելոյ ի ժամու յետին հիւանդութեան, յորում թերեւս ցաւքն և մտացն ամբոխումն՝ ոչ նեղիցեն զարժանաւոր և զեռանդնագին ընդունելութիւն յետին թոշակին: Զի՞նչ ինաս իցէ, մանաւանդ թէ քանի՞ մեծ օգուտ՝ աստստին մաքրել սրբել զխիղճ մտաց՝ զգոյշ և մանրաքնին խոստովանութեամբ, որով ի ժամու մահուան անխռով և անկասկած կացցէ հոգին: Զի՞նչ անպատեհ, մանաւանդ թէ քանի՞ վայելուչ՝ այժմէն կրթիլ և կատարել զներգործութիւնս քրիստոնէականս, որով կամիմքս սրբել զյետին տուրեւաս շնչոյ կենաց, և թերեւս առանց այսպիսւոյ կրթութեան ի ժամանակի կենաց մերոց՝ ոչ յիշեսցուք և ոչ կարասցուք բարէպէս կատարել ի վախճանի անդ կենաց: Հզօրագոյն են յայնժամ յարձակմունք դժոխոց ի հոգի օրհասական, և մեծապէս կարօտի այսպիսեաց ներգործութեանց. զորս եթէ չէր ուսեալ բարւոք յեղյեղել յառաջագոյն՝ զի՞րդ յայնժամ արասցէ: Դաւթի վտանգն հասցէ նմա՝ ի սպառազինելն ընդդէմ Գողիաթու, օտարին և անսովոր զինուք. և փորձեալ՝ գթիցէ և ոչ յաջողիցի, և ի բաց թողցէ. և երանի՞ նմա եթէ գտանէր այլ զէն սովորեալ ի պարսպաբերանի՞ նմա եթէ գտանէր այլ զէն սովորեալ ի պարսպաբերել զհսկայն հոգեմարտ: Բարւոք է ապա և չահաւէտ՝ կրկնել

ստէպ զայսպիսի ներգործութիւնս ի կենդանութեան և ի բարեկենդանութեան մերում, զոր փափագեմք առնել ի ժամու մահուան մերոյ. առանց վարժութեան՝ ոչ կատարի գործ այսպիսի: Անյայտ է եղանակ մահուան. կամ յերկար օրհասիւ, կամ յանկարծական. եթէ այսպէս՝ բարեբաստիկ իցեմք զի կանխեալ կրկնէաք յաճախ զբանսն բարիս, և կատարէաք զգործ կարեւոր՝ յոր ոչ ժամանեմք յապայն. իսկ եթէ յամր իցէ մահն՝ յառաջագոյն վարժք գոլով՝ ստէպ եւս և խաղաղութեամբ կրկնեսցուք զնոյնս. և ոչ խռովեցուսցէ զմեզ սաստկութիւն ցաւոց, կամ անկարութիւն ընդունելութեան խորհրդոց. հոգին ինքնին ազդեսցէ և օժանդակեսցէ անձին՝ եթէ և չգոցին արտաքին կամ ընթերակայ օժանդակք և ազդարարք՝ ի տագնապ ժամուն: Զիք ուրեմն շահաւետագոյն հոգւոյ քան զայսպիսի կրթութիւն. կարծեմ չիք և իմաստնագոյն խորհուրդ՝ քան զայժմէն փորձել և վարժիլ, և ոչ երկբայիմ՝ զի և այժմիկ վայելեսցուք յօգուտն և առ յապայն:

Գ. ԴԻՐՈՒԹԻՆՆ. — Յոյժ դժուարին, զի չասացից թէ և անհնարին, թուի բազմաց՝ զբաղելոց պէսպէս իրօք, գտանել եօթնեակ մի կամ աւուրս ինչ պարապելոյ միայն ի հոգեւոր կրթութիւն. սակայն յայնքան ամիսս և ամս՝ որ առատորէն և շռայլօրէն ծախին ի սակս աշխարհային հոգոց, յայնքան վայրապար ժամուց վատնելոց ի չնչինս, չէ ինչ դժուարին զերծուցանել օր մի կամ կէս աւուր առ ի մտադիւր հոգալ զամենակարեւոր պէտս հոգւոյ. հնարաւոր է այս՝ ամենեցուն իսկ որոց անհնար է խսպառ խուսել ի միայնութիւնս և ի բարձրագոյնս մխիլ խոկմունս, կամ խստութեամբ պահոց և ճգնութեանց՝ ճնշել զանձինս: Եւ եթէ զուցէ սակաւիկ ինչ աշխատութիւն յայսմիկ՝ չարժէ՞ր զայն՝ հոգ յաւիտենական բնակարանին՝ յոր հանդերձեալ է երթալ ամենայն մարդ: Սուրբք և առաքինիք զամենայն կեանս իւրեանց այսու մտօք վարէին, յաշխարհի կելով և յաշխարհայնոց ընդունայնութեանց ամիտիելով զանձինս. և մեզ՝ միայն որ ինչ դիւր և հանգիստ է մարմնոյ և զբօսանք մտաց, այսքիկ միայն իցեն մշտնջենաւոր պարապմունք: Հեթանոս փիլիսոփայք անգամ (Անեկայ) վկայեցին՝ զբովանդակ կեանս ուսումն լինել մահու. և քրիստոնէի և հետեւողի Քրիստոսի՝ ծա՞նր թուիցի օր մի կրթիլ յայս ուսումն:

Ո՛չ, եթէ Աստուծոյ չնորհեալ էր դատապարտելոց կամ հոգւոյ որ ի քաւարանին՝ դառնալ ի կեանս և յայս կրթանս մտանել. քանի՞ հեշտ և դիւր թուէր նոցա. քանի՞ խնամով և յօժարութեամբ պարապէին: Այլ արդ՝ զոր զլանայ նոցա Աստուած արդարութեամբն, զնոյն չնորհէ մեզ գթութեամբն. և չիցէ՞ մեզ յիմարութիւն մեծ՝ ընդ վայր վատնել զայնքան ժամանակս՝ զորոյ զփոքր ինչ վայրկեան գնով ողջոյն իսկ աշխարհի և երկար դարուց՝ գնէին հոգիքն տարաբաղդք: Երանի՞ է մեզ, զի տակաւին ի ձեռս մեր է ժամանակն, որոյ կորուստ՝ թերեւս առթիցէ արտասուս և հառաչանս անվախճանս, և դառն դառն ստրջանս, ի յիշէն՝ զի կամաւ և անփութութեամբ կորուսաք զժամն պատեհ, աւա՜ղ, ասասցուք, զի՞նդ անմտացաք և ի դերեւ հանաք զժամն ընդունելի և զօրն փրկութեան. իցէ՞ թէ փոխանակ աւուրցն և ամացն զոր կորուսի՝ տուեալ լինէր ինձ արդ ժամ մի: — Յանհնարիցն է այդ յայնժամ: Իսկ արդ՝ ընդէ՞ր զոր այնքան հեշտ և դիւրին թուիցի ստուգութեամբ յայնժամ՝ դժուարին համարիցիմ յայժմուս. ընդէ՞ր փոխանակ փոքու ինչ պատրաստութեամբ շահելոյ զկեանսն յաւիտենականս՝ ի վտանգ կոտրստեան արկանիցեմ զայն:

Հարկ է, ասէր պաշտօնեայ մի՝ առ ոմն ի հզօր ինքնակալաց (Կարոլոս Ե), զի իցէ ժամանակ ինչ պարապոյ ընդ մէջ զբաղանաց կենաց և ընդ մէջ յաւիտենականութեան: Եւ ահա օր մի համառօտ առաջի գնի քեզ ընդ մէջ այնքան ամաց կենացդ անցելոց՝ և ընդ մէջ անանցական կենացն հանդերձելոց. մեծ չնորհ է քեզ առ ի Աստուծոյ՝ օրս այս. կալ փութով, զի փոյթ ընդ փոյթ սահի և անցանէ, և ի սահելն՝ ոչ եւս կարասցես զբառամբ ածել. և ի զուր հառաչիցես, որպէս բազումք, ո՞ տայր ինձ ժամ մի. և որպէս ոմն ի թագաւորաց փափագէր տալ զամենայն թագաւորութիւն և զիշխանութիւն իւր, և ոչ կարաց գնել զժամն ցանկալի: Քեզ աւագիկ կայ տակաւին ժամդ այդ. ժամ փրկութեան, փոխանակ այնքան ժամուց և ամաց՝ զոր թերեւս ի կորուստ անձինդ անցուցեր, մոլորեալ յընդունայնութիւնս, ի կիրս և ի մեղանս. և փոխանակ արքայութեան՝ դժոխոց գանձեցեր, թէ կամաւ թէ բասրելի մոռացութեամբ:

Վաճառականն իմաստուն՝ զամենայն ինչս իւր վաճառեաց

ի գին միոյ պատուական մարգարտի. մարգարիտ է անգին շնորհք պատրաստութեան մահու։ Յանկաս ապաքէն և գու այդպիսում մարգարտի. բարւոք է. այլ առ ի ստացուած դորին՝ ի դէպ է վաճառել ի քոյոց ընչից, և թէ հարկ իցէ՝ զբովանդակն իսկ. քանզի զի՞նչ օգուտ է մարդոյ զաշխարհ ամենայն շահել և զանձն ի վտանգ կորստեան արկանել։ Սակայն չպահանջի ի քէն աստանօր՝ մերկանալ յամենայն ընչից քոց, տալ աղքատաց, հրաժարել յաշխարհէ, երթալ ծածկիլ յանապատս և ի վանորայս, կամ պաշտել զհիւանդս և զբանտեալս, կամ ընկղմել զբազմօրեայ ժամանակաւ՝ ի խոկմունս հանդերձեալ դատաստանաց, և պահաք, ճգամբք և հեծութեամբ նեղել զանձդ. շատ է միայն՝ զի այնու խնամով և եռանդեամբ՝ որով աշխարհասէրք և ընչասէրք վաստակին ի շահ կորստական, վաստակիցիս և դու օր մի ի խորհուրդս յաւիտենական փրկութեան. ոչ խնայել օր մի հոգւոյդ՝ որ անխնայ եղեր առ մարմնիդ՝ աւուրս, ամիսս և ամս։

Դէպ եղեւ ումեմն բարւոյ քրիստոնէի, որպէս պատմէ վըկայ հաւատարիմ, յետ այսպիսւոյ միոյ աւուր կրթութեան՝ յուղի անկանել, և յանկարծոյն ըմբռնել ի մահաբեր ախտէ. և աւանդեաց զոգին ասելով, ո՜վ երջանիկ աւուրս՝ յորում պարապեցայ ի պատրաստութիւն մահուան, և արդ մեռանիմ խնդութեամբ, զի պատրաստ գտայ։ Քանի՞ մխիթարական, քանի՞ յուսագիր են վարկեանք ծախեալք առ կարեւորս այս խոկումն, ի հասանել վախճանի կենաց. քանի՞ դժնդակ և մտատանջք են ժամք և ամք՝ անխորհրդաբար ծախեալք, ի վերջին պահու յիշողութեան հոգւոյ։

Այդ, օ՜ն առեալ, լրջմտութեամբ և յօժարութեամբ յանձն առցուք զթեթեւ և զդիւրին հնարս պատրաստութեան ի մահ, մինչչեւ իցէ տարածեալ ստուերաց նորին ի վերայ մեր, մինչչեւ հասեալ զիշերոյն անգործութեան. զի անխոռով և անշփոթք գտցուք ի պահանջման հոգւոյ և համարոյ. այժմէն արասցուք զայն՝ զոր փափագելով առնել ի ժամսն յետինս՝ ոչ կարիցեմք առնել։ — Մինչեւ ցե՞րբ ի շաւիղս մոլորութեան դանդաչիցեմք. մինչեւ ցե՞րբ խաբիցեմք սնոտեօք։ Աւուր միոյ վաստակով՝ կարեմ շահել՝ զծառանգութիւն Սրբոց, զերանութիւն յաւիտենական։ Ո՜վ Յիսուս, երկինք՝ զոր հեղմամբ արեանդ գնեցեր մեզ՝ ա՞յդքան անարգ ինչ թուիցի

յաչս մեր՝ մինչեւ ծանր համարել զօր մի խոկման ի ստացուած նորին։ Բա՜ւ լիցի. դնեմ ի մտի ամենայն ակնդութեամբ կրթիլ ստանալ զշնորհս բարիոք մեռանելոյ, առ ձեռն պատրաստ օրինակաւ, զոր ծանեայ կարեւոր, օգտակար և դիւրին։

Բ. ԵՂԱՆԱԿ ԱՌԱՆՁՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԵԱՆ Ի ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ ՄԱՀՈՒ

Յանկագոյն եղանակ կրթելոյ կամ փորձելոյ զպատրաստութիւն ի մահ բարի, առանց ընդ երկար ընտրութեան՝ թուի ինձ նոյն իսկ սովորական կարգ՝ որով կատարի ըստ ինքեան և ըստ եկեղեցւոյ՝ մահ մարդոյ քրիստոնէի. զոր և նկատեսցէ իւրաքանչիւր ոք յանձն իւր, որպէս թէ, նախ, ահա լուաւ կամ զգաց՝ զի առ դուրս կայ վախճան կենաց. և անդէն ի միտ առցէ՝ զի հարկ է փութալ քննել ըստ ամենայն կարի իւրում՝ զպատկեր համօրէն կենացն անցելոց՝ որ ահա սպառի. և ապա ի վերայ բերցէ զսրտաբեկ խոստովանութիւնն, այնպէս՝ որպէս փափագէր ի յետնումն նուագի առնել. և առ ի կագդուրել զհոգին ի վերամարտ փորձութեանց անհաշտ ոսոխին՝ ընդունել և զխորհուրդն սուրբ, զհացն անմահութեան. այլ և առ ի միտս՝ զՕծումն վերջին իւղոյն, ի սրբութիւն և ի զգաստութիւն զգայարանաց։ Եւ ի վերայ այսոցիկ՝ համարելով մտանել ի տագնապ օրհասին, և կանխելով քան զիսկական յետին պահն, ասել և սովորիլ ի ներգործութիւնս աղօթից և առաքինութեանց՝ որք անկ են քրիստոնէի օրհասականի, և առաջարկեալք և կարգեալք ի բարեպաշտութենէ և յեկեղեցւոյ.

Ա. Աղաչաբարութիւն մօտալուտ մահուան. — Մուտ արդ ի սենեակ քո, փակեա զդրունս. իմա զխափանարարս և զբաղեցուցիչս աչաց և մտաց, և այնպէս յարդարեա զառանձնութեանդ վայր՝ զի ինքնին իսկ առաջնորդեսցէ յամփոփումն ուշոյ յառաջարկեալն գործ մեծ։ Դիր ծունր առաջի Խաչեցելոյն քո Աստուծոյ մարդացելոյ, համբոյր տուր ոտիցն վասն քո վիրաւորելոց. և ասա ի խորոց սրտէ. Ահաւասիկ եմ, Տէր, խօսեաց, զի լուիցէ ծառայ քո՝ զյետին պատգամս քո։ Եւ լուիցես ընդ Եզեկիայի. Տուր հրաման տան քո և

անձին, զի մեռանիս այսօր. Հասեալ է օր վախճանի քո. Դատաւորն առ դուրս կայ. Տուր զհամար տնտեսութեան քո։

Արա յայնժամ պատասխանի սրտառուչ, այլ ոչ սրտամեռ. Տէր, ահաւադիկ ծառայ քո. ի ձեռս քո են կեանք իմ. հան ի բանտէ զանձն իմ, և խոստովան եղէց անուան քում. Ուրախ եղէց ընդ այնոսիկ որք ասեն ցիս, ի տուն Տեառն երթիցուք մեք։ Եւ ի նշանակ ուրախութեանդ՝ զի առ Աստուած երթալոց ես, աղաչելով այնուհետեւ յամենայն փորձութեանց և ի մեղաց, երգեա զգոհաբանականն երգ, կամ Օրհնեցէք զՏէր ամենայն ազգինք. եռանդագին շնորհս մատուցանելով՝ զի զգաստութեամբ հասցոյց զքեզ Տէր ի վախճան կենացդ, և զայ ընդունել և փոխադրել զքեզ յաշխարհ կենդանեաց։ Եւ ասա, Աստուած իմ, տէր կենաց և մահու, որ սահմանեցեր անփոխելի վճռաւ՝ եթէ կայ մնայ մարդոյ միանգամ մեռանել, ի պատուհաս մեղաց, անսամ հրամանաց քոց, և յանձն առնում յօժարութեամբ զմահ՝ որում բազում անգամ պարտական գտայ անօրէնութեամբ և մեղօք իմովք. և զսոսկումս իսկ՝ զոր զգամ տկարութեամբ բնութեանս՝ նուիրեմ և զայն քումդ արդարութեան, և ընկենում զանձն իմ բովանդակ ի ծոց ամենախնամ տեսչութեանդ։ — Մեռայց այո, մեռայց ի ժամանակի և ի տեղւոջ և յամենայն օրինակի սահմանելում ինձ առ ի քէն։ Եթէ կայցէ ինձ մեռանել ցաւագին մահու, յերկար տառապանօք և տագնապաւ, եղիցին կամք քո և դատակնիք հայրական ձեռացդ. հար և խարեա՛ ի կեանս աստ, զի անդ յաւիտեան խնայեսցես յիս։ Քո եմ ես, Տէր, քո են կեանք իմ և ամենայն ինչ. իշխան ես ի վերայ ամենայնի որ յիս և որ զինեաս. արա որպէս և կամիս։ Ընդ Յիսուսի քո՞ և ըստ Յիսուսի որ ի Պարտիզին, ասեմ և ես, Հայր իմ, եղիցին կամք քո և ոչ իմ։

Մեռայց. այո, մեռայց յօժարութեամբն Յիսուսի՝ որով յանձն էառ զմահ վասն իմ. մեռայց յօժարութեամբ ամենօրհնեալ Տիրամօրն և ամենայն Սրբոց, որք յանձն առին զմահ՝ վասն սիրոյն Աստուծոյ և վասն ընկերաց։ Մեռայց, զի մի մեղայց. զերծեալ ի տեղի՝ ուր չիք առիթ մեղաց, այլ սիրոյ Աստուծոյ զի մի՛ եւս եղէց առիթ գայթակղութեան և կրից այլոց՝ յանցանօքս, տկարութեամբս և հիւանդութեամբք։ — Մեռայց հնազանդելով, զի Աստուծոյ հրաման

է։ Մեռայց առ խոնարհութեան, դառնալով ի հող և ի մոխիր և յոչինչ, գարշելի լինելով ի տեսիլ աչաց, և անտանելի՝ երեսաց երկրի և մարդկան կենդանեաց։ — Մեռայց ի նշանակ երախտեաց անթուելի բարերարութեանցն Աստուծոյ առ իս. զի զի՞նչ տաց նմա տրիտուր փոխանակ ամենայնի՝ զոր ետ ինձ, բայց եթէ զկեանս իմ, կամաւոր յանձնայնի՝ զոր ետ ինձ, բայց եթէ զկեանս իմ, կամաւոր յանձնառութեամբ մահու։ Ո՜հ, ո՜ տայր ինձ, Աստուած իմ, այնքան եռանդագին աղերս և ներգործութիւնս առաքինութեանց մատուցանել քեզ՝ որպէս թէ ոչ ուրուք երբեք մատուցեալ ի ժամու մահուանն։

Այսպիսի ներգործութիւնք կանխաժամանք պատրաստեն և կրթեն զոգի՝ յորդորաբար յեղյեղել զնոյնս ի յետին հիւանդութեան զոգի՝ յորդորաբար յեղյեղել զնոյնս ի յետին հիւանդութեան և յօրհասին պահու. տան նմա անխոով լսել զազդմատալուտ մահուն, ոչ իբրեւ զուժկան բօթաբեր, այլ իբրեւ աւետիս կենաց բարեաց. և փոխանակ վարանաց՝ զուցէ և աւետչեայ կամիցի տալ այնմ՝ որ ծանոյց զյետին պատահարն. և ոչ թաքոյց, որպէս յաճախ սովոր են առնել մերոքն, առ երկեղի կամ առ գթոյ, երկոքեան եւս վայրապարք և ի վնաս կամ ի վտանգ օրհասականին։

Բ. ՓՆՆՈՒԹԻՒՆ ԱՆՑԵԼՈՅ ԿԵՆԱՑ ԵՒ ՆԵՐԿԱՑ ՎԻՃԱԿԻ ՀՈԳԻՈՅ.—

Յետ զգացման հոգւոյն առաջին հաւաստեաց մերձեցեալ կացեալ զգացման հոգւոյն առաջին հաւաստեաց մերձեցեալ կատարածին, յանդիման լիցի նմա ճշգրիտ և անխարդախ պատկեր կենացն անցելոց՝ որպէս ի յստակ հայելւոջ, և այնպիսիս ազդիցեն ի նա խորագոյն տպաւորութիւնս՝ որպիսիս չիցէ երբեք զգացեալ ի քննելն գիտիցն մտաց իւրոց. վասն որոյ և չիք ինչ պիտանի քան զայժմէն քննել զպատկերն այն կենաց։ Եւ նախ զայս հաստատեսցուք ի մտի եթէ վերջին է այսօր կենաց մերոց, որ և արդարեւ մարթի լինել. և յամենայն սրտէ գուն գործեսցուք ուշի ուշով կատարել զքննութիւն գործոց կենաց մերոց, որոց՝ յետ փոքրու միոյ համարս պահանջելոց եմք յանաչառ և ի վերջնում ատենի։

Ասասցուք, հարցուք ցանձինս մեր. Զի՞նչ կեցի ես ըստ կեանս իմ բովանդակ։ Պահեցի՞ անաղտ զպատմուճանն սրբութեան՝ զոր յաւազանէն զգեցայ. և ցո՞ր ժամանակ փայլեցին իսկ անմեղութեանն շնորհք։ Ե՞րբ նախ ազատեղեցի զգեղեցկագեղն այն և զանմման զարգ հոգւոյս. և աւա՜ղ, որպիսի՞ աղտիւ, որպիսի՞ մահուչափ մեղօք։ Եւ զգացեալ զի

մեղայ չարաչար, ապաշխարեցի՞ և դառնապէս. – խոստովանութիւնք իմ եղե՞ն անթերիք և բարիք։ — Յայնքան ամս կենաց իմոց, կեցի՞ արդեօք ամիս մի, եօթնեակ մի, օր մի՝ առանց մեղաց։ — Դուիրեցի՞ զէթ մի ժամ ծայրաւիր՝ առ Աստուած և առ օգուտ հոգւոյ իմոյ։ — Որո՞վ դիտմամբք կատարեցի զսովորական և զանսովոր գործս իմ։ Զի՞նչ էր զոր այնքան խնամով և ջանիւ խնդրէի և հետամուտ լինէի։ – Յի՞նչ պէտս, յո՞ր օգուտ ծախեցի զայնքան ժամանակս, զկարողութիւն և զզօրութիւնս անձին իմոյ։ – Զո՞ր ունէի առաջի աչաց իմոց, զԱստուա՞ծ, զօգո՞ւտ հոգւոյ իմոյ, զհանդերձեալ կեա՞նսն, եթէ զհեշտ, զընդունայնութիւն, զհեթեթեանս աշխարհի և զհրապոյրս սատանայի։ — Ի բովանդակ կեանս իմ՝ արարի՞ արդեօք գործ մի գերազանց առաքինութեան։ Փրկեցի՞ զոգի մի ի կորստենէ. արգելի՞ զանարգանս Աստուծոյ. տնկեցի՞ բարի մի ի միջի չարեաց։

Աւա՜ղ. գիտակցութիւն իմ տանջէ զիս, և տայ հառաչել, եթէ Աւուրք իմ անցին, և ոչ բուսուցին, ոչ աճեցուցին զործս բարիս. ունայնութեամբ անցին գնացին աւուրք և ամիսք, այլ և լցեալք բազմութեամբ մեղաց։ Զմեծ մասն մի կենաց մեզօք անցուցի, զմասն մի ընդունայնութեամբ, և գրեաթէ զբովանդակն գործովք՝ որք խափան եղեն կարեւորագոյն գործոյ։ — Այլ արդ քննեցից տեսից, յո՞ր մեղս մեծապէս անկիտացայ. ո՞ր է գլխաւոր յանցանացս և առիթ այլոցն թերեւս բնաւից. – ո՞ր կիրք, ո՞ր բերմունք զօրացեալք են յիս. ուստի՞ յառաջագային. և ո՞ր իցէ դեղ դարմանոյ նոցին։ Զի առանց այսպիսւոյ ծանօթութեան և դարմանոյ, անօգուտ լիցի քննութիւնս և անհանգիստ յետին պատրաստութիւն մահու։ — Քննեսցուք և զնաս զանցառութեան պատշաճական և պիտանի գործոց՝ վասն որոյ խիթայ խիղճ մտացն, և համարք պահանջիցին յատենի արդարութեան՝ որպէս զգործեցելոցն իրաց։

Ո՞րպէս ըղձալի էր մեզ թէ քաղաքավարեալ էաք ի կեանս. ո՞րպէս կատարեալ զսովորական գործս մեր. ո՞րպէս յառաջեալ ի կեանս և ի կատարած կենաց։ Հայեսցուք յետս՝ յանցեալսն. ընդ ո՞ր հաճիցիմք և գոհասցուք, ընդ թերութիւնս և ընդ մեղս, եթէ ընդ ջանս, ընդ ճգունս և ընդ բարիս զոր գործեցաք. – հաւանիցի՞մք և ընդ յեղանակ կենաց սերկեան

աւուրս։ — Զի՞նչ օգուտ եղեւ, կամ զի՞նչ մնայցէ մեզ ի դիւրութեանց և ի վայելից մարմնոյս, ի զբօսանաց և ի պէս-պէս զբաղմանց, ի գիտութեանց, ի գովութեանց, ի փառաց և ի գերազանցութեանց՝ յամենայն աշխարհի և ի միջի նմանեաց մերոց։ Ո՞րքան գերագոյն քան զայդոսիկ երեւիցին մեզ արդ կեանք մեռելակիրթք, կեանք խոնարհք, կեանք հանապազորդեալք ի սէրն Աստուծոյ, կեանք մաշեալք ի ջանս փրկութեան անձինս։ Երանի՜ այնմ՝ որ այնպէս կեայ, զի ի ժամու մահուանն առաւել խնդալոյ ունիցի պատճառս քան սգալոյ, որպէս ասէ Դմանութիւնն Քրիստոսի։

Հարցից ես դարձեալ ցանձն իմ. կամիցի՞ս մեռանել այժմիկ յայսպիսում պայմանի՝ յորում գտանիսդ. չիցէ՞ ինչ որ ճնշիցէ զսիրտ մտաց իմոց. պատրաստ իցեմ ի մահ, և յանդիման լինել յատեան դատաւորին. – որպիսի՞ վճռոյ ակն ունիցիմ. – ո՞ր տուն յաւիտենական կազմեալ կայցէ վասն իմ. – առ ո՞ յերկուցն կայանից դիմէին կեանք իմ. – յի՞նչ յուսացուցանեն զիս սովորութիւն վարուց իմոց և եղանակ գործոց. – յաճախ հակամիտեալ ընդ հիւսիսի՝ համարիցի՞մ անկանել ընդ հարաւ՝ փայտս կոճոպեալ յոստոց և ի պտղոց լաւութեան։ Աքանչելիք ի՞նչ լինէին, մանաւանդ թէ ծաղուս կարծիք, եթէ զընթացս կենացն ուղղեալ և երթեալ ընդ ճանապարհ Բաբելոնի՝ ի կատարածին հասանէր ոք ի դրունս Երուսաղեմի. կամ ըստ Տեառնական յարացուցին՝ ընդ լայնն հետեւեալ դուռն և ճանապարհ կորստական՝ ի կենացն հասանէր դուռն՝ յոր տանի անձուկն միայն նրբափողոց։

Եւ արդ զի՞նչ ունիցիմ ես մեռանել. իցէ՞ ինձ յուսալի ճողոպրել ի յետին ճգանց և յորոգայթից անհաշտ ոսոխի իմոյ, ի ժամու մահուանս, կամ յաղթող գտանել փորձութեանն՝ յոր յաճախ գթեցոյց զիս. – Ջանացի՞ ի կեանս իմ կալ հակառակ հակառակողի հոգւոյս. և եթէ յաղթեցայ, որպէս բազում անգամ, կանգնեցի՞ զանկումն իմ նորանոր ճգամբ և ապաշխարութեամբ։ Իցէ՞ թէ էր իմ կեցեալ որպէս փափագէի գտանել ի ժամ մահուան իմոյ։ Այլ արդ, որ զիարդ և է, իմ կամք և առաջադրութիւն լիցի առաջի պատկերի և զինու խաչաչարչար Փրկչին իմոյ, ստրջանալ և ապաշաւել զանցեալ կեանս իմ. և ամենայն խնամով գուն գործել ուղղել զայս և զայն թերութիւնս և ախտս իմ։ —

Ջանացայց՝ նորին շնորհօք՝ յաղթող լինել անձամբ անձին, և գործել հզօրեղապէս գործ մի լաւութեան, որպէս ազգէ յիս ներշնչումն աստուածային գթութեան, որով յուսացայց բարիոք վճարել զհարկ մահու, և երանելի կենաց լինել ժառանգորդ։ Արդ խնամով քննեցից տեսից՝ ո՞ր յաղթութիւն, ո՞ր գործ լաւութեան է՝ զոր խնդրէ յինէն օգուտ իմ և կամքն Աստուծոյ, կամ ո՞ր նուիրումն և հրաժարումն ի սիրելւոյ և յըղձալւոյ՝ զոր պահանջէ փրկութիւն իմ և Փրկիչն իմ. գիտելով չափ՝ զի ճիգն իմ և յարատեւութիւն յառաջադրեալս ուղղութիւն՝ բարերոյս և անդորր յարդարեսցեն ինձ զվախճան կենացս։

Գ. ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ. — Լաւագոյն և էական պատրաստութիւն ի մահ՝ բարւոք մաքրութիւնն է խղճի մտաց՝ ուղիղ խոստովանութեամբ, յոր հաստատեալ կայ յաւէտ յաւիտենականն փրկութիւն. և ի դէպ է այնպէս առնել և ի կըրթութեանս՝ որպէս թէ յետին նուագ էր, և դատաւորն համարս պահանջէր խսկոյն։ — Առ որ՝ ի դէպ է համարձակ և վստահութեամբ յայտնել խոստովանահօր զամենայն խիղճ մտաց, որպէս եթէ տեսցէ ի հայելւոջ զեշգրիտ պատկեր հոգւոյն, իբրեւ յաւուր անդ վերջին դատաստանի. և թէ հնար է՝ այնպէս ամբաստանել զանձն՝ որպէս մեր յայնմ աւուր ահեղի։ Ըստ սմին արժան է և յամենայն սրտէ զեղջ՝ վասն մեղանացն. և ոչ շատանալ սովորական առաջադրութեամբք ուղղութեան, այլ ուշի ուշով քննել զկարեւոր ուղղելի յանցուածս. առանձինն խնամով զգուշանալ այնց մեղաց՝ որք և այլոցն են առիթք, կամ բազմատանջք յոյժ. և դնել ի մտի չտալ բնաւ նոցա տեղի, զոր ամենայն յիշելով զառաջադրեալն, և փափագելով անտեղիտալի ճնալ մինչեւ յերկրորդ խոստովանութիւնն։ Առ այս լաւ իցէ և գիտել առ Սուրբ ոգ բարեխօս յատուկ, և օգնական ունել ի մարտի ընդդէմ այն ինչ ախտի կամ թերութեան. բազմաց օգտեալ է այս հնար օժանդակութեան կարեկից Սրբոց։ — Աւելի համարիմ ասել յետ այսորիկ՝ զի հարկ է և ամենայն հաւատարմութեամբ կատարել զապաշխարանսն սահմանեալս ի խոստովանահօրէն. յօժարութեամբ ընդունելով զոր ինչ և պատուիրեսցէ՝ իբրեւ յաստուածուստ կարգեալ, թէպէտեւ ծանունք կամ անհամբոյրք, և նուաստացուցիչք ինչ իցեն յաչս այլոց. փափագելով այնու խոնարհութեամբ հատուցանել փոքր ի շատէ՝ աստուածայնոյ արդարութեան՝ ի վերջնումն անդ անաչառ և անդարման ատենի։

Եւ զի ոչ ի միում եւեթ ի խոստովանութեանն պահու պարտ է զղջական սրտիւ առ Աստուած աղերսել, այլ արժան և վայել է հանապազօր՝ ընդ առաջադրութեանն և զապաշաւն յանդիման առնել, սովորեսցին սիրտ և շրթունք, թէպէտեւ անմռունջք, յեղյեղել ի խորոց հոգւոյ՝ այսպիսիս ինչ ներգործութիւնս. « Աստուած իմ, հայր գթութեանց և անդունդ անհասանելի բարութեանց, ահաւադիկ առ ոտս քո անկեալ կամ ծառայս ապստամբ և անթիւ մեղաց պարտական, որ չիշխեմ զաչս յերկինս ամբառնալ. այլ խոնարհեալ անձամբ թաւալիմ առաջի աթոռոյ ողորմութեանդ, և դառնացեալ սրտիւ խոստովանիմ զամենայն մեղս իմ. զարհուրիմ ի բազմութենէ նոցին և ի պէսպէս հանգամանաց. մանաւանդ զի մեղայ և զկնի յետին խոստովանութեանս, խորհրդով, բանիւ և գործով, ընդդէմ քո և պատուիրանաց քոց, և ընդդէմ ընկերաց իմոց, հպարտութեամբ և նախանձու, հեշտութեամբ և անմաքրութեամբ, ցաստամբ և պղերգութեամբ, և այլովք պէսպէս յանցանօք, անարգելով լրբութեամբ զմեծ վայելչութիւն քո, զգերագոյն իշխանութիւնդ և զփառս։ Այլ արդ ատելով ատեամ և գարշիմ յամենայն այլանդակ գործոց մեղաց իմոց, յիշեցելոցս և մոռացելոց. արդ քաջ ճանաչեմ զանհնարին աղտեղութիւն նոցին. և զարհուրելով յիշեմ զժամն և զվայրկեան՝ յորում իշխեցի կամ ապշեցայ գործել զայնոսիկ առաջի ամենատես աչաց քոց, մատնելով զհոգի իմ ի վտանդ յաւիտենական մերժման յերեսաց քոց։ Արդ զղջացեալ գարշիմ ի նոցունց, ոչ զի գարշելիք են, կամ զի ցանկալի են վարձք արդարոց՝ որոց անարժան գտայ, և կամ առ ահի պատուհասին՝ որում պարտական գտայ, այլ զի մեղայ քեզ, Բարութիւն անբաւ. զի ամենեւին զզուելի են մեղք առ անճառելի սրբութիւնդ, առ բարեսէր կամսդ, և առ ամենայն անհասանելի կատարելութիւնս քո, առ բովանդակ էութիւն քո։ — Ո՜հ, զազիր և դժնդակ մեղք, զիա՞րդ սիրեցի զձեզ կամ ընտրեցի քան զԱստուած. զիա՞րդ որդնս աղկաղկ ժպրհեցայ արհամարհել զիմ Տէրն, զիմ արարիչն, զփրկիչն իմ բարերար։ — զիա՞րդ

անզգայեալ այնպիսի ոճիրս և լուտանս փոխանակեցի ընդ այնքանեաց նորայն հայրական խնամոց, տրից և ձրից, որ ի վեր են քան զամենայն գութ և գնամ. – զիա՞րդ մոլեալ՝ զմարմին և զկորուստ նախակարգեցի քան զհոգի և զփրկութիւն, զգժոխս քան զարքայութիւն:... Եւ առ ի՞նչ մեղայ. – առ ոչինչ մի. առ չահ անչահ, առ հեշտ բոպէական, ամօթալի և անյիշելի. և այն ոչ ի բռնութենէ ուստեք կամ առ ահի տանջանաց, այլ յօժարութեամբ և կամաւ. – իմոյ, մանաւանդ թէ անմոռաց ունելով, և ոչ կամելով լսել ձայնի նորա և ձայնի գիտակցութեան իմոյ. և այն ի պահու՝ յորում վայելէի ի պէսպէս բարիս Աստուծոյ, մինչդեռ հաշտ ակամբ հայէր յիս, և ի թիւս որդւոց իւրոց գրէր զիս. իսկ ես ընդվզեալ ոստեայ ի գրկացն փարելեաց. արհամարհեալ զհացն կենսատուր՝ խոզաբուտ ցամաք եղջերաց ցանկացայ... Ամաչելով ամաչեմ յանձնէ իսկ իմէ, և ոչ գտանեմ տեղի թաքստեան. բայց դարձեալ ամօթապարտ երեսօք և կորացեալ գլխով, սրտիւ բեկելով անկանել առ ոտս Հօր իմոյ, փարել զծնողական ծնգովքն, և կարկառել զաղտեղեալ ոգիս յամենամաքուր գիրկս գթութեանն:

Աստուած իմ, բարութիւն անբաւ, գեղեցկութիւն անճառահրաշ, ապաշաւեմ, զղջամ, ցաւիմ ի վերայ մեղաց իմոց. և զղջամ դառնապէս յամենայն զօրութենէ սրտիս, կամացս և հոգւոյս. առաջի իմ են և եղիցին հանապազ ցաւք իմ. զի չար ընդ բարւոյ փոխանակեցի քեզ: Բղխեսցեն աչք իմ աղբերս արտասուաց, լալ և լուանալ ի տուէ և ի գիշերի զաղտեղութիւն մեղացս՝ որովք զոգի և զմարմին ապականեցի. լամ և լացից և ողբացից զանօրէնութիւնս իմ՝ զամենայն աւուրս կենաց իմոց... Աստուած իմ, քաւեա զիս զմեղաւորս, որ չեմ բաւական արժանապէս ապաշաւել և սրբել զանձն իմ. այլ օժանդակ ինձ առեալ զարժանաւորացն հեծութիւնս և զղջմունս, ազերս մատուցանեմ ըստ պոռնկին և մաքսաւորին, զարտասուս Պետրոսի և զհամբոյրս Մագդաղենին, և զնոյն ինքն զահեղահրաշ ցաւս և հեծութիւնս մարդացելոյն և խաչելոյն վասն իմ Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ՝ յուսոյն իմոյ: Հայեաց Հայր ամենակալ, յՈրդին քո խսկակից, միածին յերկինս, կուսածին յերկրի. հայեաց ի զրաւականդ այդ

փրկութեան աշխարհի. և ընդ Որդիդ քո այդ սիրելի՝ հայեաց թափանցանելով՝ և յիս յորդիս ուծացեալ և մոլորեալ երբեմն, և արդ ստրջացեալ, դարձ արարեալ ի տուն, ի գիրկս, յանզեղջ սէր Արարչիդ իմոյ և Փրկչի»:

Ըստ այսոցիկ և ըստ այսպիսեաց պաղատանաց զղջականաց, զուգեսցես ո՞վ անձն մեղուցեալ և արդ զգաստացեալ, և զառաջադրութիւն կամացդ հաստատութեան, առ զգուշանալ յամենայն մեղաց, ի մեծաց և ի փոքունց. զի որ ինչ մեղք է՝ չար է և խոտելի, և յամենայն առթից մեղաց, մանաւանդ որք առաւել գայթակղութիւն քեզ եղեն և հրապոյրք իցեն: Դիր ի մտի հսկել ի վերայ ամենայն մասանց և զօրութեանց անձինդ, և ամենայն ուրեք, յամենայն ժամանակի. և ասա դու քեզէն, Ուխտս եդի և կատարեցից, մի՞ եւս մեղանչել կամաւ. յանձն առնում զամենայն ինչս ընչից, մարմնոյ և կենաց, քան եթէ յօժարել և գործել մեղս, առաւել ընտրեմ զրկիլ ի զգայութեանց մարմնոյ և մտաց, քան մատնել զնոսին ի մեղս, և նոքօք զանձն իմ ի կորուստ շնորհաց. առաւել ընտրեմ զնախատինս և զցաւս ի վերայ երկրի, առաջի մարդկան, քան մեղանչել և յԱստուծոյ աչաց ելանել. ընտրեմ մեռանել քան մեղանչել:

Այլ յուշ ածելով և զյողդյողդ բնաւորութիւնդ և զդեղեւել կամացդ, զյանկարծահաս փորձութիւնս, զձանձրութիւն և զթուլութիւն, զերկար առողջութիւն մարմնոյ և զյաջողուածս ինչ կենաց, որք վերամարտք են սնդութեան կամաց հոգւոյ, երդմնեցո զգթութիւն Աստուծոյ, զբարեխօսութիւն Աստուածամօրն և զօժանդակութիւն հրեշտակաց և Սրբոց՝ պաշտպան կալ քեզ յարաժամ, յուշ առնել զոր խոստացարդ բոլորով սրտիւ յաւուր պատրաստութեան քո խոստովանութեամբ. և այլս ինչ որպիսի և է հնարել քեզ յիշեցուցիչս, եթէ տեսանելիս և եթէ իմանալիս, ըստ ամսոց, ըստ աւուրց և ըստ ժամուց. և ի վերայ և ի վերոյ ամենայնի՝ դնել կնիք անդրժելի զպատուական մարմին և զանգին արիւն Փրկչին Յիսուսի, զամենասուրբ Հաղորդութիւնն:

Դ. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ ԿԱՄ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ԹՈՐՀՐԴՈՑ՝ ՍՐԲՈՒԹԵԱՆ. — Յետ այսպիսւոյ պատրաստութեան՝ եթէ և ոչ կարիցես առ օրին կատարել զխոստովանութիւնդ և ընդունել իրապէս զխորհուրդն սուրբ, սակայն եթէ յանդիման լեր

նմին յեկեղեցւոջ, ուր բազմեալ կայ և հանապազ սպասէ
քեզ Փրկիչն մարմնացեալ և պատարագեալ, և անկեալ առ
ոտս նորա՝ կատարեա զներգործութիւնս հոգւոյ. խոստովան
լեր նմա, զի հաւատաս աներկմիտ՝ եթէ կայ մնայ քեզ մե-
ռանել և ի դատաստան մտանել, և ըստ գործոցդ ընդունել
հատուցումն ի նմանէ, որ այժմիկ աստանօր փրկիչ և քաւիչ
է ամենագութ, անդ դատաւոր արդար և անաչառ. և յիշե-
լով զյանցուածս քո և զմեղանս՝ խոնարհեաց մինչեւ յոչըն-
չութիւն քո. զի արդարեւ ոչինչ մի ես առաջի նորա, և չար
քան զոչինչ՝ եթէ ոչ պահեսցեն զքեզ չնորհք ողորմութեանց
նորա։ Ապաշաւեաց դառն և քաղցր արտասուօք ի վերայ
ամենայն անգիտութեանցդ և անփութութեանց, և ակն կալ
գթութեանց ստեղծողին և փրկողին զքեզ, որ քաւիչ և սրբիչ
է ապաշխարողաց, և զսեւացեալսն իսպառ մեղօք՝ ոչ միայն
յառաջին մաքրութիւնն հանէ, այլ և ի գերագոյն պայծա-
ռութիւն, չատ է թէ ընդունակ ոք լիցի ազդմանց նորին և
չնորհաց։ Այո, արդարեւ, թէպէտ և բազում անգամ մեղու-
ցեալ և ընդ երկարեալ ի մեղս, այլ արդ ստրջացեալ և զզջա-
ցեալ, ակն ունիմ և ես ողորմութեանց Աստուծոյ Փրկչին
իմոյ, քաւութեան և թողութեան, և չնորհաց մինչեւ իսպառ
յարատեւութեան. ակն ունիմ և յուսացեալ եմ, քանզի ոչ
միայն կարես թողուլ զմեղս իմ, այլ և կամիս, և խոստա-
ցար իսկ. քանզի ամենայաղթ է սէր քո արարչական և փըր-
կական. և ես ապաւինեալ ի գթութիւնս քո անբաւս և յար-
գիւնս Փրկչին իմոյ Յիսուսի՝ ուխտս դնեմ այսօր ի պա-
տրաստութեանս յայսմիկ՝ չանալ հնարել որչափ գուցէ յիս
կար զօրութեան, արժանանալ սրբարարդ չնորհաց և ժա-
ռանգել զպատրաստեալդ ի յաւիտենից սրբոց քոց զարքայու-
թիւն։ Ո՜ տայր ինձ, Աստուած եմ, յայսմհետէ սիրել միայն
զքեզ՝ զմիակ և զամենեւին սիրելիդ, առաւել քան զամենայն
աշխարհ, առաւել քան զկեանս իմ, առաւել քան զամենայն
ինչ. և զամենայն գործ՝ զոր մնայցէ ինձ գործել տակաւին
ի կեանս իմ՝ ի սէր քո նուիրել, սիրով քոյին կատարել։
Ո՜ տայր ինձ յարաժամ անձկալ կատարածի կենացս այսո-
ցիկ՝ որ խափան լինին պարզապէս քումդ տեսութեան, պաշ-
տաման և սիրոյ, և ելանել հասանել յանսպառ աղբիւրդ սի-
րոյ, որոյ և չիթ մի միայն մեծ է ինձ քան զծովս կենցա-
ղական վայելից, եթէ արժան իցէ վայելս կոչել։

Վասն որոյ և անբաւ գոհութիւնս մատուցանեմ մեծի քում
վայելչութեան, վասն բազմապատիկ բարեացդ՝ որով լցեր
զիս՝ զխոտան և զփանաքի արարածս՝ յամենայն կեանս իմ.
գոհանամ մանաւանդ զի խնայեցեր յիս և ոչ ետուր ինձ յան-
կարծօրէն մեռանել ի ժամու՝ յորում մեղայ մեծապէս, այլ
և չնորհեցեր ինձ ժամանակ պատրաստելոյ ի մահ. և զի
արարեր ինձ ողորմութիւն՝ զոր զլացար բազմաց լաւագու-
նից քան զիս, յորոց վերայ եհաս յանդգաստից մահ, ըստ
ածեալ զպատրաստութիւն մահու. ո՜հ, եթէ մեռեալ էր իմ
յայնպիսում պայմանի՝ արդ տոչորէի ի հուր գեհենին։ Զնոյն
գործելով իմ չարիս մեծամեծս, ի նմին պահու՝ զայլս դա-
տապարտեցեր և ինձ երկայնամտեցեր. այո, զողորմութիւնս
քո երգեցից յայսմ հետէ և յաւիտեան։ Բարեխօս ինձ ունե-
լով զամենօրհնեալ միշտ Սուրբ կոյս Աստուածածինն,
հայրագիր Քրիստոսի Աստուծոյ իմոյ յերկրի՝ զՍ. Յովսէփ,
զհրեշտակապետսն Միքայէլ և Գաբրիէլ, զհրեշտակն իմ պա-
հապան, զպաշտպանս իմ Սուրբս, և զամենայն Սուրբս, որոց
աղօթիւք և օժանդակութեամբ՝ արժանի եղէց կեալ զմնա-
ցուած կենաց իմոց՝ ակնկալութեամբ կատարածին, և բար-
ուք պատրաստութեամբ և ընդունելութեամբ սրբոց խորհրդ-
դոց՝ ննջեցից և ես զքուն յուսոյ անմահութեան։

Ե. Օրհնեմ զՎերջին. — Ի բովանդակեալ զխորհրդական
պատրաստութիւն մահուան, արժան է ընդունել մատուցա-
պէս և զՕծումն վերջին, այնու յօժարութեամբ և հաւատով՝
որով ցանկացան մեծամեծք ի Սրբոց ընդունել զայն՝ ընդ
վերջնոյ թոշակին, և որով հաստատեալ է յեկեղեցւոյ Սրբոյ.
փափագելով հաղորդ գտանել չնորհացն որ նովիմբ ազդի
յոգիս և ի մարմինս իսկ արդարոց։ Այժմէն խնդրեսցուք
զԱստուծոյ արժանի առնել և զմեզ հոգեկեցոյց թոշակին և
օծմանն յետնոյ, հացին և իւղոյն՝ որ հաստատեն զսիրտ և
զմարմին, և մի վրէպ գտանիլ յանկարծ և անպատրաստ
մահուամբ։ Եւ ամենայն լրջմտութեամբ ընթերցցուք զկարգ
աղօթիցն և օրհնութեանց, որպէս թէ առընթեր ունելով
զկատարիչ խորհրդոյն զքահանայն, և ի նմանէ լսելով.
կնքեսցուք հաւատով զզգայարանս մեր օծանելիս, և ասաս-
ցուք մի ըստ միոջէ, Սովին սուրբ օծութեամբս և իւրով

ամենագութ ողորմութեամբն՝ սրբեսցէ Տէր զաչս և զա-
կանջս, զհոտոտելիս և զշօշափելիս իմ, զձեռս, զոտս և զզ-
սիրտ և զերիկամունս. և ամենայն մեղք՝ զոր սոքօք գործե-
ցի, թողցին ինձ յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ։
Եւ յասելն զայսոսիկ՝ հառաչեսցուք և ի սրտէ ի վերայ մե-
զաց՝ որոց գործիս և պաշտօնեայս արարաք զմասունս մար-
մնոյ մերոյ, և մաղթեսցուք ի Փրկչէն մերմէ՝ ներել մեզ և
քաւել վասն ցաւոց՝ զոր կրեաց նովիմբք զգայարանօք ան-
մեղ մարմնոյ իւրոյ, և հայցեսցուք ընդ քաւութեան մեղաց՝
արժանաւորել զմեզ և թողութեան պատուհասին՝ զոր ձգեցին
յինքեանս զգայութիւնք մեր, և շնորհս՝ մի՛ եւս զինեալոյ զնո-
սին ի կորուստ հոգւոյ, այլ յօժանդակութիւն փրկութեան,
ի ձեռն բարի գործոց և մեռելութեանց։

Յուշ լիցին և այս կարեւոր յիշելիք ի յետնումս յայս
պատրաստութեան, զի ոչ առ Աստուած միայն են պարտք
մեր, այլ և առ ընկերս. և այս երկակի. կամ նուազութեամբ
սիրոյ մերոյ առ նոսա, և ինասուք՝ որ և է օրինակաւ. ա-
տելութեամբ, թշնամութեամբ, բամբասանօք, քինու և նա-
խանձու. կամ գայթակղութեամբ, և անվայթ առնելով զօ-
գուտ նոցին զհոգեւոր և զմարմնաւոր, մանաւանդ յորժամ
պաշտամամբ, հասակաւ և ըստ դիպաց՝ պարտաւորք իսկ
էաք օգնել նոցա. և յառաջ իսկ քան յԱստուծոյ՝ խնդրես-
ցուք ի նոցանէ ներումն թողութեան և անյիշաչարութեան.
թողցուք և մեք ի սրտէ՝ եթէ ունիցիմք ինչ խէթ, կամ
կրեալ իցէ վիշտս և չարիս. և ամենայնիւ համարձակ լի-
ցուք ասել յատենի Աստուծոյ՝ առ որ հանդերձեալս եմք յետ
վարու միոյ յանդիման լինել, «Թող ինձ Տէր զյանցանս իմ,
» որպէս և ես թողի իմոց պարտապանաց»։ Իսկ երկրորդ
ազգ պարտուց մերոց՝ առ այնոսիկ է՝ որք առաւել սիրեցին
և կարեկիցք եղեն մեզ, ազգակցութեամբ, ընտանութեամբ,
վարդապետութեամբ և հրահանգօք, հոգեւոր և մարմնաւոր
ողորմութեամբք և պէսպէս երախտեօք, որք ի բովանդակ
ընթացս կենաց մերոց և որք ի ժամանակի աստ յետին հի-
ւանդութեան մերոյ պաշտեցին և պաշտեն զմեզ. ի ծնողաց
անտի մերոց մինչեւ ցվերջին հիւանդապահն, և վերջնագոյն
եւս հոգացողս լքեալ և զիակնացեալ մարմնոյ մերոյ և ի
յուղարկաւորս նորին. — ննջեցելոցն՝ կանխելոց քան զմեզ

յայն աշխարհ՝ յոր ահա երթամք և մեք, մաղթեսցուք հան-
գիստ յաւիտենական. իսկ կենդանեացն, և որ շուրջ զմեօք,
միոյ միոյ ըստ իւրաքանչիւր աստիճանի և երախտեաց՝ հա-
տուսցուք ջերմն խանդաղատանօք շնորհակալիս և խոստումն
յիշելոյ և ի հանդերձեալ կեանսն, և յոյս՝ անդէն ընդլ զթե-
բին ինչ զոր թերացաք առ նոսա. խնդրեսցուք խոնարհու-
թեամբ և միամտութեամբ զաղօթս և զօժանդակութիւն նոցա
գործովք բարեաց, մանաւանդ մատուցմամբ կամ առաջի
կալով մեծի և մեղսաքաւիչ պատարագին, ի քաւութիւն մե-
ղաց մերոց՝ զորոց չիցէ մեր հատուցեալ ստէն զպարտիս
արդարութեան. եգեալ ի մտի առաւելապատիկ եւս օժանդա-
կել օժանդակողացն մեզ՝ յորժամ ողորմութիւնն Աստուծոյ
Փրկչին՝ հանցէ զմեզ յանդորր և ի լոյս երեսաց իւրոց։

Զ. Ամանդումն հոգեւոց։ — Հատուցեալ և զյետին պարտս
արդարութեան առ մարգիկ, հրաժարեաց այնուհետեւ յամե-
նայն աշխարհէ, ո՞վ որ հոգաստ զանդառնալի հրաժեշտ հոգ-
ւոյդ. հայեա՛ց շուրջ զքեզ՝ մտօք, քան նուազեալ աչօք, յորմէ
եղծանին կերպարանք ծանօթազոյնք անգամ. տես միայն
զնչոյլ աղօտ մոմեղինին լուցելոյ ի սնարսդ, զկաչն ի վերայ
լանջացդ, զոր աստստին համբուրեալ կա՛լ ի ձեռին. և լուր
զձայն պաշտօնէին, որ ասէ, Հրաժարեաց հոգի հաւատացեալ,
հրաժարեաց յաշխարհէ աստի և ի կենաց քոց, և երթ ի
հանգիստ յաւիտենից. Հաւատս ունելով, հոգի խաղաղութեան,
երթ առ Արարիչն քո, հայցելով, Աստուած իմ, հանգո՛. ի
քաղաք Տեառն Աստուծոյ, ի տուն յաւիտենից երթիցես հանգ-
չել ընդ Սուրբս Աստուծոյ։ — Բա՜ՀԷ. ահա ուրեմն հասեալ
կամ և ես յելս կենաց և յաշխարհէ աստի յաշխարհն հան-
դերձեալ, ըստ բանից Մեծին Գրիգորի. ելի՜ց արդ ի կաւե-
ղէն յարկէս՝ մտանել ի տուն յաւիտենականութեան։ Հապա,
թողից լքից կամաւորապէս զհողեղէնս այս մարմին, զի մը-
տից յանեղաշէն տաճարն Աստուծոյ. տեսանել զէմ յանդի-
ման զվայելչութիւն երեսաց Աստուծոյ, զսիրելին իսկական.
ժառանգեցից բովանդակ, իսպառ և լիովին զամենայն բա-
րութիւնս միանգամայն։ Ո՞վ անճառ պարգեւաց. ճանաչել
զամենակալ կարողութիւն Հօր Աստուծոյ, զիմաստութիւն
Որդւոյն Միածնի և զգութ սիրոյ Հոգւոյն Սրբոյ. տեսանել
զփառս արքայութեան Աստուծոյ, դասակից լինել Սրբոց,

խառնիլ յերամս հրեշտակաց. ոչ եւս խիթալ ի մեղաց, ոչ եւս երկնչել ի մահուանէ, ոչ բնաւ կասկածել ի կորստենէ յաւիտենական վայելիցս։ Ո՜վ, քանի՜ ընդարձակ և ամենալից են բարեօք օթեվանք յաւիտենից՝ զոր պատրաստեաց Փրկիչ մեր Քրիստոս՝ ի տան Հօր իւրոյ՝ վասն սիրողաց իւրոց... Քաջալերայց, հրճուեայց, խրախացիր հոգի իմ, զի ահա փոքր միւս եւս, և «ի տուն Տեառն երթիցուք մեք» սակաւիկ մի եւս, և «Տրտմութիւն մեր յուրախութիւն դարձցի» յուսա՛ առ Աստուած, խոստովանեա նմա. Աստուած՝ արարիչն իմ՝ նոյն ինքն և փրկիչ իմ է։ — Յուսա՛ ի նա և մի՛ խռովիր՝ եթէ կայ մնայ քեզ տակաւին փոքր մի եւս յամել յերկրի աստ և ի կեանս, որ մինչեւ ցշունչն յետին ընդ ահիւ կայ թշնամեաց հոգւոյդ. այլ յիշեա զի որ ստեղծն զքեզ՝ վասն իւր ստեղծ զքեզ. և որ այնքան խնամեաց և դարմանեաց ի վերայ երկրի զմարմինդ, նոյն՝ յաւիտենական սիրով զնդայ ի վերայ հոգւոյդ. — քոյովսանն տկար ես յոյժ, հզօր են ոսոխք քո. այլ հզօրագոյն, նա՝ ամենազօր է Տէր քո և փրկիչ. և նա «գիտէ զստեղծուածս մեր զի հող եմք». այլ ա՛ռեամբ նորոյն Ադամայ նորոգեաց ամբացոյց զբնութիւնս մեր, և հանցէ յանմահութիւն։ Եւ ահա ի հուսկ պահու կենացդ՝ կնիք վաւերականի, կնիք յուսոյ և սիրոյ յաւիտենականք՝ կարկառէ քեզ զխաչ իւր փրկարար. թեւք նորին նշանակք են թեւոց Քրիստոսի՝ որովք փարի զքեւ, մէջ նորին՝ նշանակ սրտին Յիսուսի՝ զոր հանգուցեր ի սրտի քում՝ յետին թոչակաւ, յոր և հանգի արդ յուսով, և հանգիցես ըստուգութեամբ. — չիթք արեանն՝ զոր նշմարիցես ի նմին՝ հաւատոյ աչօք՝ մէն բարբառք են աւետեաց ներողութեան և ողորմութեան, գրաւական յուսոյ, առհաւատչեայ փրկութեան։ Այո՛, այո՛, ի քեզ Տէր, ի Փրկիչդ իմ Յիսուս յուսացայ և յուսացեալ եմ ես, զի մի՛ ամաչեցից յաւիտեան։ Եւ ի ձեռս քո աւանդեմ զոգի իմ։

Յայս հասեալ կէտ խորհրդական պատրաստութեան մահու, խորամուխ լեր առ վայր մի՛ եւս ի հուսկն այն բոպէ կենաց, և ի սկիզբն հանդերձելոցն. և անշշունջ լեր մտախոհ ազդմանց հոգւոյդ, որպէս թէ ոչ եւս աստի՝ այլ յայնմ աշխարհէ ուր փոխեցան։ Եւ յորժամ անցցէ պահն խորին ամփոփման ուշոյ մտացդ և զգայցես զի տակաւին կեաս յաշխարհի աստ, և փորձ իմն էր մահու զոր փորձեցեր այսօր, հարց ցանձն քո, նախ, եթէ արդարեւ և ստուգիւ մեռեալ իսկ էի յասելս «ի ձեռս քո, Տէր Յիսուս աւանդեմ զոգի իմ», ո՞ւր և որպիսի՞ արդ գտանէի։ Երկրորդ, եթէ տուեալ էր ինձ յետ միանգամ մեռանելոյ՝ վերադառնալ ի կեանս և գիտել՝ զի միւսանգամ մեռանելոց եմ յետ ամսոյ միոյ կամ տարւոյ, կամ այսքան ինչ ժամանակի, ո՞րպէս կամէի կեալ զժամանակն այն չափեալ։ Եւ զոր կամէիրն՝ առաջադրեա սրտի մտօք առնել՝ շնորհօքն Աստուծոյ. տալով նմա փառս և գոհութիւն զի ազդեաց քեզ զայս և զնմանօրինակ իմաստս պատրաստութեան ի մահ, առ ուղղել այնու զընթացս սահմանեալ կենաց քոց. և յորժամ դարձցիս սկիզբն առնել սովորական կամ պարտական գործոց քոց, անմոռաց կալցես և զյետին յիշատակդ. այսինքն է, զի զերծար ի մահուանէ առ փոքր մի եւեթ ժամանակ. և յետ փոքրուն այնմ կայ քեզ ընդ հուլ մտանել յօրհաս, ի թաղումն, ի դատաստան, ի ընդ հուլ մտանել յարքայութեան երկնաւորաց, և ի տուն յաւիտենից. և ամենայն յօժարութեամբ և ջանիւ զուն գործեա արծարծել և անշէջ պահել ի սրտիդ զկայծակն վառեալ ի խորհրդածութեանցս յայսցանէ. որպէս զի երանի՜ իցէ քեզ՝ եթէ եկեալ Տեառն քո՝ գտցէ զքեզ արթուն. ամէն ասեմ քեզ, ի վերայ ամենայն ընչից իւրոց կացուսցէ զքեզ, յարքայութեան իւրում։

Գ

ՀՈԳԻ ԻՍԿ ԵՒ ԻՍԿ ՅԵՏ ՄԱՀՈՒԱՆ

«Մեռաւ մարդ, և գնաց ի տուն իւր յաւիտենից». (Ժողով. ԺԲ. 5). որ ինչ երեւէրն՝ ծածկեցաւ ի մէնջ. որ տիրաբար շրջէր ի վերայ երկրի, անարգաբար թաքուցաւ ի խորս երկրի։ Իսկ հոգի՞ նորա։ Հոգին՝ անդէն և անդ ընդ աւանդել յետին շնչոյն՝ յանգիման լինի Աստուծոյ. ի դատաստան կոչի, ըստ գործոց իւրոց՝ զոր գործեցաց ի կեանս անցաւոր յաւիտենից, և եղիցի դասակից կամ ընդ ընտրեալսն յԱստուծոյ, կամ ընդ մերժեալսն ի նմանէ։

ի համառօտ ատենէ անտի՝ եթէ ոչ դատապարտեցաւ ի կո-
րուստ, մուծցի հաւանօրէն ի քրայս քաւարանի, քաւել զմնա-
ցուածս պարտեաց մեղացն և յանցուածոց։ — Ո՜հ, քանի՜
յայլակերպս փոխին յահաւոր պահուն յայնմիկ՝ խորհուրդք
նորա. – քանի՜ այլ օրինակ զգացմունքն՝ ի յանկարծումն
երեւել անաչառ դատաւորին, յարագարագ հատանել անդար-
ձական վճռոյն, և ի մահճաց անտի օրհասին՝ զոր տակաւին
ոչ ցրտացոյց ջերմն յեւին, փոխագրիլ ի մաքրողական հուրն
կսկծագին։

Եթէ էր մեր խորհեցեալ յաճախ զվիճակ հոգւոյ մերոյ
յելս իւր ի կենաց աստի, ապաքէն զգաստագոյնս կէաք քան
յայժմուս. զգուշացուցանէր զմեզ խորհրդածութիւնն այն՝ ի
մեղաց և ի յանցուածոց՝ յորս գթեմք յաճախ, և տայր մեզ
ջանալ քաւել ապաշխարութեամբ զյառաջագոյն գործեցեալսն,
և լնուլ զպարտիս՝ որք պահանջիցին ի պարտապանացն
յայնմ հանդերձեալ ատենի, ուր ստիպի հոգի հատուցանել
մինչեւ ցյետին նաքարակիսն։ Եւ զի մի՛ հասցէ մեզ տագ-
նապել յապայն ի սաստկապահանջ դատաւորէ, զմտաւ ած-
ցուք այսօր զվիճակ հոգւոյ մերոյ նախ. յատեան դատաս-
տանին, և ապա ի քաւարանին, և յետ այնորիկ խելամուտ
լիցուք զի՞նչ արժան իցէ մեզ առնել և ի թողութիւն պար-
տուց պատուհասի մեղաց մերոց։

Ա. ՀՈԳԻ ՅԱՏԵԱՆ ԴԱՏԱՍՏԱՆԻՆ

Ընդ աւանդել վերջին շնչոյն՝ անդէն և անդ մտցէ հոգիս
մեր ի դատաստան, տալ համարս զգործոց կենացն, և զգալ
զվճիռ յաւիտենականութեանն որ վիճակեսցի նմա։ Քանի՜
այլափոխ և ահեղակերպ տեսարան, թէպէտ և ոչ յերկարու-
թեամբ վայրաց և ժամանակի տեղափոխեալ. այլ ի դէպ է
ասել, եթէ անդէն իսկ առ ետեղ՝ ի մահիճսն՝ յոր ելիք ըզ-
մարմինն, յանկողնի անդ՝ յորում թերեւս բազում անգամ
մեղաւ Տեառն, և պարտական եղեւ ծանր ծանր պատուհաս-
սի, որոյ և մարթ էր աննրելի զոլ։ Դատաւոր ատենին՝ ինքն
իսկ Աստուած է, զոր այնքան արհամարհեցաք, և ոչ խոր-
շեցաք թիկունս դարձուցանել նմա՝ առ ի հաճել զերեսս մարդ-
կան։ Դատաւոր՝ ինքն իսկ Քրիստոս է, առ որոյ փրկարար

մարմինն և արիւն՝ այնքան ցրտութեամբ և անկատար պա-
տրաստութեամբ մերձեցաք, թերեւս և ոչ անխիղճ։ Դատա-
ւորն այն՝ գիտէ զամենայն, և թաքնագոյնք և թեթեւագոյնք
իսկ խորհրդոց մերոց՝ յայտնի են նմա։ Դատաւորն այն՝ ա-
նաչառ է և անողոք. աղաչանք և պաղատանք ոչ ինչ զօրեն
յայնմ ատենի. առաջի նորա և ոչ երկինք են սուրբ, ըստ
տեսութեան Յովբայ, և պահանջէ մինչեւ ցյետին ընիսոն։

Արդարութեան է ատեանն. դատախազ կացցէ մեզ յայնմ
աւուր և հրեշտակս մեր պահապան՝ զորոյ բազում անգամ
զանց արարաք զհոգեկեցոյց թելադրութեամբք. ոսոխ դժպհի՝
կանգնեսցի սատանայ՝ յորոյ հրապոյրս մատնեցաք զանձինս
և աղտեղացաք մեղօք. դատախազ ընտանի կացցէ անհերքելի
գիտակցութիւնս մեր, որոյ անդուլ ազդեցութեանցն անլսող
եղաք, անզգայացեալք առ խրատիչ խայթուածսն, որք փո-
խեսցին ապա ի փուշս անբժշկականս։ Եհաս վախճան գոր-
ծոց մերոց ի վերայ երկրի, և արդ ժամ է տալոյ հա-
մարս, այլ և զբանից և զխորհրդոց, և զանցառութեանց աս-
տուածազգեցիկ շնորհացն. նաեւ գործք մեր բարիք և լա-
ւութիւնք՝ կշռեսցին ի կշիռս սրբութեան սեղանոյ։ Իսկ վը-
ճիռն. եղիցի անաչառ, անյետս դառնալի և արագարագ.
քանզի անբողոքելի է ատեանն այն։ Ընդ մէջ երկուցն յա-
ւիտենից, երկնից և դժոխոց, կացցէ հոգի, մէն միայնակ,
անոք անօգնական. և դատեսցի ամենայն խստութեամբ ար-
դարութեան։ Ողորմութիւն ծածկեսցէ յայնմ աւուր զերեսս
իւր։

Ծագեսցէ յայնժամ որպէս փայլակն յանկարծափայլ ի
միտս մեր, և տեսցուք պարզ և յստակ զամենայն զանթիւ
զանազան յանցուածս և մեղս մեր, և առցուք զչափ ծան-
րութեան և գարշութեան նոցին, սկսեալ յայնմանէ՝ որ արդ
առաւել ճնշէ զմիտս մեր, և յառաջնոյ անտի՝ որ ապակա-
նեաց զպատմուճան աւազանին, մինչեւ ցյետին զանցառու-
թիւն և թուլութիւն. և ո՞րքան այլազգ դատեսցուք յայնժամ
անձամբ զանձինս։ — Քանի՞ք ի մեղաց անտի՝ զոր ներելիս
համարէաք, պաշարեալք աննրելի տգիտութեամբ, կամ մը-
տահաճոյ վարդապետութեամբ, մահուշափք յայտնեսցին։ Դա-
նիցուք զպարագայս՝ որք յաւելուն զթիւ կամ զծանրութիւն
մեղաց, զորս ի հարեւանցի և ոչ բովանդակ խոստովանե-

ցաք. — մեղք այլոց՝ որոց պարտական գտանիմք, և զոր ոչ կարծէաք մեզ պարտս. — գործք բարիք, զորովք զանց արարաք, կամ ոչ բարեպէս գործեցաք։ Վա՜հ մեզ. յարիցեն յայնժամ ամբաստանք մեզ հոգիք՝ զորս հրապուրեցաք ի մոլորութիւն և ի մեղս, և վրէժ կարդայցեն մեզ. — բողոքեսցեն զմէնջ՝ զորս պարտ էր մեզ խրատել և ուսուցանել և ոչ արարաք. — աղաղակեսցեն ի վերայ մեր՝ գայթակղեալքն առ ի մէնջ, եթէ բանիւ և եթէ գործով. — ընդդէմ մեր գոչեսցէ և արիւնն Քրիստոսի հեղեալ ի փրկութեան այնոցիկ՝ որոց մարթ էր մեզ գործակից լինել փրկութեան, և մանաւանդ հարկ էր ոչ իւիք լինել պատճառ կորստեան։

Զի՞նչ տացուք պատասխանի առ անակնառու արդարութիւնն աստուածային՝ յորժամ հարցցէ մեզ զայս ինչ և զայն գործոյ, յայն ինչ ժամանակի և յայն նիշ տեղւոջ գործեցելոյ. — ո՞ւր թաքիցին գործք՝ զոր ոչ միայն յամենայն մարդկանէ՝ այլ և ի մերմէ իսկ գիտակցութենէ ծածկել կամէաք՝ անհանճարապէս։ Անմի՛տ և չուառական մեղաւոր, ասէ Գիրք Նմանութեանն, որ զարհուրիս և յերեսաց սոսկատեսիլ ցասուցելոյ առն, զի՞նչ տացես պատասխանի ամենագէտ դատաւորի քում Աստուծոյ։ — «Եւ մի բան՝ հազար բանի» պատասխանի ոչ տացէ», ասէ Յովբ։ — Զի՞նչ յայնժամ երեւեսցին մեզ պատիպատ խոհեմութիւնք մարդկայինք, սեթեւեթեալ բանք և գործք մեր ի հաճել զմարդիկ, վարկպարզի խոստովանութիւնք մեր. և մանաւանդ առիթ նոցին մեղքն՝ որպիսի՞ դժպհի գիմօք յանդիմանեսցին մեզ։ Ո՞հ, որպիսի՜ս յայնժամ հնարս կամեսցուք, թէ հնարեալ էաք՝ առ ի զգուշութիւն մեղաց և ի սրբութիւն անձանց. իցէ՞ թէ եղեալ էաք զայն կանոնս, պահեալ էաք զայն պատուիրանս. — իցէ՞ թէ խոյս տուեալ էաք և զերծեալ յայն ինչ առթից, յայնց տեսութեանց, յայն ինչ ընկերութեանց, յայնց զրուցաց, լրոց և գիտութեանց. և համանգամայն ասել, ընդէ՞ր ոչ կեցաք բարեպէս և լաւագոյն՝ որպէս և որքան կարէաքս։

Անօգո՜ւտ ստրջանք։ Այլ եթէ արդարեւ կամիցիմք զօգուտ մեր և զփրկութիւն, այժմէն աստստին այնպէս յարդարեսցուք զգործս մեր և զվարս՝ զի մի լիցին մեզ յայնմ յետնում աւուր՝ յահ և յերկիւղ և յանչահ ապաշաւ։ Մի կափուսցուք զաչս մտաց՝ առ լոյս ծագեալ մեզ այժմիկ, զի մի

խստագոյն եւս պահանջիցիմք ապա համարս. մի արհամարհեսցուք գպարգեւեալն մեզ այսօր շնորհ, զի մի առաւել եւս ի ցասումն բարկութեան վառեսցուք զարդարութիւն Աստուծոյ, որ ոչ միայն անցելոցն ցայս օր, ցայս ժամ, այլ և զայժմուս զներկայ խորհրդածութեանցս պահանջեսցէ համար։ Ուղղեսցուք ուրեմն այժմէն զոր յայնժամ փափագէաք թէ ուղղեալ էաք, և խորշեսցուք յիրաց՝ որ տագնապեցուսցեն զմեզ յատենի անդ։ Մի՝ հարեւանցի ինչ լինիցին առաջադրութիւնք մեր, որպէս բոց ծխախառն, որ առ վայրկեան մի շողացեալ խաբէական նշուլիւ, իսկոյն չիջանի և խաւարի։ Դիցուք ի մտի, ոչ բազում ինչ, զի մի յոլովութեամբ ապրե

մխիթար, անգուլ և անգադար, ի ցաւս և ի հեծութիւնս խորինս։ Ահաւո՜ր յեղափոխութիւն. ի հանգստեանէ բարձից և անկողնոց՝ վայրաբերիլ ի տոչորումն ծովացեալ հրոյ... չէք յիս և ոչ մի մասն, մի ինչ՝ որ ոչ տագնապիցի ի հնոցի աստ. և որպիսի՞ հուր, որոյ կայծ մի եւեթ բաւական է ի կիզուլ ծախել զտիեզերս աշխարհաց. հուր՝ առ որով հրդեհք երկրաւորք՝ ցօղ են զովարար. հուր շրջապատ ամենուստ, ոչ ունելով ազազս ելի։ Վա՜յ, թէ էր իմ ի միտ առեալ զայս՝ յորժամ կէի ի վերայ երկրի. քանի՞ այլազգ դատէի զմեզս, զներելիս անգամ։

Ահեղք և դառնակսկիծք են վիշտք քաւարանի, քան զամենայն դառն դառն տանջանս բռնաւորաց զոր ետուն մարտիրոսաց, քան զամենայն կտտանս մահապարտաց, քան զամենայն ախտս ցաւոց մարմնոյ, ըստ հաւանութեան ամենայն Սրբոց Հարց. և նուազագոյն ինչ մասն ցաւոց քաւարանի՝ առաւելու, ըստ Ս. Թովմայի, քան զամենայն ցաւս կենաց։ Բազում անգամ ցաւ ատաման միոյ՝ իսպառ լքուցանէ զմեզ. իսկ զի՞նչ լինէաք՝ եթէ ընդ նմին կրէաք և զյօդացաւութիւն, զցաւ աղեաց և երիկամանց, զխիթս և զկիծս, և միանգամայն զայէսպէս ցաւս ամենայն մասանց մարմնոյ. և ի վերայ ներքին ցաւոցն՝ յաւելոյր և խլումն աչաց, քանցումն ատամանց, կտրումն մատանց, խարումն և զերծումն մորթոյ, այլովքն հանդերձ։ Դժպհի թուի մեզ և լսելն և յիշել զայսպիսիս. իսկ զի՞նչ եթէ հասանէր և կրել, որպէս և գիտեմք և յիշեմք՝ սրբոց ոմանց, այլ և անսրբից, փոքր ի շատէ կրեալ զայսպիսիս։ — Այլ՝ տանջանք քաւարանի սաստկագոյնք և անտանելիք եւս են։

Եւ ո՞ւմ կամ վասն որո՞ց իրաց սահմանեալ են սաստկութիւնք ցաւոցն։ — Նաեւ վասն թեթեւ և ներելի համարեալ մեղաց. վասն հոգւոց՝ ընտրելոց ի ժառանգութիւն արքայութեան, առ նախասահմանեալսն, առ հարսնացեալսն Քրիստոսի, սահմանեալք են ցաւքդ՝ յարդարադատն Աստուծոյ, որ յանչափս սիրէ զհոգիսն տառապեալս, այլ և պատուհասէ յերկար ժամանակս իսկ, թէպէտեւ ըստ իւրաքանչիւր չափու մեղաց կշռելով զտոյժս տուգանացն։ — Բա՜ւբէ. Աստուած գթած, Աստուած որ սիրէ զհոգիս ընտրեալս, այսպէս խըստագոյնս դատի և կտտէ արդարութեամբն, և վասն փոքունց

իսկ յանցուածոց պատուհասակոծ առնէ զնոսա։ — Եթէ այր ոք թագաւոր զգօն և ընկերասէր ընտելասէր մանէր զթաղ գուհի զիւր ամուսին՝ ի խարոյկ հրոյ՝ աւուրս ողջոյն, ամենեցուն յայտնի գոլով զի և անհնարին սիրով սիրէր զկենակիցն, ոչ բռնաւոր զազանամիտ ասելի էր զնա, այլ համարել զմիւսն ի մեծ և ի քրէականս ինչ յանցանս անկղեմացեալ, վասն որոյ և այնպիսի կտտանաց պարտական եղեալ։ Այսպէս իմասցուք և զԱստուած, որ արդարութեամբն տանջէ երկար և սաստկապէս զհոգիս, յորս գթայ անճառելի սիրով։ Արդ եթէ Աստուած ոչ է, և չէ բռնաւոր, յայտ ուրեմն է զի մեղք՝ անհնարին չար և զարշելիք են։

Այո, արգարեւ, ո՞վ եղբայր, կամ հարկ էր Աստուծոյ լինել անգութ բռնաւոր, որ քա՜ւ լիցի, անմարթ է, և կամ մեծապէս ատելիք են նմա՝ թեթեւ և ներելի քո համարեալ մեղքդ. կամաւոր վայրայածութիւնք մտացդ և աչաց, սնապարծութիւնդ, ցասումն, ընդվայրախօսութիւն և նմանք սոցին։ Հաւատաս կարծեմ և դու այսոցիկ, այլ զգուշանաս ոչ ի մեղաց այսոցի։ Հաւատաս թէ փոքրդ այդ մեղք՝ պարտական է քաւարանի, և գործես դարձեալ։ Արդ զի՞նչ լինին հաւատք քո. զի՞նչ խելամտութեանդ։ Ցմեղանչէիր և թեթեւ ինչ՝ եթէ գիտէիր ստուգիւ՝ զի վասն այնր արկանելոց են զքեզ ի հնոց հրոյ ի հրապարակի. և գիտելով չափ՝ զի վասն այնր հանդերձեալ կայ տանջողագոյն հուր քաւարանին՝ ոչ զանգիտես, ոչ ի բաց կաս ի չար սովորութենէդ։ Ո՜հ, անմրտութեանդ, գոչէ Սուրբն Օգոստինոս, երկնչիս ի հրոյն և ոչ զանգիտես ի մեղաց։ Արդարեւ զարմանաց և ապշութեան իրք են. հաւատալ քաւարանի, և դատապարտութեան ներելի մեղաց անգամ, և զի սրբազան հոգիք իսկ տանջին անդ վասն թեթեւ յանցուածոց, և ո՞չ զգուշանալ ի մեղանչելոյ. ոչ միայն ոչ հոգալ՝ ի քաւել զյառաջագոյն գործեցեալսն, այլ և օր աւուր յաւելուլ ի նոյնս, առ փոքր, առ ոչինչ մի գրելով զպարտաւորիչսն անհնարին հրոյ։ Խոտեմք զհերետիկոսս՝ որք ոչ ընդունին զհաւատս քաւարանի, և ոչ ինչ ընդհատ ի նոցանէ կեամք անիծոյթ. կամ չառնումք ի միտ, կամ ոչ յիշեմք ստէպ, զի մեղք ներելիք՝ յետ մահուշափ մեղաց մեծագոյն չարիք են յաշխարհի, վասն որոյ և հարկ է մեզ զգուշանալ. — Աստուած՝ վրէժխնդիր սաստիւ արդարութեան

դատէ զմեղուցեալն դառն տանջանօք, ապա անկ է մեզ խորշիլ ի մեղաց անտի, նաեւ ի փոքունց. զի զայս ուսուցանեն մեզ հաւատք. զայս ազդէ մեզ և խիղճ մեր։ Հարկ է ապա ծնուցանել ի քեզ սոսկումն և ատելութիւն և փոքունց մեղաց. և այժմէն քննելով որք և որպիսիք ունակացեալք են ի քեզ, կամ զորս չարագոյնս համարիս յաչս Աստուծոյ, զուն գործեսջիր զգուշանալ նոցին, և ուղղել զքեզ։

Առ այս յանկագոյն հնարք եղիցին քեզ, օրըստօրեայ քննութիւն խղճի մտացդ. ստէպ կրկնել յաւուր զառաջադրութիւնդ առաւօտին։ Մեռայց քան մեղայց. զգուշացայց և ի ներելի մեղաց, մանաւանդ յայսմանէ (...). — յաճախ խոստովանութիւն և բարւոք խոստովանութիւն նաեւ ներելի մեղաց, զգուշութիւն յառթէ մեղացն և որպիսի և դէպք. (եթէ անձն իցէ և եթէ անանձն). նախահոգութեամբ ձեռն արկանել յոր և է գործ, և ոչ ստունգանել ազդմանց խղճի մտաց, նա մանաւանդ անսալ և հետեւել՝ որպէս թելադրութեան հրեշտակի պահպանողի. ըղձալ և բաղձալ սիրել զսրբութիւն, և ատել ստուգապէս զհակառակն սրբութեան. մինչեւ կարող լինել ասել ընդ Ս. Ասելմոսի, Տէր, եթէ տեսանէի աստի հնոց բորբոքեալ, և անտի մեզս ինչ ներելիս, ընտրէի արկանել զիս ի հուրն քան հաւանել մեղացն։

Գ. ՊԱՐՏՔ ՔԱՀՈՒԹԵԱՆ ՊԱՏՈՒՀԱՍԻ ՄԵՂԱՑ

Երկուց իրաց պարտական և կարօտ է հոգի մեղուցեալ. քաւութեան յանցանացն և թողութեան պատուհասի նոցին։ Հարկ է զմին հատուցանել առ արդարութիւնն անաչառ, զմիւս՝ ժառել յարգարադատ ողորմութենէն. թէպէտ և հաշտեսցի Արարիչն ընդ արարած իւր, այլ ոչ ընկալցի զնա ի գիրկս իւր, մինչեւ ոչ տեսցէ զնա ամենեւիմբ սրբեալ յամենայն արատոյ. քանզի, որպէս վկայեաց տեսանողն քաղաքին Աստուծոյ, «Ոչ մտցէ ի նա ամենայն պիղծ և ստուգութիւն»։ Հարկ է հոգւոյ՝ հատուցանել զպարտս ապտեղութեանն վշտակրութեամբ, կամ ի կենցաղումս կամ յանտի կեանս. «Ամէն ասեմ քեզ, ոչ ելանիցես ի բանտէն անտի» (քաւութեամբ), մինչեւ ոչ հատուցանիցես զյետին ընիոնն»։ Արդ զի այնքան ահեղ և սաստիկ տեսաք զկսկիծ քաւարանին, չիցէ՞ մեզ օգտաւէտ՝ վճարել զսակ հարկի պարտեաց մերոց՝ մինչ դեռ եմքս ի կեանս յայս։ Քանզի չիք հնար զերծանելոյ անվճար. խոստովանութիւն բարի՝ քաւէ զպարտիս յանցանացն, այլ ոչ և զպարտս պատուհասի յանցանացն. և պարտք պատուհասին՝ արատ և բիծ է հոգւոյ, որով չէ մարթ մըտի աղագս գտանել յարքայութիւն երկնից. կայ մնայ արդ ընտրել՝ ո՞ւր լաւ իցէ կրել զտոյժ պատժոցն և ազատ և համարձակ լինել առաջի Աստուծոյ։

Ոչ ոք երկբայիցի եթէ դիւրագոյն է աստստին յուղղոջ կենցաղոյս իրաւախոհ լինել ընդ ոսոխին, քան ի սաստկապահանջն յայն անկանել բանտ քաւարանի, ուր դառնագառն են տագնապքն և երկարագոյնք անդ մի ժամ տանջանաց, ասէ հեղինակն Նմանութեան, ծանրակիր է քան զհարիւր ամ տառապանաց ի վերայ երկրի։ Անհնարին տագնապ էր մեզ կրել ցաւ ատաման զամ մի կամ երկուս հանապազօր, այլ ժամն այն քաւարանի՝ ցաւագին եւս է. և եթէ փոխանակ միոյ կամ երկուց ամաց՝ հասանէր դարս ողջոյն կրել ցաւս յամենայն մասունս մարմնոյ, տակաւին փոքր էր քան զժամն այն հանդերձեալ բանտին։ Եւ արդ չիցէ՞ անմտութիւն և թշնամութիւն անձամբ անձին՝ անփոյթ առնել յայժմուս՝ յանտի կեանսն թողուլ զհատուցումն պարտուց պատուհասին. և իբրեւ զպարտապանն բիւր քանքարոյ ոչ ունելով ինչ հատուցանել աստէն՝ արկանիլ յայն բանտ՝ մինչեւ հատուսցին ամենայն պարտք լի բովանդակ։ Եթէ այժմէն փոյթ և պէտ առնիցես, չատասցի դատաւորն քո և միով քանքարաւ. իսկ եթէ յայն տեսան դատաստանի քարշիցիս տալ համարս՝ բազմապատիկ և անպակաս պահանջիցիս։ Մեծի անիմաստութեան է արդարեւ կամելն զիջուցանել զսրտմտութիւն դատաւորին՝ ի բանտ մտանելով, և անթերի, և տոկոսեօք իսկ վճարել անդ զպարտսն, մինչդեռ սակաւուք մարթ էր աստէն հաճել զնա և հանգչել։ Ո՞ ոք չառնոյր յանձն՝ մտադիւր վճարել դանկ մի առ պարտատէրն՝ որ այնու չատանայր և թողոյր նմա զբովանդակ պարտուցն գումար։ Եւ առ իմէ՞ ոչ առնիցեմք այսպէս, մինչ հնար է փոքու իւիք յամենայն պարտուց յանցանաց թողութիւն գտանել. — զիա՞րդ որ յայլ ինչ իրս այնքան սրատես եմք՝ կուրանամք յայսմ կարեւոր օգտի շահու մերոյ։ Օ՜ն անդր, թօթափեսցուք զկեանն, չիցէ՞ մեզ օգտաւէտ՝ վճարել զսակ հարկի պարտեաց մերոց՝ մինչ դեռ եմքս ի կեանս յայս։ Քանզի չիք հնար զերծանելոյ անվճար. խոստովանութիւն բարի՝ քաւէ զպարտիս յանցանացն, այլ ոչ և զպարտս պատուհասի յանցանացն. և պարտք պատուհասին՝ արատ և բիծ է հոգւոյ, որով չէ մարթ մըտի աղագս գտանել յարքայութիւն երկնից. կայ մնայ արդ ընտրել՝ ո՞ւր լաւ իցէ կրել զտոյժ պատժոցն և ազատ և համարձակ լինել առաջի Աստուծոյ։

Ոչ ոք երկբայիցի եթէ դիւրագոյն է աստստին յուղղոջ կենցաղոյս իրաւախոհ լինել ընդ ոսոխին, քան ի սաստկապահանջն յայն անկանել բանտ քաւարանի, ուր դառնագառն են տագնապքն և երկարագոյնք անդ մի ժամ տանջանաց, ասէ հեղինակն Նմանութեան, ծանրակիր է քան զհարիւր ամ տառապանաց ի վերայ երկրի։ Անհնարին տագնապ էր մեզ կրել ցաւ ատաման զամ մի կամ երկուս հանապազօր, այլ ժամն այն քաւարանի՝ ցաւագին եւս է. և եթէ փոխանակ միոյ կամ երկուց ամաց՝ հասանէր դարս ողջոյն կրել ցաւս յամենայն մասունս մարմնոյ, տակաւին փոքր էր քան զժամն այն հանդերձեալ բանտին։ Եւ արդ չիցէ՞ անմտութիւն և թշնամութիւն անձամբ անձին՝ անփոյթ առնել յայժմուս՝ յանտի կեանսն թողուլ զհատուցումն պարտուց պատուհասին. և իբրեւ զպարտապանն բիւր քանքարոյ ոչ ունելով ինչ հատուցանել աստէն՝ արկանիլ յայն բանտ՝ մինչեւ հատուսցին ամենայն պարտք լի բովանդակ։ Եթէ այժմէն փոյթ և պէտ առնիցես, չատասցի դատաւորն քո և միով քանքարաւ. իսկ եթէ յայն տեսան դատաստանի քարշիցիս տալ համարս՝ բազմապատիկ և անպակաս պահանջիցիս։ Մեծի անիմաստութեան է արդարեւ կամելն զիջուցանել զսրտմտութիւն դատաւորին՝ ի բանտ մտանելով, և անթերի, և տոկոսեօք իսկ վճարել անդ զպարտսն, մինչդեռ սակաւուք մարթ էր աստէն հաճել զնա և հանգչել։ Ո՞ ոք չառնոյր յանձն՝ մտադիւր վճարել դանկ մի առ պարտատէրն՝ որ այնու չատանայր և թողոյր նմա զբովանդակ պարտուցն գումար։ Եւ առ իմէ՞ ոչ առնիցեմք այսպէս, մինչ հնար է փոքու իւիք յամենայն պարտուց յանցանաց թողութիւն գտանել. — զիա՞րդ որ յայլ ինչ իրս այնքան սրատես եմք՝ կուրանամք յայսմ կարեւոր օգտի շահու մերոյ։ Օ՜ն անդր, թօթափեսցուք զկեանն

ղեւանս խանգարիչս տեսութեան հոգւոց, և փութասցուք այժմէն հատուցանել սակաւուք՝ զոր պարտիմքս Տեառն մերոյ, զի մի՛ հուր քաւարանին անխնայ պարտաւոր առնիցէ զմեզ:

Որո՞վ իւիք հնար իցէ առնել հատուցումն. – գիտեն ամենայն բարեպաշտօնք, նախ, զապաշաւանս և զզջումն ի սերտ սրտէ, և ի վերայ այնր՝ զամենայն ազգ գործոց ապաշխարութեան, մանաւանդ զկամաւոր ինչ վշտակրութիւն, և մերձելութիւն, զհամբերութիւն ի վիշտս և ի սպասու պաշտաման, զպէսպէս գործս ողորմութեան, հանդերձ հասարակաց ծանօթ աղօթիւք և պահովք. և ի վերայ այսոցիկ՝ ընդունելութեամբ ներողութեանց չնորհելոց յեկեղեցւոյ: Զայսոսիկ առաջի ունելով հարց ցանձն քո, կամիցի՞ս յանձն առնուլ աստէն զայսպիսիս՝ և կանխաւ հատուցանել զպարտս քո, եթէ թողուլ ի հանդերձեալն ատեան անպակաս հատուցման. յիշելով և զայն, զի ոչ է դիւրին զերծ գտանել ի քաւարանէ և կամ փոքու իւիք զերծանել անտի. առանց փորձելոյ ի քրայս վշտաց և ապաշաւանաց, և կամ ի հուր քաւարանի՝ ոչ է մարթ վերանալ յերկինս: Սակաւք, և յոյժ սակաւք ոմանք իցեն՝ որ ոչ մտցեն ի բանտ անդր. հազիւ արդարք ոմանք, ասեն աստուածաբանք, չնորհիւ ողորմութեանն Աստուծոյ՝ ոչ պարտաւորին քաւարանի. և եթէ հազիւ զերծանի արդարն՝ զի՞նչ լինիցի մեղաւորին: Զի՞նչ լինիցի և քեզ՝ որ ընթեռնուսդ և լսես, և ինձ՝ որ գրեմս և կարդամ. – խիթամ, մանաւանդ թէ հաւանեալ եմ, եթէ անկցուք և մեք ի լիճ այնր հրոյ, հաշեսցուք հառաչեսցուք և մեք՝ յանտանելի տապս հնոցին քաւութեան. զի ոչ մտցէ յերկինս ի վեր՝ ամենայն պիղծ և սուտիւն, և ոչ մի հոգի՝ մինչչեւ սրբեալ արդարադատ չափովն, մինչչեւ չնչեալ արատոյ և փոքունց և ներելեացն մեզաց՝ որովք վարակեալ իսկ եմք, բայց եթէ գտանիցեմք չնորհս աստէն ի կենցաղումս հատուցանելոյ զպարտս պատուհասի յանցանաց մերոց:

Եւ արդ, ընդէ՞ր հեղգաս, հոգի իմ. հուր անխնայ տուչորիչ հանդերձեալ կայ քեզ, և յոյժ մեծի հաւանութեան է, զի կիցեալ ծախեսցիս անծախապէս: Մեղար, թերեւս արժանի եղեր և չնորհի քաւութեան մեզացդ, այլ մնան քեզ պարտք ժամանակաւոր պատուհասի, զոր մարթ է քեզ և յաւելուլ և կրկնապատկել նորանոր մեղօք, զանցառութեամբք, ձանձրութեամբք, սնոտի յուսով, զի չասացից թէ և յանդգնութեամբ:

Ասիցես դու՝ յուսալ արագ արագ զերծանել՝ աղօթիւք և նպաստիւք բարեպաշտից. – այլ լաւ եւս է քեզ զգոյշ լինել, գուցէ վայրապար կամ շատ յուսայցես ի ձեռն այլոց հնարել քեզ հնարս ազատութեան: Ոչ գիտես որչափ և ցորչափ աղօթիցեն վասն քո՝ յետամնացքն. և ոչ՝ եթէ հաճեսցի՞ Աստուած չնորհել քեզ զարգիւնս աղօթից նոցա: Ո՞ յիշեսցէ զքեզ առ յապա, լսես ի զրոց անտի Նմանութեանն, և ո՞ աղօթեսցէ վասն քո. մի՛ յուսար ի բարեկամս քո և ի մերձաւորս, քանզի արագ՝ քան զոր կարծեսդ՝ մոռասցին զքեզ. եթէ դու այժմէն զքեզ ոչ հոգաս, ո՞ հոգայցէ զքեզ յետ մահուան քո: Ո՞չ լաւ իցէ քեզ այժմէն պէտ առնել անձին, և յառաջ քան զելս կենաց՝ առաքել թոշակ գործոց բարեաց յայն աշխարհ, քան յուսալ յօգնութիւն այլոց: Փութա, եղբայր, ասդստին առնել զոր կարեսդ. այժմէն լաց և ողբա զմեղս քո, զի յայնմ աւուր ահեղ ատենին՝ հաղորդ գտանիցիս աներկեւանութեան Սրբոցն. այժմէն մատո աղօթս և պաղատանս, որպէս զի արժանի լինիցիս ներելոյ թողութեան, և համարձակ լիցի հոգիդ յելս կենաց՝ մտանել առ Աստուած. այժմէն տանջեա զմարմինդ, զի աներկիւղ լիցիս յերկեղի պահուն. տար համբերութեամբ վշտաց ինչ փոքունց, զի ի ծանունցն զերծանիցիս վշտաց. քանզի որքան խնայես քեզ այժմիկ և չնորհուկս առնես մարմնոյդ, այնքան դառն լիցի քեզ պատուհասդ, և զանձիցես նիւթ հրոյ: Զարաշարխաբէ զմեզ անկարգ սէր անձին և մարմնոյ:

Եւ արդ չիցէ՞ զգօնութեան ընտրել աստ ժամ մի վշտակրութեան և ցաւոց՝ քան ամիսս ի հուր քաւարանի. յանձն առնուլ աստանօր զապաշխարանս սահմանեալս յեկեղեցւոյ, կամ սահմանելով անձամբ անձին, քան անդ ընդ երկար ժամանակ տապիլ և տուչորիլ: Չիցէ՞ իմաստութիւն սակաւ ինչ արտասուօք զայնքան անհնարին հրատ չիջուցանել: Ո՞հ, քանի՞ այլազգ քան յայժմուս՝ եղիցին խորհուրդք մեր ի քաւարանի անդ. կամ քանի՞ այլօրինակ վարէր կեանս հոգի՝ ելեալ ի հրոյ անտի և վերադարձեալ ի կեանս և յերկիր: Որպիսեա՞ց անտանելի գրելոց վշտաց՝ ո՞չ կամակար համբերէաք յերկրի՝ եթէ և մեզ չնորհեալ լինէր զերծանել ի քա

ւարանէ և կատարել աստանօր զպարտս պատուհասին։ Ար-
դարեւ ոչ միայն անմիտք՝ այլ և անգութք եմք անձամբ յան-
ձինս՝ եթէ անփոյթ լինիցիմք արդ զգործովք, վասն որոց ի
զուր լացցուք դառնապէս յետ մահու։ Գիտեմք յայտնապէս՝
զի մեղաք. լսեմք ի հաւատոց՝ եթէ անհրաժեշտ հարկ է քա-
ւութեան՝ ի թողութիւն մեղայ. և խիղճ մեր վկայէ՝ զի չեւ
եւս է մեր հատուցեալ զպարտիսս։ Եւ ի՞մ իմիք յուսայցեմք
առ յապայն։ Աղէ՛, ուշ ի կուրծս արասցուք, փութասցուք
մաքրել զմեզ ի մեղաց. զի մահ առ դուրս կայ, և մերձեալ
է քան զոր կարծեմքս. և ո՞ գիտէ ժամանիցեմք ի միւս եւս
ամ։ Եւ եթէ ոչ այժմէն բուռն հարցուք յապաշաւ և յուղ-
ղութիւն՝ զի՞նչ ուրեմն կամիցիմք. – հանապազորդեալ ի մեղս.
օր ի յօ՞ր առնել զապաշխարութիւն, և փոխանակ թեթեւու-
թիւն առնելոյ՝ պարտս ի վերայ պարտո՞ւց յաւելուլ։ Կարի-
ցե՞մք աներկմիտ լինել՝ եթէ բարւոք կատարեցաք զամենայն
խոստովանութիւնս մեր. եթէ գէթ միանգամ շահեցա՞ք
զշնորհս լիակատար ներողութեանց. վստա՞հ իցեմք եթէ հա-
տուցաք զպարտիս միոյ մեղայ. – և եթէ հասցէ մեզ այսօր
մեռանել՝ քանի՞ արդեօք երկարատեւ լիցի մեզ արգելան քա-
ւարանին. քանի՞ դառն և ծանր տանջանք։ Սոսկամբ և
քստմնիմբ յիշատակաւ հրոյն և տանջանաց, այլ, աւա՜ղ, զի
ոչ ըստ սոսկմանս և զգաստանամբ և զգուշանամբ ի մեղաց
և ի հանապազօրեայ յանցուածոց։

Սթափեսցուք ուր ուրեմն, և գուն գործեսցուք կեալ այն-
պէս, զի ի հասանել մահուն՝ առաւելուցու յոյս քաղցրու-
թեան քան դառնութեան դատաստանին. սրբեսցուք ապաշ-
խարութեան արտասուօք զբիծս հոգւոց մերոց, զի մի գտցէ
ի նոսա ճարակ հուր քաւարանին. ուղղութիւն վարուց մե-
րոց ջնջան լիցի այսուհետեւ յառաջագոյն գործեցելոցն մե-
զանաց. և խորհրդածութիւնքս ի վիճակ հոգւոյ իսկ և իսկ
յետ մահուն՝ մի ի վարանս, այլ յօգուտ լիցի բարւոք մե-
ռանելոյ, և փարատեսցէ զերկիւղ հանդերձեալ պատու-
հասին։

Աստուած իմ, դատաւոր զերազոյն և վրէժխնդիր մեղաւո-
բաց, հաւատամ աներկմիտ՝ զի յետ մահուան կայ մնայ ինձ
ի դատ կոչիլ. և զի՝ եթէ ոչ այժմէն ի կեանս յայսոսիկ քա-
ւեցիս զմեղս իմ՝ ապաշխարութեամբ, հարկ է ինձ քաւել ի

քրայս քաւարանի անհնարին պատժօք, որոց և փոքրագոյն՝
մեծ է քան զամենայն տանջանս երկրի։ Հաւատամ զի և մեղք
մի փոքր՝ մեծ է քան զամենայն չարիս աշխարհի. վասն այ-
նորիկ և յամենայն սրտէ զղջանամ և ցաւիմ զի մեղայ քեզ.
և պաղատիմ առ գութ ողորմութեանց քոց, տալ ինձ շնորհս
հատուցանելոյ ի կենցաղումս զպարտիս յանցանաց իմոց, և
մի՛ եւս յաւելուլ ի նոսին, զի ի հասանել մահուան՝ մի՛ խռո-
վեցայց յահէ անաչառ դատաստանաց քոց, և մի՛ ի սաստ-
կութենէ տառապանաց քաւարանին։

Դ

ՆԿԱՏՈՒՄՆ ՄԱՐՄՆՈՅ
Ի ԴԱԳԱՂԻ ԵՒ ԴԻԱԿԱՆ Ի ԳԵՐԵԶՄԱՆԻ

Մինչդեռ կեամքս ի վերայ երկրի՝ մարմին մեր աւիթ է
մեզ բազմապատիկ փորձութեանց, և յաճախ առաւելագանց
խնամոց, որով և խափան լինի փրկութեան հոգւոյն, տե-
յորժամ յաւիցիմք մտօք ի նա՝ յետ մեկնելոյ հոգւոյն, տե-
սիլ նորա փոխի յաւիթ բարի բարի խորհրդոց և ի հզօր
յորդորակ բարիոք մահուան։ Ծանր և դառն թուի մարդոյ՝
ելանել ի կենաց և յաշխարհէ քանզի յարեալ է ի բարիս, ի
վայելս և յիրաս աշխարհի, որոյ սէր՝ արգել մեծ է բարիոք
մեռանելոյ։ Երիս մեծամեծ հրապոյրս կորստեան մարդկան՝
նշանակէ Առաքեալն Յովհաննէս. «Ցանկութիւն աչաց, ցան-
» կութիւն մարմնոյ և ամբարտաւանութիւն աստի կենաց »։
Որոց ներհակաբար՝ չիք ազդողագոյն հնար զգուշութեան և
փրկութեան, քան զնկատումն մարմնոյն ի դագաղի, որ տայ
արհամարհել և առ ոչինչ գրել զինչս և զփառս աշխարհի.
և զնկատումն դիականն ի գերեզմանի, որ դարշելի ցուցանէ
զցանկութիւն մարմնոյն, զախտն ստորաքարշ, միանգամայն
և զսերտագոյն կռուեալ յանձին, որոյ այնքան մեծ են չա-
րիք և հարուածք՝ որչափ զի կակուղք և համբոյրք երեւին.
և այնքան մթագնեն զմտացն աչս՝ մինչեւ յերկրաւորս միայն
խնդրել և գտանել զհաճելիսն, և երկնից անճառ և անսպառ

վայելչութեանցն անտեսող և անծանօթ մնալ։ Այլ որ գամ մի նկատիցէ զինքն յետ մահուն, զմարմին իւր ի դագաղի և ի գերեզմանի, ոչ միայն գարշիցի և խորշիցի յընչից և ի փառաց աշխարհի և ի հեշտալեաց կամ ի ցանկութենէ մարմնոյն, այլ և հաստատագոյն մտօք ցանկանայցէ և կրթիցի ի տենչ և ի սէր երկնիցն բարեաց. որովք ոչ եւս ի գայթակղութիւն լիցի նմա մարմինն, այլ յառիթ մարզելոյ յառաքինի ճգունս, առաջի ունելով զօրինակ կատարածի կենացն և որ ինչ յետ այնորիկ, և հանապազ հոգալով ճողոպրել զանձն յունայնութեանց կենցաղոյս, յիրաց նիւթականաց, ի կարծեցեալ փառաց և պատուոյ, և ի հրապուրանաց հեշտալեաց զգայութեանցն, որպէս զի վստահագոյն լիցի ի ժամու մահուանն. և քաջայոյս ի ժառանգութիւն հանդերձելոց իսկական և սրբազան բարեաց։

Ա. ՄԱՐՄԻՆՆ Ի ԴԱԳԱՂԻ

Ա. Բազում անգամ իցէ մեր տեսեալ զկանխեալսն քան զմեզ յանդարձական ճանապարհն՝ եղեալս ի դիրս վերջին հանգստեան. համարեսցուք այսօր զմեզ ինքն տեսանել ի նոյն դիրս՝ յայն ինչ մեկնել հոգւոյն, որպէս թէ նա ինքն գամ մի առկայացեալ՝ հայիցի ի մարմինն՝ յորմէ ել և ելիք, և ոչ եւս իւր ինչ համարիցի զայն՝ մինչեւ ցօր հասարակաց յարութեան։ Ցեսցէ զնա տակաւին՝ որպէս խուն մի յառաջ քան զանջատելն ի նմանէ, այլ հանգերձեալ ի վերջին հանգիստ և ի յուղարկաւորութիւն։ Հանգերձեալ կայ արդարեւ, այլ ոչ որպէս յառաջն երբեմն. թուի ճանապարհորդ, այլ ոչ ի սահմանս երեսաց երկրի, և մինչչեւ անկեալ յուղին՝ զյենտին ժամ դադարել ի տանն՝ յոր եկաց ամս երկարս, և յորմէ հրաժարէ արդ, և ոչ եւս դարձցի։ Ցուպ գաւազանի օգնութեան նմա՝ խաչն որ ի վերայ լանջացն եղեալ, և ուղեցոյց ճրագունք երկու աստի և անտի. ամանիկ մի օրհնեալ ջրոյ, և այլ ինչ դուզնաքեայ նշանակք վիճակի և աստիճանի՝ որով ճանաչիւր ի վերայ երկրի. թերեւս և սնոտի ինչ սեթեւեթք՝ զոր յետին ցոյց գորովոյ յետամնացիցն՝ դիցէ զանզգայացեալ մնացուածով սիրելւոյն և ընտանւոյն. և ոչինչ այլ յաթենայնէ՝ զոր ունէր կամ որով վարէր ի վերայ երկրի. և

եթէ ընչեղ և փարթամ ոք եւս էր՝ ոչ ինչ թողցի ընդ իւր, և չնչինքն ինչ որ դիցին ի դագաղին՝ կամ ընդ նմին անհետացցին, կամ նա յառաջ քան զնոսին։

Եւ զի հարկ կամ օրէնք են ոչ անծածկոյթ աւանդել ըզմարմին ադամածնաց՝ ի դիրս յետին, անարգն և հնոտիք ի զգեստուց շնորհեսցին նմա, և յամենայն սպասուց բարեկեցիկ փափկացողին ոչ աւելի քան զմին զայն հանդերձիկ. որպէս և ոչ յամենայն ընդարձակ բնակարանաց՝ աւելի քան զվեցամասնեայ տախտակս, որք հազիւ բաւեն ամփոփել ըզմարմինն և կափուցանել իսպառ յաչաց։ Եւ յետ մ՞ինր. – «ի մեռանել մարդոյ, ասէ Իմաստունն Յեսու, ժառանգեսցէ » զսողունս, և զճճիս և զորդունս ». և որ ի սոցանէ ներգործութիւնք սպասասէր մարմնոյ՝ յայտ ամենեցուն է։... Եւ ո՞ւր մնացին այնքան նիւթք և գոյք և ինչք՝ զորս կարեւորս և պիտանիս համարէր դա, յորս զակատեալ իմն էր, յորոց զժուարէր ընդ պակասելն, և յաւելուլ իսկ նկրտէր կամ ախորժէր. – ո՞ւր այս կամ այն ինչ՝ զոր ի կիր առնոյր յայնքան ամաց հետէ, և յոր հարեալ էր սիրով՝ որպէս ի կենդանի ինչ և ի կենդանիս անբանս՝ որպէս ի բանաւորս և յանձնաւորս. – ո՞ւր համարեալ և անուանեալ հեթեթանք կենաց, զարդք և նիւթք զբօսանաց և վայելչութեան, որովք կամէր կամ կարծէր մոռանալ զպանդխտութիւնն յաղցաւոր երկրի, և խաբել զմարմինն ցաւակիր։ Ահա չկայ չմնայ ինչ նմա ի դագաղի անդ. և ոչ իսկ որ ինչ եղաւն ի նմին՝ յառաջին կերպարանս մնայ, այլ եղծեալ լուծեալ պղծեալ ամենայն՝ որ տեսանիւրն յիշանել կափարչին ի վերայ նորա։ Մարմինն այն գգուեալ և պարարեալ՝ ճարակ ճճեաց եղեալ, և հոգին վասն վայրապար խնամելոյ զնոյն՝ տագնապեալ ի քաւարանի։ Վա՜յ մեծատանց որ զանձեցին յերկրի զանձս՝ զոր ասպականեն ցեցք և ուտիճք, ըստ քրիստոսեան յանդիմանութեան. Վա՜յ ձեզ, որ ընկալայք աստէն գմխիթարութիւն ձեր սնոտի սեթեւեթիւք, յորոց և չիւղ մի ոչ կարացէք բառնալ տանել ընդ ձեզ, և թողէք՝ թէ կամաւ թէ ակամայ՝ ծանօթ կամ անծանօթ ժառանգաց կամ յափշտակողաց, որք նոյնպէս թողցեն այլոց յետնոց, եթէ մնայցէ ինչ հաստատուն։ Բանի՞ իմաստութեամբ գործէր որ լսէր Քրիստոսի, և զանձէր զանձս յերկինս, ուր չիք ցեց և ուտիճ ապականիչ, այլ մանաւանդ

տոկոսեօք յաւելուած ընչից զոր առ սէրն Աստուծոյ եթող ելիք, հրաժարեալ սրտիւ յամենայնէ՝ որ յաշխարհիս է և որ ըստ աշխարհիս։

Ահաւորագոյն եւս է ազգարարութիւն Քրիստոսի. «Քանի՞ » դժուարին է մեծատանց՝ որ ինչս ունիցին՝ մտանել յար- » քայութիւն երկնից». և թէ դիւրին է մալխոյ ընդ ծակ ասղան մտանել՝ քան նոցա ընդ դրունս երկնից։ — Այլ ո՞վ իցէ մեծատուն կամ ընչեղն. – Աբրահա՞մ, որ 300 ընդոծինս ունէր. կամ Յո՞վբ, որոյ խաշինք 7000 և ուղտք 300, և լուծք եզանց 500. և կամ Դաւիթ՝ որ կուտեաց զոսկի և զարծաթ որպէս զմոլաթզենիս ի դաշտի. – Ոչ սոքա և ոչ որք ըստ սոցա՝ գիտացին զերկիր օթեվան պանդխտութեան, և դաւառ բնակութեան յերկինս խնդրէին. – այլ այնոքիկ՝ որք թէ- պէտ աղքատք յաղքատաց՝ այլ հանապազ հոգան և հաշին վասն շահու ընչեանոյ միոյ, կամ ի ընչինն զոր ունին՝ յա- րեալ կան որպէս ի մասն ինչ էութեան իւրեանց. և այնո- քիկ մանաւանդ՝ որոց ուխտիւք յանձն առեալ զաղքատու- թիւն Քրիստոսի՝ ըստ աշխարհայնոց և թերեւս առաւել քան զաշխարհիկս սիրեն զսակաւն և զփոքրիկն զոր չէ արժան և ունել իսկ անուանել, այլ առ հարկի վարիլ նովիմբք, ջե- ռեալ յիրաց ինչ համարի։ Առ ի կապել և արգելուլ զթռչուն, ասի յառակս, չէ հարկ պարանի կամ առասանի, շատ է և թել մի նուրբ և բարակ. այսպէս մարթէ և փոքու իւիք կաշկանդիլ և գերիլ սրտի՝ որոյ ի դէպ էր յամենայնէ թօ- թափեալ հանապազ մարզել ի թեթեւաթռիչ վերացմունս։

Աղէ, հայեաց շուրջ զքեզ, մանաւանդ թէ ի ներքս ի քեզ, չի- ցե՞ն քեզ աւելորդ իրք, զորս փափագես պահել. կամ իղձք՝ ու- նելոյ զայնպիսիս. կամ դժուարիցի՞ս ի բաց բարձման նոցին և ի կորստեան. – կարիցե՞ս ասել ընդ Պողոսի, եթէ «Ոչ ինչ » բերաք յաշխարհ, և ոչ ինչ տանել կարասցուք». և զոր ու- նիմս՝ որպէս թէ ոչ ունիցիմ. և զի աղքատ կոչիմ ըստ Քրիս- տոսի աղքատութեան, հարկ է թէ սիրիցեմ զնոյն աղքատու- թիւն, և որչափ իմովսանն է՝ աղքատաձեւ յարդարիցեմ և զկա- րեւորսն ի դարման կենաց և ի պիտոյս գործոց։ Հարցցուք զնիզձ մտաց. յորժամ ելցէ հոգի իմ ի մարմնոյս և ի սենեկէ աստի՝ ո՞րպէս փափագէր թէ կատարեալ էր զուխտ աղքատու- թեանն. զի՞րդ յետին ակնարկութեամբն տեսանէր զկահսն՝

զորս վայելուչս յարդարեաց. — խնդայցէ՞ զի յայնպիսիս վայելեաց, և կամ զի յաջողեաց նմա առնել կամ տալ առնել ծախս վասն դիւրի, զբօսանաց և զարգուց։ Արժան է անա- չառ մտօք քննել զայսոսիկ, քանզի յոյժ զօրաւոր է անձնա- սիրութիւն ի խաբել և ի խաւարեցուցանել յայսմ մասին զտեսութիւն ներքին. առ որ քաջ խորհրդական և զգուշացու- ցիչ է մահ և դագաղ։ — Եւ զի անհրաժեշտ կապտեն սոքա յամենայնէ, թէ կամիցի ոք և թէ ոչ, չիցէ՞ իմաստութիւն և ազնուութիւն՝ յառաջագոյն հրաժարելն յամենայնէ, նուի- րել տըւչին զտուրս նորին, և զոր ունիմք և զոր ոչն ունիմք. իւրովք կամօք բաշխել՝ զոր կորզելոց է յափշտակիչն. և յի- շելով զգերագոյն բանն Տեառն, եթէ «Երանելի՞ է մանաւանդ » տալն քան առնուլ», եթէ հնար է զօր ամենայն առնել ի սրտէ զնուիրումն և զոհ ամենայն ընչից՝ որով վարիմքս և որովք հարկ իցէ վարիլ, և զգուշանալ ի ստանալոյ զաւելին և զոչն կարեւոր, եւս առաւել ի հնարելոյ թոյլտուութեամբ մեծաւորաց և հոգաբարձուաց ունել զայնոսիկ, զի յատենի սրտագէտ դատաւորին՝ ոչ արդարանան այդպիսի հնարագի- տութիւնք։ Բասրելի է և յաչս աշխարհի նա՝ որ թողեալ զաշխարհ, զհայրենիս և զընտանիս և զիշխանութիւն վա- րելոյ զինչս, փարիցի զփոքումբք ի փոքու բնակարանին, և այնքան պնդապէս՝ որքան ոչ աշխարհիկքն զմեծամեծ ընչիւք իւրեանց, և հոգայցէ և ցաւիցի ընդ կորուստ ընչեանացն՝ քան մեծատունք ընդ զանձս իւրեանց. և կամ ոչ չատացեալ ընդ հարիւրապատիկ տուրսն Քրիստոսի՝ չանայցէ փափկա- գոյն եւս կեալ քան զյոլովս ի կարծեցեալ փափկաց աշ- խարհի. և որպիսի՞ դիմօք յանդիման լիցի աղքատացելոյն վասն մեր մեծատունն յաւիտենից, և նախակարգողին զերա- նութիւն աղքատացն հոգւով՝ քան զամենայն երանութիւնս։ — այն՝ որ խոստացաւ տալ զամենայն՝ յերկրի և յերկինս, այնմ՝ որ թողուցու զամենայն զոր ունէրն։ Որոմ ոչ բաւէ Աս- տուած, ասէ Սուրբն Օգոստինոս, յոյժ ագահ է այնպիսին. այսինքն՝ յոյժ ժլատ և կծծի է՝ որ ոչ չատացեալ տրովք Աստուծոյ՝ ինքնին հնարի հայթհայթել վասն իւր, կամ զիւրն ինչ պինդ ունելով՝ ոչ ձեռնարկէ յաստուածատուրսն։ Զիք մեծութիւն մեծ քան զչկարօտանալն և չփափագել իմիք, բայց միայն Աստուծոյ. առանց որոյ, ասէ դարձեալ Սուրբն Օգոս- տինոս, ամենայն ինչ աղքատութիւն է և չքաւորութիւն։

Բ. Ընդ անպիտանութեան ընչից՝ նշաւակէ դագաղն և զուն-
այնութիւն պատուոյ և փառաց աշխարհիս։ Ամենայն շուք
պաշտամանց և հռչակ համբաւոյ՝ որով մեծամտեն և հպար-
տանան մարդիկ՝ խաբէական իմն երանութիւն է, ասէ Սուրբն
Օգոստինոս, և ստոյգ թշուառութիւն, որ յաճախ եղկելիս
գործէ զկարծեցեալսն երջանիկս։ Այն ամենայն պատիւք, սե-
փական շնորհք, իշխանութիւնք, բարձրութիւնք և գահք՝
մերթ յառաջ քան զվախճան կենաց պակասեն և մերթ ընդ
կենաց զրաւին, առ վայր մի սնոտի սոնքանօք ուռուցեալ
զսիրտ, և յոչ ինչ լուծեալ յետ սակաւու միոյ։ Ի մերձենալ
մահուն՝ աշխարհս անցանէ և ամենայն վայելչութիւն նորա,
որպէս ամպ վարեալ ի հողմոյ, որպէս երազ զարթուցելոյ. —
ի նշոյլ յաւիտենականն տունջեան՝ ամենայն համբաւ անշքա-
նայ և խուսափէ որպէս ստուեր. և ամենայն իշխանութիւն
և մեծութիւն կարծիական՝ ջնջեալ ծածկի որպէս գհետս
նաւու ի վերայ ալեաց։ — Ահարկու պաշտօնեայդ արքունի,
և մեծափառ պաշտօնեայդ եկեղեցւոյ. պատերազմողդ գոռ և
յաղթանակող ազանց և աշխարհաց, որոյ հռչակ անուան
հնչէր յոլորտս տիեզերաց և իմաստունք պատգամատուք, ոչ
յընչից և ոչ ի համբաւոյ ինչ իւրեանց կարիցին տանել ընդ
իւրեանս. «Ոչ իցեն փառք նոցա ընդ նոսա», ըստ Սաղ-
մոսերգուին։ Եւ զի՞նչ յաշխարհակալաց անտի հզօրաց և ի
գերափառ քահանայապետաց՝ մնայցէ այժմիկ. — ապ մի հո-
ղոյ. սակաւ ինչ ոսկերք, ասէ Ս. Բեռնարդոս, մնան մեզ առ
ի նոցանէ յիշատակք. ամենայն պայծառութիւն փայլման
նոցա ի վերայ երկրի՝ խաւարեալ ծածկեցաւ ի գուբ գերեզ-
մանին։ «Մահ, ասէ այլ ոմն ի Սրբոց (Պետ. Դամիան), զքով
» իսկ փառացն՝ յայտ արարեալ ծանուցանէ մեզ եթէ քանի՞
անարգ և սնոտի են փառք։

Եւ արդ եկ ո՞վ դու պատուասէր և համբաւասէր, խոնար-
հեաց հայեաց ի դագաղ փառաւորելոյն ի վերայ երկրի. ո՞չ
լսիցես զվճիռն սաստիչ. Մինչեւ ցայդ վայր եկեսցես, և այ-
դրէն խորտակեսցին ալիք։ Տես զտեղի քո, ո՞վ ամբարտա-
ւան. թէ կամաւ թէ ակամայ՝ հասցես և դու ի տապան
այսր, այլ ցայդ վայր, և մի՛ եւս անդրագոյն. անդ խորտա-
կեսցին ալիք հպարտութեան քո. ամենայն պատիւք քո և
փա՞ռք և յոյս՝ անդ հարեալ փշրեսցին. և յայնմ աւուր անց-

ցեն խորհուրդք քո իբրեւ ոստայն սարդի, զոր վերացուսցէ
ծառայ մի ի սրբել զանկիւնս տան։ — Ցաչողեալ իցէ քեզ
արդ ամենայն ինչ, այլ մինչեւ ցե՞րբ. մինչեւ ցե՞րբ տեւեսցէ
հռչակ անուանդ, մեծարանքդ, փառք և պատիւ. — մահ ա-
նակնկալ և յանկարծահաս ի վայրկենի լուծցէ զամենայն կեր-
պարան չքեղ. և որպէս զչեղեալ եղիցիս յետ մահուանդ. «Մա-
» հու մեռանիցիս, ասեն գիրք, և իբրեւ զչուր հեղեալ յեր-
» կիր՝ որ ոչ ամփոփիցի. և յետ այնորիկ եղիցուք որպէս
» զչեղեալք»։ Այսպէս խորհրդածէր Սողոմոն, մեծն այն և
իմաստուն, զորմէ գրեաց պատմիչն սրբազան, եթէ «Մեծա-
» ցաւ քան զամենայն թագաւորս երկրի, մեծութեամբ և
» իմաստութեամբ. և ամենայն թագաւորք երկրի խնդրէին
» տեսանել զերեսս նորա, և լսել զիմաստութիւն նորա՝ զոր
» ետ Տէր ի սիրտ նորա». և նա ինքնին վկայէր զանձնէ,
եթէ «Մեծացայ քան զամենեսեան որ էին յառաջ քան զիս...
» և յաւելի յիմաստութիւն քան զամենեսեան... սիրտ իմ
» ետես բազում իմաստութիւն և գիտութիւն և զառակս».
և խոստովանէր ապա՝ զի ունայնութիւն է և այս ամենայն։
Մեծ է արդարեւ յիշատակ նորա, այլ իբրեւ հզօրագոյն յի-
շատակարան ունայնութեան մեծութեանց. և որպէս զմի ի
ստրկաց իւրոց կայ (եթէ կայցէ տակաւին) մերկ և թափուր
յամենայն մեծութենէ իւրմէ։ Էանց և նա. անցին և անցցեն
ամենայն մեծամեծք երկրի, որոց երբեմն անձուկք թուէին
ծագք աշխարհաց, և արդ ամփոփեալ կան ի սափոր մի փո-
քրատար, հոգացեալք և աճիւնացեալք։

Ի նոյն կայ մնայ և մեզ փոխիլ՝ որպիսիք ոմանք և իցեմք,
համբաւեալք և պանծացեալք։ Զիք խտիր առաջի մահու, և
ոչ ակնառութիւն ի մարդկանէ. ոչ յազնուութենէ և ի հնու-
թենէ տոհմի պատկառէ, և ոչ ի մեծութենէ և ի զօրութենէ.
ոչ ի շքոյ պաշտամանց զլանայ, և ոչ յաթոռոյ վարդապե-
տաց. զմեծ և զփոքր հարկանէ անխնայ, զտէր և զստրուկ,
զգիտուն և զտգէտ. և յորժամ դիցին ի տապանի՝ ոչ զանա-
զանի աճիւն նոցին. և ոչ աւելի ինչ ունին մեծամեծքն, ասէր
զանի աճիւն նոցին. և ոչ աւելի ինչ ունին մեծամեծքն, ասէր
փարեցին Ս. Աւգոստինոս կոնդակեան, բայց առաւել իմն զը-
զուանս։ Զիք զանազանութիւն և հոգւոց նոցա. բայց զի մե-
ծամեծք՝ խստագոյնս դատիցին և պահանջիցին, և ռամկին
առաւել լիցի ներողութիւն ողորմութեան։

Աւա՜ղ մոլորութեանն. խոհականագոյն իմն համարին բազումք դնել ի մտի և ասել, եթէ մահ ոչ ինչէ զամենայն, և բազմաց հոյակապ արանց, փառաւորաց, հզօրաց և գիտնոց՝ դարուց ի դար հնչեն համբաւք, և յետ մահուան իսկ՝ անմահանայ մարդս։ — Այլ զի՞նչ իցէ համբաւ, եթէ քաջ ոք կշռիցէ, կամ ազդիցէ՞ ինչ առ համբաւեալն. թերեւս լսիցի ընդ ծագս երկրի, այլ հասցէ՞ վանգ՝ մի յունկն մեռելոյն. չիցէ՞ նմա ձայն կորուսեալ յանապատի. այնքան շուքք փառաց և իշխանութեանց, և հռչակք և գովք, գործք մեծամեծք, գիտութիւնք և մատեանք իմաստունք ճառեալք և ծաւալեալք, օգնեսցե՞ն ինչ զէթ ժամ մի դիւրելոյ նմա ի քաւարանի, կամ համառօտելոյ զժամանակ արգելանին. նա մանաւանդ, ո՞ գիտէ եթէ վասն որոց համբաւեալ հռչակի նա յերկրի, նոյնք յաւելուցուն նմա տագնապս և պատուհաս յետ մահուանն, ի բանտի անդ քաւութեան, վասն անձնահաճ պարծանացն ի կեանս իւրում, և ինքեան՝ քան Աստուծոյ տալոյ փառս, վասն չարաչար կիրառութեան պարգեւեցելոցն նմա երկրաւոր և մտաւոր շնորհաց, և վասն ինչ ինչ վնասու՝ զոր նոքիմբք անձին կամ այլոց գործեաց։ Զի՞նչ շահ իցէ նմա արդ այնքան առաւելութիւնն և գերազանցութիւն ի միջի նմանեացն, եթէ ամբարտաւանութեան առիթ եղեւ նմա, և գայթակղութիւն ի գնացս լաւութեանց, զի՞նչ օգուտ նմա՝ այլոց ուղղիչն լինել՝ և անձամբ մոլորել. զայլս շահել՝ և զանձն տուժել. քարոզել իսկ և ուսուցանել զճըշմարտութիւն՝ այլ ոչ ճշմարտապէս քրիստոնէական և կրօնաւորական ոգւով կեալ։ Ամենայն ինչ եղէ ես, ասէր, բաղդաւոր ոմն ըստ աշխարհի, որ յարօրոյ և ի խաշնարածութենէ ամբարձաւ յարքունի գահոյս և վայելչապէս թագաւորեաց, ամենայն ինչ եղէ ես, սակայն ահա ոչինչ շահեցայ։

Իսկ ներհակաբար սմա և նմանեացն, զի՞նչ վնաս եղեւ Պօղոսեանց, Անտոնիեանց, Փրանկիսկեանց, և ըստ Առաքելոյն՝ յանապատի մոլորելոց ճգնակիր արանց և քօղածածուկ կուսանաց, հրաժարմունքն ի շքոյ, ի վայելից, ի փառաց, ի գովութեանց աշխարհի. նաեւ ընդ անարդս ի մարդկանէ գրիլ, ընդ խոշորս և ընդ յիմարս իսկ. մանաւանդ թէ ո՞րքան մեծ և ամենամեծ օգուտ՝ սակաւ ժամանակեայ անարգանքն յերկրի՝ վասն Քրիստոսի, և անժամանակ վայելքն

զոր արդ ժառանգեն։ Ասասցե՞ք, թէ մեք անմիտք, զի ըզվարս նոցա մոլորութիւն համարէաք. զի՞արդ համարեցան նոքա ընդ որդիս Աստուծոյ և ընդ Սուրբս վիճակ դոցա։ Զի՞նչ վնաս եղեւ Ղազարու՝ զի որպէս անասուն մի անարգ մերժեալ ի տանէ անկեալ դնէր, կարօտեալ աւուրն պարենի, վիրալից և անօգնական. ո՞չ ապաքէն արդ ի գոգն Աբրահամու մխիթարի նա, մինչդեռ մեծատունն և մեծանուն պալակի ի տապ տարտարոսին։ Զի՞նչ վնաս եղեւ Պօղայ պարզամտութիւնն, և առանց գոլրութեան լինել յոգունց ի մարտիրոսաց և յայլեւայլ դասուց մարդկան, որք յաչս գիտնոց և բարեկեցից՝ խոտանք և ոչինչք իմն համարեալ լինէին, և արդ փայլեն արեգակնապէս ի կամարս երկնից։ Մի՞թէ ցաւիցէ՞ ինչ նոցա, զի անփառունակք եղեն յաշխարհի աստ, կամ անուսմունք և անպատիւք։ Ո՜վ սուրբ ապաշխարութիւն, ո՜վ սուրբ խոնարհութիւն, ո՜վ անարգանք աշխարհի, գոչէր ոմն ի Սրբոց (Պետր. Ալկանտարացի) ի ժամ մահուանս, դուք էք յոյս իմ և մխիթարութիւն։

Զի՞նչ շահ այսու կամ զի՞նչ վնաս. — այս իցէ գեղեցիկ և անմոռանալի խորհրդածութիւն յամենայն դէպս։ Զի՞նչ օգտիցիմ ի պատուոյ և ի համբաւոյ՝ եթէ առիթ լինի կորբստեան հոգեւոր շնորհաց. և զի՞նչ վնաս յանարգանաց՝ եթէ ուղղութեան և փրկութեան ինձ լինին պատճառք։ Ո՞ր շահ, կամ ո՞ր վնաս. — խոկմունք լեռնաքառակք, ընդ որս հաբեալ փչրին ամենայն մթելք փառաց և լուծանին յոչինչ. Սի՞նք հաստատունք՝ յորս հիմնեալ հաստատի գերագոյն և փրկաւէտն խոնարհութիւն։ Զայս իմաստասիրեալ, թէպէտեւ անագան, հզօրաց և ճոխից և համբաւելոց ոմանց, ասէին ի մերձենալ մահուն. Զի՞նչ օգուտ եղեւ մեզ լինելն այնպիսիս, բայց ապաշաւ՝ զի եղաք այնպիսիք։ Ունայնութիւն ունայնութեանց է, ապա ուրեմն՝ ամենայն, բաց ի սիրոյն Աստուծոյ և ի նորին սպասաւորութենէ։ — Ցետ աւուրց ինչ վախճանին՝ երեւեալ միանձին միոյ առ ընկերսն, ասէր. Եղեալ էի ես քաջ աստուածաբան, այլ ոչինչ է արդ. էի ճարտար քարոզիչ, և չէ ինչ արդ. եղէ մեծաւոր, և ոչինչ է այդ. եղէ կրօնաւոր, և այս միայն մնայ. — և զայս ասացեալ՝ անեղեւոյթ եղեւ։ — Աւադիկ՝ որ ինչ յաչս հարկանի յաշխարհի՝ ոչ նշմարի անդէնն, և որ նուազն՝ և երբեմն անարգագոյն

համարէր՝ այն լինի պիտանացու՝ ի հանդերձեալն։ Ըստ այսմ
սարասի՝ եղբայր ոմն՝ դերձակ ըստ պաշտաման, ի ժամ վախ-
ճանին խնդրեալ զասեղն իւր և ամբարձեալ ի վեր՝ ասէր,
սա լիցի ինձ բանալի երկնից, զի ոչ երբեք վայրապար մը-
տօք, այլ միշտ Աստուծոյ յանձն առնելով՝ ի գործ արկի։ —
Ոչ բերից ի կշիռ նմին զգաւազանս իշխանութեան թագաւո-
րաց և դիտապետաց, այլ զկրօնակիցդ դմին հարցից զքեզ,
որ այդքան թուղթս մրեցեր և գրեցեր, զո՞ր մխիթարութիւն
տացէ արդեօք գրիչն քո՝ յայնմ պահու. — եթէ առ համբաւ
ինչ կամ ի հաճոյս աշխատ եղեր, ամէն ասէ քեզ Քրիստոս,
այն իսկ է վարձք քո սնոտի, ըստ սնոտի վաստակոյդ և
յուսոյ։ Զայդպիսին վաստակաւոր՝ սարդի նմանեցուցանէ
ոմն ի զգօնից, որ յիւրուրոյն գոյութենէ հանէ զնիւթ ոս-
տայնին՝ առ որսալ ճանճ մի աղկաղկ. և ոչինչ աւելի գոր-
ծել, ասէ, այնմ գիտնոյ՝ որ սպառէ զժամանակ կենացն՝ առ
որսալ համբաւ և գովութիւն՝ որ չարժիցեն նմայ յետոյ ճանճի
միոյ չափ, և վասն չնչենոյն այնմիկ՝ այնքան անխոնջ ջա-
նիւ ծախէ զկեանսն, բազմապատիկ զրկմամբք իսկ և վշտօք։

Հա՛րց աղէ և դու՝ զանձն քո. յո՞ր միտս գործես և վաս-
տակիս. յիշե՞ս զԱստուած ի սկզբան գործոյդ, և քանի՞ցս ի
գործելդ. յանձի՞ն արդեօք յաւէտ ի շահ ինչ՝ քան յընկերաց.
ի քո՞ ինչ ի փառս՝ եթէ Աստուծոյ. մի՞ արդեօք և ընդ կեր-
պարանաւ իսկ բարեպաշտութեան՝ սպրդիցի սէր անձին. և
թոյն ինքնահաճութեան դառնացուցէ և զգործս սուրբս՝
առաջի Աստուծոյ։ «Ճրագ մարմնոյ ակն է, ազդէ քեզ Փըր-
» կիչն, եթէ ակն քո չար է՝ ամենայն մարմինդ խաւարին
» եղիցի »։ Զիք խաւարեցուցիչ քան զփառասիրութիւն. —
փափագիցե՞ս արդեօք ի գաղտնիս սրտի քո ձգտիլ ամբառ-
նալ ի վերագոյն աստիճանս և պաշտամունս. — հաւատա՛, զի
« Ոչ գիտես զինչ խնդրես». ոչ հաց է՝ զոր խնդրեսդ՝ այլ
քար. ոչ ձու՝ այլ կարիճ։ Թուիցի՞ քեզ ծանր և դժպհի՝ այ-
լոցն վերանալ և գերազոյնս համարիլ, և քո կալ մնալ ի խո-
նարհագոյն կարգի. աւա՜ղ քեզ, զի նման իցես մանկան տը-
զայոյ՝ որ լայցէ զի չետուն նմա զբեկորն շողշողեալ ապակ-
ւոյ։ Նախանձիցի՞ս ընդ բարձրացեալսն յաստիճանս. — գի-
տեա՛, զի թողեալ զանքոյթ վայր՝ ի դիւրակործանն ըզձա-
նաս։ — Ծա՞նր իցէ քեզ լսել նախատինս, զգալ արհամար-

հանս. — յիշեա՛, զի որ բարձր է առաջի մարդկան պիղծ է
առաջի Աստուծոյ. և զի Որդի մարդոյ ոչ եկն պաշտօն առ-
նուլ՝ այլ պաշտել։ Խելամտողք բանից Քրիստոսի՝ ոչ միայն
ոչ խորշէին յարհամարհանաց՝ այլ և սիրէին և ուրախ լի-
նէին ի նոյնս, որպէս Առաքեալքն յորժամ ի բանտ արկան
և գան արբին վասն անուանն Քրիստոսի։ — Մի՛ համարիր
զանձն քո յառաջադէմ ի լաւութեան, ասէ Նմանութեանն
գիրք, եթէ ոչ համարիցիս զքեզ տրուպ և յետին ամե-
նեցուն։

Եթէ քաջ քննիցես որ ինչ ասէ, ահա մարմին քո բոյն
ախտից և ծրար ապականութեան, անօթ աղտեղի, և դիակն
առ փոքր մի ժամանակ կենդանի՝ և ապա խսպառ լուծանե-
լի. միտքդ՝ բազում անգամ պղտոր և չփոթեալ, և որ ինչ
պայծառ ի նմա՝ կամ ձրիատուր է, կամ թէ ջանիւ՝ այլ ոչ
անմասն ի մթութենէ և ի վտանգէ մթացուցանելոյ զաչս
հոգւոյդ. և հոգիդ՝ մեղօք տգեղացեալ յաչս Ստեղծողին. վարքդ՝
անվստահանալի, զի գուցէ դարձեալ և չար եւս մեղիցես.
կեանքդ՝ կասկածելի, գուցէ չիցէ հեռի մահն դարանակալ։ —
Յի՞նչ արդ յաւակնեալ պարծիցիս, և խնդրիցես փառաւոր
լինել, պատուելի և հռչակելի։ — Ե՛րթ, մուտ ի վարժարան
մահու, և ուսիր զդաս կենաց. — որ ի վարժոցի անդ, և ի
բեմբի դադաղին՝ ոչ ուսանիցի զուսումն խոնարհութեան,
վա՜յ վա՜յ նմա։ Իսկ որ խրախուսեալ նշմարիցէ ի դագաղի
անդ զինքն ինքնին՝ որպիսի յետ սակաւու միոյ լինելոց է
ստուգասէս, ոչ եւս դանդաղիցի անգոսնել և զինչ. և զփառս
աշխարհի։

Ո՜վ Յիսուս, ամենակատար օրինակ աղքատութեան և խո-
նարհութեան, որ ոչդ ունէիր տեղի դնելոյ զգլուխ քո, որ
խոնարհեցուցեր զանձն քո մինչեւ առնուլ զկերպարանս ծա-
ռայի, զի ուսուցես մեզ փախչել յագահութենէ և ի հպար-
տութենէ, մի՛ տար մեզ թոյլ՝ չլացութեամբ անարգ մետաղի
և նիւթոյ միոյ՝ զրկիլ յանկորուստ բարեաց արքայութեան
քո. այլ տուր մեզ՝ ոչ միայն խոտան համարել զինչս և
զփառս երկրի, այլ սիրել մանաւանդ զտալն ի մերս ինչ գոյից՝
քան զառնուլ, զբազմիլն ի յետին բարձի՝ քան յառաջագա-
հոն. — հալածեա ի մէնջ զոգի ամբարտաւանութեան, և տուր
մեզ ճանաչել զմեզ՝ ոչինչս իմն, յոչընչէ եկեալս և յոչինչ

դառնալիս՝ ըստ մարմնոյ. — տուր մեզ գանձել յերկրէ գանձս յերկինս, որպէս զի աներկիւղք ի մահուանէ և յուսալիցք ելցուք ի կենաց աստի, և մտցուք առ քեզ։

Բ. ԴԻԱԿՆ Ի ԳԵՐԵԶՄԱՆԻ

Եթէ տեսիլ մարմնոյ ի դագաղի զայսպիսիս ազդէ իմաստս՝ ունայութեան երկրաւոր բարեաց և փառաց, անդրագոյն եւս տեսլեան դիականն ի գերեզմանի՝ ազդողագոյն դեղ և խրատ է առ ի խորշել գարշել ի հեշտութեանց մարմնոյ, և երկնայնոցն փափագել փափկութեանց, որով յաւէտ անսայթաք ուղղին գնացք կենաց ի մահ անդր երջանիկ։

Ա. Մեծամեծ ճշմարտութիւնք են ի խորս գերեզմանի, մանաւանդ եթէ ոք նկատիցէ զինքն իսկ իշուցեալ եղեալ թողեալ անդ, և իբրու հոգւովն զերծելով առ վայր մի եկեալ ի քննել զզուգակիցն իւր հողեղէն, զանջատեալն անկցորդելի, բայց ի հեռաւոր աւուրն յարութեան։ Հայելի մահուն՝ ոչ միայն զվերին երեսս՝ այլ մինչեւ զխորս մարդոյն տպաւորեցուցանէ, և յայտ յանդիման ցուցանէ զինչ էր երեւեալն և խնամով դարմանեալն և զգուեալն, և պճնեալ և սնուցեալ մարմին նորա, և բազում անգամ անկուշոյ հոգւոյն։ Ահա սակաւ աւուրք են յորմէ հետէ ծածկեալ կայ ընդ հողով՝ որ երեւէրդ ի վերայ նորին. ազէ մատիր, պեղեա զայն մինչեւ ի գուբ, և ի վեր առ զկափարիչն, որ թաքուցանէ զյաւէտ սիրեցեալն քո յերկրի. և անգէն ստուգապէս քան զՄարթա՝ գոչիցես, արդ հոտեալ է և նեխեալ։ Եւ զի՞նչ եթէ և զպատանսն ի բաց առնուիր և տեսանէիր յարգանդ երկրի զկերպարանն դժպհի զայն, զքո իսկ կերպարան, զքո իսկ մարմին՝ երբեմն իբրեւ սքանչացեալ առ ի քէն. որպիսի՞ փոփոխութիւն, որպիսի՞ ժահադիմութիւն և ժահահոտութիւն. որպիսի՞ նորակերպ երանգք տխրորակք ի վերայ մորթոցն ուռուցելոց, պատառելոց և խղխայթելոց. — զիա՞րդ ի սակաւ աւուրս քակտեալ և եղծեալ են ջիլք և աճառք զօդիչք և շարժիչք բազկացն և ձեռաց և համօրէն ամենայն կազմուածոյ իրանացն, և պէսպէս յօրինուածոց մասանց նորին, որք՝ թուի իմն եթէ իւրաքանչիւր խուճապեալ ոստուցեալ յիւրոյ կարանէն և ի գոգոյն, սորսորեալ վիժին երթալ խառ-

նիլ ի մի երր ապականութեան, որ ընդ հուպ ընկղմեսցէ զկարծրագոյն մասունս մարմնոյն, եթէ օրէն իցէ տակաւին կոչել զայն մարմին, զոր ասպատակ սփռեալ որդանց և ճճեաց՝ արագ արագ զեռան և սպառին, մինչեւ չմնալոյ իսկ դիական, այլ կմախք լքեալք իբրեւ անպիտանք զեռնոց անգամ։

Ծանր և դժնդակ է արդարեւ՝ ոչ միայն տեսիլ այլ և յիշելն անգամ զկտտանս և զքանդուածս գեզեցկակազմ իրանացն՝ մատնելոց յեղծումն և ի սպառումն՝ փանաքի և փցուն բոտոտից, որք ոչ աչացն խնայեն, ոչ շրթանց, ոչ այտից, ոչ միոյ մասին պպանծալի գլխոյն և ոչ այլոցն ամենայնի։ Խորշի՞ բնութիւնս և ամաչէ իմն տեսանել զինքն յայն առակ նշաւակի, յայն ողորմելի տեսել, յայն վիճակ գարշութեան, քան զոր չիք ինչ դժնդակ, չիք ինչ զզուելի, չիք ինչ յեռնագոյն. — այլ շահ օգտի հոգւոյն՝ ցորչափ ի մարմնի է քաղաքավարի՝ յորդորոր լիցի, առ ի քաջ սանձել և վարել զնոյն, ժոյժ ունել և առ վայր մի, և նկատել զոր ինչ լինելոց է առ յապա. — մերկանալ գամ մի զվերերեւոյթ դիմաց գլխոյն՝ յորոյ խելս պանծայր, և տեսանել զնա գանկ թափուր և ամայի. տեսանել զզոյգ փոսորակսն՝ որք երբեմն կրէին զաչսն՝ առիթս գայթակղութեան և կորուստս անմեղութեան. դրունք՝ ընդորս մտին յաճախ մեղք և ի բաց կողոպտեցին զնորհս ամբողջութեան. — տեսանել զտրորեալ և զտխատեալ մասունս ինչ՝ որք երբեմն լեզու քո էին և շրթունք, որովք զեղխեցար ի կերակուրս, և անկղիտացար ի բամբասանս, ի բանսարկութիւն, ի լուտանս, թերեւս և ի հայհոյանս և ի նզովս. — տեսանել զցամաքեալ և զյօշեալ եղեգունսն, զմատունս՝ զորս վարեցեր յեղեռն և յոճիր, ի զրկանս այլոց և անձին. — տեսանել զկապտեալ և զունայնացեալ ոսկրոտին՝ յոր յեցեալ երբեմն՝ համարէիր վայելել ընդ երկար ի քաջողջութեան և զդէմ ունել մահու. — տեսանել միանգամայն և մի առ մի զանկերպարան աւերակս չինուածոյ մարմնոյդ, զոր ոչ կամէիր ճնշել և նեղել փոքր մի և զգուշացուցանել ի վնասակարաց՝ իւր իսկ ինքեանն և առաւել եւս հոգւոյդ։ — Զի՞նչ շահ եղեւ արդ դմա՝ այնքան հայթհայթանք հաճոյից զգայարանացն, համադամքն, անուշահոտութիւնքն, լուացմունքն և օծանելիք, փափկութիւնք զգեստուց և մահճաց և պէս-

պէս զբօսանք և հրապոյրք աչացն ականջացն, և չօշափե-
լեաց։ Ո՞րքան մանաւանդ խիղճ և խէթ այժմիկ, զի չարա-
չար վարեցար նոքիմբք, որով մարթ էր՝ ոչ միայն ի չափու
ունել զանտեսութիւն մարմնոյդ, այլ և հոգւոյդ հնարել ա-
զագս առաքինութեան և փրկութեան. մարթ էր և ի դէպ
իսկ՝ փոխանակ սնուցանելոյ զանյագ յօժարութիւնս մար-
մնոյ՝ կամաւոր զրկմամբ և մեռելութեամբ նորին՝ փարատել
զերկիւղ անհրաժեշտ մահուան, և վախճանել խաղաղու-
թեամբ։

Ո՜վ, Տէր, զի՞նչ է մարդ՝ զի յիշես դու զնա, կամ որգի
» մարդոյ՝ զի այց արասցես նմա»։ Ճարպկ եմ որդանց,
երբ և ապականութիւն նեխահոտ. անարգազոյն քան զհող
և զփոշի, կոխան գազանաց և բոյն զեռնոց. և սակայն ի-
խեցի՞ գլուխ ամբառնալ ընդդէմ Ամենակալիդ. զմարմին՝ զոր
ետուր յօժանդակ հոգւոյս՝ քումդ պատկերի, ի դաւաճանու-
թիւն նմին կրթեցի. կանգնեցի զնա իբրեւ մենաքենայ՝ մար-
տընչել, վիրաւորել և մատնել զայն ի մահ, և ի մահ յաւիտե-
նական։ Ոչ գիտեմ արդ ընդ ո՞ր առաւել ապշել և հիանալ, ընդ
ամբարտաւանութիւնս իմ, եթէ ընդ քո ընդ անբաւ երկայն-
մտութիւնդ։ Զի՞ոդ այնքան անմտացայ՝ մինչեւ անլսող լի-
նել գիտակցութեանս իմոյ, ապախտ առնել զշնորհօք՝ առ
հաճոյս ապականելի դիականս այսորիկ, զսա վերադասել՝ ի
մոլորութեան իմում՝ քան զհոգի, քան զերկինս, քան զՅի-
սուս Քրիստոս։ Զի՞ոդ առ վայրկեան մի հեշտի՝ մատնեցի
զոգի իմ յիշխանութիւն սատանայի և ի կորուստ գեհենի. և
առ գործ մի՝ զոր ոչ կարեմ յիշել առանց ամօթոյ՝ ի վտանգ
յաւիտենական դատապարտութեան անձամբ զանձն գլորեցի։

Արդարեւ յայսպիսի կորուստ անգիտ վարէ զանձն՝ մար-
մնասիրութիւն. յայսպիսի յիմարութիւն առ ոտն կոխելոյ
զահ և զամօթ՝ ի հաճոյս գանկի միոջ, և կմախից և նեխոյ.
և զբարին և զբարերարն Աստուած՝ ի մոռացօնս արկանել,
վասն չարաչար յիշելոյ և ճանաչելոյ զանձն. և զափ մի ա-
ճիւն վերագրել քան զփառս արքայութեան երկնից։ Թուի իմն
թէ և ոչ տանջանք դժոխոց բաւական իցեն ի պատուհաս
այսքան ժպրհութեան և զազրութեան։... Ա՜հ, ցօղեցէք արդ
արտասուք ապաշխարութեան, լացէք աչք իմ լաց դառնու-
թեան, պատառեաց սիրտ իմ ի ցաւոց, որ սիրեցեր զապա-

կանութիւն մարմնոյ քան զանապականն հոգի. — գարշեսջիր
խորշեսջիր իսպառ այսուհետեւ յամենայն անմաքրութենէ,
յամենայնէ՝ որ կարող իցէ արատաւորել զփարելին ողջախո-
հութիւն։ Իջցեն չանթք կայծականց յերկնից՝ գարձուցանել
զիս ի մոխիր, քան հաւանել ինձ և համարձակել ի գործ ան-
մաքուր։ Իջցէ մանաւանդ այժմէն Հոգի քո Սուրբ, Աստուած
իմ, և սրբարար հրովն ջնջեալ զգաստեղութիւնս իմ՝ հաստա-
տեսցէ յիս հոգի մաքուր և մաքրասէր։ — Ա՛ء ի խրատ ըզ-
գուշութեան և ի յանդիմանութիւն եղիցին ինձ կմախքս զոր
տեսանեմ, և զոր երբեմն գգուէի և փափկացուցանէի գանկս
այս և ոսկերոտիս, վասն որոց այնքան ժամավաճառ եղէ ի
գեղերեսել, ի սեթեւեթել, ի սնել և ի հաճել՝ ի պէտս և
յոչ պէտս. և փոխանակ անապական և աստուածակերպ հոգ-
ւոյս՝ պաշտեցի զապականելի զորդնահար զճճեկեր զիղխայ-
մի ի համադամս կերակրոց, ի զգենլիս և յանկողինս կակուղս՝
կափուցեալ աչօք յանձն առի զանհանգիստ հուր քաւարա-
նին, և զանդրագոյնն եւս զանչիջատոչորն դժոխոց։ — Եթէ
եպիկուրեան ոք կամ անաստուած որ զերանութիւն մարդոյ ի
վայելս կենցաղոյս և ի զգայականս համարի, այսպիսի զեղ-
խութեամբ և անառակութեամբ կեցեալ էր, չէր զերծ ի բաս-
րանաց, սակայն ոչ գործէր հակառակ կարծեացն. իսկ քրիս-
տոնեայ՝ որ գիտէ զվախճան մարմնոյ և զհոգին անվախճան,
իսկ կրօնաւոր՝ որ ուխտեալ է զհանապազօրեայ մեռելութիւն
մարմնոյն, իսկ քահանայ՝ որ զօր ամենայն մտանէ ի սրբու-
թիւն Սրբոց, եթէ անգիտանան յայսմ մասին, պաշտել ըզ-
կամս մարմնոյ և զրկել զհոգի, զի՞նչ բաւիցէ ասել ցնա, որ-
պիսի՞ արտասուօք լալ, զո՞ր ողբս ողբալ նմա։ Քանզի զի՞նչ
բնաւ գուցէ ուրեք՝ որ կարիցէ փոխանակել այնպիսի երկ-
նապարգեւ չնորհաձիր արեանն Յիսուսի, և յաւիտենական
փառաց արքայութեան, զորս անարգեաց ելիք սէր մարմնոյն։
Եւ ներհակաբար խորհրդածելով՝ դոյզն ինչ մեռելութիւն
կամ զրկումն զգայարանաց՝ հաճոյագոյն է Աստուծոյ և շա-
հաւետագոյն անձին՝ քան զմեռեալս յարուցանել. ապա և
այնքան վէրք և կորուստ են հոգւոյ՝ որքան նուազս յում-
պէտս սպաս հարցի մարմնոյ, հողոյս այսմ և կաւոյ, տղմոյ
և նեխոյ, և չարագազան թշնամւոյ հոգւոյ։

Քրիստոսական և աստուածային է վճիռ, « Ոչ ոք կարէ » երկուց տերանց ծառայել », միանգամայն մարմնոյ և հոգւոյ. անձին և Աստուծոյ. հարկ է կամ զմին ուրանալ կամ զմիւս. կամ զաշխարհս ընտրել կամ զերկինս. կամ հրաժարել ի հեշտալեաց մարմնոյն, կամ ի հանդերձելոց բարեացն. ոչ է մարթ և յերկրի աստ վայելել զվայելս երկրի, և ընդ Քրիստոսի թագաւորել։ Ոչ է հնար կեալ ըստ մարմնոյ, և մեռանել անմարմնապէս. չէ մարթ՝ թէ որ չռայլութեամբ սնոյց զմարմին, պարկեշտացեալ գտցէ զնա յետոյ։ Յորժամ հասցէ ժամանակ միւսանգամ յարութեան, ամենայն ոք զիւրն գտցէ մարմին. Պետրոս՝ զիւրն, և Յուդաս՝ զիւրն, Աբիսողոմ զիւրն, և Այոյիսոս՝ զիւրն։ Եւ դու՝ քոյովդ յարիցես մարմնով, ո՜վ անձն՝ որ հայիս արդ ի դիակնդ ի գերեզմանի ո՞րպէս կամէիր թէ վարեալ էր դորա զզգայունսն՝ մինչ կեայր ընդ հոգւոյն։ Աքանչանայցեն յայնժամ արդարքն և սրբասէրք՝ ընդ փառաւորեալ մարմինս իւրեանց, իսկ պիղծքն և ժպիրհք զարհուրեսցին յիւրեանց իսկ գարշատեսիլ մարմնոյ, և ասիցեն. Ա՞յսպէս, վասն բոպէական հեշտութեան՝ զա՞յս զգենուլ ամենազգիր կերպարան, և մատնիլ ի հուր անշէջ և անվախճան. վա՜յ, վա՜յ ինձ խպաւ, ընդէ՞ր ոչ անդէն մինչ յաշխարհի էի՝ ոչ մանաւանդ տանջեցի զաչս, զքիմս, զշօշափելիս, և զամենայն մարմինս իմ, զի արդ և յաւիտեանս՝ նորոգեալ և լուսազգեցեալ զուարճանայի ընդ որդիսն Աստուծոյ։ — Այլ երթիցեն նոքա ի տանջանս յաւիտենականս։ Իսկ որք աստ անձամբ զանձինս խրատեցին և տանջեցին, զրկեցին և ի մեռելութիւն կրթեցին, որք կափուցին զաչս իւրեանց ի պատրողական գեղոյ և ի վայելչութեանց աշխարհի, և զզգայարանս՝ ի հեշտութենէ և ի փափկութենէ, այլ և ոստիկանս իմն և պահապանս խիստս կարգեցին ի զգուշութիւն, հրաժարմամբք, ճգամբք, պահօք, խարազանօք, տքնութեամբք և աղօթիւք, նոքա երթիցեն ի կեանս յաւիտենականս, բազմել ի յարգուարճ սեղան Քրիստոսի և Հօր նորա. և եթէ գուցէ ինչ նոցա իղձ և կարօտ՝ այս իցէ, եթէ ընդէ՞ր ոչ ուժգնագոյն եւս հակառակեցաք և կուփեցաք զմարմինս մեր։

Իսկ մեք որք հայեցեալ ի խորս գերեզմանիս, թափանցեալ ընդ խորագոյն խորխորատ տարտարոսին, և վերակնեալ ի

բարձունս երկնից, զգամբ տակաւին զմեզ ի մարմնի և յերկրի, հեղգանայցե՞մք տակաւին առնել զոր և դատապարտեալքն ի դժոխս և ի քաւարանի, և սուրբքն որ յերկինս՝ կամէին առնել, եթէ գտեալ և կամ դարձ արարեալ էին ի մարմինս իւրեանց՝ ի վերայ երկրի. — յետ նկատելոյ զմարմինս մեր ի դագաղի և ի գերեզմանի՝ իշխիցե՞մք տակաւին չողոմել ողորմել սմա. — կամիցի՞մք տակաւին անմտութեամբ կամ միամտութեամբ՝ տալ համարձակութիւն ընտանի գազանիս այսմիկ, մարմնոյս, որ ծածուկ կրծանօք կեղեքէ զոգիս մեր։ Օ՜ն անդր, թօթափեսցուք զթմբիրս պատրանաց, և զհեղգութիւն զամենայն. դիցուք սանձ և կանոն զգայութեանց, մի՛ զանգիտեսցուք խստանալ և բռնանալ ի վերայ մարմնոյ. զի « որքան անխնայ լիցուք անձամբ անձին, աստ մարմնոյ. զի « որքան անխնայ լիցուք անձամբ անձին, աստ » ոմն ի հարց, այնքան խնայեսցէ մեզ Աստուած ». և հեղինակն նմանութեան, « Այնչափ յառաջեսցես յուղղութիւն՝ » որչափ բուռն արասցես անձին ». և « չէ փոքր յաղթութիւն, յաւելու Ս. Բեռնարդ, նուաճելն զանձն », և գոչէ, « Ցարիցէ Աստուած, և կորիցէ մարմին. կործանեսցի մարդս » թշնամի, առ ոտն կոխեսցի անարգուն Աստուծոյ, անձնասէրն այն և աշխարհասէր, ստրուկն սատանայի. արժանի » է դա մահու. խաչեսցի ». զի մի՛ լիցի խափան հոգւոյ՝ երէ դա մահու. խաչեսցի ». զի մի՛ լիցի խափան հոգւոյ՝ երէ Ջանիկ մահուամբ ելանելոյ յաշխարհէ աստի և մտանելոյ ի վայելս երկնից. յոր յորդորէ եւս զմարդ նկատումն եղծեալ մարմնոյն ի գերեզմանի անդ։

Բ. Յորչափ եմք յաշխարհի աստ՝ զգամբ աւաղելի իմն տաղտկութիւն յերկնաւոր իրաց, և ծանր թուի մեզ ամենայն տաղտկութիւն յերկնաւոր իրաց, և ծանր թուի մեզ ամենայն որ ոչ առ երկիրս վերաբերցի. և այս միւս եւս արգել է բարուդ մահուան. վասն որոյ և ի դէպ է մրցել և վանել զայնուդ մահուան. վասն որոյ և ի դէպ է մրցել և վանել զայն՝ աւագագոյն աչօք նկատելով զմարմին ի գերեզմանի։ Ցիշէ Հ. Սենեէրի զմիանձն մի՝ ձանձրացեալ և փախուցեալ ի վանացն. որում ընդ առաջ ելեալ Պահապան հրեշտակին՝ տարաւ ի գերեզմանատուն, և հրամայեաց պեղել բանալ գերեզման մի. զոր և արարեալ նորա, ընդ տեսանել զկմախսն՝ անդէն անկաւ զեղջ ի սրտին, և փութացաւ դառնալ ի վանս, և եկեաց առաքինութեամբ մինչեւ ցօր մահուն։ Մի եւեթ տեսիլն այն՝ ուսոյց նմա անարգել զոր յարգէրն, և յարգել՝ զոր անարգեալ էր, և փափագել այնմ՝ յորմէ խուսափէրն։

ի դէպ էր նմա և մեզ՝ զմերս իսկ մարմին նկատելով ի թաղէն անդ, ասել, Ո՞ւր մնային հաճոյք և զբօսանք զոր խընդրէի՝ եթէ ես ինքն էի թաղեալս աստէն. ո՞ւր ազատութիւնն՝ որում ըղձակերտ լինէի. ո՞ւր հրապոյրք՝ որ քաղցրացուցանէին ինձ զմեղս. — ոչ ինչ ոչ մնայր ինձ, բայց խայթ խղճի և ապաշաւ անօգուտ՝ քանզի « Ցորժամ մարմինն հեշտանայ՝ » խիղճն մռնչէ », ասէ ոմն ի զգաստից։ — Իսկ եթէ շնորհօքն Աստուծոյ գործեալ իցէ մեր սակաւ ինչ բարի, զդէմ կալեալ և յաղթեալ կրից և յօժարութեանց բնութեանս և զգայարանաց, պարապեալ ի հոգեւոր հրահանգս, վաստակեալ ի չինութիւն անձին և ընկերաց, վշտացեալ վասն սիրոյն Աստուծոյ, նախատանաց համբերեալ, և որ ինչ ի սոցին սակի, թէպէտ և սակաւ ինչ իցէ, ո՞չ ապաքէն մխիթարութիւն է, զի վասն հոգւոյ և վասն Աստուծոյ արարաւ։ — Ի ջնջել լուծանել մահու զամենայն, ըստ գործոց իւրաքանչիւր՝ մնան միայն՝ կամ խայթն այն խղճի, և կամ խաղաղարար վկայութիւնն նեբքին։

Ազէ, հա՛րց ցանձն քո. զոհանայցե՞ս յայսմ երեկոյի զի անխայեցեր անձինդ, և լցուցեր զկամս մարմնոյդ. — եթէ ընդ հակառակն, ո՞չ զոհասցիս՝ զի տիրաբար գործեցեր, պարապեցար ի գործս առաքինութեան, արհամարհեցեր զհաճոյսն մարմնոյ, և ի փրկութիւն հոգւոյդ և ընկերացդ վաստակեցեր։ Քանի՞ հզօրագոյն եւս գտանէիր արդ՝ եթէ էր քո հանապազ փականս եղեալ աչաց և լեզուի, սանձահարեալ զեռանդնդ անխորհուրդ, չափաւորեալ զպէտս դարմանոյ մարմնոյդ, զքուն և զկերակուր։ Քանի՞ քաղցր է նմա երեկոյն՝ որ բարւոք վարեաց զտիւն։ Քանի՞ եւս քաղցրագոյն և դիւրագոյն լիցի յերեկոյ կենաց և մերձեցեալն մահ, այնմ՝ որ զտիւ կենացն առաքինօրէն քաղաքավարեցաւ։ Եւ զի՞նչ է որ խափանէ զտեսութիւն մտաց մերոց՝ առ ի չտեսանել զվայելչութիւն երկնից և զանթառամ վայելսն։ Ազէ, կրթեսցուք վարժեսցուք՝ մերթ խոնարհել ի հող ոչնչութեան մերոյ, և մերթ վերամբառնալ ի խոստացեալ փառս արքայութեանն, զի մի՛ լիցի և մեզ ասել ընդ ապաշնորհ տարամերժելոցն, եթէ, աւա՜ղ, զի զոր կարէի յայնժամ ի միում վայրկենի առնել, աստ ոչ կարացից առնել ի յաւիտեանս։ Քանի՞ դիւրին էր կրթիլ ի լաւութիւնս և ի յառաջադէմսն նկրտիլ,

յորժամ պարգեւեալ էին ինձ շնորհք, հնարք և ժամանակ. — քանի՞ցս ասէի յանձն իմ, կամիմ ուղղել զգործս իմ, կամիմ առաքինանալ, սուրբ լինել և արդէն սկիզբն արարեալ էր իմ։ Ո՜վ երջանիկ ժամուցն և աւուրց և ժամանակին՝ յորում միայն Աստուած հաճոյանայր ինձ. որպիսի՞ հրճուանք զեզուին յիս. քանի՞ խնդամիտ էի յայնժամ. քանի՞ քաղցր էր ինձ լուծն Քրիստոսի, քանի՞ թեթեւ բեռն նորա. — զի՞արդ խայտալով երթայի ի տուն Աստուծոյ և ի գործս բարիս։... Եւ ո՞ կասեցոյց զգնացս իմ. ո՞ր խոչ, ո՞ր գայթակղութիւն գթեցոյց զիս ի ճանապարհի ուղղութեան... Եթէ փոքր մի եւս համբերեալ էր իմ, ապաքէն յաղթող գտանէի և ակն ունէս համբերեալ էր իմ, ապաքէն յաղթող գտանէի և ակն ունէի պսակաց և վարձուց։ Իսկ զի՞նչ յայսցանէ վրիպեցոյց զիս. բայց սնոտի սէր անձին։... Եթէ վայրիկ մի եւս ժուժ կալեալ էր իմ յայնմ պահու, ոչ էր ապա զահավիժեալ ի պէսպէս յանցուածս և ի մեղս, որովք կապուտ կողոսպուտ գտանիմ արդ ի շնորհաց. իսկ ընկերն իմ այն որ հաւատարիմ գտաւ պատուիրանաց Տեառն և թելադրութեանց խղճի մտացն, ահա նա զարդարեալ և պճնեալ կայ պսակաւ՝ յորմէ ես վրիպեցայ։ Ո՜ տայր ինձ զաւուրսն առաջինս. և կրթէի առաքինօրէն յամենայն գործս իմ, և համբերէի մինչեւ ի մահ, որ ոչ երբեք անագան՝ այլ միշտ վաղ հասանէ։...

Քա՜ւ լիցի մեզ զայսպիսի զուր ստրջանս ստրջանալ. այլ համբերեսցուք սակաւ ինչ այժմէն ուշ ի կուրծս արարեալ՝ զի սոքօք հայթնեղութեանցս, ձանձրութեան և վաստակոց. զի սոքօք հայթհայթին մեզ վարձքն և պսակ։ Եթէ և զկէս և զկիսոյ կէս հոգոց, խնամոց և աշխատանաց մարմնասիրաց և աշխարհասիրաց՝ յանձն առնուցումք յօգուտ հոգւոց մերոց, ի մեծ չափ ուղղութեանց և սրբութեան հասանեմք. և արդէն հասեալ էաք եթէ զշան և զժամանակ զոր յայլեւայլ գործս ծախեցաք՝ զայն ի գիւտ երկնից ծախեալ էաք. զի ամենայն ինչ փոքր և սնոտի է՝ եթէ ոչ առաջնորդիցէ առ վախճանն՝ վասն որոյ եկաք յաշխարհս և ընծայեցաք Աստուծոյ։ — Ապա այսուհետեւ ուշ կալայց վախճանին՝ քան ներկայիս. յամենայնի հարցից զմահ, և ուսուսցէ ինձ՝ ուստի անկ իցէ խորհել, և զիմէ՞ բուռն հարկանել, զի մի՛ յետոյ զեղջ լիցի ինձ, այլ զոհութիւն և խնդութիւն։ Ուղիղ կանոն կենաց՝ խորհրդածութիւն մահուն է. և խրատատու զգօն յընտրութեան

բարւոյ և չարի։ Այո, հարցից յանախ զմահ իմ, և ասացից. Ուստ ինձ, զի՞նչ պարտ իցէ առնել յայս դէպս. – արկից ձեռն յայս գործ առաջագրեալ ի մտացս կամ այլուստ. – կացի՞ց մտացից ի պայմանի կենացս՝ յոր կամս արդ. – ծախեցի՞ց ընդ երկար զժամանակ իմ յայս զբաղանս. – հաւանեցա՞յց այս ինչ յօժարութեան ոգւոյս. – յերկարեցի՞ց ի զբօսանս յայն։.., «Ո՞վ մահ, քանի՞ բարի է դատաստան» քո», գոչէ Սիրաք։

Եթէ ոչ լսեմք այժմիկ ձայնի մահու, հարկ ի վերայ կայ լսել յետոյ, այլ թերեւս յանօգուտս. բայց զգօնացեալք աստուստին կանխեսցուք լսել և դատել՝ որպէս դատելոց եմք յետ մահուան. և զոր յայնժամ լաւ համարէաք սիրել և ընտրել, յարգեսցուք այժմէն։ Թեթեւ ինչ թուի մեզ այսօր փորձութիւնս այս և գանցառութիւն. ընդդիմանալն ծանր և դժուարին, յետս կալն՝ անհամբոյր. զգուշագոյն կեալն՝ տաղտկալի. – այլ ի մահուն՝ քանի՞ այլ օրինակ թուիցին մեզ այսոքիկ. ո՞րքան ծանր իցէ թեթեւն, և թեթեւ երեւեալն ծանր. քանի՞ փոքրագի կշռիցի յայնժամ բեռն Քրիստոսի, խստագոյնք ի պատուիրանաց եկեղեցւոյ, յորոց խուսափել հնարէաք, և քանի՞ քաղցր՝ հետեւել ընդ հետս Քրիստոսի, որոյ և փուչքն ինչ՝ զուարճատեսակք երեւիցին քան զծաղկունս աշխարհի՝ աչապատիրս և դիւրաթառամս։ Աւա՜ղ ինձ, գոչէր ոմն յօրհասին, զի՞րդ խաբեալ վասն չնչենոց ինչ իրաց կենցաղոյս՝ ոչ ընտրեցի զկատարելագոյն վիճակ կենաց, յոր կոչէր զիս Աստուած։ — Ի կատարելոց վիճակ կոչեաց և զմեզ և կոչէ Աստուած. Այսօր՝ զի լսեմք ձայնի նորա, մի՛ խստացուսցուք զսիրտս մեր. գուցէ ոչ եւս լսիցեմք զձայնն զայն հայրական, ձայն փրկաւէտ, ձայն յարութեան ի մեռելութենէ մեղաց։ Լուիցուք ներքին ձայնին զոր ազդեաց մեզ նկատումն հանդերձելոյ և ոչ կարի հեռաւոր կերպարանաց մերոց յետ մահու. և դիցուք քաջ հաստատութեամբ ի մտի, չառնել ինչ կամաւ, կամ զանց առնել զիւիք՝ ընդ որ գիտիցեմք զի ստրջասցուք յօրհասին. և ներհակաբար, առնել զամենայն զոր առնեմքս՝ որպէս յետին գործս կենաց, վասն որոց ունիցիմք ի մտոյ համարս պահանջիլ. և մանաւանդ զաղօթս և զխորհուրդս խոստովանութեան և հաղորդութեան՝ այնպէս կատարել և ընդունել՝ որպէս թէ յայնս հաստատեալ

իցէ յոյս փրկութեան մերոյ և հաշտութեան, յառաջ քան զերեւեալ մեր յատեան դատաստանին՝ յետ փոքու միոյ։ Մի՛ երբեք մոռանար զվախճան քո, գրէր Սուրբն Բարսեղ, զի յարուցեալ յառաւօտուն՝ ոչ գիտես թէ հասցե՞ս յերեկոյն, և յերեկոյի մտեալ յանկողին քնոյ՝ ոչ կարես խոստանալ քեզ զվաղիւն։ Եւ ըստ խրատու Սրբոյն Օգոստինոսի, Այնպէս կեաց որպէս եթէ այսօր իսկ գալոց է Քրիստոս, որպէս զի աներկիւղ լիցիս ի գալստեան նորա։

Այլ դու ինքն, Հոգիդ Սուրբ, փարատեա յինէն զմէգ մըտաց իմոց, և լուսաւորեա զիս՝ դատել և ընտրել զիրս և զգործս՝ որպէս դատելոց է հոգի իմ յետ մահուան։ Հե՛ղ յոգիս իմ զիւղ աստուածայնոցդ քաղցրութեանց, որպէս զի զուեալ յերկրաւոր հրապուրանաց և յիմոյ իսկ մարմնոյս, հրաժարեցայց ի հեչտալեաց զգայութեանցս, և երկնաւորացն փափագեցայց բարեաց. – տո՛ւր ինձ յամենայն զօրութենէ ըղձից և կամաց ձգտիլ ի կենդրոն անդր ճշմարիտ հրճուանաց, և դառն և անհամբոյր համարել զամենայն՝ որ խանիցէ զճաշակ աստուածութեան քո։

Ե

ԱՊԱՇԽԱՐՈՒԹԻՒՆ ՄԵՂԱՑ

Ոչ այնքան սոսկումն այլայլութիւն բնութեան և ահաւոր ցուցանէ մեզ զմահ՝ որպէս որ ինչ յետ մահուն. և ոչ այնքան հանդերձեալքն խիթալի երեւին՝ որքան մեղքն, առիթ անաչառ դատաստանի և պատուհասի պատժոց ի քաւարանի կամ ի դժոխս։ Հարկ է ուրեմն առ բարւոք և յանդորրու մեռանել՝ փարատել զմէգ մեղաց. և այս ոչ յաջողեսցի՝ բայց միայն ապաշխարութեամբ, և այնքան առաւել՝ որքան կատարեալ իցէ ապաշխարութիւնն, սրտագին զղջմամբ և ատելութեամբ մեղաց։ Ապա անկ և արժան է մեղուցելոցս և դատակնքելոց ի մահ, զամենայն ճիգն և հնարս հնարել՝ առ բարւոք ապաշաւանս. և առ այս դիւրագոյն՝ միանգամայն և ազդողագոյն պատճառ և օճառ լիցի օրհասականին կամ

պատրաստողին յօրհաս, տեսիլ խաչեցելոյն Աստուծոյ վասն մեղաց իւրոց. վասն այսորիկ և յետին նշանակ և օժանդակ յուսոյ՝ խաչն տուեալ լինի կամ դնի ի վերայ նոցա: Եւ որոյ վարժեալ իցէ ի կեանսն ստէպ նկատել զխաչելեալ փրկիչ իւր և ի նա ապաստան լինել՝ յիշատակաւ մեղաց իւրոց, յօրհասին պահու վստահութեամբ և փղձկմամբ ակն ի նոյն արկեալ արգահատեսցի: Զի՞նչ արդարեւ հզօրագոյն և ողորմագոյն տեսարան՝ ի շարժել ի գորովել զսիրտ քրիստոնէի՝ քան զաստուածամարդն օրհասական ի վերայ խաչին, յոր ինքն իսկ ամբարձ զնա մեղօքն, ինքն իսկ բեւեռեաց և խոցեաց, և եղեւ աստուածասպան: — Ո՞չ և ապառում սիրտ՝ զայս խոկալով՝ լուծցի ի դառն արտասուս և ի կոծ:

Խաչ է չափն այն խորհրդական, չափն ոսկեղէն՝ զոր տեսանէր Յովհաննէս ի ձեռս հրեշտակին և սովաւ ի դէպ է մեզ չափել զծանրութիւն մեղաց՝ պատճառս մահուան Աստուածորդւոյն. չափել զապերախտութիւն մեղաւորին առ այնքան բարերարն իւր, չափել, եթէ հնար իցէ, և զանչափ մեծութիւն Աստուծոյ անարգեցելոյ, զոր չիք հնար հաշտ առնելոյ՝ բայց միայն աստուածային զոհիւ: Այսպիսի չափմունք ծանրութեան մեղաց, ապերախտութեան մեղաւորի առ գերազանցութեան Աստուծոյ արհամարհելոյ, եղիցին հիմունք խորհրդածութեան, և շարժառիթք ապաշաւանաց, յորս ապայաւելցի հնարք բարուք խոստովանութեան, որ է մեծ յոյս յօրհասի:

Ա. ԾԱՆՐՈՒԹԻՒՆ ՄԵՂԱՑ

Դի՛ր առաջի քո կամ աւ ընկալ ի ձեռին զպատկեր խաչեցելոյն, զպատկեր դերագոյն ցաւոց և սիրոյ, և իցէ՞ թէ արտասուօք թանալով, և հարց ցքեզ. Ո՞յր է պատկերս այս: — Ծանիցես իսկոյն՝ եթէ այնմ՝ «որ ի կերպարանս Աստուծոյ » էր և ոչինչ յափշտակութիւն համարեցաւ զլինելն հաւասար Աստուծոյ». այն որում վկայեաց Հայր, «Դա է » Որդի իմ սիրելի՝ ընդ որ հաճեցայ». այն՝ «որ ցանկային » տեսանել գոնեայ ընդ աղօտ՝ հրեշտակք». այն՝ «Որում » տուաւ ամենայն իշխանութիւն յերկինս և յերկրի». այն՝ որ «ունէր ի վերայ պատմուճանի իւրոյ և ի վերայ անդաս

» մոց իւրոց գիր գրեալ, թագաւոր թագաւորաց և տէր տե» րանց»: որ Որդի է Աստուծոյ, և կարգեալ դատաւոր կենդանեաց և մեռելոց. յՈրոյ անուն ամենայն ծունր կրկնի՝ երկնաւորաց, երկրաւորաց և սանդարամետականաց: Այն իսկ որոյ բնութիւն մարդկային միացեալ է անբաժանապէս ընդ Բանին Աստուծոյ, և միութեամբն գերազանցեալ ամենայն շնորհօք և փառօք, անմեղանչական և լի սրբութեամբ. առ որոյ գերազանցութիւն ոչ բաւիցեն հասանել ամենայն միտք միացեալք մարդկան և հրեշտակաց, և հազիւ թէ ստուեր մի աղօտ նշմարիցեն յանջատ անշփոթութենէ նորին:

Եւ արդ մեծս այս Աստուած, առաջի որոյ տիեզերք իբրեւ մէտ մի ի կշռոց համարեալ են, Աստուածամարդն առլցեալն սրբութեամբ՝ յոր մերձենալ իսկ ոչ կարէ ստուեր մեղաց, աստուածայինդ այդ գումար ամենայն լաւութեանց, ամենայն փափկութեանց, ամենայն լիութեանց, այն ինչ առեալ ըզպատկեր ծառայի և զմեղաւորի ի քաւութիւն անարգանաց Աստուծոյ որ ի մեղաւորաց անտի, այն ինչ եդեալ զանձն ի գրաւական ընդ մեր, և ընկալեալ յանձին զպարտս հաշտութեան մերոյ ընդ Աստուծոյ, ահա իսկ և իսկ, սարսեցարուք Սերովբէք և լռեսցեն փառաբանութիւնք մչտնջենաւորք, անդէն և անդ՝ վասն մեղաց մերոց և ոչ իւր ինչ, անհաճոյ իմն համարեցաւ յաչս Հօրն, և նշաւակ ցասման բարկութեան Տեառն ամենակալի. այն որ հաճութիւնն էր ամենասուրբ երրորդութեան՝ եղեւ նզովք վասն մեր. և ի ծոց փառաց և երանութեան հանգչէր՝ նպատակ եղեւ անարգութեան, ցաւոց և ոչնչութեան. այր ցաւոց, «նախատինք մարդկան և արհամարհանք ժողովրդոց»: Եւ ոչ այսչափ միայն, այլ թոյլ տայ Հայր յարձակել դժոխոց ամենայն զօրութեամբ ի վերայ նորա. վրէժխնդրութիւն վառէ զբազուկս դահճաց, և թուի իմն եթէ իմաստութիւն հնարս հնարի նորանոր տանջանաց, և արդարութիւն Աստուծոյ հանէ ի չտեմարանաց իւրոց զենս անծանօթս. ոչ դադարէ ոխ քինուն՝ մինչեւ ոչ ամբարձցի նա ի կախաղան ընդ մէջ երկնից և երկրի, բեւեռօք պնդեսցի, ընդ մէջ աւազակաց զետեղեսցի, և պատրաստեալ և տուայտեալ ի լուծմանէ ջլացն և ի տեղաշարժելոյ ոսկերաց, անհնարին ցաւօք արձակեսցէ զոգին վսեմական:

Մատիր արդ մեղաւորդ, և չափեա զչարութիւն մեղաց

չափ մահու աստուածորդւոյն. տես, քննեա, ո՞վ է որ կրէն, և զի՞նչ զոր կրէ, և վասն ո՞յր և վասն ի՞մ իմիք։ Սրբութիւնն Սրբոց, Աստուածամարդ է որ կրէն. և ծովք իմն ցաւոց են զոր կրէ. և որ թոյլ տայ կրել՝ Հայրն է, գերագոյնն ի հարս. իսկ պատճա՞ռք կրիցն, ոչ յինքենէ ինչ, այլ մեղք քո և ոճիրք։ Տես զնա, և ծանիր զչափ մեծութեան և ծանրութեան անարգանաց Աստուծոյ։ Զի եթէ արդար է Աստուած, և արդարութեամբ է այդ պատուհաս, ապա անհնարին և անասելի անկարգութիւն և գարշութիւն են մեղք։ Լո՛ւր, երկին, և ունկն դիր, երկիր. Աստուածամարդն չարչարի տառապանօք, և Հայրն տայ նմա չարչարել, ոչ վասն յանցանաց ինչ նորա, զի «Նա մեղս ոչ արար, և անօրէնութիւն ոչ գտաւ ի բերան նորա»։ այլ ըստ Եսայեայ, վասն անօրէնութեանց մերոց վիրաւորեցաւ։ Աստուած մեռանի ի խաչի՝ վասն մեղաց. — տեսարա՞ն սասանեցուցիչ տիեզերաց, և դժոխոց անգամ դղրդիչ։ Դատապարտեալն ի դժոխս՝ կրէ զսպատիժ պատուհասի յանցանաց իւրոց. իսկ ի Յիսուս ի խաչին տեսանեմ զԱստուած ոք ի նզովս և յանէծս եղեալ վասն իմոց մեղաց. անդ՝ ստեղծուած տառապեալ վասն անօրէնութեան իւրոյ, աստանօր Սուրբն Սրբոց, Որդի Աստուծոյ կենդանւոյ՝ ըստ կամաց ամենասուրբ Երրորդութեան մատնի ի վրէժ Աստուծոյ վասն եղերանց ստրկի միոյ ապըստամբի։ Ո՞վ մեղք, քանի՞ զարշելի ուրեմն ես։

Հայեա՛ց, ո՞ մեղաւոր, յերեսս օծելոյդ. տես զփրկիչն քո բեւեռօք պնդեալ ի փայտն մահու. տես զԱստուած քո մեռանելով ի խաչի. և որ քստմնելի ես է, դու. ինքն հաներ զդա ի խաչ, դու ինքն ես սպանողն. մի՛ ինչ երկբայիր, այո, դու ես պատճառ չարեացն՝ որ զայս անլուր անճառ ադէտս առթեցին նմա. ձեռք քո մխեցան յարիւն Աստուծոյ. դու պատառեցեր զմարմինս նորա ձաղկանօքն, դու հարեր զբեւեռսն ի ձեռսն և յոտս, և զփուշս ի գլուխն. դու ինքն ես մարդասպանն և աստուածասպան։ Ոչ աւելազանցութեան ինչ են բանքս, այլ ամենեւին ստուգութիւն. քանզի որ եղեւն պատճառք մահուան Քրիստոսի՝ նոյն ինքն է և պարտապանն. որպէս խայթուած օձի՝ առիթ է մահու խայթեցելոյն. և դիակն նեխեալ՝ ժանտացաւ սրածութեան. կամ գողակից՝ որ բացցէ զդրունս և առաջնորդեսցէ գողոյ կամ աւազակի՝ կցորդ է

և գործոց նորա և չարեացն որ անտի. ապա և մեղաւոր՝ պատճառք մահուան Քրիստոսի՝ պարտական է նմին։ Հաւատոց է վարդապետութիւնս, եթէ ոչ վասն յանցանացն Ադամայ միայն մեռաւ Քրիստոս, այլ և վասն ամենեցուն և իւրաքանչիւր ուրուք մեղաց, անդստին նախաձայնեալ Յեսայեայ. «Նա վիրաւորեցաւ վասն մեղաց մերոց, և պատժեցաւ վասն մերոց անօրէնութեանց»։ ոչ վասն Ադամայն միայնոյ, այլ վասն մերոց մեղաց, «Տէր մատնեաց զնա՝ առ մեղս մեր. Նա զմեղս մեր բառնայ, և վասն մեր չարչարի»։ Այո՛, վասն իմ, վասն քո չարչարի և մեռանի Քրիստոս. վասն քո, անառակդ, և վասն ազատեցութեանդ՝ վիրաւորի և ի սպանդ վարի՝ գառնն անարատ. վասն ցասման քինու քո՝ վիրաւորի հեզն սրտիւ. վասն հպարտութեան քո՝ կռփի խոնարհն և հանդարտ. վասն չարախօս, բամբասող, զրպարտիչ լեզուիդ՝ պապակի և տոչորի՝ աղբիւրն քաղցրութեան. վասն ստունգանութեանդ և խաբէական գործոց՝ ընդ անօրէնս համարի՝ ամենեւին արդարն և անբիծ։ Քանիցս մեղար և մեղանչես՝ այնքան և առիթ լինիս չարչարանաց և խաչի Փրկչիդ. և զի վասն մեղաց քոց մեռաւ նա՝ աստուածասպան ուրեմն ես դու։ Լսես, հաւանիս այսմիկ, և տաւաստաւ կաւին չկա՞ս ի բաց ի մեղաց այտի. հաւատաս և ո՞չ լինիս եթէ խստասրտութիւն մեղուցելոյն։ — Ոչ գիտեմ, ո՞ր մեծ իցէ՝ ծանրութիւն մեղացն, մեղաւորդ, և սարսեալ սոսկացիր. Աստուած մեռանի ի խաչի. մեռանի վասն քոց մեղաց. մեռանի նա, և դու ես խաչահանուն. տեսանես զնա, և ո՞չ լուծանիս յարտասուս։ Արեզական տեսեալ զնա՝ խաւարեցաւ, երկիր սասանեցաւ, վէմք պատառեցան, տատանին տարերք երկրի, և բնութիւն հաւատացեալ ի տագնապի կայ. և միայն մեղաւորն և չարեացամայն ի տագնապի կայ. և միայն մեղաւորն և չարեացամարտ՝ սալացեալ կա՞յ անզգայ... վարագոյր տաճարին հերձանի, գերեզմանք բանին, հեթանոսք բաղխեն զկուրծս և դառնան. և դու քրիստոնեայդ և պաշտօնեայ Քրիստոսի ո՞չ զարհուրիս, ո՞չ վրդովիս, ո՞չ յայլ յայլմէ լինիս... այլ և յանդգնիս յաւելուլ կամ կրկնել գչարչարանս Արարչիդ՝ յաւելլով մեղս ի վերայ մեղաց։

Ո՞րքան ցաւէր քեզ՝ եթէ յանգէտս հարեալ էիր արդեօք և ի մահ վիրաւորեալ զհայր քո կամ զեղբայր. իսկ աստանօր

Յիսուս կայ հարեալ և ի մահ վարեալ ի քէն, և այն՝ գի-
տութեամբ քո և կամաւ և չարութեամբ. և այն ոչ միան-
գամ, այլ որքան և մեղանչեսդ։ Խորշիս փողոտել զանասուն
մի, և գարշիս ի յօշատելոյ զդիակն բացընկեցիկ. և իշխես
զեռն՝ զոր զգուշանաս յանասնոյ միոյ՝ մխել չարաչար ի
Տէր քո և ի Փրկիչ. մեռաւ նա միանգամ վասն քո, և դու
ոչ շատացեալ՝ յարձակիս ի վերայ նորա՝ կամաւոր մեղանօքդ։
Ապառում ուրեմն ես քան զվէմս արաստոյս, անզգայ քան
զանասունս. և ոչ մարդ՝ կարեկից մարդոյ, թող թէ Աս-
տուածամարդոյ՝ վասն իւր և իւրովսանն ի մահ մատնեցելոյ։
Բղխեցէք արդ ուր ուրեմն, բղխեցէք արտասուք իմ. հա-
ռաչեա՛, սիրտ իմ, ի խորոց քոց, և լացից դառնապէս, որ-
չափ կարող եղէց, թէպէտ և ոչ ըստ արժան բաւականին,
զմահ Փրկչին իմոյ, և առաւել վասն մահուն պատճառի,
վասն ծանրութեան և զազրութեան մեղաց իմոց։ Ո՞վ խաչ-
ցեալդ վասն իմ և առ յինէն, Յիսուս, ակնարկեա յիս աչօքդ
նուաղեցելովք, և լո՛յծ զսիրտ իմ յարտասուս ապաշխարու-
թեան՝ ի վերայ մեղաց իմոց, որ մեծ են քան զամենայն չա-
րիս աշխարհի։

Բ. ԱՊԵՐԱԽՏՈՒԹԻՒՆ ՄԵՂԱՒՈՐԻ ԵՒ ԳԵՐԱՋԱՆՑՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԱՌ ՈՐ ՄԵՂԱՆՁԷ

Ամբարձ զաչս քո, տես, և կշռեա ի կշիռս խաչի զապե-
րախտութիւն մեղուցելոյդ։ «Հայեցարուք յոր խոցեցէքն»։
Լուր զողորմագին գանգատ խաչեցելոյդ. «Ժողովուրդ իմ,
» զի՞ արարի քեզ. կամ ի՞ տրտմեցուցի զքեզ, կամ ի՞ նե-
» ղեցի զքեզ». ադէ, ասա. «Զի՞նչ վնաս գտեր յիս՝ զի հե-
» ռացար յինէն, և գնացեր զհետ սնոտեաց». «Զինչ ինչ
» առնել էր ինձ՝ և ոչ արարի քեզ». — Առ սէր քո զանձն
իմ ետու ի մահ. «Վասն քո համբերի նախատանաց, և ա-
» մօթ ծածկեաց զերեսս իմ»։ Առ ի փրկել զքեզ ի մա-
հուանէ՝ եղէ աղքատ և տնանկ, այր տառապեալ, նախա-
տինք և արհամարհանք մարդկան, որդն և ոչ մարդ. ի թի-
կունս իմ ընկալայ հարուածս, վասն անօրէնութեանց քոց
վիրաւորեցայ, և ընդ անօրէնս համարեցայ, առ ի սրբել
զքեզ վիրօք իմովք։ Դահիճք իմ յաւելին ինձ ցաւս ի վերայ

ցաւոց։ «Ետուն ի կերակուր ինձ լեղի, և ի ծարաւ իմ ար-
» բուցին ինձ քացախ»։ «Ամենեքեան որ տեսանէին զիս՝
» արհամարէին զինեւ, խօսէին չրթամբք և շարժէին զգլուխս
իւրեանց... Նախատինք նախատեաց անկան ի վերայ իմ։
Այսմ ամենայնի համբերեցի առ սէր քո, քանզի պատուա-
կան եղեւ անձն քո յաչս իմ առ ի փրկել զքեզ, զի սիրեցի
զքեզ սէր յաւիտենական։ Եւ արդ, ասա, վասն որո՞յ ի բա-
րեացս յայսցանէ՝ անգոսնեցեր և ընդ վայր հարեր զիս։ Զա՞յդ
» Տեառն քո հատուցանես այդպէս, ժողովուրդ յիմար և ոչ
» իմաստուն. ո՞չ ես եմ հայրն որ ստացայ զքեզ, արարի
» զքեզ և հաստատեցի զքեզ. յուշ լիցին քեզ աւուրքն յա-
» ւիտենից... ո՞չ ես պահեցի զքեզ իբրեւ զբիբ ական. իբրեւ
» զարծուի տարածեալ զթեւս և ընկալեալ բարձեալ բերէի
» զքեզ ի վերայ միջնոցանց. ես միայն ածէի զքեզ, և ոչ
» գոյր այլ ոք օտար... ես դիեցուցի քեզ մեղր ի վիմէ և
» իւղ յապառաժէ... և դու յօրացեալ և գիրացեալ՝ անկու-
» շեցեր զսիրելին քո. թողեր և ապստամբեցեր ի Փրկչէ քում-
» մէ։ — Լուարուք երկինք. որդիս ծնայ և բարձրացուցի,
» և նոքա անարգեցին զիս». սնուցի և պարարեցի զնոսա
շնորհօք իմովք և խորհրդովք և ամենայն բարեօք հոգեւո-
րօք. և նոքա թիկունս դարձուցին ինձ. եթող զիս սիրելին
իմ, և հեռացաւ յինէն. կոչեցի զնա, և ոչ ետ ինձ ձայն։
Եւ առ ի՞նչ եթող զիս և գնաց. — վասն պատառի միոյ
հացի, և սակաւ ինչ գարւոյ. առ դոյզն ինչ և խաբէական
հեշտի, մոռացաւ զգութ սնդեանն և զառատութեան իմոյ.
մոռացաւ զարարչական խնամս իմ. և չար փոխանակ բար-
ւոյ հատոյց ինձ. արար չարիս մեծամեծս առաջի աչաց իմոց.
Այո՛, «զայս ամենայն արարեր, մեղաւորդ ապերախտ, և ես
» լռեցի քեզ». անտես արարի քեզ՝ զի դարձցիս ապաշխա-
րութեամբ. սպասեալ Ինձի՝ զի արասցես գործս բարիս, և
դու յաւելեր յանիրաւութիւնս. անօրէնութիւնք քո բարձրա-
ցան քան զգլուխ քո և առաւել քան զհերս քո. «արբեր
» զանօրէնութիւնս հանգոյն ըմպելւոյ». ակն կալեալ Ինձի
քեզ, և կարդայի՝ դարձ առ իս, որդի՞ հեռացեալ, և եղեց
քեզ դարձեալ ի հայր. և դու ոչ լուար. երեսք լրբենւոյ եղեն
քեզ. ծանրացան ականջք ի լսել զձայն տէրունի, զձայն
հայրենի, և զքո իսկ գիտակցութեանդ ձայն ներքին...։

Արդ ազէ՞, մինչչեւ իսպառ լռեալ եցէ կոչողին զքեզ, ըզ-
գաստացիր առ վայր մի, ո՞վ մեզաւոր զառածեալ, և ծանիր,
«զի չար և գառն եղեւ քեզ թողուլն զՏէր Աստուած քո».
զգուիթ արարչական սիրոյն, և զանթիւ բարիս երախտեաց
նորա առ քեզ։ Դարձիր առ նա և դարձցի առ քեզ. կարդա՛
առ նա, կոչեա՛ զնա, թէպէտեւ ամօթով, Հա՞յր իմ, և խառ-
նեա զարտասուս ապաշխարութեան յարիւնն փրկչական։ —
Այո՛, արդարեւ, թէպէտեւ ոչ եւս իշխեմ որդի անուանել
զիս այնքանով մարդասիրի և մաքրասիրի, այլ յարուցեալ
գնացից առ Հայրն հասարակաց և առ հայր իմ. յաղթեցեր,
ով սէր խաչեցեալ, յաղթեցեր խստասրտութեան իմոյ. ես
ինձէն խոստովան լինիմ զմեղս անձին իմոյ. մեղայ, և ապե-
րախտ գտայ քեզ՝ քան զանբան անասունս, որք ոչ մեղան.
չար քան զդեւս գտայ, որոց ոչ արարեր ողորմութիւն։ Ամա-
չեմ անձամբ յանձնէ. զիա՞րդ ցայս վայր անգիտացայ ապըս-
տամբեցայ, ապաշնորհ գտայ անբաւ շնորհաց Արարչին իմոյ
և Փրկչի. ամօթ երեսաց իմոց ոչ տայ թողլ ամբառնալ ըզ-
գլուխ իմ ի վեր. և զարհուրեալ ի դատաստանաց արդարու-
թեան ատենիդ, ապաւինիմ յատեան ողորմութեան քո։ Հայր,
մեղայ յերկինս և առաջի քո. ողորմեա ինձ։

Ոչ ուրեք այնպէս վեհափառ երեւի Աստուած թշնամանեալ
ի մեղաց՝ որպէս ի խաչելեալն Յիսուս. զնա տեսեալ՝ ի վե-
րայ հասանեմք եթէ ի հաշտութիւն գերագունին մեծութեան՝
պիտոյ էր և պատարագ գերագոյն, մահ աստուածային։ Հա-
մարեսցուք գամ մի եթէ ըստ տեսլեանն Յովհաննու՝ եղեւ
առ վայր մի լռութիւն յերկինս, դադարեցին հրեշտակք ի
մշտաձայն փառաբանութեանցն, և ամենայն դասք երկնա-
քաղաքացեաց անկան առաջի աթոռոյն Աստուծոյ, աղերսել
քաւութիւն վասն միոյ եւեթ մեղաց մարդոյ. յոր սակս յօ-
ժարին հրեշտակք նուիրել զսէր իւրեանց, մարգարէք՝ զա-
րիւրիւթիւն իւրեանց, առաքեալք՝ զքարոզութիւնս, մարտիրոսք՝
զարիւն իւրեանց, կուսանք՝ զողջախոհութիւնն, քահանայք՝
զեռանդն, խոստովանողք՝ զապաշխարութիւն, և ամենեքին
միկ մայրն Աստուծոյ զսրբութիւն իւր։ — համարեսցուք եթէ
իւրք բիւրուց անձինք ամենեւին մաքուրք և սուրբք՝ հա-
ւասս ամաց կրեցին վիշտս և տանջանս անհնարինս՝ վասն
մեղաց քաւութեան. — այլ չեն բաւականք առ այդ։ և

ամենայն կիրք և ճգունք, և զոհք և լաւութիւնք նոցա ոչ
զօրեսցեն գալ ի կշիռ թշնամանացն առ Աստուած. քանզի որ
թշնամանեն՝ Արարիչ է, իսկ բարեխօսքն՝ արարածք. — այս-
պէս հաւատացին մեծամեծ աստուածաբանք, Աթանաս, Կիւ-
րեղ, Եռինէոս, Թովմաս, և այլք բազումք. ոչ զօրէ արա-
րած մի սոսկ այնքան առաքինանալ՝ մինչեւ հաշտ առնել
զԱստուած վասն լուծման աստուածային օրինաց նորին, կամ
այնքան արժանաւորել՝ որչափ անարժան ողորմութեան են
մեղք. ոչ կարեն ամենայն լաւութիւնք լնուլ զվիհն մեծ՝
որ ընդ Աստուած անարգեալ՝ և ընդ արարածական բնու-
թիւն միջնորդիչ. և ամենայն արդիւնք նորին փոքր են առ
չարութեամբ թշնամանացն. զի և դոյզն ինչ թշնամանքն առ
Աստուած՝ լուծումն է յաւիտենական կարգի. և յորժամ որդն
մի աղկաղկ իշխէ օրինազանց լինել՝ ի լրումն պակասու-
թեանն՝ ոչ հաւասարի սէր այլոյ արարածոյ՝ որքան և վե-
րադաս իցէ. քանզի և մեղքն անհնարինս նուաստացուցանէ
զփառս Աստուծոյ, և անբաւ թողու միջոց։ Համառօտ ասել՝
ամենայն արդիւնք արարածական բնութեան չեն բաւական
ի քաւութիւն մահացու մեղաց։

«Ոչ բաւէին, ասէ Սուրբն Լեւոն, ամենայն արդիւնք
» Սրբոց՝ ի ջնջել զվիճակ մահու՝ յոր արկ զնա մեղքն, վասն
» որոյ պէտք եղեն գալոյ մեզ յերկնից՝ գերագոյն միջնորդի,
» որ եթէ չէր Աստուած՝ ոչ կարողանայր դարմանել» ըզ-
վտանգ մարդկութեանս. Աստուածամարդոյն միայն էր հնար
հաճել զարդարութիւն Աստուծոյ ցասուցելոյ։ «Ոչ ոք կա-
» րէր, ոչ յերկինս և ոչ յերկրի և ոչ ի ներքոյ երկրի բա-
» նալ զգիլոքն արդարութեան Աստուծոյ բայց միայն դու
» Գառնդ Աստուծոյ, արժանի գտար առնուլ զդիրդ, և բա-
» նալ զկնիք դորա, զի զենար, և գնեցեր զմեզ Աստուած,
» արեամբդ քով»։ Արդ պշուցեալ ի գառնն զենեալ ի խա-
չին՝ ծանիր, ով մեղաւոր, զգերազանցութիւն Աստուծոյ՝ զոր
թշնամանեցեր. այնքան մեծ է չարութիւն մահացու մեղաց
միոյ, զի առ փոխանակ նմին՝ հարկ եղեւ, ո՞վ ահագին զար-
մանալեաց, Բանին Աստուծոյ մարմնանալ, տանջել, խաչիլ
և մեռանել. եթէ Յիսուսի ոչ էր պատարագեալ զանձն իւր՝
ոչ էին բաւական ամենայն զոհք և պատարագք ի քաւել ըզ-
մեղսն սկզբնական և որ ըստ նմանէ. եթէ ամենայն զենլի

զոհեալ լինէր, և տիեզերք կուտորէին՝ չէին շատ ի քաւու-
թիւն մեղաց քոց, բայց միայն անձին միոյ յամենասուրբ
Երրորդութենէ մարթ էր և եղեւ ի հաշտութիւն Աստուծոյ։
Այնքան մեծ է գերազանցութիւն նորա, զոր ժպրհեցարդ, ոչ
բաւեմ ասել որովք յիմարութեամբ, անգոսնել և ընդ վայր
հարկանել։

Հայեաց վերստին ի խաչեցեալդ վասն քո, և քննեա, ով
իցէ դա. — ոչ ինքն Աստուած բան մարդացեալ, յորոյ ակն-
դժոխոց. ոչ դա ինքն՝ որ մինչչեւ էին երկինք և երկիր և ոչ
այլ ինչ արարած, այլ ունայնութիւն և ոչնչութիւն, և նա
միայն էր, և էր ի յաւիտենից. էր նա ամենաբաւական և
անկարօտ. և հաճեցաւ, և առանց ինչ աշխատութեան կամ
հնարից՝ ընդ հաճելն՝ եղեն և երեւեցան երկինք և երկիր,
ամենայն մասամբք և պէսպէս յօրինուածովք՝ ընդ որ ոչ
բաւեն սքանչանալ միտք և աչք։ Իմաստնագոյնն ի մարդիկ
խորհեցեալ գործ մի մեծ գործել՝ կարօտացաւ տասն բիւր
մարդկան գործաւորաց և արուեստագիտաց և երեքտասան
երկար ամաց աշխատութեամբ կառոյց կացոյց, ոչ աշխարհ
մի նոր կամ մասն աշխարհի, այլ տաճար մի միայն սակաւ
տասնեակ կանգնօք յերկայնութիւն և ի լայնութիւն և ի
բարձրութիւն։ Իսկ Աստուած՝ ասաց և եղեն, տիեզերք ամե-
նայն, անդէն և անդ ընդ ասելն և ընդ կամել, և ոչ պի-
տոյացաւ ոչ ժամանակ, ոչ նիւթ և ոչ արուեստ. և եթէ կա-
մէր և կամիցի՝ միւս եւս աշխարհ, և գեղեցկագոյն եւս, և
երրորդ՝ այլ եւս վայելչագոյն, և չորրորդ և այլ անբաւ,
առաւել քան զառաւել մեծք և չքնաղք՝ գոյանան և յօրինին,
ի վայրկեան ժամանակի. և նովին արագութեամբ՝ եթէ այն-
պէս ինչ կամք իցեն նմա՝ եղծանին և ջնջին ամենայն արա-
ածք և դառնան յոչինչ։ Ո՞վ մեծութիւն, ո՞վ զօրութիւն
հաւոր, զօրութիւն երկրպագելի։

Այլ դու ամբարձիր մտօք քան զերկինսդ տեսանելիս. և
ես ահեղագոյն ինչ քան զամենայն ահեղ տեսարանս երկրի.
մբոխ իմն ազազակի և խռովութեան ի բարձունս բարձանց.
ստերազմն անբացատրելի զօրաց հրեշտակաց։ «Միքայէլ և
հրեշտակք իւր կռուին ընդ Վ.իշապին, և Վ.իշապն տայ
պատերազմն զօրօք իւրովք». Արուսեակն ամբարտաւա-

նեալ ձգէ զհետ իւր զերրորդ մասն զօրութեանց երկնից,
«Ելից, ասէ ի վերոյ քան զաստեղս երկնից արկից զաթոռ
» իմ. ելից ի վեր քան զամպս. եղէց նմանող Բարձրելոյն».
միոյ հրեշտակի եւեթ զօրութիւն բաւական է ի խանգարել
զտիեզերս. իսկ այն դասուց հրեշտակաց ի մի վայր և ի մի
գործ խմբելոց՝ քանի՞ ահաւոր, քանի՞ մեծ և անչափ իցէ
զօրութիւն ուժոյ։... Այլ յակնարկել միայն Աստուծոյ՝ այն
ամենայն զօրութիւն լուծեալ եղծանի. և ի բարձանց անտի՝
կործանին հրեշտակքն ապստամբք՝ անդր քան զանդունդս
երկրի, անդէն ի միում քթթել ական, ի խորս անյատակս։
Ո՞վ իցէ նման քեզ, Տէր. և սակայն իշխէ մեղաւոր թշնա-
մանել զքեզ։

Մատիցէ արդ և ի յետին տեսարան մարդկութեան, ի տեղի
դատաստանին, ուր ժողովեալ հաւաքին ամենայն ազգամա-
ծինք բիւրուց, որոց ոչ զոյ թիւ, միանգամայն ի հնչել փո-
ղոյն՝ յարուցեալք և ի մի վայր գտեալք՝ յամենայն ծագաց
երկրի և ի խորոց ծովու։ Մի բարբառ կոչեաց կուտեաց
զայնքան անթիւ բազմութիւն. և մի բարբառ՝ ահաւոր և
անգարձ առ ոմանս՝ Երթա՛ք յինէն, իսկ և իսկ իջուսցէ
յանդունդս դժոխոց. և քաղցր առ այլս՝ Եկա՛ք օրհնեալք,
մուծցէ յարքայութիւն երկնից. և ի նմին սուղ պահու եր-
կինք և երկիր զոր տեսանեմքս՝ լուծեալ անցեալ ոչնչացեալ
իցեն։ Ո հ, քանի՞ մեծ, քանի՞ անկշռելի և անբաւելի զօրու-
թեան պէտք իցեն առ ի գործել ի վայրկենի՝ զայսպիսի գործ՝
Գրեաթէ ի վեր քան զմիտս. այլ վերագոյն եւս է մեծութիւն
և գերազանցութիւն ամենակալին Աստուծոյ. որում ամենայն
ծունր կրկնի, երկնաւորաց, երկրաւորաց և սանդարամետա-
կանաց. և ամենայն լեզու մարդկան և երգք հրեշտակաց
խոստովանին զմեծութիւն նորա, և չեն բաւականք մեծա-
ցուցանել զնա։

Եւ դու՝ հատ մի աւազոյ և ունգ մի յարդի՝ զոր դոյզն
հողմ հալածէ, դու ոչ ինչ մի, մեղաւո՞ր դ, յաւակնի՞ս գլուխ
ամբառնալ ընդդէմ այնչափ անչափ գերազանցութեան Աս-
տուծոյ. — դու՝ որ չիշխես շան միոյ ի դիմի հարկանիլ,
խուսափես յարջոյ միոյ և յիժէ, ո՞չ երկնչիս յԱստուծոյ՝ որ
կարողն է իսկ և իսկ կորուսանել զքեզ ի դժոխս և յոչինչ։
Ապաքէն չառնուս ի միտ զմեծութիւն չարեաց մեղացդ՝ զոր

գործես. սակայն շատ լիցի քեզ յիմացումն՝ մեծութիւն հնարից քաւութեան մեզաց, Աստուծոյ մարդանալն և մեռանել, առ ի ցոյց մեծութեան մեղաց։ — Այլ ոչ զօրութեամբն միայն մեծ և գերազանց յայտնի Աստուածդ թշնամանեալ, այլ և իմաստութեամբն, որ զամենայն ի վայրկենի նկատէ, զանցեալ և զապագայ՝ հանդերձ ներկայիս, և ոչինչ ոչ թաքչի ի նմանէ։ Զի՞նչ ասէիր՝ եթէ համարէիր զոք գիտել զամենայն որ ինչ գրեալ իցէ յամենայն գիրս, և ի վերայ այնոցիկ՝ ունել զիմաստութիւն ամենայն իմաստուն մարդկան, նաեւ զսրբոց և զհրեշտակաց գիտութիւնս. այլ այդ ամենայն ոչ ինչ է առ գիտութեամբ Աստուծոյ. առաջի որոյ մերկապարանոց կան ամենայն գործք և խորհուրդք ամենայն մարդկան եղելոց և որ լինելոցն են, վասն այնորիկ և ի վայրկենի դատելոց է զամենեսին և զիւրաքանչիւր միանգամայն, և չչունչ մի չրթան, և խորհուրդ մի յանկարծոյն անցեալ ընդ միտս ուրուք՝ ոչ վրիպի յամենատես աչացն և յամենագէտ մտաց, և միշտ և հանապազ գիտէ և տեսանէ զամենայն եղեալս և լինելիս յամենայն դարս և բոպէս ժամանակաց և յամենայն ծագս տիեզերաց։ — Զամենայն իմաստութեամբ կարգեալ է Աստուծոյ. վասն որոյ և ընդդէմ այնքանոյ մեծի իմաստութեան և գիտութեան նորա հարկանին մեղք. իբրու թէ ի կռիւ կրեալ յաւիտենական կարգաց և օրինաց, որոց պատկառ կան հրեշտակք և սուրբք, և օրէնք մարդկան։ Որպիսի՞ ոք թուէր քեզ՝ որ ի մեծահանդէս իմն ժողովի պետութեանց և պաշտօնէից յանդգնէր՝ առնուլ և առուն կոխել զգիրս օրինաց և սահմանաց ազգին և ազանց. ո՞չ ապաքէն բաժին նորա կամ ընդ յիմարս և խելայեղեալս լինէր, կամ ընդ քրէական յանցաւորս։ Իսկ քո մեծ եւս է յիմարութիւն, մեծագոյն եւս ամբարշտութիւն յ'անցանելդ զօրինօքն Աստուծոյ, առաջի ամենատես աչացն, թող թէ առաջի մարդկան և հրեշտակաց։ Եւ ահա ի քաւութիւն այդպիսի եղերան իմաստութիւն Աստուծոյ միակ հնարս եգիտ զտնօրէնութիւնս Որդւոյն Աստուծոյ։

Զի՞նչ ասասցուք և որ զոյգ զօրութեանն և իմաստութեան՝ անբաւ և անճառ Սրբութիւն է Աստուծոյ առ որում ամենայն ուզղութիւնք առաքինեաց՝ թեթեւ թուին քան զխարդախութիւն ստութեան միոյ. զի այնքան չարիք կան ի մեղս

մինչեւ յամենայն զօրութենէ իւրմէ ատէ զայն Աստուած, և ոչ երբեք հաշտի կամ ներէ նմա. մերժէ զայն իբրեւ զմիակ հակառակ իւր։ Եթէ, քա՜ւ լիցի ի հաւատալոյ, այլ ասացից ըստ կարգի բանից, եթէ հնար էր գերագունին և գերամաքուրն հոգւոյ ստեղծականի, զոր պաշտեմքս, հնար էր մեղս մի գործել մահուշափ, անդէն եղծեալ լինէր յաչս Աստուծոյ ամենայն սրբութիւն նորա, և տարամերժեալ յիւրմէ մինչեւ ի դժոխս. այնքան մեծ է սրբութիւն յաչս Սրբոյն Սրբոց։ Տեսաք Գ՚Ռիսոս ի խաչի, որ զի գկերպարանս մեղուցելոյն առեալ էր և զպարտսն, թէպէտեւ սուրբ էր և ամենասուրբ, ի մահ մատնեցաւ և յաստուածային վճռոյ. և «Յիւր Որդին ոչ խնայեաց Աստուած», ասէ Առաքեալն։ Մեղութիւնն ամենապայծառ՝ ընդ մեղս համարեցաւ, զի երաշխաւոր եղեւ մեղուցելոց։ Ո՜վ, ո՜րքան գեղեցիկ, ո՜րքան ազնիւ է մաքրութիւն. և ներհակաբար՝ ո՜րքան տգեղ և զազիր անմաքրութիւնն. և ո՜րքան եւս մեծ ամպարշտութիւն և անզգայութիւն՝ որոյ կամօք և գիտութեամբ ներկայութեան Աստուծոյ՝ փողոտիցէ իմն զանմեղութիւն՝ անմաքուր գործովք։

Զի՞նչ եւս յաւելցուք մի մի յամենայն լրութեանց լաւութեանց Աստուծոյ մերոյ, առ ի խելամտութիւն գերազանցութեան նորա. — զանճառելի քաղցրութիւնն, զոր թէ հնար էր գամ մի տեսանել դժոխոց՝ ոչ եւս լինէին դժոխք. — զանբաւելի գեղեցկութիւնն, զոր թէ զոյր և ընդ աղօտ իմն մի հաղ տեսանել՝ դատապարտելոցն, յանձն առնուին տասնապատիկ եւս տանջել և մի՛ զրկիլ յայնմ միակ նուագէ. — զանբաւապատիկ բարութիւնն, որով խնամէ զամենայն արարածս, զորս և մինչեւ գոյացուցեալ՝ զգուէր ի յաւիտենական տեսութեան իւրում։ — Այլ զի՞նչ մանաւանդ ի վերայ այսոցիկ բերցուք՝ յանդիման ունելով և զմեղս մեր. — միթէ զայդոսիկ վայել էր փոխանակել այնքանոյ բարութեան, այնքանոյ քաղցրութեան և մարդասիրութեանն Աստուծոյ առ մեզ. — զա՞յս գարշութիւն, զա՞յս ցրտութիւն, զայս անյիշութիւն էր հատուցանել՝ Արարչին քում և Փրկչի, խնամողի և սիրողի. և համօրէն ասել, բարեխօսի քո և միջնորդի, պատարագելոյ և մահացելոյ վասն քո։ — Եւ գիտելով քո զայս ամենայն, բազում անգամ իբրեւ զփարելեաւ գիրկս արկեր զմեղօքդ. ոչ սրբութեանն Աստուծոյ ակն ածեր, և ո

քաղցրութեան հեզոյն Յիսուսի. եղջերք խոզից քաղցրացան քեզ երբեմն, քան զսարսափելի և զամենասիրելի մարմին և արիւն Փրկչիդ. և այն վասն իրաց որ քան զամենայն ինչ ատելի են Աստուծոյ. և քեզ իսկ թերեւս յետոյ զզուելի, այլ աւա՜ղ և ափշութիւն, դարձեալ վերստին ի նոյն անկղիտացեալ դու կրկնեալ։ Եւ զի՞նչ ստիպէր զքեզ յայդքան վնասակար քեզ գործ. միթէ սպառնալի՞ք ինչ մահու. — և ո՞չ մանաւանդ անկ էր զմահ առնուլ յանձն՝ քան զայդ գործել։... Զիք արդարեւ յիմարութիւն մեծ քան զգիտել զմեծութիւն չարեացն՝ և ի նոյն յօժարիլ. և ոչ չարութիւն մեծ՝ քան զգիտութեամբ մեղանչել Աստուծոյ ամենակալի, ամենասրբոյ, ամենալցուցչի։ Զիք և ոչ մի բան չքմեղանաց առ այս կամաւոր յիմարութիւն. բայց եթէ անձին զգալով՝ անկանել ի խորս ողորմութեանցն Աստուծոյ, որ ցայս վայր երկայնամիտ լինի մեղուցելոյ, և տայ եւս ժամանակ ապաշխարութեան մինչչեւ է յետինն հասեալ ժամ. և ասել ի խորոց սրտէ. Տէր, դու գիտես, գիտեմ և ես՝ զի մեղայ քեզ. մեղայ չարաչար, մեղայ բազում անգամ. զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ. գիտեմ և զանհնարին մեծութիւն մեղացս, թէպէտ և ոչ ըստ բաւականին առնում ի միտ, ապ՝ եթէ ոչ հարկ էր ինձ այժմէն սրտաբեկ մեռանել. այլ դու ներես ինձ, և տաս կեալ, զի զղջացայց և ապաշխարութեամբ քաւեցից զմեղս իմ։ Այլ զի՞նչ կարող իցեմ առնել ի քաւութիւն այնքան չարեաց. ո՞ր հնարք, ո՞ր ճգունք բաւական իցեն ի բժշկութիւն վիրաց հոգւոյս։... Ծովք արտասուաց չեն առ այս բաւական. այլ չիթ մի արեան կենարարին իմոյ Յիսուսի շատ իսկ է ինձ. և ես բոլոր անձամբս անկանիմ յաղբիւր կողին Քրիստոսի, առ ի լուանալ, ընչիլ, սրբիլ ըստ չափու գթութեանցն զոր չափեսցէ անարժանիս, և այսու վստահութեամբ պատրաստ գտանիլ առ մահ՝ յորժամ թէ գայցէ՝ ի հրամանէ Արարչիդ և կոչողիդ։

Գ. ԲԱՐԻՈՔ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ

Նաւաբեկելոց յանմեղութենէ՝ միակ փայտ ապաստանի յալիս աղտեղի ծովուն՝ է Ապաշխարութիւն. իսկ դեղ մեղաց՝ խոստովանութիւնն. այնքան ազդոյ և առողջարար դեղ՝ որքան թէ բարւոք յարմարեալ իցէ և պաշտեցեալ. զի թէ ոչ այնպէս՝ թերեւս ոչ միայն ոչ ինչ օգտիցէ, այլ և վնասիցէ. որպէս և յաճախ իսկ պատահէ՝ ոչ բարւոք խոստովանողաց՝ պարտական եւս գտանել քան յառաջն. այնու մանաւանդ՝ զի ոչ է մարթ այլով դեղով դարման տանել հոգեկան ախտին. ոչ պահօք, ոչ աղօթիւք և ոչ ճգամբք, յորժամ չիցէ անյաղթելի արգել ինչ խոստովանութեան. և յայտ է ի վարդապետութենէ եկեղեցւոյ՝ զի չխոստովանութիւն մահացու մեղաց կամ չարաչար խոստովանութիւն՝ ոչ փրկեն զմարդ։ Ի երբեմն, թերեւս և միշտ, զի թերակատար խոստովանութիւն չար քան զչխոստովանութեամբ սրբել զնիզ, իսկ զմտաւ եթէ հարկ է խոստովանութեամբ սրբել զնիզ, իսկ խոստովանեալն այն ոչ բարեպէս՝ համարի կատարեալ ըզպարտս և անհոգանայ. և որպէս չիք հիւանդութիւն չար քան զայն զոր չիմանայ հիւանդն, այսպէս իմասցի և վասն հոգւոյ։ — Բազում զգուշութեան պէտք պատահէ անբաւական խոստովանեալ քան զկարծիս յաճախ պատահէ անբաւական խոստովանութիւն. և որպէս դժուարին է յաճախ ընտրել զընտիր առաւել քան զկարծիս յաճախ պատահէ անբաւական խոստովանութիւն։ Եւ ոչ սակաւք իցեն որ խաբիցեն անդամանդ ի խեցբեկոր թրուչայէ, այսպէս և զբարին և զչար ձամբ զանձինս, սակաւ ինչ քննութեամբ խզճի մտացն և սակաւագոյն եւս ստրջանօք՝ համարելով ապաշխարեալ. և խայթ իսկ խզճին՝ մերթ բթանայ, մերթ աւելազանց խզճահարութիւն գրի, և մերթ մտատանջութիւն անտանելի համարի մանր և անաչառ քննութիւնն։

Այլ ի մերձենալ և յազդել օրհասին՝ այլափոխին և վերին երեսք սրտի, և երեւի պզծութիւն աւերածոյն։ Ո՜հ, քանի՞ կսկծալի իցէ յայնժամ կասկած թերակատար խոստովանութեանց։ Թուիցի հոգւոյն տեսանել որպէս յորմն տաճարին Բաղդասարայ կարկառեալ ձեռն դատավճիռ, գրելով՝ Կշռեցաւ և գտաւ սակաս՝ ի կշիռս արդարութեան։ Աղէ յիշեա

Ճառք հոգեւորք. — Ա.հ.ան

այժմէն զոր միանգամ գործեցերդ, և տես որով կշռով կշռեցեր, կամ զիարդ բաժանեցեր զյոռին և զբարին. զի մի յայնմ աւուր վերջնումն ասիցես, թէ խաբեցայ ուրեմն. և ուր կենդանանալ կարծէի՝ անդ ազդոյ վէրս ընկալեալ եմ, զդեղն առողջարար ի թոյն փոխելով, և անպատրաստ և անպատշաճ կիրառութեամբ։ Այլ զի մի հասցէ և քեզ տագնապն այն անդարման, եթէ խիղճ ստգտանէ ըզքեզ, հոգացիր կանխաւ խաղաղել զամենայն խէթ՝ բարւոք և կատարեալ խոստովանութեամբ, որպէս զի եթէ և յետին յանկարծահաս հիւանդութիւն ոչ ներիցէ խոստովանել, մի զանգիտեսցէ սիրտ քո, յիշելով զի արարեր վաղագոյն զոր կամէիրդ յայնժամ առնել։ Եւ առ այս մի թուեսցի մեզ ծանր՝ յիշել որպէս նորուսք ոմանք, որպիսի՛ իցեն պայմանք բարւոք խոստովանութեան, և պարզապէս խորհրդածել ի նոսին, այսինքն ի Քննութիւն խղճի մտացն. ի Զղջումն, ի Խոստովանութիւնն խորհրդական, և ի Հատուցումն։

Ա. ՔՆՆՈՒԹԻՒՆ ԽՂՃԻ։ — Բազմաց անտանելի իմն տանջանք թուին մտադիր քննութիւն խղճի և վերիվայր վրդովումն սրտի. այլ եկեղեցի շատ համարի իւրաքանչիւր ումեք ըստ իւրում կարի և վիճակի բարի յօժարութեամբ քննելն, ըստ չափու որով վարիցի ի սահմանելն կամ ի տնտեսել զկարեւոր ինչ իւր գործ. և առ այս զանազան իցեն պայմանք ըստ չափու ժամանակի յետին խոստովանութեանն, ըստ հանգամանաց մեղացն և ըստ իւրաքանչիւր վիճակի և պաշտաման մարդկան. գիտելով և զայն՝ զի արձակեալ համարին մեղք ոչ յիշեցեալք յետ խնամով քննութեան։ — Դիւրագոյն հնարք և օժանդակ բարւոք քննութեան՝ առաջարկին սովորաբար պատուիրանքն Աստուծոյ և եկեղեցւոյ և պարզք իւրաքանչիւր վիճակի, յորոց վերայ ի դէպ է յածեցուցանել իմն զսիրտս, որպէս ընդ ճանապարհս յաճախեալս ի նմանէ. յիշել և զդէպս ինչ նորս հանդիպեալս, և զանձինս՝ ընդ որոց յաճախ կենցաղավարի, կամ ընդ որոց եղեւ նմա գործ կարեւոր. անմոռաց ունելով իւրաքանչիւր զիւր սովորական կամ զյաճախեալ յանցուածս, թերութիւնս, զբոյս բարուց. և մանաւանդ զունակացեալ ինչ ախտ կամ կիրս։

Առանձինն իմն խնամով քննելի են և երկու ազգք մեղաց, Գաղտնիքն և Օտարինք։ — Գաղտնի մեղք են՝ զորս ունա-

կացեալ կիրք մեր քօղարկեալ՝ թեթեւագոյն երեւեցուցանեն, և կամ խոպառ թաքուցանեն ի ծալս խղճին՝ սնոտի պատրուակօք կամ սկզբամբ և անարի ներողութեամբ անձամբ անձին, զի յորժամ կամք անկարգ յօժարութեամբ զակատիցին յինչ՝ զհետ մոլորութեանն ձգեն և զմիտս՝ օրինաւոր ցուցանել զապօրէնն. և բանն փոխանակ առաջնորդելոյ սրտի, ի սրտէ անտի ձգեալ վարի, և զոր պարսաւէրն երբեմն՝ ջատագովէ. և եթէ ոչ զգաստացի վաղագոյն՝ ի կուրութիւն գիտակցութեան գթէ, սնոտի խռովս խղճի համարելով զծանր և զկարեւոր ազդմունսն, և սիրէ կալ մնալ ի տգիտութեան։ Այլ յօրհասին նշոյլ աստուածային արդարութեան փարատեալ զխաւարն կարկատուն՝ նշանակէ զվայրապար հեթեթութիւնս մտացն, զհնարագէտ նրբութիւնս, և զկամաւոր մբռնումս մտացն, զհնարագէտ նրբութիւնս, և զկամաւոր մբռնումս մտացն, զանդիման առնէ զվնաս անվտանգ և ներելի հաթութիւնսն. յանդիման առնէ զվնաս անվտանգ և ներելի հաթութիւնսն. յանդիման առնէ զվնաս անվտանգ, բամբասանաց, ըզմարելոց հեշտութեանց, ընտանութեանց՝ որ եթէ ոչ կատարեալ կեղծաւոր զգուշութեանց ինչ յայլոց՝ որ եթէ ոչ կատարեալ կեղծաւոր զգուշութեանց ինչ յայլոց՝ որ եթէ ոչ կատարեալ ատելութիւն՝ այլ նուազութիւն էր սիրոյ, զկարճմտութիւնս՝ ատելութիւն՝ այլ նուազութիւն էր սիրոյ, զկարճմտութիւնս՝ ոչք ցասման ծնունդք էին, և զանցառութիւնս մեռելութեանց ոչք ցասման ծնունդք էին, և զանցառութիւնս մեռելութեանց և պահպանութեան զգայարանաց՝ ընդ որս մուտք և ելք եղեն մեղաց՝ առ թեթեւ կամ յոչինչ գրելոց։ — Ըստ այսոցիկ և մեղաց՝ առ թեթեւ կամ յոչինչ գրելոց։ — Ըստ այսոցիկ և խորհուրդք և իղձք չարք՝ բաղում անգամ մնան թաքուն՝ խորհուրդք և իղձք չարք՝ բաղում անգամ մնան թաքուն՝ իբրեւ ոչ նորք ինչ, կամ ոչ ներգործողք, և կամ արագ արագ սլացեալք անցեալք, և այնքան յաճախ՝ մինչեւ անզգալի սլացեալք անցեալք, և այնքան յաճախ՝ մինչեւ անզգալի կամ անհամար լինել. սակայն և ոչ անհետ ոչ անգիծ և անբիծ թողուն զսիրտ և զմիտս։ Հարկ է ճրագաւ քննել զերուսաղէմ հոգւոյ։

Իսկ օտարին մեզք՝ որոց պարտական գտանիմք, են կամ որ ինչ գործակցութեամբ լինին, և թելադրութեամբ, հաւանութեամբ, պատճառս տալով. և կամ ոչ զգուշացուցանելով զոք, ոչ ուսուցանելով ոչ սաստելով՝ ուր արժանն էր. և միշտ յանցանէ մարդ յորժամ թէ կարէր և ոչ խափանէ զյանցուածս այլոյ ուրուք։ Քաջայայտ է զի բազում զգուշութեան պէտք են յայսմ մասին՝ ծնողաց և դաստիարակաց, մեծաւորաց և տերանց, ի վերայ ստորակայիցն և ընդ ձեռամբ եղելոց. և ոչ պակաս քան զնոսա՝ ամենեցուն իսկ, որոց պէտսպէս օրինակաւ, գործով և բանիւ, գրութեամբ, նիւթական իրօք, զարդուք, և ամենայնիւ որ հրապուրիցէ

զզգայարանս, կարեն առթել գայթակղութիւն։ Այնքան և աղիտաբեր են չարիքս՝ որքան զի յաճախ անտես մնան, և որպէս կարեն զայլս ի կորուստ մատնել, նոյնպէս և մեղք այլոց կարեն կորստեան առիթ լինել այնմ՝ որ ետ գայթակղութիւն ոչ միայն գիտութեամբ այլ և յանգէտս, և եթէ համարիցիմք իսկ թէ ոչ ոք ընասեցաւ ի գայթակղելի ինչ գործոց մերոց, սակայն զի կարէր և գայթակղել ոք՝ ապա չարն չար է միշտ. այսպէս և զէն մահացու արձակեալ՝ թէպէտ և ոչ ումեք դիպիցի, այլ որ արձակեացն՝ պարտական և երբեմն մահապարտ դատի։

Առ դիւրաւ ի վերայ հասանել չարեացս, որպէս և այլում ամենայնի՝ ընդ որ երկբայիցին կամ մանաւանդ կամիցին երկբայել միտք, զի թեթեւ կամ յոչինչ զրեսցի գործն, ի դէպ է հարցանել ցանձն իւր, եթէ յայսմ վայրկենի կայր ինձ մեռանել՝ գործէ՞ զայս ինչ. կամ զի՞րդ դատիցեն այլք զգործս զայս, և զի՞րդ մանաւանդ ոսոխն հոգւոյ իմոյ ամբաստանիցէ յատենին Աստուծոյ։ Ըստ այսմ լինել և խոստովանութեանն՝ անպատրուակ, և առանց հնարս հնարելոյ ի յաւելուլ կամ ի նուազեցուցանել զչափ ճանաչողութեան գիտակցութեան. և եթէ հնար է՝ այնպէս տեսանել և ցուցանել զսիրտ՝ որպէս տեսանէն Աստուած, և տեսցէ ամենայն աշխարհ յաւուրն դատաստանի. տեսցէ թերեւս և ինքն մեղաւորն յօրհասի իւրում, եթէ ոչ ազմկեսցեն զմիտս նորա կարիք մահուան. վասն որոյ և արժան և վայել է յառաջ քան զյետին վտանգն՝ կատարել զհոգեկեցոյց քննութիւն գործոց կենացն անցելոց։

Բ. ԶՂՋՈՒՄՆ. — Ի վերայ ամենայն կամաւոր ջանից ի ծանօթութիւն անձին գիտակցութեան, մարթ է տակաւին ոչ ժամանել ի կատարեալ գիտութիւն, և ոչ վասն այնր դատապարտիլ. այլ ոչ է մարթ արդարանալ՝ եթէ թերակատար իցէ և զղջումն, որոյ հիմնական էութիւն է, ըստ վարդապետութեան եկեղեցւոյ՝ ատելութիւն մեղացն և այս է կարեւոր քան զչգործելն միւսանգամ զմեղսն։ Իսկ ատելութիւն յայնժամ է՝ յորժամ զգայ սիրտ ցաւ և տրտմութիւն ընդ մեղանչելն, վասն որոյ և հաստատութեամբ դնէ ի մտի ոչ եւս մեղանչել։ Եւ որպէս նոյն վարդապետութիւն ազդ առնէ՝ հարկ է գերբնական իմն լինել զղջմանն, այսինքն՝ վասն գե-

բազանց ինչ պատճառի, զի և անմարթ է ընդունակ լինել բարւոք զղջման առանց գերբնական շնորհաց։ Կարեմք մեբարւոք զղջման առանց գերբնական շնորհաց։ Կարեմք մեբովսանն մեղանչել, այլ ոչ սրբիլ առանց օգտութեան վերին շնորհաց. առանց որոյ ի զուր են ամենայն ճիգն և հնարք ի շարժել զսիրտ ի զղջումն. վասն որոյ և ոչ կարեւոր համարին արտաքին նշանակք և զգացմունք սաստիկ ցաւոց, այլ սաստկութիւն կամաց. և որպէս յամենայն սրտէ և յամենայն զօրութենէ պարտ է սիրել զԱստուած, նովին զօրութեամբ և պարտ է ատել զմեղս. և այս ոչ է գործ փոքր։ Ցոլովագոյնս գտի, ասէր Ս. Ամբրոսիոս՝ պահողս անմեղութեան իւրեանց, քան բարւոք ապաշխարողս. և զի այնքան դժուարին է պահել զանմեղութիւն մինչեւ ցվախճան, քանի՞ ուրեմն դժուարին համարիցի արժանաւորն ապաշխարութիւն, ըստ բանից Սրբոյս. որում և այլ ոք ձայնակցի յասելն, եթէ Տեսի զդժոխս լցեալ անբաւական խոստովանութեամբք։

Ի զղջումն՝ ըստ ասացելոցս՝ հաստատէ Եկեղեցի զվաւերութիւն խորհրդոյ ապաշխարութեան. վասն որոյ և անկ է ամենայնիւ ջանալ գամագիւտ լինել այսմիկ, որպէս զի և մի իւիք տագնապեսցի գիտակցութիւնն։ Ըստ սաստկութեան այնր զղջման՝ յաւելցին և շնորհք, յաւելցի թողութիւն մեղացն, յաւելցի հաստատութիւն կամաց, յաւելցի և անդորրութիւն ոգւոյ՝ անստգիւտ դտանելով զներքին վկայողն իւր։ Իսկ եթէ խէթ վրդովք տակաւին յուզիցեն զնա, գոյ խիթալ՝ եթէ ոչ ըստ արժան բաւականին եղեալ իցէ զիզջն։ Սակայն և արժան է քաջ զգուշանալ ի սնոտի հոգոյ և յերկեղէ՝ ընդ բաւականութիւն զզջմանն. զի ոչ ոք գիտէ, ըստ Գրոց, սիրո՞յ արժանի իցէ եթէ ատելութեան, յաչս Աստուծոյ. այլ խոնարհութիւնն, յոյսն և սէր լցուսցեն զթերի գիտութեանն և խազաղեսցեն զսիրտ. և շատ համարեսցի գեռանդուն ջանսն առ ի ստանալ զբարւոքն զայն և գերազանց զզջումն։

Առ այս ստացուած՝ առ ի մէնջ հնարք իցեն, հանապազ ի նոյն տենչ, Աղօթք և Թախանձանք, մանաւանդ ի մատուցման Սրբոյ պատարագի. — Խոկումն և քննութիւն վարուց կենաց մերոց, և ծանր ծանր յանցուածոցն. — չարժառիթքն զղջաբերք՝ գարշութիւն մեղաց, բարութիւն և գերազանցութիւն Աստուծոյ արհամարհելոյ ի մեղաց անտի. — յիշատակ վախճանի կենաց, և հանդերձեալքն, յաւիտենական երանութեան

թիւնն կամ մշտնջենաւոր տանջանքն։ Իսկ փորձ ստոյգ զղջման և ատելութեան մեղաց՝ իցէ ոչ եւս դարձուցու ի նոյն մեղս. լալ արժան է զմեղս, ասէ Սուրբն Գրիգոր, առ ի չգործել զմեղս արժանիս լալոյ։ Ապա ոգի կամ էութիւն բարւոք զղջման ի հաստատուն կամս ուղղութեանն է, և ի բացարձակ կամս, ոչ եւս մեղանչելոյ մահուչափ. զմտաւ իսկ ածելով զդէպս և զառիթս՝ յորս մարթ իցէ գթել ի մեղսն, և կանխաւ առնլով յանձն մեռանել քան մեղանչել. և եթէ ի ներելիս եւեթ մեղանս վրիպիցիմք՝ առաջադրել զգուշանալ ըստ կարի մերում։ Եւ զի տկարութիւնս մեր զանգիտող է, այլ և զաղփաղփուն, և անհաւատ իմն թուի յամենայն մեղաց թօթափիլ և ազատանալ, գուն գործեսցի դիմամարտիլ ընդ գլխաւորի և ընդ յաճախելոյ մեղաց կամ ունակացելոյ ախտի, և յայնմանէ մանաւանդ որ և այլ ինչ մեղաց լինի պատճառս. որպէս զի նուաճմամբ չար զօրավարին՝ նուաճեալ լիցին և չար զօրականքն։ Եւ ի վեր քան զամենայն պարտ և արժան է զգուշութիւն և արգել առթից մեղացն. հրաժարումն յանձանց և յիրաց գայթակղութեան. և հատուցումն որպիսի և է պարտուց՝ զոր արդարութիւն պահանջիցէ։ Յետ ամենայնի յուշ լիցի և այս, զի որպէս հարկ է երկիւղ և զգուշութիւն, այսպէս և ի դէպ է հերքել զյուսահատութիւն, եթէ յետ այնքան պատրաստութեանց և առաջադրութեանց՝ խաբեալ և մոլորեալ գթիցեմք ի նոյն յատելին և ի զզուեալ մեղս։ Ո՜հ, քանի՜ մեծ է տկարութիւն մեր. քանի՜ յողդողդ բնութիւնս մեր. քանի՜ բուռն են տոռունք ախտից. — այլ ոչ միշտ թերութեան զղջման և առաջադրութեան արգասիք են գլորմունք մեր, այլ մթերից ախտացելոյ բնութեանս և կարօտութեան բռնագոյն շնորհաց. վասն որոյ և արժան է զխոնարհութիւն համբուրել, զգլուխ ի հող թաւալել, և առաւել քան զառաւել պնդել զմիտս յառաջադրեալ բարին և ի զգուշութիւն. և եւս առաւել՝ ապաւինիլ յարդիւնս, ի վերս, ի մարմին և յարիւն Փրկչին, ի պաշտպանութիւն Տիրամօրն, և ի բարեխօսութիւն Սրբոց և կարգել անձին ճգունս կամ պատիժ ինչ՝ իբր ի վրէժ արդարացի, և քաջալերեալ մատչիլ ի խոստովանութիւն։

Գ. ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ. — Խոստովանութեան առաջին կարեւոր պայման՝ յայտ է՝ ամբողջութիւնն, այսինքն խոստովանել զոր և զորքան և զորպէս ինչ ստգտանէ սիրտ, ըստ տեսակի և ըստ թուոյ. և որպէս ճանաչէ ոք զվիրդն՝ կամել այնպէս և ծանուցանել խոստովանահօր, ոչ պակաս և ոչ աւելի. և եթէ բազում կերպարանք կամ չարիք իցեն մեզանչելն։ զացն՝ զայն միայն ասել՝ զոր դիտէր և կամէր ի մեղանչելն։ Օգտակար համարին Հարք՝ խոստովանել և զփորձութիւնսն և զյօժարութիւնս առ մեղս, գէթ առ խոնարհութեան, որ ազդողագոյն դեղ է զգաստութեան. յորժամ գծածուկս սրտին յայտ յանդիման առնէ մարդ՝ առ նմանին իւր՝ առաջի Աստուծոյ. և «Ընդէ՞ր զանգիտիցես, ասէ Սուրբն Օգոստինոս » խոստովանել՝ զոր գործել ոչ ամաչեցեր. կամ ընդէ՞ր ամաչիցես յայտնել առ մի ոք զայն՝ զոր թերեւս առաջի բազմաց գործեցեր. և բազումք են գիտակք. մինչդեռ նա որում խոստովան լինիս՝ նուազ եւս գիտասցէ զոր ասեսդ քան զոր չգիտէ իսկ բնաւ. մարդ ես՝ լեր խոստովան մարդոյ, բնութենակցի քո և կարեկցի, և թերեւս քեզ նման մեղաւորի կամ մեղանչականի, զի չիք մեղք զոր գործեալ իցէ մարդոյ՝ եթէ չկարասցէ և այլ ոք գործել։ Լաւագոյն է ասէ, նոյն Սուրբ Հայր, զամօթ կրել այժմիկ առաջի միոյ մարդոյ՝ քան յաւուրն դատաստանի առաջի անթիւ բանակաց մարդկան անարգաբար ի կորուստ մատնիլ. ի թիւս նոցին գտցի և հայր խոստովանութեանդ՝ որ կարէ արդ մեծապէս օգտել քեզ, իսկ յայնժամ՝ պարսաւել եւեթ զքեզ։ Եթէ տակաւին ծանր իցէ քեզ խոստովանելն, ասէ Տերտուղիանոս. զմտաւ ածէ զդժոխս՝ զոր կարէ զիջուցանել խոստովանութիւն. զմտաւ ածէ զանհնարին և զանվախճան տանջանսն, և մի՛ եւս խորհիցիս ի փրկարար դարմանոյն։

Զիք ճանապարհ միջին. կամ հարկ է բարւոք խոստովանել, կամ մատնիլ ի տանջանս, կամ այժմէն թօթափել ըզբեռինս սրտի, կամ խսպառ ընկճիլ ընդ նոքօք, և ոգբալ՝ զի վասն դոյզն ինչ դժուարութեան բնութեան՝ կորուսեր զյաւիտենական վայելսն։ «Զի է ամօթ, ասէ իմաստունն՝ » որ զմեզս ածէ, և է ամօթ՝ որ փառք և շնորհք է». յայսթեալ այնր ամօթոյ՝ արդարեւ մեծ յաղթանակ է, ասէ Մեծն Գրիգոր. և «չեն ինձ զարմանալի մեծամեծք ի լաւութեանց՝ քան զխոնարհ խոստովանութիւն. քանզի բազում անգամ » մեծագոյն արիութեան պէտք են ի խոստովանել զմեզս՝

» քան առ ի չանկանել ի նոյն մեղս »։ Ո՜հ, քանի՜ ամօթ և կորանս, քանի՜ նախատինս և չարչարանս ո՞չ կրեաց Փրկիչն մեր Քրիստոս վասն մեղացն զոր գործեցաք և յորոց պատկառեմքս. և զի՞նչ պահանջէ ի մէնջ. – կամ զի՞նչ արդեօք կայր մեզ կրել և լինել՝ եթէ կշռով արդարութեանն Աստուծոյ միայն կշռէր զմեղս մեր։ Ցիշեա զխրատն որ առ Նեեման. « Եթէ մեծ ինչ բան խօսեցեալ էր ընդ քեզ մարգա- » րէին, ո՞չ ապաքէն պարտ էր առնել, թող թէ զի ասաց, » Լուացիր և սրբեսցիս »։ — Օգոստինոս, որ տայր մեզ գեղեցիկ խրատս, և նմանք նորին յառաջին կենցաղն, Մագդաղենիք և նմանիքն պատկառե՞ն ինչ այսօր՝ զի բարւոք խոստովան եղեն. և ո՞չ մանաւանդ խնդան՝ զի խոստովանութեամբն արդարացան։ Մինչդեռ գոյ յոյս ողորմութեան, ասէ Ոսկիբերան, խոստովան լիցուք առ Հայր մեր, զի մի դարձցի մեզ ի դատաւոր անողոք. յայտնեսցուք գթութեան նորա՝ զի մի հարկաւորիցիմք հատուցանել խստութեան նորա։

Խոնարհութիւն էական պայման կամ ոգի է խոստովանութեան, ցուցանել զինքն մեղաւոր առանց չքմեղանաց. և ասել պարզապէս, առանց ընդ երկար բանս ածելոյ, մանաւանդ ընդ մանուածոյս. և միամիտ սրտիւ, քանզի այնքան նուրբ և բազմահնար է հպարտութիւն և անձնասիրութիւն՝ մինչեւ սպրդել նաեւ յատեան անդր խոնարհութեան, և արտաքին կերպարանաց մեղաւորի կամել իմն անմեղութեան երեւոյթ տալ ի ներքուստ։

Առ այսոսիկ ի դէպ և արժան է և ըղձալի՝ գտանել և ընտրել հայր խոստովանութեան, որ արդարեւ ըստ մեծի պաշտամանն գիտիցէ վարել, հայրաբար, բժշկաբար և գատողաբար. իցէ թէ մովսիսաբար հարկանելով զվէմս սրտից՝ բղխեցուսցէ ջուր արտասուաց. կամ հանգոյն Յեսուայ անխոնջ և մտադիւր ստէպ շուրջ գալով զգոռոզացեալ աշտարակօք ապառում քաղաքի մեղուցեալ հոգւոյն՝ կործանեսցէ մինչեւ ի հիմունս՝ զպարիսպսն աստուածամարտս։ Եւ ի գտանել ըստ տուչութեանն Աստուծոյ և ըստ պատշաճի իւրաքանչիւր վիճակի զպաշտօնեայն Աստուծոյ, ի դէպ է ոչ փոփոխիլ յայլմէ յայլ, առանց ծանր ինչ հարկի. զի որպէս ի կարիս մարմնոյ ախտից՝ առ սովորեալն և ծանօթ բժիշկ դիմեմք, ըստ նմին վայել է և ի հոգեւորին։ Դարձեալ, անկ է զգուշանալ, խրատէ Սուրբն Բեռնարդոս, ի մեղմեխանաց կուրին Երիքովի, և փափագել կամ ստիպել զի հարցցէ խոստովանահայրն, « Զի՞նչ կամիս՝ զի արարից քեզ ». այսինքն է, զիջուցանել զհայր խոստովանութեանն ի կամս իւր և ի հաճոյս, և ըստ իւրոց քմաց խնդրել դեզս։ Ո՜չ այդպէս, այլ ըստ Սօղոսի զգաստացելոյ՝ ասել, « Տէր, զի՞նչ պարտ է ինձ » առնել ». և առնել յօժարութեամբ՝ զոր ինչ և նա սահմանիցէ. ունկն դնելով մտադիւր բանիցն ասացելոց ի նմանէ, և մի՛ յայլ ինչ խոկալով, ոչ ի քննութիւն մեղաց մոռացելոց և ոչ յաղօթս. զի աստուածային հրամանի համարելի են բանք պաշտօնէին Աստուծոյ։ Եւ եւս առաւել հաւատով և խոնարհութեամբ ընդունելի է՝ իբրեւ ի Յիսուսէ Քրիստոսէ՝ զարձակումն մեզացն, լուանալով ջնջելով զնոսին յանձնէ՝ ոչ այնքան արտասուօք զղջականօք՝ որքան արեամբ նորին Քրիստոսի Փրկչին։ Այնքան մեծ շնորհք են արձակումն այն մեղաց, զի երկբայէր Սուրբն Օգոստինոս՝ եթէ իցէ՞ մեծ քան զայն՝ արարչագործութիւն աշխարհի. եթէ երկաքանչիւր եւս կարօտիցին, ասէ, հաւասար կարողութեան, աներկբայապէս սա հրաշափառագոյն եւս է սքանչելեօք ողորմութեան։

Դ. Հաստատումն պարտականաց. — Ի բովանդակութիւն խորհրդոյ ապաշխարութեան և ի քաւութիւն մեղաց հարկաւոր համարի Եկեղեցի զպարտավճար հատուցումն. միանգամայն ի դեղ ախտից հոգւոյն, և ի թողութիւն պատժոց մեղացն. դարձեալ և յընդունելութիւն շնորհաց՝ առ ուղղութիւն վարուց և առ ի գործել զբարիս. եւս և ի գործակցութիւն իմն արդեանց Քրիստոսի՝ որ հաշտեցոյցն և հաշտեցուցանէ զմեզ ընդ Հօր իւրոյ։ Ցոյժ մեծ է զօրութիւն խորհրդական ապաշխարանաց, ըստ Սրբոյն Թոմայի, քան զամենայն ապաշխարանս՝ զոր իւրով կամաւ և ընտրութեամբ ոք յանձն առնուցու. արեամբն Քրիստոսի օծեալ են ապաշխարանք առեալք ի խոստովանութեան, վասն այնորիկ և հաճոյագոյնք Աստուծոյ. և ըստ վարդապետութեան ոմանց ի Հարց՝ յաւելումն և շնորհս՝ եթէ բարւոք կատարիցին, յոր սակս և ոմանք ի բարեպաշտից խնդրեն ծանունս ընդունել ապաշխարանս։ Այլ կարեւորագոյն պայմանք կատարման ապաշխարանացն են յօժարութեամբ ընդունելութիւն որ և որպիսի է հրա

մայելոցն ի հօրէն, յիշելով զի փոքուն այնուիկ՝ ի մեծամեծ պատժոց և ի ցասմանէն Աստուծոյ փրկի։ — Մտադիր և ջերմեռանդն կատարումն հրամայելոցն, զի մի փոխանակ հատուցմանն՝ պարտք ի վերայ պարտուց յաւելցին. — անյապաղ կատարումն, զի մի կամ մոռացօնք լիցին, կամ ցրտութիւն սրտի, կամ դարձեալ ի մեղս անկանելով՝ տըկարացի մեղացն դեղ։ — Ցայտ է, զի չէ օրէն փոփոխել կամ համառօտել զեղեալսն յատենի խոստովանութեան՝ և ըստ անձին կամ այլոյ տեսութեան՝ այլ ինչ օրինադրել։

Այլայլել ոչ՝ այլ ի դէպ և արժան է յաւելուլ անձամբ անձին ապաշխարանս. զի յաճախ կարգեալքն ի խոստովանահօրէն չեն բաւականք առ անթերի թողութիւն պատուհասի մեղանաց. ապաշխարութիւն ի խոստովանութեան քաւէ զմեղս, և զյաւիտենական պատուհասն փոխէ ի ժամանակաւոր, առ իսպառ ջնջել և զայս՝ հարկ է արժանաւոր կամ ազդողագոյն ապաշխարանք. և ոչ չատանալ թեթեւ ինչ աղօթիւքն սահմանելովք, որ ոչինչ իմն թուին առ ծանրութեամբ մեծամեծ մեղաց, եթէ ոչ գերագոյն շնորհք գերագոյն իմն զղջման լցցեն զթերին։ Զի եթէ մարթ էր սակաւուք ինչ աղօթիւքն զքաւութիւն և զթողութիւն մեղաց միանգամայն ընդունել բովանդակ, ընդէ՞ր Հարք՝ բազում երկիւղիւ խրատեն գուն գործել ի հատուցումն. եթէ սաղմոսք ինչ և ողջունաթիւ վարդարանք բաւականք էին ի թողութիւն պարտուց ծանր ծանր մեղաց, վասն է՞ր առաջնոցն քրիստոնէից՝ սակաւամեղից քան զմեզ՝ այնքան ծանունս և երկարս կարգէր եկեղեցի ապաշխարանս վասն միանգամ եւս յանցուցեալոցն. միթէ՞ յանգէտս կամ անգթութեամբ եդան կանոնք Հարց և Ժողովոց. և եթէ ի վեր եւս քան զօրէնս շնորհաց ելցուք, որպիսի՞ պատիժս պատուհասի ոչ տեսանեմք կրեալ Դաւթի վասն մեղացն ինչ, ապստամբութեամբ, սպանմամբ որդւոցն, սրածութեամբ ժողովրդեանն, փախստեամբ իւրով և նախատանօք ծառայիցն։ Եզեկիաս և Ցովսիա՝ բարեպաշտք և նոքա, վասն սնոտի ինչ պարծանաց կամ յանձնապաստանութեան, ո՞րպէս պատուհասեցան յանձինս կամ յորդիս իւրեանց։ Եւ եթէ նոքա՝ յայտնապէս ապաշխարողքն և զղջացեալք՝ ոչ ազատացան ի պատուհասէ յանցանացն, մեք որդիք շնորհաց՝ այլ ապաշնորհ գտեալք առ աւազանն և առ

արիւնն փրկչական, մեք զիա՞րդ զերծցուք յարժանադատ պատժոց մեղաց մերոց՝ սակաւ ազօթիւքն ինչ, և այն թերեւս ցնդեալ մտօք և ցուրտ սրտիւ արտասանեալ շրթամբքան բղխեալ ի ներքուստ։ Համարիցի՞մք թէ մեղք ժամանակիս՝ չիցեն մեղք որպէս յառաջին ժամանակսն. նուազեա՞ց ինչ չարութիւն նոցին, կամ փոխեցան գիրք և վճիռք արդարութեանն Աստուծոյ. կամ չտեսանելոյն, չլսելո՞ւն առնիցէ Աստուած։ — Քաւ այս առ ի նմանէ. այլ մեք իսկ եմք անտեսողք և անլսողք, անիմաստք և անզգայք, փոքրոգիք և անարիք, ոչ եւս ապաշխարողք կամ վատ ապաշխարողք։ Փութա, փութա պատուհասել զքեզ, ասէ Սուրբն Օգոստինոս, զի հարկ է թէ ամենայն մեղաց լիցի հատուցումն, կամ առ ի քէն կամ առ ի յԱստուծոյ։

Իսկ հատուցանել ո՞րպէս կամ որո՞վ չափով։ — «Եթէ արժանի իցէ գանի ամպարիշտն, ասեն գիրք, հարցեն զնա ըստ » ամպարշտութեան նորա». և Սուրբն Կիպրիանոս ասէ, « Մի՛ քան զյանցանսն նուազ լիցի ապաշխարութիւն »։ Եւ արդարեւ ծաղու իմն էր համարելն՝ եթէ մեղաւոր յերկարեալ ընդարմացեալ ի մեղսն՝ միով խոստովանութեամբ, և սակաւ ժամուց կամ աւուրց ապաշխարանօք՝ ջնջեսցի և անպարտ լիցի մեղացն. արհամարհութիւն է Աստուծոյ՝ այդպիսի կարծիք։ Արդարեւ չիք հաւասարութիւն ընդ ժամանակաւոր պատիժ և ընդ յաւիտենականն։ — արդ յիշեսցուք զմեղս մեր զոր գործեալ եմք ցայսօր, յիշեսցուք և զայլ գոնեա համեմատութիւն ինչ պահանջի. — արդ յիշեսցուք զմեղս մեր զոր գործեալ եմք ցայսօր, յիշեսցուք և զապաշխարանքս ինչ վասն նոցին, և կշռեսցուք զնոսին ընդ յաւիտենական տանջանացն, և տեսցուք զի՞նչ համեմատութիւն կայցէ ընդ նոսին. կամ զի՞նչ հաւասարութիւն հանդերձեալ հրոյն՝ ընդ աղօթսն, ընդ ողորմութիւնս, ընդ մեռելութիւնս ինչ՝ զոր արարաք, և այն ո՞րքան եռանդեամբ և յօժարութեամբ։ Հայրն խոստովանութեան պատուիրեաց ասել զայս ինչ կամ զայն աղօթս, և առնել զայս կամ զայն. այլ վստահացո՞ւց նա կամ այլ ոք՝ եթէ այնու աղօթիւք և գործով՝ ազատասցիս ի պատուհաս փոխարինի առ Աստուած։ Նա և ի գերագոյնն ակն արկեալ ի Փրկիչն Քրիստոս, որ չափով և առաւել քան զչափ հատոյց վասն մեղաց մերոց, այլ եթէ և մեք մերովսանն զարդիւնս նորին ոչ ձգիցեմք ի

մեզ՝ ոչ օգտեսցուք։ Հարկ է ըստ Պողոսի՝ յանձինս մեր լնուլ զպակասութիւն չարչարանացն Քրիստոսի. չէք ինչ պակաս առ ի նմանէ, այլ ի մէնջ կուսէ բազում ինչ։ Զ Ապաշխարութիւն՝ երկրորդ աւազան կոչեցին հարք, ի դէպ է ընկղմիլ մկրտիլ գլխովին ի նմին, և ոչ շատանալ դոյզն ինչ սրսկմամբ արտասուաց։ Արժան է յուսալ միշտ, այլ ոչ երբեք վստահ լինել իբրու կատարեալ հաշտ գոլ և պարտավճար Աստուծոյ. չեւ եւս է ժամանակ անխայելոյ յանձինս. տակաւին ոչ համարձակէ զմեզ խիղճ մեր գրիլ ընդ երանեալսն՝ որոց թողան մեղք նոցա։ Պատժեա զքեզ կամաւ, ասէ Ոսկիբերան, զի մի ակամայ պատժեսցիս. յաւելու այլ ոք ի Սրբոց (Անսելմոս), եթէ՝ և ոչ մի ի մեղաց՝ մեծաց կամ մանուանց՝ մնասցէ անպատուհաս։ Իմաստութիւն է անձամբ զանձն կշտամբել և տանջել, «Ահ մեծ է անկանել ի ձեռս Աստուծոյ»։

Երկուս ազգս պարտավճար հնարից ուսուցանեն մեզ Վարդապետք եկեղեցւոյ. մի՝ զբարեպաշտութեան և զաշխատութեան գործս. որ են կամ աղօթք, ընթերցուածք, խոկմունք, ընդունելութիւն Սրբոց խորհրդոց, քննութիւն վարուց, նեղողութիւնք, կրթութիւնք առաքինութեանց. և կամ մեռելութիւնք զգայարանաց և ըղձից, պահք, ծոմք, անհանգստութիւնք մարմնոյ՝ որով և է ներելի օրինակաւ, զայն՝ որ առիթ եղեւ վտանգի և մահուան հոգւոյն՝ դահիճ ինքեան կացուցանելով չարակրութեամբ և խոշտանգանօք. զզենս անիրաւութեան՝ ի զենս արդարութեան փոխելով, և զապըստամբեալն՝ ըստ օրէնս օրինօք նուաճելով։ Երկրորդ ազգ հնարից հատուցման է Համբերութիւնն չարեաց և վշտաց կենցաղոյս՝ որ կամօքն Աստուծոյ գայցեն ի վերայ մեր. հիւանդութիւնք, ցաւք, անհանգստութիւնք, անարգանք, հալածանք. կորուստ ընչից, ազգականաց, սիրելեաց, պիտանեաց, սուր և սրածութիւն և սոցին նմանք։

Միւս եւս հնարս փոխարինի մեզաց՝ ցուցանեն հոգեւորք՝ զհակառակօք վարիլն առ հակառակ բնութիւնն. օրինակ իմն առ վայրապար զրոյցս և ընթերցուածս՝ զհոգեւոր խոկմունս և ընթերցմունս. առ զբօսասէր յածմունս՝ զառանձնութիւն. առ փափկասիրութիւն՝ զխոշորութիւն զգենլեաց և ուտելեաց. առ քնասիրութիւն՝ զհսկումն. առ գայթակղութիւն տուեալ զօրինակ բարեաց. առ ժլատութիւն զառատաձեռնութիւն.

առ ծուլութիւն՝ զվաստակ և զջան. այսպէս և այլոց յառ ծուլութիւն՝ զվաստակ և զջան. այսպէս և այլոց յատուկ թերութեանց՝ զյատկագոյնսն կարգելով բարի բարի ընդդիմակս։

Եթէ ըստ այսմ օրինակի ապաշխարեալ էր մեզաւորաց և գուն գործեալ ի հատուցումն, բազմաց վաղու իսկ եկեալ էր յուղղութիւն, վաղու իսկ դադարեալ ի չար սովորութեանց և ի յաւելլոյ մեղս ի վերայ մեզաց։ Այլ մեր թողեալ զոր այլքն արարին կամ ոչ, դարձցուք մեզէն ի մեզ, և մի յապաղեսցուք սկիզբն առնել հնարից ապաշխարութեան՝ զոր կարևոր և պատշաճագոյն վարկանիմք մերումս պայմանի վարուց և հոգւոյս։

Եւ զի թողութեան և հնարից թողութեան է մեզ բանս, յիշեսցեն արդեօք բազումք և զնորհս Ներողութեանց պարգեւեալս Յեկեղեցւոյ։ — Յիշեսցեն և զայս, զի՝ թէպէտեւ արդարեւ ի թողութիւն պատժոյ մեղաց շնորհեալ են այդոքիկ, այլ ոչ է մարթ շահել՝ եթէ չիցէ կանխաւ քաւութիւն լեալ յանցանացն՝ ճշմարիտ և կատարեալ զղջմամբ և յամենայն զօրութենէ մաքրելով զսիրտ և վառելով ի սէրն Աստուծոյ. միանգամայն և խնամով կատարելով զհրամայալսն առ ընդունելութիւն շնորհի ներողութեանն, որպէս յետին հրամանս կենաց ի վախճան և յօրհաս ժամանելոց։

Ի վերայ այսր ամենայնի ասացելոցս զապաշխարութենէ մեզաց իբրեւ զկարեւոր հարկէ ի պատրաստութիւն բարւոք մահու, գոհացողք լիցուք հանապազ զԱստուծոյ, որ պատրաստ արար մեզ զաւազան մաքրութեանս, և կանխէ քան զմեզ որպէս զհայր անառակին որդւոյ՝ ելանել ընդ առաջ և զհաշտութեանն տալ համբոյր, և զփրկականն կարկառել փայտ նաւաբեկելոցս ի ծովու կենցաղոյս. այլ և զգուշացուք երկիւղիւ մեծաւ՝ զի մի ազբիւրս այս քաւութեան և գործիս փրկանակ՝ անհոգութեան լիցի մեզ առիթ և խոչ գայթակղութեան։ Խնդրեսցուք ի նմանէ լուսաւորել զաչս մտաց մերոց՝ ի տեսանել զախտս հոգեկանս. զի ճանաչել զհիւանդութիւնն՝ սկիզբն է բժշկութեան։ Դիտեսցուք թախանձեսցուք ոչ միայն թողուլ, ներել, քաւել զյանցանս մեր խորհրդով ապաշխարութեան, այլ տալ մեզ և զօրութիւն կամաւոր ապաշխարութեամբք և մեռելութեամբք հատուցանելոյ աստէն զպատիժ պատուհասի յանցանաց մերոց։ Երկիւղ

քո սուրբ, ով Տէր, սարսեցուսցէ զանձն իմ բովանդակ. սլաքք սիրոյ քոյին անցցեն ընդ սիրտ իմ և յուղեսս, զի մի՛ եւս զառածեսցին ի չարիս, այլ ի բարին միայն՝ վասն որոյ և հաստեցերդ զիս։ Խորհուրդ և գործք ապաշխարութեան, տուր ինձ, Յիսուս, զի եղիցին ի դեղ դարմանոյ վիրաց հոգւոյս, ի նախապահեստ ապագայից փորձութեանց և վտանգաց, ի յորդոր և զօրաւիգն ուղղութեան վարուց, յօժանդակ և յառհաւատչեայ բարւոք մահու։

Զ

ԹՈՇԱԿՆ. — ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ

Գերագոյն ամենայն հնարից ի բարւոք աւանդել զոգի՝ արժանաւոր ընդունելութիւն է յետին թոշակին. զի յումէ՞ յայլմէ գուցէ ակն ունել բարւոյ մահու, եթէ ոչ յայնմանէ՝ որ կենաց է տէր և ազբիւր երանութեան։ Ոչ անգիտակ զօրութեան խորհրդոյս՝ ոսոխ մեր սատանայ՝ յետին ճգամբ պատերազմի ի վախճանի մարգոյ՝ զրկել զնա յընդունելութենէ թոշակին, կամ ոչ արժանաւոր եռանդեամբ ընդունել. և ոչ եթէ յայնմ պահու սկիզբն առնէ դաւաճանութեանն, այլ կանխաւ մինչ յառողջութեան է և աներկեւան է մարդն՝ ցրտացուցանէ զոգի, և սովորեցուցանէ յանեռանդն հաղորդութիւն. որով և ի յետին նուազին՝ եթէ և ոչ զրկիցի ի թոշակէն, սակայն ի հզօր չնորհաց նորին զուրկ մնայ, որ միշտ և առաւել յայնմ պահու պիտոյ են նմա։ Եւ արդ զի մի՛ այսպիսի մեծ և անգիւտ ինաս հասցէ մեզ՝ ի դէպ և արժան է այժմէն բառնալ զարգելս չնորհացն. ճանաչել զառիթս անեռանդն հաղորդութեան. և ցանկալ միշտ արժանի լինելոյ յետին թոշակին. առ որ՝ հարկ է, նախ, խորհրդածել ի գերազանցութիւն Սրբոյ Խորհրդոյն, և ապա քննել զպատճառս անօգուտ մնալոյ ի նմանէ՝ վասն ոչ եռանդեամբ ընդունելութեան. և դնել ի մտի մի՛ յապաղել ի հիւանդութեան զթոշակն յետին, որպէս և ոչ զօծութիւն վերջին. զի մեծ քաջալերք են սոքա և զօրաւիգն ի յետին տագնապս կենաց, և ամոքիչք զառնութեան մահու։

Ա. ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹԻՒՆ ԽՈՐՀՐԴՈՅ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ

Անբաւ և անճառ է գերազանցութիւն խորհրդոյ Հաղորդութեան, ըստ անսահման մեծութեան Անձին ծածկեցելոյ ի նմին գաղտնի քօղովք։ Զիք մեծ, չիք հաւասար նմին. զի եթէ ի մի վայր եկեսցեն ամենայն տիեզերք, այլ և նորք և մեծագոյն եւս երկինք, առաւել եւս մեծ գտանի Աստուած. և եթէ հազարապատիկ եւս գեղեցկագոյն փայլէր աշխարհս ամենայն արարածովք, ոչ ինչ էր առ գեղեցկութեամբն Աստուծոյ. և եթէ բիւրապատիկ եւս յաւելոյր գեղեցկութիւն եղականաց, գեղեցկագոյն եւս անեղն, և որքան և հնար իցէ մտաց կրկնել և բարդել զմեծութիւն, զգեղեցկութիւն և զկատարելութիւն անձնաւոր կամ մտաւոր, անցանէ զանցանէ զնոքօք Աստուած մեծութեամբ, զօրութեամբ, գեղեցկութեամբ և կատարելութեամբ։ Նոյն Աստուած է որ կայ ի սրբազան խորհրդեան սեղանոյն, լիութեամբ զօրութեանց իւրոց, գեղոյ, մեծութեան և փառաց. ամենայն վսեմական վայելչութիւն ամենասուրբ Երրորդութեան՝ հանգչի ի խորհրդեանն սրբում. անդ ի նմին երկրպագի յաւիտենական կարողութիւն Հօր, անհասանելի իմաստութիւն Որդւոյ, անսահման բարութիւն Հոգւոյն Սրբոյ. ամենայն գեղեցկութիւն, ամենայն երջանկութիւն, ամենայն կատարելութիւն աստուածութեան։ Ընդ դուզնաքեայ տեսակօքն թաքուցեալ կայ Աստուածամարդն Յիսուս Քրիստոս, կեանք աշխարհի, ուրախութիւն երկնից, սարսեցուցիչ սանդարամետաց, կենդրոն ամենայն փառաց, չնորհաց, հաճութեանց, քաղցրութեանց եւ վայելչութեանց. վայելք ամենասուրբ Երրորդութեան։ Մարդ մահկանացու և տառապեալ մատուցեալ ի սեղան անդր՝ ընդունի զհեղինակ էութեան իւրոյ և զփրկութեան, այր մեղաւոր ճաշակէ և ըմպէ զուղիս սրբութեան և փափկութեան. աղքատն և անինչ՝ գտանէ գանձ ամենալի, հիւանդն հոգւով՝ զբժշկութիւն ախտից, և տրտմեալն զԱստուածն ամենայն մխիթարութեանց։

Հաղորդութիւն պարգևէ մեզ Քրիստոս բովանդակ. զբարեխօսն մեր յատենի արդարութեան Աստուծոյ, զդարմանող վիրաց և ցաւոց մերոց. զբարեկամ մեր ամենահաս, առ ամենայն պէտս մեր բաւական, եթէ միայն չիցէ ինչ ի

մեզ արգել մարդասիրութեան նորին. քանզի և յոյժ սիրէ զմեզ եւ զորովի զմեօք, այնքան մինչ զի եթէ հարկ ինչ էր՝ յանձն առնոյր գալ դարձեալ յաշխարհս և ի խաչ ելանել վասն մեր։ Միանգամայն ասել, ի խորհրդեան անդ անճառելի սիրոյն՝ կայ Աստուած անբաւազօր, որ մատամբն շարժէ զտիեզերս, և քլաւ չափէ զերկինս. Յիսուս Քրիստոս է Տէրն տերանց, և փրկիչ աշխարհաց, ճառագայթ փառաց և կերպարան էութեան Աստուծոյ, բազմեալն ի բարձունս յաջմէ մեծվայելչութեան մշտնջենաւորին։

Բա՜ւէ, զոր երկինք եւ երկիր ոչ բաւեն տանել՝ բովանդակեալ կայ ընդ տեսակաւ հացին. իշխանութիւնք երկնից և աթոռք վերինք՝ խոնարհեալ անկանին առաջի նորա. իսկ աստանօր յանչուք տապանակի փոքու սեզանոյ եդեալ դնի՝ յաճախ անայցելու և աներկրպագու։ Հազարք հազարաց հրեշտակաց առաջի քո կան, Տէր, և բիւրք բիւրուց հրեշտակապետաց պաշտեն զքեզ, և դու աստ տաւաղիս ի միջի փանաքի և տառապեալ հողածնաց։ Ոչ բաւեն բանք և միտք ի չափել և ի ճառել զմեծութիւն քո և զգերազանցութիւն՝ զոր ծածկես ի խորհրդեանս յայսմիկ. այլ միայն երկիւղիւ և հաւատով պաշտեմ և ես զանբաւելիդ բովանդակեալ ի սմին, սիրեմ զծածկեալդ ընդ խորհրդական քողով, օրհնեմ և փառաւորեմ զանճառ զանհաս մարդասիրութիւն քո, Տէր իմ և Աստուած։— Հրաշանամ և ընդ օրինակ գալոյ և մնալոյ Տեառնդ իմոյ՝ առ մեզ. զի «յիշատակ արար » սքանչելեաց իւրոց՝ ողորմած գթած Տէր, և կերակուր » տայ երկիւղածաց իւրոց» անձամբ զանձն. արդարեւ ասանօր «առնէ զօրութիւն բազկաւ իւրով», յամփոփել զճառագայթս աստուածութեան իւրոյ ընդ խորհրդական ամպով դուզնաքեայ տեսակաց, զանբաւութիւն իւր՝ յանձկութեան նշխարի մոյ, և զփառս մեծվայելչութեան՝ ի գծուծ տարերս։ Ամենայն զօրութեամբ աստուածութեան իւրոյ ներգործէ ի սքանչելիս յայս սիրոյ, վերիվայր տապալելով զօրէնս բնութեան. լուծանէ զգոյացութիւն հացին և գինւոյ, տեսանին տեսակք և չեն որ ինչ էին. մարմին և արիւն Քրիստոսի է ի բովանդակ և ի մէն մի մասունս հացին և բաժակին։

Ամենակալ զօրութիւն աստուածային թուի իմ սպառեալ՝

յամենակալ սիրոյն ի կարգելն զոհ պատարագի զփառաւորեալ մարդկութիւն Քրիստոսի, յայնպիսի կերպարանս՝ յորում բնապէս ոչ ունիցի շարժել, խօսել, լսել, տեսանել և զգալ. այլ կալ մնալ ի կերպ խորհրդական մահու։ Եւ առ հրաշագործել զսքանչելիս այս մեծ՝ ոչ առնու զսրովբէական դասս ի պաշտօնեայս. այլ հինգ կամ վեց բառիւ քահանայի միոյ, գուցէ և անարժանի, կատարէ զխորհուրդն մեծ. և ուր և ուրեք և յորում և է ժամու՝ յասել քահանային՝ ըստ կարգաց եկեղեցւոյ՝ զայն բան, անդէն և անդ գայ Յիսուս. և խոնարհեալ յօրհնեալ տեսակսն՝ մնայ մինչեւ ի ճաշակումն, և երբեմն մինչեւ յապականութիւն տարերացն։ Եւ ոչ այսուիկ չատացեալ, հրաւիրէ զմարդիկ մատչել և ճաշակել զինքն՝ որպէս զհաց հանապազօրեայ, եթէ իջեալ յերկնից ի սեզանս եկեղեցւոյ փայլէր ճառագայթարձակ լուսով աստուածութեան՝ արդարև սքանչելիք էին սիրոյ նորա առ մարդիկ, իսկ ի ծածկել զճառագայթսն ընդ ստուերօք խորհրդոյն, ի պարասքողեալն յերեւոյթ հացին առ ի ճաշակումն բերանոյ մարդոյ, հրաշս հրաշից ներգործէ, առ որ ամենայն զօրութեանց Աստուծոյ պէտք են։— Ո՞վ հրաշալի գթութեանն Յիսուսի, գուչէ Սուրբն Բոնավենտուրա, Աստուածն » թեանն Յիսուսի, գուչէ Սուրբն Բոնավենտուրա, Աստուածն » իմ, փեսայն իմ, սէր իմ՝ փոխեա՛լ ինձ ի սնունդ. լոյսն » Աշխարհի, իմաստութիւնն Աստուծոյ՝ ի հա՜ց հոգւոյս. » վարձքն Սրբոց, հրճուանք հրեշտակաց, բանն Աստուծոյ » Հօր՝ կերակո՛ւր իմ. — զի՞նչ քան զայս ինձ սիրելի. զի՞նչ » ինձ գեղեցիկ քան զսա»։ Ո՞ տայր ինձ, Յիսուս, սիրասս և լեզուս հազարաւորս՝ ի սիրել և յօրհնել զքեզ, ի հռչակել զգերազանցութիւն քո ի խորհրդեանս յայսմիկ, եւ զհրաշալի օրինակ սորին կատարման։

Ամենայն հրաշալի է ի հաղորդութեանս. այլ հրաշափառագոյն՝ սէրն Քրիստոսի, և յաւէտ ըստ ժամանակին յորում կարգեաց, զխորհուրդս, ըստ դիտմանն՝ վասն որոյ կարգեաց, և ըստ անարգութեան և ասպաշնորհութեան մարդոյ՝ որոց կարգեաց։ «Գիտաց Յիսուս, ասէ աւետարանիչն, եթէ հասեալ է ժամ նորա, զի փոխեսցի յաշխարհէ աստի առ » Հայր». գիտելով չափ զմատնութիւն Յուդայի, զանօրէն մենաքենայս քահանայիցն, զուրացութիւն Պետրոսի, զամենայս քահանայիցն, զուրացութիւն Պետրոսի, զամենայս թալի փախուստ աշակերտացն. տեսանելով աստուածազօր

աչօքն զգործիս չարչարանացն, զձաղկանսն, զբեւեռսն, զպը-
սակն և զգեղարդն, զտագնապն ի պարտիզին, զքրտունսն և
զարիւնն, ոչ դադարէ ի սիրոյն. այլ մանաւանդ առաւել ևս
սիրելով զիւրսն՝ հաստատէ զհրաշալին, զանուշակն և զսիրե-
լին զայն խորհուրդ, և գերմարդկային սիրով նուիրէ մեզ
զմարմին իւր ի կերակուր և զարիւնն յըմպելի. գիտելով և
զայն՝ զի ի վաղուեան աւուրն մեք ինքնին ձաղելոց էաք
զնա, փշօք պսակելոց և ի խաչ հանելոց։ Մ՞ութ ինչ իցէ
հասանել մտօք ի վերայ այսքանոյ մեծի սիրոյ։

Այլ իցէ՞ արդեօք դիւրահասանելի քան զայն և մեծութիւն
անարգութեան մարդոյս. — զի « Զի՞նչ է մարդ, և զի՞նչ
« որդի մարդոյ. որում այց առնես Տէր »։ Տես, Յիսուս,
զի՞ գործես, ո՞վ քաղցրդ և բարեգութ. դոքա՝ որոց տասդ
գքեզ ի կերակուր՝ ոչ միայն անարգք են յանարգաց, տգէտք
և կոյրք, հեղք առ բարին, երագք ի չարիս, յողդողդք, ա-
պականացուք և ընդ բազմապատիկ անկեալ կարեօք, այլ և
ցուրտք, անպատկառք, ապաշնորհք, և երբեմն եւս սրբա-
պիղծք, նոր Յուդասք, անարգուք հացին ցանկացելոյ ի
հրեշտակաց։ Զայս ամենայն գիտելով քո, Տէր, չկաս չդա-
դարես ի բարեսէր կամացդ։ Եթէ առ ամենեարանեալ մայր քո
և առ աշակերտս քո պատրաստէիր զսեղանս զայս, մեծ և
անհասանելի էր մարդասիրութիւնդ. իսկ զի՞նչ յորժամ առ
անարգագոյն որդունս ոմանս երկրի, առ մեղաւորս ապե-
րախտս առ վատթար ստրուկս, առ մատնիչս և ամպա-
րիշտս՝ առաջի դնես զանարատ մարմինդ։ Արդարեւ ան-
բաւելի՞ սէր, անճառելի՞ առատաբաշխութիւն, անչափելի
մարդասիրութիւն. զոր կամեցար յայտնել մարդկան, և
յանձն առեր լինել զոհ և պատարագ մշտնջենաւոր՝ խոր-
հրդական մահուամբ, և կալ կենդանի՝ առ ի բարեխօսել
վասն մեր։ Տալով ամենայնիւ զքեզ յորդորեցեր զմարդիկ
ի սէր քո, և զանձնդ ունայնացուցեր՝ զի լցուսցես զմեզ
քոյին բարութեամբ։

Ի միտ առ, հոգի իմ. Աստուած ամենակալ, և միայն ե-
բանելին, միայն անկարօտ, բնակէ ի խորհրդեանս սրբում,
ոչ յիւր ինչ՝ այլ ի մեր պէտս և յօգուտ մեր. կայ նա ան-
դէն առ ի սիրել զմեզ, առ ի գգուել ի գիրկս իւր, առ ի
սնուցանել, կազդուրել՝ սփոփել զվիշտս մեր, պաշտպանել ի

փորձութեան մերում, թափել ի վտանգաց, լնուլ զպէտսպէս
կարօտութիւնս մեր, բժշկել յախտից, և լցուցանել ի զան-
ձուց գվնութեան իւրոյ, կայ նա առ ի նուիրել մեզ զանձն
իւր բովանդակ, և ոչ անխայել իմիք։ Ո՜վ գթութիւն, ո՜վ
մեծութիւն անհասանելի. ո՜վ սէր անճառ. ո՜վ գերազանց Հա-
ղորդութիւն։ — Աստուած սիրէ զիս. Աստուած սիրէ զիս,
և զանձն իւր տայ ինձ, և տայ այսքան գերահրաշ գորո-
վով. — իսկ ես տակաւին կամ, մնամ գաղջ և թոյլ, առ
այնքան հզօր հուր սիրոյ նորա՝ այսքան ցուրտ ունիմ
սիրտ։ Զի՞նչ այս փոխելութիւն մտաց ի մեզ. հաւատամք
ներկայութեան Աստուծոյ ի սուրբ խորհրդեանս, և համար-
ձակիմք մեղանչել մեծի վայելչութեան նորա։ Դասք հոգե-
ղինաց սրբոց՝ սարսափմամբ կան առընթեր նուիրական
խորհրդոյն, սարսեն զօրութիւնք երկնից և խոնարհին յան-
գունդս, և դու աղկաղկ որդնդ հողոյ, իշխե՞ս դու կալ ան-
պատկառ առաջի ահաւորին Աստուծոյ։ Աստուած ամենա-
պատիկ վայելչութեամբն սպասեալ մնայ մեզ ի խորհրդեան
սիրոյ, առ ի լնուլ պարգեւօք զմատուցեալսն առ ինքն,
և դու յուլացեալ դանդաչես վայրապար, և թողուս միայ-
նակ, անոք անաղերս զփրկիչն Յիսուս։ Սիրտ նորա հանա-
պազ բորբոքի սիրով առ մեզ, և մեք սառուցեալ անըզ-
գայիմք. — ի սեղան ամենալից հրաւիրէ զմեզ տանուտէրն,
և մեք անփոյթ կամք. զհաց հրեշտակաց թողեալ՝ խոտան եղ-
ջերքք զբօսնումք։ — Ո՞ր արդեօք զարմանալի եւս իցէ. մե-
ծութի՞ւն սիրոյն Քրիստոսի, եթէ մերս անսիրելութիւն։

Այլ, հարցցուք, քննեսցուք զանձինս մեր. որո՞վ պատրաս-
տութեամբ, որպիսի՞ պատկառանօք մատչիմք առ Սրբու-
թիւնն Սրբոց. — քանի՞ցս յաւուր այց առնեմք նմա. — որո՞վ
զղջմամբ և մաքրութեամբ ընդունիմք զխորհուրդն. — որ-
պիսի՞ աղերս յառաջն, և ո՞ր գոհութիւն յետ հաղորդու-
թեան. — որպիսի՞ առաջադրութիւնք ի մեզ և խոստմունք առ
մարդասէր Հիւր մեր՝ առ ուղղութիւն վարուց և ի գործս
լաւութեանց։ Զայն պաշտօնէին ազդեսցէ ի մեզ խստագոյնս,
երկիւղիւ և հաւատով մատչել՝ ի սիրելին և ի սարսափելին.
զի որ այլազգ մերձենայ յայն խորհուրդ՝ անեռանդն և անըզ-
գայ, խիթալի է՝ թէ ոչ միայն զրկիցի ի շնորհաց նորին
ի կեանսն և յօրհասին, այլ թերեւս և « զդատապարտու-
ի կեանսն և յօրհասին, այլ թերեւս և « զդատապարտու-

թիւն անձին իւրում ուտէ և ըմպէ, ոչ խորելով զմարմին և զարիւնն» կենարարին, ըստ ահաւոր խրատու Առաքելոյն։

Բ. ԶՕԳՏԵԼ Ի ՀԱՂՈՐԴՈՒԹԵՆԷ ՑՐՏՈՒԹԵԱՄԲ ՄԱՏՈՒՑԵԼՈՅՆ

Եթէ չարութիւն կամ ինաս անձին՝ ոչ լինէր խափան, ասէ հեղինակ գրոց նմանութեան Քրիստոսի, շատ էր և միանգամ հաղորդիլն՝ առ ի լինել սուրբ. այլ ցրտութիւն և վատութիւն ոգւոյ՝ ոչ միայն ոչ թողուն ի սրբութեան աստիճան ելանել՝ յետ այնքան նուագս հաղորդելոյ, այլ և ոչ յառաքինեաց սահման. այլ տակաւին կայ մնայ յախտս և ի տկարութիւնս իւր։ Եթէ զկէս չնորհաց՝ զոր սփռէ Աստուած ի ձեռն խորհրդեանս՝ պարգեւեալ էր անհաւատի կամ հեթանոսի ումեք՝ թերեւս չինէր սուրբ մեծ. և մեք քրիստոնեայք, կրօնաւորք և քահանայք՝ ելեալք ի սեղանոյ անտի սրբութեան՝ վերադառնամք ի կարիս տկարութեան, յաւաղելի ցրտութիւնս։ Քանի՜ ամսթ երեսաց պատիցէ մեզ յաւուրն յետնում՝ յիշելով եթէ յո՞ր աստիճան սրբութեան մարթ էր մեզ բարձրանալ յաճախ և արժանաւոր ընդունելութեամբ սրբոյ խորհրդոյն, և ո՞ւրքան յետնեալ գտաք։ Քանի՜ ահ երկիւղի պատեսցէ զպաշտօնեայ Աստուծոյ ի հասանել աւուրցն համարատուութեան, և ի յիշել՝ զի զօր ամենայն մատչէր յաղբիւրն չնորհաց, զօր ամենայն բանայր նմա Քրիստոս զգանձս աստուածային պարգեւացն, և նա վասն անհոգութեանն և գաղջութեան՝ աղքատ և զուրկ մնաց. — ի յիշելն՝ զի հանապազօր կրէր ի ձեռին իւրում զՏէրն ամենայն մաքրութեան, զԳառնն անարատ, և ինքն պէսպէս մեղօք ազտեղացաւ. — ի յիշելն, զի ի խորհրդեան անդ սեղանոյն՝ հրաշս ի վերայ հրաշից ներգործէր Աստուած, և ունայնացուցեալ զանձն՝ հայցէր իմն իբրև կարօտեալ՝ սէր փոխանակ սիրոյ. իսկ ինքն ոչ վառեցաւ ի սաստկութենէ անտի հրոյն, և իբրեւ ի ծովամիջի եկաց մնաց ցամաք, ծարաւեալ առ ազբեր կենաց, սովեալ ի սեղանի անմահութեան, և կարօտ՝ յառատութեան գանձուց։

Ոչ ոք ի ճաշակողաց յաստուածեղէն սեղանոյ անտի՝ արդարասցի, եթէ տակաւին սիրտ պիղծ ունիցի և ախտալից.

և կենարարին մարմնով կերակրեալ ի կորստական արարածս յարեսցի։ Այլ, աւա՜ղ, զի բազում անգամ է տեսանել զայս. — Յիսուս Քրիստոս ի սրբում սեղանին սփռէ զմեօք զգանձս մարդասիրութեանն, և անճառելի քաղցրութեամբ հաղորդութեան ցանկայ բորբոքել ի սիրտս մեր զսէր իւր սուրբ. իսկ մեք ընդարմացեալ մնամք. հրաւիրեալք ի կոչուրբ. իսկ մեք ընդարմացեալ մնամք. հրաւիրեալք ի կոչունս հրեշտակաց՝ տակաւին զհետ յօժարութեան սրտից մերոց երթամք, և զմեղաց իսկ։ Վա՜յ ինձ, ասէր Ոսկիբերան, վա՜յ ինձ. քանի՞ ճանապարհք սրբութեան բացեալ կան առաջի եմ. Փրկիչն մեր ետ մեզ զմարմին իւր, արար և զմեզ լինել իւր մարմին. և ոչ այսու բաւեաց թափել զմեզ ի չարեաց մերոց և ի մեղաց. սրբարար մարմնովն կերակրեաց զմեզ, և մեզ տակաւին եգիպտական խոշոր խաւարտքն քաղցրանան։ Գառնն անարատ՝ չեղ ի սեղանի յուարտքն քաղցրանան։ Գառնն անարատ՝ չեղ ի սեղանի յուտել՝ բայց զիւր մարմին միայն, իսկ մեք հանապազ վարակեալ կամք յարատս և ի վերս մեր. և զո՞ր տեղի ներելոյ թողութեան ունիցիմք՝ եթէ յետ ճաշակելոյ զգառնն անարատ՝ ոչ մերկանամք զբարս գայլենիս, և յառաջին ախտսն ջերանիմք։ Արժան էր մեզ, յաւելու ասել նոյն վարդապետ, որպէս առիւծունս ոմանս հրաշունչս ելանել ի սեղանոյ անտի՝ ի պակուցումն դժոխոց, և մեք ցրտութեամբ մերով նշաւակ լինիմք ծաղու սատանայի։ Ջերկնային ըմպելին արբեալ՝ տգմուտ չրոց երկրի փափագեմք. Քրիստոսիւ լցեալք՝ առ արարածս յածիմք, սրբութեամբ սնեալք՝ ընդ անօրէնս դեգերիմք։ — Թեւասքո՞ղ լերուք, ո՛վ սերովբէք, զի մի՛ տեսջիք զպղծութիւն աւերածոյս։

Զարմանաց և ցաւոց իրք են միանգամայն՝ յաւազան մաքրութեան լուանալ և ելանել անմաքուր, ի հալոց սրբութեան մտանել՝ և մնալ անսուրբ. և այնքան առաւելուլ ի մաքրութիւն և ի սրբութիւն պիտոյ էր՝ որքան յաճախ ոք ընդ Սրբութեան Սրբոց հաղորդէր։ Ստէպ և իմ հաղորդելով, նա և զօր ամենայն, որպիսի՞ կերպարանս ունիցի հոգիս. — ի քանի՞ ախտից սրբեցաւ — քանի՞ չարաչար սովորութիւնք ի բաց խլեցան յինէն. — քանի՞ մոլորութիւնք յուղղութիւն դարձան։ Հարիւրս և հազարս անգամ հաղորդեցար ընդ մարմնոյ և արեան Փրկչիդ, և թերեւս և ոչ զմի՛ ի վիրաց ախտիցդ բժշկեցեր. — որպէս մատեարդ ի խոր-

հուրդն սուրբ՝ դարձար և նոյնպէս գաղջ, ցրուամիտ, դիւ-
բասէր, դիւրագրգիռ, անհամբեր, անձնապարծ, անձնահաճ,
զանգիտող ի վշտաց և յոր և է չարակրութենէ. ուղղութիւն
ինչ ոչ երևի ի քեզ, և երանի թէ և ոչ վատթարագոյն
գտանէիր, յօժարագոյն յախտաւորս և հեղգագոյն ի լաւու-
թիւնս։ Եւ զի՞նչ այսուհետև կամիցիս առնել. յաճախե՞լ ի
հաղորդութիւն երկնաւոր հացին՝ և սովալլուկ մնալ ի շնոր-
հաց և ի զօրութենէ նորին։

Շնարք զգուշութեան յանօգուտ կամ յանբարի հաղորդու-
թենէ իցեն, քննել գիտել ո՞ր մեղք, ո՞ր թերութիւնք ի մեզ՝
առաւել անհաճոյ են յաչս Աստուծոյ, կամ որպիսի՞ իղձ և
սէր խտրոց անկանիցի ընդ սիրտս մեր և ընդ սէրն Աս-
տուծոյ, և ի վերայ հասեալ՝ դնել ի մտի ամենայն պնդու-
թեամբ հերքել զայնոսիկ՝ զօրութիամբ սրբոյ Խորհրդոյն.
հոգեղէն սուսերաւ հատանել ի բաց զապականիչ ընութիւն
և զոհել ի սեղանի անդ զոհեցելոյն վասն մեր։ — Մի՛ թու-
լանալ, մի՛ գադարել՝ մինչև ոչ ազատեսցի սիրտ ի բոնա-
ցեալ կրից և յօժարութեանց, որովք եթէ վարակեալ կայցէ՝
չէ ինչ զարմանաց՝ եթէ ոչ ընկալցի զազդեցութիւն շնորհաց
հաղորդութեան։ Մատո առ Յիսուս սիրտ թափուր յախտից,
և նա լցուսցէ երկնաւոր պարգեւօքն։ Եթէ ախմարութիւն
է ընտրել արկղ մի լցեալ քարամբ և կոպճով՝ քան զտուփ լի
ոսկւով, կամ չառնուլ զաղամանդ՝ առ ի չթողուլ զբեկոր
մի ապակւոյ, ո՞րքան եւս աղամարութիւն չթողուլ զարա-
բածն վասն արարչին, զկաւ և զտիղմն՝ վասն Աստուծոյ
Բարձրելոյ։ Բանզի զի՞նչ իսկ իցեն կիրքն կամ առարկայն՝
յոր զակատեալ է սիրտդ, եթէ ոչ տիղմն և յարդ դիւրավատ-
նելի։ Նա եթէ և ոչ դժնդակք ինչ երևիցին կերպարանք
բունելոցն և թաքուցելոց թերութեանց ի խորշս գիտակցու-
թեան, այլ դոյզն ինչ տգեղ, կամ ներելի համարեալ մեղք,
կամ յօժարութիւնք կամ ունակութիւնք թերուղիղք, ար-
ժան է գուն գործել ի բաց խլել և զայնոսիկ, զի հաճոյա-
գոյն է Աստուծոյ և զվոքր ինչ կամաւոր մեղս սրբել յանձնէ
քան թափել զոգի մի ի դժոխոց, եթէ գոյր այսմ հնար։

Զի՞նչ ինչ չէր արժան մեզ կրել և առնել վասն այնորիկ՝
որ իջեալ յերկնից այնպիսի և այնքան կիրս կսկծագինս
կրեաց վասն մեր, մինչեւ եմուտ և ծածկեցաւ ընդ խորհուրդ-

դական քողով խորհրդոյս։ Զեմք արժանի մարդ անուանելոյ՝
եթէ խնայիցեմք ինչ յԱստուծոյ վասն մեր ունայնացելոյ։
Մեծ ինչ համարիցիմք հրաժարել ի չար ինչ սովորութենէ,
յախտակիր յօժարութենէ, առ սէր Փրկչին՝ որ պատարա-
գեաց վասն մեր զկեանս իւր արեամբ մահու։ Զոր ինչ և
կարասցուք առնել՝ տակաւին ոչ արժիցեն զգին հոգւոյ մե-
ռարոյ, զերկինս և զյաւիտենական կեանս՝ խոստացեալս առա-
քինեաց. այն զի թերեւս յաղթութեան պսակն յայժմու ի
սերկեան գործ արութեան և նուիրման մերոյ հաստատեալ
իցէ։ Եւ եթէ ոչ կարիցեմք առժամայն ընտրել զզոհելին
կամ զ'ի բաց բառնալին առ ի մէնջ, յետ ընդունելու-
թեան սրբոյ Խորհրդոյն՝ զամ մի ամփոփել զմիտս ամե-
նայն խնամով՝ հարցցուք զնոյն ինքն եկաւորեալն ի մեզ
զհիւրն ցանկալի, զի ցուցցէ մեզ զառաւել անհաճոյն և զան-
վայելն յաչս իւր. զինչ՝ զոր առաւել կամի թէ առնիցիմք,
և զինչ զոր ի բաց հերքիցեմք. ո՞ր կիրք իցեն կամ ո՞ր ա-
րարած, ո՞ր անձն՝ զոր արժան իցէ զոհել առ սէր նորա։
Հաւատասցուք եթէ յաճախ հաճի Աստուած յայտնել մեզ
յայնպիսում պահու զկամս իւր, երկնաւոր լուսով, և գաղտ-
նալուր իմն բարբառով։ Այսու կրթութեամբ քաջալերի
սիրտ, զուարթանայ հոգի, և վստահագոյն աչօք նկատէ
զմահ։

Որպէս ոչ է բաւական հիւանդի գիտել զհիւանդութիւն,
այլ պիտոյ է և դարման տանել, այսպէս չէ շատ գիտել
զչօգտելն ի հաղորդութենէ, այլ արժան է ի սկիզբն վնա-
սուն ելանել։ Եւ գտանեմք իսկոյն պատճառս անպտղու-
թեան հոգւոց՝ զհեղգութիւնն և զգաղջութիւն։ Որքան յաճա-
խեալ է արդ ստէպ հաղորդութիւն, առ հաւատացեալս, թերեւս
նոյնքան և դժուարագիւտ բարւոք հաղորդութիւն։ Զարհու-
րիմք ապաքէն ի յիշելն զանարժան հաղորդութիւն, այլ թե-
րեւս չածեմք ինչ զմտաւ կամ առ ոչինչ համարիմք զգաղ-
ջութիւնս մեր և զցրուն մտաց՝ ի մատչել մերում առ խոր-
հուրդն սուրբ. և սակայն այնպիսի ցրուամիտ եւ հեղգասիրտ
հաղորդութիւն զի՞արդ հաճոյասցի Աստուծոյ, նա մանաւանդ
ո՞չ զզուանս իցէ անբիծ և խանդակաթ սրտին Յիսուսի։ —
Կամ զի՞նչ քստմնելի և սոսկալի կայցէ՝ քան տեսանել
զքրիստոնեայ՝ որ ընդվայրայած մտօք մատչի առ խորհուրդն

մեծ, և զքահանայ՝ որ ցուրտ սրտիւ կատարէ զայն, և ոչ կիզու, ոչ վառի, ոչ ջեռնու ի հրաշալի հրոյն, յորմէ բոր-բոքին հրեշտակք՝ աներևոյթ սպասաւորք սեղանոյն, և որ-պէս յերկինս ի բարձունս՝ անկեալ առաջի աթոռոյ բարձրե-լոյն օրհնեն գովեն և փառաբանեն. և դու՝ վասն որոյ կա-տարի խորհուրդն, վասն որոյ բաշխի նշխարն կենարար, հացն անմահութեան, կա՞ս այնպէս անմտադիր, այնպէս անզգած, որպէս թէ տեսարան ինչ էր հանդիսի՝ գործ պա-տարագին, և ձեւակերպեալ ոմն աստուած ի հաղորդութեան անդ։

Այլ զառնն որ արդ անմռունչ պատարագի՝ մոնչեսցէ յա-ւուր միում ահաւոր ձայնիւ. և որպիսի՞ ահ երկիւղի անկցէ ի վերայ մեր, յորժամ տեսանիցեմք զի այն զոր այնպէս վայրապար մտօք և անջերմ սրտիւ ընդունէաք՝ նա ինքն դատաւոր կայ մեզ. — յորժամ ասիցէ ցմեզ. Ես եմ Յիսուսն, զոր առանց ակնածութեան և ջերմն եռանդեան ընդունէիր, ոչ պատկառելով ի սրբութենէ իմմէ և ի սեղանոյ իմոյ, այլ մատչէիր անմաքուր բերանով, թերեւս և մարմնով. — ոչ ես եմ փեսայ հոգւոյդ, այլ դատաւոր եմ այսօր. ոչ ես եմ զառն, այլ առիւծ՝ վրէժխնդիր անարգանաց արեան իմոյ։

Եթէ տէր ոք և թագաւոր անարգամեծար յայց ելանէր ծառայի իւրոյ, և սորա ոչ ինչ ակն ածեալ ի նմանէ, այլ և ի բաց դարձեալ զգուէր զանասնիկ իւր, արդարև ցասման տեառն իւրոյ արժանի էր տմարդին այն և ապառում. — ոչ ինչ օտար է յայսմ օրինակէ՝ և որ յետ ընդունելութեան սրբոյ խորհրդոյն՝ դառնայ ի զառածանս մտաց իւրոց և յիղձս օտարոտիս. զտէրն տերանց, զթագաւորն թագաւո-րաց ասպնջականեալ՝ վայրապար խորհրդովքն և օտար հա-ճոյիւք՝ նման մանկան տղայոյ պատաղի զխաղալկաւ իւ-րով։ Բժիշկն երկնաւոր եկեալ է ի դարման ախտիցդ, և դու զչնչենեօքդ զբաղեալ չառնես նմա երես։ Ամենասուրբ, ա-մենավառ երրորդութիւնն ամենայն մեծութեամբ և զան-ձուք իւրովք եկեալ կայ՝ ճոխացուցանել զհոգիդ, և դու տակաւին ի հող և ի կաւ երկրի յածիս մտօքդ։ Աստուած խօսի ընդ քեզ, և դու ո՞ւմ մատուցանես ունկն. — անպիտա-նեաց, ընդունայնութեանց, թերեւս և յանկուցողաց ի չա-

բիս և ի վնաս։ Ապա չեն ինչ զարմանք՝ եթէ յոյժ սակաւ կամ ոչինչ օգտիցիս ի հաղորդութեանց։

Հուր աստուածային սիրոյն հանապազ վառեալ կայ ի վերայ սեղանոյն, այլ հաղորդի ընդ ջեռեալսն յառաջագոյն գէթ փոքր ի շատէ՝ ի նոյն ի սիրոյ. — իսկ պատճառ ցըր-տութեան մերձեցողին առ սեղանն՝ անպատրաստութիւնն է ի սկզբանն, և աճապարանօք կատարելն յետոյ զգոհութիւն։ Պարտ և արժան է ուրեմն բազում խնամով պատրաստել զանձն ի հաղորդութիւն Սրբութեան։ Տես զԽսրայելացիսն. քանի՞ զգուշութեամբ պատրաստէին զգառն զատկին, զանգիտեալք ապաշնորհք գտանել ազատութեանն ընձեռելոյ. քանիո՞ն ա-ռաւել մտադիր պատրաստութեան չիցեն պէտք ի զենուլ և ի ճաշակել զգառնն Աստուծոյ՝ զմիակն անարատ. որ ոչ զմարմին՝ այլ զհոգիս պարարէ պէսպէս շնորհօք. և այնքան առատապէս զեղուն և լնուն շնորհք՝ որչափ կանխէ պա-տրաստութիւն բարի, որչափ ընդարձակէ սիրտ ջերմեռանդն զչտեմարանս իւր։

Եւ արդ, օ՜ն անդր, ի բաց կացցեն, ի բաց թողցին սնոտիք՝ առաջի իրականին և էականի. ծածկեսցին յաչաց մտաց առերեւոյթքս արտաքինք, զի կարող լիցի հոգի զա-ներեւոյթն նկատել ի ներքուստ։ Աստուած մատչի առ մեզ, կամ մեք առ Աստուած. ապա նա միայն լիցի կէտ ուշոյ մերոյ՝ վազագոյն որչափ հնար իցէ՝ մինչչեւ հաղորդեալ ընդ նմա։ — Անհնար է մեծաւ սիրով ընդունել զսիրելին՝ եթէ ոչ կանխաւ և յերկար բաղձացեալ ի սրտէ. և ընկալեալ գամ մի՝ արժան է փարել և պինդ ունել, «կալայ զնա և ոչ թողից», զի մի արդեօք, զարհուրիմ ասել, յուղայապէս յետ պատառոյն՝ ի բաց ելեալ վազվազակի՝ մատնիչ և դա-ւաճան գտանիցիմ այնքանոյ բարւոյ և բարերարի։ — Ոչ կարեմ, ասիցես թերեւս, ընդ երկար կալ ընդ Աստուծոյ՝ յետ հաղորդութեան, զի գործք կարեւորք կան իմ։ — Իսկ շահ օգտի հոգւոյդ՝ չիցէ՞ և այն գործ մի կարեւոր, մա-նաւանդ թէ գործ գործոց և կարեւոր ի կարեւորս. առ որ պատշաճագոյն ժամանակ է ժամն յետ հաղորդութեան։ Եւ որպիսի՞ արդեօք իցեն գործքն այն և զբաղանք՝ զոր պի-տանեգոյն համարիս քան զկենակցելդ և խօսակցել ընդ երկ-նաւոր այցելուիդ, քան զգործ փրկութեան հոգւոյդ. — զայն քեզ թողում տեսանել և կշռել։

Այլ չգտանեմ ասես, ասելիս առ Յիսուս. սիրտ իմ ցամաքեալ է, իղձք թուլացեալք, միտքս արագ արագ ցրուին, և ծանր է ինձ յերկարել կալ առ ոտս Սեղանոյն։ — Եւ ո՞չ վասն այնր իսկ պարտ և արժան էր քեզ յամառել յապաղել անդէն ի տեղւոջդ, և հանգոյն Յակովբայ երդմնեցուցանել զնա՝ ընդ որում գիրկընդխառն եղեր, և չթողուլ՝ մինչեւ օրհնեսցէ զքեզ, մինչև լուծցէ զխստութիւն սրտիդ. մինչեւ կակղացին կարծրութիւնք հոգեկանք։ Եւ առ այս օժանդակեսցեն քեզ աղօթք և ներգործութիւնք առաքինականք շաբագրեալք ի ջերմեռանդն անձանց, զորս դիւրին է գտանել յաղօթագիրս, և արժան է ընթեռնուլ մտագիւր յօժարութեամբ։ Բայց և զարմանալ արժան է քեզ անձամբ ընդ անձնդ, եթէ զայնպիսի Տէր և Աստուած ընդունելով ի քեզ, ապաբան գտանիցիս, և չունիցիս ասել ինչ և թախանձել ի նմանէ։ Աղէ, հա՛ր միանգամ և երկիցս և բազմիցս զկուրծս քո. ընդոստուցո՛ զսիրտ քո ի գթոյն յոր անկեալ կայցէ, հաւատա՛, յուսա՛, սիրեա, հառաչեաց, տես և ցո՛յց զցաւս քո, խնդրեա գեղ դարմանոյ վիրացդ և ախտից, և որոց միանգամ կարօտ զքեզ ծանիցես. ապա գոհացիր, երկի՛ր պագ, և գի՛ր ի մտի դրդել յորդորել զսիրտ քո ի վառիլ բորբոքիլ սիրով սիրողին զքեզ սաստկապէս, և աճեցուցանել զկայծն զոր արդ ընկալար։

Առ այսոսիկ միտ դիր խնամով զգուշանալ յետ այսորիկ յամենայնէ՝ որ կարող իցէ ցրտացուցանել և խստացուցանել զսիրտ քո. – մի՛ եւս հուպ լինիր իրաց՝ որք գողացան և օտարացուցին ի քէն զսէր՝ զոր առ Փրկիչն քո պարտական էիր։ Փախիր ի փորձութեանց և ի վտանգաց, այլ մի՛ համարիր իսպառ փարատեալ զնոսին. նա մանաւանդ ակն կալ պատահարաց և դիպաց՝ հակառակաց բնաւորութեան քում և յօժարութեանցդ. համարեաց եթէ ահա հասին ի վերայ քո այգոքիկ. և լե՛ր յառաջագոյն պատրաստ ի դիմի հարկանել, սպառազինեալ կրթութեամբ ներգործութեան առաքինութեանց, և յիշելով զհայցուածս քո և զխոստմունս ի հազորդութեանդ յետնում. ընդ նմին և զխոստմունս Քրիստոսի առ քեզ, և առ ամենայն հաւատացեալս և սիրելիս իւր։

Այսպէս վառեալ զսիրտ քո յարժանապէս ընդունելութիւն սրբոյ խորհրդոյն, որչափ իցէ ի քում կարի, խաղաղագոյն

ոգւով վայելիցես զշնորհս և զզօրութիւն նորին, և քաջալերութեամբ կեցեալ որքան և տացի քեզ յամել ի կենցաղումս, նովիմբ և ակն կալցես բարւոք և երանելի վախճանի, որում գրաւական լիցի նոյն իսկ թոշակն յետին ընդձիւք ընդացեալ և ի դէպ ժամու ընկալեալ։

Գ. ԶՅԱՊԱՂԵԼ ԶԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ ԹՈՇԱԿԻՆ

Քանի՞ մխիթարութիւն, քանի՞ օգուտ է հոգւոյ՝ թոշակն յետին, վերջին հազորդութիւն Աստուծոյ յաշխարհի աստ ընդ հաւատացելոյ իւրում, մինչչեւ փոխեալ զնա ի հանդերձեալն, ոչ ոք կարծեմ անգիտանայ ի ճշմարիտ քրիստոնէից. այլ չիցեն սակաւք որք վրիպին ի մեծէ շնորհէն՝ վասն յապաղելոյ ընդունել զայն. յապաղումն՝ որ բազում այն է զի արգասիք է առաջնոց անպատրաստ և գաղջ հաղորդութեանց. և որպէս սոքօք ոչ բաւեցին զլիութիւն զօրութեան ընդունել ի գնացս կենաց, այնպէս և ի մահուն զրկին ի յետինն ի կարևոր օգնականութենէ. բազմաց ահեղ իմն թուի յետինն թոշակ, այլ ստուգութեամբ փարատիչ է ահի, ոչ միայն հոգւոյն, այլ յաճախ և մարմնոյ ախտին. և հեռացուցիչ քան մերձեցուցիչ մահու։ Եթէ Փրկչին մերոյ միայն դրոշակ հանդերձիցն բաւական էր ի բուժել զախտացեալս, զի՞նչ ոչ արասցէ ինքնին հաղորդելով և միանալով ընդ ախտաց։ Եթէ այնքան խնամով և փութով ջանամք տալ և ընդունել զմարմնոյ դեղս, ընդէ՞ր յապաղիցեմք ընդունել զայն որ հոգւոց և մարմնոց համանգամայն է դեղ զօրաւոր։ Որպիսի՞ կուրութիւն, գուշակ վախճանի համարել զխորհուրդն փրկութեան, և զկենսաբերն՝ մահաբեր։ Այլ արդաւրեւ հիւանդութեան մեծի լիցի մեզ այն պատճառ, ասէ սուրբն Պետրոս Ոսկիբան, եթէ ոչ ընկալցուք զայն կամ բըն յոյժ անագան ընկալցուք։

Անագան և ապաժամ ընդունելութիւն թոշակին՝ ի վտանգի կացուցանէ զմեզ, եթէ ոչ ի զրկելոյ իսպառ ի շնորհաց նորին, գէթ ի նուազելոյ, վասն տառապանաց մարմնոյ, թմրութեան զգայարանաց, չփոթման մտացն, նուազման զօրութեանց հոգւոյն, որով և չմարթի եռանդեամբ ընդունել, և ըստ իմիք՝ ի դերև հանէ զդիտումն՝ վասն որոյ

սահմանեալ էր խորհուրդն այն. այսինքն է, տալ զօրութիւն ժուժկալութեան ցաւոց, քաջալերս ի լրմանն, մխիթարութիւն ի տագնապսն, հաստատութիւն յամենայն դէպս և հարուածս հիւանդութեան. և ի վերայ ամենայնի զյոյս օգնականութեան հաստչի և փրկչի հոգւոյն: «Պատրաստ ա» բարեր առաջի իմ զսեղան, նախաձայնէր անդստին մար» գարէն, առաջի նեղչաց իմոց», որ են ցաւք մարմնոյս և վիշտք հոգւոյ. մի ինչ միայն հոգաստուք, ասէ Ոսկիբերան. զչզրկիլն յաստուածային կերակրոյ անտի:

Զիք դեղ և զէն զօրաւոր քան զհաղորդութիւնն՝ ընդդէմ փորձութեանց՝ զոր յարուցանէ ոսոխն սատանայ ի վերայ հոգւոյ՝ յօրհասին. զի եթէ անունն Յիսուսի միայն բաւական է ի հալածել զորսորդն զայն հոգեխանձ, քանի՞օն եւս ինքնին Յիսուս իջեալ ի սիրտ հիւանդին: Ապա ուրեմն որ անփոյթ լինի ընդունել ի ժամու զայսպիսի կարեւոր օժանդակ՝ անձամբ զանձն զինակապուտ առնէ ի մահու պատերազմին, և մնայ մերկակուիւ ընդդէմ դժոխազէն հակառակորդին. և դիւրաւ յաղթի՝ ի փորձութեանց, յարհաւրաց և ի հնարից բանսարկուին: Իսկ որ բուն իսկ կենաց դեղովն ամրացեալ իցէ, որ զԱստուած յինքն կրիցէ՝ զտէրն զօրութեանց, յումէ՞ կամ յիմէ՞ երկիցէ նա. զի վասն աներկիւղ լինելոյ իսկ տուաւ մեզ հացն անմահութեան, ասէ Սուրբն Պասքաս. և Ս. Ամբրոսիոս յաւելու. Ջիա՞րդ հնար իցէ ի յաւիտենական մահ ըմբռնիլ այնմ՝ որ զկեանս ճաշակէ. չիք երկիւղ դատապարտութեան՝ որ զդատաւորն խանդաղատեալ յինքն ունիցի. զի ոչ միայն մեծ են յոյժ զօրութիւն և շնորհք թոշակին, այլ մեծ է և խոստումն Քրիստոսի. «Որ ուտիցէ ի հացէ աստի՝ կեցցէ յաւիտեան»: Վասն այսորիկ կոչեն զայն հարք՝ նշան ընտրութեան, գրաւական փրկութեան, սերմն անմահութեան, և յոյս յաւիտենական երանութեան. զի եթէ որ յերկրի աստ զանձն իւր տայ մեզ, ասէ Ոսկիբերան, ո՞րչափ ևս առաւել ի հանդերձեալ կեանսն, և յաւելու ի տեսլենէ հաւաստեալ՝ զի յետ ընդունելոյ հիւանդին զթոշակն՝ հրեշտակք կան առ նովաւ մինչեւ ցաւանդումն հոգւոյն:

Վասն այսորիկ մեծապէս բասրելիք են սպասարկուք հիւանդին՝ որք ոչ ծանուցանեն նմա ի դէպ ժամու զընդունելութիւն թոշակին, և ինքն հիւանդն՝ եթէ կամիցի յապաղել, և կամ վրիպիցի, կամ անզգայօրէն իմն ընդունիցի: Եթէ առ վտանգաւոր դատախազեալ և կասկածեալ ոք՝ գայր յանակնկալս՝ թագաւորն կամ դատաւորն ինքնին այլափոխեալ զհանդերձս իւր, և խոստանայր նմա ջատագով կալ յատենին և յաղթող կացուցանել, որպիսի՞ յօժարութեամբ, որպիսի՞ զոհութեամբ ոչ ընդունէր զնա դատափետեալն. — այնպիսի յօժարութեամբ, ըղձիւ յուսով և սիրով պարտ եւ պատշաճ է ընդունել զտէրն և զդատաւոր՝ որ այլակերպեալ գուղնաքեայ նշխարաւն՝ գայ առ հոգի օրհասականին. — և զի՞նչ ոչ արժանի իցէ նմա առնել և ասել՝ որ մինչ զանգիտէրն ահա ի կոչիլ ի դատ գերագոյն, յանկարծ զդատաւորն մեծ գտցէ առ ինքեան և յինքեան՝ ներողամիտ և սիրարկու. գրաւական և հաւատիս գթութեանն՝ զվէրս իւր և զարիւնն գուցանելով: Ո՜հ, որպիսի՞ անզգայութիւն, որպիսի՞ ապերախտութիւն իցէ՝ ցրտութիւամբ և կասկածանօք ընդունել զայնպիսի հաւատարիմ և հոգեսէր տէր և բարեկամ. — որպիսի՞ անմտութիւն և յամեցուցանելն աւուրս բազումս զեկաւորութիւն նորա, մինչև անկարողանալ այնուհետեւ ընդունել զնա զգաստ մտօք և ջերմն սրտիւ: Բա՜ւ լիցի այս առ յինէն. այլ հայցեցից այժմէն շնորհս ի նմանէ՝ ի դէպ ժամու առնել ինձ այց զյետին նուագն՝ կենսաբեր հաղորդութեամբ իւրով, մինչ ի զգաստութեան իցեմ, և մանանդութեամբ ի շնորհս նորին և ի փափագ միանալոյ ընդ նմին. զի եթէ յամենայն նուագս ի դէպ է և արժան պատրաստել մտադիւր ի հաղորդութիւն կենարարին, ո՞րքան եւս առաւել ի պահուն՝ յորում կեանքս այս զրաւին, և սկիզբն լինի յաւիտենական կենաց, որոյ երանութեան առհաւատչեայ լիցի նոյն ինքն բարւոք պատրաստութիւն ընդունելութեան, և մանաւանդ հաւատով, յուսով և սիրով ընդունելին Աստուած իմ Յիսուս:

Է

ՓԱՓԱԳ ՄԱՇՈՒԱՆ ԵՒ ԵՐԿՆԻՑ

Բնութիւն մարդոյս սիրէ յոյժ զկեանս իւր, փափագէ զերկարիլն, և զանգիտէ յանջատմանէ հոգւոյն ի մարմնոյ։ Մահ՝ թուի նմա դահիճ անողոք, կատարիչ անաչառ վճռոյ արդարութեան։ Եւ այս իսկ է մի ի գլխաւոր պատճառաց՝ որք խռովեն զոգի և ի տագնապի կացուցանեն յօրհասին։ Եւ զի յոյժ կարեւոր պէտք են մեզ խազաղութեամբ վճարել զկեանս և անդորր ոգւով մեռանել, հարկ է վաղագոյն, եթէ չիցէ հնար փարատել իսպառ՝ զոնեա նուազեցուցանել զարհաւիրս յետին պատահարին։ Պատեհագոյն հնարք հերքելոյ զերկիւղ և զսոսկումն մահու, նմին ինքեան մահուան փափագելն է. զի յորմէ փափագէ ոք՝ ոչ երկնչի, այլ արիաբար և զակամայն ի կամաւոր փոխարկելով՝ ի հանգիստ փոխէ և զմահն։ — Բայց հարկ է թէ ոչ պիտակաբար կամ հեթանոսական իմաստիւք, թողից ասել թէ անյուսութեամբ անուի կենաց, իցէ փափաքն. այլ նախ ի սակս այնց իրաց՝ որք ահաւոր կամ դժուարին երեւեցուցանեն մեզ զմահն, որպիսիք են կորուստ բարեաց կենցաղոյս, անստուգութիւն հանդերձելոյն, և ահեղ դատաստանի Աստուծոյ. և երկրորդ՝ վասն ակնկալութեան երանելի կենաց յաւիտենականաց, որ հզօրագոյն եւս է ի փարատել զերկիւղ մահու, վասն որոյ և արժան է տածել ի սրտի զփափագ երկնից. զի յոր ինչ ցանկայ ոք սրտիւ և դիմէ, դիւրանան ճանապարհքն, և որ յառաջն անհարթ և անհամբոյր երեւէր, յետոյ հարթ և համբուրելի համարի։ Եւ զի ոչ է մարթ ցանկալի կենացն և երանութեան հասանել՝ առանց լքանելոյ զհողեղէն մարմնոյս այս, հարկ է թէ տենչ երանութեանն փափագելի արասցէ և զլուծումն հոգւոյ ի մարմնոյն, և իղձք երկնայինք ամրեսցեն զյետին տառապանս բնութեան։ Բազմաց ի մարդկանէ, թէ ոչ և բնաւից, հաւատալի էր այսպէս առնել, զաչս և զսիրտ ի հանդերձեալ աշխարհն կառուցանելով՝ հանապազ այնմ անձկալ և տենչալ, եթէ էր քաջ ծանուցեալ զայն.

այլ քանզի ոչ ակն մարդոյ ետես և ոչ ի սիրտ անկաւ ճըշգրտապէս, վասն այն և սակաւք իցեն որք աւագագոյն աչօք հաւատոց թափ անցեալ ընդ քօղս և ընդ ստուերս՝ որք ընդ մէջ երկոցուն կենաց ձգեալ կան, բաղձայցեն տեղի տալոյ ստուերացն, և գուարճասցին աղօտ նշողիւք ծածկեցելոյ պայծառ լուսոյն։ Ապա և մեք գուն գործեսցուք՝ զոնեա իբրև ընդ հայելի օրինակաւ նկատել զմեծ և զանբաւ բարիս արքայութեան երկնից, ընդ նմին և զմշտնջենաւորութիւն վայելիցն, և շատ իցեն այսոքիկ ի վառել յոգիս մեր զփափագ յերկրէ յերկինս վերանալոյ՝ անցանելով յօժարութեամբ ընդ դուռն մահու։

Ա. ՓԱՓԱԳ ՄԱՇՈՒԱՆ.

Առաջին խէթ և խորշումն ի մահուանէ և բռնագոյն կիրք ազգին ի մեզ ի սիրոյ կենաց, կամ յերկեղէ կորստեան նորին. — և սակայն զի՞նչ են կեանք յերկարեալք, եթէ ոչ պատուհաս երկար, ասէ Սուրբն Օգոստինոս. քանզի ծով իմն է յարածուի, հողմակոծ, աղիտալի, և մրրիկ անդադար անհանգիստ։ Բազմութիւն և ծանրութիւն վշտաց՝ որք նեղեն զմարդ, յաւելու նոյն Սուրբ Հայր, առաւել են քան զբանս և զմիտս մեր. և յորժամ քաջ զմտաւ ածիցեմք և ի հանդիսի կարգիցեմք զտառապանս կենցաղոյս, զախտս հոգւոց և մարմնոց, զպէսպէս վտանգս և նեղութիւնս, զփորձանս և զհալածանս, որ ի մարդկանէ կամ յանձնէ իսկ, այլ և ի թոյլտուութենէն Աստուծոյ, և ի մերոց իսկ անուղղայ զբնացից, ոչ եւս ցանկալի լինին կեանք, և ոչ մահն այնքան խիթալի։ — Ո՞յր ուրուք չիցէ փորձեալ եթէ քանի՛ սուղ և դիւրանց են հաճոյքն, և որքան երկար ձանձրոյթքն։ Ո՞վ իցէ՝ որոյ կեցեալ ամս ինչ՝ յետ անձին զգալոյ՝ և չիցէ կրեալ և նեղեալ կամ ի հիւանդութեանց և յաղաւաղանաց ինչ մարմնոյն կամ ի հոգեկան ինչ բարուց, կամ յաշխատութեանց և ի հոգոց, կամ յազգի ազգի վշտաց և արկածից ի վերայ հասելոց, կամ ի զրկանաց և ի հարստահարութեանց, կամ ի կենցաղավարութենէ այլոց երբեմն և ընտանեաց, կամ կորստեամբ սիրելեաց, կամ յիւր ուրոյն ըղձից և տենչանաց՝ առ որս անձեռնհաս լինի։ Եւ եթէ յերկարիցին

կեանքն՝ հարկ է ասել թէ և յոլովագոյնս յայսպիսեաց աստի կրիցէ։ Ցաւք և աշխատութիւն են երկոքին առանցք՝ զորովք պտուտկեալ հոլովին չուառական ամք կենաց մերոց։

Այլ ողորմելի եւս են վիշտք և ցաւք հոգեկանք. — կեալ հանապազօր յառիթս մեղաց, կալ միշտ յանստուգութիւն փրկութեան, երթալ ընդ ճանապարհ՝ յորմէ չեն հեռի դըժոխք, կարել զօր ամենայն մեղանչել և դատապարտիլ, տեսանել հանապազ զսուսեր արդարութեանն Աստուծոյ կարկառեալ ի վերայ գլխոյն, ի միջի թշնամեաց գտանել և նեղիլ ի սատանայէ, յայլեարհէ և ի կրից մարմնոյ. երկբայել՝ եթէ իցէ ի վիճակի չնորհաց, և եթէ հաւատայ լինել ի նմին՝ սակայն խիթալ թէ ցո՞ր վայր բաւիցէ ժուժալ. ո՜հ, քանիսատի՞կ վիշտք և տագնապք են այսոքիկ հոգւոյ՝ որ ցանկանայցէ փրկութեան իւրում։ Եւ զի՞արդ կամիցի սիրել զկեանս՝ այսքանեօք լցեալ վտանգօք հոգւոյ և մարմնոյ. կամ՝ զի՞արդ զանգիտել ի մահուանէ՝ որ վախճան առնէ այսմ ամենայնի։ Իցէ՞ այնքան ծանր և դժուարին զոհել զծերութիւն որում առաջի կան տառապանք, հոգք, խնամք, պէս-պէս տկարութիւնք մարմնոյ և ցաւք, և առիթք անհամբերութեանց՝ վտանգիչք հոգւոյ. — Ո՞ր չուառական է որ զանգիտիցէ ի դադարելոյ վշտացն։ Եւ ահա մահ՝ վախճան առնէ ամենայն տառապանաց երկրի. նա խորտակէ զկապանս մեր, նա թօթափէ զբեռինս մեր, ասէ Աստուածաբանն Գրիգոր, և յուղարկէ զմեզ առ Աստուած։ — Ցանկալի է զօրականի վախճան մարտին, ցանկալի է պանդխտին՝ կէտ ճանապարհին. և պատժապարտ՝ մատնեալ ի ձեռս դահճի՝ անձկայ վախճանի տագնապողական կրիցն։ Եւ զի՞նչ այլ ինչ իցեն կեանքս մեր՝ բայց մարտ հանապազօրեայ պատերազմի, որոյ ելք անստոյգք են. փորձութիւն են կեանք մարդոյ ի վերայ երկրի, վաղ ուրեմն ասաց վշտակիրն Յովբ. — Զի՞նչ իցեն կեանք, բայց վտանգաւոր ճանապարհ անհանգիստ. քանզի «որչափ յամենք ի մարմնի աստ՝ օտա-«բանամք յԱստուծոյ», ասէ Առաքեալն։ — Զի՞նչ իցեն կեանքս մեր, բայց ընդերկար տառապանք, յամր տանջանք, արդարև ոչ չարաչար իբրեւ զմարտիրոսացն այլ անտանելի ևս երկարութեամբն։ Կեանք քրիստոնէի՝ որ կամիցի ըստ աւետարանին քաղաքավարել, ասէ Սուրբն Օգոստինոս, խաչ է

և հանապազորդ նահատակութիւն։ Իսկ մեք՝ զանգիտիցե՞մք ի դադարելոյ չարչարանացն. ի պատերազմէն և ի դժնդակ ուղեւորութենէն։ Եթէ տառապանք են համօրէն կեանքս, ըստ ողջախոհ մտաց, ապա մեծ բարիք են վաղագոյն ժամանել ի կէտ վախճանին։

Քրիստոնեայ՝ որ հաւատոյ աչօք քննիցէ զկեանս՝ ոչ կարէ սիրել զայն, քանզի տեսանէ զինքն ի նժդեհութեան, հեռի մնացեալ յերկնից՝ ի բնիկն հայրենեաց, ի ճշմարիտ բարեաց. և զի՞արդ կարիցէ փարիլ զգերութեան չզթայիւքն՝ որ կաչկանդեալ արգելուն զնա ի մտից վերին օթեվանին, և ի կատարեալ ազատութենէ որդւոցն Աստուծոյ։ Զի՞արդ քրիստոնեայ՝ որ զԱստուած սիրէ՝ իշխիցէ չարհամարհել զկեանս՝ որ բազմապատիկ զբաղանօք, հոգովք և վտանգօք չներեն նմա լիովին սիրել զԱստուած. յորում՝ խայթ ցանկութեան տագնապեցուցանէ զոգի, մթարք մտաց նսեմացուցանեն զճանապարհս գնացիցն ապականութիւն բնութեանն և յողդողդութիւն կամաց՝ գոգչիր հանապազ ի վտանգ մեղաց մղեն զնա», — կա՜լ հանապազ ի վտանգի մեղա՞ց. — չի՞ք քան զայս ահաւոր և խիթալի։ Եթէ յերկարիցեն կեանք քո, աւելի եւս մեղիցես՝ գոնեա ներելիս, այլ թերեւս և մահացուս. և գիտելով չափ զքո տկարութիւնդ, զդեղեւել կամացդ, զգաղջութիւնդ և զոչ քաջ նուաճեալ կիրս, և զանակնկալ դէպս, կարես զթել և ի մեղս ծանունս։ Մեծամեծ իմաստունք և առաքինիք, Սողոմոնք, Որոգինէսք, Տերտուղիանոսք, և այլք յոգունք՝ ի ծերութեան իւրեանց անկան ի վիհս՝ յորոց ի բաց փախչէին ի մանկութեան։ Ո՜հ, քանի՞ երանելի էր եթէ մահ վաղահաս կտրեալ էր զթել կենաց նոցին։ — Զիցէ՞ մարթ և քեզ հանդիպել՝ որ նոցա և նմանեացն դիպաւ։ Եւ եթէ էր քո մեռեալ յառաջ քան զամս ինչ, յայնմ ժամանակի, յայնմ հիւանդութեան, ո՞չ արդեօք ուրախ եւս լինէիր՝ զի չէիր յաւելելալ մեղս ի վրայ մեղաց, որովք ծանրաբեռնեալ արդ հեծես և հիւծիս։ Եւ արդ ի միտառ, զի յետ ամաց ինչ եւս անցելոց՝ զնոյն զայս դատաստան արասցես ի վերայ ամացն այնոցիկ, և ցաւիցէ քեզ զի ոչ վաղագոյն եղեւ վախճան քո։

Եւ արդ ընդէ՞ր ցանկաս ընդերկարել զկեանս քո. — Եթէ քաջ միտ դիցուք, ասէ Սուրբն Ամբրոսիոս, մահ ոչ է

վախճան կենաց մերոց՝ այլ վախճան չարութեան, ոչ վախ-
ճան կենաց այլ վերջ մեղաց. և միանգամայն ասել մահ՝
գերեզման է ախտից։ Իսկ արդ քրիստոնեայ որոյ առաջին
պարտք և պէտք են սիրել զԱստուած և ատել զմեղս, իցէ՞
օրէն՝ եթէ խորշիցի ի ցանկալի կատարածէն. և ո՞չ մանա-
ւանդ աղաղակիցէ ընդ Յովնանու, «Արդ Տէր, Տէր, առ զո-
» գի իմ յինէն, զի լաւ է ինձ մեռանել՝ քան թէ իցեմ կեն-
» դանի»։ Ապա ուրեմն չէ խիթալի մահն՝ վասն բառնա-
լոյ ի մէնջ զկեանս մեր։

Եւ եթէ այս այսպէս է վասն կենացս, փոքրագոյն եւս է
խէթ կորստեան ընչից, բարեաց, պատուոյ ընտանեաց և սի-
րելեաց մերոց ի վերայ երկրի. — եթէ իցեն ինչ բարիք
այդոքիկ՝ առ հանդերձեալ բարեօքն՝ գտանին անարգագոյնք
քան զաւազ առ ոսկւոյ, և խիճ՝ առ ականց պատուական-
նաց, և ո՞ր իմաստուն ոչ կամիցի փոխանակել զայդոսիկ։
Գուցէ ինչ թերեւս համեմատութիւն ընդ զայս գտեհաց և
ընդ գոհար ականս, այլ զի՞նչ համեմատութիւն է երկրաւոր
բարեաց՝ ընդ երկնաւորացն, այն զի երկրաւորք՝ ոչ միայն
կորստականք են՝ այլ և կորստեան երկնաւորացն կարող են
առիթս լինել. զէթ ցորչափ յամենք յերկրի՝ երկնաւորքն ան-
հուսկ անճաշակ մնան առ ի մէնջ։ Զիցէ՞ ապա կուրութեան՝
ի պահուստ չնչենեաց և անպիտանեաց՝ ասպախտ առնել
զանբաւ բարեօք հանդերձելոցն. օտարանալ յԱստուծոյ և ի
սիրելեաց նորին՝ առ ի չթողուլ զսիրելիս մեր յերկրի. տաղ-
տապիլ աղտեղի և գծուծ զգեստուք կենցաղոյս՝ քան փու-
թալ զգենուլ զպատմուճանն փառաց և լուսոյ։ Այնչափ դոյզն
համարիցիմք զվայելս երկնից՝ զի ընտրիցեմք զընդերկարել
պանդխտութեան մերոյ ի վերայ երկրի։

Աղէ, զգաստացեալ ծանիցուք՝ զի զոր բարիս երկրի կո-
չեմք՝ փուչք եւեթ են. որ ոչն ունի՝ տանի փափագանօք,
իսկ որ ունին՝ առաւել եւս տագնապի կասկածանօք կորըս-
տեանն։ Բեռինք են դորա՝ որք արգելուն մտանել ընդ ան-
ձուկ դուռնն երկնից. սերմանք են ախտից, զի՝ ուր տե-
դայ ոսկի, ասէ Մեծն Գրիգոր, անդ աճեն և ախտք.
կապանք են ոսկեղէնք՝ որովք կաշկանդէ սատանայ զո-
գիս մեր՝ առ ի չգործելոյ զլաւութիւնս և չմերժելոյ
զիսոչ և զխութ ճանապարհի արբտյութեան։ Անվայել

են այսպիսի խորհուրդք մարդոյ քրիստոնէի՝ որ անդստին
յաւազանէ երդմամբ հրաժարեցաւ ի սատանայէ և յամենայն
հրապուրանաց նորա, և յանձն էառ, ըստ աւետարանին
խրատու, վարել զաշխարհ և զբարիս նորին՝ որպէս թէ ոչ
վայելիցէ և ոչ վարիցէ, քանզի առ ժամանակ մի եթող նմա
Աստուած, այլ ոչ ետ ստանալ։ — Ապաքէն եթէ աւագա-
գոյն աչօք նկատէաք զսուղ և զանցաւոր կեանս և զբարիս
նորին, և զյաւիտենական երանութիւն երկնաւորացն, գո-
չէաք և մեք ընդ Սրբոյն Իգնատեայ, «Ո՜հ, քանի՞ անարգ
» երեւի ինձ երկիր՝ յորժամ յերկինս հայիմ»։ — Ցանկա-
նայաք ընդ Առաքելոյն ելանել ի մարմնոյս և լինել ընդ
Քրիստոսի. յայնժամ ոչ եթէ խիթալի թուէր մահն կապ-
տիչ ընչից և կենաց, այլ և ուխտիւք խնդրելի և փափա-
քելի։

Բ. Անստուգութիւն Հանդերձելոցն. — Ծաւալեալ փոքր ի
շատ՝ եթէ չէ խիթալի մահ վասն կորստեան կենաց և բա-
րեաց երկրի, զորս և հարկ է անհրաժեշտ կորուսանել վաղ
քան թէ անագան, խորշելի տեսանի յաւէտ վասն անստու-
գութեան հանդերձելոցն, վասն ծանրութեան մեզաց գործե-
ցելոց, և ահի դատաստանին և յաւիտենական տանջանաց։
Եւ զի՞նչ կամիցի այս նշանակել. — զարհուրիմ, ասես, զայ-
սոսիկ յիշելով՝ ի մահուանէ. — իսկ արդ յերկարելով
զկեանսդ՝ մարթիցի՞ եզեալն լինել չեղեալ, նուազիցի՞ պա-
տուհաս պարտականութեանդ. մանաւանդ թէ ո՞չ յաւելուցու
եւս վասն նորանոր մեղաց՝ յորոց հանապազ վտանգիս։ Եթէ
երկեցուցանէ զքեզ մահ՝ վասն մեղացդ, երկիւղալի եւս են՝
կեանքդ յորս գործեցեր զմեղս, և կարես դարձեալ գործել,
թերեւս և յոգունս եւս ըստ երկարութեան կենաց։

Զանգիտես ի մահուանէ, քանզի ոչ գիտես՝ սիրո՞ւ եթէ
առելութեան իցես արժանի. կասկածես՝ եթէ ապաշխարե-
ցե՞ր որպէս արժանն էր. երկբայիս եթէ յո՞ր տուն յաւիտե-
նական կայցէ քեզ մտանել՝ յելանելդ ի կենաց աստի. զար-
հուրիս ի հանդիպելոյ անաչառ դատաւորիդ, և դողաս ի
տանջանաց տարտարոսին կամ քաւարանին։ — Իսկ արդ
յերկարելով կենացդ՝ համարիցի՞ս վստահագոյն լինել վի-
ճակի շնորհաց և լաւագոյն բաղդի հանդիպել։ Ջերծանել ի
դատաստանաց Աստուծոյ՝ ոչ կարես երբեք։ — Ցամելով քո

ի վերայ երկրի՝ ոչ հուր քաւարանին չիջանի, և ոչ տանջանք դժոխոց դադարեն. ոչ մեղք քո ի մոռացօնս անկանին, և ոչ պատուհաս նոցին վերանայ. — եթէ յետ ամաց սակաւուց կամ բազմաց՝ մեռցիս, զի հարկ է մեռանել, միթէ՞ ոչ եւս երկիւղալի իցէ մահ, կամ կարճեալ զտանիցի յաւիտենականութիւնն, կամ թուլասցի՞ն դատաստանք, և ամոքեսցի՞ յայնժամ դատաւորն քո. — Որպէս ակամայ և կամայ, այսպէս ահիւ կամ անահ՝ սակայն հարկ մահուն ի վերայ կայ. անճողոպրելի է դատաստանն. եւ եթէ չիցէ քո հատուցեալ ի կեանս քում զպարտս մեղանացդ՝ պարտ է քեզ անդէն հատուցանել. և երկարութիւն կենացդ ոչ ի թեթեւութիւն նոցին՝ այլ թերեւս և ի ծանրութիւն եղիցի քեզ։ Ապա չէ ուղիղ մտաց զանգիտել ի մահուանէ՝ վասն անստուգութեան ապագային. զի ոչ միայն երկիւղդ այդ չէ բաւական յառնուլ զառաջս չարեացն՝ յորմէ կասկածեսդ, այլ գուցէ և յաւելուլ ի նոյնս՝ վայրապար և անկարգ երկիւղիւդ։

Երկի՛ր մանաւանդ ի խայթոցէ մահուն, որ է մեղքն, զի դա իսկ է առիթ երկիւղիդ. զի ոչ ոք դատի ի Տեառնէ վասն վճարելոյ զպարտս մահու այլ վասն պարտուց մեղաց. չէք ուրեմն զանգիտել ի մահուանէ, ասէ Սուրբն Ամբրոսիոս, եթէ չիցէ մեր գործեալ ի կեանս ինչ, յորմէ արժան իցէ երկնչել։ Փախի՛ր ի մեղաց, խրատէ և նմանութիւն Քրիստոսի, քան ի մահուանէ։ Դա մանաւանդ երկի՛ր յանագանելոյ մահուն, որ համառօտելով զկեանս՝ յապաւէ և զառիթս մեղաց՝ որ միայն զարհուրելիք են. զի որքան կեանքս երկարին՝ այնքան առաւելու փաստ երկնչելոյ ի մահուանէ։ Կեաց առանց մեղաց և կեցցես աներկիւղ. և ցորչափ կեաստ՝ ապաշաւեա զանցեալ յանցանս քո՝ և դիւրագոյն լիցի քեզ հանդերձեալն։

Այլ թերեւս ի սակս ապաշխարելոյ և յաւելլոյ քեզ արդիւնս՝ ցանկաս յերկար կենաց. — Գեղեցի՛կ յոյս, այլ խաբէական. նախ, զի յերկարութեան կենաց յաւելուն և նիւթք ապաշխարութեան, այսինքն մեղքն. երկար ժամանակի ցանկաս յուղղութիւն, այլ հաւանօրէն չարաչար վարիցիս ժամանակաւդ. և ոչ միայն ոչ բաւիցես ջնջել զառաջինսն, այլ առաւել եւս տանջիցիս յիշատակաւ յետնոցն, զի յայտագոյն եւս է չարութիւն սոցա։ Դարձեալ, համարի՞ս, հաւանի՞ս եթէ

ի յետին ամս կենացդ սրբեցեր ջնջեցեր զառաջնոց ամաց կեղտն. նաև ընդ միոյ իսկ մեղաց արարե՞ր հատուցումն արդարաչափ. ի ներկայէս՝ կշռեա զապագայդ. և երկի՛ր յերկարութենէ կենաց՝ որ կարող է լինել քեզ առիթ առաւել մեղաց, և առաւել եւս երկեղի։

Եւ դարձեալ, զի՞նչ են գործք ապաշխարութեանդ զոր առնիցես վասն առաջնոց մեղացդ, մինչ ի միջի կաս նորոցն. անձինք առաքինիք հազիւ բաւիցեն զառօրեայ յանցուածոց պարտս հատուցանել՝ ամենայն խնամով և մեռելութեամբք իւրեանց, և դու ակն ունիս զներկայն և զանցեալն հատուցանել, մանաւանդ այդքան փոքր ջանիւ։ Դա թէ և յաջողէր քեզ յաւելուլ արդիւնս ինչ, չէ անկ մոռանալ, զի միով մեղօք զոր գործիցես ի յաւելուլ ամաց կենացդ՝ առաւել չար առնես առաջի Աստուծոյ՝ քան բարիս՝ ամենայն ճգամբք յերկար ժամանակի. վասն որոյ և առաւել պարտական գտանիս։ Եթէ կամիս զհաճոյսն Աստուծոյ գործել, առաւել սիրեա և խնդրեա զգուշանալ և ի փոքուէ մեղաց, քան փափագել բազում արդեանց և բազում փառաց. լաւագոյն և ապահովագոյն համարեա զարագահաս վախճանն՝ քան զանագանն՝ որ ոչ գտցի զերծ ի փորձութեանց և յառթից մեղաց։

Գ. Աչ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ. — Հաւատ են արդարեւ դատաստանք Աստուծոյ և անաչառ ատեանն յետին. — այլ ցորչափ ի մարմնի եմք գթած և ողորմած է Տէր, երկայնամիտ եւ բազումողորմ. և մարթ է մեզ կամաւոր յանձնառութեամբ մահուան՝ զիջուցանել զցաստումն նորա։ Արդարեւ անդունդք անհնարինք են խորհուրդք յաւիտենական ընտրութեան կամ անարգութեան մարդկան. այլ անբաւ են և ողորմութիւնք Աստուծոյ, և գթութեան նորա չիք սահման. քանզի հայր մեր է, և հայր որդեսէր որդեզորով «Ոչ » կամիմ, ասէ, զմահ մեղաւորին, այլ զդառնալ նորա ի » չար ճանապարհէն և զկեալն... և յասել իմ ցամպարիշտն՝ » թէ մահու մեռջիր, և դարձցի ի մեղաց իւրոց և արասցէ » իրաւունս և արդարութիւն.... կելով կեցցէ և մի՛ մեռցի. » ամենայն մեղք իւր զոր մեղաւ՝ մի՛ յիշեսցին. զի զիրա» ւունս և արդարութիւն արար, նոքիմք կեցցէ»։ Եւ ո՞ր քան զայս մեծ յոյս և գրաւական գթութեան կայցէ։ —

Որքան և մեծամեծք և անթիւք իցեն մեղք՝ յորժամ թէ ոք զղջասցի յամենայն սրտէ՝ թողցին նմա առ յԱստուծոյ. նա ինքն կանխէ ի ներել մեզ, թելադրելով խորհուրդս փարելիս, և ոչ պատուհասէ՝ եթէ ոչ բռնադատիցի ուժգին: Հայր է նա ամենեւիմբ ծնելասէր. և ընդէ՞ր է մեզ սարկի սրտիւ յանդիման լինել նմա և ոչ որդիական սիրով: Արեալ են զէնք արդարութեան նորա, այլ պաշտպան կայ մեզ անթափանցելի վահան ողորմութեանցն:

Վստահ ես յողորմութիւնսն, այլ զանգիտես արդեօք զի բազում անգամ զեղծար նոքիմբ և ընդ երկար ժամանակս: — Եթէ միայն այնոցիկ էր յուսալ յողորմութիւնս Աստուծոյ որք ոչ երբէք զեղծան նոքիմք, սակաւուց ոմանց միայն շնորհեալ լինէր չյուսահատել. և ոչ էր ասացեալ Յիսուսի՝ եթէ եկի կոչել ոչ զարդարս՝ այլ զմեղաւորս. և թէ՝ ոչ է պիտոյ բժիշկ ողջոց՝ այլ հիւանդաց: Նա և նոյն իսկ յերկարութիւն զեղծման ողորմութեանցն Աստուծոյ, և երկայնամտել նորա ձիգ ժամանակս՝ փաստք են գթութեան նորա, զի ոչ մատնէ ի վրէժ արդարութեան. այլ սպասեալ մնայ դարձի մերում, սիրէ ուրեմն զմեզ, և զոր սիրէն՝ ընտրեալ է վասն իւր: Եւ եթէ համբերէ որդւոյն ապստամբեցելոյ՝ միթէ անխայեսցէ՞ յորդին զղջական և դարձական. — հովիւն բարի՝ որ զհետ մոլորեալ ոչխարին երթայր և որոնէր, միթէ մերժիցէ՞ զնա՝ յորժամ ինքն դարձ առնիցէ ի կորբստական ճանապարհէն և ի ժանեաց գայլոյն. — զիա՞րդ կարիցէ ապախտ առնել գորովագութեն հայր զարտասուօք ապաշաւելոյն, որ ի գիւտ միոյ մոլորելոյ թողու զիննսուն և ինն արդարս: Արդարեւ ընդ ակն խոցէ զԱստուած՝ որ երկմտիցի յողորմութենէ նորա:

« Հայեա՛ց ի խաչեալդ Փրկիչ, յորդորէ Սուրբն Օգոստինոս, լուր զի՞նչ ասէ. Հա՛յր, թող դոցա. — զայսպիսի ունելով բարեխօս՝ ո՞ ոչ քաջալերիցի. — տես զվէրս Աստուծոյդ խաչեցելոյ. տես զարիւն զոհիդ օրհասականի, տե՛ս զգինս փրկութեան քո. ահա խոնարհեցուցանէ զգլուխն՝ առ ի տալ քեզ համբոյր. բանայ զսիրտն՝ առ սէր քո. զբովանդակ մարմին իւր տարածանէ ի փայտն մահու, առ ի թափել զքեզ »: Խոցուածք մարմնոյ նորա, ասէ Սուրբն Բեռնարդ, զիսորս սրտին երեւեցուցանեն մեզ. և ո՞ այսուհետեւ երկիցէ

ի մահուանէ: « Յորժամ գամ առ խաչն, ասէ և մերս Ն. » Լամբրունեցի, և տեսանեմ զքեզ՝ փոխանակ իմ մեռեալ, » խաչահանուացն աղօթեալ, և զաւազակն կոչեալ, հաստա» տեմ՝ թէ աշխատութեամբ քո փրկեալս՝ ո՛չ վասն պա» տրանաց չարին կործանիմ »: Արդիւնք Քրիստոսի՝ շնորհեալ են մեզ. և յորժամ զայն յաղերս մատուցանիցեմք Աստուծոյ Հօր, ոչ ողորմութիւնք նորա հանդուրժեն և ոչ արդարութիւնն անողոք մնայ. քանզի առաւել քան զպարտիս մեր հատուցանեմք նմա. քանզի որքան և ծանր և բազում իցեն մեղք մեր՝ շիթ մի արեան կենարարին բաւական է ի քաւութիւն նոցին: Այլ չէ պարտ, չէ արժան զանգիտել ի մահուանէ վասն արդարութեանն Աստուծոյ և արհամարհելոյ մեր երբեմն զողորմութիւնս նորա. այլ մանաւանդ խրախուսելի է յուսով, և առաւել քան զառաւել սիրելի զամենեւիմբ սիրելին:

Եւ զի այսքան ողորմած, մարդասէր և սիրելի է Աստուած, հնա՞ր ինչ իցէ չսիրել զնա ըստ կարի զօրութեան. և ի սիրելն՝ չցանկալ նմա. և ի ցանկալն մնայցէ՞ այնուհետեւ տեղի զանգիտելոյ ի մահուանէ, և ո՞չ մանաւանդ փափագելոյ՝ զի բացցէ զգուռն մտից առ ամենաբարին Տէր և Փրկիչ, առ միակ ցանկալին սրտից և լցուցիչ ամենայն ցանկութեան. – ո՞ ոչ յօժարիցի վաղվաղ ժամանել յերանութեանն այն գուռն, և եթէ օրէն իցէ՝ խորտակել ընկենուլ, զի համարձակ լիցին ելք ի կենաց աստի և մուտք ի հանդերձեալսն: Եթէ հաւատամք, ասէ Սուրբն Կիպրիանոս՝ թէ հայր մեր է Աստուած բնակեալ յերկինս, որպէս զօր ամենայն յեղյեղեմք տէրունական աղօթիւք, եթէ զիտեմք զի ժառանգութիւն մեր անդ յերկինս է, և եթէ օթեվանք մեր անդ պատրաստեալ են, զի՞րդ ոչ ըզձամբ մահու. զի՞րդ ոչ զոչեմք ընդ Առաքելոյն, « Ո՞ զերծուսցէ զիս ի » մարմնոյ աստի մահու ». « Որ երկնչի ի մահուանէ, ասէ » Սուրբն Օգոստինոս, տակաւին թերահաւատ է ». յաւելից թէ և թերայոյս է. զի որ երկմիտն է ի հաւատս և ի յոյս՝ նա միայն զանգիտէ ի մահուանէ, յաւելու Կիպրիանոս: Եւ դարձեալ ազդ առնէ. Զօր ամենայն կրկնես, Եկեսցէ արքայութիւն քո. որ է ասել՝ գայցէ մահն, գայցէ դատաստանն, զի եկեսցեն և երանական վայելք. և սակայն ասես

և զանգիտես ի մահուանէ. իսկ արդ ընդէ՞ր աղօթիւք խընդրես զարքայութիւն՝ եթէ հաճեալ ես ընդ գերութիւնդ. ընդէ՞ր ժտիս զերկնային բարիսն, եթէ սեւեռեալ կաս յերկրաւորքս և ի ծառայութիւն սատանայի։ Հանապազօր աղօթես զի եղիցին կամքն Աստուծոյ. և ի կամել նորա քեզ զմահ՝ և գժկամակիս սարտնուս. — ասես, մոյծ զիս յարքայութիւն, և ոչ կամիս անցանել ընդ գուռնն. խնդրես զվախճանն, և չառնուս յանձն զհնարսն կամ զմիջոց. — խնդրե՞ս ուրեմն ինչ մի, և փափագիս այլում։ Որպիսի՞ հակառակութիւն. յուսալ այնմ՝ զոր մերժիցես ահիւ. կամ մի՛ խնդրեր, կամ մի զանգիտեր ի մահուանէ։ Որոյ չգուցէ յոյս հանդերձեալ կենաց և երթալոյ առ Քրիստոս, նմա միայնոյ վայել է երկընչել ի մահուանէ, կնքէ նոյն Սուրբ։

Չեն զարմանք եթէ հեթանոսք և անկրօնք ոմանք՝ խորշիցին գարշիցին ի մահուանէ և փափագիցեն յարաճնալ ի կենցաղումս. այլ զարմանք զարմանաց են՝ զանգիտել քրիստոնէի՝ որ գիտէ զի Հաստիչ իւր հանելոց է զնա ի հովտէս տրտմութեան և մուծանելոց ի յարազուարճ օթեվանսն, և զչքաւորութիւն իւր փոխելոց ի լիութիւն անբաւ և անպատում բարեաց. — նուազութեան սիրոյ ցոյցք են այդպիսի զանգիտանք։ Գանզի սէր ոչ դադարէ յըղձակերտ լինելոյ՝ մինչեւ հասցէ յըղձալին. և չէ մարթ նմա գտանել զայն՝ բայց յանտի կեանսն. որ զանգիտէ ի մահուանէ՝ թերուղիղ է ի սիրոյն Աստուծոյ, զի առանց մեռանելոյ չէ հնար ժամանել առ Աստուած, առ ամենեւիմբ և միակ սիրելին. — պատրուակ մահուն՝ բանայ զքօղն որ պատրուակէ ի մէնջ զԱստուած. — սէրն Աստուծոյ, եթէ իցէ ստոյգ սէր՝ անհընար է թէ ոչ նկատիցէ և յանձն առնուցու զմահ, և ասիցէ ընդ Առաքելոյն, ինձ՝ մեռանել՝ շահ է, և շահ մեծ, շահ անգին։ Նաեւ ուղիղ սէր անձին՝ թելադրէ մեզ զփափագ մահու, զի նովաւ ժամանեմք երանութեան, որ է կէտ ըղձից բնութեանս. գիտեմք զերկինս օթեվան երանութեան, ապա հարկ է թէ յօժարութեամբ փոխիցեմք զհոգեղէն յարկս՝ վասն նորա։ Ո՜հ, եթէ զոյր ի մեզ հաւատք հաստատուն, յոյս աներկմիտ և սէր եռանդուն, ոչ եւս ընդ վայր յածէաք կասկածանօք և կերպարանօք մահու, այլ և ճեպէաք թափանձէաք զարագարագ գալուստ նորին, զի ազատեալ մտանէաք ի հանգիստ մեր։

Այլ ի վախճան բանիցս՝ արժան է յիշել զողջամիտ իմաստ երկիւղի մահու. և ոչ համարել եթէ չէ պարտ չզգալ զկորչումն ինչ և քստմունս՝ որ բնաւորեալ է ի մեզ, և յորմէ սակաւք ոմանք զերծ գտանիցին, այլ զի չէ պարտ, չէ վայել անկարգ երկիւղ, որ տայցէ ի մոռացօնս արկանել զճշմարտութիւնսն՝ զոր ցայս վայր ի միտ առաք. և ի դէպ է մրցիլ շնորհօք սրբոց հաւատոցս՝ ընդ բնականին այնմ երկեղի, բթել զխայթոցն՝ եթէ ոչ իցէ հնար խսպառսպուռ բեկանել և առ ոտն հարկանել։ Ըստ առաւելութեան հաւատոց մերոց՝ աճեսցէ ի մեզ զօրութիւն և խրախոյս գոչելոյ՝ «Ո՞ւր է, մահ, խայթոց քո». և ըստ առաւելութեան սիրոյ մերոյ առ Աստուած՝ նուազեսցի ազդեցութիւն սոսկման մահու, մինչեւ խնդութեամբ և անձկանօք ճնալ յետին պահուն և վայրկենին, որպէս ոչ սակաւք ի Սրբոց անձկացեալ ճնային, և վկայեցին՝ եթէ ոչ գիտէաք այսքան քաղցր լինել մահու։ Որ յառաջնմէ կրթեալ իցէ ի քեցել ի սրտէ իւրմէ զոր և է սէր երկրաւոր, յանզգաստից իմն վարժի և ձգի առ երկնաւորսն, և որ յաճախ զմտաւ ածէ զմահն՝ քրիստոնէական աչօք, առ փոքր փոքր յանմահութիւն վերաբերին միտք և ճաշակ նորա. և ճշգրտի առածն՝ եթէ «Մահ ոչ իմա» ցեալ՝ մահ է, մահ իմացեալ անմահութիւն է»։ Այլ ոչ է մարթ իմանալ զայս, ոչ է մարթ ճաշակել զանմահութիւն, բայց եթէ ճանաչելով փոքր ի շատէ և փափագելով երկնիցն վայելչութեանց։

Բ· ՓԱՓԱԳ ԵՐԿՆԻՑ ԿԱՄ ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ·

Երկինք կամ արքայութիւնն, որպէս և գիտեմք ի հաւատոց՝ պարառութիւն է ամենայն բարեաց, և ըստ նիւթական երկնից օրինակի իմն՝ անպարագիծ բոլորակ գեղեցիկ, որոյ ընդ ո՛ր և դէմս ոք հայիցի՝ տեսանիցէ վայելչութիւնս համամանս և զանազանեալս, այսինքն զամենայն ազգ վայելուչ և գեղեցիկ՝ զոր կարիցէ կերպարանել կամ ըմբռնել մտօք, և լաւ եւս ասել՝ զոր ոչ կարէ ոչ կերպարանել և ոչ ըմբռնել, զի ըստ անսուտ վկայութեան Առաքելոյն՝ ի վերն քան զգայութիւնս ական և ունկան, և քան զխորհուրդս մտաց և զցանկութիւնս սրտի։ Եւ զի այսպէս գերազանցք

են և գերբնականք, նոքա՝ որք ի զգալիսս և ի նիւթականս յաւէտ դեզերին և յարին՝ ոչ կարեն և զսակաւն զայն ըմբռնել և նկատել, զոր սուրբք և սիրողք աստուածայնոց՝ փոքր ի շատէ զգացեալ արհամարհեն զերկրաւորս, և անձկան երկնայնոցն։ Արդ՝ զի վախճան ամենայն բանից և ջանից մերոց և ողջոյն իսկ կենացս՝ երկինք են, ի դէպ է և մեզ գոնեա փոքր ի շատէ ճանաչել զայն, որպէս զի և ի սէր նորին վառեալ, ոչ՝ կամ սակաւ յոյժ՝ զզայցեմք զխէթ մահու, և զի անհնար է ընդ բովանդակ ազգս ազգս երեւակայելի վայելչութեանցն և բարեաց երկնից պարայածիլ և ի քննութիւն առնուլ, երկուք միայն այսոքիկ լիցին մեզ առիթ տեսութեան և խորհրգածութեան Անբաւութիւն բարեացն և Մշտնջենաւորութիւն։

Ա. Անբաւութիւն Բարեաց Երկնից. — Այնու իսկ զի ազատեն զմեզ երկինք յանբաւ չարեաց կենացս և ի դատապարտութենէ, անբաւ են բարիք իւր. զի ի յերկինս՝ չիք բընաւ մուռք կամ մասն չարեաց։ Ցերկրի աստ տագնապիմք ի վշտաց մարմնոյ և հոգւոյ. իսկ յերկինս՝ երկոքինն եւս ազատ են ի վշտաց և ի ցաւոց։ « Մահ ոչ եւս գոյ, ասէ » Տեսանողն, ոչ սուգ և ոչ աղաղակ, ոչ ցաւք և ոչ աշխա» տանք՝ ոչ ևս գոյ. զի առաջինն՝ էանց։ Ոչ քաղցիցեն և » ոչ ծարաւիցեն, և ոչ ոք մեղիցէ նոցա, ոչ արեգակն և ոչ » տօթ »։ « Մերժեցան (անտի) ցաւք և տրտմութիւնք և հե» ծութիւնք »։ — Զիք ի կենցաղումս կատարեալ վայելք, և ոչ ուրախութիւն անխառն ի տխրութենէ ինչ. իսկ յերկինս՝ ուրախութիւն լիովին, երանութիւն կատարեալ, համանգամայն բերկրանք և քաղցրութիւնք, առանց ինչ վշտաց հոգւոյ կամ ցաւոց մարմնոյ։ — Ո՜վ քանի անուշակ և ցանկալի է բնակութիւն սրբոյ քաղաքին, վերնոյն Երուսաղեմի, որոյ ամենայն բնակիչք սուրբք են, ուր ամենեքին սիրեն զմիմեանս սեռն սիրով և գորովով՝ քան եղբարք զեղբարս. ուր ամենայն ոք առաւել խնդայ ընդ վայելս ընկերին քան ընդ իւրն. ուր չիք կասկած վնասու և պատահարք. ոչ խռովութիւն, ոչ նախանձ, ոչ հալածանք. այլ անդորրութիւն անապակ, խաղաղութիւն մշտնջենաւոր, երանաւէտ հանդարտութիւն։

Ոչ միայն ի չարեաց ազատութիւն են երկինք՝ այլ և վայելք անբաւ բարեաց. համագումար իմն լրութիւն բերկրանաց, որքան իցէ մարթ լինել բարեաց։ Երջանիկ հոգի, որ լիասցիս անդանօր ամենայն կարելի հրճուանօք, և վայելեսցես անձանձիր, անվրդով և անդադար, ընդ հոգւոյդ՝ և ամենայն կարողութիւնք և զգայութիւնք մարմնոյ ունիցին զվայելս կարելիս, և վայելեսցեն անչափապէս և անյագապէս։ — Հայեաց արդ, ո՜վ հաւատացեալ ընդ մարմինդ՝ զորոյ սանձես անկարգ ախորժակս, հայեաց ընդ ձեռս և ուսս՝ զորս դարձուցանես ի չարաչար ձգմանց, հայեաց ընդ բովանդակ մասունս՝ զորս ծառայեցուցանես արդարութեան, փայլեսցեն դոքա յաւուր միում պայծառ քան զարեգակն։ Անմահացու եղիցի մարմինդ այդ, անցաւ, անվիշտ, անկիր, նուրբ և երագ, և որպէս ոգի թափ անցցէ ընդ ամենայն թանձրութիւն. արագագոյն քան զփայլակն՝ ի ծագաց մինչև ի ծագս հասցէ։ — Ամենայն զգայութեանց՝ եղիցին առանձինն վայելք. աչքդ զոր արգ փակես ի հրապուրական տեսոյ, վայելեսցեն անճառ հրճուանս տեսլեամբ Յիսուսի, հրաշափառ Մօր իւրոյ և ամենայն Սրբոց։ Քանի՞ գերազանց վայելք այնպիսի տեսութիւն։ Ո՞չ ապաքէն գերերջանիկս համարէաք զմեզ՝ եթէ յայսմ ի սմին պահու՝ ի տեղւոջս ուր կամք՝ երեւէր մեզ թագուհին այն երկնից ամենայն փառօք և զեղով իւրով. եթէ ինքն Տէր Յիսուս Սրբովք իւրովք յայտնէր մեզ զվայելչութիւն փառաց իւրոց, զի՞նչ քան զայն մեծ երանութիւն էր մեզ. — և ահա մարթ է մեզ յետ սակաւուց՝ ոչ միայն տեսանել զՅիսուս, զՄարիամ և զամենայն Սուրբս, այլ և կալ և կենակցել ընդ նոսին և հաղորդ լինել վայելից նոցին՝ միշտ և հանապազ, ամենայն համարձակութեամբ։ — Եթէ երբեմն վայրկենական երեւումն սրբոյ միոյ անճառ մխիթարութեամբ ելից զսիրտս տեսողացն, քանի՞ մեծ լիցի խնդութիւն՝ ի տեսանելն ոչ վայրկեան մի եւեթ ժամանակի, այլ հանապազորդ, և ոչ ընդ աղօտ ինչ՝ այլ յստակ և պայծառափայլ լուսով. և ոչ զմի զոք միայն՝ այլ զանթիւ դասս և բանակս երանելեաց լուսաւորաց և փառազգեցից, գերափառ դշխոյին ամենայն Սրբոց։ Քանի՞ զմայլումն իցէ աչաց՝ տեսանել պարգապէս զամենացանկալի մարդկութիւն Յիսուսի, որոյ գեղեցկութիւն

բաւական էր լնուլ զերկինս՝ եթէ չգոյր այլ ինչ յարքայութեան։ Այնքան ուրախութիւնք իցեն մեր յերկինս, ասէ Սուրբն Օգոստինոս, որքան ընկերք հաղորդակիցք. ամենեքին երանաւէտք, ամենեքին փառաւորեալ, որպէս թէ մէն իւրաքանչիւր յինքեան բովանդակելով զարքայութիւն, կամ այնքան զարքայութիւնս տեսանելով՝ որքան ընկերակիցս.

Ըստ վայելից տեսողութեան՝ եղիցին և այլոց զգայութեանց. այլ ի բացատրել զայդոսիկ՝ հարկ էր գերմարդկային իմաստից և բանից. յորոց վրէպ գոլով՝ շատասցուք ըստ կարի մտաց մերոց համախմբել զամենայն հաճոյականս՝ վայելչականս միոյ միոյ զգայութեանց, և բազմապատկել զնոսին և կրկնել և յաւելուլ, որչափ զօրեն միտք. այլ տակաւին ոչ ինչ է այդ՝ առ պատրաստելովքն բարութեամբք յերկինս. զի ոչ ակն ետես և ոչ ունկն լուաւ և ոչ ի սիրտ մարդոյ մահկանացուի անկան՝ որպիսի և որքան ինչ են։

Մեծագոյն եւս քան զբերկրանս մարմնոյ՝ եղիցին հոգեկանքն. — եթէ շիթ մի կամ նշոյլ մի շնորհաց Հոգւոյն Սրբոյ՝ այնքան զմայլեցուցանէր և զօրացուցանէր զնահատակսն՝ մինչեւ յանձն առնուլ զդժնդակ տանջանս վասն անուանն Քրիստոսի, զի՞նչ լինիցի յարքայութեան՝ ուր ոչ շիթք և կաթիլք, այլ ուղիք և հեղեղք փափկութեանց յորդեսցին յոգիս ընտրելոց։ Քանի՜ մխիթարութեամբ լցցին՝ ի յիշելն զյօժարակամն իւրեանց ընդունելութիւն շնորհաց յերկրի. զհերքումն փորձութեանց, զյանձնառութիւն ճգանց և ապաշխարութեանց, և զՀանս գործոց բարեաց։ Քանի՜ անճառ խնդութիւն իցէ յիշել՝ զի մարթ էր և ինձ դատապարտել և զրկիլ յերանութենէս յայսմանէ, եթէ չէի հրաժարեալ ի ցանկութենէ աշխարհի և ի մեղաց. այլ շնորհքն Աստուծոյ զօրացուցին զիս, և արդ վայելեմ անհուն՝ վասն խուն ինչ վաստակոյ իմոյ. մինչդեռ ընկերք իմ և ծանօթք որք թուլացան, յաղթեցան և կորեան, մատնեալ կան ի տանջանս՝ որոց ոչ իցէ վախճան։ Ո՜վ սուրբ ապաշխարութիւն, ո՜վ երանելի մեռելութիւնք մարմնոյ, ո՜վ փրկաւէտ հրաժարմունք հաճոյից. ձեօք փրկեցայ, ձեօք գտի զանբաւ և զանսահման բարիս։

Մեծ եւս քան զայդոսիկ, եթէ հնար է զանազանել, մեծ եւս են վայելք մտաց՝ յերկինս. զի զԱստուած տեսցեն՝ ոչ

եւս ընդ հայելի օրինակաւ կամ նշանօք, այլ յայտնապէս, դէմ յանդիման, յիսկութեան նորա և ի լրութեան. «Տես» ցուք զնա՝ որպէս և էն». ասէ աշակերտն սիրելի. – տեսի՞ց ուրեմն և ես զԱստուած՝ ներքին տեսութեամբ, անպատրուակ և անարգել. ծանեայց զնա՝ Որ էն. նկատեցի՞ց զմեծութիւն, զանչափութիւն, զզօրութիւն նորա. – հրաշացա՞յց ի գեղեցկութիւն նորա. մխեցա՞յց խաղացից զնացից ի գերովկիան ծով կատարելութեանց Աստուծոյ. – ո՞վ անբացատրելի հրճուանք, ո՞վ զմայլմունք գերազանցք։ — Եթէ առ փոքր փոքր և մասն առ մասն իմն ցուցանէր Աստուած ընտրելոց իւրոց՝ զէութիւն իւր, գոյր նմա նորանոր հրաշալիս երեւեցուցանել յամենայն յաւիտենականութեան, իսկ զի՞նչ լինիցի յորժամ միանգամայն ցուցցէ զամենայն կատարելութիւնս իւր. – ոչ կարեմ հաստատ լինել այսմիկ՝ ցորչափ ի մարմնի աստ եմ։

Այլ տակաւին մեծագոյն եւս հրաշք են անդ. վայե՞լք կամաց։ Կամք՝ երանական սիրով փարեսցին զԱստուծով, և այնու ստասցին զամենայն, քանզի զաղբիւրն բարեաց ստացան։ Աստուած ինքն լիցի երանութիւն հոգւոյ, որպէս խոստացաւն. «Ես եղէց քեզ վերակացու, և վարձք քո մեծ» եղիցին յոյժ»։ Աստուած ամենունակն, ամենալին, նա՜ եղիցի վարձք իմ և բաժին և բաւականութիւն։ — Այո, ո՜վ հոգի փրկեալ, երանելի լինիցիս նովին իսկ երանութեամբն Աստուծոյ, ըստ տանելոյ բնութեանդ. ի սեղան Աստուծոյ բազմեսցիս. ի բաժակէ Տեառն արբցես զուղիս փափկութեան. «Ուտիցէք և ըմպիցէք ի սեղան իմ յար» քայութեան իմում», խոստացաւ Յիսուս. – ընդ Աստուծոյ քում բազմեսցիս յաթոռ փառաց, «Որ յաղթէ՝ տաց» նմա նստիլ ընդ իս յաթոռ իմ». այս բանք են նորա. անսուտ վկայութիւնք երանութեան հոգւոյ, որ է ճանաչել և սիրել՝ որպէս ճանաչէ և սիրէ Աստուած զինքն. վայելել զնոյն գոհութիւն՝ զոր Աստուած վայելէ, ինքն անչափապէս, ստեղծական հոգիք՝ ըստ իւրեանց պայմանի, այլ անթերի լրութեամբ յանբաւս Աստուծով լցցի անձն ընտրելոյն, յԱստուած միասցի, յԱստուած կեցցէ, և Աստուած ի նմա կեցցէ. և որպէս Սիրոյն աշակերտ ասէ, «Նմանք նմա ե» զիցուք»։ Սէր գերահրաշ զօդեսցէ, խառնեսցէ, հանգուսցէ

զԱստուած ընդ հոգւոյ ընտրելոյն, և զընտրեալն՝ ընդ Աստուծոյ. զամենայն զոր և կամի՝ գոցէ յԱստուած. մանաւանդ թէ առաւել քան զոր կամին և զոր փափագել կարիցէ՝ գոցէ առատապէս. երանութեամբ լցեալ՝ յերանութիւն իսկ փոխեսցի գլխովին։ Ո՞վ կարիցէ աստանօր ի միտ առնուլ զայսոսիկ. — ո՞վ կարիցէ չափել զուղիս փափկութեան՝ զոր տացէ Տէր ըմպել սիրելեաց իւրոց. և ոչ միայն արբցեն, այլ և « արբեսցին նոքա ի պարարտութենէ տան Տեառն ». ոչ եւս նշոյլք կամ ճաշակք ուրախութեանց աստուածայնոց մտցեն ի սիրտս քո, այլ դու ինքնին « մուտ յուրախութիւն » Տեառն քո »։ Այն ամենայն վայելք, հրճուանք, ուրախութիւնք՝ անչափապէս և յանբաւս տուեալք ընտրելոց, յանչափութիւն փոխեսցեն և զնոսա. հոգիք նոցա, ասէ սուրբն Օգոստինոս, հանապազ քաղցեալք իցեն, և ոչ երբեք յափրասցին, քանզի միշտ նոր է գեղեցկութիւն Աստուծոյ։

Այնքան մեծ են վայելք միոյ ընտրելոյ յերկինս՝ զի եթէ չիթ մի ի վայելից անտի կաթէր արդեօք ի դժոխս՝ յաբքայութիւն փոխեալ լինէր, որպէս իմաստասիրէ սուրբն Օգոստինոս. և դոյզն ուրախութիւն կրսերագունին ի Սրբոց՝ մեծ եղիցի քան զամենայն դառնութիւն տարտարոսին։ » Զափով դատի Աստուած », չափով և դատապարտէ. այլ սիրելեաց իւրոց յերկինս՝ անչափապէս տայ վայելել. դժոխոց՝ միայն արդարութիւն Աստուծոյ կայ սահմանիչ, իսկ յաբքայութեան՝ ամենայն զօրութիւնք Աստուծոյ առատանան յերանութիւն ընտրելոց. և մարթ է ասել, եթէ ըստ ամենայն կարողութեան և իմաստութեան իւրոյ լիացուցանէ գարքայութիւն իւր, և ամենայն լրութեան իւրում հաղորդս առնէ զսիրելիս իւր։ — Համանգամայն ասել, անբաւ և անսահման են բարիքն՝ զոր պատրաստեալ է Աստուած՝ հո, գւոց և մարմնոց ընտրելոց իւրոց զորս անհնար է և ընդ աղօտ ինչ օրինակաւ ըմբռնել կամ բացատրել. քանզի որպէս սուրբն Դիոնեսիոս ասէ. « Աստուած՝ ոչ այս ինչ է և ոչ » այն, այլ ամենայն ». զնոյն է իմանալ և վասն երկնից կամ արքայութեան, և որպէս զԱստուած գերազանց մտաց խոստովանիմք՝ զնոյն և վասն երկնիցն բարեաց խոստովանելի է. և փափագելի է ժամուն և վայրկենի՝ յորում վե-

բասցի խաւար մտաց մերոց, և զերծեալք յաղցից կենացս մտցուք ի լոյսն անստեղծ, և տեսցուք և ծանիցուք զերանութիւն մեր. ծանիցուք զԱստուած, և զմեզ ինքն աստուածակերպս։ Յայնժամ զիտասցուք՝ քանի՞ մեծ և քանի՞ հըշմարիտ էր խոստումն նորա՝ լինել մեզ ի վարձս։ Իսկ այժմիկ զարմասցուք, ցաւեսցուք, զի զայսքան գերազոյն մեծութիւն՝ յաճախ ի մոռացօնս իմն արկեալ՝ զչընչենեօք և զոչընչիւ զբազիմք և փարիմք, և օտարանամք յօթեվանաց անճառ երանութեանցն. և զահի զամօթի հարեալ՝ այսուհետև զուն գործեսցուք՝ ըստ կարի իմացման մերոյ՝ նկատել զօրհանապազ զանբաւութիւն բարեաց երկնից. և ընդ նմին զմշտնջենաւորութիւն նոցին։

Բ. Մշտնջենաւորութիւն Բարեաց Երկնից. — Բարիք կամ վայելք երկնաւորք՝ յաւիտենականք են. Յաւիտենական — իմանայցես զոր լսեսդ և ասես այսու բանիւ կամ բառիւ. յորում բովանդակի ամենայն տնտեսութիւն կենաց և վախճան մարդոյս։ Յետ սակաւատև պանդխտութեան ի վերայ երկրի՝ կան ծնան նմա յերկինս հրճուանք մշտնջենաւորք, անկորուստք, անփոփոխելիք, անկասկածք։ Որպիսի՞ երջանկութիւն՝ հոգւոյ ընտրելոյ. որպիսի՞ վարձք ընդ դոյզն ինչ քրտանց և տառապանաց անցաւոր կենցաղոյս։ Որ միանգամ եհաս երանութեանն՝ երանելի լիցի յաւիտենականութեան չափ, որ է անչափ, անեզր և անվախճան։ Ամենայն վայելք արքայութեան՝ յորս խուն մի առաջ ջանացաք խելամուտ լինել, անվերջանալիք և անյեղլիք են. աներկբայ մասն է այս հաւատոց, զոր Հոգին Սուրբ ստէպ ազդ առնէ ի գիրս. « Արդարք՝ յաւիտեան կեցցեն ». « Ու» բախութիւն յաւիտենից ի վերայ գլխոց նոցա »։ « Թա» գաւորեսցեն յաւիտեանս յաւիտենից ». (ըստ Սողոմոնի, Եսայեայ և Յովհաննու). և ըստ Քրիստոսի Յիսուսի՝ « Եր» թիցեն արդարքն ի կեանս յաւիտենականս ». կեանք՝ որ համօրէն իսկ երանութիւն է, երանութիւն Աստուծոյ որ անժամանակն է, և երանութեան նորին ոչ գոյ կատարած և ոչ փոփոխութիւն կամ նուազութիւն և ոչ մի կէտ և ոչ մի բոպէ։

Հասցէ ընդ հուպ վախճան ներկայ յաւիտենիս, զի որ ինչ վախճանելոց է՝ ոչ է անագան. տատանեսցին և քայ-

քայեսցին տիեզերքս տեսանելիք. անցցեն դարք բիւրաւորք, և բիւրք բիւրուց եւս շրջանք ժամանակաց՝ ըստ մարդկային համարոյ, այլ ի յաւիտենականութենէ անտի երկնից՝ և ոչ բոպէ մի անցեալ իցէ. և ի վերայ եւս անցելոց միլիոնաւոր դարուց՝ առաւել քան զհատս աւազոյ և զտերեւս ծառոց, տակաւին սկիզբն է երանութեան երկնից. և որքան եւս գումարեսցեն թիւք դարուց և չափ ժամանակաց ոչ ինչ նուազեսցի յերանութենէ ընտրելոց։

Ո՜վ, քանի՜ անպատում ուրախութիւն՝ ժառանգել զԱստուած անկասկած ի կորստենէ. քանի՜ մխիթարական մըտածութիւն, արժանի լինել երկնից, և կալ մնալ յաւերժ յարքայութեան Աստուծոյ. — լնուլ զեղուլ անչափելի հըրճուանօք, և ոչ պակասել բնաւ երբեք. — վայելե՜լ զկատարեալ զգերալրական վայելս, եւ վայելել մշտնջենաւորապէս. — արդարև անչափ մտաց պէտք էին առ իմանալ զանչափութիւն յաւիտենականութեան, զոր արդ ասեմք հաւատալով, այլ ոչ ըմբռնելով։

Հաւատք՝ ոչ միայն զյաւիտենականութիւնն ցուցանեն, այլ և զանկասկածութիւն բարեաց երկնից. և ոչ է այս զըժուարհասանելի մտաց. քանզի գիտեմք զի Աստուծոյ են այս կամք, և Աստուած անփոփոխ է ի կամս իւր, որպէս և յամենայնի. և զոր միանգամ խոստացաւ սիրելեաց իւրոց՝ ոչ զլաստի, զի հաւատարիմ է Տէր ի բանս իւր։ Յանձն իւր երդուեալ է Աստուծոյ տալ սիրելեաց իւրոց զինքն ի վայելս, «Եւ ոչ չափով տայ Աստուած» զինքն. զի ոչ գոյ նորա չափ. վկայ են աստուածայնոցն խոստմանց՝ մարգարէք և առաքեալք և աւետարանիչք. վկայ են մարտիրոսքն և խոստովանողք, ճգնաւորք և կուսանք, և ամենայն դասք արդարոց, որք այնու յուսով համբերեցին ազգի ազգի վշտաց և նեղութեանց, չարչարանաց և արեան հեղմանց. «և հասին յայն հանգիստն». յոր հասցէ ամենայն անձն՝ որ մեռանիցի ի շնորհս Աստուծոյ։ Ճշմարտութիւն հաւատոց է և այս։ Այո, ո՛ հաւատացեալդ, և դու՝ եթէ մեռանիցիս զերծ ի մահացու մեղաց, ի սրբարար շնորհս, փրկեսցիս, և դու եւս մտցես յերանութիւնսն անվախճանս։ Ամենեցուն խոստացեալ է օրն աներեկ յաւիտենականութեան, և քեզ և ինձ. եթէ միայն ի բաց թողեալ զամենայն

վատութիւն և հեղգութիւն՝ զուն գործիցեմք հանապազորդել յուղղութեան վարուց, յանբծութեան գործոց. և արծարծել և ցանկորդել ի մեզ զտենչանս անբաւելի և անվախճան բարեացս այսոցիկ։

Արդարեւ չէ արժանի արքայութեան, որ ոչ խոկայ ստէպ զարքայութիւն։ Ո՜հ, որպիսի՜ ամօթ, որպիսի՜ նախատինք մարդոյ՝ հայել վայրապար աչօք ընդ երկինս, որպէս և անբան անասունք հային երբեմն, և ոչ յիշել՝ ո՞ր և որպիսի՜ բարութիւնք հանդերձեալ մնայցեն նմա անդր քան զտեսանելի երկինսն։ Հարկ է, և հարկ ստէպ՝ թափ անցանել ընդ կամարս ոլորտից եթերաց, և ելանել ընդ Պողոսի և նմանեսցն՝ ջերմն ըղձիւք՝ յերկինս երկնից, ի վերին հայրենեաց՝ ջերմն ըղձիւք՝ յերկինս երկնից, ի վերին հայրենիսն, և ցանկալ նոցին, որպէս պանդուխտ՝ հարուստ ժամանակաւ օտարացեալ յընտանեաց. մեծաւ հաւատով, և մեծագոյն եւս սիրով՝ խնդրել զայն հայրենիս՝ որում տենչացան ամենայն Սուրբք, և որոյ տենչանօք այժմ իսկ տոչորին և տաժանին առաքինիք ի վերայ երկրի, և յանձն առնուն զմահ՝ իբրև զվերջին հանգոյց պանդխտութեան իւրեանց։ Օ՜ն առեալ և մեր նմանեսցուք երանելեացն, նմանեսցուք Սրբոց և առաքինեաց, զգուշացուք յամենայնէ՝ որ կարող իցէ խոչ ընդ ոտն լինել երկնաչու ուղեւորութեանս, և բուն հարցուք յոր ինչ միանգամ դիւրիցէ մեզ զճանապարհն զայն, ոչ առեալ ակն ոչ ի դժուարութեանց և ոչ ի մահուանէ. որ՝ եթէ «զգաստութեամբ և աստուածապաշտութեամբ շրջեսցուք յաշխարհի՝ լիցի իսկ մեզ բանալի երկնից, արքայութեան և երանութեանն։

Հաւատամ, Տէր, զի պատրաստեալ է արքայութիւն քո ամենեցուն՝ որ սիրենն զքեզ. սիրեմ, և կամիմ և եւս սիրել զքեզ. ակն ունիմ հասանել անվախճան բարեացն՝ առ ի քէն խոստացելոց. ցանկամ տեսանել զփառս քո. ցանկամ տեսանել զքեզ՝ ի քումդ խսկութեան։ Հան զիս, Տէր իմ, ի բանտէ աստի երկրի, մարմնոյ և մահու, և մոյծ զիս յօթեվանս յաւիտենից։ Ո՜վ երջանիկ օր՝ յորում զերծայցարգելանէս. երջանկագոյն՝ յորում մտից առ քեզ, Աստուած՝ որ ուրախ արասցես զկեանս և զէութիւն՝ զոր ետուր ինձ։ Ո՜հ, ե՞րբ իցէ զի հասցէ ինձ օրն այն, ժամն այն ցանկալի՝ յորում եղեց քո բոլորովին, որպէս ասդ դու իմ, Աստուած

իմ և ամենայն ինչ։ Ո՞վ փրկիչ իմ Յիսուս, արա և ընդ իս
զնշան քո բարութեան. ասա և ինձ՝ «Ընդ իս իցես ի դրախ-
տին. Մուտ յուրախութիւն Տեառն քո»։ — «Պատրաստ է
» սիրտ իմ առ քեզ, Աստուած. — Պատրաստեցայ, և ոչ
» եւս խռովեցայց ի մահուանէ»։ Տէր է իմ յոյս։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
C.C.C.P.A. Ազգային Գրադարան
7/7.XI 1929
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆ

ՅԱՆԿ

ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՊԱՏԱՐԱԳԻՉ . . . . . .
ԻՆՆ ԵՐԱՆՈՒԹԻՒՆՔ Ա. Երանի այնոցիկ որ լսեն . . 5
Բ. Երանի աղքատաց հոգւով 5
Գ. Երանի սգաւորաց 6
Դ. Երանի հեզոց 8
Ե. Երանի որ քաղցեալ և ծարաւի իցեն . . 9
Զ. Երանի ողորմածաց 10
Է. Երանի որ սուրբ են սրտիւք 12
Ը. Երանի խաղաղարարաց 13
Թ. Երանի որ հալածեալ իցեն վասն արդարութեան 15
ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՔ Ի ՎԵՐԱՑ ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹԻՑ . . 17
Ա. Հայր մեր որ յերկինս ես 18
Բ. Սուրբ եղիցի անուն քո 21
Գ. Եկեսցէ արքայութիւն քո 22
Դ. Եղիցին կամք քո 22
Ե. Զհաց մեր հանապազորդ տուր մեզ . . . 23
Զ. Թող մեզ զպարտիս մեր 24
Է. Մի տանիր զմեզ ի փորձութիւն . . . 24
Ը. Զի քո է արքայութիւն 26
ԿՐԹՈՒԹԻՒՆ ՅԻՇԱՏԱԿԱՒ ՄԱՀՈՒԱՆ. 28
Ա. Կանխաւ պատրաստիլ ի մահ 29
Բ. Օրինակ պատրաստութեան ի մահ . . . 31
Գ. Հոգի իսկ և իսկ յետ մահուան . . . 33
Դ. Նկատումն մարմնոյ ի դագաղի և դիական ի գե-
րեզմանի 35
Ե. Ապաշխարութիւն մեղաց 37
Զ. Թոշակն. — Հաղորդութիւն 39
Է. Փափագ մահուան և երկնից 41

ՀՀ Ազգային գրադարան
NL0157476